



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ
CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



Հրատարակիչներ՝
ՀՀ Վճռաբեկ դատարան,
«Դատական իշխանություն» ամսագրի խմբագրություն

ԴԱՏԱԿԱՆ ԻՃԽԱՆՈՒԹՅՈՒՆ СУДЕБНАЯ ВЛАСТЬ JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ SCIENTIFIC - METHODOICAL JOURNAL

1-3/319-321 2026
ՀՌԻՆՎԱՐ-ՄԱՐՏ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Արման Դիլանյան – ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Համլետ Ասատրյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Հովսեփ Բեդկյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,

Արթուր Դավթյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Երվանդ Խունդկարյան – ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Սերժիկ Ավետիսյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ելիզավետա Դանիելյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Լիանա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Ռուզաննա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Նորա Կարապետյան – ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Գոռ Թորոսյան – ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Արշակ Վարդանյան – ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Սերգեյ Առաքելյան – ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Արմեն Հայկյանց – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վահե Հովհաննիսյան – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Բորիս Գավրիլով – ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Անատոլի Կուստով – ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝

ՀՀ վաստակավոր իրավաբան, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահե Ենգիբարյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրոյթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է

Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն»
հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
<http://www.ajra.am>

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ. 56-99-89

Էլ. հասցե՝ judge@netsys.am
ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 08.04.2026 թ.
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 60
Ծավալը՝ 17.625 պայմ. մամուլ + 2 էջ ներդիր
Գրանցման վկայական՝ 01Մ000023
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ԲՈՓԻ ՓՐԻՆՐ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ
ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐՎԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՊՀ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**



Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանն ընդունել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին:

Հանդիպման ընթացքում հանդես գալով դասախոսությամբ՝ Վճռաբեկ դատարանի նախագահը ներկայացրել է բարձրագույն դատական ատյանի սահմանադրական առաքելությունը, գործունեության առանձնահատկություններն ու օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործում բացառիկ դերը:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ Վճռաբեկ դատարանի նախագահը նշել է, որ այսօրվա արագ զարգացող աշխարհում տեխնոլոգիաները հաճախ փոխվում են, բայց գրքի արժեքը մնում է անփոխարինելի: Գիրքը սովորեցնում է խորհել, զգալ, վերլուծել և հասկանալ երևույթների էությունը: Այն ընդլայնում է մարդու աշխարհայացքը, ձևավորում արժեհամակարգ, հարստացնում միտքը, խոսքն ու լեզուն, ինչը հատկապես կարևոր է իրավաբանի մասնագիտությունն ընտրած մարդու համար:

Գիրքը հնարավորություն է տալիս իմանալ սեփական երկրի և ժողովրդի պատմությունը, մշակույթը, դարերով փոխանցված արժեքները, ինչն ինքնաճանաչման լավագույն միջոց է: Սեփական երկրի պատմությունն իմանալն անհրաժեշտ է ապագան կերտելու, հասարակության մեջ սեփական դերը, պետության ու հայրենիքի առջև պատասխանատվությունը գիտակցելու համար:





Գրքի շնորհիվ մարդը ստանում է ոչ միայն տեղեկություն, այլ նաև գիտելիք, որի միջոցով ձեռք է բերում մտավոր առավելություն, դառնում ավելի ազատ ու անկաշկանդ՝ մասնագիտություն, միջավայր և աշխատանք ընտրելու հարցում: Խորը մտածողությունը ձևավորվում է կարդալու և գիտելիք ձեռք բերելու շնորհիվ: Գիտելիքի շնորհիվ մարդը կարողանում է գնահատել անցյալը, վերլուծել ներկան, կողմնորոշվել բարդ և բազմաբնույթ հարաբերություններում, պատասխանատվությամբ ծրագրել ապագան:

Դասախոսության շրջանակներում Վճռաբեկ դատարանի նախագահն անդրադարձել է նաև դատարանների և դատավորների դերին ժողովրդավարական, իրավական պետությունում սոցիալական հավասարակշռության պահպանման, իրավունքի գերակայության ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Լ.Թադևոսյանն ընդգծել է, որ դատավորի մասնագիտությունը պահանջում է ոչ միայն գիտելիք, խորը մտածողություն, ազնվություն և անաչառություն, այլ նաև սկզբունքայնություն և բարոյական բարձր պատասխանատվություն:

Հանդիպմանը մասնակցել և ելույթով հանդես է եկել 44-օրյա պատերազմի ընթացքում հայրենիքի պաշտպանության համար անմահացած հերոս, իրավաբան Գևորգ Արշակյանի մայրը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Նահիրա Հովսեփյանը:

Հանդիպման ավարտին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին են հանձնվել ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական, քաղաքացիական և վարչական պալատների որոշումների ժողովածուները:

Ուսանողները շրջայց են կատարել Վճռաբեկ դատարանի շենքում, հանդիպել Վճռաբեկ դատարանի աշխատակազմի պատասխանատու ներկայացուցիչների հետ:

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

Գագիկ Համբարձումյան
Իրավահասկացման տիպերն իրավունքի աղբյուրների տեսանկյունից..... 3

Դավիթ Սարոյան
Միջազգային իրավունքը և պետության ինքնիշխանության սահմանափակման
հիմնախնդիրը..... 11

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

Կարեն Թումանյան
Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի սահմանադրական ամրագրման
անհրաժեշտությունը 20

Տիգրան Քոչարյան, Անահիտ Շահումյան
Քաղաքացիական հասարակության վերահսկողության սահմանադրաիրավական
հիմունքները և դրա զարգացման դինամիկան Հայաստանի Հանրապետությունում.....31

Инна Персесян
Судьи как лица с особым правовым статусом в контексте реализации права на свободу
мирных собраний 44

Սերգեյ Ղազինյան
Մարդու արժանապատվությունը և պետության սոցիալական բաղադրիչը՝
որպես մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման սահմանադրական հիմք..... 59

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Աննա Հակոբյան
Պետական գնումների գործընթացում ռիսկերի զսպման մեխանիզմները..... 73

Mane Markosyan
Peculiarities of the Civil-Law Status of the Subsoil Use Right Under the
Legislation of the Republic of Armenia 85

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

Հենրիկ Խունդկարյան
Պետական վարչական պաշտոնից ազատելու հետ կապված վեճերի
ենթակայությունը 95

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Դիանա Ավետիսյան

NULLUM CRIMEN SINE LEGE սկզբունքն ազգային և միջազգային քրեական իրավունքում.
իրավահամեմատական վերլուծություն և իրականացման խնդիրներ 107

Ալիսա Ամիրխանյան

Ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտը՝ ըստ ՀՀ օրենսդրության և
միջազգային փորձի..... 118

Վիրաթ Համբարձումյան

Սառը զենք հասկացության իրավական նշանակությունը.
դոկտրինալ և գործնական հիմնախնդիրներ 135

Геворг Исраелян

Основные составы половых преступлений, потерпевшим от которых является ребенок:
сравнительный анализ норм действующего и предыдущего уголовных законов 151

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

Սուրեն Բաղինյան

Քրեական վարույթ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող
մարմինների փոխգործողության տակտիկատեխնոլոգիական հիմքերն ու
առանձնահատկությունները պետական դավաճանության քննության ընթացքում 159

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Հովսեփ Քոչարյան

Ազրեսիայի հանցագործությունը Հռոմի ստատուտի լույսի ներքո.
Կիրեռագրեսիայի տեղեկատվական ինքնիշխանության մարտահրավերները
ՀՀ քրեական օրենսգրքի համատեքստում 174

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 206

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-3>

ԳԱԳԻԿ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

GAGIK HAMBARDZUMYAN
*Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of the National Academy
of Sciences of the Republic of Armenia*

ГАГИК АМБАРЦУМЯН
*Соискатель Института философии, социологии
и права Национальной академии наук
Республики Армения
<https://orcid.org/0009-0003-1104-0534>*

**ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**TYPOLOGY OF LEGAL CONSCIOUSNESS IN THE CONTEXT OF THE
DOCTRINE OF THE SOURCES OF LAW**

**ТИПОЛОГИЯ ПРАВОВОГО СОЗНАНИЯ В КОНТЕКСТЕ ДОКТРИНЫ
ИСТОЧНИКОВ ПРАВА**

Ներածություն

Իրավունքի աղբյուրների տեսանկյունից դասակարգվում են նաև ժամանակակից իրավա-
հասկացման տիպերը: Հայտնի է, որ տարբեր իրավական ընտանիքներում (համակարգերում)
տարբերակվում են իրավունքի իրենց յուրահատուկ աղբյուրները (ընդհանուր իրավունքի հա-
մակարգ, ռոմանագերմանական, սոցիալիստական, կրոնական և այլն), որոնց դասակարգու-
մը սերտորեն կապված է և բխում է իրավահասկացման կոնկրետ տիպից, և հակառակը՝ իրա-
վունքի աղբյուրների համակարգով է պայմանավորված իրավահասկացման կոնկրետ տիպը:

Իրավունքի աղբյուրների տեսանկյունից առանձնացվում են իրավահասկացման հետևյալ
տիպերը՝ պոզիտիվիստական, բնական իրավական, կրոնական-կղերական, գաղափարաբա-
նական-փիլիսոփայական, հոգեբանական, մարքսիստական, սոցիոլոգիական, էթնոմշակու-
թային:

Հիմնական հետազոտություն

Ժամանակակից իրավունքի տեսության մեջ առանձնացվում են իրավահասկացման բազմազան տիպեր՝ հիմք ընդունելով ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնները: Իրավահասկացման տիպային բաժանումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն:

Իրավունքի նորմերի ձևավորման աղբյուրի տեսակետից անհրաժեշտ է առանձնացնել իրավահասկացման հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

1. Բնական-իրավական տեսություն. այս տեսության ձևավորումը տեղի է ունեցել մի շարք փուլերով: Բոլոր փուլերում գերակա է պոզիտիվ և բնական իրավունքների հարաբերակցությունը: Պոզիտիվ կամ դրական իրավունքը պաշտոնապես ճանաչված, այս կամ այն պետությունում գործող իրավունք է, որն իր արտահայտումը ստանում է օրենքներում և այլ իրավական ակտերում: Բնական իրավունքը մշտական է, անփոփոխ, արդարացի: Պոզիտիվ և բնական իրավունքների միջև կոնֆլիկտն առաջանում է կիրառվող օրենքների և ժողովրդի արդարացիության մասին պատկերացումների հակասության հետևանքով¹:

Բնական իրավունքի տեսության զարգացման **առաջին փուլն** առասպելականն է, որն ընթացել է Հին Հունաստանում: Առաջանում է բնության ու օրենքի հակադրություն: Բնությունը սոֆիստ Հապիոսի աշխատությունում հանդես է գալիս որպես այն իրավական, բնական իրավունքը, որը հակադրվում է սխալ, արհեստական, պոլիսային օրենքին՝ դրական իրավունքին:

Երկրորդ փուլը բնափիլիսոփայականն է, որը զարգանում է Հին Հռոմում: Հռոմեական իրավաբանները բնական իրավունք ասելով՝ հասկանում էին բնության նախատեսումները: Օրինակ՝ ելնելով այն բանից, որ, ըստ իրենց բնույթի, մարդիկ և կենդանիները պետք է սերունդ ունենան, առկա է այնպիսի իրավունք, ինչպիսիք են ամուսնությունը և երեխաների դաստիարակությունը:

Երրորդ փուլը կրոնականն է, որը վերաբերում է միջին դարերին: Բնական իրավունք հասկացվում է որպես Աստծո կողմից տրված իրավունք, աստվածային իրավունք: Մարդկային օրենքները չպետք է հակասեն աստվածային իրավունքին:

Չորրորդ փուլը ռացիոնալիստականն է, որը վերաբերում է նոր ժամանակներին և լուսավորությանը: Մարդու բանականության միջոցով երկրային դրախտ կառուցելու և մարդկային մեղքերից ազատվելու հնարավորության հանդեպ հավատը բերեց այն գաղափարին, որ յուրաքանչյուր մարդ ունի բանականություն, որի մեջ սկզբնապես դրված են բնական իրավունքի նորմերը: Օրինակ՝ յուրաքանչյուր մարդ պետք է կատարի խոստումները և պայմանագրեր կնքի այլ մարդկանց հետ, փոխհատուցի իր մեղքով պատճառած վնասները: Քանի որ Աստծո հանդեպ հավատը փոխարինվեց մարդու հանդեպ հավատով, բնական իրավունքը ստացավ սուբյեկտիվ բնույթ և դարձավ մարդու իրավունքների հիմնադրույթ:

Ներկայում կիրառվում են անքակտելի իրավունքների և ազատությունների մասին բնական իրավական դոկտրինի գաղափարները²: Ենթադրվում է, որ պոզիտիվ իրավունքը պետք է ներառի մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներ և համապատասխան լինի բնական իրավունքին:

Բնական իրավունքի տեսությունը կարևոր քաղաքական դեր է խաղացել: Այն ուղղակիորեն նպաստել է իրավական պետության դոկտրինի ձևավորմանը, որի հիմքում այն գաղափարն է, որ անձինք պայմանագրով ստեղծում են հատուկ իշխանություն՝ իրավական հարցե-

¹ Տե՛ս *Нерсесянц В.С.*, *Общая теория права и государства*. М., «Норма», 2014:

² Մանրամասն տե՛ս *Սլոտինյան Հ. Մ.*, *Նոր իրավաըմբռնման անհրաժեշտությունը*, Եվրոպրինտ, Երևան, 2011:

րը լուծելու համար:

Աստվածային իրավահասկացումը բնական իրավունքի տեսության հատուկ տարբերակ է: Նրա էությունն այն է, որ իրավունքը ստեղծված է Աստծո կողմից և նրա սկզբունքները բխում են աստվածային կամքից: Իրավունքն Աստծո կամքի արդյունք է, և դրա արժեքային գերակայությունը պետք է համապատասխանի Աստվածաշնչին և եկեղեցական դոգմաներին, իսկ մահմեդականների դեպքում՝ Ղուրանին, հրեաների մոտ՝ Հին Կտակարանին և Թորային³:

2. Իրավաբանական պոզիտիվիզմ առաջացել է 19-րդ դարում և խորհրդանշել է իրավաբանական գիտության վերակողմնորոշումը դեպի պոզիտիվ իրավունքի հետազոտում: Այդ ժամանակ ձևավորված բուրժուազիան հետաքրքրված էր բուրժուական հեղափոխությունների արդյունքում առաջացած կարգերի ամրապնդմամբ, առաջին հերթին՝ սեփականատերերի իրավունքների անքակտելի լինելու ճանաչմամբ:

Պոզիտիվիզմի ընկալմամբ՝ իրավունքն իշխանության հրաման է, որը հասցեագրված է կառավարվողին և պարտադիր է ենթակա անձանց համար՝ սանկցիաների սպառնալիքի ներքո: Պոզիտիվիստների կարծիքով՝ իրավունքի էությունն այն է, որ այն պետք է գործի: Բնական իրավունքը նրանց համար ֆիկցիա է, և նրանք չեն ճանաչում մարդու անքակտելի իրավունքների գոյությունը:

Պետության համար պոզիտիվիզմը խաղացել է ինչպես դրական դեր՝ ընդգծելով իրավապարզի կայունության և գործունեության կարևորությունը, այնպես էլ բացասական՝ պատճառ դառնալով, որ իրավական աղբյուր համարվի ցանկացած սուվերեն իշխանություն, այդ թվում՝ դիկտատուրան:

Ներկայում բնական իրավունքի և պոզիտիվիզմի հակասությունները զգալիորեն հանված են՝ մարդու իրավունքները պաշտպանող նորմերի ներգրավմամբ դրական իրավունքի մեջ:

3. Իրավունքի պատմական դպրոց: Մեծ ֆրանսիական հեղափոխությունը, որը կրում էր բնական իրավունքի կարգախոս, բայց ավարտվեց յակոբինյան դիկտատուրայով, բողոք առաջացրեց գերմանական իրավագետների մոտ: Գուստավ Հուգոն, Կառլ Սավինյին և Ֆրիդրիխ Պուխտան մշակեցին տեսություն, ըստ որի՝ իրավունքի աղբյուրը ժողովրդի ոգին է՝ սովորույթները և ավանդույթները⁴:

Նրանք համարում էին, որ իրավունքը զարգանում է լեզվի և սովորույթների հիման վրա: Նրանք քննադատում էին օրենսդիրներին՝ պնդելով, որ ժողովուրդներին պարտադրված օրենքները գործում չեն: «Լավ է այն իրավունքը, որն իրականում գործում է, և լավ է այն կարգը, որին ժողովուրդը սովորել է»:

Տեսության արժանիքն այն է, որ այն ընդգծում է իրավունքի կապը ժողովրդի մշակույթի, ավանդույթների, ինքնության հետ: Թերությունն այն է, որ թերագնահատվում է օրինաստեղծ գործունեության դերը:

Սավինյին ընդունում էր, որ ժողովրդական իրավունքը և սովորույթները կարող են դառնալ օրենքի արդարության չափանիշ:

4. Իրավունքի հոգեբանական տեսությունը: Այս տեսության հեղինակը ռուս իրավագետ Լև Պետրաժիցկին է, որն իրավունք ասելով հասկանում է մարդկային հոգեկանի ֆենոմենների հատուկ ոլորտ⁵: Հուգական ակտերը, որոնք ունեն իրավական բնույթ, տարբերվում են բարոյականության և այլ իմպերատիվ-ատրիբուտիվ ապրումներից: Եթե բարոյական արարքներն ուղեկցվում են միայն սեփական բարոյական պարտքի գիտակցմամբ, ապա իրավական-

³ Մանրամասն տե՛ս *Приваков Д.Я., История еврейского и израильского права, М., 2015, с. 9-10:*

⁴ Տե՛ս *Марченко М.Н., Проблемы теории государства и права. М., 2012:*

⁵ Տե՛ս *Петражицкий П.И., Теория права и государства. СПб, 2000:*

ներն ուղեկցվում են պարտականությունների կատարման պահանջի հակադիր կողմի իրենց իրավունքով կամ իրավասությամբ:

Այստեղից էլ իրավական էմոցիաներն առաջանում են այն դեպքերում, երբ սոցիալական հարաբերության կողմերից մեկն իրեն զգում է լիազորված: Քանի որ կան բազմաթիվ աղբյուրներ, որոնք հիմնավորում են ինտուիտիվ իրավունքը՝ իրավաբանների արտահայտություններից մինչև հին ասքեր, Ա. Պետրաժիցկին որպես իրավունքի աղբյուր, բացի պաշտոնականից, առանձնացրել է կրոնական տեքստերը, իրավաբանական ասույթներն ու ասացվածքները, սովորույթներն ու ավանդույթները, անցյալի և ներկայի դատական որոշումները և այլն:

Իրավական էմոցիաներից ձևավորվում է ինտուիտիվ իրավունքը, որին Պետրաժիցկին տալիս է գլխավոր դերը գույքային, ընտանեկան, աշխատանքային ու այլ հարաբերությունների կարգավորման մեջ:

Հոգեբանական տեսության առավելությունն այն է, որ ուշադրություն է դարձվում մարդկային հոգեկանում, իրավագիտակցության մեջ իրավունքի արմատացած լինելու մասին:

5. Իրավունքի սոցիոլոգիական տեսություն: Սոցիոլոգիական տեսությունը զարգացնում է պատմական և հոգեբանական տեսությունների հիմնարար գաղափարները: Տեսությունն արտահայտում է այն մոտեցումը, ըստ որի՝ պոզիտիվ իրավունքը վերացական և սխեմատիկ ձևով չի հասցնում իրական սոցիալական կյանքի դինամիկ զարգացմանը:

Տվյալ տեսության շրջանակում առանձնացվում են երկու հիմնական ուղղություններ: Առաջին ուղղության կողմնակիցներն իրավունքի աղբյուր են համարում ոչ թե օրենքները՝ այսպես կոչված «իրավունքը գրքերում», այլ սոցիալական հարաբերությունները և դրանց մասնակիցների իրավագիտակցությունը, այսինքն՝ «կենդանի իրավունքը»: Երկրորդ ուղղությունն ուշադրությունը կենտրոնացնում է դատավորների գործունեության վրա՝ դիտարկելով, թե ինչպես են նրանք կոնկրետ գործերի քննության ընթացքում իրականացնում իրավունքի կիրառումը:

Միաժամանակ այս տեսության բոլոր ներկայացուցիչները միահամուռ են այն հարցում, որ իրավաբանական գիտությունը պետք է ուսումնասիրի ոչ այնքան իրավունքն օրենքների տեքստերում, որքան իրավունքն իր գործողության մեջ՝ այն, թե ինչպես է իրավունքը փաստացի գործում և ազդում մարդկանց վարքագծի վրա: «Իրավունք» ասելով՝ նրանք հասկանում են իրավահարաբերությունների այն ամբողջությունը, որն առաջանում է և գոյություն ունի անկախ նորմատիվ իրավական ակտերի դրույթներից:

Տվյալ մոտեցման արժանիքը կայանում է իրավունքի դիտարկման մեջ որպես սոցիալական երևույթի, որն իր պրակտիկ դրսևորումներով կապված է իրական կյանքին և իրավաբանական պրակտիկային: Սակայն այս տեսությունն ունի նաև թերություն. դատավորի հայեցողության չափից ավելի ընդգծումը կարող է հանգեցնել իրավական կամայականության և չարաշահումների՝ չունենալով ազատության և սահմանազատման հստակ չափանիշ:

6. Իրավունքի մարքսիստական տեսությունը հիմնվում է դասային պայքարի գաղափարի վրա. այն քաղաքականության և իրավունքի գոյության պայմանավորումը դիտում է հասարակության տնտեսական հիմքի միջոցով: Տեսությունը պետությունը գնահատում է որպես գործիք՝ գերիշխող դասի ձեռքերում, որը ծառայեցնում է այն ստորադաս դասերի կամքի ճնշման նպատակով, իսկ իրավունքը ներկայացվում է որպես գերակա դասի կամք՝ օրենքի ձև ստացած⁶: Այս մոտեցման ամենաէական արժանիքը տնտեսագիտական գործընթացների և իրավական համակարգի փոփոխությունների փոխադարձ կապի արդիական բացահայ-

⁶ Մանրամասն տե՛ս Մարքսիստո-լենինյան ընդհանուր տեսությունը պետության և իրավունքի մասին, Մ., «Նաուկա», 1970:

տումն է: Սակայն տեսության թերությունն այն է, որ տնտեսական գործոնը ներկայացվում է որպես գերագույն և գրեթե միակ որոշիչ գործոն՝ չնայած նրան, որ իրավունքի և պետության կազմավորման վրա ազդող տարրերի ամբողջությունը բազմաշերտ է և բազմաբնույթ:

Վերոնշյալ իրավահասկացման տիպերը ձևավորվել են սերունդների ինտելեկտուալ աշխատանքի արդյունքում: Դրանք իրավագիտության ոլորտում ներկայացնում են համակարգային ճանաչողական փորձ, որը դարձվել է քաղաքական ու իրավական ուսմունքների, իրավունքի տեսության ու փիլիսոփայության պատմության ուսումնասիրության կարևորագույն օբյեկտ: Միևնույն ժամանակ իրավունքի էության, հասարակական կյանքում նրա դերի, նշանակության ու արժեքի ըմբռնման գործընթացը բնորոշ է ոչ միայն գիտնականներին, այլև իրավական իրականության այլ սուբյեկտներին, այդ թվում՝ հասարակության այն անդամներին, որոնք անմիջապես ներգրավված չեն իրավաբանական գործունեության մեջ:

Սա հնարավորություն է տալիս առանձնացնելու իրավահասկացման դասակարգման չափանիշ, որը հիմնված է իրավական ռեֆլեքսիայի մակարդակի վրա: Իրավական ռեֆլեքսիայի տեսանկյունից տարբերակվում են իրավահասկացման հետևյալ ձևերը՝ գիտական-տեսական, մասնագիտական-գործնական և կենցաղային-առօրյա:

Գիտական տեսական իրավահասկացման առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակում բացահայտվում է իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունը: Իրավունքի մասին ընդհանուր հասկացության վրա է կառուցվում ողջ իրավաբանական դոկտրինան: Չնայած դրան՝ ճյուղային իրավաբանական գիտություններում գերակշռում է ֆորմալ-դոգմատիկ մեթոդը, մինչդեռ մնացած մեթոդները հանդես են գալիս որպես օժանդակ մոտեցումներ: Ընդհանուր-տեսական մոտեցմանը մոտ է սահմանադրական իրավահասկացումը, քանի որ սահմանադրագետների աշխատանքների մեծ մասը նվիրված է մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին, դրանց երաշխիքներին և ինստիտուցիոնալ ձևերին ժամանակակից սահմանադրական իրավունքի շրջանակում:

Ժամանակակից իրավական մտքի մեթոդոլոգիական միտումներին նվիրված իր ուսումնասիրություններում Ա. Ի. Օվչիննիկովը զարգացնում է էթնոմշակութային իրավահասկացման գաղափարը: Ըստ նրա՝ մինչև իրավունքը դառնում է բանականության արդյունք, այն հանդես է գալիս որպես հասարակության մշակութային-պատմական կյանքի դրսևորում: Հետևաբար՝ գիտությունը պետք է իրավունքը գնահատի ոչ թե որպես օբյեկտացված երևույթ, այլ որպես ապրող իրականություն: Իրավահասկացումը պետք է դիտարկել որպես իրավունք հասկացնելու գործընթաց, այլ ոչ թե պարզապես ճանաչողության մեխանիկական արդյունք: Այս մոտեցմամբ իրավունքը մշակույթի և մարդկային կյանքի ֆենոմեն է, ոչ թե արտաքին կարգ՝ ձևավորված իրավական նորմերով: Այդ իսկ պատճառով համընդհանուր իրավահասկացում գոյություն ունենալ չի կարող. այն միշտ անձնային է, ազգային-մշակութային և պատմական սահմաններով պայմանավորված:

Ժամանակակից իրավաբանության մեջ նկատվում է մեծ հետաքրքրություն իրավունքի էթնոմշակութային ոլորտների նկատմամբ: Իրավաբանական աշխարհայացքի պլուրալիզմի ճանաչումը, ինչպես նաև իրավունքի և իրավահասկացման էթնոմշակութային գործոնների դերակատարության ըմբռնումը դարձել են պետական-իրավական հետազոտությունների առանցքային ուղղությունների⁷:

Գիտատեսական իրավահասկացման ձևեր դիտվում են նաև ոչ իրավաբանական մասնա-

⁷ Տե՛ս *Гриценко Г.Д.*, Право как социокультурное явление состояние, проблемы и перспективы разрешения Ставрополь, 2002:

գիտություններով զբաղվող գիտնական-հասարակագետների մոտ: Նրանց աշխատություններն առանձնանում են հասարակության իրավական կյանքի սոցիոմշակութային, մարդաբանական և քրեաբանական շերտերի խորքային ուսումնասիրությամբ:

Եզրակացություն

Իրավահասկացման տիպերն իրավունքի աղբյուրների տեսանկյունից հիմնականում դասակարգվում են հետևյալ կերպ. սոցիոլոգիական և ռեալիստական (ազատ իրավունք), մատերիալիստական (մարքսիստական), լեգալիստիկ, իրավաբանական-պոզիտիվիստական, նախադեպային-մեկնողական:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են իրավահասկացման տիպերը՝ իրավունքի աղբյուրների տեսանկյունից: Հոդվածը ներկայացնում է իրավահասկացման ժամանակակից տիպաբանության համակողմանի տեսական ուսումնասիրություն՝ այն դիտարկելով իրավունքի աղբյուրների դոկտրինի համատեքստում: Իրավունքի տարբեր իրավաբանական շերտերում ձևավորված աղբյուրների բազմազանությունը պայմանավորում է իրավահասկացման տարբեր ուղղություններ, որոնք միաժամանակ ազդում են իրավական մտածողության, իրավական կարգավորման և նորմաստեղծ գործընթացների էվոլյուցիայի վրա: Ուսումնասիրության ընթացքում բացահայտվում են բնական-իրավական, իրավաբանական պոզիտիվիստական, պատմական, հոգեբանական, սոցիոլոգիական, մարքսիստական և էթնոմշակութային տեսությունների հիմնական դրույթները, արժեհամակարգային հիմքերը և դրանց դերը իրավական համակարգերի ձևավորման մեջ:

Բնական իրավունքի տեսությունը, հիմնված լինելով արդարության, մարդկային բանականության և բնածին ազատությունների գաղափարների վրա, դարերի ընթացքում նպաստել է իրավական պետության գաղափարի և մարդու իրավունքների դոկտրինի ձևավորմանը: Իրավաբանական պոզիտիվիզմը հակադրվում է բնական իրավունքին՝ շեշտելով պետական իշխանության կողմից ընդունված նորմի պարտադիր ուժը և իրավունքի ֆորմալ բնույթը: Պատմական դպրոցն իրավունքը դիտարկում է ժողովրդի ոգու, սովորույթների և ավանդույթների դրսևորում՝ հավաստելով իրավակարգավորման մշակութային բնույթը:

Հոգեբանական տեսությունն իրավունքը կապում է մարդու ներանձնային և հուզական ապրումների հետ՝ իրավական վարքագիծը բացատրելով իմպերատիվ-ատրիբուտիվ հոգեկան փորձառություններով: Սոցիոլոգիական մոտեցումը իրավունքը սահմանում է որպես «կենդանի իրավունքի» դրսևորում, որը ձևավորվում է ոչ թե օրենքների տեքստերում, այլ սոցիալական հարաբերությունների իրական դաշտում: Մարքսիստական մոտեցումն իրավունքը մեկնաբանում է որպես գերիշխող դասի կամքի դրսևորում, որը ձևավորվում է հասարակության տնտեսական կառուցվածքի հիման վրա: Էթնոմշակութային տեսությունն իրավունքը դիտում է որպես մշակույթի, ազգային ինքնության և պատմական միջավայրի արդյունք՝ ընդգծելով իրավահասկացման անհատական և մշակութավարժական պայմանավորվածությունը:

Հոդվածի եզրակացությունն ընդգծում է, որ իրավահասկացման տիպաբանության բազմազանությունը կարևոր մեթոդաբանական նշանակություն ունի իրավական մտածողության զարգացման, իրավունքի աղբյուրների ինտեգրատիվ ըմբռնման, ինչպես նաև իրավական համակարգերի համեմատական վերլուծության համար: Տիպաբանական մոտեցումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու իրավունքի սոցիալ-մշակութային հիմքերը, ձևավորել միջդիսցիպլինար հետազոտական մեթոդներ և նպաստել իրավական կրթության զարգացմանը:

Annotation. This article presents an extensive theoretical analysis of the typology of contemporary legal consciousness, examining it within the framework of the doctrine of the sources of law. The study argues that each legal family—such as the Romano-Germanic, common law, religious, socialist, and mixed systems—creates its own unique structure of legal sources, which in turn shapes corresponding forms of legal consciousness. The research

identifies and evaluates the principal approaches to legal consciousness, including natural law, legal positivism, the historical school of law, psychological jurisprudence, sociological jurisprudence, Marxist theory, and ethnocultural conceptions.

Natural law theory, rooted in ideas of justice, rationality, and inherent human rights, has historically influenced the doctrines of the rule of law and human rights. Legal positivism, by contrast, places emphasis on law as the command of a sovereign authority, underscoring the normative force and enforceability of legal rules. The historical school views law as an expression of the spirit of the people, shaped by customs and traditions. Psychological jurisprudence interprets law as a manifestation of human mental and emotional experiences, particularly imperatory-attributive feelings that define legal behavior.

Sociological jurisprudence frames law as a “living law,” arguing that real social relations, rather than formal legal norms, form the true foundation of legal order. Marxist legal theory interprets law as the expression of class will determined by economic relations, claiming that legal superstructures are conditioned by the material base of society. The ethnocultural approach asserts that legal consciousness is shaped by cultural identity, national traditions, and historical development, emphasizing that no universal form of legal consciousness can exist independent of cultural context.

The article concludes that understanding the typological diversity of legal consciousness is essential for developing a comprehensive methodology for analyzing legal systems, interpreting legal sources, and investigating the cultural foundations of law. Such a typological approach enables deeper interdisciplinary research, supports comparative legal studies, and contributes to the formation of more sophisticated models of legal education and legal awareness.

Անոտация. В статье представлен развернутый теоретический анализ современной типологии правового сознания в контексте доктрины источников права. Автор показывает, что каждая правовая семья — романо-германская, англосаксонская, религиозная, социалистическая, а также смешанные правовые системы — формирует собственную систему источников права, которая, в свою очередь, предопределяет соответствующие типы и формы правосознания.

В работе рассматриваются ключевые теоретические направления правопонимания: естественно-правовое учение, юридический позитивизм, историческая школа права, психологическая юриспруденция, социологическая теория права, марксистская концепция, а также этнокультурный подход.

Естественно-правовое учение, опираясь на идеи справедливости, рациональности и прирожденных прав человека, сыграло фундаментальную роль в формировании концепций правового государства и прав человека. Позитивизм трактует право как выражение воли суверенной власти, акцентируя его формально-нормативный характер. Историческая школа рассматривает право как проявление народного духа, закрепленного в обычаях и традициях. Психологическое направление связывает происхождение права с эмоционально-волевыми переживаниями индивида. Социологическая юриспруденция исходит из того, что подлинное право формируется в сфере реальных социальных отношений, а не исключительно в тексте нормативных актов. Марксистская теория интерпретирует право как волеизъявление господствующего класса, обусловленное экономической структурой общества. Этнокультурный подход подчеркивает культурно-историческую обусловленность правосознания и ставит под сомнение возможность универсального правопонимания.

В заключение делается вывод о том, что типологическое многообразие правосознания обладает существенным методологическим значением для исследований в области теории права, сравнительного правоведения и правовой культуры. Данный подход способствует развитию междисциплинарных исследований и более глубокому осмыслению природы права.

Բանալի բառեր - իրավունք, իրավունքի աղբյուրներ, իրավահասկացման փուլեր, բնական իրավունք, իրավական ընդհանրիք (համակարգ), ընդհանուր իրավունքի համակարգ, ռոմանագերմանական, սոցիալիս-

գրական, մահմեդական:

Keywords: law, sources of law, types of legal consciousness, natural law, legal family (system), common law system, Romano-Germanic system, socialist system, Islamic law.

Ключевые слова: право, источники права, типы правосознания, естественное право, правовая семья (правовая система), система общего права, романо-германская правовая система, социалистическая правовая система, мусульманское право.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ստեփանյան Հ. Մ., Նոր իրավաըմբռնման անհրաժեշտությունը: Եվրոպրինտ, Երևան, 2011:
2. Нерсесянц В.С., Общая теория права и государства. М., «Наука», 2014.
3. Приваков Д.Я., История еврейского и израильского права. М., 2015.
4. Марченко М.Н., Проблемы теории государства и прав. М., 2012.
5. Петражицкий Л.И., Теория права и государства. СПб., 2000.
6. Марксистско-ленинская общая теория государства и права, М., «Наука», 1970.
7. Гриценко Г.Д., Право как социокультурное явления: состояние, проблемы и перспективы разрешения, Ставрополь, 2002.

Համբարձումյան Գ. - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիասցե՝ gagik.hambardzumyan1@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 17.11.2025 թ., տրվել է գրախոսության 17.11.2025 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-11>

ԴԱՎԻԹ ՍԱՐՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DAVIT SAROYAN
*Applicant at the Institute of Philosophy,
Sociology and Law of the National Academy
of Sciences of the Republic of Armenia*

ДАВИД САРОЯН
*Соискатель Института философии, социологии
и права Национальной академии наук
Республики Армения*
<https://orcid.org/0009-0004-5559-3445>

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

**INTERNATIONAL LAW AND THE PROBLEM OF LIMITING STATE
SOVEREIGNTY**

**МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО И ПРОБЛЕМА ОГРАНИЧЕНИЯ
ГОСУДАРСТВЕННОГО СУВЕРЕНИТЕТА**

Ներածություն

Պետության ինքնիշխանությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է. այն արտահայտում է պետության լիակատար իրավասությունն իր ներքին և արտաքին քաղաքականությունն ինքնուրույն վարելու հարցում: Սակայն 20–21-րդ դարերում միջազգային համագործակցության լայնացումն ու համաշխարհային փոխկապակցվածությունը բերել են մի իրավիճակի, որտեղ ինքնիշխանությունն այլևս բացարձակ չէ: Պետությունները ստիպված են փոխզիջումների գնալ՝ միանալով միջազգային պայմանագրերի, կազմակերպությունների և նորմատիվ համակարգերի, որոնք սահմանում են որոշակի պարտավորություններ և սահմանափակումներ: Այս խնդիրը ձևակերպվում է որպես **միջազգային իրավունքի և պետության ինքնիշխանության սահմանափակման հարաբերակցության հիմնախնդիր**: Արդի դարաշրջանում իրավունքը և պետությունների ինքնիշխանության փոխհարաբերակցության հիմնախնդիրը գտնվում են գիտնականների սևեռուն ուշադրության կենտրոնում: Այս իմաստով, սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են պետության ինքնիշխանության խնդիրը՝ կապված նրա ինքնիշխան իրավունքների լեգիտիմ սահմանափակման հետ: Այս հարցը

ծագում է այն ժամանակ, երբ ինքնիշխան պետությունն իր կամքով հանդիսանում է միջազգային կամ տարածաշրջանային միջկառավարական կամ վերպետական կազմակերպության (կառույցի) անդամ: Հետևաբար, պետությունը կամովին հրաժարվում է իր ինքնիշխան իրավունքների մի մասից՝ հանուն տվյալ կազմակերպության գործառնական լիազորությունների:

Հիմնական հետազոտություն

Գլոբալացված աշխարհի համար բնորոշ է կառավարման միջազգային համակարգերի զարգացող ցանց, որը սահմանափակում է ավանդական պետական ինքնիշխանությունը: Ա. Մարտինելլին առաջարկում է տարբերակել տրանսազգային կարգավորիչներ. առաջինը՝ միջազգային ինստիտուտներ, որոնք անվանվում են միջազգային կառավարական կազմակերպություններ (ՄԿԿ), և երկրորդ՝ միջազգային պայմանագրերի ռեժիմը¹:

Ներկայիս աշխարհում առկա է միջազգային կառավարական կազմակերպությունների զարգացած ցանց: XX դարում դրանց թիվն աճել է 6 անգամ: Նրանց կողմից անցկացվող տարեկան խորհրդակցությունների և հանրագումարների թիվը գերազանցել է 400 հազարը: Միավորված ազգերի կազմակերպության և այլ ինքնավար ՄԿԿ համակարգը, օրինակ, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), միջազգային պայմանագրերի ռեժիմների հետ համաշխարհային կառավարություն չեն, նրանք սահմանափակում են անդամերկրների ինքնիշխանությունը, սակայն զուրկ են ուժի օրինական կիրառության մենաշնորհից: Նրանք աջակցում են համաշխարհային քաղաքականությանը և տնտեսությանը, էկոլոգիային և սոցիալական պաշտպանությանն ի տարբերություն միջազգային հարաբերությունների նկատմամբ ավանդական ուշադրությանը: Նպաստում են նաև պոլիարխիայի աճին, ավելացնում գլոբալ քաղաքականության մեջ դերակատարների թիվը, գլխավորապես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի և առողջապահության, մշակութային ժառանգության պահպանության, արդյունաբերական զարգացման, թմրանյութերի նկատմամբ հսկողության և խաղաղության պահպանության ոլորտներում գործակալությունների միջոցով: ՄԿԿ հաճախ կիրառվում են առաջատար գլոբալ դերակատարների կողմից սեփական հետաքրքրություններում և նպատակներով, սակայն դրանք հնարավորություն են ընձեռում պաշտպանել մարդու իրավունքները, միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:

Մարտինելլիի մոտեցմամբ՝ ազգային ինքնիշխանության աստիճանական էրոզիան հանգեցնում է այն մտքին, որ գլոբալ փոխկախվածության պայմաններում անհրաժեշտ է ստեղծել ավելի արդյունավետ, ինստիտուցիոնալապես հզոր և ժողովրդավարական «legitimity»-ով օժտված ՄԱԿ, որը կարողանա ապահովել միջազգային մակարդակի համակարգում ու համաշխարհային կառավարման ավելի բարձր մակարդակ²: ՄԿԿ համակարգն էական աճեց քանակականից որակական աստիճանի: XIX դարից հետո կնքվել են բազմաթիվ բազմակողմ պայմանագրեր համատեղ կարգավորման կամ որևէ մեկի չպատկանող (բոլորին պատկանող) բարիքների համար բաց ծով, օդային հաղորդակցություններ, որոնք կապում, ինտեգրում են մարդկանց և տարբեր պետություններին պատկանող ինստիտուտները: Հաջորդ քայլն ընդհանուր հետաքրքրությունների նոր խնդիրներ լուծող միջազգային ինստիտուտների ստեղծումն է (Միջազգային հեռագրական միությունը (1865) կամ նրանք, որ ստեղծել էին Ազգերի լիգան (1920 թ.), Միջազգային դատարանը ՄԱԿ ստեղծել է 1945 թ. առավել հավակնոտ նպատակներով: Միջազգային համագործակցման ուղով, աջակցություն մարդու հիմնական

¹ Տե՛ս *Мартинелли А.*, Рынки, правительства, сообщества и глобальное управление // Социс. 2003 No1 с. 16-17:

² Տե՛ս *Мартинелли А.*, նշվ. աշխ., էջ 16:

իրավունքների պաշտպանությանը: Բացի մասնագիտացված բյուրոներից՝ ՄԱԿ մանկական ֆոնդ, ըստ առևտրի և զարգացման ՄԱԿ-ի հանձնաժողով (ՅՈՒՆԿՏԱԴ), Շրջակա միջավայրի պահպանման ծրագիր և այլն, ՄԱԿ ինքնավար մասնագիտացված ինստիտուտների բարդ համակարգի կենտրոն: Դրանք գոյություն են ունեցել նաև նախկինում (Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Համաշխարհային բանկ): Սակայն, գլխավորապես դրանք ստեղծել է ինքը՝ ՄԱԿ-ը, Միավորված ազգերի կրթական գիտական և մշակութային կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ), Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), Արժույթի միջազգային հիմնադրամ: Դրանք բոլորը կապված են ՄԱԿ-ի համակարգի հետ, ինտեգրված դրանում հատուկ պայմանագրերով:

ՄԱԿ-ի համակարգը ձևավորվել է որպես փոխգիջումային կառուցվածք, որի հիմքում դրված է պետությունների հավասար ներկայացվածությունն ու Գլխավոր ասամբլեայում ժողովրդավարական մասնակցության գաղափարը: Նրա առաքելությունն է ապահովել միջազգային հարաբերությունների խաղաղ զարգացումը, ինչպես նաև համաշխարհային գործընթացների թափանցիկ և կոլեկտիվ կարգավորումը: Սակայն կազմակերպության կառուցվածքը ներառում է նաև ուժային քաղաքականության տարրեր. հատկապես Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներին տրամադրված վետոյի իրավունքը, որը որոշ իրավիճակներում գործնականում արգելափակում է ՄԱԿ-ի արդյունավետ մասնակցությունն ու որոշումների կայացումը: Բացի դրանից՝ ՄԱԿ-ի գործունեության օրինականության (legitimacy) և արդյունավետության (effectiveness) ընկալումը սերտորեն պայմանավորված է անդամ պետությունների քաղաքական և ինստիտուցիոնալ կարողություններով: Ինչքան փոքր է որևէ պետության ներուժը, այնքան ավելի թույլ է նրա վստահությունը, որ ՄԱԿ-ը ներկայացնում է իր շահերը, ինչն էլ հաճախ նվազեցնում է այդ պետության պատրաստակամությունը՝ միջազգային հիմնարար ոլորտներում՝ օրինակ, հանրային բարիքների կարգավորում, համաշխարհային անվտանգության մեխանիզմներ կամ շրջակա միջավայրի պաշտպանություն, իր ինքնիշխանությունից որոշ հատվածների փոխանցման հարցում: Այսպիսով՝ ՄԱԿ-ի ներկայիս կառուցվածքը միաժամանակ արտացոլում է ինչպես գլոբալ համագործակցության ժողովրդավարական իդեալը, այնպես էլ մեծ տերությունների ուժային գերակայությունը, ինչը սահմանափակում է կազմակերպության՝ համաշխարհային կառավարման լիարժեք և հավասարակշռված համակարգ դառնալու կարողությունը: Այնուամենայնիվ, չնայած սահմանափակումներին, բանակցությունների բարդ գործընթացներին, ՄԱԿ-ն արդյունավետ է: Այն ավանդական աշխարհաքաղաքականության համեմատությամբ տրամադրել է գլոբալ կառավարման այլընտրանքային սկզբունքները: Այդ սկզբունքների հիմքում կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից որոշման կոլեկտիվ ընդունումն է, իսկ նպատակը միջազգային խնդիրների խաղաղ լուծման համաձայնությունը³:

ՄԱԿ-ի համակարգին անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ, առավել օրինական արդյունավետ դառնալու համար: ՄԱԿ-ի խարտիան ընդգրկում է փոփոխությունների նախադրյալներ, սակայն բոլոր դեպքերում մնում է որպես կոնֆլիկտների արդյունավետ լուծման անփոխարինելի կազմակերպություն: Ներկայում քննարկվում են մի քանի առաջարկություններ: Դրանց շարքում, ըստ քաղաքական որոշակի խնդիրների, տրանսազգային դերակատարների, բացի ազգային պետություններից, ձայնի իրավունքով օժտել նաև Գլոբալ քաղաքացիական հասարակության ֆորումի, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հետ համատեղ Անվտանգության խորհուրդն ընտրող Աշխարհի ազգերի՝ Ասամբլեայի ստեղծումը: Այս առաջարկություն-

³ Shteyn Markov M.H., Государство и право в условиях глобализации. М., 2008:

ների արժանիքը՝ ազգային պետությունների հետ չկապված նույնականության զարգացում, ինքնիշխան ռեժիմներով՝ երկրներում քվեարկության դեմոկրատական գործընթացների տարածում (Աշխարհի ազգերի ասամբլեայի ընտրությունները):

Վերջին ժամանակներում խոսք է գնում կրթության, ծնելիության քաղաքների զարգացման վերաբերյալ: Արդյունքները՝ հակասական են: Արժույթի միջազգային հիմնադրամը միջամտում է ֆինանսական ճգնաժամային պետություններում՝ տրամադրելով վարկեր այն ստացողների տնտեսական որոշակի քաղաքականության պայմաններով: Զարգացող երկրներին հարկային հարկադրման ԱՄՀ գծին նպաստում է այն, որ վերջինիս հետ վիճելու համար սակավաթիվ ազգային պետություններ են կոմպենստենտ կամ ուժեղ: Այս միջազգային մարմինները չեն հսկվում կարգավորված գործընթացներով, ինչը տեղի է ունենում դեմոկրատական պետություններում:

Առանձնահատուկ դիրք է գրավում Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, միակ տրանսազգային ինստիտուտը, որը վեճերի կարգավորումներում օժտված է հարկադրանքի ուժով: ԱՀԿ-ն ձևավորվել է որպես GATT-ի (Սակագների և առևտրի վերաբերյալ ընդհանուր համաձայնագրի) բնական շարունակություն՝ աստիճանաբար ընդլայնելով իր կարգավորող ոլորտները. արդյունաբերական ապրանքների առևտրից դուրս գալով նաև գյուղատնտեսության, ինտելեկտուալ սեփականության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներ:

Միջազգային համաձայնագրերը հաստատում են որոշումների ընդունման ուղիղ կամ կողմնակի սկզբունքներ, նորմեր, կանոններ և ընթացակարգեր, որոնց շուրջ խտացվում է միջազգային հարաբերության որոշակի առարկայական ոլորտի դերակատարների սպասումները⁴: Դրանք բավականին բազմազան ոլորտներ են, ոմանք կարելի է համարել շուկաների գործառնական համարժեքներ, քանի որ դրանք կարգավորում են ապրանքների և ծառայությունների մատակարարումը, տարածումը, նպաստում գլոբալ քաղաքականության ինստիտուցիոնալացման աճին, ատեղծում գլոբալ կառավարման ձևեր, տարբերվում ազգային ինքնավարության ավանդական գաղափարներից: Դրանցից ոմանք գոյատևում են երկար ժամանակ. մյուսները նոր են ծագել: Որոշ միջազգային համաձայնագրեր հենվում են մեկ կամ մի քանի միջկառավարական կազմակերպություններին՝ միջազգային տրանսպորտային համակարգի գլոբալ ռեժիմը պահպանելու, որի միջուկ են Քաղաքացիական ավիացիայի միջազգային ասոցիացիան և Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիան: Շատերը հենված են կոնկրետ պայմանագրերից բխող պայմանավորվածություններին, կոլեկտիվ խնդիրներին կամ շահերի միջազգային ընդհանրությանը: Այսպես միջուկային զենքի չտարածման ռեժիմը կառուցված է միջազգային պայմանագրի հիման վրա, լրացված կանոնավոր միջազգային կոնֆերենցիաներով: Միջազգային կարգավորիչների հատուկ տիպերից մեկը միջազգային առևտրային արբիտրաժը, կազմակերպություն, որը հետևում է բաժնետոմսերի անվտանգությանը և վարկանիշին: Ամբողջ աշխարհում մասնագետ-վերլուծաբանների՝ հսկայական թիվ հնարավորություն է տալիս առավել ուժեղ ազդելու կոնկրետ երկրի քաղաքականության վրա, քան արտերկրյա կառավարությունները կամ շահերի սեփական խմբերը: Այսպիսով, ազգային պետությունների կառավարությունները հայտնվում են կառավարման գլոբալ համակարգի ընդլայնվող ցանցում: Ազգային պետությունների օրինաստեղծումն առավել է միա-հյուսվում միջազգային իրավունքի նորմերի հետ:

Պետական ինքնիշխանությունը ձևավորվում է երկու բաղադրիչներից՝ արտաքին և ներ-

⁴ Sfrù *Мартинелли А.*, Рынки, правительства, сообщества и глобальное управление Социс. 2003, №1. с. 18:

քին⁵: Ներքին բաղադրիչը շոշափում է պետության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունները: Դեմոկրատիայի պայմաններում արտահայտելով հիմնական սոցիալական խմբերի և շերտերի շահերը՝ պաշտպանելով ամբողջ հասարակության ընդհանուր շահերը պետությունը ջանում է սահմանափակել հասարակական համակարգի գոյության և պատշաճ գործունեությանը սպառնացող խմբային եսասիրությունը: Այսպես տնտեսության կարգավորման ոլորտում պետության գործունեությունն անխուսափելի շոշափում է կոնկրետ կորպորացիաների և այլ մասնավոր անձանց շահերը, որոնք կարգադրությունների արդյունքում կարող են կրել նյութական էական կորուստներ, սակայն հիմնականում պետական կարգավորումը նպատակ ունի ստեղծել առավել բարենպաստ պայմաններ, ըստ սոցիալական պահանջների բավարարման, տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար: Միաժամանակ ազգային պետության ինքնիշխան իշխանությունը օժտված է ուժի կիրառության մենաշնորհային իրավունքով, այն ունի կյանքի բազմաթիվ ոլորտներ՝ ներառելով նաև տնտեսությունը, ուժային կարգավորման նկատմամբ մենաշնորհային իրավունք: Ազգային պետության այս մենաշնորհին իրականացվում է տեղական քաղաքական մարմիններով: Տնտեսական ոլորտում ներքին ինքնիշխանությունն արտահայտվում է նաև հարկման կամ մասնավոր գործարարության հատվածի կարգավորումներում: Արտաքին բաղադրիչը վերաբերվում է համաշխարհային հանրային այլ անդամների կողմից որևէ պետության ճանաչմանը: Այն հենվում է փոխադարձ հարգանքի հաստատված սահմաններում տարածքային ամբողջականության ընդունմանը: Ռեալիստները հիմնական շեշտադրությունը կատարում են միջավայրի փոփոխությանը և պնդում, որ միջազգային կառավարության բացակայությունը նշանակում է, որ տվյալ դեպքում բացակայում է բռնությունից, բռնության կիրառման սպառնալիքից բոլոր պետություններին պաշտպանություն տրամադրող համապարփակ իշխանական կառույցը: Լիբերալ ինստիտուցիոնալիստները, հակառակը ուշադրություն են դարձնում միջազգային հարաբերությունների գործընթացին որպես պետությունների շահերի վարքագծի մեկնաբանության համատեքստի: Նրանք ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ ռեալիստները անտեսում են միջազգային հարաբերությունների կառույցներում ներգրավված մարդկանց ընկալումները, սպասումները, ինչպես նաև համագործակցության ինստիտուտներն ու օրինաչափությունները: Այդ իսկ պատճառով միջազգային հարաբերություններում անարխիան կապված չէ միջազգային պետության գոյության հնարավորության, թեկուզ և հատվածային, մերժման հետ, քանի որ միջազգային հարաբերությունների մեծամասնությունը շարունակում են գոյատևել առանց որևէ վերապետական ինստիտուտների և իրենցից ներկայացնում երկիր-գործընկերների վարքագծի վերաբերյալ սպասումների մարմնավորում⁶:

Տնտեսական իմաստով պետության արտաքին ոլորտում ինքնիշխանությունն արտահայտվում է սակագնային և վճարումների մաքսային տուրքերի մանիպուլյացիաներում: Այն արտահայտվում է նաև տնտեսական հարկադրանքի դեպքում, օրինակ՝ սանկցիաների կիրառում ազդեսոր պետության նկատմամբ (օրինակ՝ ՌԴ-ի դեմ կիրառվող միջազգային սանկցիաները): Այն իրականացվում է (կամ, առնվազն, սկսում է իրականացվել) քաղաքական գործիչների տնտեսական համագործակցության շուկայական, պլանային կամ խառը) նորմալ ընթացքում արտահանման-ներկրման գործընթացների արգելափակմամբ միջամտման ուղիով⁷: Փոխկախվածությունը սահմանափակում է արտաքին տնտեսական ինքնիշխանու-

⁵ Տե՛ս *Чиркин В.Е.*, Современное государство. М., 2001:

⁶ Տե՛ս *Grieco J.M.*, Cooperating Among Nations: Europe, America and Non-Treaty Parties to Trade. *Int'l Thaca*, 1990, էջ 8:

⁷ Տե՛ս *Nincic M.*, Wallenstein P. Economic Coercion and Foreign Policy // Nincic M, Wallenstein P eds, Dilemmas of Economic Coercion Sanctions in World Politics, NY., 1983, էջ 3:

թյան պահպանության նպատակներով տնտեսական հարկադրության կիրառման հնարավորությունները: Երբ պետությունները դառնում են փոխկապված, նրանք սկսում են ընդունել լիարժեք ինքնիշխանության և անկախության հիմքերով պետականության հաստատման արդյունավետությունը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում ձևավորվեց գիտական գրականության էական հարթակ, որում քննադատության է ենթարկվում նեոռեալիստների վերաբերյալ տեսական թեզը, որ պետությունները հանդես են գալիս միջազգային հարաբերությունների ունիտար սուբյեկտների որակով: Այս հետազոտությունների խթան է պնդումը, որ արտաքին քաղաքական որոշումների վրա ազդում են ներքաղաքական հանգամանքները, այլ ոչ միջպետականները: Այսպես՝ Կատցենշտեյնը գրում է նրա վերաբերյալ, որ ցանկացած արտաքին քաղաքական մարտավարության հիմնական նպատակ է միջազգային քաղաքական էկոնոմիկայի հետ պետության ներքին տնտեսական քաղաքականության համաձայնեցումը⁸: Այլ հեղինակ՝ Դ. Բոլդուինը, պնդում է, որ արտաքին տնտեսական քաղաքականությունը, տնտեսական գործընթացներով կառավարման ունակությունը սկսում է ճնշել պետական անվտանգության ապահովմանը կողմնորոշված դիվանագիտության ավանդական ձևերին⁹: Ռ. Պատեմն անվանել է արտաքին և ներքին քաղաքականությունների փոխկապվածության ժամանակակից երևույթը «երկմակարդակ խաղ»¹⁰: Ազգային մակարդակում ներքաղաքական խմբերը հետապնդում են իրենց շահերը, ազդեցություն ունենալով կառավարության վրա, որպեսզի վերջինս իրականացնի իրենց համար բարենպաստ քաղաքականություն, այն դեպքում, երբ քաղաքական գործիչները՝ ապահովում են իրենց իշխանությունը ներքաղաքական խմբերի ներսում միությունների ստեղծման ուղիով: Ազգային կառավարությունը՝ միջազգային մակարդակում ջանում է իրականացնել՝ մաքսիմումը ներքաղաքական խմբերի շահերի բավարարման և տնտեսական զարգացման արտերկրյա տենդենցների անբարենպաստ հետևանքների մինիմալացման համար: Երկու մակարդակներն էլ պետք է հաշվարկվեն մարդկանց կողմից, որոնք ընդունում են պատասխանատու որոշումներ, քանի որ իրենց երկրները մնում են փոխկապված, թեկուզ և ինքնիշխան: Այլ խոսքերով՝ ժամանակակից քաղաքական և պետական գործիչները սահմանափակված են իրենց շահերի անբեկանելի աճը ապահովելու համար ճնշումների իրականացմանը պատրաստի հսկայական ռեսուրսներով օժտված ներքաղաքական խմբերի շահերի վրա ազդեցության քաղաքական միջոցների ընտրության մեջ: Մյուս կողմից՝ պետական և քաղաքական գործիչները ստիպված են հավասարակշռություն գտնել պետության անվտանգության ապահովման հետ կապված ծախսերի և սոցիալական ծրագրերի միջև: Որպես հետևանք՝ պետությունը կարող է արտաքնապես ոչ ռացիոնալ գործել, քանի որ այն ինչը թվում է բացարձակ ռացիոնալ և արդարացված միջազգային մակարդակում, կարող է հանդիսանալ ապաքաղաքական ներպետական մակարդակում և չընդունվել քաղաքացիների կողմից:

Ամփոփելով նշենք, որ արդի գլոբալացման և ինտեգրման պայմաններում պետությունների ինքնիշխանությունը որոշակի սահմանափակումների է ենթարկվում՝ հանուն տնտեսական և առևտրային հարաբերությունների զարգացման, հանուն անվտանգության ապահովման, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային երաշխավորված պաշտպանության:

⁸ Տե՛ս Katzenstein P.J., *Between Power and Plenty: Forsing Economic Policy and Adbaced Industrial States*, Madison, 1978, էջ 4:

⁹ Տե՛ս Baldwin D., *Economic Statecraft* Princetion, 1985, էջ 29-50:

¹⁰ Տե՛ս Putnam R., *Diplomacy and Domestic Politics: The Logic of Two-level Gems* // *Internacional Organizon*, vol. 42 (Summer), 1988, էջ 427-461:

Եզրակացություն

Գլոբալացման և ինտեգրման պայմաններում ազգային պետությունների ինքնիշխանությունը ենթարկվում է նոր տիպի սահմանափակումների՝ միջազգային համագործակցության, տնտեսական փոխկախվածության, համաշխարհային անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով: Այս սահմանափակումները ոչ միայն նվազեցնում են պետությունների ինքնուրույնությունը, այլև զարգացնում են գլոբալ կառավարման ինստիտուտները, որոնք դառնում են ժամանակակից աշխարհակարգի անբաժան մաս:

Միջազգային ակտիվ ինտեգրման գործընթացներում օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում որոշակիորեն սահմանափակել պետությունների ինքնիշխան իրավունքները՝ հանուն քաղաքական, տնտեսական, մշակութային, իրավական հարաբերությունների սերտացման:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են պետության ինքնիշխանության սահմանափակման խնդիրները միջազգային իրավունքի դոկտրինայում և պետությունների պրակտիկայում: Այս խնդիրը հատկապես սրվում է, երբ պետությունը անդամակցում է միջազգային կառավարական կազմակերպություններին (օրինակ՝ Եվրոպական միություն և այլն): Այս պարագայում պետություններն իրենց ինքնիշխան իրավունքները պետք է զուգակցեն տվյալ միջազգային կառավարական կազմակերպությունների կանոնադրություններին (օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը) և իրենց պրակտիկ գործունեությունը համապատասխանեցնեն կանոնադրության պահանջներին: Սակայն, հարցն ավելի է բարդանում, երբ պետությունը հանդիսանում է վերպետական կազմակերպության և կառույցի անդամ: Այստեղ, որպես կանոն, պետությունը կամովին հրաժարվում է իր ինքնիշխան իրավունքների մի մասից՝ ի օգուտ այս կազմակերպության գործառնական լիազորությունների: Միջազգային պայմանագրերի ռեժիմները նույնպես կարևոր դերակատարներ են՝ սահմանելով նորմեր, կանոններ և ընթացակարգեր, որոնք ապահովում են առանձին ոլորտների գլոբալ կարգավորումը, ինչպես օրինակ՝ միջուկային զենքի չտարածման ռեժիմը կամ միջազգային տրանսպորտային համակարգերը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ ազգային օրինաստեղծումը ավելի սերտորեն է համադրվում միջազգային իրավունքի հետ, իսկ պետությունները դառնում են գլոբալ կառավարման ընդլայնվող համակարգի բաղադրիչներ:

Հոդվածում ներկայացվում է նաև ինքնիշխանության ներքին և արտաքին բաղադրիչների տարբերությունը: Ներքին ինքնիշխանությունն արտահայտվում է հասարակության և տնտեսության վրա պետության կարգավորիչ դերով, ուժի կիրառման մենաշնորհով և հարկային ու տնտեսական քաղաքականությունների իրականացման իրավասությամբ: Արտաքին ինքնիշխանությունը հանդես է գալիս որպես պետությունների միջազգային ճանաչում, տարածքային ամբողջականության հարգում և արտաքին տնտեսական քաղաքականություն: Միջազգային փոխկախվածության աճը, ինչպես նաև սանկցիաների և տնտեսական ճնշումների գործիքակազմի կիրառությունը, միաժամանակ ընդլայնում և սահմանափակում են պետությունների արտաքին ինքնավարությունը:

Annotation. This article provides a detailed examination of the limitations imposed on state sovereignty within the doctrine of international law and in the practice of states. This issue becomes particularly acute when a state joins international governmental organizations (for example, the European Union). In such cases, states must align their sovereign rights with the charters of these organizations (such as the UN Charter) and adjust their practical activities to meet the requirements set forth in those charters. The situation becomes even more complex when a state is a member of a supranational organization or institution. In such instances, the state, as a rule, voluntarily relinquishes part of its sovereign rights in favor of the functional competencies of that organization.

Regimes established by international treaties also play an important role by defining norms, rules, and procedures that ensure global regulation in specific fields, such as the non-proliferation regime for nuclear weapons

or international transport systems. All of this leads to national lawmaking becoming increasingly intertwined with international legal norms, while states themselves become part of an expanding system of global governance.

The article also highlights the distinction between the internal and external dimensions of sovereignty. Internal sovereignty is reflected in the state's regulatory authority over society and the economy, its monopoly on the legitimate use of force, and its power to implement fiscal and economic policies. External sovereignty, in turn, manifests itself in the international recognition of states, respect for their territorial integrity, and the conduct of external economic policy. Growing international interdependence, along with the use of sanctions and mechanisms of economic pressure, simultaneously expands and limits the external autonomy of states.

Аннотация. В статье подробно рассматриваются проблемы ограничения государственного суверенитета в доктрине международного права и в практике государств. Данная проблема особенно обостряется в тех случаях, когда государство вступает в международные межправительственные организации (например, Европейский союз и др.). В подобных ситуациях государства вынуждены согласовывать осуществление своих суверенных прав с уставами соответствующих международных межправительственных организаций (в частности, с Уставом ООН) и приводить свою практическую деятельность в соответствие с их требованиями.

Однако вопрос приобретает ещё более сложный характер, когда государство становится членом наднациональной организации или структуры. В таких случаях государство, как правило, добровольно передает часть своих суверенных полномочий в пользу функциональных компетенций соответствующей организации.

Важную роль в данном процессе играют международно-договорные режимы, которые устанавливают нормы, правила и процедуры, обеспечивающие глобальное регулирование отдельных сфер, таких как режим нераспространения ядерного оружия или международные транспортные системы. В результате национальное правотворчество всё более тесно переплетается с нормами международного права, а государства всё чаще выступают как элементы формирующейся системы глобального управления.

В статье также проводится разграничение внутренних и внешних аспектов государственного суверенитета. Внутренний суверенитет проявляется в регулирующей роли государства по отношению к обществу и экономике, в его монополии на легитимное применение силы, а также вправе осуществлять налоговую и экономическую политику. Внешний суверенитет выражается в международном признании государства, уважении его территориальной целостности и самостоятельном осуществлении внешнеполитической и внешнеэкономической деятельности. Рост международной взаимозависимости, а также применение санкционных механизмов и экономического давления одновременно расширяют и ограничивают внешнюю автономию государств.

Բանալի բառեր - ինքնիշխան պետություն, միջազգային կառավարական կազմակերպություն, վերաբերական կազմակերպություն, ինքնիշխան իրավունքներ, ինքնիշխանության սահմանափակում:

Keywords: *sovereign state, international governmental organization, supranational organization, sovereign rights, limitation of sovereignty.*

Ключевые слова: *суверенное государство, международная межправительственная организация, наднациональная организация, суверенные права, ограничение суверенитета.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Мартинелли А. Рынки, правительства, сообщества и глобальное управление// Социс. 2003.№ 1, с. 11-17.
2. Мартинелли А. նշվ. աշխ., էջ 16:

3. Марченко М.Н. Государство и право в условиях глобализации. М., 2008.
4. Мартинелли А. Рынки, правительства, сообщества и глобальное управление Социс. 2003, №1. С. 18.
5. Чиркин В.Е. Современное государство. М., 2001.
6. Grieco J. M. Cooperating Among Nations: Europe. America and Non-Traff Bamies to Trande. L. 1990.
7. Nincic M. Wallenstein P. Economic Coerecion and Foreign Policy// N.Y., 1983.
8. Katzenstein P.J. Between Power and Plenty: Forsing Economic Policy and Adbaced Industrial States. Madison, 1978.
9. Baldwin D. Economic Statecraft Princetion. 1985.
10. Putnam R. Diplomacy and Domestic Politics: The Legic of Two lewel Gems// Internatuional Organizon, Vol. 42 (Summer), 1988, էջ 427-461:

Սարոյան Դ. - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիասցե՝
davitsaroyan09@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.11.2025 թ., տրվել է գրախոսության 18.11.2025 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-20>

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Բարձրագույն դատական խորհրդի անդամ

KAREN TUMANYAN
Member of the Supreme judicial council

КАРЕН ТУМАНЯН
Член Высшего судебного совета
<https://orcid.org/0009-0002-3231-4939>

**ԱՌՈՂՋ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

**THE NECESSITY OF ENSHRINING THE RIGHT TO A HEALTHY
ENVIRONMENT IN THE CONSTITUTION**

**НЕОБХОДИМОСТЬ ЗАКРЕПЛЕНИЯ В КОНСТИТУЦИИ ПРАВА НА
ЖИЗНЬ В ЗДОРОВОЙ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЕ**

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքի գերակայության հիմնարար արժեքները, զուգակցված մարդկային արժանապատվության, հիմնական իրավունքների գերակայության, դրանց անմիջական գործողության և Սահմանադրության գերակայության սկզբունքների հետ, կազմում են դրա սահմանադրաիրավական հիմքը:

Այս ձևակերպման շրջանակում «մաքուր շրջակա միջավայրում ապրելու» իրավունքը կարող է դիտարկվել որպես հիմնարար իրավունք: Շրջակա միջավայրի վիճակի վատթարացման աճը ժամանակակից սահմանադրական իրավունքի համատեքստում առաջացնում է նոր հիմնարար խնդիր մարդու իրավունքների համակարգում:

Միջազգային իրավական զարգացումները, սկսած ՄԱԿ-ի հովանու ներքո ընդունված համընդհանուր փաստաթղթերից մինչև Եվրոպական դատական պրակտիկա, վկայում են այն մասին, որ առողջ և անվտանգ միջավայրում ապրելու իրավունք ունենալու պահանջը աստիճանաբար վերածվում է մարդու հիմնարար իրավունքների անքակտելի բաղադրիչի:

Այս համատեքստում աճում են պետությունների պոզիտիվ պարտավորությունները՝ ոչ միայն աղտոտումից զերծ մնալու, այլև կանխարգելիչ քաղաքականություն վարելու, արդյու-

նավետ օրենսդրություն ընդունելու, վերահսկողության մեխանիզմներ ստեղծելու և դատական պաշտպանության հասանելիություն ապահովելու ուղղությամբ:

Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրված շրջակա միջավայրի պահպանության սկզբունքը կազմում է սահմանադրական կարգի հիմունքների անբաժանելի մասը, իրավական բնույթով հանդիսանում է օբյեկտիվ իրավական նորմ՝ ուղղված պետական իշխանության գործունեության ուղղորդմանը և օրենսդրական քաղաքականության սահմանմանը¹: Այս դրույթը սահմանում է պետության ընդհանուր պարտավորությունը՝ ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը, սակայն չի ստեղծում անհատի համար անմիջականորեն պաշտպանելի սուբյեկտիվ հանրային իրավունք: Սահմանադրական կարգի հիմունքների նորմերը, իրենց իրավական բնույթով, գործում են որպես մեկնաբանական և ուղղորդող սկզբունքներ, որոնք պահանջում են օրենսդրական կոնկրետացում և ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծում, սակայն ինքնուրույնորեն չեն կարող հանդիսանալ դատական պաշտպանության ուղղակի հիմք:

Սուբյեկտիվ իրավունքի բացակայությունը նշանակում է, որ անհատը չի կարող վկայակոչել Սահմանադրության 12-րդ հոդվածը որպես ինքնուրույն պահանջի հիմք դատարանում՝ պահանջելու պետությունից կոնկրետ գործողություններ շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ կամ բողոքարկելու այնպիսի պետական որոշումներ, որոնք վնասում են էկոլոգիական անվտանգությանը: Սահմանադրական դատական պրակտիկան հաստատում է, որ սահմանադրական կարգի հիմունքների նորմերը կիրառվում են անուղղակիորեն՝ ընդհանուր իրավական և սահմանադրական մեկնաբանության մաս կազմելով, սակայն դրանք չեն տրամադրում անմիջական իրավապաշտպան միջոցներ: Ի տարբերություն Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված հիմնարար իրավունքների, որոնք ստեղծում են անմիջական իրավական պահանջներ և դատական պաշտպանության հնարավորություն, սահմանադրական կարգի հիմունքները պահանջում են միջնորդող իրավական ակտեր՝ իրենց իրավական ուժը դրսևորելու համար:

Սահմանադրության երկրորդ գլխում «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում» նորմի ամրագրումը որակապես փոխելու է իրավական իրավիճակը՝ ստեղծելով անմիջականորեն կիրառելի սուբյեկտիվ հանրային իրավունք: Այդ դեպքում անհատը ձեռք կբերի իրավական հնարավորություն դատական կարգով պաշտպանել իր շահերը՝ պահանջելով պետությունից ակտիվ միջոցներ շրջակա միջավայրի որակի ապահովման համար, բողոքարկելով բնապահպանական չափանիշները խախտող պետական կամ մասնավոր գործունեությունը, և վկայակոչելով սահմանադրական նորմը որպես ինքնուրույն պաշտպանության հիմք: Դատարանները, Սահմանադրության 2-րդ կանոնների համաձայն, պարտավոր կլինեն ուղղակիորեն կիրառել այս սահմանադրական նորմը՝ անկախ ոլորտային օրենսդրության առկայությունից կամ բացակայությունից, ինչը կապահովի իրավունքի իրական արդյունավետություն: Սուբյեկտիվ իրավունքի ամրագրումը նաև կստեղծի պետության համար հստակ սահմանված պոզիտիվ պարտավորություններ՝ ոչ միայն զերծ մնալ շրջակա միջավայրի վնասումից, այլև ակտիվ միջոցներ ձեռնարկել անվտանգ և առողջ էկոլոգիական պայմանների ապահովման համար, ինչը համապատասխանում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված մարդու իրավունքների էկոլոգիական բաղադրիչի դոկտրինային:

Սույն հոդվածը նպատակ ունի հիմնավորել առողջ միջավայրում ապրելու իրավունքը, որ-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը:

պես մարդու հիմնարար իրավունք Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրելու անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման սահմանադրական լուծումը կարող է ոչ միայն ամրապնդել մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը, այլև որպես մեկնաբանական հիմք ծառայել բնապահպանական օրենսդրության համակարգային կատարելագործման, պետական քաղաքականության սահմանադրականացման և հանրային իշխանությունների պատասխանատվության բարձրացման համար:

Մեթոդներ. Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործվել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ:

Հիմնական հետազոտություն

Սահմանադրության երկրորդ գլխում առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ամրագրման հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը ձևակերպում է իրավական պետության հիմնարար արժեքով պայմանավորված և սահմանադրաիրավական կարգի առանցքային հիմքում ընկած մարդու գերակա դիրքը հանրային իշխանության համակարգում²: Այդ հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են որպես բարձրագույն արժեքներ, ինչը սահմանադրական կարգի ամբողջ համակարգին հաղորդում է մարդակենտրոն ուղղվածություն:

Երկրորդ մասով պետության վրա դրվում է պարտավորություն՝ ապահովելու մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին: Երրորդ մասում ամրագրված է այն հիմնադրույթը, ըստ որի՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ, ինչն արտահայտում է սահմանադրականության և իրավունքի գերակայության սկզբունքի նյութական բովանդակությունը:

Նշված դրույթները փոխկապակցված դիտարկելու պարագայում ձևավորվում է իրավական պետության հայեցակարգային հիմքը՝ միաժամանակ երաշխավորելով Սահմանադրության գերակայությունը իրավական համակարգում և հստակեցնելով մարդու իրավունքների տեղն ու դերը սահմանադրաիրավական հարաբերություններում:

Սահմանադրության գերակայության գործնական ապահովումը իրավական համակարգում իրականացվում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի՝ սահմանադրական չափորոշիչներին համապատասխանության վերահսկողության միջոցով, ինչպես նաև անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողության ինստիտուտի կիրառմամբ:

Վերջինիս նպատակն է երաշխավորել Սահմանադրության դրույթների անմիջական կիրառելիությունը, ապահովել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների արդյու-

² Տե՛ս ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը:

նավետ իրացումը և պաշտպանությունը, ինչպես նաև ամրապնդել հանրային իշխանության մարմինների իրավազափության սահմանադրական վերահսկողությունը իրավական պետության տրամաբանության շրջանակում³:

Առողջ միջավայրում ապրելու իրավունքը ձևակերպվել և զարգացել է միջազգային իրավունքի մի շարք փաստաթղթերում:

1972 թվականի հունիսի 16-ին ընդունված Ստոկհոլմի հռչակագրի 1-ին սկզբունքը, որը ձևակերպվել է Ստոկհոլմ քաղաքում անցկացված ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ համաժողովի շրջանակում, ամրագրում է, որ մարդն ունի արժանապատիվ և բարգավաճ կյանքի համար բարենպաստ միջավայրում ապրելու հիմնարար իրավունք՝ ազատության, հավասարության և բավարար կենսապայմանների պայմաններում⁴:

Չնայած այդ փաստաթուղթը իրավաբանորեն պարտադիր ուժ չունի և դասվում է այսպես կոչված «փափուկ իրավունքի» աղբյուրների շարքին, այն դարձավ միջազգային շրջակա միջավայրի իրավունքի ձևավորման հիմնարար ելակետ և էականորեն նպաստեց մարդու և բնության փոխհարաբերությունների իրավական վերափոխմաստավորմանը:

1992 թվականի հունիսի 14-ին՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման համաժողովի ավարտին, որը տեղի է ունեցել Ռիո դե Ժանեյրո քաղաքում անցկացված միջազգային հանդիպման շրջանակում, ընդունվել է հռչակագիր, որն ամրագրել է կայուն զարգացման հայեցակարգը՝ ընդգծելով, որ մարդիկ գտնվում են դրա կենտրոնում և ունեն առողջ ու արտադրողական կյանք ապրելու իրավունք բնության հետ ներդաշնակ պայմաններում⁵: Այդ մոտեցումը արտացոլում է մարդկային բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանության անբաժանելի կապը՝ դրանք ներկայացնելով որպես փոխլրացնող, ոչ թե մրցակցող արժեքներ:

2022 թվականի հուլիսի 28-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը, նստաշրջան գումարելով Նյու Յորք քաղաքում գտնվող ՄԱԿ-ի կենտրոնակայանում, ընդունեց պատմական նշանակություն ունեցող բանաձև, որով «մաքուր, առողջ և կայուն միջավայրի իրավունքը» ճանաչվեց որպես մարդու իրավունք, և, թեև այդ փաստաթուղթը նույնպես իրավաբանորեն պարտադիր ուժ չունի, այն արտացոլում է միջազգային համայնքի համընդհանուր քաղաքական կամքը ու սահմանում է նորմատիվ ուղենիշ ազգային իրավակարգի հետագա զարգացման համար⁶:

Եվրոպական համակարգում առողջ միջավայրի իրավունքի հիմնարար փաստաթուղթը Օրիուսի 1998 թվականի կոնվենցիան է՝ շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին: Կոնվենցիան ճանաչում է, որ «յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջության և բարեկեցության համար»⁷:

Թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մա-

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները՝ ՍԴՈ-630 (18.04.2006), ՍԴՈ-751 (15.04.2008), ՍԴՈ-752 (22.04.2008), ՍԴՈ-1000 (29.11.2011):

⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ համաժողովի հռչակագիր (Ստոկհոլմ) (Declaration of the United Nations Conference on the Human Environment / Stockholm Declaration, 1972):

⁵ Տե՛ս Շրջակա միջավայրի և զարգացման մասին հռչակագիր (Ռիո դե Ժանեյրո, 1992) (Rio Declaration on Environment and Development, 1992):

⁶ Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև՝ «Մաքուր, առողջ և կայուն միջավայրի մարդու իրավունք» (2022) (UN General Assembly Resolution A/76/L.75 (2022), The Human Right to a Clean, Healthy and Sustainable Environment):

⁷ Տե՛ս Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention, 1998):

սին» Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ուղղակիորեն չի ամրագրում շրջակա միջավայրի իրավունքը, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքով զարգացրել է այս իրավունքի պաշտպանության մեխանիզմները՝ մեկնաբանելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք), 8-րդ հոդվածի (մասնավոր և ընտանեկան կյանքի հարգանք) և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության պաշտպանություն) լույսի ներքո, շրջակա միջավայրի համատեքստում⁸:

Եվրոպական դատարանի պրակտիկայից առանձնանում են Լոպեզ Օստրան ընդդեմ Իսպանիայի (1994թ.), Գյուերան և այլք ընդդեմ Իտալիայի (1998թ.), Հատտոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (2003թ.), Թաշքին և այլք ընդդեմ Թուրքիայի (2004թ.), «Գրինփիս Նորդիկը և մյուսները ընդդեմ Նորվեգիայի» (2025թ.) և «Կլիմայի տարեց կանանց միությունը Շվեյցարիայում ընդդեմ Շվեյցարիայի» (2024թ.) գործերը⁹: Այս վճիռներով դատարանը հաստատել է պետությունների պոզիտիվ պարտավորությունը՝ կանխելու շրջակա միջավայրի աղտոտումը, որը կարող է ազդել մարդու հիմնարար իրավունքների վրա:

Եվրոպական միության մի շարք անդամ երկրներ սահմանադրական մակարդակով ամրագրել են առողջ միջավայրի իրավունքը՝ ապահովելով դրա անմիջական գործողությունը և արդյունավետ իրավական պաշտպանությունը:

Ֆրանսիայի Սահմանադրության մաս է կազմում 2005 թվականի շրջակա միջավայրի խարտիան, որը սահմանադրական ուժ ունի¹⁰: Խարտիայի 1-ին հոդվածով սահմանվում է. «Յուրաքանչյուր ոք ունի հավասարակշռված և առողջության համար բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք»: Այս ամրագրումը անմիջական պարտավորություններ ստեղծեց պետության համար:

Իսպանիայի Սահմանադրության 45-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք, ինչպես նաև պարտավոր է պահպանել այն», մինչդեռ հանրային իշխանությունները պարտավոր են ապահովել բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը՝ կյանքի որակի բարձրացման և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով¹¹: Իսպանական սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով շեշտել է այս իրավունքի կապը կյանքի և առողջության իրավունքների հետ:

Պորտուգալիայի Սահմանադրության 66-րդ հոդվածը հստակ սահմանում է. «Բոլորն ունեն մարդու կյանքի համար առողջ և էկոլոգիապես հավասարակշռված միջավայրի իրավունք և պարտականություն՝ այն պաշտպանելու»¹²: Պորտուգալական պրակտիկան ցույց է տալիս, որ այս իրավունքի սահմանադրական ամրագրումը թույլ է տալիս քաղաքացիներին

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (European Convention on Human Rights, 1950):

⁹ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ «Լոպեզ Օստրա ընդդեմ Իսպանիայի» (1994), դիմում N° 16798/90; «Գյուերա և այլք ընդդեմ Իտալիայի» (1998), դիմում N° 14967/89; «Հատտոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (2003), դիմում N° 36022/97; «Թաշքին և այլք ընդդեմ Թուրքիայի» (2004), դիմում N° 46117/99; «Օներլըլդը ընդդեմ Թուրքիայի» (2004), դիմում N° 48939/99; «Կլիմայի տարեց կանանց միությունը Շվեյցարիայում և այլք ընդդեմ Շվեյցարիայի» Մեծ պալատի վճիռ (2024), դիմում N° 53600/20; «Գրինփիս Նորդիկ և այլք ընդդեմ Նորվեգիայի» (2025), դիմում N° 34068/21 գործերով:

¹⁰ Տե՛ս՝ Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիա (սահմանադրական ուժ ունեցող ակտ, 2005) (Charte de l'environnement (France), Loi constitutionnelle N° 2005-205 du 1er mars 2005):

¹¹ Տե՛ս՝ Իսպանիայի Թագավորության Սահմանադրություն, հոդված 45 (1978) (Constitución Española, Artículo 45, 1978):

¹² Տե՛ս՝ Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 66 (1976) (Constituição da República Portuguesa, Artigo 66, 1976):

անմիջականորեն հղում կատարել սահմանադրական նորմերին՝ պաշտպանելու իրենց շահերը:

Նորվեգիայի Սահմանադրության 110բ հոդվածը (2014 թվականից՝ 112 հոդված) սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի այնպիսի միջավայրի իրավունք, որը համահունչ է առողջությանը, և բնության իրավունք՝ որի արտադրողականությունը և բազմազանությունը պահպանված են»¹³: Այս ամրագրումը ստեղծում է անմիջական իրավունքներ և պարտականություններ:

Վերոնշյալ երկրների սահմանադրություններում նախատեսված դրույթների համեմատական վերլուծությունը բացահայտում է մի քանի կարևոր միտումներ:

Շրջակա միջավայրի իրավունքի սահմանադրական ամրագրումը տարածված պրակտիկա է եվրոպական ժողովրդավարական երկրներում և ապահովում է անմիջական գործողություն: Եվրոպական երկրներում սահմանադրական դատարանները ակտիվորեն մեկնաբանում են շրջակա միջավայրի իրավունքը՝ կապելով այն այլ հիմնարար իրավունքների՝ կյանքի, առողջության, արժանապատվության, սեփականության իրավունքների հետ:

Քաղաքացիները իրենց պահանջներում կարող են անմիջականորեն հղում կատարել սահմանադրական նորմին՝ առանց լրացուցիչ միջանկյալ օրենսդրական ակտերի անհրաժեշտության: Այսպիսով, Սահմանադրական ձևակերպումը կարող է ծառայել որպես մեկնաբանական աղբյուր բնապահպանական ոլորտային օրենսդրության համակարգի համար և կիրառելի է անմիջականորեն՝ առանց լրացուցիչ օրենսդրական ակտերի անհրաժեշտության: Դա հատկապես կարևոր է հիմնարար իրավունքների համատեքստում, քանի որ քաղաքացիները պետք է կարողանան անմիջականորեն հղում կատարել Սահմանադրությանը, որպեսզի պաշտպանեն իրենց իրավունքները¹⁴:

Սահմանադրական նորմերը դասակարգվում են երկու հիմնական խմբի: Առաջին խմբին են դասվում անմիջական գործողություն ունեցող նորմերը, մինչդեռ երկրորդը ներառում է նպատակադրող կամ ծրագրային բնույթի դրույթներ, որոնցից բխող նպատակների իրականացումը պայմանավորված է օրենսդիր մարմնի կողմից համապատասխան իրավական կարգավորումների ընդունմամբ:

«Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի»՝ մարդու հիմնարար իրավունքների շարքում (Սահմանադրության երկրորդ գլխում) ամրագրումը պետության ընդհանուր պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նյութականացնում է՝ դրանց հաղորդելով անմիջական գործող և մարդու իրավունքների իմաստով մեկնաբանելի նորմ: Սա հիմնված է հիմնարար իրավունքների պոզիտիվ և նեգատիվ ասպեկտների տեսության վրա¹⁵:

Նեգատիվ պարտավորությունները ենթադրում են, որ պետությունը պարտավոր է զերծ մնալ իրականացնելու որոշակի գործողություններ, որոնք կխախտեն շրջակա միջավայրի իրավունքը: Օրինակ, պետությունը չպետք է ընդունի օրենքներ կամ իրականացնի ծրագրեր, որոնք հնարավոր է վնաս պատճառեն շրջակա միջավայրին:

Շրջակա միջավայրի պահպանության պոզիտիվ պարտավորությունները ավելի բարդ և

¹³ Տես՝ Նորվեգիայի Թագավորության Սահմանադրություն, հոդված 112 (2014թ. խմբագրություն) (Constitution of the Kingdom of Norway, Article 112 (formerly Article 110b, amended 2014)):

¹⁴ Տես՝ Մեյ, Ջեյմս Ռ. Դեյլի, Էրին. «Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը» աշխատությունը (2015թ.) (May, James R.; Daly, Erin, Global Environmental Constitutionalism, 2015):

¹⁵ Տես՝ Բոյդ, Դեյվիդ Ռ. «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխությունը. սահմանադրությունների, մարդու իրավունքների և բնապահպանության համաշխարհային ուսումնասիրություն» մենագրությունը (2012) (Boyd, David R., The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment, 2012):

բազմաշերտ են: Դրանք ներառում են ոչ միայն ընդհանուր քաղաքական ուղղությունների հոչակումը, այլև համապարփակ ռազմավարությունների մշակումն ու նպատակային ծրագրերի իրականացումը, արդյունավետ վարչարարական մեխանիզմների ստեղծումը, վերահսկողության և մոնիթորինգի համակարգերի գործարկումը, ինչպես նաև բնապահպանական ռիսկերի կանխարգելմանն ուղղված կարգավորումների ներդրումը:

Այդ պարտավորությունները ենթադրում են նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում, գիտական տվյալների վրա հիմնված որոշումների ընդունում, հանրության իրազեկման և մասնակցության ապահովում, ինչպես նաև իրավախախտումների դեպքում պատասխանատվության կիրառման գործուն մեխանիզմների գոյություն:

Այսպիսով, պետության պոզիտիվ պարտավորությունները չեն սահմանափակվում միջամտությունից զերծ մնալու պարտականությունով, այլ պահանջում են ակտիվ, շարունակական և համակարգային գործունեություն՝ ուղղված առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի արդյունավետ իրացմանը¹⁶:

Պետության պոզիտիվ պարտավորությունները շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ներառում են փոխկապակցված պետական-իրավական գործառույթների համալիր, որի առանցքում գտնվում է արդյունավետ և համապարփակ օրենսդրական կարգավորումների ընդունումը:

Սահմանադրության երկրորդ գլխում «առողջության համար բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք»-ի ամրագրումը մարդուն հնարավորություն է տալիս վիճարկելու այն օրենքները, որոնք կարող են խախտել առողջ շրջակա միջավայրում ապրելու իրենց իրավունքը:

Սահմանադրության երկրորդ գլխում առողջ միջավայրում ապրելու իրավունքի ամրագրումը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին և ընդհանուր իրավասության դատարաններին այն մեկնաբանել և կապել այլ հիմնարար իրավունքների հետ: Սա ստեղծում է իրավունքների փոխկապակցված համակարգ, որը ամրապնդում է բնապահպանական պաշտպանությունը:

Եզրակացություն

Սույն հոդվածը ցույց է տալիս, որ առողջ միջավայրում ապրելու իրավունքը միջազգային իրավունքում զարգացել է Ստոկհոլմի և Ռիո դե Ժանեյրոյի հռչակագրերից մինչև ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2022 թվականի բանաձևը՝ ձևավորվելով որպես ազգային իրավակարգերի համար կարևոր նորմատիվ ուղենիշ:

Եվրոպական համակարգում այդ իրավունքի գործնական իրացումը ամրապնդվել է Օրհուսի կոնվենցիայով և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով, որն այն կապել է մասնավոր կյանքի և սեփականության իրավունքների հետ՝ հաստատելով պետությունների պոզիտիվ պարտավորությունները:

Համեմատական վերլուծությունը վկայում է, որ Եվրոպական մի շարք պետություններ սահմանադրական մակարդակում ամրագրվել են առողջ միջավայրի իրավունքը կամ շրջակա միջավայրի պաշտպանության պարտավորությունը՝ ապահովելով դրա անմիջական ազդեցությունը դատական պրակտիկայում: Սահմանադրական տեսության տրամաբանությամբ՝

¹⁶ Տե՛ս՝ Ա. Բոյլ, «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. ինչ է հաջորդում» (2012թ.). Դ. Շեյթոն, «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. նյութական իրավունքներ» (2015թ.). Ս. Զ. Թըրներ, «Շրջակա միջավայրի համաշխարհային իրավունք» (2009թ.) Ռ. Պավոնի, «Մարդու իրավունքների եվրոպական և միջամերիկյան դատարանների բնապահպանական նախադեպերը» (2010թ.):

հիմնարար իրավունքների անմիջական կիրառելիությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ առողջ միջավայրում ապրելու իրավունքի Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրումը պետության բնապահպանական պարտավորությունները դարձնում է իրավաբանորեն պարտադիր և դատական վերահսկողության ենթակա:

Առաջարկ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլխում առաջարկվում է ամրագրել «առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը» որպես ինքնուրույն հիմնարար իրավունք:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է առողջ միջավայրում ապրելու իրավունքի՝ Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրելու անհրաժեշտության հիմնավորմանը՝ միջազգային և եվրոպական իրավական զարգացումների համատեքստում:

Ուսումնասիրվում է այդ իրավունքի ձևավորումն ու աստիճանական ամրապնդումը 1972 թվականի Ստոկհոլմի և 1992 թվականի Ռիո դե Ժանեյրոյի հռչակագրերից մինչև ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2022 թվականի բանաձևը: Վերլուծվում է Օրիուսի կոնվենցիայի դերը գործընթացային երաշխիքների ձևավորման գործում և եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որով շրջակա միջավայրի պաշտպանությունը կապվում է մասնավոր կյանքի և սեփականության իրավունքների հետ՝ հաստատելով պետությունների պոզիտիվ պարտավորությունները:

Համեմատական իրավական ուսումնասիրության միջոցով ներկայացվում են եվրոպական մի շարք երկրների սահմանադրական լուծումները և դրանց դատական կիրառության առանձնահատկությունները: Հոդվածում հիմնավորվում է, որ առողջ միջավայրում ապրելու իրավունքի Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրումը պետության բնապահպանական պարտավորությունները դարձնում է անմիջականորեն կիրառելի, ընդլայնում է սահմանադրական վերահսկողության գործիքակազմը և կարող է ծառայել որպես մեկնաբանական հենք ազգային բնապահպանական օրենսդրության համակարգային զարգացման համար:

Հոդվածի նպատակն է վերլուծել «առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք»-ի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ մարդու իրավունքներին և ազատություններին անդրադարձ կատարող, երկրորդ գլխում :

Annotation. This article examines the necessity of enshrining the right to a healthy environment in the second chapter of the Constitution in light of international and European legal developments. It traces the emergence and gradual consolidation of this right from the 1972 Stockholm Declaration and the 1992 Rio Declaration to the 2022 resolution of the United Nations General Assembly. Particular attention is given to the role of the Aarhus Convention in shaping procedural guarantees and to the case-law of the European Court of Human Rights, through which environmental protection has been linked to the rights to life, private life, and property, thereby affirming States' positive obligations.

Through a comparative legal analysis, the article presents constitutional solutions adopted in several European countries and explores the specific features of their judicial application. It argues that incorporating the right to a healthy environment into the second chapter of the Constitution would render the State's environmental obligations directly applicable, broaden the toolkit of constitutional review, and provide an interpretative framework for the systematic development of national environmental legislation.

The purpose of the study is to assess the necessity of constitutionally entrenching the right to a healthy environment in the second chapter of the Constitution of the Republic of Armenia, devoted to fundamental rights and freedoms.

Аннотация. Статья посвящена обоснованию необходимости конституционного закрепления права на благоприятную окружающую среду в контексте международных и европейских правовых процессов. Рассматривается формирование и постепенное укрепление данного права — от Стокгольмской декларации 1972 года и Декларации Рио-де-Жанейро 1992 года до резолюции Генеральной Ассамблеи ООН 2022 года. Анализируется роль Орхусской конвенции в формировании процессуальных гарантий, а также практика Европейского суда по правам человека, в рамках которой охрана окружающей среды увязывается с правом на жизнь, уважение частной жизни и защиту собственности, что подтверждает наличие позитивных обязательств государств.

На основе сравнительно-правового исследования представлены конституционные решения ряда европейских государств и особенности их судебного применения. В статье обосновывается, что включение права на благоприятную окружающую среду во вторую главу Конституции придаёт экологическим обязанностям государства непосредственное действие, расширяет инструментарий конституционного контроля и может служить интерпретационной основой для системного развития национального экологического законодательства.

Цель статьи заключается в анализе необходимости конституционного закрепления права на благоприятную окружающую среду во второй главе Конституции Республики Армения, посвящённой правам и свободам человека.

Բանալի բառեր - առողջ միջավայրում ապրելու իրավունք, սահմանադրական ամրագրում, շրջակա միջավայրի պաշտպանություն, պետության պոզիտիվ պարտավորություն, եվրոպական նախադեպային իրավունք:

Keywords: right to a healthy environment, constitutional entrenchment, environmental protection, State positive obligations, European case-law.

Ключевые слова: право на благоприятную окружающую среду, конституционное закрепление, охрана окружающей среды, позитивные обязательства государства, европейская прецедентная практика.

Օգտագործված աղբյուրներ և գրականություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն և Սահմանադրական դատարանի որոշումներ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of the Republic of Armenia):
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշում, 18 ապրիլի 2006 թ., ՍԴԴ-630 (Decision of the Constitutional Court of the Republic of Armenia, 18 April 2006, SDCC-630):
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշում, 15 ապրիլի 2008 թ., ՍԴԴ-751 (Decision of the Constitutional Court of the Republic of Armenia, 15 April 2008, SDCC-751):
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշում, 22 ապրիլի 2008 թ., ՍԴԴ-752 (Decision of the Constitutional Court of the Republic of Armenia, 22 April 2008, SDCC-752):
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշում, 29 նոյեմբերի 2011 թ., ՍԴԴ-1000 (Decision of the Constitutional Court of the Republic of Armenia, 29 November 2011, SDCC-1000):

Միջազգային հռչակագրեր և ՄԱԿ փաստաթղթեր

6. ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ համաժողովի հռչակագիր (Ստոկհոլմ, 1972) (Declaration of the United Nations Conference on the Human Environment / Stockholm Declaration, 1972):
7. Շրջակա միջավայրի և զարգացման մասին հռչակագիր (Ռիո դե Ժանեյրո, 1992) (Rio Declaration on

Environment and Development, 1992):

8. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև՝ «Մաքուր, առողջ և կայուն միջավայրի մարդու իրավունք» (2022) (UN General Assembly Resolution A/76/L.75 (2022), The Human Right to a Clean, Healthy and Sustainable Environment):

Միջազգային/տարածաշրջանային պայմանագրեր և կոնվենցիաներ

9. Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention), 1998):

10. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (1950) (European Convention on Human Rights, 1950):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք

11. «Լոպեզ Օստրա ընդդեմ Իսպանիայի» վճիռ (1994), դիմում N° 16798/90 (López Ostra v. Spain, Application no. 16798/90, ECtHR, 1994):

12. «Գյուերա և այլք ընդդեմ Իտալիայի» վճիռ (1998), դիմում N° 14967/89 (Guerra and Others v. Italy, Application no. 14967/89, ECtHR, 1998):

13. «Հատտոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» վճիռ (2003), դիմում N° 36022/97 (Hatton and Others v. the United Kingdom, Application no. 36022/97, ECtHR, 2003):

14. «Թաշքին և այլք ընդդեմ Թուրքիայի» վճիռ (2004), դիմում N° 46117/99 (Taşkin and Others v. Turkey, Application no. 46117/99, ECtHR, 2004):

15. «Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի» վճիռ (2004), դիմում N° 48939/99 (Öneryıldız v. Turkey, Application no. 48939/99, ECtHR, 2004):

16. «Կլիմայի տարեց կանանց միությունը Շվեյցարիայում և այլք ընդդեմ Շվեյցարիայի» Մեծ պալատի վճիռ (2024), դիմում N° 53600/20 (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland, Application no. 53600/20, ECtHR (GC), 2024):

17. «Գրինպիս Նորդիկ և այլք ընդդեմ Նորվեգիայի» վճիռ (2025), դիմում N° 34068/21 (Greenpeace Nordic and Others v. Norway, Application no. 34068/21, ECtHR, 2025):

Սահմանադրական ակտեր և սահմանադրական մակարդակի փաստաթղթեր

18. Ֆրանսիայի Շրջակա միջավայրի խարտիա (սահմանադրական ուժ ունեցող ակտ, 2005) (Charte de l'environnement (France), Loi constitutionnelle n° 2005-205 du 1er mars 2005):

19. Իսպանիայի Թագավորության Սահմանադրություն, հոդված 45 (1978) (Constitución Española, Artículo 45, 1978):

20. Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 66 (1976) (Constituição da República Portuguesa, Artigo 66, 1976):

21. Նորվեգիայի Թագավորության Սահմանադրություն, հոդված 112 (2014 թ. խմբագրություն) (Constitution of the Kingdom of Norway, Article 112 (formerly Article 110b, amended 2014)):

Մենագրություններ և գիտական աշխատություններ (դոկտրինալ աղբյուրներ)

22. Բոյդ, Դեյվիդ Ռ. «Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխությունը. սահմանադրությունների, մարդու իրավունքների և բնապահպանության համաշխարհային ուսումնասիրություն» (2012) (Boyd, David R., The Environmental Rights Revolution: A Global Study of Constitutions, Human Rights, and the Environment, 2012):

23. Մեյ, Ջեյմս Ռ.; Դեյլի, Էրին. «Շրջակա միջավայրի համաշխարհային սահմանադրականությունը»

(2015) (May, James R.; Daly, Erin, Global Environmental Constitutionalism, 2015):

24. Բոյլ, Ալան. «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. ինչ է հաջորդում» (2012) (Boyle, Alan, Human Rights and the Environment: Where Next?, 2012):

25. Շելթոն, Դինա. «Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը. նյութական իրավունքներ» (2015) (Shelton, Dinah, Human Rights and the Environment: Substantive Rights, 2015):

26. Թըրներ, Սթիվեն Ջ. «Շրջակա միջավայրի համաշխարհային իրավունք» (2009) (Turner, Stephen J., A Global Environmental Right, 2009):

27. Պավոնի, Ռիկարդո. «Մարդու իրավունքների եվրոպական և միջամերիկյան դատարանների բնապահպանական նախադեպերը. համեմատական դիտարկումներ» (2010) (Pavoni, Riccardo, Environmental Jurisprudence of the European and Inter-American Courts of Human Rights: Comparative Insights, 2010):

Թումանյան Կ. - Բարձրագույն դատական խորհրդի անդամ, էլիասցե՝ kartumanyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 09.03.2026 թ., տրվել է գրախոսության 09.03.2026 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-31>

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով
տեղակալ-ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ, ք.գ.դ., պրոֆեսոր, ի.գ.թ.
<https://orcid.org/0009-0007-5300-4354>

ԱՆԱՀԻՏ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական
միջազգային կենտրոնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
<https://orcid.org/0009-0009-5319-1270>

TIGRAN KOCHARYAN

*Deputy Head for Education and Research of the National
Defense Research University of Ministry of Defence of the
Republic of Armenia – Head of INSS, Colonel,
Doctor of Political Science, Professor*

ANAHIT SHAHUMYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center, Chief Specialist of General Department
Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of
Sciences of the Republic of Armenia*

ТИГРАН КОЧАРЯН

*Заместитель начальника по образованию и науке НИУО МО РА,
начальник ИНСИ, полковник,
доктор политических наук, профессор,
кандидат юридических наук*

АНАИТ ШАУМЯН

*Главный специалист общего отдела
Международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения,
соискатель Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения*

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

THE CONSTITUTIONAL AND LEGAL FOUNDATIONS OF CIVIL SOCIETY CONTROL AND THE DYNAMICS OF ITS DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ КОНТРОЛЯ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА И ДИНАМИКА ЕГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ներածություն

Վերլուծելով ժամանակակից իրականության մեջ պետական ապարատի նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության երևույթը՝ կարծում ենք անհարժեշտ է նախ անդրադառնալ դրա վերաբերյալ տեսության շրջանակում ձևավորված մոտեցումներին և ուսումնասիրել դրանց էությունը հումանիտար ու իրավաբանական գիտությունների տեսանկյուններից:

Գիտության մեջ քննարկվող «վերահսկողություն» հասկացությունը ոչ միայն իրավական, այլև մի շարք այլ հումանիտար գիտությունների՝ քաղաքագիտության, սոցիոլոգիայի և նույնիսկ տնտեսագիտության ուսումնասիրման օբյեկտ և առարկա է: Դա պայմանավորված է հասարակության բոլոր ոլորտներում վերահսկողության լայն ներդրմամբ և կիրառմամբ:

«Վերահսկողություն» հասկացությունը ծագում է ֆրանսիական «contrôle» եզրույթից¹: Հարկ է նշել, որ «վերահսկողություն» հասկացությունն ուղեկցում է պետությանը ծագման և զարգացման բոլոր փուլերում: Նույնիսկ նախնադարյան հասարակությունում, որտեղ չկար հանրային իշխանություն, ըստ Օ. Ն. Կոլումբիցայի, վերահսկողական բնույթի հանրային գործառույթներ իրագործվում էին, օրինակ, արյունապղծության արգելքի պահպանման նկատմամբ հասարակական վերահսկողության միջոցով²: Իր հերթին, պետականության ձևավորման և զարգացման վաղ փուլերում վերահսկողությունը կրել է պատժիչ բնույթ: Դրա նպատակը ոչ այնքան կայացված որոշումների որակի բարձրացումն էր, այլ որոշակի գործողությունների կամ որոշումների համար պատասխանատուներին պատժելը: Պատմականորեն ապացուցված է, որ այն պետությունը, որտեղ մեծ ուշադրության են արժանանում կայացված որոշումների վերահսկումը, ավելի կայուն է և արդյունավետ է իրականացնում իր գործառույթները:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարելի է եզրակացնել, որ վերահսկողությունը եղել և մնում է ցանկացած պետության և հասարակության փոխգործակցության կարևորագույն ոլորտներից մեկը:

Հիմնական հետազոտություն

«Վերահսկողություն» հասկացության բովանդակության իմաստը լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել «վերահսկողություն» հասկացության հարաբերակցությունը «հսկողություն» և «մոնիտորինգ», հասկացությունների հետ, քանզի դրանք առաջին

¹ Տե՛ս Control // Cambridge Dictionary. URL:<https://dictionary.cambridge.org/dictionary/english/controls/10.1202025/>:

² Տե՛ս **Коломытцева О.Н.**, Контроль общества над государством. Дисс... канд. юр. наук: Нижний Новгород, 2007, с. 37:

հայացքից մոտ եզրույթներ են:

Պետք է փաստել, որ «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունների միջև առկա է որոշակի կապ: Ընդ որում, ժամանակակից հումանիտար գիտություններում այս հարցի վերաբերյալ առկա է երկու արմատականորեն տարբերվող տեսակետ: Մասնավորապես, ըստ որոշ հեղինակների, անհրաժեշտ չէ խիստ տարանջատել քննարկվող հասկացությունները, քանի որ «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունները բխում են հանրային կառավարման գործառույթներից և ենթագործառույթներից³:

Մինևույն ժամանակ, առկա է նաև հակառակ տեսակետը, ըստ որի՝ հստակ տարանջատվում է «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունները: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ, չնայած նմանօրինակ նպատակների և գործունեության (ստուգման) բովանդակության որոշակի ընդհանրությանը, դիտարկվող հասկացություններն առերևույթ տարբերվում են: Այսպես, վերահսկողական գործունեություն իրականացնելիս վերահսկող սուբյեկտն օժտված է լայն լիազորություններով, օրինակ՝ վերահսկվող սուբյեկտի կողմից ընդունված կոնկրետ որոշումները չեղյալ հայտարարելու իրավունքով: Իր հերթին, հսկողություն իրականացնող մարմիններն, որպես կանոն, օժտված չեն նման իրավունքներով (օրինակ՝ ՀՀ դատախազությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս): *Հեղինակը, կարելի է եզրակացնել, որ, ի համեմատ վերահսկողության, հսկողությունն հասկացությունն օժտված է ավելի սահմանափակ բնույթով:* Այլ կերպ ասած, հսկողությունը ներքին վերահսկողության հատուկ տեսակ է, որն իրականացվում է որոշ պետական մարմինների կողմից մեկ այլ պետական մարմինների նկատմամբ և, որպես կանոն, սահմանափակվում է օրենքի պահանջների պատշաճ կատարման նկատմամբ հսկողական գործառույթներ իրականացնելով:

Ինչ վերաբերում է «վերահսկողություն» և «մոնիտորինգ» հասկացությունների միջև կապին, ապա այս առումով մոտեցումները ևս միատեսակ չեն: Որոշ հետազոտողներ կարծում են, որ վերահսկողության հետ կապված մոնիտորինգը վերահսկողական գործունեության որոշակի տեսակ է, երբ դիտարկման օբյեկտ է հանդիսանում սուբյեկտների գործունեության դինամիկան և որակը, նորմատիվային կարգավորումը⁴: Նշվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ վերահսկողությունն ու հսկողությունը, ավելի վերաբերելի են կառավարման և իրավապահ մարմինների գործառույթներին՝ ի համեմատ մոնիտորինգի, որի էական առանձնահատկություններից մեկը տեղեկատվական հոսքերի ապահովումն է և օրենսդրության համակարգում: Այլ կերպ ասած, մոնիտորինգը վերահսկողությունից տարբերվում է հիմնականում նրանով, որ այն չի ներառում ուսումնասիրության ենթարկվող սուբյեկտի գործունեության ճշգրտման գործառույթը: Ըստ այդմ, համադրելով և զարգացնելով գիտության մեջ առկա գաղափարները, կատարված հետազոտության արդյունքում առաջարկվում է «վերահսկողություն» հասկացությանը տալ հետևյալ սահմանումը. *Վերահսկողությունը հասարակական հարաբերությունների սուբյեկտների կողմից նորմատիվ իրավական ակտերով սահմանված գործունեություն է, որը նպատակ է հետապնդում վերահսկվող գործունեությունը դիտարկելու, գնահատելու և անհրաժեշտության դեպքում ճշգրտելու՝ ապահովելով համապատասխանու-*

³ Տե՛ս *Алехин А.П., Кармолицкий А.А., Козлов Ю.М.*, Административное право Российской Федерации. М., Изд. Зерцало, 1998, с. 458; *Старосьцяк Е.*, Элементы науки управления / Под ред. Ц.А. Ямпольской, пер. А.Х. Махненко. М., Изд. Прогресс, 1965, с. 32; *Студеникина М.С.*, Государственный контроль в сфере управления. Проблемы надведомственного контроля. М., Изд. Юрид. лит., 1974, с. 62-84:

⁴ Տե՛ս *Акмалова А.А., Капицына Д.В.*, Мониторинг как вид правового контроля в системе государственного и муниципального управления // *Ars Administrandi*. Искусство управления. 2012, № 2, с. 13-26:

թյունը նախապես սահմանված չափորոշիչներին և գործունեության արդյունավետությունը⁵:

Վերահսկողության մասին խոսելիս անհրաժեշտ է նաև վեր հանել ուսումնասիրության մի քանի հիմնական ասպեկտներ, որոնք տեղ են գտել տարբեր գիտական ուսումնասիրությունների շրջանակներում:

Նախևառաջ, իրավաբանական գրականությունում առկա է մոտեցում, համաձայն որի՝ վերահսկողության իրականացումը կապվում է օրենքի համապատասխանության տեսանկյունից պետական մարմինների գործունեության ստուգման հետ: Այդպիսի վերահսկողության զգալի մասը (նրա բոլոր ներքին տարբերակները) կազմում է հսկողությունը⁶: Ի հավելումն նշվածի՝ հնարավոր չէ հաշվի չառնել տեսակետն առ այն, որ վերահսկողությունն ուղղված է ստուգելու իրավական ակտերի պահանջները կատարելու տեսանկյունից քաղաքացիական ծառայողների գործունեությունը⁷:

Իրենց հերթին, որոշ տեսաբաններ վերահսկողությունը դիտարկում են հասարակության և պետության փոխգործակցության դիտանկյունից: Տվյալ մոտեցման համաձայն՝ վերահսկողությունը նպատակ ունի վեր հանելու քաղաքական իշխանության իրացման գործում պետության հնարավոր խնդիրների պատճառները և դրանց համար պատասխանատու անձանց⁸:

Հարկ է նշել, որ, դիտարկելով հասարակության կողմից իշխանության սուբյեկտների նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, քաղաքագետ Տ. Ա. Գրիշինան կիրառում է «հանրային վերահսկողություն» հասկացությունը: Վերջինիս կարծիքով՝ «հանրային վերահսկողությունը» կառուցակարգ է, որը թույլ է տալիս հասարակությանը վերահսկել իշխանություններին թե՛ որոշումների ընդունման փուլում, թե՛ դրանց կատարման փուլում, ինչպես նաև գնահատել արդյունքը⁹: Որոշ քաղաքագետներ հանրային վերահսկողության նմանաբնույթ հասկացությունն ուսումնասիրում են որպես «քաղաքական տեխնոլոգիա», որն օգտագործվում է քաղաքական իշխանության ներկայացուցիչների կողմից քաղաքացիների նկատմամբ: Ըստ Ս. Ֆ. Լիսովսկիի և Վ. Ա. Եֆստաֆևի՝ հանրային վերահսկողությունը քաղաքական համակարգի գործառույթների իրականացման առավել նպատակահարմար մեթոդ և ընթացակարգ է, որոնք ուղղված են քաղաքական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և քաղաքականության բնագավառում ցանկալի արդյունքների հասնելուն¹⁰: Այս դիրքորոշումը, մեր կարծիքով, սահմանափակ բնույթ է կրում և արհեստականորեն նեղացնում է հասարակության վերահսկողության իրականացման հնարավորությունները՝ սահմանափակվելով միայն քաղաքական համակարգի շրջանակում:

Հարկ է նշել, որ պետության նկատմամբ հասարակության վերահսկողությունը, որի մասին խոսում են այս հեղինակները, հնարավոր է նաև հասարակական, այդ թվում՝ մշակույթի ոլորտում և շատ այլ ոլորտներում: Օրինակ, հետազոտողների ուշադրությունը շատ անգամ

⁵ Տե՛ս *Мануйлов А.Е.*, Контроль гражданского общества за государственным аппаратом: теоретико-правовое исследование. Дисс... док.юрид. наук. Екатеринбург, 2018, с. 60-62:

⁶ Տե՛ս *Гриб В.В.*, Общественная палата Российской Федерации как орган общественного контроля // Юридический мир, 2010, № 3, с. 32-39:

⁷ Տե՛ս *Тухомиров Ю.А.*, Закон – основа стратегии // Президентский контроль. 2002, № 8, с. 3-10:

⁸ Տե՛ս *Румянцева В.Г.*, Общественный контроль за деятельностью государства: к теории вопроса // История государства и права. 2009, № 11, с. 42-45:

⁹ Տե՛ս *Гришина Т.А.*, Общественный контроль как форма реализации прав и свобод человека и гражданина на примере работы общественной палаты Истринского муниципального района Московской области // Научный альманах. 2016, № 2-3 (16), с. 256-289:

¹⁰ Տե՛ս *Лисовский С.Ф., Ефстафьев В.А.*, Избирательные технологии: история, теория, практика. М, Изд. Рос.-амер. ун-т, 2000, с. 181-203:

սևեռվում է հասարակության տնտեսական ոլորտում պետության նկատմամբ վերահսկողության իրականացմանը վերաբերող հարցերին: Այսպես, Վ. Ի. Լենինն իր գիտական աշխատություններում հիմնավորել է տնտեսության մեջ սոցիալական վերահսկողության անհրաժեշտությունը: 1917 թվականի հոկտեմբերի նախօրեին գրված «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը մշակում է մարքսիզմի ծրագրային դիրքորոշումը, որ «մինչև կոմունիզմի բարձրագույն փուլի գալը սոցիալիստները պահանջում են հասարակության և պետության կողմից ամենախիստ վերահսկողությունը աշխատանքի չափի և սպառման չափի նկատմամբ...»¹¹:

Իր հերթին, Ա. Պ. Կրիվեցի կարծիքով, պետական ապարատի և նրա կողմից ընդունվող որոշումների նկատմամբ հանրային վերահսկողությունը հետադարձ կապի միջոց հանրային կառավարման համակարգում է: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների վերահսկողությունը պետական մարմինների գործունեության նկատմամբ պետության ժողովրդավարության ամենավառ դրսևորումն է: Միննույն ժամանակ, հեղինակն օգտագործում է նաև «հանրային վերահսկողություն» հասկացությունը՝ այս երկույթը բնութագրելու համար: Հետազոտողի համոզմամբ՝ «հանրային վերահսկողության» առաջնային հիմքը բնակչության գործունեությունն է, որը դրսևորվում է հասարակական կազմակերպությունների և շարժումների ակտիվ գործունեության մեջ, նրանց զանգվածային լրատվության միջոցով ակտիվ հանես գալու ճանապարհով, ինչպես նաև քաղաքացիների կողմից դիմումներ, բողոքներ, առաջարկություններ ներկայացնելու միջոցով: Այս առումով, ըստ հեղինակի, առանձնահատուկ դեր են խաղում արհմիությունները: Սոցիալական վերահսկողության միջոցառումներն առավել արդյունավետ են, եթե դրա իրականացմանը մասնակցում են ողջ հասարակությունը և քաղաքացիական ինստիտուտները: Հետևաբար, վերահսկողության և սոցիալական կարգավորման ժողովրդավարության ձևերն են՝ հանրաքվեներ, քաղաքացիների խնդրանքներ, հասարակական կարծիք, ներկայացուցչական իշխանություններ և այլն¹²:

Անշուշտ, պետք է համաձայնել վերոնշյալ հեղինակի դիրքորոշման հետ, ըստ որի՝ պետական տարբեր կազմավորումների նկատմամբ հանրային վերահսկողությունը բարդ և բազմաշերտ երևույթ է:

Ավելին, ըստ որոշ քաղաքագետների, հասարակության վերահսկողությունը պետության նկատմամբ կարող է հանդես գալ նաև որպես քաղաքացիական հասարակության գործառույթ, որն ուղղված է ստուգելու իշխանական կառույցների կողմից իրենց անմիջական պարտականությունների և պարտավորությունների կատարումը¹³:

Այսպիսով, հաշվի առնելով քաղաքագետների բազմաբնույթ մոտեցումները, դուրս կբերենք արձանագրված հետևյալ ընդհանուր առանձնահատկությունները՝

1. Քաղաքագիտության մեջ, ինչպես և այլ գիտություններում, պետության նկատմամբ հանրային վերահսկողության հասկացությունը նույնացվում է հանրային վերահսկողության հասկացության հետ, որը մոտ է իմաստային տեսանկյունից, սակայն բովանդակությամբ առկա են տարբերություններ,

¹¹ Տե՛ս *Ленин В.И.*, Государство и революция, Учение марксизма о государстве и задачи пролетариата в революции // Ленин В.И. Полное собрание сочинений, 5-е изд. Москва: Изд-во полит. лит., 1969. Т. 33, с. 97-98:

¹² Տե՛ս *Кривец А.П.*, К вопросу о гражданском контроле в современной России как механизме взаимодействия власти и общества // Научные ведомости БелГУ. Сер. История. Политология. Экономика. Информатика. 2010. Вып. 16, № 19 (90), с. 216-223:

¹³ Տե՛ս Новая философская энциклопедия: в 4 т./ Под ред. В.С. Степина, 2-е изд., испр. и доп. М., Изд. Мысль, 2010, т. 2, с. 298:

2. Քաղաքագիտության մեջ հասարակության վերահսկողությունը պետության նկատմամբ բնորոշ է զարգացած ժողովրդավարական քաղաքական ռեժիմ ունեցող հասարակություններին: Իր հերթին, նման վերահսկողությունը տվյալ պետության ժողովրդավարության ամենավառ դրսևորումն է,

3. Հասարակության կողմից պետության նկատմամբ վերահսկողության միջոցառումներն առավել արդյունավետ են, երբ դրանց լայնորեն ներգրավված են հանրային ինստիտուտները,

4. Պետության նկատմամբ հասարակության արդյունավետ վերահսկողության առանցքային գործոնը քաղաքացիների հասարակական գործունեությունն է: Միայն քաղաքացիների բարձր հասարակական ակտիվություն ունեցող քաղաքացիական հասարակությունում է պետական ապարատի նկատմամբ հանրային վերահսկողությունն արդյունավետ գործիք,

5. Պետության նկատմամբ հանրային վերահսկողությունը բարդ համակարգային երևույթ է, որն ունի իր տարատեսակները: Թույլատրելի չէ փոխարինել «պետության նկատմամբ հանրային վերահսկողություն», «հանրային վերահսկողություն» և «քաղաքացիական վերահսկողություն» հասկացությունները:

Հասարակության վերահսկողության մասին գաղափարների դիտարկումը այնպիսի հումանիտար գիտությունների տեսանկյունից, ինչպիսիք են քաղաքագիտությունը և տնտեսագիտությունը, անհրաժեշտ է, սակայն՝ ոչ բավարար: Հետևաբար, կարծում ենք՝ անհրաժեշտ է վեր հանել իրավագիտության մեջ ձևավորված վերահսկողության վերաբերյալ գիտական մոտեցումները:

Հատկանշական է, որ իրավագիտության մեջ, ինչպես վերը քննարկված այլ հումանիտար գիտություններում, շատ հեղինակներ չեն ուրվագծում հիմնարար տարբերություններ և նույնիսկ հաճախ հավասարության նշան են դնում հանրային վերահսկողության և պետության նկատմամբ հասարակության վերահսկողության հասկացությունների միջև: Ավելին, մեր կարծիքով, տեսական իրավական հետազոտությունների շրջանակում արդարացի չէ «պետության նկատմամբ հանրային վերահսկողություն» հասկացություն օգտագործումը¹⁴:

Այսպիսով, քաղաքացիական հասարակության վերահսկողությունը պետական ապարատի նկատմամբ կարող է սահմանվել որպես քաղաքացիական հասարակության սուբյեկտների կողմից նորմատիվ իրավական ակտերով սահմանված և իրականացվող գործունեություն, որն ուղղված է պետական ապարատի գործունեության արդյունքները դիտարկելու, գնահատելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ճշգրտելու այն՝ ապահովելով դրա արդյունավետությունը և համապատասխանությունը՝ նախապես սահմանված չափանիշներին:

Սուբյեկտիվ իմաստով կարելի է առանձնացնել պետական ապարատի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հետևյալ տեսակները.

- գույքային հարաբերությունների, այդ թվում՝ բնակարանային, հողային վերահսկողության, պայմանագրային գնումների համակարգի բնագավառում վերահսկողությունը,
- վերահսկողություն մարդու հիմնական իրավունքների ապահովման բնագավառում, ազատագրված վայրերում մարդու իրավունքների ապահովման, ոստիկանության գործունեության նկատմամբ, անչափահասների հանցագործության կանխարգելման բնագավառում, քրեակատարողական համակարգի գործունեության, կոռուպցիայի դեմ պայքարի, զինված

¹⁴ Гончаров В.В., О соотношении общественного контроля с иными формами контроля власти (конституционно-правовой анализ) // Юридические исследования. 2018, №9, с. 20-29; Калачиков И.С., Степанова А.А., Сущность общественного контроля за деятельностью органов государственной власти// «Научный аспект №2-2019» - Гуманитарные науки, URL: <https://na-journal.ru/2-2019-gumanitarnye-nauki/1743-sushchnost-obshchestvennogo-kontrolya-za-deyatelnostyu-organov-gosudarstvennoi-vlasti/22.10.2025/>:

ուժերի բնագավառում,

- վերահսկողություն ընտրական ոլորտում,
- վերահսկողություն քաղաքացիների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության բնագավառում, սոցիալական ծառայությունների բնագավառում, կենսաթոշակային ապահովման պարտադիր սոցիալական ապահովագրության իրականացման նկատմամբ,

- արդյունաբերական դեպքերը և մասնագիտական հիվանդությունները՝ արտադրական անվտանգության բնագավառում,

- վերահսկողություն քաղաքացիների առողջապահության ոլորտում,

- վերահսկողություն շրջակա միջավայրի պահպանման, վերահսկողություն թափոնների կառավարման բնագավառում; մթնոլորտային օդի, վայրի բնության պաշտպանության, նրա բնակավայրերի պահպանման և վերականգնման բնագավառում,

- պետական ապարատի գործունեության այլ ոլորտներում վերահսկողություն՝ բյուջետային միջոցների նպատակային ծախսերի նկատմամբ, վերահսկողություն քաղաքաշինության ոլորտում և այլն:

Իրավասության տեսանկյունից կարելի է առանձնացնել պետական ապարատի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հետեւյալ տեսակները.

- արտաքին վերահսկողություն, այսինքն՝ պետական իշխանություն չունեցող քաղաքացիական հասարակության սուբյեկտների կողմից իրականացվող վերահսկողություն (քաղաքացիական վերահսկողություն, արհմիությունների վերահսկողություն և այլն),

- խառը վերահսկողություն, այսինքն՝ վերահսկողություն, որն իրականացվում է քաղաքացիական հասարակության սուբյեկտների կողմից, որոնք օժտված չեն իշխանական լիազորություններով, սակայն գործում են այնպիսի լիազորություններով օժտված պետական իշխանության մարմինների ներքո, որպես դիտորդ և խորհրդատվական մարմիններ (վերահսկողությունը, որն իրականացվում է հանրային և դիտորդ խորհուրդները պետական իշխանության գործադիր եւ օրենսդիր մարմիններին առընթեր):

Ըստ այդմ, հաշվի առնելով վերահսկողության տեսակների էությունը, կարելի է նկատել քաղաքացիական հասարակության մեկ այլ հիմնական բնութագրիչն առ այն, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավորումն է և իրավունքով իշխանության սահմանափակումը¹⁵:

Նույն աշխատությունում արձանագրվում է, որ «իրավական պետությունն ու քաղաքացիական հասարակությունը սերտորեն փոխկապված են: Իրավական պետությունը կարող է զարգանալ և արդյունավետ իրականացնել իր գործառույթները միայն քաղաքացիական հասարակության առկայության պայմաններում: (...) Քաղաքացիական հասարակությունն առաջին հերթին կառուցակարգված հասարակություն է, որը համապատասխան կառույցների միջոցով ունակ է ոչ միայն ինքնակառավարվելու, այլ նաև արդյունավետ վերահսկողություն իրականացնելու այն ոլորտներում, որոնք մնում են պետության գործառույթների շրջանակներում: Դրա արդյունքում ինքնասահմանափակվում է պետության գործառույթների շրջանակը և միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության վերահսկողության շնորհիվ մյուս ոլորտներում բարձրանում է պետական գործառույթների իրականացման արդյունավետու-

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբագ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010, էջ 15:

թյունը»¹⁶:

Նշվածով պայմանավորված՝ ակնառու է, որ իրավական պետության նախապայմաններից է քաղաքացիական հասարակության առկայությունը, որի առանցքային գործառույթը և առաքելությունն է քաղաքացիական վերահսկողությունը: Ուստի քաղաքացիական հասարակության վերահսկողության սահմանադրաիրավական կարգավիճակի դինամիկան դիտարկելիս անհրաժեշտ է այն քննարկել Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության սահմանադրաիրավական կարգավիճակին զուգահեռ:

Հարկ է նշել նաև, որ իշխանության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորումն ու զարգացումը վճռորոշ դեր է խաղում Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական սկզբունքների ապահովման գործում: Մասնավորապես, քաղաքացիական վերահսկողության բազմաթիվ մեխանիզմներ և տարրեր սկսեցին գործել քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ինստիտուտների հետ համատեղ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, քաղաքացիական վերահսկողությունը դեռևս չի հանդիսանում պետական ապարատի նկատմամբ արդյունավետ և լիարժեք վերահսկողական մեխանիզմ: Շատ առումներով դա պայմանավորված է նրանով, որ մի կողմից քաղաքացիական վերահսկողության գաղափարը քաղաքացիների կողմից բավարար չափով չի ընդունվում, մյուս կողմից գործող կառուցակարգերը բավարար չափով հնարավորություն չեն ընձեռում իրագործելու քաղաքացիական վերահսկողության գործառույթները և ակնկալվող արդյունքը:

Այս համատեքստում, կրկին անդրադառնալով քաղաքացիական հասարակության վերահսկողության սահմանադրաիրավական դինամիկային, կարելի է փաստել, որ այն ծագեց Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հռչակմամբ:

Սահմանադրության 2005 և 2015 թվականների փոփոխություններով քաղաքացիական վերահսկողության ինստիտուտը ավելի ընդգծվեց և սահմանադրաիրավական մակարդակում արձանագրվեց դրա դերն ու առաքելությունը: Մասնավորապես, 2005 թվականի Սահմանադրության 8.2 հոդվածով սահմանվեց՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը:

2015 թվականի բարեփոխումների արդյունքում Սահմանադրության 14-րդ հոդվածում պահպանվեց վերոնշյալ կարգավորումը, իսկ 2-րդ մասում ամրագրվեց. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են»¹⁷:

Նշված սահմանադրաիրավական կարգավորման իրավական բովանդակության առնչությամբ անդրադարձ է կատարվել նաև Գ. Հարությունյանի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» վերտառությամբ աշխատությունում, մատնանշելով, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը շատ կարևոր նշանակություն ունի ժողովրդավարության կայացման համար: Ավելին, զինված ուժերն հանդիսանում են զինված, փակ, ստորակարգությամբ կազմակերպված պետական ծառայողների ամբողջություն: Ինչպես իրավագիտորեն նշում են իրավագետները, զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ այն որպես զենք կարող է օգտագործվել իշխանությունը նվաճելու կամ քաղաքական ուժերին օժանդակելու

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

¹⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (ընդ. 05.07.1995 թ., փոփոխ. 27.11.2005 թ., 06.12.2015 թ.), հոդվ.14; <https://www.president.am/hy/constitution/10.10.2025/>:

նպատակով¹⁸: Միննույն ժամանակ, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է ոչ միայն զինված ուժերի առօրյա գործունեության վերահսկում քաղաքացիական տարաբնույթ կառուցակարգերի միջոցով, այլև քաղաքացիական մասնակցություն նրանց կառավարմանը, զինված ուժերի կառավարմանը, քաղաքացիական անձանց առավել լայն մասնակցության ապահովումը¹⁹:

Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության հարցին սահմանադրական վերահսկողության շրջանակներում անդարձել է նաև Սահմանադրական դատարանը 2021 թվականի նոյեմբերի 2 թիվ ՍԴՈ-1616 որոշմամբ, մատնանշելով, որ «քաղաքացիական վերահսկողություն» հասկացությունը ձևավորվել է զինվորական-քաղաքացիական բաժանման համատեքստում և առաջին հերթին ենթադրում է ժողովրդավարական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ, երբ դրանք ղեկավարվում են բարձրագույն պետական իշխանության կողմից, որը մասնակցում է զինված ուժերի կառավարմանը, ժողովրդավարական ճանապարհով ազդում է դրանց վրա՝ իշխանությունների բաժանման սկզբունքի և ռազմական կառավարման ներդաշնակ զուգակցության վրա կառուցված նպատակային պետաիրավական ինստիտուտների միջոցով²⁰: Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև ընդգծում է. «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական համակարգերում կիրառում են վերահսկողության հատուկ ձևեր՝ քաղաքացիական գլխավոր հրամանատար, որն իրավասու է ազատել բարձրագույն հրամանատարական պաշտոնյաներին՝ որպես քաղաքականության և վերահսկողության հաստատման միջոց. պաշտպանության նախարարի և մի շարք զինվորական պաշտոններում քաղաքականապես չեզոք քաղաքացիական անձանց նշանակումը. պաշտպանության նախարարության կառուցումը և գործառնափոխումը համալիրության (քաղաքացիական/զինվորական) սկզբունքով. զինված ուժերի կառուցվածքային հարցերի և կադրային առաջխաղացման իրավազորությունը, քաղաքացիական իշխանությունների վերապահելը, ռազմական բյուջեի ընդունման քաղաքացիական իշխանության մենաշնորհը, հատկացված միջոցների ծախսման նկատմամբ խստագույն հսկողության ընթացակարգը և այլն»²¹:

Ուշադրության է արժանի նաև ԵԱՀԿ-ի 1994 թվականի «Անվտանգության ռազմաքաղաքական առումներին վերաբերող կանոնագիրքը», որի ընդունման նպատակ է՝ բոլոր ուժային կառույցների նկատմամբ վերահսկողությունն անկախ, օրինական և ժողովրդական ճանապարհով ընտրված ինստիտուտներին հանձնելը: Այն պարտադրում է, որ բոլոր ուժային կառույցները, որոնք ներառված են ազգային անվտանգության ու պետության պաշտպանության համակարգում, պարտավոր են պահպանել օրինականության, ժողովրդավարության, չեզոքության, մարդու և քաղաքացու իրավունքների հարգանքի սկզբունքները, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Հիշյալ փաստաթուղթը ժողովրդավարական վերահսկողությունը զինվորականների ու ռազմականացված բոլոր տեսակի ծառայությունների նկատմամբ դիտարկում է որպես կայունության ու անվտանգության անփոխարին

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբագ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010, էջ 132:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 132:

²⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2 նոյեմբերի 2021 թ. որոշումը Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով. <https://www.arlis.am/hy/acts/157530/10.12.2025/>:

²¹ Տե՛ս նույն տեղում, կետ 4.1.:

նեյի տարր²²:

Քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը ընդգծվում է նաև հայրենական դոկտրինալ աղբյուրներում:

Քաղաքացիական հասարակությունը նյութական և հոգևոր շահերի, պահանջմունքների բավարարման համար ազատորեն և կամովին միավորված անհատների համակարգ է, որը հիմնվում է ինքնակառավարման սկզբունքի վրա և պաշտպանված է պետության ուղղակի միջամտությունից: Ինչպես իրավացիորեն նշում են իրավագետները, «Քաղաքացիական հասարակությունն անկախ է պետությունից և ունակ է ազդելու նրա կողմից իրականացվող քաղաքականության վրա: Ինչ վերաբերում է պետությանը, ապա այն քաղաքացիական հասարակության անհրաժեշտ, թեև ոչ հիմնական, խիստ յուրահատուկ սուբյեկտ է: Պետությունը քաղաքացիական հասարակության առնչությամբ կատարում է կարծես թե սպասարկող դեր՝ պայմաններ է ստեղծում և ապահովում դրա բնականոն գործունեության համար, այդ թվում՝ իրավունքի միջոցով: Այլ կերպ ասած՝ պետության և քաղաքացիական հասարակության միջև գոյություն ունի ուղղակի և հակադարձ կապ»²³:

Եզրակացություն

Հիմք ընդունելով կատարված հետազոտության արդյունքներն ու քննարկված գաղափարները՝ սույն հոդվածի շրջանակում կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական հասարակության վերահսկողությունը պետության ապարատի նկատմամբ իրավական պետության կառուցման կարևոր նախապայման է: Այն ապահովում է հանրային արդյունավետ մասնակցությունը և նպաստում է ժողովրդավարական սկզբունքների պահպանմանը, ինչը, հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետության համար: Քաղաքացիական հասարակությունը և դրա կողմից իրականացվող վերահսկողությունը, ձևավորման պահից սկսած, զարգանում են պետության և դրա այլ ինստիտուտների հետ համատեղ, քանի որ նրանց փոխգործակցությունը կարևոր պայման է պետական համակարգի կայունության և արդյունավետության համար: Այս համատեղ զարգացումը հիմք է դնում իշխանության բաժանման, սահմանադրական իրավունքի և ժողովրդավարական արժեքների գործնական իրականացմանը, ինչը հիմնական ուղենիշ է արդիական, կայուն և ժողովրդավարական պետության ձևավորման և ամրապնդման համար:

Ամփոփագիր: Սույն գիտական հոդվածում, հիմնվելով անվանի իրավագետների կարծիքների, միջազգային և ներպետական օրենսդրության ուսումնասիրության վրա, ներկայացված են քաղաքացիական հասարակության վերահսկողության գործառույթի սահմանադրաիրավական հիմունքները, դրանց իրացման առանձնահատկությունները: Մասնավորապես, հոդվածում բացահայտվում են «վերահսկողություն», «հսկողություն», «մոնիտորինգ», «հանրային վերահսկողություն» հասկացությունների առանձնահատկությունները, ինչպես նաև վերահսկողության, որպես քաղաքացիական հասարակության կայուն գործիքակազմի դրսևորումները: Ավելին, գիտական հոդվածում հեղինակը մանրակրկիտ անդրադարձել է նաև քաղաքա-

²² Տե՛ս Кодекс поведения, касающийся военно-политических аспектов безопасности (прин.03.12.1994 г.).ОБСЕ. URL:<https://www.osce.org/sites/default/files/f/documents/d/f/41359.pdf/22.12.2025/>: Այս փաստաթուղթը մշակվել է ԵԱՀԿ-ի շրջանակներում 1992-1994 թթ.: Այն որպես խորհրդատվական ակտ հավանության է արժանացել 52 պետությունների կողմից ԵԱՀԿ-ի բուդապեշտյան խորհրդակցությունում 1994 թ. դեկտեմբերին, իսկ 1995 թ. հունվարի 1-ից ձեռք է բերել քաղաքականապես պարտադրող փաստաթղթի նշանակություն:

²³ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն. Ուսում. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4 -րդ լրամ. հրատ. Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2023, էջ 150:

ցիական վերահսկողության տեսակներին, դրանց յուրահատկություններին: Ընդ որում, դիտարկելով քաղաքացիական վերահսկողության տեսակների էությունը, հեղինակն ընդգծում է քաղաքացիական հասարակության մեկ այլ հիմնական բնութագրիչն՝ առ այն, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավորումն է և իրավունքով իշխանության սահմանափակումը:

Գիտական հոդվածում հեղինակը նաև անդրադառնում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքի դրսևորման առանձնահատկություններին: Հեղինակը հիմնավորում է, որ զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ այն որպես զենք կարող է օգտագործվել իշխանությունը նվաճելու կամ քաղաքական ուժերին օժանդակելու նպատակով: Մինևսյն ժամանակ, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է քաղաքացիների մասնակցությունը զինված ուժերի կառավարմանը:

Annotation. This scientific article, based on the opinions of well-known jurists, the study of international and domestic legislation, presents the constitutional and legal foundations of the function of civil society control, the features of their implementation. In particular, the article reveals the features of the concepts of “control”, “supervision”, “monitoring”, “public control”, as well as the manifestations of control as a stable toolkit of civil society. Moreover, in the scientific article, the author also thoroughly addressed the types of civil control, their specificities. At the same time, considering the essence of the types of civil control, the author emphasizes another main characteristic of civil society - that the state is guided by the constitutional legal consciousness of society, the basis of which is the guarantee of the supremacy of law and the limitation of power by law.

In the scientific article, the author also touches on the specifics of the manifestation of the principle of civilian control over the armed forces. The author argues that the armed forces need civilian control, since they can be used as a weapon to seize power or to support political forces. At the same time, civilian control over the armed forces implies the participation of citizens in the management of the armed forces.

Аннотация. В данной научной статье на основе анализа позиций ведущих юристов, а также международного и национального законодательства рассматриваются конституционно-правовые основы функционирования контроля гражданского общества и специфика его осуществления.

В частности, раскрывается содержание понятий «контроль», «надзор», «мониторинг», «общественный контроль», а также формы проявления контроля как устойчивого инструментария гражданского общества. Особое внимание уделяется видам гражданского контроля и их характерным особенностям. Анализируя сущность данных форм контроля, авторы подчеркивают одну из ключевых характеристик гражданского общества: деятельность государства должна соотноситься с конституционно-правовым сознанием общества, основанным на гарантии верховенства права и ограничении государственной власти законом.

Кроме того, в статье рассматривается специфика реализации принципа гражданского контроля над вооруженными силами. Обосновывается тезис о необходимости такого контроля, поскольку вооружённые силы могут быть использованы как инструмент захвата власти либо поддержки отдельных политических сил. Вместе с тем гражданский контроль над вооруженными силами предполагает участие гражданского общества в процессах их управления и подотчетности.

Բանալի բառեր - վերահսկողություն, հսկողություն, մոնիտորինգ, քաղաքացիական հասարակություն, հանրային վերահսկողության, ժողովրդավարություն, իրավական պետություն, իրավունք, զինված ուժեր:

Keywords: control, supervision, monitoring, civil society, public oversight, democracy, rule of law, law, armed forces.

Ключевые слова: контроль, надзор, мониторинг, гражданское общество, общественный контроль, демократия, правовое государство, право, вооружённые силы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (ընդ.՝ 05.07.1995 թ., փոփոխ. 27.11.2005 թ., 06.12.2015 թ.) <https://www.president.am/hy/constitution/10.10.2025/>:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2 նոյեմբերի 2021թ. որոշումը Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով. <https://www.arlis.am/hy/acts/157530/10.12.2025/>:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհ. խմբագ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., Իրավունք, 2010, 1086 էջ:
4. Պետության և իրավունքի տեսություն, Ուսումնական ձեռնարկ / հեղ. խումբ, գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4-րդ լրամշակված հրատ., -Եր., «Լուսարաց հրատարակչատուն», 2023:
5. Акмалова А.А. Капицына Д.В., Мониторинг как вид правового контроля в системе государственного и муниципального управления // *Ars Administrandi. Искусство управления*, 2012, № 2, с. 13-26.
6. Алехин А.П., Кармолицкий А.А., Козлов Ю.М., Административное право Российской Федерации, М., Изд. Зерцало, 1998. 671 с.
7. Гончаров В.В., О соотношении общественного контроля с иными формами контроля власти (конституционно-правовой анализ) // *Юридические исследования*. 2018, №9, с. 20-29.
8. Гриб В.В., Общественная палата Российской Федерации как орган общественного контроля // *Юридический мир*. 2010, № 3, с. 32-39.
9. Гришина Т.А., Общественный контроль как форма реализации прав и свобод человека и гражданина на примере работы общественной палаты Истринского муниципального района Московской области // *Научный альманах*. 2016, № 2-3 (16), с. 256-289.
10. Калачиков И.С., Степанова А.А., Сущность общественного контроля за деятельностью органов государственной власти// «Научный аспект №2-2019» Гуманитарные науки, URL: <https://na-journal.ru/2-2019-gumanitarnye-nauki/1743-sushchnost-obshchestvennogo-kontrolya-za-deyatelnostyu-organov-gosudarstvennoi-vlasti/22.10.2025/>:
11. Кодекс поведения, касающийся военно-политических аспектов безопасности (прин. 03.12.1994г.). ОБСЕ, URL:<https://www.osce.org/sites/default/files/f/documents/d/f/41359.pdf/22.12.2025/>:
12. Коломытцева О. Н., Контроль общества над государством. Дисс... канд. юр. наук: Нижний Новгород, 2007. 244 с.
13. Кривец А.П., К вопросу о гражданском контроле в современной России как механизме взаимодействия власти и общества // *Научные ведомости БелГУ. Сер. История. Политология. Экономика. Информатика*. 2010. Вып. 16, № 19 (90), с. 216-223:
14. Ленин В.И., Государство и революция. Учение марксизма о государстве и задачи пролетариата в революции // Ленин В.И. Полное собрание сочинений. – 5-е изд. – Москва: Изд-во полит. лит., 1969, – Т. 33, – 434.
15. Лисовский С.Ф., Ефстафьев В.А., Избирательные технологии: история, теория, практика. М, Изд. Рос.-амер. ун-т, 2000, 320 с.
16. Мануйлов А.Е., Контроль гражданского общества за государственным аппаратом: теоретико-правовое исследование. Дисс... док.юрид. наук. Екатеринбург, 2018, 221 с.
17. Новая философская энциклопедия: в 4 тт. / Под ред. В.С. Степина. 2-е изд., испр. и доп. М., Мысль, 2010, Т. 2, 634 с.
18. Румянцева В.Г., Общественный контроль за деятельностью государства: к теории вопроса // *История государства и права*. 2009, № 11, с. 42-45.
19. Старосъязк Е., Элементы науки управления / Под ред. Ц.А. Ямпольской, пер. А.Х. Махненко. М.,

Изд. Прогресс, 1965, 423 с.

20. Студеникина М.С., Государственный контроль в сфере управления. Проблемы надведомственного контроля. М., Изд. Юрид. лит., 1974, 160 с.

21. Тихомиров Ю.А. Закон – основа стратегии // Президентский контроль. 2002,. № 8, с. 3-10:

22. Control // Cambridge Dictionary. URL:<https://dictionary.cambridge.org/dictionary/english/controls/10.1202025/>:

Քոչարյան Տ. - ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ-ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ, ք.գ.դ., պրոֆեսոր, ի.գ.թ., էլիասցե՝ ttqocharyan@yahoo.com:

Շահումյան Ա. - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիասցե՝ shahumyan.anahit@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 14.01.2026 թ., տրվել է գրախոսության 14.01.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ծատուրյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-44>

ИННА НЕРСЕЯН

Аспирант Российско-Армянского (Славянского) университета по специальности 12.00.02 «Конституционное право; конституционный судебный процесс; муниципальное право», юрист Центра правовой информации «ИРТЕК»

ԻՆՆԱ ՆԵՐՍԵՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ, մասնագիտություն՝ 12.00.02 «Սահմանադրական իրավունք, սահմանադրական դատավարություն, մունիցիպալ իրավունք», «ԻՐՏԵԿ» իրավաբանական տեղեկատվության կենտրոնի իրավաբան

INNA NERSEYAN

Postgraduate student at the Russian-Armenian (Slavonic) University specializing in 12.00.02 “Constitutional Law, Constitutional Judicial Process, Municipal Law”, Lawyer at the Legal Information Center “IRTEK”
<https://orcid.org/0009-0003-6803-774X>

СУДЬИ КАК ЛИЦА С ОСОБЫМ ПРАВОВЫМ СТАТУСОМ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА СВОБОДУ МИРНЫХ СОБРАНИЙ

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ, ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

JUDGES AS PERSONS WITH A SPECIAL LEGAL STATUS IN THE CONTEXT OF EXERCISING THE RIGHT TO FREEDOM OF PEACEFUL ASSEMBLY

Введение

Согласно действующей Конституции Республики Армения (статья 164), судья является независимым и подчиняется только закону, что подразумевает высокие требования к его личному и профессиональному поведению¹. Армянское законодательство также закрепляет

¹ Конституция РА с изменениями 06.12.2015г. / <https://www.president.am/ru/constitution-2015/>

нормы, регулирующие участие судей в общественно-политической жизни: Судебный кодекс РА от 07.02.2018 г. запрещает судьям быть членом или учредителем какой-либо партии, занимать должность в партии, выступать от имени партии или иным образом заниматься политической деятельностью, а также в публичных выступлениях и в любых иных обстоятельствах судья обязан проявлять политическую сдержанность и нейтралитет². Принцип деполитизированности судьи носит превентивный характер и направлен на поддержание общественного доверия к судебной системе, что признается одной из основ демократического правопорядка. Нарушение этих ограничений может рассматриваться как дисциплинарный проступок, вплоть до снятия с должности. Однако наше исследование направлено именно на выявление и представление теоретической коллизии между принципом деполитизированности судьи и универсальным правом на мирные собрания. Очевидно, что действительно возникает юридическая коллизия: с одной стороны, судья как гражданин обладает неотчуждаемым правом на свободу собраний, с другой — реализация этого права подчиняется ограничениям, связанным с особым правовым статусом.

Несмотря на ограничительный характер статуса судьи, важно учитывать, что он остается гражданином и носителем всех фундаментальных прав человека. Конституция Республики Армения в статье 3 закрепляет принцип верховенства прав и свобод человека, который имеет высшую юридическую силу и определяет содержание и применение законов³. Соответственно, любое ограничение прав судей должно быть строго необходимым и пропорциональным. Нашим тезисом является то, что в данном контексте универсальное лишение судей права на участие в мирных собраниях не соответствует ни принципу необходимости, предполагающему наличие объективной угрозы для конституционного строя, ни принципу пропорциональности, требующему минимального вмешательства в сферу прав и свобод при достижении легитимной цели. Таким образом, подобное ограничение носит характер чрезмерного и неоправданного вмешательства, противоречащего как национальной конституционной системе, так и международным стандартам защиты прав человека. Статья 29 Конституции Армении закрепляет право каждого человека на проведение собраний, а статья 11 Европейской конвенции о защите прав человека и основных свобод подчеркивает его фундаментальное значение для демократии. Считаем важным подчеркнуть, что участие в мирных собраниях не всегда связано с политической деятельностью. Судья может участвовать в собраниях, направленных на защиту прав человека, экологических ценностей, социальной справедливости, или даже профессиональных интересов (например, собрания судейских ассоциаций, собрания с требованием реформирования судебной системы, собрание с требованием повышения заработной платы судьи и так далее). Абсолютный запрет на участие в любых собраниях нарушает принцип соразмерности ограничений. С научной точки зрения подобный запрет вступает в противоречие с фундаментальными положениями теории прав человека, в частности с принципом универсальности и недопустимости произвольных ограничений основных прав. Согласно статье 3 Конституции Республики Армения, права и свободы человека и гражданина являются непосредственным действием и имеют высшую юридическую силу⁴. Это означает, что ограничение их осуществления допускается лишь при наличии конституционно оправданной цели, а также в пределах, соответствующих требованиям

² Судебный кодекс РА от 07.02.2018г. / <https://www.arlis.am/hy/acts/130486>

³ Конституция РА с изменениями 06.12.2015г. / <https://www.president.am/ru/constitution-2015/>

⁴ Конституция РА с изменениями 06.12.2015г. / <https://www.president.am/ru/constitution-2015/>

необходимости и соразмерности (пропорциональности)⁵. В доктрине конституционного права данные критерии рассматриваются как базовые гарантии от произвольного вмешательства государства в сферу личной свободы⁶. Это означает, что любые ограничения допускаются лишь при наличии конституционно оправданной цели и в объеме, строго необходимом для защиты демократического правопорядка. Следовательно, универсальное лишение судей права на участие в мирных собраниях не отвечает критериям необходимости и пропорциональности. Более того, в доктрине прав человека разграничивается политическая активность и гражданская активность. Если первая может подорвать принцип беспристрастности, то вторая, напротив, способствует укреплению доверия общества к судебной системе как к институту, способному защищать ценности правового государства. Например, участие судей в собраниях, посвященных вопросам доступа к правосудию или независимости судебной власти, по сути, не является политической деятельностью, а представляет собой форму профессиональной самозащиты.

Основная часть

Право судьи на участие в гражданской жизни и осуществление гражданской активности следует рассматривать как составную часть более широких правовых гарантий — свободы выражения мнений, свободы собраний и ассоциаций. Эти права образуют единую систему, позволяющую судье не только выражать собственную гражданскую позицию, но и участвовать в коллективных формах общественной активности, направленных на защиту демократических ценностей, прав человека и профессиональных интересов. Таким образом, гражданская активность судьи, при условии соблюдения принципов независимости и беспристрастности, не подрывает авторитет судебной власти, а напротив — способствует укреплению доверия общества к правосудию как к институту, способному защищать основы правового государства. Судьи должны иметь возможность реализовывать свое естественное право на участие в мирных собраниях, поскольку такая форма гражданской активности не противоречит требованиям политического нейтралитета и принципу сдержанности. Речь идет не об участии в политических акциях или партийной деятельности, а о реализации права голоса по вопросам, непосредственно затрагивающим функционирование судебной системы, состояние правосудия и гарантии независимости судей. Участие судей в подобных собраниях следует рассматривать как проявление их профессиональной ответственности и средство защиты института правосудия, а не как форму политической активности.

Европейский суд по правам человека неоднократно подчеркивал, что даже лица, обладающие специальным правовым статусом, не могут быть полностью лишены базовых прав (*Baka v. Hungary*, 2016; *Olujić v. Croatia*, 2009). В решении *Baka v. Hungary* (2016)⁷

⁵ *Подмарев, А. А.* (2001). Конституционные основы ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации. Автореферат диссертации кандидата юридических наук. МГУ имени М. В. Ломоносова. С. 63 // <https://www.dissercat.com/content/konstitutsionno-pravovye-osnovaniya-ogranichenii-osnovnykh-prav-i-svobod-cheloveka-i-grazhda>

⁶ *Подмарев, А. А.* (2001). Конституционные основы ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации. Автореферат диссертации кандидата юридических наук. МГУ имени М. В. Ломоносова. С. 63 // <https://www.dissercat.com/content/konstitutsionno-pravovye-osnovaniya-ogranichenii-osnovnykh-prav-i-svobod-cheloveka-i-grazhda>

⁷ Application no. 20261/12, *András BAKA against Hungary* lodged on 14 March 2012 // <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-115532>

Европейский суд подчеркнул, что судьи, как носители гражданских и политических прав, не могут быть полностью исключены из публичной сферы. Хотя ограничение на членство в партиях оправдано, полное лишение права участвовать в собраниях выходит за рамки необходимого в демократическом обществе. Судьи, как и иные граждане, имеют право выражать свои позиции в форме мирных собраний, если это не наносит ущерба их объективности. Так, Европейский суд по правам человека неоднократно подчеркивал, что право на свободу собраний (статья 11 Европейской конвенции о защите прав человека и основных свобод) может быть ограничено только в случаях, когда такие ограничения «необходимы в демократическом обществе» и «соразмерны преследуемой законной цели» (см., например: решение по делу *Kudrevičius and Others v. Lithuania*⁸, 2015; *Ezelin v. France*, 1991). Особенно важно, что в решении по делу *Ezelin v. France*⁹ Суд признал недопустимым дисциплинарное наказание адвоката за участие в мирной демонстрации, указав, что участие профессионалов, связанных с отправлением правосудия, в мирных собраниях не может быть произвольно ограничено. Дело «*Danileț v. Romania*»: ЕСПЧ рассмотрел вопрос о праве судьи на свободу выражения мнений в социальных сетях. Суд подчеркнул, что судьи, даже занимая низшие должности, имеют право выражать свое мнение, особенно по вопросам, касающимся правосудия и прав человека, при условии, что их высказывания не подрывают доверие к их беспристрастности¹⁰. Европейский суд по правам человека в своих решениях подчеркивает важность права на свободу мирных собраний как неотъемлемой части демократического общества. Ограничения этого права должны быть строго необходимыми и пропорциональными преследуемой законной цели. В деле «*Кудешкин против России*»¹¹ Суд отметил, что участие судьи в мирном собрании не должно автоматически восприниматься как угроза его независимости, если такое участие не нарушает принципов беспристрастности и независимости судебной власти. Решение ЕСПЧ в деле «*Кудешкина против России*» подчёркивает важность защиты свободы выражения мнений судьями, особенно в контексте их участия в общественных и политических дискуссиях, направленных на улучшение функционирования судебной системы. Это решение служит напоминанием о необходимости соблюдения баланса между обеспечением независимости судебной власти и правом судей на участие в общественной жизни. Кроме того, Венецианская комиссия в своем Заключении CDL-AD(2012)007 о свободе собраний отмечала, что любые ограничения должны быть предметом строгого теста на необходимость и пропорциональность, а универсальные или *blanket restrictions* (абсолютный запрет) несовместимы с духом Европейской конвенции¹².

Таким образом, с научной и правовой точки зрения оптимальной моделью является дифференцированный подход, при котором судье предоставляется возможность участвовать в собраниях, не имеющих политической окраски и прямо не затрагивающих вопросы

⁸ *Kudrevičius and Others v. Lithuania*, Большая палата ЕСПЧ, решение от 15 октября 2015 г., дело № 37553/05 // *Kudrevičius and Others v. Lithuania*, ECHR, Grand Chamber, Judgment of 15 October 2015 (App. No. 37553/05).

⁹ *Ezelin v. France*, ЕСПЧ, решение по делу от 26 апреля 1991 г., дело № 11800/85, Европейский отчет о правах человека (EHRR) 1992, том 14, стр. 362 // *Ezelin v. France*, ECHR [1992] 14 EHRR 362 (App. No. 11800/85) (Judgment of 26 April 1991).

¹⁰ CASE OF DANILEȚ v. ROMANIA, (Application no. 16915/21), JUDGMENT // <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-231394>

¹¹ CASE OF KUDESHKINA v. RUSSIA (Application no. 29492/05), JUDGMENT, STRASBOURG, 26 February 2009 <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-91501>.

¹² Заключение Венецианской комиссии **CDL-AD(2012)007** (Венецианская комиссия и ОБСЕ/БДИПЧ – «Совместные рекомендации по свободе мирных собраний»), в частности пункт 30, где отмечено, что *blanket*-ограничения несовместимы с духом Европейской конвенции // https://www.venice.coe.int/Newsletter/NEWSLETTER_2013_02/1_RUS_EN.html

партийной борьбы. Такой подход соответствует как принципу верховенства прав человека, закреплённому в Конституции Армении, так и стандартам Европейской конвенции по правам человека, что позволяет обеспечить баланс между деполитизированностью судебной власти и правом судей на свободу собраний.

В международной практике имеются примеры участия судей в мирных собраниях, что подчеркивает их право на свободу собраний и выражения мнений, особенно в контексте защиты судебной независимости и правосудия. Например, в феврале 2025 года тысячи венгерских судей, судебных работников и их сторонников вышли на улицы Будапешта, требуя повышения зарплат, свободы выражения мнений для судей и защиты судебной независимости. Протест был вызван соглашением, подписанным в ноябре 2024 года, которое связывало повышение зарплат с широкими реформами. Критики утверждают, что соглашение было подписано поспешно и без должного обсуждения. Организаторы подчеркнули важность судебной независимости, отметив угрозы этому принципу, такие как недостаточное консультирование по ключевому законодательству и высокий оборот судебного персонала из-за низкой оплаты труда.¹³ В Тунисе были протесты судей против ограничений независимости. В 2022 году в Тунисе судьи организовали мирные протесты в ответ на президентские указы, ограничивающие независимость судебной власти. Они выражали обеспокоенность по поводу угрозы верховенству права и призывали к восстановлению независимости судебной системы. В ответ на эти действия, Управление Верховного комиссара ООН по правам человека (OHCHR) подчеркнуло важность уважения права судей на свободу собраний и ассоциаций, отметив, что чрезмерные ограничения на эти права могут нарушать международные стандарты прав человека. В ООН специальный докладчик по вопросу о независимости судей и адвокатов Диего Гарсия-Саян и Специальный докладчик по вопросу о правах на свободу мирных собраний и ассоциаций Клеман Ньялетосси Вуле выразили серьезную обеспокоенность в связи с чрезмерными ограничениями прав на свободу мирных собраний и ассоциаций судей, мирно протестующих против недавних президентских указов в Тунисе¹⁴.

Есть несколько международно-правовых источников и стандартов, где прямо или косвенно закреплено право судей на участие в мирных собраниях и ассоциациях, при этом с учётом необходимости соблюдения независимости и беспристрастности судебной власти. Ниже — систематизированный обзор:

1. Всемирная хартия судьи (Universal Charter of the Judge, Международная ассоциация судей, IAJ, 2017)

- Подчеркивает, что судьи имеют право на свободу выражения мнений, собраний и ассоциаций, при условии, что это не подрывает независимость и беспристрастность судебной власти¹⁵.

2. Рекомендации Совета Европы по независимости судей (CM/Rec(2010)12), Рекомендации Комитета министров Совета Европы № R (94) 12

- Прямо указывается, что судьи могут участвовать в профессиональных и гражданских

¹³ Hungarian judges, court staff rally for judicial independence / an article <https://www.reuters.com/world/europe/hungarian-judges-court-staff-rally-judicial-independence-2025-02-22/> / (25.08.2025г.)

¹⁴ Tunisia: Judges' right to association and protest must be respected, say UN experts // <https://www.ohchr.org/en/press-releases/2022/09/tunisia-judges-right-association-and-protest-must-be-respected-say-un?utm>

¹⁵ THE UNIVERSAL CHARTER OF THE JUDGE Adopted by the IAJ Central Council in Taiwan on November 17th, 1999, art. 12 // <https://www.iaj-uim.org/iuw/universal-charter-of-the-judge-1999/>

объединениях, а также в мирных общественных мероприятиях, если это не противоречит принципу независимости.

- В Рекомендации Комитета министров Совета Европы № R (94) 12 «О независимости, эффективности и роли судей» закреплено, что судьи обладают правом участвовать в публичных обсуждениях вопросов, касающихся правосудия и прав человека, при условии сохранения беспристрастности¹⁶. В Рекомендации № R (94) 12, также подчеркивается, это право не должно нарушать их независимость и авторитет судебной власти. Рекомендация акцентирует внимание на важности соблюдения принципа беспристрастности при осуществлении свободы выражения мнений судьями. Этот подход лег в основу решений Европейского суда по правам человека (ЕСПЧ), где судьи рассматриваются не только как представители судебной власти, но и как граждане, обладающие базовыми правами.

3. Позиция международной комиссии юристов (ICJ)

- В соответствии со Всеобщей декларацией прав человека члены судебных органов, как и другие граждане, имеют право на свободу слова, убеждений, ассоциаций и собраний; при условии, однако, что при осуществлении этих прав судьи всегда ведут себя таким образом, чтобы сохранять достоинство своей должности, а также беспристрастность и независимость судебной власти.

- Судьи и прокуроры, как и другие граждане, имеют право на свободу слова, вероисповедания, объединений и собраний, подвергаясь только необходимым и соразмерным ограничениям в обоснованных целях.

- Судьи имеют право свободно создавать и вступать в ассоциации судей или другие организации для представления своих интересов, содействия своей профессиональной подготовке и защиты своей судебной независимости.

- Любые ограничения должны соответствовать международным стандартам, быть необходимыми и пропорциональными.¹⁷

- Свобода выражения мнения и объединений. Как и в случае с судьями, свобода выражения мнения и объединений являются важнейшими требованиями для надлежащего функционирования юридической профессии. Хотя этими свободами пользуются все люди, они приобретают особое значение для лиц, участвующих в отправлении правосудия¹⁸.

4. Бангалорские принципы поведения судей.

- Судье, как и любому гражданину, гарантируется свобода выражения, вероисповедания, участия в собраниях и ассоциациях, однако в процессе реализации этих прав судья всегда заботится о поддержании высокого статуса должности судьи и не допускает действий, не совместимых с беспристрастностью и независимостью судебных органов¹⁹.

¹⁶ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (RECOMMENDATION No. R (94) 12 ON THE INDEPENDENCE, EFFICIENCY AND ROLE OF JUDGES // <https://rm.coe.int/1680747830>

¹⁷ Judges' and Prosecutors' Freedoms of Expression, Association and Peaceful Assembly Submission to the United Nations Special Rapporteur on Independence of Judges and Lawyers for his upcoming report to the Human Rights Council February 2019 // <https://www.icj.org/>

¹⁸ INTERNATIONAL PRINCIPLES ON THE INDEPENDENCE AND ACCOUNTABILITY OF JUDGES, LAWYERS AND PROSECUTORS A PRACTITIONERS' GUIDE / PRACTITIONERS' GUIDE SERIES N°1 INTERNATIONAL COMMISSION OF JURISTS GENEVA, SWITZERLAND 2004, page 73 // http://www.icj.org/wp-content/uploads/2012/04/icj_independence_of_judiciary_guide_2004.pdf

¹⁹ Бангалорские принципы поведения судей, Гаага, 26 ноября 2002 года // https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/bangalore_principles.shtml

5. Управление верховного комиссара по правам человека в сотрудничестве с международной ассоциацией юристов.

- Права судей на свободу выражения мнений и свободу объединений являются неотъемлемыми в демократическом обществе, уважающем верховенство права и права человека. Свобода создавать объединения позволяет судьям эффективнее защищать свою независимость и другие профессиональные интересы²⁰.

6. Совета Европы Консультативный совет европейских судей (КСЕС) сформулировал ряд рекомендаций для судей в Европе относительно способов осуществления их прав

- Судья имеет право на свободу выражения мнения, как и любой другой гражданин. Помимо индивидуальных прав судьи, принципы демократии, разделения властей и плюрализма требуют свободы судей участвовать в дискуссиях, представляющих общественный интерес, особенно по вопросам, касающимся судебной системы. КСЕС подчеркивает, что всякий раз, когда демократия, принцип разделения властей или верховенство права находятся под угрозой, каждый судья обязан выступить в защиту независимости судебной власти и конституционного строя, в том числе по политически чувствительным вопросам. Судьи также могут реагировать на угрозы независимости судебной системы на международном уровне. Судьи, выступающие от имени судебного совета или ассоциации, должны пользоваться более высоким уровнем защиты. В заключении также подчеркивается, что отдельные судьи, а также судебские советы и ассоциации имеют этический долг разъяснять широкой общественности вопросы, касающиеся системы правосудия, функционирования судебной системы и ее ценностей, с тем чтобы способствовать укреплению и сохранять общественное доверие к судебной деятельности.²¹

Итак, в рамках настоящего исследования ключевым юридическим основанием для утверждения тезиса о том, что судьи обладают правом на участие в мирных собраниях, является международно-правовая база, закрепляющая свободу мирных собраний как универсальное право, доступное каждому. Реализация данного права судьями не должна рассматриваться как нарушение принципа политической сдержанности и нейтралитета, то есть принципа деполитизированности судебной власти. Следовательно, наличие международно-правового признания свободы мирных собраний служит основанием для юридической возможности судей реализовывать это фундаментальное право.

В зарубежной практике также прослеживается тенденция к дифференцированному подходу к участию судей в мирных собраниях.

Германия: правовые пределы участия судей в собраниях. В немецком праве вопрос о пределах свободы выражения мнений и участия в собраниях судьями регулируется прежде всего Законом о статусе судей (Deutsches Richtergesetz, DRiG). В соответствии с § 39 DRiG судьи обязаны вести себя как в служебное, так и во внеслужебное время таким образом, чтобы их поведение не подрывало доверие к их независимости и беспристрастности („Der Richter hat sich innerhalb und außerhalb seines Amtes so zu verhalten, daß das Vertrauen in seine

²⁰ OFFICE OF THE HIGH COMMISSIONER FOR HUMAN RIGHTS IN COOPERATION WITH THE INTERNATIONAL BAR ASSOCIATION / PROFESSIONAL TRAINING SERIES No. 9 HUMAN RIGHTS IN THE ADMINISTRATION OF JUSTICE: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers UNITED NATIONS New York and Geneva, 2003, page 132 // <https://hrlibrary.umn.edu/monitoring/adminchap4.html?utm>

²¹ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (CCJE), CCJE Opinion No. 25 (2022) on freedom of expression of judges, IX. Recommendations // <https://rm.coe.int/opinion-no-25-2022-final/1680a95347%0A%0A>

Unabhängigkeit nicht gefährdet wird“). Таким образом, законодатель подчеркивает приоритет сохранения авторитета судебной власти и общественного доверия²².

Однако из содержания данной нормы не следует абсолютный запрет на участие судей в публичных мероприятиях или собраниях. Напротив, немецкая судебная практика и правовая доктрина исходят из того, что судьи, как граждане, сохраняют за собой основные права, закрепленные в Основном законе ФРГ (Grundgesetz, GG), включая:

- свободу выражения мнений (ст. 5 GG),
- свободу объединений (ст. 9 GG),
- свободу собраний (ст. 8 GG)²³.

В юридической литературе и судебной практике подчеркивается, что ограничение этих прав допустимо лишь в той мере, в какой это необходимо для защиты принципа независимости судей и доверия общества к беспристрастному правосудию. Участие судьи в неполитических мероприятиях, направленных, например, на защиту прав человека, профессиональных интересов или экологических ценностей, не рассматривается как нарушение принципа нейтралитета.

Так, Федеральный конституционный суд Германии неоднократно указывал, что свобода выражения и собраний для судей может ограничиваться лишь тогда, когда существует реальная угроза беспристрастности или подрыва авторитета правосудия, но не может подвергаться чрезмерным ограничениям (BVerfGE 39, 334²⁴; BVerfGE 76, 196²⁵).

Таким образом, немецкий подход демонстрирует баланс между двумя началами:

- сохранением независимости и беспристрастности судьи как институциональной гарантии верховенства права;
- признанием судей полноценными носителями основных прав, в том числе права на участие в собраниях, при условии отсутствия политической ангажированности.

Иными словами, участие судьи в неполитических собраниях и акциях в Германии не нарушает принципа нейтралитета, если оно не связано с партийной деятельностью и не создает угрозу общественному доверию к суду.

Франция: пределы участия судей в собраниях. Французская правовая система исходит из признания судей не только представителями судебной власти, но и гражданами, обладающими основными правами, в том числе свободой выражения мнений и правом на участие в собраниях. Вопрос о пределах реализации этих прав регулируется как нормами национального права, так и практикой Высшего совета магистратуры Франции (Conseil supérieur de la magistrature, CSM), органа, ответственного за независимость и дисциплинарную ответственность судей²⁶.

В официальных позициях CSM указывается, что судьи могут участвовать в собраниях и публичных акциях, если они направлены на защиту независимости судебной власти, решение

²² **Deutsches Richtergesetz (DRiG)**. § 39. In: *Gesetze im Internet*. Bundesministerium der Justiz, juris GmbH. URL: https://www.gesetze-im-internet.de/drig/_39.html (дата обращения: 26.08.2025).

²³ **Grundgesetz für die Bundesrepublik Deutschland (GG)**. Art. 5, 8, 9. In: *Gesetze im Internet*. Bundesministerium der Justiz, juris GmbH. URL: <https://www.gesetze-im-internet.de/gg/> (дата обращения: 26.08.2025).

²⁴ **BVerfGE 39, 334 (1975)**. Решение Федерального конституционного суда ФРГ по вопросу соотношения свободы мнений и служебных обязанностей должностных лиц.

²⁵ **BVerfGE 76, 196 (1987)**. Решение Федерального конституционного суда ФРГ по вопросу свободы выражения и нейтралитета судей.

²⁶ **Conseil supérieur de la magistrature (CSM)**. *Avis et recommandations relatifs à la déontologie des magistrats*. Paris, 2010. URL: <https://www.conseil-superieur-magistrature.fr> (дата обращения: 26.08.2025).

профессиональных вопросов или защиту прав человека. Подобное участие рассматривается как форма профессиональной солидарности и проявление гражданской позиции, которая не нарушает принципа нейтралитета²⁷.

Во французской юридической доктрине также признаётся возможность участия судей в общегражданских мирных акциях (например, связанных с экологической повесткой, социальной справедливостью или правами меньшинств). Однако пределом свободы выступает участие в политической агитации: когда действия судьи могут быть истолкованы как поддержка политической партии, движения или избирательной кампании. В таких случаях существует риск нарушения принципа беспристрастности и подрыва доверия общества к правосудию²⁸.

Французская дисциплинарная и судебная практика играет ключевую роль в уточнении пределов допустимого поведения судей в публичной сфере. Несмотря на то, что нормы Code de l'organisation judiciaire и положения Conseil supérieur de la magistrature (CSM) закрепляют лишь общие требования к беспристрастности и независимости, именно прецеденты дисциплинарных дел позволяют увидеть, где проходит граница между допустимой гражданской активностью и нарушением принципа нейтралитета.

Одним из знаковых случаев стала дисциплинарная практика CSM от 15 декабря 2010 года, где рассматривался вопрос участия судьи в публичной акции, связанной с защитой независимости судебной системы. Совет признал, что подобное участие не является нарушением служебных обязанностей, если речь идёт о вопросах, имеющих прямое отношение к функционированию правосудия и защите принципа независимости. В решении было отмечено, что участие в профессионально ориентированных собраниях соответствует духу демократического общества и не подрывает доверие к судебной власти, напротив — укрепляет её легитимность.²⁹

В Годовом отчёте CSM за 2018 год подчеркивается, что судьи обладают правом на свободу выражения мнений и участие в гражданских инициативах, включая собрания и манифестации, при условии, что они воздерживаются от политической агитации. В отчёте особо отмечено, что судья может участвовать в акциях, имеющих правозащитный, социальный или профессиональный характер (например, протесты против реформ, ограничивающих судебную независимость), но участие в мероприятиях, организованных политическими партиями, недопустимо.³⁰

Таким образом, французская практика показывает устойчивый баланс:

1. Позитивное закрепление — участие судей в собраниях, связанных с правосудием, независимостью судебной власти или правами человека, рассматривается как допустимое и даже желательное.

2. Негативное ограничение — участие в партийной или избирательной агитации расценивается как несовместимое со статусом судьи.

Этот подход демонстрирует, что во Франции реализуется принцип функциональной

²⁷ Code de l'organisation judiciaire. Version consolidée au 2025. Légifrance. URL: <https://www.legifrance.gouv.fr> (дата обращения: 26.08.2025).

²⁸ Jean, F. *Déontologie des magistrats en France: indépendance, neutralité et liberté d'expression*. Revue française de droit constitutionnel, 2019, № 118, p. 301–320.

²⁹ Conseil supérieur de la magistrature. Décision disciplinaire du 15 décembre 2010. Paris, CSM.

³⁰ Conseil supérieur de la magistrature. Rapport annuel 2018. Paris: CSM. URL: <https://www.conseil-superieur-magistrature.fr> (дата обращения: 26.08.2025).

дифференциации: судья остаётся гражданином, обладающим правами, но его активность должна оставаться в границах профессиональной и гражданской сферы, не смещаясь в область политической борьбы³¹.

Считаем важным еще раз подчеркнуть, что французский подход демонстрирует баланс между правом судей на участие в собраниях и требованием политической нейтральности: участие в профессиональных и общегражданских акциях допустимо, пока оно не приобретает партийно-политический характер.

Считаем важным подчеркнуть, что в ряде стран Европы и Латинской Америки судебное сообщество не ограничилось декларациями, а использовало право на мирные собрания в качестве легитимного инструмента защиты своей независимости от политического давления публичной власти.

Польша. С начала судебных реформ 2015–2017 гг., вызвавших критику со стороны Европейского Союза и Венецианской комиссии, судьи активно прибегали к публичным акциям протеста. Так, в 2017–2019 гг. в Варшаве и других городах проходили «Марши судей» (Marsz Tysiāca Tóg), в которых принимали участие тысячи представителей судебного корпуса, выступавших против подрыва принципа разделения властей и за сохранение независимости судов. Эти акции получили широкую поддержку как со стороны польского общества, так и международных судебных организаций (Pech, L. & Wachowiec, P., CEPS Policy Brief, 2020).

Румыния. В 2019 году, в ответ на попытки правительства изменить уголовное законодательство и усилить контроль над судебной системой, сотни судей и прокуроров вышли на улицы Бухареста и других городов, организовав «тишинные протесты» (silent protests) у зданий судов. Судейские ассоциации (в частности, Forumul Judecātorilor din Romānia) подчеркнули, что такие акции не носили политической окраски, а были направлены исключительно на защиту верховенства права и независимости правосудия. Этот опыт стал предметом рассмотрения и в деле *Danileț v. Romania* (ECHR, 2021), где Европейский суд по правам человека подтвердил, что участие судей в подобных формах выражения мнения подпадает под защиту статьи 10 и 11 Конвенции.

Греция. В Греции судейские союзы традиционно активно используют форму мирных собраний и коллективных акций при обсуждении вопросов, связанных с трудовыми условиями и судебной реформой. Например, в 2012–2013 гг. в ответ на меры жёсткой экономии судьи организовали массовые собрания и забастовки, требуя уважения к независимости судебной власти и недопустимости чрезмерного урезания финансирования судов. Европейская сеть советов юстиции (ENCJ) впоследствии отметила, что такие действия, при условии сохранения беспристрастности и неполитического характера, являются легитимной формой отстаивания профессиональных интересов (ENCJ Report on Judicial Independence, 2014).

В западной правовой науке гражданская ангажированность судей трактуется как участие в общественных и профессиональных дискуссиях, направленных на укрепление доверия к правосудию, защиту прав человека и развитие демократических институтов. Так, в ряде исследований подчеркивается, что участие судей в подобных формах гражданской активности не подрывает их беспристрастность, если оно не связано с партийно-политической

³¹ Jean, F. Déontologie des magistrats en France: indépendance, neutralité et liberté d'expression. *Revue française de droit constitutionnel*, 2019, № 118, p. 301–320.

деятельностью (Шапиро, 1981³²; Garoupa & Ginsburg, 2009³³). В научной литературе выделяется концепция «сбалансированной гражданской вовлеченности», которая предполагает, что судьи могут и должны участвовать в профессиональных собраниях, дискуссиях о реформе судебной системы, инициативах по защите прав человека и общественных ценностей. Однако пределы их гражданской активности очерчиваются рамками принципа «appearance of impartiality» – «внешнего впечатления беспристрастности» (Malleon, 2016)³⁴.

Континентальная традиция (Германия, Франция, Испания) исходит из того, что судьи, будучи носителями особого правового статуса, сохраняют право на участие в непартийных акциях и мирных собраниях, если это связано с защитой независимости судебной власти, профессиональными интересами или общегражданскими ценностями (экологическими, социальными, правозащитными). Так, § 39 Закона о статусе судей Германии (Deutsches Richtergesetz) возлагает на судей обязанность вести себя таким образом, чтобы их поведение не подрывало доверие к их независимости, однако не содержит запрета на участие в неполитических собраниях, что подтверждается и немецкой судебной практикой. Аналогичный подход закреплён во Франции: Высший совет магистратуры (Conseil supérieur de la magistrature) допускает участие судей в собраниях, если оно направлено на защиту независимости правосудия или прав человека, при условии отсутствия политической агитации. В Испании Конституционный суд в решении STC 219/1989 признал, что право судей на свободу выражения и ассоциаций может включать и участие в профессиональных протестных формах, если это не подрывает их беспристрастность. Таким образом, континентальная модель признаёт, что гражданская вовлечённость судей в общественные вопросы может выступать элементом защиты самой судебной власти.

Англосаксонская традиция (в частности, США и Великобритания) демонстрирует более строгий подход. В США Кодекс поведения судей (Canon 4) прямо запрещает участие в политической деятельности, включая митинги и партийные собрания, но оставляет пространство для участия судей в непартийных организациях и мероприятиях, направленных на улучшение функционирования правосудия или защиту прав человека. Здесь акцент делается на абсолютной политической нейтральности, однако с сохранением ограниченного права на общественную активность в сферах, напрямую связанных с судебной профессией.

В сравнительной перспективе Армения занимает промежуточное положение: с одной стороны, формально гарантируя общие права, включая свободу собраний; с другой — на практике лишая судей возможности реализовать их в неполитических формах гражданской активности. В этом проявляется ключевое различие с континентальной моделью, где участие судей в мирных собраниях воспринимается не как угроза беспристрастности, а как инструмент защиты самой судебной независимости.

Несмотря на то, что в Армении конституционно закреплено общее право на свободу собраний, судебная практика и правоприменительная реальность показывают, что данное право фактически не распространяется на представителей судебного корпуса. В отличие от континентальной модели, где участие судей в неполитических собраниях рассматривается как часть их профессиональной миссии по защите независимости правосудия, в

³² Shapiro, M. *Courts: A Comparative and Political Analysis*. Chicago: University of Chicago Press, 1981.

³³ Garoupa, N., & Ginsburg, T. *Guarding the Guardians: Judicial Councils and Judicial Independence*. *American Journal of Comparative Law*, Vol. 57, No. 1, 2009.

³⁴ Malleon, K. *Judicial Independence and Accountability: A Contemporary Debate*. *Legal Studies*, Vol. 36, No. 4, 2016.

Армении преобладает узкое толкование принципа политической нейтральности, которое трансформируется в де-факто запрет на участие в любых формах гражданской активности. Такая правовая позиция, с одной стороны, направлена на обеспечение беспристрастности и сдержанности судей, однако, с другой — приводит к полной исключённости судебного сообщества из общественной дискуссии и делает его уязвимым к политическому давлению.

Заключение

Таким образом, сравнительно-правовой анализ позволяет заключить, что для Армении актуальной задачей становится переосмысление границ гражданской активности судей. Необходим переход от ограничительной модели, воспринимающей участие в любых собраниях как политическую ангажированность, к модели, при которой судьи сохраняют право участвовать в мирных собраниях, направленных на защиту независимости судебной власти, профессиональных интересов и социально-правовых ценностей. Это предполагает внесение изменений в законодательство, которые должны чётко разграничить формы допустимой и недопустимой активности судей.

Соответственно, логичным направлением реформирования является внесение дополнений в Судебный кодекс Республики Армения, предусматривающих:

1. Прямое закрепление права судей участвовать в мирных собраниях, не имеющих партийно-политического характера.

2. Разграничение допустимой и недопустимой активности судей, чтобы исключить любые формы политической агитации, но при этом сохранить пространство для гражданской ангажированности.

3. Гарантии от дисциплинарной ответственности в случаях, когда участие судьи в мирных собраниях носит профессиональный, правозащитный или социально-гуманитарный характер.

Проект дополнения к Судебному кодексу Республики Армения: участие судей в мирных собраниях:

«Статья (номер). Право судей на участие в мирных собраниях

1. Судья имеет право участвовать в мирных собраниях, митингах, демонстрациях и иных формах публичного выражения мнения, которые:

а) не имеют партийно-политического характера;

б) направлены на защиту независимости и эффективности судебной власти;

с) посвящены вопросам профессиональной деятельности судей или общегражданским, социально-правовым и гуманитарным проблемам.

2. Участие судьи в мирных собраниях не рассматривается как нарушение принципа политической нейтральности, если оно соответствует положениям части 1 настоящей статьи и осуществляется вне рамок партийной агитации.

3. Судьи и судейские ассоциации имеют право:

а) инициировать и участвовать в публичных дискуссиях, касающихся реформирования судебной системы;

б) выражать профессиональное мнение по вопросам правосудия, защиты прав человека и верховенства права;

с) использовать мирные собрания как форму коллективного отстаивания независимости судебной власти.

4. Дисциплинарная ответственность судьи не может наступать за действия, совершенные

в рамках участия в мирных собраниях, указанных в части 1 настоящей статьи, если такие действия не нарушают действующее законодательство и не связаны с партийной деятельностью.

5. Настоящие положения применяются к судьям всех уровней судебной системы Республики Армения».

Аннотация. В статье исследуется проблема соотношения особого правового статуса судей и их права на свободу мирных собраний. Рассматривается теоретическая и практическая коллизия между принципом деполитизированности судебной власти и универсальными правами человека. На основе анализа Конституции Республики Армения, национального законодательства, международно-правовых актов и практики Европейского суда по правам человека показано, что абсолютный запрет на участие судей в мирных собраниях является несоразмерным ограничением, нарушающим фундаментальные права. В работе аргументируется необходимость дифференцированного подхода, при котором допустимо участие судей в собраниях неполитического характера, связанных с защитой прав человека, независимости правосудия и профессиональных интересов. Сравнительный анализ зарубежного опыта (Германия, Франция, Тунис, Венгрия и др.) подтверждает целесообразность гибкой модели регулирования, позволяющей одновременно сохранить нейтралитет судей и обеспечить их право на гражданскую активность.

Ամփոփագիր: Հոդվածում ուսումնասիրվում է դատավորների առանձնահատուկ իրավական կարգավիճակի և նրանց խաղաղ հավաքների ազատության իրավունքի միջև հարաբերության խնդիրն: Հետազոտվում է տեսական և գործնական հակասությունը՝ դատարանների իշխանության դեպոլիտիկացման սկզբունքի և մարդու հիմնարար իրավունքների միջև: ՀՀ Սահմանադրության, ազգային օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և Եվրոպական դատարանի փորձի հիման վրա ցույց է տրվում, որ դատավորների մասնակցության լիարժեք արգելքը խաղաղ հավաքներին անհամաչափ սահմանափակում է, որը խախտում է հիմնարար իրավունքները: Աշխատությունում հիմնավորվում է դիֆերենցավորված մոտեցման անհրաժեշտությունը, որի դեպքում թույլատրվում է դատավորների մասնակցությունը ոչ քաղաքական բնույթի հավաքներին, որոնք կապված են մարդու իրավունքների պաշտպանությամբ, դատական անկախությամբ և մասնագիտական շահերով: Հեռանկարային փորձի համեմատական վերլուծությունը (Գերմանիա, Ֆրանսիա, Թունիս, Հունգարիա և այլն) հաստատում է ճկուն կարգավորման մոդելի նպատակահարմարությունը, որը միաժամանակ ապահովում է դատավորների ապաքաղաքականացվածությունը և նրանց քաղաքացիական ակտիվության իրավունքը:

Annotation. The article examines the correlation between the special legal status of judges and their right to freedom of peaceful assembly. It addresses the theoretical and practical conflict between the principle of depoliticization of the judiciary and universal human rights. Based on an analysis of the Constitution of the Republic of Armenia, national legislation, international legal instruments, and the case law of the European Court of Human Rights, it is demonstrated that an absolute prohibition on judges' participation in peaceful assemblies constitutes a disproportionate restriction that undermines fundamental rights. The paper argues for a differentiated approach, under which judges may participate in assemblies of a non-political nature, particularly those related to the protection of human rights, the independence of the judiciary, and professional interests. A comparative analysis of foreign experience (Germany, France, Tunisia, Hungary, and others) further confirms the relevance of a flexible regulatory model that ensures both the preservation of judicial neutrality and the safeguarding of judges' right to civic engagement.

Ключевые слова: судьи, правовой статус, свобода собраний, независимость судебной власти, деполитизированность, пропорциональность ограничений.

Քանալի բաներ - դատավորներ, իրավական կարգավիճակ, հավաքների ազատություն, դատական իշխանության անկախություն, ապարդաքականացվածություն, սահմանափակումների համաչափություն:

Keywords: *judges, legal status, freedom of assembly, independence of the judiciary, depoliticization, proportionality of restrictions.*

Список использованных источников

1. Конституция РА с изменениями 06.12.2015г.
2. Судебный кодекс РА от 07.02.2018г.
3. Подмарев А.А. (2001). Конституционные основы ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации. Автореферат диссертации кандидата юридических наук. МГУ имени М. В. Ломоносова.
4. Application no. 20261/12, András BAKA against Hungary lodged on 14 March 2012 // <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-115532>
5. Kudrevičius and Others v. Lithuania, Большая палата ЕСПЧ, решение от 15 октября 2015 г., дело № 37553/05 // Kudrevičius and Others v. Lithuania, ECHR, Grand Chamber, Judgment of 15 October 2015 (App. No. 37553/05).
6. Ezelin v. France, ЕСПЧ, решение по делу от 26 апреля 1991 г., дело № 11800/85, Европейский отчёт о правах человека (EHRR) 1992, том 14, стр. 362 // Ezelin v. France, ECHR [1992] 14 EHRR 362 (App. No. 11800/85) (Judgment of 26 April 1991).
7. CASE OF DANILEȚ v. ROMANIA, (Application no. 16915/21), JUDGMENT // <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-231394>
8. CASE OF KUDESHKINA v. RUSSIA (Application no. 29492/05), JUDGMENT, STRASBOURG, 26 February 2009 <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-91501>
9. Заключение Венецкой комиссии CDL-AD(2012)007 (Венецианская комиссия и ОБСЕ/БДИПЧ – «Совместные рекомендации по свободе мирных собраний»), в частности пункт 30, где отмечено, что blanket-ограничения несовместимы с духом Европейской конвенции
10. Hungarian judges, court staff rally for judicial independence / an article <https://www.reuters.com/world/europe/hungarian-judges-court-staff-rally-judicial-independence-2025-02-22/>
11. Tunisia: Judges' right to association and protest must be respected, say UN experts // <https://www.ohchr.org/en/press-releases/2022/09/tunisia-judges-right-association-and-protest-must-be-respected-say-un?utm>
12. THE UNIVERSAL CHARTER OF THE JUDGE Adopted by the IAJ Central Council in Taiwan on November 17th, 1999, art. 12 // <https://www.iaj-uim.org/iuw/universal-charter-of-the-judge-1999/>
13. CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (RECOMMENDATION No. R (94) 12 ON THE INDEPENDENCE, EFFICIENCY AND ROLE OF JUDGES // <https://rm.coe.int/1680747830>
14. Judges' and Prosecutors' Freedoms of Expression, Association and Peaceful Assembly Submission to the United Nations Special Rapporteur on Independence of Judges and Lawyers for his upcoming report to the Human Rights Council February 2019 // <https://www.icj.org/>
15. INTERNATIONAL PRINCIPLES ON THE INDEPENDENCE AND ACCOUNTABILITY OF JUDGES, LAWYERS AND PROSECUTORS A PRACTITIONERS' GUIDE / PRACTITIONERS' GUIDE SERIES N°1 INTERNATIONAL COMMISSION OF JURISTS GENEVA, SWITZERLAND 2004
16. Бангалорские принципы поведения судей, Гаага, 26 ноября 2002 года // https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/bangalore_principles.shtm
17. OFFICE OF THE HIGH COMMISSIONER FOR HUMAN RIGHTS IN COOPERATION WITH THE INTERNATIONAL BAR ASSOCIATION / PROFESSIONAL TRAINING SERIES No. 9 HUMAN RIGHTS IN THE

ADMINISTRATION OF JUSTICE: A Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers UNITED NATIONS New York and Geneva

18. CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (CCJE), CCJE Opinion No. 25 (2022) on freedom of expression of judges, IX. Recommendations // <https://rm.coe.int/opinion-no-25-2022-final/1680a95347%0A%0A>

19. Deutsches Richtergesetz (DRiG). § 39. In: Gesetze im Internet. Bundesministerium der Justiz, juris GmbH. URL: https://www.gesetze-im-internet.de/drig/_39.html (дата обращения: 26.08.2025).

20. Grundgesetz für die Bundesrepublik Deutschland (GG). Art. 5, 8, 9. In: Gesetze im Internet. Bundesministerium der Justiz, juris GmbH. URL: <https://www.gesetze-im-internet.de/gg/> (дата обращения: 26.08.2025).

21. BVerfGE 39, 334 (1975). Решение Федерального конституционного суда ФРГ по вопросу соотношения свободы мнений и служебных обязанностей должностных лиц.

22. BVerfGE 76, 196 (1987). Решение Федерального конституционного суда ФРГ по вопросу свободы выражения и нейтралитета судей.

23. Conseil supérieur de la magistrature (CSM). Avis et recommandations relatifs à la déontologie des magistrats. Paris, 2010. URL: <https://www.conseil-superieur-magistrature.fr> (дата обращения: 26.08.2025).

24. Code de l'organisation judiciaire. Version consolidée au 2025. Légifrance. URL: <https://www.legifrance.gouv.fr> (дата обращения: 26.08.2025).

25. Jean, F. Déontologie des magistrats en France: indépendance, neutralité et liberté d'expression. Revue française de droit constitutionnel, 2019, № 118, p. 301–320.

26. Conseil supérieur de la magistrature. Décision disciplinaire du 15 décembre 2010. Paris, CSM.

27. Conseil supérieur de la magistrature. Rapport annuel 2018. Paris: CSM. URL: <https://www.conseil-superieur-magistrature.fr> (дата обращения: 26.08.2025).

28. Jean, F. Déontologie des magistrats en France: indépendance, neutralité et liberté d'expression. Revue française de droit constitutionnel, 2019, № 118, p. 301–320.

29. Shapiro, M. Courts: A Comparative and Political Analysis. Chicago: University of Chicago Press, 1981.

30. Garoupa, N., & Ginsburg, T. Guarding the Guardians: Judicial Councils and Judicial Independence. American Journal of Comparative Law, Vol. 57, No. 1, 2009.

31. Malleson, K. Judicial Independence and Accountability: A Contemporary Debate. Legal Studies, Vol. 36, No. 4, 2016.

Нерсисян И. - Аспирант Российско-Армянского (Славянского) Университета по специальности 12.00.02 «Конституционное право; конституционный судебный процесс; муниципальное право», юрист Центра правовой информации «ИРТЕК», эл. почта: nersesyanyan-1994@bk.ru.

Статья представлена в редакцию 01.09.2025 г., отправлена на рецензию 01.09.2025 г., рецензент: к.ю.н. доцент, ректор ГГУ Р. Акопян, принята к публикации: 08.04.2026 г.

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-59>

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ
ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և
Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) դասախոս,
ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ

SERGEY GHAZINYAN
*Lecturer at the Chair of European and International Law,
Yerevan State University (YSU) and the American University of Armenia (AUA),
Expert at the YSU Center for European Studies*

СЕРГЕЙ КАЗИНЯН
*Преподаватель кафедры европейского и международного права
Ереванского государственного университета (ЕГУ)
и Американского университета Армении (АУА),
эксперт Центра европейских исследований ЕГУ
<https://orcid.org/0000-0003-2796-1322>*

**ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՆՑ
ԹՐԱՖԻԲԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔ**

**HUMAN DIGNITY AND THE STATE SOCIAL COMPONENT AS A
CONSTITUTIONAL BASIS FOR THE PREVENTION OF HUMAN
TRAFFICKING**

**ЧЕЛОВЕЧЕСКОЕ ДОСТОИНСТВО И СОЦИАЛЬНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ
ГОСУДАРСТВА КАК КОНСТИТУЦИОННАЯ ОСНОВА
ПРЕДОТВРАЩЕНИЯ ТОРГОВЛИ ЛЮДЬМИ**

Ներածություն

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի սահմանադրական հիմնական երաշխիքները ձևավորում են այն նորմատիվ և ինստիտուցիոնալ «իմունային համակարգը», որի միջոցով սահմանադրական պետությունը պաշտպանում է մարդուն շահագործումից և արժանապատվության խաթարումից: Այս երաշխիքները չեն սահմանափակվում առանձին իրավական արգելքներով կամ քրեական պատասխանատվության միջոցներով. դրանք ներկայացնում են մարդու արժանապատվության, անձնական ազատության, խոշտանգման բացարձակ ար-

գելքի, հարկադիր աշխատանքի արգելքի, խտրականության բացառման և արդյունավետ դատական պաշտպանության համակցված համակարգ: Սահմանադրական մակարդակում ամրագրված այս սկզբունքները պարտադրում են պետությանը ոչ միայն չմիջամտել մարդու ազատությանը, այլ նաև ստեղծել ակտիվ պաշտպանական միջավայր, որտեղ շահագործման ռիսկերը կանխատեսվում, նվազեցվում և համակարգային կերպով վերահսկվում են: Այդ պատճառով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը հանդես է գալիս ոչ թե որպես սոցիալական կամ քրեական քաղաքականության առանձին ուղղություն, այլ որպես սահմանադրական կարգի մեխանիզմ:

Այս «իմունային համակարգի» էությունը կայանում է նրանում, որ այն պետության վրա դնում է շարունակական պոզիտիվ պարտավորություն՝ գործելու մինչև իրավունքի խախտումը, իրավունքի խախտման պահին և դրանից հետո: Սահմանադրական երաշխիքները պահանջում են կանխարգելիչ քաղաքականություն, արդյունավետ նույնացում, զոհերի պաշտպանություն և վերականգնում, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիություն: Այստեղ պետությունը գործում է ոչ միայն որպես պատժող սուբյեկտ, այլ որպես ռիսկերի կառավարման պատասխանատու, որի հիմնական գործառույթը շահագործման հնարավորության նվազեցումն է: Մարդկանց թրաֆիքինգի առկայությունը, հետևաբար, վկայում է ոչ միայն առանձին հանցագործության, այլ սահմանադրական երաշխիքների խաթարման մասին, քանի որ այն բացահայտում է այն կետերը, որտեղ պետական պաշտպանական մեխանիզմները չեն գործել բավարար արդյունավետությամբ:

Հիմնական հետազոտություն

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմքում ընկած է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչումը, իսկ մարդու արժանապատվությունն անխախտելի է: Այն հիմնարար նշանակություն ունի թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական բնույթը հասկանալու համար: Մարդկանց թրաֆիքինգը՝ որպես ժամանակակից ստրկության դրսևորում, ոչ միայն խաթարում է անձի ազատությունը, այլև ուղղակիորեն ոտնահարում է մարդկային էությունը՝ նրան վերածելով առուվաճառքի առարկայի («commodification») և շահագործման օբյեկտի:

Սահմանադրական իրավունքի տրամաբանությամբ՝ մարդու արժանապատվությունը բացարձակ արժեք է, որը չի կարող սահմանափակվել որևէ հանգամանքում: Մարդկանց թրաֆիքինգը համարվում է մարդու արժանապատվությունն ուղղակիորեն խաթարող երևույթ: Ես «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիան (այսուհետ՝ ԵԽ կոնվենցիա) և դրա բացատրական զեկույցը թրաֆիքինգը սահմանում են հենց այս համատեքստում՝ որպես մարդու արժանապատվության և ամբողջականության դեմ ուղղված հանցագործություն և մարդու իրավունքների խախտում: ԵԽ կոնվենցիայի բացատրական զեկույցը շեշտում է, որ թրաֆիքինգը մարդուն դիտարկում է որպես ապրանք, որը պետք է գնվի, վաճառվի և ենթարկվի հարկադիր աշխատանքի, ինչը հիմնովին հակասում է մարդու արժանապատվության գաղափարին²:

Երբ մարդը դառնում է թրաֆիքինգի զոհ, խախտվում է նրա՝ որպես իրավունքի սուբյեկտ

¹ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 3 և 23, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>:

² Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Ներածություն (2005 թ., CETS No. 197), <https://rm.coe.int/168008371d>:

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», պարբ. 2 և 10, <https://rm.coe.int/16800d3812>:

լինելու կարգավիճակը: Ինչպես նշվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) *Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով վճռում, թրաֆիքինգն իր բնույթով և շահագործման նպատակով հանդիսանում է սեփականության իրավունքին բնորոշ լիազորությունների իրացում մարդու նկատմամբ³: Սա նշանակում է, որ մարդկանց թրաֆիքինգը ոչ միայն հանցագործություն է ուղղված մարդու ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ, այլև վտանգ է սահմանադրական կարգի հիմքերի համար, քանի որ այն ժխտում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի գոյությունը:

Ժամանակակից մարդու իրավունքների դոկտրինը հիմնված է այն սկզբունքի վրա, որ մարդու իրավունքները պետության կողմից շնորհվող բարիքներ չեն, այլ մարդու էությանը ներհատուկ, ի ծնե և անօտարելի: Այս մոտեցումը հստակ արտահայտված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի նախաբանում նշվում է մարդու ընտանիքի բոլոր անդամների «ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների» ճանաչումը: Հռչակագրի 1-ին հոդվածը ևս ամրագրում է, որ «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով», ինչը նշանակում է, որ իրավունքները ծագում են մարդու ծննդյան փաստից, այլ ոչ թե պետական իշխանության կամքից⁴:

Նույն գաղափարը վերահաստատված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախաբանում, որտեղ արձանագրվում է, որ այդ իրավունքները բխում են մարդու անձին ներհատուկ բնույթից: Հետևաբար, մարդու իրավունքները պետք է ընկալվեն որպես պետության վրա դրված սահմանադրական և իրավական սահմանափակումներ, այլ ոչ թե պետության կողմից տրվող արտոնություններ: Դրանք պարտադրում են հանրային իշխանությանը ճանաչել, երաշխավորել և պաշտպանել արդեն գոյություն ունեցող իրավունքները, այլ ոչ թե ստեղծել կամ շնորհել դրանք:

Մարդու իրավունքների տեսության մեջ այս մոտեցումը ձևակերպված է նաև հեղինակավոր գիտական գրականության մեջ: Սթիվեն Փ. Մարքսի պնդմամբ՝ թեև մարդու իրավունքները ստանում են սահմանադրական ամրագրում, դրանք ենթադրում մարդու իրավունքների հայեցակարգի ներհատուկ արժեք՝ անկախ նրանից, թե ինչ է սահմանված օրենքով⁵: Ջեք Դոնելլին նշում է, որ մարդու իրավունքները պատկանում են յուրաքանչյուրին պարզապես այն պատճառով, որ նա մարդ է⁶: Այսպիսով, մարդու իրավունքները սահմանադրաիրավական համակարգում հանդես են գալիս որպես իշխանությունը կաշկանդող և սահմանափակող սկզբունքներ, որոնք բխում են մարդու բնածին ազատությունից և իրավական կարգի արժեքային հիմքերից:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը երկար ժամանակ ընկալվել է հիմնականում որ-

³ «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործ, թիվ 25965/04 գանգատ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 282, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>:

⁴ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևով, Նախաբան և Հոդված 1, <https://www.un.org/sites/un2.un.org/files/2021/03/udhr.pdf>:

⁵ Սթիվեն Փ. Մարքս, Մարդու իրավունքներ. համառոտ ներածություն (Stephen P. Marks, Human Rights: A Brief Introduction), Հարվարդի համալսարան, 2016 թ., <https://content.sph.harvard.edu/wwwhsph/sites/134/2016/07/Human-Rights-A-brief-intro-2016.pdf>:

⁶ Ջեք Դոնելլի, Մարդու համընդհանուր իրավունքները տեսության և պրակտիկայի մեջ (Jack Donnelly, Universal Human Rights in Theory and Practice, 3-րդ հրատ.), Քորնելի համալսարանի հրատարակչություն, 2013 թ., <https://dokumen.pub/universal-human-rights-in-theory-and-practice-third-edition-9780801467493.html>:

պես քրեաիրավական խնդիր՝ ուղղված հանցագործության կանխարգելմանը, բացահայտմանը և հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկելուն: Սակայն ժամանակակից սահմանադրաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով պետության պոզիտիվ պարտավորությունների մեկնաբանությունը պահանջում է վերաիմաստավորել այս երևույթը՝ այն դիտարկելով ոչ միայն հանցավորության, առավել ևս՝ կազմակերպված հանցավոր խմբավորումների ներգրավում ենթադրող կամ անդրազգային հանցավորության դեմ քաղաքականության, այլ առաջին հերթին մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության համատեքստում:

Մարդկանց թրաֆիքինգը ուղղակի վտանգ է ներկայացնում մարդու արժանապատվությանը, անձնական ազատությանը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանը և շահագործումից զերծ լինելու իրավունքին, ուստի այն չի կարող դիտվել սոսկ որպես հանցագործություն. այն հանդիսանում է սահմանադրական կարգի արժեքային հիմքերի խախտում:

Միջազգային իրավունքում մարդկանց թրաֆիքինգը ճանաչվում է ոչ միայն որպես հանցավոր գործունեություն, այլ որպես մարդու իրավունքների խախտում, որը պարտավորեցնում է պետություններին իրականացնել կանխարգելիչ, պաշտպանական և վերականգնողական միջոցառումներ: Այս մոտեցումն ամրագրված է Եվրոպայի խորհրդի (ԵԽ) և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մակարդակով, որտեղ շեշտվում է, որ մարդկանց թրաֆիքինգը խախտում է մարդու իրավունքներն ու արժանապատվությունը և պահանջում է պետությունների համապարփակ արձագանք՝ ուղղված զոհերի պաշտպանությանը և իրավունքների վերականգնմանը⁷: Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է ընկալվի ոչ թե որպես պետական քաղաքականության ընտրովի ուղղություն, այլ որպես սահմանադրական պարտականություն, որը բխում է մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների գերակայությունից:

Կարևոր է վերլուծել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը, մասնավորապես՝ երաշխավորելու և պաշտպանելու մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Հետազոտությամբ բացահայտվում է, թե ինչպես է սահմանադրաիրավական հարթությունում մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների համակարգը մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանության, ռիսկերի կանխարգելման և արդյունավետ իրավական մեխանիզմների ստեղծման առումով ձևավորում պետության պարտավորությունների շրջանակը:

Մարդու իրավունքները սահմանադրական կարգում գործում են որպես անմիջականորեն կիրառելի սահմանափակումներ հանրային իշխանության նկատմամբ, ինչը նշանակում է, որ պետական մարմինները կաշկանդված են այդ իրավունքներով անկախ դրանց իրագործու-

⁷ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, «Մարդու իրավունքները և մարդկանց թրաֆիքինգը. Առաջարկվող սկզբունքներ և ուղեցույցներ» (Office of the United Nations High Commissioner for Human Rights, “Recommended Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking”), 2002 թ.:

<https://www.ohchr.org/en/publications/recommended-principles-and-guidelines-human-rights-and-human-trafficking>: Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Ներածություն (2005 թ., CETS No. 197), <https://rm.coe.int/168008371d>:

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», պարբ. 1-4, <https://rm.coe.int/16800d3812>:

Ջուլիա Պլանիցեր, Հելմուտ Ջաքս (խմբ.), «Մեկնաբանություն՝ Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի վերաբերյալ» (Julia Planitzer, Helmut Sax (eds.), Commentary on the Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings), Edward Elgar Publishing (Elgar Commentaries on the Council of Europe Conventions, 2020), էջեր 1-10, <https://library.oapen.org/handle/20.500.12657/51308>:

մը մանրամասնող օրենսդրության առկայությունից⁸: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում սա նշանակում է, որ պետությունը չի կարող սահմանափակվել միայն դիտորդի դերով կամ միայն արձագանքել կատարված փաստին: Իրավունքների անմիջական գործողությունը պահանջում է պետությունից ոչ միայն պատասխանատվության ենթարկել հանցանք կատարած անձանց (ինչը միայն քրեաիրավական արձագանքի ասպեկտն է), այլև ստանձնել պատասխանատվություն այն բանի համար, որ չի կարողացել ապահովել այդ իրավունքների անխափան իրացումը կամ չի ապահովել մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը, օրինակ՝ աջակցության, պաշտպանության և վերահետքադրման տեսանկյունից: Եթե պետությունը տեղյակ էր կամ պարտավոր էր տեղյակ լինել անձի՝ մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու իրական վտանգի մասին և չի ձեռնարկել անհրաժեշտ օպերատիվ միջոցներ, նա խախտում է իրավունքների անմիջական գործողության սահմանադրական պահանջը և, հետևաբար, իր պոզիտիվ պարտավորությունը:⁹

Էական է հստակեցնել, որ Հայաստանի Հանրապետությունը, ամրագրելով մարդու իրավունքները Սահմանադրությամբ, ոչ թե «շնորհում» է դրանք քաղաքացիներին, այլ ճանաչում է դրանք որպես ի ծնե և անօտարելի արժեքներ: Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»¹⁰: Այս ձևակերպումը բացառում է պետության կողմից իրավունքների «խթանման» մասին խոսույթը, քանի որ պետությունը պարտավոր է երաշխավորել այն, ինչն արդեն իսկ պատկանում է մարդուն:

Մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը, հետևաբար, պետության «բարի կամքի» դրսևորում չէ, այլ սահմանադրական իմպերատիվ: Երբ պետությունը ձախողում է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը կամ զոհերի պաշտպանությունը, նա ոչ թե պարզապես թերանում է սոցիալական քաղաքականության մեջ, այլ խախտում է Սահմանադրությամբ ստանձնած իր հիմնարար պարտականությունը՝ հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը՝ որպես բոլոր իրավունքների անքակտելի հիմք:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը, ըստ որի՝ Հայաստանը ինքնիշխան է, ժողովրդավարական, **սոցիալական և իրավական պետություն**, սահմանում է պետական կարգի արժեքային հիմքը և ուղղակիորեն ազդում մարդկանց թրաֆիքինգի իրավական գնահատման վրա: Սոցիալական պետության սկզբունքը ենթադրում է, որ պետությունը սահմանափակված չէ միայն իրավական կարգապահություն պահպանելու պարտականությամբ, այլ կրում է ակտիվ պատասխանատվություն՝ ապահովելու անձի սոցիալական անվտանգությունը, աշխատանքի արժանապատիվ պայմանները և մարդկային արժանապատվությանը համահունչ կենսապայմաններ: Մարդկանց թրաֆիքինգը, որպես շահագործման ծայրահեղ ձև, առաջանում է հենց այն միջավայրերում, որտեղ սոցիալական պաշտպանությունը թուլացած է, աշխատանքային իրավունքները խոցելի են, իսկ անհատը հայտնվում է տնտեսական կախվածության մեջ: Հետևաբար, սոցիալական պետության սահմանադրական մոդելը թրաֆիքինգի դեմ պայքարը դիտարկում է ոչ միայն որպես քրեական արդարադատության խնդիր, այլ որ-

⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>:

⁹ Ռոզա Փատի, Պետությունների պոզիտիվ պարտավորությունները մարդկանց թրաֆիքինգի առնչությամբ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նոր փուլ է բացում «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործում (States' Positive Obligations with Respect to Human Trafficking: The European Court of Human Rights Breaks New Ground in Rantsev v. Cyprus & Russia), St. Thomas University College of Law, https://scholarship.stu.edu/faculty_articles/147/:

¹⁰ ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>:

պես սոցիալական քաղաքականության անբաժանելի բաղադրիչ:

Այս համատեքստում աշխատանքի արժանապատիվ պայմանների ապահովումը ձեռք է բերում սահմանադրական նշանակություն: Սոցիալական պետությունը պարտավոր է ձևավորել այնպիսի տնտեսական և աշխատանքային միջավայր, որտեղ մարդը չի կանգնում շահագործման և հարկադրանքի դիսկի առաջ: Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը սկսվում է ոչ թե քրեական հետապնդման փուլում, այլ սոցիալական պաշտպանության համակարգում՝ աղքատության նվազեցման, աշխատանքային իրավունքների պաշտպանության, միգրանտների իրավական կարգավիճակի երաշխավորման և խոցելի խմբերի սոցիալական ներառման միջոցով: Մարդկանց թրաֆիքինգի տեսանկյունից խոցելիությանը նպաստող գործոններից է նաև առանձին հիմքերով խտրականությունը:

Խտրականության արգելքը, որը երաշխավորվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ¹¹, մարդկանց թրաֆիքինգի իրավական գնահատման առանցքային տարր է, քանի որ թրաֆիքինգը կառուցվածքային անհավասարությունների վրա հիմնված երևույթ է: Միջազգային իրավունքը ճանաչում է, որ որոշ խմբեր՝ մասնավորապես կանայք, երեխաները, միգրանտները, փախստականները և սոցիալապես մարգինալացված անձինք, անհամաչափորեն ավելի խոցելի են շահագործման նկատմամբ¹²:

ԵՄ կոնվենցիայի բացատրական զեկույցը հստակ շեշտում է, որ թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականությունը պետք է հիմնված լինի խտրականության բացառման սկզբունքի վրա և ներառի խոցելի խմբերի հատուկ պաշտպանություն, քանի որ աղքատությունը, գենդերային անհավասարությունը և միգրացիոն կարգավիճակով պայմանավորված կախվածությունը ստեղծում են շահագործման համակարգային ռիսկեր¹³: Ուստի, մարդկանց թրաֆիքինգը չի կարող դիտարկվել մեկուսացված քրեական երևույթ, այլ պետք է ընկալվի որպես սոցիալական անհավասարությունների հետևանք, որը պահանջում է պետությունից ոչ միայն բացառել խտրականությունը, այլ նաև նվազեցնել այն պայմանները, որոնք դարձնում են որոշ խմբերի մարդկանց թրաֆիքինգի տեսանկյունից խոցելի¹⁴:

Այս համատեքստում կարևոր է նաև ՄԻԵԴ-ի վերջին զարգացող պրակտիկան, որը մարդկանց թրաֆիքինգը դիտարկում է ոչ միայն որպես շահագործման, այլ նաև միջհատվող խտրականության («intersectional discrimination») դրսևորում: *Ֆ.Մ.-ն և այլոք ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում ՄԻԵԴ-ն առաջին անգամ հստակ կապեց ՄԻԵԿ 4-րդ և 14-րդ հոդվածները՝ ընդունելով, որ պետության անգործությունը մարդկանց թրաֆիքինգի զոհերի նկատմամբ կարող է պայմանավորված լինել նրանց գենդերային և միգրացիոն կարգավիճակի խոցելիությամբ¹⁵: Ջեյսոն Հեյնսի վերլուծությամբ՝ այս մոտեցումը ցույց է տալիս, որ շահագործումը հաճախ առաջանում է ոչ թե մեկ գործոնից, այլ սոցիալական դիրքի, ծագման, սեռի

¹¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 29, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>:

¹² **Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակ (UNODC)**, *Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ գլոբալ զեկույց 2022 (Global Report on Trafficking in Persons 2022)*, <https://www.unodc.org/unodc/data-and-analysis/glotip.html>.

¹³ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», պարբ. 63 և 103, <https://rm.coe.int/16800d3812>:

¹⁴ **Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների փորձագիտական խումբ (GRETA)**, *Ընդհանուր զեկույց Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի իրականացման վերաբերյալ (3-րդ գնահատման փուլ)*, 2024 թ., <https://rm.coe.int/14th-general-report-of-greta-prems-067125-gbr-2578-14th-general-report/1680b638e3>:

¹⁵ «Ֆ.Մ. և այլոք ընդդեմ Ռուսաստանի» գործ, թիվ 71671/16 և 40190/18 գանգատներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 10 դեկտեմբերի 2024 թ., վերջնական՝ 10 մարտի 2025 թ., <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-238319>:

և տնտեսական կախվածության համակցությունից: Թեպետ հեղինակն արձանագրում է, որ Դատարանը դեռ ամբողջությամբ չի զարգացրել միջհատվող խտրականության դոկտրինը, այդուամենայնիվ այս գործը կարևոր քայլ է՝ հաստատելու համար, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարը պահանջում է ճանաչել և վերլուծել այն կառուցվածքային անհավասարությունները, որոնք միաժամանակ ազդում են տարբեր խոցելի խմբերի վրա¹⁶:

Պետության առաջնային պարտավորությունն է մշակել այնպիսի օրենսդրական կառուցակարգեր և այն իրականացնող համակարգ, որը ոչ միայն կքրեականացնի մարդկանց թրաֆիքինգը, այլև կապահովի մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանություն: Ինչպես նշվում է ՄԻԵԴ-ի *Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով վճռի վերլուծության մեջ, պետությունը պարտավոր է ներդնել արդյունավետ քրեական իրավունքի դրույթներ՝ կանխելու հանցագործությունների կատարումը և պատժելու մեղավորներին¹⁷: Սակայն, զուտ քրեական օրենսգրքում հողված ունենալը բավարար չէ: Օրենսդրությունը պետք է լինի որակյալ և կանխատեսելի՝ համահունչ ՀՀ Սահմանադրության 5-րդ և 6-րդ հոդվածներին, որոնք ամրագրում են իրավական նորմերի աստիճանակարգությունը և օրինականության սկզբունքը¹⁸:

Օրինակ, *Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ը քննադատել է Կիպրոսի «արտիստների վիզաների» ռեժիմը, որը թեև ձևականորեն օրինական էր, սակայն իր բովանդակությամբ ստեղծում էր կախվածություն գործատուից և նպաստում էր մարդկանց թրաֆիքինգին¹⁹: Սա նշանակում է, որ պետության «երաշխավորելու» պարտականությունը ներառում է, օրինակ՝ միգրացիոն և աշխատանքային օրենսդրության այնպիսի կարգավորումներ, որոնք չեն ստեղծի մարդկանց թրաֆիքինգի համար նպաստավոր պայմաններ: Եթե օրենքը թույլ է տալիս անձին դնել խոցելի վիճակում, ապա պետությունը ձախողել է իր մարդու իրավունքները երաշխավորելու սահմանադրական պարտականությունը:

Այս մոտեցումը համահունչ է նաև ԵԽ կոնվենցիայի ոգուն, որը ՄԻԵԴ կողմից մեկնաբանվում է որպես պետության վրա դրված համապարփակ պոզիտիվ պարտավորությունների համակարգ: *Ս.Մ. ընդդեմ Խորվաթիայի* գործում դատարանը հատուկ ընդգծել է, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարը չի կարող սահմանափակվել միայն քրեական հետապնդմամբ, այլ պահանջում է ներառական և համակարգային մոտեցում, որը ենթադրում է կանխարգելումը, մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց վաղ հայտնաբերումը, պաշտպանության մեխանիզմները, իրավասու մարմինների ու քաղաքացիական հասարակության միջև արդյունավետ համագործակցությունը և արդյունավետ քննությունը: ՄԻԵԴ-ը շեշտում է, որ պետությունները պարտավոր են ստեղծել այնպիսի իրավական և գործնական համակարգ, որը կկարողանա արձագանքել մարդկանց թրաֆիքինգի ամբողջ շղթային՝ ռիս-

¹⁶ Ջեյսոն Հեյնս, «Մարդկանց թրաֆիքինգը, ինտերսեկցիոնալությունը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 4-րդ և 14-րդ հոդվածների փոխհարաբերությունը» (Jason Haynes, “Human trafficking, intersectionality and the relationship between Articles 4 and 14 of the ECHR”), Northern Ireland Legal Quarterly, հատոր 76, թիվ 4, 2025 թ., էջեր 833–843, <https://nilq.qub.ac.uk/index.php/nilq/article/view/1279/1037>:

¹⁷ Ռոզա Փատի, Պետությունների պոզիտիվ պարտավորությունները մարդկանց թրաֆիքինգի առնչությամբ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նոր փուլ է բացում «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործում (States’ Positive Obligations with Respect to Human Trafficking: The European Court of Human Rights Breaks New Ground in Rantsev v. Cyprus & Russia), St. Thomas University College of Law, https://scholarship.stu.edu/faculty_articles/147/:

¹⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 5 և 6, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>:

¹⁹ «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործ, թիվ 25965/04 գանգատ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 289–293, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>:

կերի նվազեցումից մինչև զոհերի վերականգնում²⁰: Ուստի, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը մարդու իրավունքների պաշտպանության շարունակական գործընթաց է, այլ ոչ՝ միայն քրեաիրավական արձագանք:

Պետության պոզիտիվ պարտավորությունների համակարգում «ապահովելու» («to ensure») պարտականությունը հանդիսանում է ամենագործնական և, միևնույն ժամանակ, ամենավճռորոշ օղակը: Եթե «երաշխավորելը» վերաբերում է օրենսդրական դաշտի ստեղծմանը, ապա «ապահովելը» պահանջում է այդ օրենքների արդյունավետ կենսագործումը կոնկրետ իրավիճակներում: Այս պարտավորությունը պետական մարմիններից պահանջում է դուրս գալ պասիվ դիտորդի կարգավիճակից և նախաձեռնողական («proactive») եղանակով իրականացնել կանխարգելիչ ու օպերատիվ միջոցառումներ՝ պաշտպանելու անձին թրաֆիքինգի ենթարկվելու վտանգից:

ՄԻԵԴ-ը, զարգացնելով *Օսմանն ընդդեմ ՄԹ-ի* գործով սահմանված սկզբունքները²¹ և *Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով դրանք կիրառելով մարդկանց թրաֆիքինգի համատեքստում, ձևավորել է հստակ իրավական չափանիշ²²: Պետությունը պարտավոր է ձեռնարկել օպերատիվ միջոցառումներ, եթե առկա են հետևյալ երկու պայմանները.

1. Պետական մարմինները տեղյակ էին կամ պարտավոր էին տեղյակ լինել («knew or ought to have known»), որ կոնկրետ անձը գտնվում է թրաֆիքինգի կամ շահագործման իրական և անմիջական վտանգի ներքո:

2. Պետությունը չի ձեռնարկել իր լիազորությունների շրջանակում ողջամտորեն հասանելի միջոցները՝ այդ վտանգը չեզոքացնելու համար²³:

Այս չափանիշի առանցքային տարրը «պարտավոր էին տեղյակ լինել» ձևակերպումն է: Սա նշանակում է, որ պետությունը չի կարող արդարանալ տեղեկության փաստացի բացակայությամբ, այդ թվում՝ անձի կողմից իրավասու մարմիններին չդիմելով, եթե առկա են եղել այնպիսի օբյեկտիվ և կանխատեսելի հանգամանքներ, որոնք ողջամտորեն պետք է գրավեին իրավասու մարմինների ուշադրությունը: Այլ կերպ ասած՝ խոսքը ոչ միայն իրական գիտելիքի, այլ նաև կառուցողական գիտելիքի մասին է. պետությունը պատասխանատվություն է կրում նաև այն դեպքերում, երբ ռիսկը եղել է ճանաչելի և գնահատելի մասնագիտական չափանիշներով:

Ինչպես նշվում է գիտական գրականության մեջ, պարտավոր էին տեղյակ լինել («ought to have known») չափանիշը կառուցված է ռիսկի կառավարման տրամաբանության վրա. այն պարտադրում է պետական մարմիններին գործել կանխատեսելի վտանգների պայմաններում և գնահատել ոչ միայն կոնկրետ անհատի վիճակը, այլ նաև համակարգային ռիսկային գործոնները, ինչպիսիք են անձի խոցելի կարգավիճակը, միգրացիոն կամ աշխատանքային ռեժիմների կառուցվածքային թերությունները կամ շահագործման բարձր ռիսկ ունեցող

²⁰ «Ս.Մ. ընդդեմ Խորվաթիայի» գործ [ՄՊ], թիվ 60561/14 գանգատ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, վճիռ, 2020 թ. հունիսի 25, պարբ. 306, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-203503>:

²¹ «Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործ [ՄՊ], թիվ 23452/94 գանգատ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 1998 թ. հոկտեմբերի 28, պարբ. 116, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58257>:

²² «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործ, թիվ 25965/04 գանգատ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 284–289, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>:

²³ Ռոզա Փատի, Պետությունների պոզիտիվ պարտավորությունները մարդկանց թրաֆիքինգի առնչությամբ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նոր փուլ է բացում «Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի» գործում (States' Positive Obligations with Respect to Human Trafficking: The European Court of Human Rights Breaks New Ground in Rantsev v. Cyprus & Russia), St. Thomas University College of Law, https://scholarship.stu.edu/faculty_articles/147/:

ուլորտները: Այսպիսով, պետության պոզիտիվ պարտավորությունը ծագում է այն պահից, երբ վտանգը դառնում է ճանաչելի հանրային իշխանության համար՝ նույնիսկ այն դեպքում, երբ դեռ չկա հստակ անհատական ահազանգ: Այս մեկնաբանությունը վերափոխում է պետության դերը՝ արձագանքող սուբյեկտից դարձնելով կանխարգելիչ և ռիսկերի կառավարման պատասխանատու դերակատար²⁴:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում սա նշանակում է, որ պետությունը պարտավոր է արձագանքել ոչ միայն կոնկրետ ահազանգերին, այլ նաև այն կառուցվածքային ռիսկերին, որոնք կանխատեսելիորեն ստեղծում են շահագործման միջավայր: Իրավունքների ապահովման պարտականության կատարումը չի պայմանավորվում միայն զոհի կողմից ներկայացված բողոքի կամ դիմումի քննությամբ: Մարդկանց թրաֆիքինգի զոհերը հաճախ գտնվում են վախի, կախվածության կամ հոգեբանական ճնշման տակ և ի վիճակի չեն ինքնուրույն դիմել իրավապահներին: Հետևաբար, պետությունը կրում է նախաձեռնողական պարտավորություն («*ex officio*»)՝ ակտիվորեն բացահայտելու պոտենցիալ զոհերին: Եթե իրավասու մարմինները տեղյակ էին կամ պարտավոր էին տեղյակ լինել խոցելի խմբերի, ռիսկային միգրացիոն սխեմաների, սոցիալ-տնտեսական խոցելիությամբ պայմանավորված վտանգների կամ բարձր շահագործման վտանգ ունեցող ուլորտների մասին և չեն ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, ապա խոսքը վերաբերում է պետության պոզիտիվ պարտավորության խախտմանը:

Իրավունքների ապահովման պարտականությունը պետության պոզիտիվ պարտավորությունների համակարգում ստանում է նոր և ավելի ընդգրկուն բովանդակություն՝ հիմնվելով *Ս. Մ.-ն ընդդեմ Խորվաթիայի* գործով ՄԻԵԴ վճռի վրա: Ինչպես նշում են Տուրանյանինը և Ստանիսավլևիչը, այս գործը լրացնում է *Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի* և *Ռուսաստանի* նախադեպը՝ հաստատելով, որ պետությունը պարտավոր է գործնական քայլեր ձեռնարկել ոչ միայն անդրազգային թրաֆիքինգի, այլև ներպետական մակարդակում տեղի ունեցողի, տվյալ դեպքում՝ հարկադիր պոռնկության («forced prostitution») դեպքերում:

«Արժանահավատ կասկածի» («credible suspicion») չափանիշը, համաձայն Տուրանյանինի և Ստանիսավլևիչի վերլուծության՝ պետության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու պարտավորությունը ծագում է այն պահին, երբ իշխանությունները «տեղյակ էին կամ պարտավոր էին տեղյակ լինել» այն հանգամանքների մասին, որոնք ձևավորում են արժանահավատ կասկած, որ կոնկրետ անձը գտնվում է թրաֆիքինգի կամ շահագործման իրական և անմիջական վտանգի ներքո: Հեղինակները շեշտում են, որ պաշտպանության միջոցառումներ ձեռնարկելու պարտավորությունը գործի դնելու համար պարտադիր չէ ապացուցել, որ անձը արդեն իսկ գտնվում է ստրկության կամ հարկադիր աշխատանքի մեջ: Բավարար է ցույց տալ, որ առկա է եղել իրական ռիսկ, և պետությունը դրսևորել է անգործություն:

Հիմնվելով *Ս.Մ.-ն ընդդեմ Խորվաթիայի* գործով ՄԻԵԴ վճռի վերլուծության վրա՝ Տուրանյանինը և Ստանիսավլևիչը առանձնացնում են պետության գործնական պարտավորությունների հետևյալ շրջանակը՝ որպես «ապահովման» բաղադրիչ.

²⁴ Վլադիսլավա Սոնյանովա (Vladislava Stoyanova), *Fault, Knowledge and Risk within the Framework of Positive Obligations under the European Convention on Human Rights*, Leiden Journal of International Law (Cambridge University Press), 2020 թ.,

<https://www.cambridge.org/core/services/aop-cambridge-core/content/view/805829D63D36E84DF9A1F9764A81C32A/S0922156520000163a.pdf/fault-knowledge-and-risk-within-the-framework-of-positive-obligations-under-the-european-convention-on-human-rights.pdf>:

ա. Վերապատրաստում. Պետությունը պարտավոր է ապահովել իրավասու մարմինների պատշաճ վերապատրաստումը՝ մարդկանց թրաֆիքինգի և հարկադիր պռոստիտյուցիայի («forced prostitution») զոհերին նույնացնելու համար: Առանց այս գիտելիքների՝ «արժանահավատ կասկածը» կարող է չձևավորվել, ինչը կհանգեցնի պետության կողմից իր պոզիտիվ պարտավորության խախտման:

բ. Կանխարգելում. Պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ՝ ուղղված շահագործման պահանջարկի նվազեցմանը և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի իրավասու տարբեր մարմինների միջև համակարգման զարգացմանը:

գ. Պաշտպանություն մասնավոր անձանցից. Պետությունը պատասխանատու է նաև մասնավոր անձանց կողմից իրականացվող շահագործումը կանխելու համար: Եթե իշխանությունները ցուցաբերում են անգործություն՝ իմանալով վտանգի մասին, նրանք խախտում են ձախողում են իրենց պոզիտիվ պարտավորությունների իրականացումը²⁵:

Այս տրամաբանության շարունակությունը կանխարգելիչ և մշտադիտարկման մեխանիզմների ինստիտուցիոնալացումն է, քանի որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը չի կարող հիմնվել միայն արդեն կատարված խախտումների արձագանքի վրա²⁶: Պետության պոզիտիվ պարտավորությունների արդյունավետ իրականացումը ենթադրում է օրենսդրական մշտադիտարկում՝ գնահատելու, թե արդյոք գործող նորմերը չեն ստեղծում շահագործման կառուցվածքային ռիսկեր, իրավակիրառ պրակտիկայի շարունակական վերլուծություն՝ բացահայտելու համակարգային թերությունները, ինչպես նաև ռիսկերի վաղ հայտնաբերման մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս միջամտել նախքան շահագործման փաստը: Այս համակարգը պետք է լրացվի հանրային իրազեկման քաղաքականությամբ, քանի որ մարդկանց թրաֆիքինգը սնվում է տեղեկատվական վակուումից, սոցիալական խոցելիությունից և իրավագիտակցության պակասից: Ուստի կանխարգելումը, մշտադիտարկումը և հանրային կրթությունը կազմում են պետության սահմանադրական «վաղ արձագանքման համակարգը», որի նպատակը ոչ միայն հանցագործությունը բացահայտելն է, այլ շահագործման միջավայրի ձևավորումը կանխելը՝ նախքան մարդու արժանապատվության խախտումը տեղի կունենա:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդկանց թրաֆիքինգը չի կարող սահմանափակվել քրեաիրավական կատեգորիայով կամ սոցիալական քաղաքականության առանձին ուղղությամբ: Այն իր էությամբ հանդիսանում է մարդու արժանապատվության, ազատության և հիմնական իրավունքների համակարգային ժխտում և, հետևաբար, սահմանադրական կարգի հիմքերի դեմ ուղղված երևույթ: Մարդկանց թրաֆիքինգը ոչ միայն խախտում է առանձին իրավունքներ, այլ խաթարում է մարդու՝ որպես իրավունքի սուբյեկտի կարգավիճակը՝ նրան վերածելով վերահսկվող օբյեկտի:

²⁵ Վելյկո Տուրանյանին, Ելենա Ստանիսավլևիչ, Մարդկանց թրաֆիքինգը և հարկադիր մարմնավաճառությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի ներքո (Human trafficking and forced prostitution under Article 4 of the European Convention on Human Rights), German Law Journal, 2024, <https://www.cambridge.org/core/journals/german-law-journal/article/human-trafficking-and-forced-prostitution-under-article-4-of-the-european-convention-on-human-rights/16D7C97D7BAB445341E135F690CF7602>:

²⁶ Սերգեյ Ղազինյան, «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային մշտադիտարկման մեխանիզմներ. համակարգի ամրապնդում» (Sergey Ghazinyan, National Monitoring Mechanisms: Strengthening the Action against Trafficking in Human Beings), State and Law / Պետություն և իրավունք, 2023 թ., թիվ 97, էջ 176, <https://doi.org/10.46991/SL/2023.97.176>:

Սույն աշխատանքի շրջանակում առաջ քաշված նոր մեկնաբանությունն այն է, որ մարդկանց թրաֆիքինգը պետք է ընկալվի որպես սահմանադրական պետության արդյունավետության թեստ: Եթե սահմանադրական պետության հիմնական նպատակը մարդու արժանապատվության և իրավունքների իրական պաշտպանությունն է, ապա մարդկանց թրաֆիքինգի առկայությունը ցույց է տալիս, թե որքանով է պետությունը կարողանում գործնականում իրականացնել իր սահմանադրական պարտավորությունը: Այն բացահայտում է ոչ միայն իրավապահ համակարգի թերությունները, այլ նաև սոցիալական, միգրացիոն, աշխատանքային և ինստիտուցիոնալ քաղաքականությունների կառուցվածքային խոցելիությունները: Այսպիսով, մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է այն կետը, որտեղ տեսանելի են դառնում սահմանադրական պետության ուժեղ և թույլ կողմերը:

Պետության պոզիտիվ պարտավորությունների եռամիասնությունը՝ երաշխավորել, ապահովել և պաշտպանել իրավունքները, թրաֆիքինգի համատեքստում ստանում է առանձնահատուկ խորություն: Այստեղ խոսքը միայն հանցագործությանը արձագանքելու մասին չէ: Խոսքը վերաբերում է ռիսկերի կանխատեսմանը, խոցելի խմբերի ակտիվ պաշտպանությանը, կառուցվածքային անհավասարությունների նվազեցմանը և զոհերի իրական վերականգնմանը: Այլ կերպ ասած՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը վերածվում է սահմանադրական կառավարման որակի չափանիշի:

Այս մեկնաբանությունից բխում է ևս մեկ կարևոր հետևություն. մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է դիտարկել որպես սահմանադրական պարտականություն շարունակական բնույթով, այլ ոչ որպես առանձին ծրագրային կամ քաղաքական նախաձեռնություն: Այն պահանջում է պետությունից մշտական ինստիտուցիոնալ մոտեցում: Ամեն դեպք, երբ մարդը դառնում է շահագործման զոհ, վկայում է ոչ միայն անհատական խնդրի, այլ նաև սահմանադրական համակարգի խափանման մասին:

Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարն արտահայտում է այն հիմնական հարցը, որի շուրջ կառուցված է սահմանադրական կարգը՝ արդյո՞ք մարդը իրականում, գործնականում հանդիսանում է բարձրագույն արժեք: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը, այս իմաստով, սահմանադրական իրավունքի տեսանկյունից վերածվում է մարդու արժանապատվության պաշտպանության գործնական փորձության:

Ամփոփագիր: Հոդվածը ներկայացնում է մարդկանց թրաֆիքինգի սահմանադրաիրավական ընկալումը՝ այն դիտարկելով որպես մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների համակարգային խախտում և միաժամանակ՝ սահմանադրական կարգի արժեքային հիմքերին ուղղված սպառնալիք: Թրաֆիքինգը վերլուծվում է ոչ թե բացառապես քրեաիրավական կատեգորիաներով, այլ մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության տրամաբանությամբ՝ ընդգծելով, որ շահագործումը խաթարում է անձի իրավական սուբյեկտայնությունը՝ մարդուն վերածելով վերահսկման և սեփականության օբյեկտի: Հոդվածի առանցքում է այն թեզը, որ սահմանադրական մակարդակում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համակարգը ձևավորվում է մարդու արժանապատվության անխախտելիությունից, իրավունքի գերակայությունից և մի շարք բացարձակ կամ ուժեղ երաշխիքների փոխկապակցվածությունից (անձնական ազատություն, խոշտանգման և հարկադիր աշխատանքի արգելք, խտրականության բացառման պահանջ, արդյունավետ դատական պաշտպանության իրավունք):

Հոդվածը զարգացնում է պետության պոզիտիվ պարտավորությունների եռամաս կառուցվածքի («երաշխավորել», «ապահովել», «պաշտպանել») սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ցույց տալով, որ մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը, վաղ նույնացումը, զոհերի պաշտպանությունն ու վերականգնու-

մը, ինչպես նաև արդյունավետ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունը կազմում են շարունակական պարտավորությունների միասնական համակարգ:

Միաժամանակ ընդգծվում է միջազգային և սահմանադրական իրավունքի փոխազդեցությունը՝ հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայով սահմանված չափանիշների ազդեցությունը ազգային իրավական մեկնաբանության վրա: Արդյունքում առաջ է քաշվում մոտեցում, ըստ որի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը հանդես է գալիս որպես սահմանադրական կառավարման որակի չափանիշ՝ արտացոլելով պետության գործնական կարողությունը ճանաչելու և կառավարելու շահագործման ռիսկերը, նվազեցնելու խոցելիությունները և ապահովելու իրական ու արդյունավետ պաշտպանություն:

Annotation. The article presents a constitutional-law understanding of human trafficking, examining it as a systemic violation of human dignity and fundamental rights and, simultaneously, as a threat directed against the value foundations of the constitutional order. Trafficking is analysed not exclusively through criminal-law categories but within the logic of constitutional protection of human rights, emphasizing that exploitation undermines legal subjectivity by transforming a person into an object of control and ownership. The article advances the thesis that, at the constitutional level, the anti-trafficking framework is grounded in the inviolability of human dignity, the rule of law, and the interconnection of a number of absolute or reinforced guarantees (personal liberty, prohibition of torture and forced labour, non-discrimination, and the right to effective judicial protection).

The study develops the constitutional dimension of the State's tripartite structure of positive obligations — to guarantee, to ensure, and to protect — demonstrating that prevention of trafficking, early identification, protection and rehabilitation of victims, as well as effective investigation and inevitability of accountability constitute a unified system of continuous obligations. The article further highlights the interaction between international and constitutional law, particularly the influence of the case-law of the European Court of Human Rights and the standards established by the Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings on national legal interpretation. It ultimately proposes an approach according to which the fight against trafficking functions as a benchmark of constitutional governance, reflecting the State's practical capacity to recognise and manage exploitation risks, reduce vulnerabilities, and secure real and effective protection.

Аннотация. В статье раскрывается конституционно-правовое понимание торговли людьми как системного нарушения человеческого достоинства и основных прав человека, а также как угрозы ценностным основаниям конституционного строя. Торговля людьми анализируется не исключительно в рамках уголовно-правовой доктрины, а в логике конституционной защиты прав и свобод, при которой эксплуатация рассматривается как процесс разрушения правовой субъектности личности, приводящий к превращению человека в объект контроля и фактической собственности.

В центре исследования находится тезис о том, что на конституционном уровне система противодействия торговле людьми основывается на принципе неприкосновенности человеческого достоинства, верховенстве права и взаимосвязанности ряда абсолютных либо усиленных гарантий, включая личную свободу, запрет пыток и принудительного труда, принцип недискриминации и право на эффективную судебную защиту.

В статье раскрывается конституционное содержание триединой структуры позитивных обязательств государства — гарантировать, обеспечивать и защищать, — показывая, что предотвращение торговли людьми, её раннее выявление, защита и реабилитация жертв, а также эффективное расследование и неотвратимость ответственности образуют единую систему непрерывных и взаимодополняющих обязательств. Одновременно подчёркивается взаимодействие международного и конституционного права, в частности влияние практики Европейского суда по правам человека и стандартов Конвенции Совета Европы о борьбе с торговлей людьми на национальное правовое толкование.

В результате предлагается концептуальный подход, в рамках которого противодействие торговле людьми рассматривается как критерий качества конституционного управления, отражающий практическую

способность государства выявлять и управлять рисками эксплуатации, снижать социальную уязвимость и обеспечивать реальную и эффективную защиту прав человека.

Բանալի բառեր - մարդու իրավունքներ, մարդկանց թրաֆիքինգ, սահմանադրաիրավական բնույթ, մարդու արժանապատվություն, իրավունքի գերակայություն, պետության պոզիտիվ պարտավորություններ, խոցելիություն, շահագործման ռիսկ, արդյունավետ քննություն, արդյունավետ դատական պաշտպանություն, հարկադիր աշխատանք, խտրականության արգելք, սահմանադրական պետություն:

Keywords: human rights, human trafficking, constitutional nature, human dignity, rule of law, positive obligations of the State, vulnerability, exploitation risk, effective investigation, effective judicial protection, forced labour, non-discrimination, constitutional state.

Ключевые слова: права человека, торговля людьми, конституционно-правовая природа, человеческое достоинство, верховенство права, позитивные обязательства государства, уязвимость, риск эксплуатации, эффективное расследование, эффективная судебная защита, принудительный труд, недискриминация, конституционное государство.

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, <https://www.arlis.am/hy/acts/143723/latest>
2. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948, <https://www.un.org/sites/un2.un.org/files/2021/03/udhr.pdf>
3. Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա (CETS No. 197), 2005 <https://rm.coe.int/168008371d>
4. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական գեկույց», <https://rm.coe.int/16800d3812>
5. Office of the United Nations High Commissioner for Human Rights, *Recommended Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking*, 2002, <https://www.ohchr.org/en/publications/recommended-principles-and-guidelines-human-rights-and-human-trafficking>
6. UNODC, *Global Report on Trafficking in Persons 2022*, <https://www.unodc.org/unodc/data-and-analysis/glotip.html>
7. GRETA, *14th General Report on Activities*, Council of Europe, 2024, <https://rm.coe.int/14th-general-report-of-greta-prems-067125-gbr-2578-14th-general-report/1680b638e3>
8. *Rantsev v. Cyprus and Russia*, ECtHR, 2010, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>
9. *S.M. v. Croatia* [GC], ECtHR, 2020, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-203503>
10. *Osman v. the United Kingdom* [GC], ECtHR, 1998, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58257>
11. *F.M. and Others v. Russia*, ECtHR, 2024, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-238319>
12. Stephen P. Marks, *Human Rights: A Brief Introduction*, Harvard University, 2016, <https://content.sph.harvard.edu/wwwhsph/sites/134/2016/07/Human-Rights-A-brief-intro-2016.pdf>
13. Jack Donnelly, *Universal Human Rights in Theory and Practice*, 3rd ed., Cornell University Press, 2013 <https://dokumen.pub/universal-human-rights-in-theory-and-practice-third-edition-9780801467493.html>
14. Julia Planitzer & Helmut Sax (eds.), *Commentary on the Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings*, Edward Elgar, 2020, <https://library.oapen.org/handle/20.500.12657/51308>
15. Roza Pati, *States' Positive Obligations with Respect to Human Trafficking*, https://scholarship.stu.edu/faculty_articles/147
16. Vladislava Stoyanova, *Fault, Knowledge and Risk within the Framework of Positive Obligations under the*



European Convention on Human Rights, Leiden Journal of International Law, 2020, <https://www.cambridge.org/core/services/aop-cambridge-core/content/view/805829D63D36E84DF9A1F9764A81C32A>

17. Veljko Turanjanin & Jelena Stanisavljević, *Human trafficking and forced prostitution under Article 4 of the European Convention on Human Rights*, German Law Journal, 2024, <https://www.cambridge.org/core/journals/german-law-journal/article/human-trafficking-and-forced-prostitution-under-article-4-of-the-european-convention-on-human-rights/16D7C97D7BAB445341E135F690CF7602>

18. Jason Haynes, *Human trafficking, intersectionality and the relationship between Articles 4 and 14 of the ECHR*, Northern Ireland Legal Quarterly, 2025, <https://nilq.qub.ac.uk/index.php/nilq/article/view/1279/1037>

19. Սերգեյ Ղազինյան, «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային մշտադիտարկման մեխանիզմները. համակարգի ամրապնդում», *Պետություն և իրավունք*, 2023, <https://doi.org/10.46991/SL/2023.97.176>

Ղազինյան Ս. - ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) դասախոս, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, էլիասցե՝ sergey.ghazinyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 18.02.2026 թ., տրվել է գրախոսության 18.02.2026 թ., երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ա. Ասատրյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-73>

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների թեկնածու,
Երևանի «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության և
միջազգային հարաբերությունների ինստիտուտի դասախոս,
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական*

ANNA HAKOBYAN

*Candidate of legal sciences, Lecturer at the Institute of Law and
International Relations of Yerevan «Haybusak» University,
Assistant to Judge in the Civil Court of Appeal of the RA*

АННА АКОБЯН

*Кандидат юридических наук, преподаватель Института права и
международных отношений Ереванского университета «Айбусак»,
помощник судьи в Гражданском апелляционном суде РА
<https://orcid.org/0009-0000-1760-8213>*

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ
ԶՍՊՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

**THE MECHANISMS FOR RESTRAINING RISKS IN THE PUBLIC
PROCUREMENT PROCESS**

**МЕХАНИЗМЫ СДЕРЖИВАНИЯ РИСКОВ В ПРОЦЕССЕ
ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК**

Ներածություն

Տնտեսության ժամանակակից զարգացման պայմաններում իրենց արդիականությամբ աչքի են ընկնում պետական կարիքների համար գնումները: Դրանց միջոցով բավարարվում են պետության կարիքները. անհրաժեշտորեն ձեռք են բերվում ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ: Այդ ամենը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչը ենթադրում է որոշակի ռիսկեր, այնքանով, որքանով նշված ամբողջ գործընթացն իրականացվում է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից, ովքեր չունեն անձնական շահագրգռվածություն պետական կարիքների բավարարման հարցում:

Միայն 2019 թվականի ընթացքում ողջ աշխարհում պետական գնումների միջինացված

ծախսը կազմել է 11 տրիլիոն ԱՄՆ դոլար, ինչը համաշխարհային համախառն ներքին արդյունքի 12 տոկոսն է: Զարգացած երկրներում այդ ցուցանիշն էլ ավելի բարձր է: Պետական գնումներն այն հիմնական գործիքակազմն են, որոնց գործարկմամբ պետական միջոցները փոխանցվում են մասնավոր կողմին և այդպիսով խոցելի դառնում հնարավոր չարաշահումների պատճառով: Մասնավոր կողմը (կատարողը) ունի պետական պաշտոնյաներին շահագրգռելու լուրջ դրդապատճառներ, օրինակ՝ ստացվելիք վճարները մեծացնելու, մրցակիցներին գործընթացից դուրս մղելու կամ ցածր որակով կատարվածն ընդունելու համար¹: Դա պայմանավորված է մասնավոր կողմի տնտեսական կայունությունն ապահովելու և տնտեսական շրջանառությունն ավելացնելու բնական հակվածությամբ: Ընդ որում, նման վարքագիծը բնորոշ է այն մասնակիցներին, որոնք վստահ չեն սեփական հնարավորություններին և ուժերին:

Պետական գնումների գործընթացը տուժում է մրցույթների կեղծումից, կատարվող գերաժախսերից, քաղաքական կապեր ունեցող մասնակիցների նկատմամբ հնարավոր նախապատվությունից, թափանցիկության պակասից, քաղաքական գործիչների և գնումներին մասնակցող ընկերությունների միջև գաղտնի համաձայնություններից և պարզապես վատ ընտրություններից²:

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես լիազորված մարմնի գնումների համակարգի պաշտոնական կայքէջում հրապարակված տարեկան հաշվետվությունների տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում կազմակերպվել են թվով 167518 ընթացակարգեր (հաշվետվության մեջ չի ներառվել պետական գաղտնիք պարունակող գնումների մասին տեղեկատվությունը), և կայացած ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի գները կազմել են ընդհանուր 343.598,7 մլն ՀՀ դրամ: Ըստ պաշտոնական հաշվետվության՝ 2022 թվականի ընթացքում կազմակերպվել են թվով 124019 գնման ընթացակարգեր (առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասին տեղեկատվության), և կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 390.592,7 մլն ՀՀ դրամ: Հաջորդ տարի գնային արժեքի թիվն ավելի է մեծացել. 2023 թվականի ընթացքում կազմակերպվել են թվով 125539 ընթացակարգեր (հաշվետվությունը չի պարունակել պետական գաղտնիք պարունակող գնումների մասին տեղեկատվությունը), և կայացած ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 439.060,4 մլն ՀՀ դրամ (այսինքն՝ 439.060.400.000 ՀՀ դրամ)³: 01.01.2024 թվականի դրությամբ գործող փոխարժեքով կատարված հաշվարկով 439.060,4 մլն ՀՀ դրամը համարժեք է եղել 1.084.662.170,5 ԱՄՆ դոլարի⁴: Այսինքն՝ 2023 թվականի ժամանակահատվածի համար պետությունը նշված չափով ներդրում է կատարել պետական գնումներով, և այդ թիվը չի ներառել գաղտնի գործերով գնումների արժեքները, որոնք գործնականում բավականին մեծ ծավալ են կազմում, ինչը նշանակում է, որ այդ թիվն իրականում զգալիորեն ավելի մեծ է: 08.12.2022 թվականին

¹ Մանրամասն տե՛ս. Erica Bosio, Simeon Djankov, Edward Glaeser, and Andrei Shleifer, Public Procurement in Law and Practice, American Economic Review journal, 2022, 112(4): 1091–1117 <https://doi.org/10.1257/aer.20200738>

² Կրկին տե՛ս. Erica Bosio, Simeon Djankov, Edward Glaeser, and Andrei Shleifer, Public Procurement in Law and Practice, American Economic Review journal, 2022, 112(4): 1091–1117 <https://doi.org/10.1257/aer.20200738>

³ Առավել մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ. <https://gnumner.minfin.am/hy/page/hashvetvutyunner/>

⁴ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում առկա տեղեկությունների համաձայն՝ 01.01.2024 թվականի դրությամբ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է 404,79 ՀՀ դրամ, $439.060.400.000 : 404,79 = 1.084.662.170,5$ ԱՄՆ դոլար:

ընդունված «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով 2023 թվականի ՀՀ պետական բյուջեն ծախսերի գծով հաստատվել է 2.590.973.151.100 ՀՀ դրամի չափով, իսկ եկամուտների գծով՝ 2.302.025.614.400 ՀՀ դրամի չափով: Շարադրվածից հետևում է, որ 2023 թվականի համար պետության կողմից հաստատված ծախսերի շուրջ 17 տոկոսը կազմել է պետության կողմից փաստացի կատարված գնումների արժեքը, չհաշված գաղտնի գործերով ծախսերը: Այսինքն՝ պետությունն առնվազն այդչափ մասնակցություն է ապահովել տնտեսությունում ապրանքաշրջանառությանը, ինչով ընդգծվում է գնումների ոլորտի ակնհայտ արդիականությունը:

Պետությունն իր օրենսդրությամբ կարգավորել է⁵ պետական գնումների հետ կապված հարաբերությունները⁶, որպես սկզբունք ամրագրելով միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթացի կազմակերպումը: Ընդ որում, նշված սկզբունքների կիրառմամբ ապահովվում է գնումների օրենսդրությամբ առաջադրված հիմնական նպատակին հասնելու հնարավորությունը, մասնավորապես՝ հանրային միջոցների հաշվին պետական կարիքը լավագույն գնային առաջարկով բավարարելը: Սակայն, նման գերնպատակներից իրականում կարող են շեղումներ լինել և անհարկի վատնվել բյուջետային միջոցները: Այստեղ է, որ խնդիր է առաջանում մանրամասն կանոնակարգել պետական գնման ոլորտը, որպեսզի հնարավորինս սահմանափակվեն պաշտոնյաների հայեցողական լիազորությունները և բացառվեն մասնակիցների հակաիրավական գործողությունները, ինչի արդյունքում պետական կարիքների համար գնման գործընթացներով ապահովվի համապատասխան որակով գնման առարկայի համար ներկայացված մրցակցային նվազագույն գնային առաջարկն ընտրելու սկզբունքը, որպես օրենսդրական վերջնականատակ:

Հիմնական հետազոտություն

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է, որ գնումների հետ կապված հարաբերությունները վարչական չեն և կարգավորվում են ՀՀ քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Չնայած նշվածին, գնումների հետ կապված հարաբերություններում գնում կատարող կողմը՝ պատվիրատուն, օժտված է որոշակի պատվիրակված լիազորություններով, ինչը բնորոշ է քաղաքացիական հարաբերություններին: Օրինակ, գնումների օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում հայտի, պայմանագրի, որակավորման ապահովման միջոցները գանձվում են մասնակցից, իսկ եթե այդպիսիք մասնակիցների կողմից կամովին չեն վճարվել, ապա պատվիր-

⁵ Պետական գնումների կարգավորման հիմքում ընկած քաղաքականության, նման գործերով դատական վեճերի առանձնահատկությունների և պետական գնումների տարբեր ոլորտներին դատարանի մոտեցման վերաբերյալ առավել մանրամասն տես. Christopher Bovis, *The Law of EU Public Procurement*, second edition, Oxford University Press, 2015, 928 pages:

Բացի այդ, նորարարության տեսանկյունից պետական գնումների գործիքակազմերի վերաբերյալ առավել մանրամասն տես հետևյալ գիտական հոդվածը. Mehmet A. Demircioglu, Roberto Vivona, *Positioning public procurement as a procedural tool for innovation: an empirical study*, Oxford Academic, Oxford University Press, Policy and Society, Volume 40, Issue 3, September 2021, pages 379–396:

⁶ Ներպետական օրենսդրությունում պետական գնումների հետ կապված հարաբերություններն իրենց հիմնական կարգավորումն են ստացել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման իրավական դրույթների ներքո:

րատուն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի կանոններով, կայացնում է պատճառաբանված որոշում, որը հիմք ընդունելով լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ինչպես նաև պահանջներ է ներկայացնում բանկային երաշխիքի մասով (եթե գործով կան բանկային երաշխիքներ): Այսինքն՝ գնումներով պետական կողմն իր գործառույթների իրականացման ընթացքում օժտված է գնման գործընթացի մասնակիցների նկատմամբ որոշակի պատասխանատվության միջոցներ (սանկցիաներ) կիրառելու լիազորությամբ: Ընդ որում, ապահովման գումարի բացակայության պատճառով դրա գանձման անհնարինության պարագայում մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում (սև ցուցակ) ներառվում է երկու տարի տևողությամբ, և այդ արգելքը տարածվում է ոչ միայն տվյալ գնման գործընթացի, այլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի իմաստով պետության կողմից կազմակերպվող ցանկացած գնման գործընթացի նկատմամբ: Ստացվում է, որ որևէ պետական կամ համայնքային հիմնարկ, որպիսին կարող է լինել, օրինակ, դպրոցը, մանկապարտեզը և այլն, իրավասու է տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառել պատասխանատվության այնպիսի միջոց, որի արդյունքում ոչ միայն տնտեսվարող սուբյեկտը, այլ նաև նրա հետ փոխկապակցված բոլոր անձինք զրկվեն մասնակցի կողմից ցուցակում ընդգրկված լինելու ողջ ժամանակահատվածում պետական գնման գործընթացին մասնակցելու իրավունքից:

Այն հանգամանքը, որ պետական գնումների հարաբերությունները քաղաքացիական բնույթ ունեն, կասկածի տակ չի դրվում, դա միանշանակ է: Հարցը պետք է դիտարկել այն տեսանկյունից, թե որքանով են համաչափ այս պրոցեսում պետական կողմին տրված լիազորությունները:

Պետական կողմն իրավասու է գնման գործընթացում օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում ներազդել մյուս կողմի վրա, մասնավորապես՝ հարկադրական եղանակով մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում: Այսինքն՝ այսպես կոչված «սև ցուցակում» ընդգրկվելը, որպես պատասխանատվության միջոց, երկու տարի ժամկետով բացառում է բոլոր պետական գնումներին մասնակցելու կողմի իրավունքը: Ընդ որում, մասնակցության նշված արգելքը տարածվում է նաև բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով համարվում են տվյալ մասնակցի հետ փոխկապակցված: Նշվածից հետևում է, որ «պատասխանատվությունը» ըստ էության դուրս է գալիս կոնկրետ գնման գործընթացում պետական կողմ-մասնակցող կողմ փոխհարաբերությունների սահմաններից և տարածվում ավելի լայն շրջանակի անձանց նկատմամբ, որոնք որևէ պարտավորություն չեն ստանձնել տվյալ գնման գործընթացում և դրան մասնակցություն չեն ունեցել: Հաշվի առնելով քաղաքացիական հարաբերություններում գույքային պատասխանատվության ինքնուրույնությունը, պետական գնումներով մասնակիցների ձեռնարկատեր հանդիսանալու և ըստ այդմ շահույթ ստանալու նպատակ հետապնդելու փաստը, նման պատասխանատվության միջոցի կիրառումը համաչափության տեսանկյունից խնդրահարույց է, քանի որ թեև մասնակցի և փոխկապակցված անձանց միջև առկա է որոշակի կապ, այդ կապն իրավական առումով չպետք է նման լրջագույն իրավական հետևանքների բերի: Դա կարող է ընդհուպ փոխկապակցված անձի գործունեությունը կաթվածահար անել, եթե դրա բնույթը կապված լինի այնպիսի բիզնես ոլորտի հետ, որի շահառուն առավելապես պետությունն է, ինչպիսին է, օրինակ, ճանապարհաշինարարությունը: Ամեն դեպքում,

նման պատասխանատվությունը լուրջ ռիսկեր է պարունակում մասնավոր կազմակերպության սնանկության հասցնելու, ազատ (կամ կատարյալ) մրցակցության սահմանափակման տեսանկյունից և ոչ միայն: «Սև ցուցակում» մասնակցին ընդգրկելու փաստը կարող է ընկալվել քրեական իրավունքում հայտնի «կանխարգելիչ» ներգործության համատեքստում, փոխկապակցված անձանց ցուցադրելով այն անբարենպաստ վիճակը, որին նրանք կարող են հասնել, եթե գործեն գնումների օրենսդրության իմաստով ոչ պատշաճ: Այս տեսանկյունից այդպիսի պատասխանատվությունը չի կարող համաչափ համարվել, ուստի կարող է վերացվել կամ առնվազն մեղմացվել, օրինակ՝ փոխկապակցված անձանց մասով սահմանել «սև ցուցակում» գտնվելու ավելի կարճ ժամկետ՝ մասնակցի հետ համեմատությամբ:

Ավելին, անբարենպաստ վիճակից վերականգնվելու և տնտեսական մրցակցության մեջ մնալու նկատառումներից ելնելով «սև ցուցակում» ընդգրկված մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի օգտին կարող է նպատակահարմար լինել գնումների օրենսդրությամբ այնպիսի կարգավորման ներդրումը, ըստ որի՝ որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝ մեկ տարի «սև ցուցակում» գտնվելու փաստն իրավունք տա վերջիններիս ֆիքսված չափի տուգանք վճարելով դուրս գալ նշված ցուցակից՝ մինչև երկամյա ժամկետի լրանալը: Շարադրվածի հիմքում դրված է այն միտքը, որ պետական գնումների հիմնանպատակը մասնակիցներին պատժելը չէ, այլ պետական կարիքի բավարարում ստանալն է:

Պետական գնումները հանրային միջոցների հաշվին կատարելը հանգեցրել է նրան, որ այդ հարաբերությունները սկսել են դիտարկվել որպես բյուջետային իրավունքի ինստիտուտ, և գնումների իրավակարգավորումներն առաջ են քաշել բյուջետային միջոցներն արդյունավետ և նպատակային ծախսելու հիմնահարցերը⁷: Պետության կարիքները բյուջեի միջոցների հաշվին պետք է բավարարվեն նվազագույն գնով:

Առաջին հայացքից պետական կարիքների համար կնքվող պայմանագրերն առանձնապես խոշոր մասաների ռիսկեր, որպես այդպիսին, չեն պարունակում: Խնդիրը կայանում է նրանում, որ պարտավորությունների չկատարման դեպքում կարող են առաջանալ բարդ հանգուցալուծվող իրավիճակներ, ինչպես պետության, այնպես էլ մասնավոր կողմի համար: Օրինակ, պետության համար դրանք կարող են լինել վերստին գնման գործընթաց հայտարարելը, նոր հաղթող մասնակից ընտրելը, նրա հետ պայմանագիր կնքելը (այսինքն՝ այս տեսանկյունից ռեսուրսներ ու ժամանակ վատնելը) և այլն, իսկ մասնակցի համար դրանք կարող են լինել գործունեության սահմանափակումը, ֆինանսական միջոցների կորուստը (տույժերի, ապահովման գումարների վճարում և այլն), գնման գործընթացի հետ կապված գործողությունների (անգործության) կամ որոշումների բողոքարկումը և այլն: Ուստի դեռևս պայմանագրի կնքման փուլից սկսած, երբ կողմերի միջև ձևավորվում են գնման պայմանագրային հարաբերություններ, պահանջատիրոջը հետաքրքրող առաջնային կարևորության հարցը, որպես կանոն, այն է, թե արդյո՞ք պարտապանը կկատարի իր ստանձնած պարտավորությունները: Այստեղ առանցքային դեր են ստանձնում ապահովման միջոցները:

Ապահովման միջոցները⁸ մեզ հայտնի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սակայն պետական գնումների ոլորտը որդեգրել է տարբերվող՝ իրեն ներհատուկ ապահովման միջոցներ,

⁷ Տե՛ս. *Маркелов Кирилл Борисович*, Государственные и муниципальные закупки как институт бюджетного права, диссертация, М. 2012:

⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածը որպես պարտավորության կատարման ապահովման եղանակներ է սահմանում գրավը, տուժանքը, պարտապանի գույքի պահումը, երաշխավորությունը, երաշխիքը, նախավճարը և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակները:

ինչն արդարացված է՝ հաշվի առնելով գնումների գործընթացի առանձնահատկությունները: Գնումների ոլորտում, ընդհանուր առմամբ, կիրառելի են ապահովման չորս միջոցներ, դրանք են՝ հայտի, որակավորման, կանխավճարի և պայմանագրի կատարման ապահովումները⁹: Պետական գնումներով կիրառվող ապահովման միջոցներն ըստ էության ունեն միևնույն գործառնական նշանակությունը, ինչ քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարման ապահովման միջոցները: Դրանք ուղղված են ապահովելու ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը և բացառելու գնման գործընթացի խաթարումը¹⁰: Պայմանագրի ապահովումը տրամադրվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար, իսկ որակավորման ապահովումը՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար:

Եթե թույլ է տրվում պայմանագրի խախտում, ապա պատվիրատուն խախտման հիմքով միակողմանի լուծում է պայմանագիրը¹¹ և պահում պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները¹²: Այսինքն՝ ապահովումները վճարվում են: Պահանջի բավարարում ստանալու համար պատվիրատուի կողմից ձեռնարկվող հաջորդ քայլը նույն գնման առարկան այլ անձից ձեռք բերելն է, ինչը կարող է տեղի ունենալ ավելի բարձր գնի վճարմամբ:

Գործնականում պատվիրատուն, որն արդեն իսկ նախորդ գնման գործընթացի շրջանակներում մասնակցից ստացել է ապահովման միջոցները, վերջինից պահանջում է նաև իրեն վճարել կրած վնասը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 1-ին մասով¹³: Այդ իրավադրոյթն իրավական հնարավորություն է տրամադրում գնորդին պայմա-

⁹ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանել է օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնցից են նաև հետևյալ ապահովման միջոցները.

- հայտի ապահովում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց,
- պայմանագրի ապահովում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց,
- որակավորման ապահովում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում հրավերով սահմանվող որակավորման չափանիշներին փոխարինող ապահովման միջոց:

Թեև օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների շարքում տրված չէ «կանխավճարի ապահովում» եզրույթի բնորոշումը, սակայն օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է կանխավճարի ապահովման մասին իրավադրոյթ, որից հետևում է, որ գնումների գործընթացում կիրառվում է նաև կանխավճարի ապահովման միջոցը, այն դեպքերում, երբ պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսվել է կանխավճար հատկացնելու պայման:

¹⁰ Գնումների ապահովումների հասկացության շուրջ տես հետևյալ մեջբերումը. «КОМИССИЯ ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВУ МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛИ, Типовой закон ЮНСИТРАЛ о публичных закупках, Нью-Йорк, 2014, ГЛАВА I. ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ, Статья 17. Тендерное обеспечение: означает обеспечение, предоставление которого закупающая организация требует от поставщиков или подрядчиков и которое предоставляется закупающей организации в целях обеспечения исполнения любого обязательства, упомянутого в пункте 1 f) статьи 17 настоящего Закона, включая такие формы обеспечения, как банковские гарантии, поручительства, резервные аккредитивы, чеки, по которым первичное обязательство несет какой-либо банк, депозиты в наличных средствах, простые и переводные векселя. Во избежание сомнений, данный термин исключает любое обеспечение исполнения договора»:

Այսինքն՝ խոսքը պարտավորության կատարման պահովման մասին է:

¹¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ):

¹² Կանխավճարի ապահովմանն այստեղ անդրադարձ չի արվում, քանի որ այն տրամադրվում է, եթե դրա մասին առանձին պայման է նախատեսվում պայմանագրով:

¹³ Նշված հոդվածի համաձայն՝ եթե գնորդը վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով

նագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել ապրանքը՝ իր պահանջները բավարարելու համար, միաժամանակ իրավունք սահմանելով ավել վճարված գումարը պահանջել խախտում թույլ տված մատակարար-վաճառողից, որպես վնասի հատուցում: Ստացվում է, որ պատվիրատուն մասնակցի հաշվին գերշահույթ է ունենում. մի կողմից պատվիրատուն արդեն իսկ մասնակցից ստացել է ապահովման միջոցները՝ դրանցով ծածկելով իր հնարավոր վնասները, մյուս կողմից փաստացի պահանջում է իրական վնասի հատուցում: Մինչդեռ, պատվիրատուին առաջնահերթ հետաքրքրող հարցը պետական կարիքի բավարարումն է, այսինքն՝ պայմանագրի կատարումը, և այս պայմաններում ապահովումը կարող է նշանակել խախտման հետևանքները վերացնելուն ուղղված միջոց: Ապահովման միջոցը չի կարող վերածվել տուգանքի¹⁴ և որպես այդպիսին գանձվել մասնակցից, թեև գնումների մասին օրենսդրության իրավանորմերի կիրառմամբ փաստացի այդպիսի արդյունք է երևան եկել: Սակայն, դա ըստ էության անօրինական է և չի բխում գնումների ոլորտի որդեգրած սկզբունքներից: Եթե պայմանագիրն այլընտրանքային կարգով, թեկուզև այլ ճանապարհով, կատարվել է, և պատվիրատուն իր համար ցանկալի գնման առարկան ձեռք է բերել՝ որոշակի չափով ավել գումար վճարելու միջոցով, ապա ավել վճարված գումարը պատվիրատուն իրավունք ունի պահանջել պարտավորությունը խախտած պարտապանից, որպես վնաս¹⁵: Սակայն, հաշվի առնելով, որ պարտապան մասնակիցն արդեն իսկ ապահովման միջոցներ է տրամադրել, այդ վնասը, ինչպես նաև կետանցի համար հաշվարկվող տուժանքը, պետք է ծածկվեն հենց ապահովման միջոցների հաշվին (բացառությամբ եթե տուժանքի և վնասի ընդհանուր չափը գերազանցի ապահովման միջոցների ընդհանուր չափը), և ապահովման միջոցների մնացած մասը պետք է վերադարձվի մասնակցին: Պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, որպես միջինացված չափ, կոչված են ծածկելու հենց այլ անձից գնման առարկան ձեռք բերելու տարբերության գումարը և կետանցի համար հաշվարկված տույժերը: Ապահովման միջոցներն այդ նպատակային նշանակությամբ են թողնվում պատվիրատուի մոտ, այլ ոչ թե դրանք աննպատակ և հանիրավի (որպես հարստացման միջոց) գանձելու և դրանից հետո պատճառված վնասների և հաշվարկվող տույժերի վճարման առանձին պահանջ ներկայացնելու համար: Նման պատասխանատվության կիրառումը մասնակցի նկատմամբ որևէ պարագայում չի կարող համաչափ դիտարկվել: Ուստի շարադրվածի առումով կարող է նպատակահարմար լինել գնումների օրենսդրությամբ այնպիսի իրավակարգավորման ներմուծումը, որով մասնակցի կողմից վճարված ապահովման միջոցներով ծածկվեն պատվիրատուի կրած վնասները և հաշվարկվող տույժերը, ինչից հետո մնացած միջոցները վերադարձվեն դրանք ներկայացնողին:

պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն, ապա նա կարող է վաճառողին վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

¹⁴ Մատակարարման կանոններով տուժանք վճարելու պայմանը նախատեսված է ապրանքները ժամկետանց մատակարարելու համար, իսկ ապրանքը չմատակարարելու համար սահմանված է ապրանքները ձեռք բերելու այլընտրանքային լուծում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 1-ին մասով վնասի հատուցման պահանջի տեսքով:

¹⁵ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Նույն օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

Նման առաջարկի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ հաճախ հենց պատվիրատուն հետամուտ չի լինում պայմանագրի վերջնական կատարմանը և նախընտրում է պայմանագիրը միակողմանի լուծելու տարբերակը: Ստեղծվում է հակասական մի իրավիճակ, որտեղ պարտատերն ստացել է ապահովումը, սակայն իրաժարվել է պայմանագրի կատարում պահանջելու իրավունքից՝ պայմանագիրը լուծելու գործողության ուժով: Պայմանագրի լուծմամբ պայմանագրային պարտավորությունները դադարում են, հետևաբար եթե պարտատեր պատվիրատուն ընտրված մասնակցից վերցրել է ապահովումները, սակայն չի պահանջել պարտավորության կատարում, ապա ապահովման միջոցների վճարումը դառնում է անտրամաբանական և իմաստագուրկ:

Ընդ որում, ապահովված պայմանագիրը լուծելն ամենաարդյունավետ միջոցը չէ, քանի որ դրանով չի սպառվում ամենակարևոր խնդիրը, որի համար հայտարարվել է պետական գնումը: Խոսքը պետական կարիքի բավարարման մասին է: Թեև օրենսդրորեն նախատեսված է պայմանագիրը լուծելու իրավական հնարավորություն, սակայն դա մեծ հաշվով չի կարող ձեռնադրել լինել նաև պատվիրատուին: Բանն այն է, որ տնտեսվարող սուբյեկտները երկրի տնտեսության բաղկացուցիչ մասն են կազմում՝ հարկեր վճարելով, աշխատատեղեր ապահովելով և այլն, ինչը շահավետ է նաև պետությանը, ուստի այդ տեսակետից պետության շահը պետք չէ լիովին տարանջատված դիտարկել մասնավոր կողմի շահից: Ըստ այդմ էլ՝ պայմանագիրը միանգամից լուծելը պետության կողմից հեռատես քայլ չէ, տնտեսության զարգացման առումով: Հետևաբար, եթե գնման պայմանագիրն ապահովված է պայմանագրի և որակավորման ապահովման միջոցներով, ապա պետք է պահանջվի դրա կատարումը, այլ ոչ թե լուծվի պայմանագիրը, որի արդյունքում պետությունը չի կարող ստանալ ակնկալվող արդյունքը, սակայն փոխարենը կստանա տուգանային եկամուտներ: Այս տեսանկյունից, շահերի երկկողմանի հավասարակշռությամբ պայմանավորված, պատվիրատուի կողմից պայմանագրի լուծումը պետք է հանդիսանա ծայրահեղ կիրառվող միջոց:

Այսպիսով, գնումների հարաբերությունների առանձնահատկությունների ներքո գնումների գործընթացում պետության գործունեությունը պետք է այն աստիճան կանոնակարգված լինի, որպեսզի պետական միջոցներն արդյունավետ օգտագործվեն¹⁶, խիստ զգուշավոր կերպով, և բացառվեն անհարկի կորուստները¹⁷: Դրան զուգահեռ, պետությունը չպետք է իր իրավական մեխանիզմների գործադրմամբ մասնավոր կողմին հասցնի այն աստիճան վատ ֆինանսական դրության, որը կարող է ընդհուպ ճակատագրական դառնալ մասնակցի համար, նրա գոյության տեսանկյունից¹⁸: Հետևաբար, այս առումով կարող է օգտակար լինել նաև գնումների գործընթացի շրջանակներում վեճ քննող դատարանին վերապահել «մասնավոր որոշում» կայացնելու իրավասությամբ: Այդ երևույթն ամենևին խորթ չէ դրական իրավունքին

¹⁶ Գնման առարկայի ձեռքբերման գործընթացի արդյունավետության վերաբերյալ մանրամասն տես հետևյալ գիտական հոդվածը. Saeed Siyal, Chunlin Xin, Public Procurement, In: Farazmand, A. (eds) Global Encyclopedia of Public Administration, Public Policy, and Governance, October 2019, Springer, Cham. https://www.researchgate.net/publication/341250833_Public_Procurement
https://link.springer.com/rwe/10.1007/978-3-319-31816-5_344-1

¹⁷ Պետական գնումներով պետության առջև դրված նպատակներին հասնելու, գնման պայմանագրերն արդյունավետ օգտագործելու, կառավարելու, ինչպես նաև գնումների ռազմավարական ասպեկտների վերաբերյալ մանրամասն տես. Abby Semple, Practical guide to public procurement paper, Oxford University Press, March 2015, 308 pages:

¹⁸ Պետական գնումների գործընթացի վրա տեղի ունեցող ազդեցությունների վերաբերյալ մանրամասն տես հետևյալ գիտական հոդվածը. Oishee Kundu, Elvira Uyerra, Raquel Ortega-Argiles, Mayra M Tirado, Tasos Kitsos, Pei-Yu Yuan, Impacts of policy-driven public procurement: a methodological review, Oxford University Press, Science and Public Policy, Volume 52, Issue 1, February 2025, pages 50–64:

(գործող օրենսդրությանը): Օրինակ, այն կարելի է հանդիպել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածում¹⁹: Նման կարգավորման սահմանմամբ դատարանն իրավունք կունենա հնարավոր չարաշահումներ (պետական կամ մասնավոր կողմի թույլ տված) արձանագրելիս այդ մասին կայացնել մասնավոր որոշում, և այդ հարցի քննությունն ուղղել պետական համապատասխան իրավասու մարմնին: Նման հնարավորությունը կնպաստի, որպեսզի պետական գնման գործընթացը կազմակերպվի ու իրականացվի առավել պատասխանատու ձևով:

Եզրակացություն

1. Ժամանակակից պայմաններում պետական գնման հարաբերությունների օրեցօր զարգացումը վկայում է դրանց բացառիկ արդիականության մասին և պահանջում գործող իրավական կարգավորումների պարբերաբար մշակում ու կատարելագործում:

2. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու փաստի ուժով նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ մասնակցության սահմանափակման տեսքով պատասխանատվություն կիրառելը իրավաչափ չէ:

2.1. Առաջարկվում է նման իրավակարգավորումը մեղմացնել, օրինակ՝ մասնակցի հետ համեմատ սահմանել նման ցուցակում գտնվելու ավելի կրճատ ժամկետ:

2.2. Առաջարկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և մասնակցի, և նրա հետ փոխկապակցված անձի գտնվելու ժամանակահատվածում որոշակի նվազագույն ժամկետի լրանալու փաստի ուժով ստեղծել հնարավորություն ֆիքսված չափի տուգանք վճարելու և այդ հիմքով նշված ցուցակից դուրս գալու համար:

3. Թեև պետական գնումների ոլորտը որդեգրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ապահովման միջոցներից տարբերվող՝ իրեն ներհատուկ ապահովման միջոցներ, այդուհանդերձ, պետական գնումներով կիրառվող ապահովման միջոցների և քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարման ապահովման միջոցների գործառնական նշանակությունն ըստ էության նույննախում է՝ արտահայտվելով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման մեջ:

3.1. Գործնականում մասնակցի կողմից թույլ տրված խախտման արդյունքում պատվիրատուն իր կրած վնասների և հաշվարկվող տուժանքի գումարների գծով պահանջը փաստացի չի բավարարում ապահովման միջոցների հաշվին, այլ դրանք պահանջում է ապահովումներից գատ, իսկ ապահովման միջոցները գանձում է որպես տուգանք, այն դեպքում, երբ ապահովումները հենց խախտման հետևանքները վերացնելուն ուղղված միջոց են հանդիսանում:

3.2. Առաջարկվում է սահմանել իրավակարգավորում, ըստ որի՝ պատվիրատուի կրած

¹⁹ Նշված հոդվածի համաձայն՝ եթե գործի քննության ընթացքում վարչական դատարանը պարզում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը թույլ է տվել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների կոպիտ կամ պարբերական խախտումներ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության կամ օրենքի այլ էական խախտումներ, ապա վարչական դատարանը վճռի հետ միաժամանակ կայացնում է մասնավոր որոշում, որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձի, իսկ անհրաժեշտության դեպքում վերադասի ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական գործով մինչդատական վարույթի ընթացքում: Նման որոշում կարող է կայացվել նաև լիցենզավորված և արտոնագրված սուբյեկտների նկատմամբ, եթե կոնկրետ գործով առկա ապացույցները տվել են վերջիններս: ... Մասնավոր որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին (լիցենզավորող, արտոնագրող մարմնին), իսկ դա չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին, որը պարտավոր է որոշումը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննարկել այն:

վսասները և հաշվարկվող տույժերը հատուցվեն մասնակցի տրամադրած ապահովման միջոցների հաշվին, ինչից հետո ավել մնացած միջոցները վերադարձվեն դրանք ներկայացնողին, իսկ ապահովման միջոցներով չծածկված մասով պատվիրատուի պահանջները նոր միայն բավարարվեն մասնակցին վճարման առանձին պահանջ ներկայացնելով:

3.3. Առաջարկվում է մասնակցին ազատել ապահովման միջոցները վճարելու պարտավորությունից, եթե պատվիրատուն մասնակցից չի պահանջել պարտավորության կատարում: Այս տեսանկյունից պատվիրատուի կողմից պետական գնման պայմանագրի լուծումը պետք է հանդիսանա ծայրահեղ կիրառվող միջոց:

4. Պետական գնումների գործընթացի շրջանակներում վեճ քննող դատարանին առաջարկվում է վերապահել «մասնավոր որոշում» կայացնելու իրավասություն, որով դատարանը ձեռք կբերի իրավունք հնարավոր չարաշահումների (պետական կամ մասնավոր կողմի թույլ տված) վերաբերյալ կասկածներ ունենալու պարագայում այդ հարցի քննությունն ուղղել պետական համապատասխան իրավասու մարմնին:

Ամփոփագիր: Գիտական հետազոտությունը նվիրված է պետական գնումներին: Հոդվածում ամենից առաջ բացահայտվում է թեմայի արդիականությունը, որից հետո ներկայացվում են գնումների գործընթացի հիմքում դրված սկզբունքները և այդ գործընթացով հետապնդվող գերնպատակը: Նկարագրվում են այն հնարավոր չարաշահումները, որոնք կարող են տեղի ունենալ գնման գործընթացներում: Առանձին անդրադարձ է կատարվում պետական կողմի պատվիրակված լիազորություններին և կիրառվող պատասխանատվության միջոցների համաչափությանը: Նշվածի շրջանակներում առավել մանրամասն քննարկվում են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին և նրա հետ փոխկապակցված անձին ներառելու դրվագների հետ կապված առանձնահատկությունները: Բացի դա, հոդվածում առանձին բացատրվում է ապահովման միջոցների էությունը, և վերլուծություն է արվում դրանց ճիշտ գործարկման հարցի շուրջ: Քննարկվում է պատվիրատուի կրած վսասների և վերջինիս օգտին հաշվարկվող տույժերի գանձման համաչափությունը, մասնակցից ստացված ապահովման միջոցների առկայության պայմաններում: Արդյունքում հիմնավորվում է հետևությունն առ այն, որ պատվիրատուի կրած վսասները և հաշվարկվող տույժերը պետք է հատուցվեն հենց մասնակցի տրամադրած ապահովման միջոցների հաշվին, ինչից հետո ավել մնացած միջոցները պետք է վերադարձվեն դրանք ներկայացնողին: Հոդվածով նաև առաջարկվում է ներպետական օրենսդրության գնումների ոլորտ ներմուծել դատարանի կողմից «մասնավոր որոշում» կայացնելու իրավասություն սահմանող նորմ, որով դատարանը իրավունք ձեռք կբերի հնարավոր չարաշահումներ արձանագրելիս այդ հարցի քննությունն ուղղել պետական իրավասու մարմնին:

Annotation. The scientific research is dedicated to public procurement. The article first of all reveals the relevance of the topic, after which the principles underlying the procurement process and the ultimate goal pursued by that process are presented. The possible abuses that may occur in procurement processes are described. Separate attention is paid to the delegated powers of the state and the proportionality of liability measures, that are being applied. Within the framework of the above, the peculiarities of the episodes related to the inclusion of a participant and an interconnected person in the list of participants not entitled to participate in the procurement process are discussed in more detail. Furthermore, the essence of the means of ensuring is explained separately in the article, and an analysis is made of their proper application. The proportionality of the collection of damages incurred by the state and the penalties assessed in favor of the latter is discussed in the presence of means of ensuring received from the participant. As a result, the conclusion is substantiated that the damages incurred by the state and the penalties assessed should be compensated by the means of ensuring provided by the participant, after which the remaining means should be returned to the party who provided them. It is also proposed in the

article to introduce a norm into the sphere of procurement in domestic legislation establishing the jurisdiction of the court to make a “private decision”, according to which the court will acquire the right to refer the case to the competent state body for investigation when registering possible abuses.

Аннотация. Научное исследование посвящено государственным закупкам. В статье, прежде всего, является актуальность темы, затем представляются принципы, лежащие в основе процесса закупок, и преследуемая этим процессом наивысшая цель. Описываются те возможные злоупотребления, которые могут иметь место в процессе закупок. Отдельное внимание уделяется делегированным полномочиям государственной стороны и соразмерности применяемых мер ответственности. В рамках вышеизложенного наиболее подробно обсуждаются особенности, связанные с эпизодами включения участника и взаимосвязанного с ним лица в список участников, не имеющих права участвовать в процессе закупок. Кроме того, в статье отдельно разъясняется сущность мер обеспечения, проводится анализ вопроса их правильного применения. Обсуждается соразмерность взыскания убытков, понесенных заказчиком, и рассчитанных в пользу последнего штрафов, при наличии мер обеспечения, полученных от участника. В результате обосновывается вывод о том, что убытки, понесенные заказчиком, и рассчитанные штрафы должны быть компенсированы за счет мер обеспечения, предоставленных участником, после чего оставшиеся средства должны быть возвращены лицу, их предоставившему. В статье также предлагается ввести в национальное законодательство в сфере государственных закупок норму, устанавливающую юрисдикцию суда по принятию «частного решения», в соответствии с которым суд при регистрации возможных злоупотреблений приобретет право передавать дело в компетентный государственный орган.

Բանալի բառեր - պեղական գնում, պեղական պայմանագիր, տնտեսական մրցակցություն, պեղական բյուջե, ապահովման միջոցներ, որակավորում, համաչափ պարասիանավորություն, սև ցուցակ, խախտում, չարաշահում:

Keywords: public procurement, public contract, economic competition, state budget, means of ensuring, qualification, equal responsibility, blacklist, breach, abuse.

Ключевые слова: государственные закупки, государственный контракт, экономическая конкуренция, государственный бюджет, способы обеспечения, квалификация, равномерная ответственность, черный список, нарушение, злоупотребление.

Օգնագործված գրականության ցանկ

1. Erica Bosio, Simeon Djankov, Edward Glaeser, and Andrei Shleifer, Public Procurement in Law and Practice, American Economic Review journal, 2022, 112(4).
2. Christopher Bovis, The Law of EU Public Procurement, second edition, Oxford University Press, 2015.
3. Mehmet A. Demircioglu, Roberto Vivona, Positioning public procurement as a procedural tool for innovation: an empirical study, Oxford Academic, Oxford University Press, Policy and Society, Volume 40, Issue 3, September 2021.
4. Маркелов Кирилл Борисович, Государственные и муниципальные закупки как институт бюджетного права, диссертация, М. 2012.
5. «КОМИССИЯ ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ ПО ПРАВУ МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛИ, Типовой закон ЮНСИТРАЛ о публичных закупках, Нью-Йорк, 2014.
6. Saeed Siyal, Chunlin Xin, Public Procurement, In: Farazmand, A. (eds) Global Encyclopedia of Public Administration, Public Policy, and Governance, October 2019, Springer, Cham.

7. Abby Semple, Practical guide to public procurement paper, Oxford University Press, March 2015.

8. Oishee Kundu, Elvira Uyarra, Raquel Ortega-Argiles, Mayra M Tirado, Tasos Kitsos, Pei-Yu Yuan, Impacts of policy-driven public procurement: a methodological review, Oxford University Press, Science and Public Policy, Volume 52, Issue 1, February 2025.

Հակոբյան Ա. - Իրավաբանական գիտությունների թեկնածու, Երևանի «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի դասախոս, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական, էլիաստ՝ annahakobyan200@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 09.01.2026 թ., տրվել է գրախոսության 09.01.2026 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Կ. Համբարձումյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-85>

MANE MARKOSYAN

*Lecturer, Ph.D. Student at the Chair of Civil Law, Faculty of Law, YSU,
Prosecutor General's Office of the RA, Adviser to the Prosecutor General of the RA*

ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ, դասախոս
ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական*

МАНЭ МАРКОСЯН

*Преподаватель, аспирант кафедры гражданского права
юридического факультета Ереванского государственного университета,
Генеральная прокуратура Республики Армения,
советник Генерального прокурора Республики Армения
<https://orcid.org/0000-0002-0348-8879>*

PECULIARITIES OF THE CIVIL-LAW STATUS OF THE SUBSOIL USE RIGHT UNDER THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

ОСОБЕННОСТИ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО СТАТУСА ПРАВА НЕДРОПОЛЬЗОВАНИЯ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Introduction

Compared with objects that exist in ordinary civil-law relations, the **objects of civil rights in the sphere of subsoil use** display a number of distinctive features (e.g., **constraints on the dispositive method** of regulating their legal regime; **restrictions on the civil circulation** of most such objects, etc.).

In this regard, the study and analysis of a particular object of civil rights in subsoil use—namely, the **right to subsoil use**—is of special interest.

An examination of the current legislation permits the conclusion that the **grounds for transferring the right to subsoil use are severely limited**, alongside other legislative gaps in

the regulation of this institution. Such a narrowing of the transfer regime **impedes the right's becoming an active object of economic circulation**¹.

Despite these issues in the civil-law regime of the right to subsoil use, its legal framework **has not been comprehensively examined** in the domestic literature.

Within this study, our aim is to conduct a **comprehensive analysis of the specific features of the civil-law regime** of the right to subsoil use under Armenian legislation.

Research

The right to subsoil use is one of the key objects of civil rights in the field of subsoil use, since only through the granting of such a right does the state exercise its exclusive ownership powers over subsoil plots (Article 11 of the RA Subsoil Code (hereinafter, “the Code”)²).

Granting the right of subsoil use by the state to legal entities implies a temporary transfer of the state's powers of possession and use over the relevant subsoil plot to the subsoil user, for the purposes defined by the Code (geological exploration, extraction of mineral resources) and under rules unilaterally established and supervised by the state. At the same time, Article 11(2) of the Code establishes the principle of inalienability of subsoil plots, thereby excluding the state's authority to dispose of such plots in any manner other than through subsoil use.

By granting legal entities the right to subsoil use over subsoil plots that are the exclusive property of the state, the state simultaneously establishes **exhaustive, mandatory rules—under state supervision—governing the possession, disposal, and use of that right by the subsoil user**. It follows that the subsoil user's right of subsoil use over a given plot is **derivative of the state's exclusive ownership of the subsoil**³.

Under RA legislation, the **civil circulation of the right to subsoil use** is permitted solely in two instances: 1) the transfer of the right through legal succession (Articles 22–23 of the Code), and 2) the mortgage of the right (Articles 28–29 of the Code). At the same time, Article 20(2) of the Code establishes the **principle of indivisibility of the right to subsoil use**, providing that such a right may belong to only one legal entity. Accordingly, under Armenian law, the right to subsoil use constitutes an **object of limited civil circulation**.

In the event of a transfer of the right to subsoil use, as well as in cases of compulsory alienation of a mortgaged right to subsoil use, the right is conveyed to a new subsoil user. In other words, there is a change in one of the parties to the subsoil use legal relationship.

It should be noted that, whether subject to state supervision or not and in accordance with the legislation of the respective country, the **transfer of the right to subsoil use to a third party (“the transferability of title”)** or the possibility of **mortgaging such a right (“the mortgageability of title”)** is encouraged in international guidelines⁴ and provided for under the legislation of many

¹ See: *AUA Center for Responsible Mining*. “Preliminary Study: For the Republic of Armenia's 2018 Extractive Industries Transparency Initiative (EITI) Report.” 15 March 2018, p. 18.

² The Code on the Subsoil of the Republic of Armenia: Adopted on 28 November 2011. Entered into force on 1 January 2012. Official Gazette of the Republic of Armenia, 2011.12.21/69(872) Art. 1661.

³ See: *Tretyakova E.* “Legal Status of a Subsoil User as a Special Participant in Entrepreneurial Activity.” *Energy Policy* no. 3 (181), 2023: 76–88. https://doi.org/10.46920/2409-5516_2023_3181_76, p. 79. <https://cyberleninka.ru/article/n/pravovoy-status-polzovatelya-nedr-kak-osobopo-uchastnika-predprinimatelskoy-deyatelnosti> (Accessed: 05.02.2025).

⁴ See: *Centre for Sustainability in Mining and Industry (CSMI), The School of Mining Engineering*, University of the Witwatersrand, Good Practice Note. Granting Mineral Rights, p. 5. <https://edge.edx.org/asset> (Accessed: 04.08.2025).

foreign jurisdictions⁵. The principal differences among these jurisdictions lie in the **scope and specific features of the norms permitting the civil circulation of subsoil use rights**⁶.

Under Armenian law, the **transfer of the right to subsoil use requires the existence of a complex set of legal facts**. Articles 22–23 of the Code make it clear that, in addition to meeting other requirements for the transfer of this right, such a transfer to third parties may occur **only with the consent of the Authorized Body and exclusively through legal succession**—that is, in cases of reorganization of the legal entity holding the subsoil use right (merger, consolidation, division, separation, or reformation).

However, the Code does not address a key procedural issue: whether, in the course of transferring the right to subsoil use, the permit and contract of the previous subsoil user are to be re-executed with the new user, or whether a new contract on identical terms must be concluded and a new permit issued. In this respect, the legislative framework governing the procedure for transferring the right to subsoil use **requires further clarification**.

The Code likewise does not specify the **legal consequences** that arise if a subsoil user violates the requirements applicable to the transfer of the right to subsoil use—for example, by concluding a transfer transaction without the consent of the Authorized Body or in any other manner that contravenes the procedure established in Articles 22–23 of the Code. If one attempts to answer this question by reference to the **Civil Code of the Republic of Armenia**⁷, it would follow that any transaction aimed at transferring the right to subsoil use without the required consent of the Authorized Body is **invalid (in this case, a disputable transaction)** under Article 305 of the Civil Code as a transaction that does not comply with the requirements of the law, given that Armenian legislation does not provide for such transactions to be treated as **null and void**. Notably, in the previous version of Article 22 of the Subsoil Code it was explicitly stipulated that **all transactions or actions directed toward the transfer of the right to subsoil use were null and void**⁸:

As regards the “**other consequences of violation**” contemplated by Article 305 of the Civil Code of the Republic of Armenia, it should again be noted that **no direct consequences are prescribed** for the transfer of the right to subsoil use without the consent of the Authorized Body.

However, it is reasonable to conclude that in such a case the Authorized Body is legally empowered—**pursuant to points 1 and 2 of Article 30(2) of the Subsoil Code (failure to fulfill obligations or conditions established by the Code and by the right to subsoil use)**—to issue a **written warning to the subsoil user**, and, if the violation is not remedied, to **terminate the right to subsoil use in accordance with the procedure established by the Code**.

It is noteworthy that, in the case of **mortgaging the right to subsoil use**, the legislator has adopted a clearly differentiated approach. The Subsoil Code expressly provides for the **nullity of a mortgage agreement** concluded or amended without the consent of the Authorized Body (Article 28(2.1)), as well as for the nullity of a mortgage agreement containing terms that contradict the requirements of Article 29 (Article 29(6)). Furthermore, **violation of the conditions of a mortgage of the right to subsoil use entails termination of that right** pursuant to Article 30(5) (6) of the Code.

⁵ See: *Ibid*, p. 64, 91, 204.

⁶ See: *Tretyakova E.*, the cited work, p. 82-85.

⁷ Civil Code of the Republic of Armenia: Adopted on 5 May 1998. Entered into force on 1 January 1999. Official Gazette of the Republic of Armenia 1998.08.10/17(50).

⁸ See: Article 22 of the Code has been set out in a new version (see Law HO-143-N of May 25, 2022).

The **nullity of transactions transferring the right to subsoil use without the consent of the Authorized Body or in breach of statutory conditions** is likewise envisaged under the legislation of Kazakhstan⁹. In addition, in some jurisdictions, **violation of the procedure for transferring the right to subsoil use constitutes grounds for termination of that right** (e.g., Russia¹⁰ and Kyrgyzstan¹¹) or for its **suspension** (e.g., Tajikistan¹²).

*In summary, we consider that the **differentiated legal consequences** prescribed by the Subsoil Code for violations of the rules governing the transfer and the mortgage of the right to subsoil use are **unjustified and lack any legal basis**, since in both cases the subsoil user is exercising the **power of disposition** over that right.*

*Accordingly, we propose that **Article 22 of the RA Subsoil Code be amended** to provide that any transaction for the transfer of the right to subsoil use concluded in violation of the conditions set by the Code (including without the consent of the Authorized Body) **shall be null and void**.*

*In addition, we recommend that **Article 30 of the Code be supplemented** to stipulate that the conclusion of transactions for the transfer of the right to subsoil use in breach of the prescribed procedure constitutes a **ground for the Authorized Body to issue a warning to the subsoil user**.*

The next issue concerning the transfer of the right to subsoil use relates to the **alienation of the property complex necessary for exercising that right**—a matter left entirely outside the regulatory scope of the Code. As a result, even where the procedure established by the Code is observed, the transfer of the right to a new subsoil user may be regarded as the **disposal of a non-marketable asset**, since without the alienation of the objects connected with it, the right cannot serve its intended purpose for the acquirer. The exercise of the right to subsoil use can attain **high liquidity only if** the law provides for the possibility of alienating the right **together with its related objects as a single property complex**¹³.

In this regard, a noteworthy approach found in the theoretical literature holds that, within the sphere of subsoil use, **the enterprise (i.e., the subsoil user's property complex)** constitutes a distinct object of civil rights¹⁴. It should be noted that the **Civil Code of the Republic of Armenia does not recognize the enterprise as a separate object of civil rights**. Nevertheless, the importance of selling a business as a **single property complex** is emphasized in the **Concept Paper on Bankruptcy Law Reform**¹⁵.

In various jurisdictions, the definition of an **enterprise** as a distinct object of civil rights ultimately aims to recognize **the entire property complex used for entrepreneurial activity**—including all types of assets (buildings, structures, equipment, tools, rights to land parcels, etc.)—

⁹ See: Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017, No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), Article 44 (4) 1. <https://online.zakon.kz/Document/> (Accessed: 06.03.2025).

¹⁰ See: Law of the Russian Federation “On Subsoil” of 21 February 1992 No. 2395-1 (as amended on 7 June 2025), Article 20. <https://www.consultant.ru/> (Accessed: 05.08.2025).

¹¹ <https://gratanet.com/publications/gils-mining-kyrgyzstan?region=mongolia> (Accessed: 04.08.2025).

¹² See: *EITI Tajikistan*. Report on the Transparency of the Licensing Process in the Extractive Industries of the Republic of Tajikistan. Extractive Industries Transparency Initiative (EITI), 2021, p. 33. <https://pbo.eiti.tj/pdf> (Accessed: 02.08.2025).

¹³ See: *Markosyan, T.; Markosyan, M.* “Problems of Termination and Alienation of the Right to Subsoil Use in the Context of Bankruptcy Institute”. *Judicial Power* 3-4 (261-262), 2021, p. 123.

¹⁴ See: *Levochko, V. V.* An Enterprise As An Object Of Civil Rights In Subsoil Use: Challenges And Perspectives. *Actual Problems of Russian Law* 7 (92), July 2018, DOI: 10.17803/1994-1471.2018.92.7.108-116, pp. 108–116.

¹⁵ See: Concept Paper on Bankruptcy Law Reform, point 429, <https://www.e-draft.am/projects/6701> (Accessed: 01.08.2025).

as a **single object of civil rights** (e.g., Russia¹⁶, Kazakhstan¹⁷).

The legal construct of the **enterprise** enables the consolidation of heterogeneous property rights for the purpose of ensuring their efficient civil circulation, thereby, to some extent, addressing the problem of the subsoil plot and the assets inextricably connected with it being subjected to **divergent legal destinies**¹⁸.

As noted, the RA Subsoil Code is not framed on the logic of recognizing the objects connected with the right to subsoil use as a **single property complex** at the legislative level, nor of allowing their circulation as a **single object of civil rights**. Armenian legislation regulates only the **state's oversight** of the classic transactions of **transfer** and **mortgage** of the right to subsoil use (but not of the objects associated with that right). In this regard, it is noteworthy that **Article 17.1 of the Russian Federation's Law "On Subsoil"** establishes an **imperative requirement** that, upon the transfer of the right to subsoil use, the property necessary to carry out the activities specified in the subsoil use permit must also be transferred.

In our view, the RA Subsoil Code should likewise **define the scope of the objects connected with the right to subsoil use** ("the property complex") and establish **legal norms regulating their transfer together with the right to subsoil use**—in the cases provided by the Code and with the consent of the Authorized Body—as a **single object of civil rights**. Otherwise, **transferring the right to subsoil use without the related assets** may, in practice, render that right a **non-marketable property right**.

Proceeding from the foregoing, we propose that: 1) the RA Subsoil Code defines the scope of objects necessary for the exercise of the right to subsoil use (e.g., buildings, structures, equipment, etc.); and 2) the Code establishes legal norms governing the disposition of these objects together with the right to subsoil use as a single property complex—whether by transfer or by mortgage—subject to the consent of the Authorized Body.

The next legislative gap concerning the transfer of the right to subsoil use—also identified by the Extractive Industries Transparency Initiative (EITI) Armenia—relates to the **alienation of shares and participatory interests in companies holding subsoil use rights**. The state currently lacks **any legal mechanism** to monitor or control such transactions¹⁹.

In the absence of state oversight over such transactions, a **de facto transfer of the right to subsoil use** can occur, for example, through changes in a legal entity's participants or shareholders²⁰, thereby **circumventing the rules on transferring subsoil use rights** set forth in Articles 22–23 of the RA Subsoil Code.

In this context, it is noteworthy that the Law of the Republic of Kazakhstan "On Subsoil and Subsoil Use"²¹ provides, in Chapter 5, that **any participation interest in a subsoil user company**

¹⁶ See: Civil Code of the Russian Federation (Part One), Federal Law No. 51-FZ of 30 November 1994 (as amended on 8 August 2024, with changes of 31 October 2024), Article 132. Available at: Consultant Plus (in Russian), <https://www.consultant.ru> (Accessed: 03.08.2025).

¹⁷ See: Civil Code of the Republic of Kazakhstan (General Part), No. 268-XIII, adopted on December 27, 1994, Article 119, <http://jafbase.fr/docAsie/Kazakhstan/code%20civil.pdf> (Accessed: 02.08.2025).

¹⁸ See: *Levochko*, cited work, p. 108.

¹⁹ See: Extractive Industries Transparency Initiative (EITI) Armenia Report (2016–2017). 2018. Ernst & Young CJSC, p. 98. https://eiti.org/sites/default/files/attachments/armenian_2016-2017 (Accessed: 10.02.2025).

²⁰ See: *Ibid.*

²¹ See: Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017, No. 125-VI ZRK "About Subsoil and Subsurface Use" (as amended on 21.05.2024).

(shares or equity interests) is treated as an **object connected with the right to subsoil use**, and that **the transfer of such interests requires the consent of the Authorized Body**. Moreover, Article 109 of the same law stipulates that the **alienation of the right to subsoil use and of the objects connected therewith** shall be carried out **through public auctions**, participation in which is limited to those legal entities that have obtained **prior consent from the Authorized Body** to take part.

*In sum, we consider that the Code should **require the Authorized Body's prior consent** for transactions involving the transfer of **shares or participatory interests** in a legal entity holding subsoil use rights **where such a transaction results in the concentration of a majority of voting rights in a single person**.*

Finally, the Code permits the transfer of the right to subsoil use **exclusively by way of legal succession**, i.e., through the **reorganization of the legal-entity subsoil user**.

A survey of foreign practice indicates that the **grounds for transferring the right to subsoil use** may include the **bankruptcy (insolvency) of the subsoil-user legal entity** or **intra-group transfers from a parent company to a subsidiary** (e.g., the Russian Federation²²). The right to subsoil use may also be made the object of a **usufruct or a servitude** (e.g., Chile²³). Moreover, in some jurisdictions the legislation **does not set out an exhaustive list** of the cases or types of transactions by which this right may be transferred (e.g., Kazakhstan²⁴).

In our view, by limiting the possibility of transferring the right to subsoil use **solely on the ground of reorganization of the subsoil-user legal entity**, the legislator has failed to account for other situations that create a **practical necessity** for concluding transactions to transfer this right. We substantiate this point with the example of the **legal trajectory of the subsoil use right held by a subsoil user declared bankrupt**.

Thus, the Code adopts an approach under which a subsoil user in insolvency proceedings is, in almost all cases, **not released from its subsoil-use obligations** (Article 9(6) of the Code). Consequently, **non-performance of those obligations during the insolvency proceedings results in the termination of the right to subsoil use**²⁵.

At the same time, Armenian law-application practice has evolved in a diametrically opposite direction regarding the feasibility of performance by a subsoil user declared bankrupt. In particular, in Administrative Case No. VD/10905/05/19, by a decision of 09.06.2023²⁶, the Court of Cassation offered an interpretation that **contradicts** the regulation set out in Article 9(6) of the Code with respect to non-performance by a subsoil user in insolvency proceedings. Specifically, the Court treated the very fact of the subsoil user's being declared bankrupt as a circumstance that **renders performance of the subsoil user's obligations impossible** and **precludes the subsoil user's liability**—namely, the **termination of the right to subsoil use**.

In our view, both the Code's approach and that of the Court of Cassation to the performance of obligations by a subsoil user declared bankrupt are problematic. On the one hand, during insolvency

²² See: Law of the Russian Federation “On Subsoil” of 21 February 1992 No. 2395-1 (as amended on 7 June 2025), Article 17.1 (8).

²³ See: *Tretyakova E.*, the cited work, p. 84.

²⁴ See: Civil Code of the Republic of Kazakhstan (General Part), No. 268-XIII, adopted on December 27, 1994, Article 40.

²⁵ See: the Decision of the Administrative Court of the Republic of Armenia of 3 October 2023 in Administrative Case No. VD/1756/05/21.

²⁶ See: the Decision of the Administrative Court of the Republic of Armenia of 9 June 2023 in Administrative Case No. VD/10905/05/19.

proceedings the moratorium means the subsoil user cannot perform its obligations without a court order; on the other hand, the user must continuously fulfill obligations aimed at ensuring public safety and environmental protection (Article 5 of the Code), whose non-performance would impair the public interest.

We consider that, to secure the continuous performance of these obligations in the situation described, an effective solution would be to amend the RA Subsoil Code to allow the transfer of the right to subsoil use of a subsoil user declared bankrupt by a final court judgment.

*In conclusion, we propose amending **Article 22 of the Subsoil Code** to provide that the right to subsoil use may be **transferred to another legal-entity subsoil user upon the entry into legal force of a judgment declaring the current subsoil user bankrupt**, while preserving the statutory requirement to obtain the **consent of the Authorized Body**. This would make it possible to **ensure the continuous performance** of subsoil-use obligations by the new subsoil user, including those **safeguarding the public interest**.*

Turning to the **mortgage of the right to subsoil use**, note that under Article 256(1), paragraph 2 of the Civil Code of the Republic of Armenia, the legal relations concerning the mortgage of this right are governed by the **RA Subsoil Code**. Articles 28–29 of the Code set out in detail the procedure for mortgaging the right to subsoil use. These provisions make clear that the right to subsoil use may be the object of a mortgage **within the framework of a purpose-specific (earmarked) loan agreement**, provided that the funds disbursed under such an agreement are used to fulfill obligations arising from the right to subsoil use.

In addition, Article 29 prescribes that the **realization (enforcement) of a mortgaged right to subsoil use** shall occur **exclusively through public auctions**, which in turn implies that, where this right is mortgaged, the **extrajudicial foreclosure procedure** provided for in Article 249 of the Civil Code **is inapplicable**²⁷:

Conclusion

Summarizing the research devoted to the civil-law status of subsoil use rights under the legislation of the Republic of Armenia, we have drawn a number of conclusions, the most significant of which can be formulated as follows:

1. Transactions for the transfer of subsoil use rights that are concluded in violation of the requirements set forth in Articles 22–23 of the RA Subsoil Code are **invalid (disputable) transactions** under Article 305 of the Civil Code of the Republic of Armenia, since the current legislative framework does not provide for the nullity of such transactions as a legal consequence of non-compliance with the RA Subsoil Code.

Given that points 1-2 of part 2 of Article 30 of the Subsoil Code set out, in general terms, that a subsoil user's failure to comply with obligations established by the Code or with the conditions of the subsoil use right constitutes grounds for issuing a warning, it is proposed that, where transactions for the transfer of a subsoil use right are concluded in contravention of the requirements of the Subsoil Code, the issuance of a written warning to the subsoil user by the authorized body under Article 30 of the Code be treated as *“other consequences of violation”* within the meaning of Article 305 of the Civil Code.

²⁷ See: AUA Center for Responsible Mining. “Preliminary Study: For the Republic of Armenia’s 2018 Extractive Industries Transparency Initiative (EITI) Report.” 15 March 2018, p. 18.

2. Considering that the RA Subsoil Code provides for the nullity of a mortgage agreement concluded in violation of the statutory requirements for mortgaging a subsoil use right (Article 28(2.1), Article 29(6)) and stipulates termination of the subsoil use right as a legal consequence of breaching the conditions of such a mortgage (Article 30(5)(6)), we believe it is not justified for the Code to prescribe **different legal consequences** for violations of the rules governing the transfer and the mortgage of a subsoil use right, since in both cases the subsoil user is exercising the same power of disposition over that right.

Based on the above, it is proposed to amend Article 22 of the RA Subsoil Code to provide that any transaction for the transfer of subsoil use rights concluded in violation of the conditions set forth in Articles 22–23 of the Code (including without the consent of the competent authority) shall be **null and void**. In addition, it is proposed to expressly include in Article 30 of the Code that the conclusion of such transfer transactions in breach of the statutory procedure constitutes grounds for the competent authority to issue a formal warning to the subsoil user.

3. It is proposed to (1) define in the RA Subsoil Code the scope of objects related to the exercise of subsoil use rights (such as buildings, structures, equipment, and similar assets), and (2) establish legal provisions governing their disposal—whether by transfer or mortgage—together with the subsoil use right as a single property complex, subject to the consent of the competent authority.

4. It is proposed to include in the RA Subsoil Code legal provisions requiring the prior consent of the competent authority for transactions involving the transfer of shares or participatory interests of a legal entity holding subsoil use rights, in cases where such a transaction results in the concentration of a majority of votes of that legal entity’s participants or shareholders in the hands of a single person.

5. To ensure the continued fulfillment of the obligations of an insolvent subsoil user, it is necessary to amend Article 22 of the Subsoil Code to provide that, upon the court decision declaring the subsoil user insolvent entering into legal force, the subsoil use right may be transferred to another legal entity, while preserving the statutory requirement to obtain the consent of the competent authority.

Annotation. In this article, the specific features of the civil-law status of the subsoil-use right, as an object of civil rights, are examined.

In light of domestic and foreign legislative frameworks, the institution governing the transfer of the subsoil-use right is subjected to a comprehensive study and analysis, and the gaps and problem areas in the national regulation of that institution are identified.

As a result of the conducted analysis, the author, *among other things*, proposes to clarify at the legislative level the civil-law consequences of violating the requirements applicable to transactions involving the transfer of subsoil-use rights; to introduce provisions in the legislation governing the alienation of the subsoil-use right as a single property complex; and to establish, within the Subsoil Code of the Republic of Armenia, mechanisms for the state-supervised disposal (alienation) of shares and participatory interests of subsoil users in cases prescribed by law.

Ամփոփագիր: Սույն հոդվածում քննարկման առարկա են դարձել ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:

Հոդվածում ներպետական և արտասահմանյան օրենսդրական կարգավորումների լույսի ներքո համալիր ուսումնասիրվել և վերլուծվել է ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման ինստիտուտը, վեր

են հանվել ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման ինստիտուտը կարգավորող օրենսդրության բացերը և հիմնախնդիրները:

Կատարված վերլուծության արդյունքում հեղինակը, ի թիվս այլնի, առաջարկել է օրենսդրական մակարդակով հստակեցնել ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման գործարքներին ներկայացվող պահանջները խախտելու քաղաքացիաիրավական հետևանքները, օրենսդրությամբ սահմանել ընդերքօգտագործման իրավունքը որպես մեկ գույքային համալիր օտարելու վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում նախատեսվել օրենքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործողի բաժնետոմսերի, բաժնեմասերի՝ պետության վերահսկողությամբ օտարման կառուցակարգեր:

Аннотация. В статье рассматриваются особенности гражданско-правового статуса права недропользования как объекта гражданских прав. На основе анализа национального и зарубежного законодательства комплексно исследуется институт передачи права недропользования, выявляются пробелы и проблемные аспекты правового регулирования данного института в Республике Армения.

По результатам проведённого исследования автор, в частности, предлагает на законодательном уровне уточнить гражданско-правовые последствия нарушения требований, предъявляемых к сделкам по передаче права недропользования; закрепить положения об отчуждении права недропользования как единого имущественного комплекса; а также предусмотреть в Кодексе о недрах Республики Армения механизмы отчуждения акций и долей недропользователя под государственным контролем в случаях, установленных законом.

Keywords: *object of civil rights in the field of subsoil use, subsoil use right, transfer of subsoil use right, mortgage of subsoil use right, bankruptcy, enterprise.*

Բանալի բառեր – ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտ, ընդերքօգտագործման իրավունք, ընդերքօգտագործման իրավունքի փոխանցում, ընդերքօգտագործման իրավունքի գրավ, սնանկություն, ձեռնարկություն:

Ключевые слова: *объект гражданских прав в сфере недропользования, право недропользования, передача права недропользования, залог права недропользования, банкротство, предприятие.*

References

1. Civil Code of the Republic of Armenia: Adopted on 5 May 1998. Entered into force on 1 January 1999. Official Gazette of the Republic of Armenia 1998.08.10/17(50).
2. The Code on the Subsoil of the Republic of Armenia: Adopted on 28 November 2011. Entered into force on 1 January 2012. Official Gazette of the Republic of Armenia, 2011.12.21/69(872) Art. 1661.
3. The Decision of the Administrative Court of the Republic of Armenia of 3 October 2023 in Administrative Case No. VD/1756/05/21.
4. The Decision of the Administrative Court of the Republic of Armenia of 9 June 2023 in Administrative Case No. VD/10905/05/19.
5. **AUA Center for Responsible Mining.** “Preliminary Study: For the Republic of Armenia’s 2018 Extractive Industries Transparency Initiative (EITI) Report.” 15 March 2018, 105 p.
6. **Centre for Sustainability in Mining and Industry (CSMI), The School of Mining Engineering,** University of the Witwatersrand, Good Practice Note. Granting Mineral Rights, 39 p., <https://edge.edx.org/asset> (Accessed: 04.08.2025).
7. Civil Code of the Republic of Kazakhstan (General Part), No. 268-XIII, adopted on December 27, 1994,

<http://jafbase.fr/docAsie/Kazakhstan/code%20civil.pdf> (Accessed: 02.08.2025).

8. Civil Code of the Russian Federation (Part One), Federal Law No. 51-FZ of 30 November 1994 (as amended on 8 August 2024, with changes of 31 October 2024), Available at: Consultant Plus (in Russian), <https://www.consultant.ru> (Accessed: 03.08.2025).

9. Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017, No. 125-VI ZRK “About Subsoil and Subsurface Use” (as amended on 21.05.2024), <https://online.zakon.kz/Document/> (Accessed: 06.03.2025).

10. Concept Paper on Bankruptcy Law Reform, <https://www.e-draft.am/projects/6701> (Accessed: 01.08.2025).

11. **EITI Tajikistan**. Report on the Transparency of the Licensing Process in the Extractive Industries of the Republic of Tajikistan. Extractive Industries Transparency Initiative (EITI), 2021, 183 p., <https://pbo.eiti.tj/.pdf> (Accessed: 02.08.2025).

12. Extractive Industries Transparency Initiative (EITI) Armenia Report (2016–2017). 2018. Ernst & Young CJSC, 354 p., https://eiti.org/sites/default/files/attachments/armenian_2016-2017 (Accessed: 10.02.2025).

13. <https://gratanet.com/publications/gils-mining-kyrgyzstan?region=mongolia> (Accessed: 04.08.2025).

14. Law of the Russian Federation “On Subsoil” of 21 February 1992 No. 2395-1 (as amended on 7 June 2025), <https://www.consultant.ru/> (Accessed: 05.08.2025).

15. **Levochko V. V.**, “An Enterprise As An Object Of Civil Rights In Subsoil Use: Challenges And Perspectives. Actual Problems of Russian Law 7 (92)”, July 2018, DOI: 10.17803/1994-1471.2018.92.7.108-116, pp. 108–116.

16. **Markosyan T. and Markosyan M.**, “Problems of Termination and Alienation of the Right to Subsoil Use in the Context of Bankruptcy Institute”. *Judicial Power* 3-4 (261-262), 2021, pp. 115-126.

17. **Tretyakova E.**, “Legal Status of a Subsoil User as a Special Participant in Entrepreneurial Activity.” *Energy Policy* no. 3 (181), 2023: 76–88. https://doi.org/10.46920/2409-5516_2023_3181_76, pp. 76-88. <https://cyberleninka.ru/article/n/pravovoy-status-polzovatelya-nedr-kak-osobopo-uchastnika-predprinimatelskoy-deyatelnosti> (Accessed: 05.02.2025).

Markosyan M. - Lecturer, Ph.D. Student at the Chair of Civil Law, Faculty of Law, YSU, Prosecutor General’s Office of the RA, Adviser to the Prosecutor General of the RA, e-mail: mane.markosyan@ysu.am.

Ներկայացվել է խմբագրություն 19.10.2025 թ., տրվել է գրախոսության 19.10.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտություններ դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-95>

ՀԵՆՐԻԿ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
«Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական
դատավարության ամբիոնի դասախոս»

HENRIK KHUNDKARYAN
*Assistant to the Judge of the Court of Cassation of the Republic of Armenia,
Lecturer at the Chair of Civil Procedure of Yerevan State University*

ГЕНРИК ХУНДКАРЯН
*Помощник судьи Кассационного суда Республики Армения,
преподаватель кафедры гражданского судопроизводства
Ереванского государственного университета
<https://orcid.org/0000-0002-9335-1007>*

**ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՎԵՃԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

**THE JURISDICTION OF DISPUTES RELATED TO DISMISSAL FROM A
STATE ADMINISTRATIVE POSITION**

**ПОДВЕДОМСТВЕННОСТЬ СПОРОВ, СВЯЗАННЫХ С
УВОЛЬНЕНИЕМ С ГОСУДАРСТВЕННОЙ АДМИНИСТРАТИВНОЙ
ДОЛЖНОСТИ**

Ներածություն

Հանրային ծառայությանը ներգրավվելու քաղաքացիների իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածով, որը մի կողմից հանրային իշխանության մարմինների քաղաքականության իրականացմանը մասնակցելու երաշխիք է, իսկ մյուս կողմից՝ մասնագիտական գիտելիքներին ու կարողություններին համապատասխան հանրային ծառայության ոլորտում աշխատանքային գործունեություն ծավալելու հնարավորություն: Հանրային ծառայության անցնելու իրավունքը փոխկապված է անձի աշխատանքային իրավունքների հետ, իսկ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը, ըստ էության, երաշխավորում է աշխատողի իրավական պաշտպանությունն աշխատանքից, ուստի նաև հանրային ծառայությունից կամայական հիմքով ազատվելուց:

ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունները հանգում են նրան, որ հանրային ծառայությունից, մասնավորապես՝ պետական վարչական պաշտոնից անձն ազատվում է վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի չսահմանափակված հայեցողության հիման վրա, որպիսի դեպքերում անհատական իրավական ակտում համապատասխան պաշտոնից ազատելու՝ վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի լիազորությունն ամրագրող իրավական նորմի վկայակոչումը բավարար է ազատման հիմքերի առկայությունը հաստատված համարելու համար:

Մինչդեռ 02.05.2024 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-222-Ն օրենքի համաձայն՝ 01.01.2025 թվականից հետո ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ենթակայությանն է անցել հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատվելու հետ կապված վեճերի քննությունը, որոնց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 24-րդ գլխով նախատեսված հատուկ կարգավորումները:

Այս պայմաններում հատուկ հայցային վարույթի կարգով հանրային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը քննելիս համապատասխան հայեցողական լիազորությունը սահմանող իրավական հիմքի վկայակոչմամբ անհատական իրավական ակտի փաստական հիմքը նշելու պահանջը կատարված համարելու հանգամանքը կարող է խնդրահարույց լինել՝ հաշվի առնելով Օրենսգրքի կարգավորումներն ու դրանց կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան:

Հիմական հետազոտություն

Հանրային ծառայությունից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտի փաստական հիմքը նշելու պահանջի և վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողական լիազորությունների հարաբերակցության հետ կապված խնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի շրջանակում.

Աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման հարցում անհատական իրավական ակտերն առանձնակի կարևոր են՝ հաշվի առնելով գործատուի և աշխատողի միջև առկա ենթակայության պայմաններում աշխատողի համար վարքագծի կանոն սահմանելու կամ փաստական հետևանքներ առաջացնելու դրանց բնույթը: Այդ պատճառով առաջանում է աշխատողի իրավունքներն ու օրինական շահերն արդյունավետ պաշտպանելու, այդ ակտերի իրավաչափության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ու դրանց կայացման գործընթացում աշխատողի մասնակցությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

Ներպետական օրենսդրությունը սահմանում է անհատական իրավական ակտին ներկայացվող պարտադիր պահանջներ, որոնք հավասարապես կիրառելի են գործատուների կողմից ընդունվող անհատական իրավական ակտերի, այդ թվում՝ աշխատանքից (հանրային ծառայությունից) ազատելու մասին հրամանների նկատմամբ: Ըստ այդմ՝ գործատուի կողմից ընդունվող անհատական իրավական ակտի ձևակերպումը չի կարող կրել կամայական բնույթ, այն պետք է բավարարի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածներով նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկային և կառուցվածքին ներկայացվող պահանջները: Ի թիվս այլնի՝ դրանում պետք է ճշգրտորեն նշվեն այն օրենսդրական հիմքերը՝ համապատասխան իրավական ակտը, դրա հոդվածը, մասը, կետը և ենթակետը, եթե հոդվածն ունի նման կառուցվածք, որտեղ ամրագրված են տվյալ փաստակազմը սահմանող ու աշխատանքային պայմանագրի լուծում նախատեսող իրավա-

նորմը¹: Անհատական իրավական ակտը պետք է պարունակի նաև փաստերի այն շրջանակը, որոնց առկայության հետ իրավական նորմերը կապում են աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործատուի սուբյեկտիվ իրավունքի ծագումը՝ կոնկրետ իրավիճակում գործատուին թույլ տալով արձանագրել աշխատանքային կարգապահության խախտում ու աշխատողին ենթարկել կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, փաստական հիմք ստելով՝ օրենսդիրը նկատի է ունեցել ոչ թե վիճարկվող իրավական ակտի հիմքում դրված կոնկրետ փաստը, այլ փաստակազմը, որի հետ օրենքը կապում է վիճարկվող իրավական ակտից բխող իրավական հետևանքները²:

Անհատական իրավական ակտում դրա կայացման իրավական և փաստական հիմքերը նշելու օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ: Աշխատանքից ազատելու հրամանի բովանդակությունից աշխատողի համար պետք է հասկանալի լինի, թե ինչ հիմքով է ինքը ենթարկվում կարգապահական պատասխանատվության, կոնկրետ իր կողմից կատարված որ արարքի համար է գործատուն իր նկատմամբ կիրառում կարգապահական պատասխանատվության միջոցներ: Հրամանում պետք է նշվի, թե ինչ արարք է կատարել աշխատողը կամ հղում կատարվի որևէ փաստաթղթի, որի ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլինի արձանագրել աշխատողի կողմից թույլ տրված խախտումը, որը հանգեցրել է կարգապահական տույժի³:

Անհատական իրավական ակտի իրավական և փաստական հիմքերը նշելու կանոնը փոխկապակցված է պատճառաբանվածության պահանջի հետ, որն ամբողջ աշխարհում լավ կառավարման սկզբունքներից մեկն է: Լավ կառավարման իրավունքը երաշխավորված է Եվրոպական միության Հիմնական իրավունքների խարտիայի 41-րդ հոդվածով, որն իր մեջ ներառում է նաև վարչակազմի պարտավորությունը՝ հիմնավորելու իր որոշումները: Դրանք պետք է հստակ պարունակեն այն պատճառները, որոնց վրա հիմնված են, ինչպես նաև ներառեն անհրաժեշտ փաստերն ու դրանց իրավական հիմքերը⁴: Դատավարական նորմերը պահանջում են, որ անհատները տեղյակ լինեն իրենց դեմ հարուցված վարույթի մասին և կարողանան բողոքարկել այն: Ըստ այդմ, այն որոշումները, որոնք «անմիջականորեն ազդում են մասնավոր անձանց վրա» (օրինակ՝ հանրային ծառայողին պաշտոնից ազատելը) պետք է լինեն պատճառաբանված⁵:

Աշխատանքից ազատելու պատճառները ներկայացնելու և աշխատողին իրավական արդյունավետ պաշտպանություն երաշխավորելու մասին կարգավորումներ ընդունված են ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների օրենսդրություններում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակում ընդունված՝ Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին թիվ 158 կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները չեն կարող դադարեցվել, քանի դեռ դրա համար առկա չէ օրինական հիմք՝ կապված աշխատողի կարո-

¹ Տե՛ս, Կարո Միքայելյանն ընդդեմ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի, թիվ ԵԴ/30480/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.11.2024 թվականի որոշումը:

² Տե՛ս, Ս. Մեդրյան, Տ. Մարկոսյան «Առանձին աշխատանքային վեճերով հատուկ հայցային վարույթը Հայաստանի քաղաքացիական դատավարությունում», դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2020:

³ Տե՛ս, Արմինե Դավթյանն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, թիվ ԵԴ/35653/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 06.04.2023 թվականի որոշումը:

⁴ Տե՛ս, REPORT with recommendations to the Commission on a Law of Administrative Procedure of the European Union, Recommendation 4.8:

⁵ Տե՛ս, SETH C. TURNER “The assurance of impartiality: due process mechanisms and the development of global administrative law in international administrative tribunals”:

դության կամ վարքագծի հետ կամ պայմանավորված կազմակերպության կամ ծառայության գործառնական անհրաժեշտությամբ: Նույն կոնվենցիայի 8-րդ հոդվածը մասնակից պետություններին պարտավորեցնում է ապահովել աշխատողի արդյունավետ պաշտպանության իրավունքը՝ նրան վերապահելով աշխատանքից ազատելու որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն անաչառ մարմին, օրինակ՝ դատարան կամ արբիտրաժ բողոքարկելու իրավունք:

Եվրոպական սոցիալական խարտիայի 24-րդ հոդվածը երաշխավորում է աշխատանքից ազատելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքը՝ սահմանելով, որ աշխատանքից ազատելու դեպքում այն չպետք է դադարի առանց նման ազատման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա: Կարևոր է երաշխավորել, որ աշխատողը, որը պնդում է իրեն աշխատանքից ազատելու անհիմն լինելը, իրավունք ունենա բողոքարկել որևէ անկողմնակալ մարմնի:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հանրային ծառայողներն օգտվում են իրավական հատուկ կարգավիճակից և նրանց վերաբերյալ կայացված կարգապահական որոշումը պետք է պարունակի հաստատված փաստեր, պարզաբանումներ, թե պաշտոնական որ պարտականություններն են խախտվել, և հիմնավորումներ, թե ինչու է ընտրվել այդ կարգապահական միջոցը, օրինակ՝ ծառայությունից ազատելը⁶:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանը նշել է, որ պետական ծառայողներին պետք է տրվի աշխատանքից կամայականորեն ազատվելուց և դրա հետևանքներից արդյունավետորեն պաշտպանվելու հնարավորություն: Ընդ որում, պետական ծառայության կայունության և շարունակական գործունեության սկզբունքի պահպանումը պետք է լինի ոչ միայն օրենսդրի, այլև արդարադատության գործառնություն՝ բացառելու պետական ծառայողին անհիմն ազատելու հնարավորությունը⁷:

Պատճառաբանելու պարտականությունն ունի նաև գործնական նշանակություն արդարադատության հասանելիությունն ապահովելու հարցում: Անբարենպաստ որոշումները հիմնավորելու դեպքում ստեղծվում է ուղիղ կապ վարչական մարմնի և անհատի միջև⁸, այն «ծառայում է դատական պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելուն», ինչն աշխատողին թույլ է տալիս «հասկանալ որոշման հիմնավորումը», «գնահատել դրա օրինականությունը» և որոշել՝ բողոքարկել այն, թե ոչ⁹:

Ստացվում է՝ աշխատանքից ազատելու մասին որոշումը պատճառաբանելու նպատակը ոչ միայն շահագրգիռ անձին անբարենպաստ ակտի հիմնավորվածությունը պարզելու և դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունը գնահատելու հնարավորություն տալն է, այլ նաև դատական վերահսկողությունը հնարավոր դարձնելը: Իրավասու մարմին-

⁶ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային կարգապահական օրենք, բաժին 33. Կարգապահական կարգ:

⁷ Տե՛ս, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանի 11.03.2020 թվականի «Սահմանադրական համաձայն պետական ծառայողի կարգավիճակից զրկումը վարչական ակտով թույլատրելի է» վերտառությամբ մամուլի հաղորդագրություն:

URL: <https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Pressemitteilungen/EN/2020/bvg20-016.html>:

⁸ Տե՛ս, INGRID OPDEBEEK, STÉPHANIE DE SOMER “Duty to Give Reasons in the European Legal Area...: Mechanism for Transparent and Accountable Administrative Decision-Making? Comparison of Belgian, Dutch, French and EU Administrative Law”, ROCZNIK ADMINISTRACJI PUBLICZNEJ 2016 (2) Administracyjne prawo procesowe:

URL: https://ejournals.eu/en/journal_article_files/full_text/018eced7-7e04-73c0-af45-19ffd4ad5bb6/download:

⁹ Տե՛ս, URL: Triggering access to justice: the relation between the duty to give reasons and time limits in administrative litigation in Italy, Germany, and France, by Flaminia Aperia Bella – REALaw.blog:

նը պետք է հստակ և իրավաբանորեն վիճարկելի ձևով նշի այն հիմքերը, որոնք հանգեցրել են համապատասխան մարմնի և դրա աշխատակցի միջև կնքված աշխատանքային պայմանագրի միակողմանի լուծման¹⁰: Մինչդեռ կայացման պատճառները չնշելու դեպքում խաթարվում է աշխատողի արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը, քանի որ կարող է աշխատողների համար հանգեցնել իրավական փաստարկներ ներկայացնելու կամ թույլ տրված սխալները վկայակոչելու դժվարությունների, իսկ դատարանին զրկել բովանդակային առումով գործը քննելու հնարավորությունից՝ դատական վերահսկողության առարկայի բացակայության հիմքով:

Շարադրվածից բխում է, որ պատճառաբանելու պարտականությունն ապահովում է, որ դատական պաշտպանության իրավունքը չդառնա երևակայական, և յուրաքանչյուր դեպքում դրա արդյունավետության ապահովման նպատակով աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտի իրավական և փաստական հիմքերի համակցությունը բավարար, իսկ դրանցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է աշխատանքային իրավահարաբերությունները դադարեցնելու օրինական հիմքի առկայությունը ստուգելու, այսինքն՝ այն դատական վերահսկողության առարկա դարձնելու համար:

Այս համատեքստում աշխատողի իրավական պաշտպանության արդյունավետության հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան)՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում այն գործով¹¹, որով պատասխանող պետության օրենքը թույլատրում էր առանց որևէ հիմնավորում ներկայացնելու պետական ծառայողին ազատել աշխատանքից: Ազատման հրամանը դիմումատուն դատական կարգով չէր վիճարկել՝ հաշվի առնելով, որ ազատման հիմնավորումների բացակայության պայմաններում նախկին գործատուի դեմ հայց հարուցելը չէր կարող դրական ելք ունենալ: Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուն՝ որպես նախկին պետական ծառայող, իրավասու էր իր ազատումը վիճարկել դատարանում: Սակայն հաշվի առնելով այն, որ գործատուն պարտավոր չէր ներկայացնել նրան ազատելու որևէ հիմնավորում՝ Եվրոպական դատարանը գտել է, որ գործատուի դիրքորոշման բացակայության պայմաններում դիմումատուն չէր կարող արդյունավետորեն իրացնել դատարան դիմելու իր իրավունքը: Այս իրավական իրադրությունը Եվրոպական դատարանի գնահատմամբ դիմումատուի վիճարկման իրավունքը զրկել էր նյութական բովանդակությունից:

Հունգարիայի սահմանադրական դատարանը ևս հակասահմանադրական է ճանաչել այս դրույթը՝ արձանագրելով, որ պետական պաշտոնյայի ազատումը հիմնավորելու պարտականությունը չի կարող դիտարկվել որպես հայեցողություն, այլ հանդիսանում է տվյալ իրավահարաբերության բնույթից բխող իրավական երաշխիք: Պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերի բացակայությունը, ինչպես նաև հիմնավորում ներկայացնելու գործատուի պարտականության մասին օրենսդրական կանոնի բացակայությունը վտանգում են վարչական կառավարման համակարգում պաշտոնյաների քաղաքական չեզոքությունը, իրավական անկախությունն ու մասնագիտական անաչառությունը, ինչն իր հերթին հարցականի տակ է դնում վարչական որոշումների իրավաչափությունը: Եթե պետական պաշտոնյաների համար երաշխավորված չէ ծառայությունից ազատվելուց պաշտպանվելու իրավունքը, ապա գործա-

¹⁰ Տե՛ս, Եվրոպական միության Եվրոպական քաղաքացիական ծառայության տրիբունալի թիվ F-1/05 գործով 26.10.2006 թվականի վճիռը, URL: <https://curia.europa.eu/juris/document/document.jsf?text=&docid=63921&doclang=EN#:~:text=obligation%20to%20state%20reasons%20constitutes,to%20make%20judicial%20control%20possible>:

¹¹ Տե՛ս, K.M.C. v. HUNGARY գործով, գանգատ թիվ 19554/11 Եվրոպական դատարանի 10.07.2012 թվականի վճիռը, կետեր 7, 34:

տուի դերը զբաղեցնող անձը կարող է ցանկացած ժամանակ, առանց որևէ հիմնավորում ներկայացնելու դադարեցնել ծառայությունը, և աշխատանքից զրկվելու վախը կարող է սահմանափակել մասնագիտական և իրավական դիրքորոշումն արտահայտելու նրանց ազատությունը:

Ըստ այդմ, Հունգարիայի սահմանադրական դատարանը գտել է, որ աշխատանքից ազատելու իրավական պայմանները չկարգավորելով և գործատուի կողմից որոշման համար հիմնավորումներ ներկայացնելու պահանջ չնախատեսելով՝ օրենսդիրը անհամաչափ կերպով սահմանափակել է պետական ծառայողների՝ դատական պաշտպանության իրավունքը: Այս պայմաններում զգալիորեն կրճատվել է այն դեպքերի շրջանակը (օրինակ՝ աշխատանքից ազատելու ոչ իրավաչափ լինելը, իրավունքների չարաշահումը), որոնցով պետական ծառայողը կարող է դատարան դիմել հաջողության ակնկալիքով և որոնցով դատարանը կարող է բովանդակային որոշում կայացնել¹²:

Աշխատողի իրավունքների պաշտպանության, դատական վերահսկողության արդյունավետության՝ վերևում շարադրված պատճառաբանություններով էլ ներպետական օրենսդրությունն առանձնակի կարևորություն է տալիս անհատական իրավական ակտի, այդ թվում նաև՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու մասին որոշման իրավական ու փաստական հիմքերին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով գործատուի կողմից աշխատողի վերաբերյալ ընդունված անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու անվերապահ և ինքնուրույն հիմք դիտարկելով բոլոր այն դեպքերը, երբ գործով հաստատվում է, որ անհատական իրավական ակտում բացակայում են հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու փաստական կամ իրավական հիմքը, այսինքն՝ այն չի պարունակում հղում հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու հիմքը սահմանող իրավական նորմին կամ տեղեկատվություն այն փաստերի մասին, որոնց առկայության պարագայում անհատական իրավական ակտում վկայակոչված նորմը, ըստ գործատուի՝ նրան իրավունք է վերապահել անձին ազատել հանրային կամ այլընտրանքային ծառայությունից: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ունի իմպերատիվ բնույթ, քանի որ դատարանին չի վերապահում հայեցողական վարքագիծ դրսևորելու հնարավորություն՝ կախված գործի հանգամանքներից և վիճելի աշխատանքային իրավահարաբերության առանձնահատկություններից¹³:

Շարադրված իրավակարգավորումն ածանցվում է հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքից, որն իր ծավալի մեջ ներառում է նաև ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը և ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելքը¹⁴: Շարադրվածի հաշվառմամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով հանրային ծառայողի համար երաշխավորված է իրավական պաշտպանության, այդ թվում՝ ծառայությունից ազատվելու իրավաչափությունը դատական կարգով արդյունավետ վիճարկելու իրավունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 27.02.2024 թվականի թիվ ՍԴՈ-1716 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համատեքստում, երբ հանրային, մասնավորապես՝ վարչական

¹² Տե՛ս, նույն տեղում, կետ 16:

¹³ Տե՛ս, Սաթենիկ Սարգսյանն ընդդեմ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի, թիվ ԵԴ/37531/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.02.2025 թվականի որոշումը:

¹⁴ ՀՀ Սահմանադրական դատարանի 15.11.2019 թվականի թիվ ՍԴՈ-1488 որոշում:

պաշտոնում նշանակման և վարչական պաշտոնից ազատելու հիմք դիտարկում է իրավասու մարմնի չսահմանափակված հայեցողությունը՝ ըստ այդմ բավարար համարելով անհատական իրավական ակտում համապատասխան լիազորությունն ամրագրով իրավական նորմի վկայակոչումը, քաղաքացիական դատավարության կարգով հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու հետ կապված վեճեր քննելիս կարող են առաջանալ մի շարք խնդիրներ:

Այսպես. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական պաշտոնը հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձը կարող է փոփոխվել նաև քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության դեպքում վարչական պաշտոն զբաղեցնող անձը, որպես ժամանակավոր պաշտոնակատար, շարունակում է պաշտոնավարել մինչև իր պաշտոնում նոր նշանակում կատարելը կամ նոր նշանակման (վերանշանակման) կատարման համար սույն մասով սահմանված ժամկետի ավարտը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Նոր նշանակումը կատարվում է վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի նշանակման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն հոդվածի 3.1-ին մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում ժամանակավոր պաշտոնակատարն առանց ազատման վերանշանակվում է իր պաշտոնում կամ ազատվում է զբաղեցրած պաշտոնից նոր նշանակում կատարվելու դեպքում: Նշված ժամկետում նոր նշանակում կամ վերանշանակում չկատարվելու դեպքում ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասություն ունեցող անձի ընդունած անհատական իրավական ակտի հիման վրա ազատվում է զբաղեցրած պաշտոնից:

Այսպիսով, պետական վարչական պաշտոններից ազատման համար սահմանված են տարբեր մեխանիզմներ, և պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք աշխատանքից կարող են ազատվել կամ հանրային ծառայողների համար նախատեսված ընդհանուր հիմքերով, կամ հատուկ հիմքերով, այն է՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքով կամ, երբ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջական ղեկավարի փոփոխության դեպքում նոր անմիջական ղեկավարի կոնկրետ գործողություններով (անգործություն ցուցաբերելով) (վարչական պաշտոնում նոր նշանակում կատարելը կամ մինչև նոր նշանակման (վերանշանակման) կատարման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը նշանակում (վերանշանակում) չկատարելը):

Համապատասխանաբար վերոնշյալ հատուկ հիմքերից առաջինի առկայության պարագայում անհատական իրավական ակտի փաստական հիմքերը պետք է պարունակեն քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության և համապատասխան փոփոխության ու վարչական պաշտոն զբաղեցնող անձի աշխատանքից ազատման կապի վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ:

Ինչ վերաբերում է վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի (կամ) անմիջա-

կան ղեկավարի փոփոխության հիմքով վարչական պաշտոն զբաղեցնող անձի աշխատանքից ազատմանը, ապա սա միակ դեպքն է, երբ օրենքով թույլատրվում է անձին վարչական պաշտոնից հեռացնել անհատական իրավական ակտի փաստական հիմքերի ձևական առկայությամբ, այն է՝ տվյալ դեպքում միայն պետք է պատճառաբանված նշում լինի առ այն, որ անմիջական ղեկավարը փոփոխվել է և համապատասխան ժամկետում անգործություն է ցուցաբերել վարչական պաշտոնի նշանակման կամ վերանշանակման հարցում կամ էլ նշանակել է այդ պաշտոնին այլ անձի:

Այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են միայն վերոնշյալ հատուկ երկու դեպքերը, որոնցով տարբերակվում են այլ հանրային ծառայողների և վարչական պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված ազատման հիմքերը: Մնացած դեպքերում ծառայությունից (պաշտոնից) ազատման հիմքերը և կարգը նույնն են:

Տվյալ պարագայում ՀՀ Սահմանադրական դատարանի 27.02.2024 թվականի թիվ ՍԴՈ-1716 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համատեքստում առաջ են գալիս հետևյալ խնդիրները, մասնավորապես՝ առանց փաստական հիմքի վկայակոչման վարչական պաշտոնից ազատելու մասին անհատական իրավական ակտ կայացվելու դեպքում չի ապահովվում դրա իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու միջոցի արդյունավետությունը, քանի որ իրավական անորոշության պայմաններում անձը զրկվում է անհատական իրավական ակտի կայացման հանգամանքները հասկանալու և գնահատելու, դրա կապակցությամբ իրավական դիրքորոշում ձևավորելու, թույլ տրված հնարավոր խախտումները մատնանշելու և դրանց հանգամանքները ներկայացնելու հնարավորությունից:

Երկրորդ՝ անհատական իրավական ակտի փաստական հիմքի բացակայությունը ենթադրում է դատարանի կողմից այն անվերապահորեն անվավեր ճանաչելու իմպերատիվ լիազորության իրացում, սակայն վերոշարադրյալ իրավական դիրքորոշման պայմաններում հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու հետ կապված վեճեր քննելիս դատարանը պետք է շեղվի այս պարտադիր մոտեցումից՝ չնայած օրենքով նախատեսված չէ վիճելի աշխատանքային իրավահարաբերության բնույթով կամ առանձնահատկություններով պայմանավորված՝ հայեցողական վարքագիծ դրսևորելու հնարավորություն:

Երրորդ՝ բացակայում է դատական վերահսկողության առարկան: Եթե անհատական իրավական ակտում բացակայում է այն փաստակազմի մասին նշումը, որի հետ օրենքը կապում է հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու՝ իրավասու մարմնի սուբյեկտիվ իրավունքի ծագումը և հանրային ծառայողի նկատմամբ համապատասխան փաստական հետևանքի առաջացումը, ապա դատարանը զրկվում է գործը բովանդակային քննելու և հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու օրինական հիմքի առկայությունն ստուգելու իր լիազորությունն արդյունավետ իրացնելու հնարավորությունից: Այս պայմաններում իրավական պաշտպանության իրավունքը վերաձվում է հոշակագրային բնույթի կարգավորման, իսկ դատական վերահսկողությունը՝ ձևական գործընթացի, քանի որ չի ապահովում անհատական իրավական ակտի իրավաչափության ու օրինականության վերանայում դատարանի կողմից:

Ի վերջո, քաղաքացիական դատավարությունում գործատուն կրում է վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև անհատական իրավական ակտի ընդունման՝ օրենքով, այլ նորմատիվ կամ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը, մինչդեռ քննարկվող դեպքում, որպես վարչական պաշտոն զբաղեցնող անձին ծառայությունից ազատելու հիմք, վկայակոչելու է իր չսահմանափակված հայեցողու-

թյան առկայությունը՝ ըստ էության ազատվելով որևէ ապացույց ներկայացնելու պարտականությունից:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ քաղաքացիական դատավարության մրցակցային բնույթով պայմանավորված՝ դատարանը, որպես կանոն, իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավասություն չունի: Այլ կերպ ասած՝ գործը քննող դատավորը կարող է իրականացնել բացառապես մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող գործառույթներ՝ զերծ մնալով կողմերի նախաձեռնությունը սեփականով փոխարինելուց:

Բացառություն են այն վարույթները, որոնց առանձնահատկությունների հաշվառմամբ, օրենսդիրը սահմանել է, որ դրանց շրջանակում դատարանը, չկաշկանդվելով գործին մասնակցող անձանց միջնորդությունների բացակայությամբ, օրենքով կանխորոշված շրջանակում պարտավոր է ցուցաբերել անհրաժեշտ նախաձեռնություն և կատարել ապացույցների ձեռքբերմանն ուղղված որոշակի դատավարական գործողություններ, մասնավորապես գործին մասնակցող ու այդպիսին չհանդիսացող այլ անձանցից պահանջելու ապացույցներ, ստանալու այլ տեղեկություններ և նյութեր, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, փորձագետների և այլն¹⁵:

Հիմք ընդունելով դատավարությունում ֆիզիկական անձ աշխատողերի նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների՝ վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի ունեցած փաստացի առավելությունները և ունենալով կողմերի մրցակցող շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն ապահովելու նպատակ՝ օրենսդիրը հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 5-րդ մասով դատարանի համար ամրագրել է պարտականությունների ավելի լայն շրջանակ, քան վերջինս ունի աշխատանքային այլ վեճեր քննելիս:

Այլ կերպ ասած՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի քննությունը վերապահելով ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ օրենսդիրը, այնուամենայնիվ, պահպանել է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու՝ վարչական դատավարությանը բնորոշ սկզբունքը՝ դատարանին օժտելով այնպիսի ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն կտա արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Ստացվում է՝ օրենսդիրն այնչափ է կարևորել աշխատանքային այս տեսակի վեճերով փաստական հանգամանքները պարզելու և օբյեկտիվ իրականությունը բացահայտելու անհրաժեշտությունը, որ շեղվել է մրցակցային դատավարության կանոններից՝ դատարանին վերապահելով ակտիվ դերակատարություն: Մինչդեռ վարչական պաշտոն զբաղեցնող անձին ծառայությունից ազատելու հիմքը վերադաս պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հայեցողությամբ պայմանավորելու դեպքում իմաստազրկվում է նաև այս ինստիտուտը, քանի որ հայեցողությունը սահմանափակված չէ, որպիսի պայմաններում բացակայելու է դատարանի կողմից համաչափության և օրինականության պահանջների պահպանումն ստուգելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և իր վերադաս մարմնի կամ

¹⁵ Տե՛ս, Իվան Մարինոն ընդդեմ Լուսինե Մինասյանի, երրորդ անձ Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի, թիվ ԵԴ/32820/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 16.10.2023 թվականի որոշումը:

պաշտոնատար անձի հարաբերությունների՝ «հատուկ վստահությամբ և հավատարմությամբ փոխկապակցված» բնույթին՝ պաշտոնից ազատվելու դեպքում դատական պաշտպանության դիմելու տեսանկյունից, ապա Եվրոպական դատարանի Մեծ պալատը, անդրադառնալով նախադեպային իրավունքը զարգացնելու հարցին և վկայակոչելով Պելլեգրինի¹⁶ վճռի փաստական հանգամանքները, արձանագրել է¹⁷, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հանրային ծառայողների նկատմամբ չկիրառելու սկզբունքից անհրաժեշտ է անցում կատարել դեպի դրամասնակի կիրառելիության: Մասնավորապես, եթե հանրային ծառայողների համար ազգային օրենսդրությամբ երաշխավորված է դատարանի մատչելիության իրավունքը, ինչը նրանց թույլ է տալիս աշխատավարձի և նպաստների, ընդհուպ աշխատանքից ազատելու վերաբերյալ հայց հարուցել այն նույն հիմքերով, ինչ մասնավոր ոլորտի աշխատողը, ապա Կոնվենցիայի երաշխիքները տարածվում են նաև հանրային ծառայողների նկատմամբ:

Թեև վարչական պաշտոն զբաղեցնող անձի և վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի միջև հարաբերությունները բնութագրվում են վստահության և հավատարմության հատուկ հատկանիշներով, այդուհանդերձ պետությունը երաշխավորել է այլ աշխատողների հետ համահավասար հիմունքներով ծառայությունից ազատումը դատական կարգով վիճարկելու նրանց իրավունքը, որպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն պետք է ձեռնարկի միջոցներ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան այդ գործերի քննությունն իրականացնելու ուղղությամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ.

- անհատական իրավական ակտերի, մասնավորապես՝ աշխատանքից (հանրային ծառայությունից) ազատելու մասին հրամանի՝ օրենսդրական տեխնիկայի պահանջներին համահունչ ձևակերպումը և պատճառաբանվածությունը կարևոր են ոչ միայն դրանց օրինականությունն ապահովելու, այլ նաև աշխատողի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից.

- անհատական իրավական ակտի իրավական և փաստական հիմքերի բացակայությունը ոչ միայն խաթարում է աշխատանքային իրավահարաբերությունների կանխատեսելիությունը, այլ նաև դատական վերահսկողության իրականացմանը զրկում է բովանդակային կողմից՝ աշխատողի համար անհնարին դարձնելով իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, իսկ դատարանի համար՝ վերահսկողության իրականացումը:

Ամփոփագիր: Սույն գիտական աշխատանքում ուսումնասիրության առարկան պետական վարչական պաշտոնից առանց հիմնավորման ազատելու և պետական վարչական պաշտոնից ազատելու հետ կապված վեճերի դատական պաշտպանության արդյունավետության խնդիրն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների համատեքստում: Սույն աշխատանքում անդրադարձ է կատարվել հանրային ծառայությունից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտերի իրավական և փաստական հիմքերի պարտադիր նշման պահանջի և այդ հարաբերություններում պետական մարմինների կամ համապատասխան պաշտոնատար անձանց անսահմանափակ հայեցողության հարաբերակցությանը՝ հաշվի առնելով ինչպես ներպետական օրենսդրությունը, այնպես էլ միջազգային իրավական չափանիշները:

¹⁶ Տե՛ս, Pellegrin v. France գործով, գանգատ թիվ 28541/95, Եվրոպական դատարանի 08.12.1999 թվականի վճիռը:

¹⁷ Տե՛ս, Vilho ESKELINEN and Others v. Finland գործով, գանգատ թիվ 63235/00, Եվրոպական դատարանի 19.04.2007 թվականի վճիռը, Saghatelyan v. Armenia գործով, գանգատ թիվ 7984/06, Եվրոպական դատարանի 20.12.2015 թվականի վճիռը:

Հատուկ ուշադրության են արժանացել ՀՀ Սահմանադրական դատարանի 27.02.2024 թվականի թիվ ՍԴՈ-1716 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, առ այն, որ վարչական պաշտոնում նշանակման և վարչական պաշտոնից ազատելու հիմք դիտարկվում է իրավասու մարմնի անսահմանափակ հայեցողությունը: Մինչդեռ աշխատանքում փորձ է կատարվել հիմնավորել, որ նման մոտեցումը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իմպերատիվ պահանջներին և վտանգում է հանրային ծառայողների դատական պաշտպանության արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ վարչական պաշտոնից ազատելու վերաբերյալ վեճերում անհատական իրավական ակտի իրավական և փաստական հիմքերի համակցված և հստակ ձևակերպումն անհրաժեշտ նախապայման է ինչպես աշխատողի արդար դատաքննության իրավունքի ապահովման, այնպես էլ հանրային ծառայությունից ազատումը՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումներին համապատասխանելու համար:

Annotation. The subject of this scientific article is the issue of dismissal from a state administrative position without justification and the effectiveness of judicial protection of disputes related to dismissal from a state administrative position in the context of the amendments made to the RA Civil Procedure Code. This article addresses the requirement for mandatory indication of the legal and factual grounds of individual legal acts on dismissal from public service and the ratio of unlimited discretion of state bodies or relevant officials in these relations, taking into account both domestic legislation and international legal standards.

Special attention was paid to the positions expressed in the decision of the RA Constitutional Court No. SDO-1716 dated 27.02.2024, according to which the basis for appointment to an administrative position and dismissal from an administrative position is considered to be the unlimited discretion of the competent body. Meanwhile, an attempt was made in the work to substantiate that such an approach contradicts the imperative requirements provided for by the RA Civil Procedure Code and the RA Law “On Public Service” and jeopardizes the effectiveness of judicial protection of public servants.

Taking into account the above, we find that in disputes regarding dismissal from an administrative position, the combined and clear formulation of the legal and factual bases of an individual legal act is a necessary prerequisite for both ensuring the employee’s right to a fair trial and for dismissal from public service to comply with the regulations provided for in the RA Law “On Public Service”.

Аннотация. Предметом настоящей научной статьи является анализ проблемы увольнения с государственной административной должности без обоснований, а также оценка эффективности судебной защиты по спорам, связанным с таким увольнением, в контексте изменений, внесённых в Гражданский процессуальный кодекс Республики Армения. В статье рассматривается требование об обязательном обосновании отдельных индивидуальных правовых актов об увольнении с государственной службы, а также вопрос допустимости неограниченной дискреции государственных органов и (или) соответствующих должностных лиц в данных правоотношениях с учётом норм национального законодательства и международных правовых стандартов.

Особое внимание уделяется правовым позициям, выраженным в решении Конституционного суда Республики Армения № ССДО-1716 от 27.02.2024, согласно которым основанием для назначения на административную должность и увольнения с неё признаётся неограниченная свобода действий компетентного органа. В то же время в статье обосновывается, что подобный подход противоречит императивным требованиям, установленным Гражданским процессуальным кодексом РА и Законом РА «О публичной службе», а также ставит под угрозу эффективность судебной защиты публичных служащих.

Բանալի բառեր - վարչական պաշտոն, հանրային ծառայություն, անհատական իրավական ակտ, փաստական հիմք, դատական պաշտպանություն:

Keywords: administrative position, public service, individual legal act, factual basis, judicial protection.

Ключевые слова: административная должность, государственная служба, индивидуальный правовой акт, фактические основания, судебная защита.

Օգտագործված գրականության ցանկ

- 1) Ս. Մեդրյան, Տ. Մարկոսյան «Առանձին աշխատանքային վեճերով հատուկ հայցային վարույթը Հաստատանի քաղաքացիական դատավարությունում», դատական իշխանություն,
- 2) REPORT with recommendations to the Commission on a Law of Administrative Procedure of the European Union, Recommendation 4.8,
- 3) SETH C. TURNER “The assurance of impartiality: due process mechanisms and the development of global administrative law in international administrative tribunals”,
- 4) INGRID OPDEBEEK, STÉPHANIE DE SOMER “Duty to Give Reasons in the European Legal Area...: Mechanism for Transparent and Accountable Administrative Decision-Making? Comparison of Belgian, Dutch, French and EU Administrative Law”, ROCZNIK ADMINISTRACJI PUBLICZNEJ 2016 (2) Administracyjne prawo procesowe,
- 5) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանի 11.03.2020 թվականի «Սահմանադրական համաձայն պետական ծառայողի կարգավիճակից զրկումը վարչական ակտով թույլատրելի է» վերտառությամբ մամուլի հաղորդագրություն,
- 6) ՀՀ Սահմանադրական դատարանի 15.11.2019 թվականի թիվ ՍԴՈ-1488 որոշում,
- 7) Սաթենիկ Սարգսյանն ընդդեմ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի, թիվ ԵԴ/37531/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.02.2025 թվականի որոշումը:
- 8) Իվան Մարինոն ընդդեմ Լուսինե Մինասյանի, երրորդ անձ Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի, թիվ ԵԴ/32820/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 16.10.2023 թվականի որոշումը:
- 9) Կարո Միքայելյանն ընդդեմ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի, թիվ ԵԴ/30480/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.11.2024 թվականի որոշումը:
- 10) Արմինե Դավթյանն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, թիվ ԵԴ/35653/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 06.04.2023 թվականի որոշումը,
- 11) K.M.C. v. HUNGARY գործով, գանգատ թիվ 19554/11, Եվրոպական դատարանի 10.07.2012 թվականի վճիռը,
- 12) Pellegrin v. France գործով, գանգատ թիվ 28541/95, Եվրոպական դատարանի 08.12.1999 թվականի վճիռը,
- 13) Vilho ESKELINEN and Others v. Finland գործով, գանգատ թիվ 63235/00, Եվրոպական դատարանի 19.04.2007 թվականի վճիռը,
- 14) Saghatelyan v. Armenia գործով, գանգատ թիվ 7984/06, Եվրոպական դատարանի 20.12.2015 թվականի վճիռը,
- 15) Եվրոպական միության Եվրոպական քաղաքացիական ծառայության տրիբունալի թիվ F 1/05 գործով 26.10.2006 թվականի վճիռը:

Խոնդկարյան Հ. - ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, էլիասցե՝ henrik.khundkaryan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 30.01.2026 թ., տրվել է գրախոսության 30.01.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-107>

ԴԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
*Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

DIANA AVETISYAN
*Postgraduate student at the Department of Criminal Law and
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the
Russian-Armenian University*

ДИАНА АВЕТИСЯН
*Аспирант кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета
<https://orcid.org/0009-0008-8991-4832>*

**NULLUM CRIMEN SINE LEGE ՍԿՋԲՈՒՆՔՆ ԱՋԳԱՅԻՆ ԵՎ
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

**THE PRINCIPLE OF NULLUM CRIMEN SINE LEGE IN NATIONAL AND
INTERNATIONAL CRIMINAL LAW: COMPARATIVE LEGAL ANALYSIS
AND PROBLEMS OF IMPLEMENTATION**

**ПРИНЦИП *NULLUM CRIMEN SINE LEGE* В НАЦИОНАЛЬНОМ И
МЕЖДУНАРОДНОМ УГОЛОВНОМ ПРАВЕ: СРАВНИТЕЛЬНО-
ПРАВОВОЙ АНАЛИЗ И ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ**

*The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA
(Research project № 25YR-5E005).*

Ներածություն

Ինչպես ազգային քրեական օրենսդրության, այնպես էլ միջազգային քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը, որը քրեաիրավական համակարգի հիմքն է, օրինակա-

նության սկզբունքը: Այս սկզբունքն ունի երկու ասպեկտ՝ հետադարձ ուժի բացակայություն և օրենքի հստակություն, որոնք երկուսն էլ նպատակ ունեն ասպահովել օրենքի վերաբերյալ տեղեկատվության ողջամիտ տարածումը, որպեսզի մարդիկ կարողանան իմանալ՝ իրենց պլանավորված գործելակերպն ընդունելի է, թե ոչ¹:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածին՝ կարելի է նկատել, որ օրինականության սկզբունքը կազմված է երկու փոխկապակցված թեզերից՝ չկա հանցագործություն առանց օրենքի մեջ նշված լինելու (“Nullum crimen sine lege”) և չկա պատիժ առանց օրենքի մեջ նշված լինելու (“Nulla poena sine lege”): Առաջին թեզը ենթադրում է, որ հանրային վտանգավորություն ներկայացնող ցանկացած նոր արարքի ի հայտ գալը չի կարող քրեական պատասխանատվություն առաջացնել այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն ճանաչվել որպես հանցագործություն և իրենց արտացոլումը չեն գտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Երկրորդ թեզը, բնականաբար, բխում է առաջինից՝ ենթադրելով արարքի պատժելիության անհնարինությունը Քրեական օրենսգրքում դրա նախատեսված չլինելու դեպքում: Այս սկզբունքի հիմնական նպատակը քրեական օրենսդրության որոշակիությունն ու կանխատեսելիությունն ասպահովելն է, որի պայմաններում անձանց համար ակնհայտ են իրենց կատարած արարքների հետևանքները: Այս սկզբունքի բաղադրիչներն են՝ անալոգիայով քրեական օրենքի կիրառման արգելումը և հանցանք կատարած անձի իրավական վիճակը վատթարացնող քրեական օրենքին հետադարձ ուժ տալու արգելքը: Այլ կերպ ասած, քրեական պատասխանատվության հիմքը չի կարող լինել արտաքին նմանությունը կամ համընկնումն իրականում կատարված արարքի որոշ հատկանիշներով և քրեական օրենսգրքում ամրագրված այս կամ այն հանցակազմով: Այսպիսով, Սույն դրույթը պաշտպանում է անձին անհիմն քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Քրեական օրենսդրության մեջ մեծ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի հարցերի, ինչպիսիք են կանխատեսելիությունը և հետադարձ ուժի բացակայությունը, ինչպես նաև որոշ այլ հարցեր²:

ՀՀ Քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել:
2. Քրեական օրենքի Հատուկ մասի նորմերն անալոգիայով կիրառելն արգելվում է:
3. Քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անալոգիայով կիրառվել, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը:

Հիմնական հետազոտություն

Հետադարձ ուժի արգելքի սկզբունքի զարգացումը, որպես միջազգային սովորության իրավունքի նորմեր, կարելի է բնութագրել մի քանի եղանակով: Սա կարող է դիտվել որպես մարդու միջազգային իրավունքների ոլորտում նյութական իրավունքի փոփոխություն³, որպես

¹ Cryer R., Friman H., Robinson D., Wilmschurst E., An Introduction to International Criminal Law and Procedure. — 2nd ed. — Cambridge: Cambridge University Press, 2009. — P. 17.

² Arajärvi, Noora, Between Lex Lata and Lex Ferenda? Customary International (Criminal) Law and the Principle of Legality (February 5, 2011). Tilburg Law Review: Journal of International and European Law, Vol. 15, No. 2, pp. 163-183, 2011.

³ Milutinovic, Decision on Dragoljub Ojdanic’s Motion Challenging Jurisdiction: Joint Criminal Enterprise, para. 10 (to the effect that principle of legality is substantive rule of criminal law protecting the accused, and not a matter of personal jurisdiction).

հանցագործության սահմանման իրավասության սահմանափակում⁴, որպես ինքնիշխանության սահմանափակում⁵, կամ որպես այն, որ բոլոր երեք դեպքերում էլ հանցագործության սահմանման օրինական լիազորությունները, անշուշտ, ինքնիշխանության ավանդական հատկանիշ են: Օրինականության սկզբունքը հանդես է գալիս որպես դրա սահմանափակման միջոց:

Քրեական օրենքի հետադարձ ուժի հարցի վերաբերյալ պետք է նշել, որ Խ. Խարթը նշում է, որ «Դրանք պետք է լինեն հասկանալի և լինեն մարդկանց մեծամասնության հնարավորությունների սահմաններում՝ դրանք կատարելու և պահպանելու համար, և, ընդհանուր առմամբ, դրանք չպետք է հետադարձ ուժ ունենան, չնայած բացառիկ դեպքերում դրանք կարող են լինել: Դրանք կարող են լինել միայն այն դեպքում, եթե դրանք կարող են լինել: Հետադարձ ուժ ունեցող պատժի կիրառման դեպքը չպետք է նմանվի պատժի սովորական դեպքի այն անձի նկատմամբ, որն այդ պահին օրենքից դուրս է եղել: Համենայն դեպս, կարելի է պնդել, որ պարզ պոզիտիվիստական Դոկտրինը, որ բարոյապես անարդար կանոնները դեռ կարող են Օրենք լինել, չի թաքցնում ընտրություն չարիքների միջև, որոնք կարող են անհրաժեշտ լինել ծայրահեղ պայմաններում»⁶:

Հարթը նշում է, որ բացառիկ հանգամանքներում կարող է արդարացված լինել հետահայաց կանոնների ներդրումը: Տասնամյակներ շարունակ նացիստական Գերմանիայի վայրագությունները և դրան հաջորդած դատավարությունները Նյուրնբերգում ակնառու, աննախադեպ բացառություն էին միջազգային իրավունքում: Այնուամենայնիվ, նման ոճրագործության բացառիկությունը (չնայած ոչ այնքան) արժեզրկվեց, և միջազգային հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց նկատմամբ դատավարությունները հաճախակիացան: Այսպիսով, բացառիկ իրավիճակները, որոնցում Հարթը կարող է վերացնել հետադարձ օրենքների արգելքը և հետադարձ ուժ ունեցող պատժը, այլևս հազվադեպ չեն միջազգային իրավունքում, և դա հարց է առաջացնում, թե որքանով, եթե հնարավոր է, օրինականության սկզբունքները կարող են հաղթահարվել «մարդկության ընդհանուր բարիքի» համար Որոշումներ կայացնելիս կամ նույնիսկ «քաղաքական նկատառումներ»⁷:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային քրեական իրավունքի համատեքստում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը կապված է այնպիսի պահանջների հետ, ինչպիսիք են իրավական համակարգում «մատչելիությունն ու կանխատեսելիությունը»: Ազգային իրավական համակարգերի և քաղաքական ռեժիմների բազմազանությունը խիստ դժվարացնում է ընդհանուր միջազգային իրավունքի շրջանակներում օրինականության սկզբունքի լիարժեք իրականացումը: Այսօր ընդհանուր միջազգային իրավունքում օրինականության սկզբունքը երաշխավորում է պաշտպանություն պետության կամայականություններից, ինչպես նաև հանցագործություններ կատարած անձանց արդար քրեական հետապնդումը միայն ամենալուրջ հանցագործությունների շատ սահմանափակ շրջանակով: Արդիական է դառնում նոր մոտեցումների մշակումը, որոնք կարող են երաշխավորել օրինականության սկզբունքի իրականացումը միջազգային իրավունքում և միջազգային հարաբերություններում

⁴ *Milutinovic*, Decision on Dragoljub Ojdanic’s Motion Challenging Jurisdiction: Joint Criminal Enterprise, paras. 9, 10 (to effect that retroactive creation of crime would exceed ICTY’s subject matter jurisdiction).

⁵ Compare Nuremberg Judgment 1 IMT TRIAL at 219, discussed in Introduction.

⁶ *Herbert L.A Hart*, The Concept of Law, at 202 and 207, italics added.

⁷ *Arajärvi, Noora*, Between Lex Lata and Lex Ferenda? Customary International (Criminal) Law and the Principle of Legality (February 5, 2011). *Tilburg Law Review: Journal of International and European Law*, Vol. 15, No. 2, pp. 163-183, 2011.

հարցերի ավելի լայն շրջանակում⁸:

Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ nullum crimen sine lege-ի ընդհանուր տարբերակը կարող է վերաձվել միջազգային սովորության իրավունքի, քանի որ Միջազգային քրեական օրենսդրությունը հասնում է համախմբման փուլ: Այնուամենայնիվ, բարդ երկրնորանքները, ինչպիսիք են անցումային արդարադատության իրավիճակներում հանդիպածները, դժվար թե վերանան տեսանելի ապագայում: Չի կարելի բացառել նաև այն հնարավորությունը, որ ինչ-որ պահի միջազգային հանրությունը բախվի նոր տեսակի դաժանությունների, ինչը կստեղծի ևս մեկ բացառիկ խնդիր՝ ըստ էության արդարադատություն ապահովելու համար: Ներկայիս իրադարձությունների լույսի ներքո քիչ հավանական է, որ ապագա Միջազգային քրեական տրիբունալը ընտրի Նյուրնբերգում ընդունված մոտեցումը և թույլ տա, որ արդարադատության Դոկտրինը, ըստ էության, բացահայտորեն գերակշռի օրինականության գաղափարին: Շատ ավելի քիչ ակնհայտ է, թե արդյոք դատավորները նույնպես ձեռնպահ կմնան օրինականության սկզբունքի պահանջների ընդլայնումից՝ ստեղծելով «ստեղծագործական նախադեպեր» (սովորական) Միջազգային քրեական իրավունքի զարգացման համար:⁹

Հիմնական միջազգային հանցագործությունների գործերով ազգային քրեական օրենսդրության հետադարձ կիրառման հարցը առաջին անգամ բարձրացվել է «Տուվեն ընդդեմ Ֆրանսիայի» և «Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործերով: Առաջին դեպքում դիմումատուն հանցագործությունների կատարման պահին ոստիկանության սպա էր, հատուկ ռազմական կազմավորում, որը ստեղծվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆրանսիական Դիմադրության և Վիշիի կառավարության այլ թշնամիների դեմ պայքարելու համար: Տուվինն առաջին անգամ արբենտիայում դատարանի առաջ է կանգնել երկու անգամ՝ 1946 և 1947 թվականներին՝ Լիոնի շրջանում աշխարհագրայինների կողմից կատարված սպանություններին մասնակցելու համար: Ավելի ուշ՝ 1973 թվականին, Ռիլյա Լա Պապում գնդակահարության զոհերից մեկի որդին դիմում է ներկայացրել մարդկության դեմ հանցագործությունների հետ կապված քրեական գործ հարուցելու մասին: Վերջին դեպքում դիմումատուն պատերազմի ժամանակ Ժիրոնդ պրեֆեկտուրայի գլխավոր քարտուղարն էր: 1981 թ. - ին դիմումատուի դեմ քրեական գործ հարուցվեց, ինչպես նաև քաղաքացիական հայց՝ մարդկության դեմ հանցագործությունների, սպանության օժանդակության և լիազորությունների չարաշահման վերաբերյալ՝ ութ մարդու Օսվենցիմ արտաքսելու համար, որտեղ նրանք սպանվեցին: Վեց այլ քրեական գործ հարուցվեց 1982 թվականին արտաքսման 17 զոհերի նկատմամբ (18): Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ անձինք դատապարտվել են այն արարքների համար, որոնք իրենց պնդմամբ հանցավոր չեն դրանք կատարելու պահին: Այս կապակցությամբ դատարանը հիշեցրել է, որ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի 2-րդ կետում ուղղակիորեն ասվում է, որ այդ դրույթը չպետք է «խոչընդոտի անձի դատաքննությանը եւ պատժին ցանկացած գործողության կամ անգործության համար, որը դրա կատարման պահին հանցավոր է եղել քաղաքակիրթ երկրների կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան»: Սա վերաբերում է մարդկության դեմ ուղղված հանցագործություններին, որոնց նկատմամբ Դատարանը նաև հիշեցրել է Նյուրնբերգյան կանոնադրությամբ սահմանված վաղեմության ժամկետների չկիրառման կանոնի մասին:

Դատարանը քննեց այն հարցը, թե արդյոք դիմումատուները պետք է գիտակցեն, որ

⁸ Souza Dias T., de. Accessibility and foreseeability in the application of the principle of legality under general international law: A time for revision? // Human rights review. - Oxford, 2019. - N 19. - P. 649-674.

⁹ Max Planck Claus Kress Nulla poena nullum crimen sine lege Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg and Oxford University Press. P. 8.

իրենց գործողությունները մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են, և եզրակացրեց, որ, ինչպես նշված է Նյուրնբերգի կանոնադրության մեջ, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար ժամանակային սահմանափակումներ չկան՝ անկախ դրանց կատարման ամսաթվից և արդյոք դրանք կատարվել են պատերազմի ընթացքում կամ այլ ժամանակահատվածներում¹⁰: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ Նյուրնբերգի տրիբունալը ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ սարսափելի հանցագործություններ կատարած անձանց դատավարության համար, Նյուրնբերգի կանոնադրությունը հստակ նշում է, որ տրիբունալն իրավասու է մարդկության դեմ հանցագործությունների համար, որոնք կատարվել են մինչև 1939 թվականը¹¹: Ավելին, «մարդկության դեմ հանցագործություններին վերաբերող սկզբունքների համընդհանուր նշանակությունը» հետագայում հաստատվեց, մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 95 բանաձեռով, որն ընդունվել է 1946 թվականի դեկտեմբերի 11-ին¹²:

Հայտարարություններն այն մասին, որ միջազգային հանցագործությունների համար քրեական հետապնդումը խախտել է այդ սկզբունքը, ի հայտ են եկել դեռ ՄՊԳՊ-ի ընդունումից առաջ: Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալները բախվել են այն պնդումներին, որ աշխարհի դեմ հանցավոր գործողությունների համար հետապնդումը ենթադրում է nullum crimen սկզբունքի խախտում: Նյուրնբերգի միջազգային տրիբունալը, որի հետ համաձայնեց Տոկիոյի միջազգային տրիբունալը, ի պատասխան հայտարարեց, որ խաղաղության դեմ ուղղված հանցագործություններն արդեն քրեականացված են միջազգային իրավունքով, և որ, ամեն դեպքում, Nullum crimen sine lege սկզբունքը ինքնիշխանության սահմանափակում չէ, այլ ընդհանուր առմամբ արդարության սկզբունք է:

Nullum crimen sine lege («ոչ մի հանցագործություն առանց օրենքի») սկզբունքը ներկայացնում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային քրեական իրավունքի հիմնաքարը: Դրա հիմնական նպատակը իրավական որոշակիության ապահովումն է, մարդու իրավունքների պաշտպանությունը եւ կամայական քրեական հետապնդումը կանխելը: Այս սկզբունքը սահմանում է, որ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել բացառապես այն արարքի համար, որը ճանաչվել է հանցավոր օրենքով, որը գործում է դրա կատարման պահին. Այսպիսով, այն ծառայում է որպես իրավապահ պրակտիկայում օրինականության պահպանման կարևորագույն երաշխիք:

Ժամանակակից քրեաիրավական տարածքում նկատվում է ազգային և միջազգային իրավական ստանդարտների ներդաշնակեցման միտում, ինչը հատկապես արդիական է քրեական օրենսդրության բարեփոխման գործընթացում գտնվող երկրների համար: Հայաստանի Հանրապետությունը, ընդունելով նոր քրեական օրենսգիրքը, ձգտում է իր իրավական մեխանիզմները համապատասխանեցնել միջազգային պայմանագրերին, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը, մասնակցությունից բխող միջազգային նորմերին և պարտավորություններին:

Օրինականության սկզբունքի փարբերակիչ հատկանիշների բացահայտումը Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքում

Միջազգային իրավական հիմնարար ակտերը, ինչպիսիք են 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թ. քաղաքացիական և քաղաքական իրավունքների

¹⁰ Ibid., p. 9; Penart v Estonia (dec.), No 14685/04, p. 9, 24 January 2006.

¹¹ Article 6(c) of the Nuremberg Charter.

¹² UNGA Res 95 (I) (11 December 1946) UN Doc A/RES/1/95; Kolk and Kislyiy v Estonia (dec.), Nos 23052/04 and 24018/04, p. 8–9, ECHR 2006-I.; Penart v Estonia (dec.), No 14685/04, p. 9, 24 January 2006.

մասին միջազգային դաշնագիրը, Հռոմի կանոնադրությունը, 1998 թ. Միջազգային քրեական դատարանը և այլն, պարունակում են միջազգային իրավական սկզբունքներ, որոնք, այսպես ասած, ներքին քրեական իրավունքի համար կազմում են «իրավական ճարտարապետությունը»:

Դրանք ներառում են՝

- ✓ օրինականություն (nullum crimen, nulla poena, sine lege),
- ✓ մեղքը՝ որպես պատասխանատվության պայման,
- ✓ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու արգելք (non bis in idem) ,
- ✓ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելում (մարդասիրության սկզբունք):

Օրինականության սկզբունքի օրենսդրական նոր ձևակերպումն ունի և թերություններ և առավելություններ: Այսպիսով, օրենսդիրը չի արձանագրել այն դրույթը, որ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը որոշվում են միայն քրեական օրենքով: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլուխը նվիրված է անվտանգության միջոցներին և գույքի բռնագանձմանը (այսպես կոչված քրեաիրավական ներգործության միջոցներ): Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածից չի բխում, որ նման միջոցներ կարող են սահմանվել միայն քրեական օրենքով: Տվյալ հարցն իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի «Հանցակազմ կամ պատիժ կամ քրեաիրավական ներգործության միջոց նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն սույն օրենսգրքում ընդգրկվելուց հետո»:

Միևնույն ժամանակ, պարզ չէ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի ձևակերպումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է նաև Հայաստանի Հանրապետության իրավական այն ակտերից, որոնք քրեաիրավական նորմեր են պարունակում կամ նշանակություն ունեն քրեական օրենքը կիրառելու համար: Սակայն անհասկանալի է, թե ինչ դեպքերի մասին է խոսքը և օրինականության տեսանկյունից այլ նորմատիվ իրավական ակտերը որքանով կարող են պարունակել քրեաիրավական նորմեր, ինչպես, օրինակ, շատ եվրոպական երկրներում: Խոսքը ամենևին էլ բլանկետային նորմերի մասին չէ, քանի որ նույն հոդվածում ճիշտ նշվում է, որ այլ նորմատիվ ակտերի հաշվառումն անհրաժեշտ է, եթե դրանք կարևոր են քրեական օրենքի կիրառման համար (խոսքը գնում է բլանկետային դիսպոզիցիաներով հանցագործությունների մասին):

ՀՀ նոր քրեական օրենսգրքի արժանիքներից մեկը քրեական իրավունքում մասնակի անալոգիայի կիրառման թույլատրելիության մասին դրույթի ամրագրումն է: Շատ պետությունների քրեական օրենսգրքում (Դանիա, ԿժԴՀ, Իսլանդիա, Պանամա) ամրագրված են նմանատիպ դրույթներ:

Քրեական իրավունքի գրականության ուսումնասիրության հիման վրա օրինականության սկզբունքի բովանդակությունից կարելի է առանձնացնել դրա հետևյալ հիմնական բնութագրերը՝

- 1) Միջազգային քրեական իրավունքի գերակայությունը ազգային իրավունքի նկատմամբ,
- 2) Քրեական օրենքի ենթակայությունը, այսինքն՝ Սահմանադրության նորմերի գերակայությունը քրեական օրենսգրքի դրույթների նկատմամբ,
- 3) Քրեական գործերի լուծման ժամանակ քրեական օրենքի միատեսակ մեկնաբանումը և կիրառումը,
- 4) Հանցագործության և արարքի պատժելիության որոշումը միայն քրեական օրենքով,

5) Քրեական օրենքի Հատուկ մասի նորմերի անալոգիայի կիրառման անհնարինությունը,

6) Քրեական պատժի սահմանումը միայն օրենքով որոշված սահմաններում,

7) Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը միայն քրեական օրենքով նախատեսված հիմքերով,

8) Քրեական իրավունքի նորմերի կիրառման դեպքում դատական հայեցողության սահմանների հավասարակշռումը քրեական օրենքով,

9) Կոնկրետ հանցագործությունների հատկանիշների ճշգրիտ ձևակերպում (իրավական որոշակիություն) ,

10) Անձի վիճակը ծանրացնող քրեական օրենքի հետադարձ ուժի արգելումը,

11) Քրեաիրավական նորմերի մեկնաբանման և կիրառման ժամանակ օրենսդրական կարգադրությունների հաշվառում՝ ձևաթղթային դիսպոզիցիաներով և այլն:

Օրինականության քրեական սկզբունքը քրեական իրավունքի և քրեական օրենսդրության մեջ հավասարության, արդարության, մեղքի և մարդասիրության սոցիալ-իրավական և հոգևոր և բարոյական գաղափարների արտահայտման հատուկ ձև է¹³:

Օրինականության սկզբունքը Մի կողմից քրեական օրենսդրության սկզբունքն է, իսկ մյուս կողմից՝ քրեական պատասխանատվության սկզբունքը: Առաջին ասպեկտը անմիջականորեն կապված է միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների լիարժեք և ճշգրիտ համապատասխանության ապահովման, քրեական օրենսգրքը, որպես իր իրավական համակարգի տարր, Սահմանադրության և այլ նորմատիվ ակտերի ճանաչման հետ:

Որպես քրեական պատասխանատվության սկզբունք նրա գործունեության ոլորտը կապված է միայն անձի շահերի պաշտպանության հետ, քանի որ քրեական պատասխանատվության ենթակա են միայն ֆիզիկական անձինք, իսկ ինչ վերաբերում է ՀՀ նոր քրեական օրենսգրքով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը, ապա օրենքում իրավաբանական անձանց նկատմամբ քրեական օրենքի կիրառման սկզբունքների վերաբերյալ ոչինչ չի նշվում:

Օրինականության սկզբունքի խախտումները կարելի է բացահայտել նաև քրեական պատասխանատվությունից և պատժից ազատման նորմերի կիրառման դեպքում: Այսպիսով, մի շարք հեղինակներ արդարացիորեն առաջարկում են քրեական օրենսգրքում ամրագրել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր դեպքերը՝ պատճառաբանելով, որ «...կարող է ազատվել» արտահայտությունը հանգեցրել է բացասական պրակտիկայի, որը հաճախ մնում է իրավակիրառի, այդ թվում՝ դատարանի սուբյեկտիվ հայեցողությանը: Խրախուսական նորմերի հստակեցումն ու կատարելագործումն անմիջականորեն կապված են քրեական օրենքի բոլոր սկզբունքների, իսկ օրինականությունը՝ հատկապես¹⁴:

Հատկանշական է, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը կրում է իմպերատիվ բնույթ:

Օրինականության սկզբունքի իրականացումը ներառում է բացերի և իրավական կոլիզիաների հաղթահարում, հանցակազմի հատկանիշների հստակեցում. գնահատողական հատկանիշների հստակեցում, օրենքում հանցագործությունների որակման ընդհանուր և հա-

¹³ Каныбриков В.А., Принцип законности в уголовном праве России: теоретические и правоприменительные проблемы: автореф. дис. ... канд. юрид. наук: Волгоград, 2011. С. 4.

¹⁴ Саргсян А.А., Деятельное раскаяние как основание освобождения от уголовной ответственности по законодательству Армении и России // Союз криминалистов и криминологов, № 1, 2020. С. 66.

տուկ կանոնների սահմանում, քրեական օրենքի նորմերի կիրառման ընթացքում դատական հայեցողության առավելագույն նեղացում և այլն:

Վերոգրյալի հիման վրա առաջարկվում են հետևյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները՝

1) Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Օրինականության սկզբունքի բովանդակությունը ձևավորում են հավասարության, մեղքի, արդարության, մարդասիրության և քրեական պատասխանատվության սոցիալ-իրավական գաղափարները, որոնք արտահայտված են Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված միջազգային քրեական իրավունքի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենսգրքի սկզբունքներով և նորմերով»:

2) ՀՀ քրեական օրենսգրքում առաջարկվում է ամրագրել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, քրեական օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու պարտադիր դեպքերը (հիմքերը) սահմանող նորմերը:

Ինչ վերաբերում է քրեական օրենսդրության բլանեկատային նորմերին, ապա անհրաժեշտ է անդրադառնալ մի շարք գնահատողական հասկացությունների առկայությանը, որոնք չունեն սահմանումներ քրեական օրենսդրության մեջ: Մասնավորապես, ՀՀ ՔՕ 355-րդ հոդվածը (Շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելը) պարունակում է «այլ աշխատանքների» ցուցում, միևնույն ժամանակ, այլ աշխատանքների ցուցակ նախատեսված չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառը, հաստատելով որոշակի աշխատանքի խիստ վտանգավոր բնույթը, որի իրականացման կարգը կարգավորվում է համապատասխան ակտերով, իրականում կիրառում է անալոգիա:

2. Օրինականության սկզբունքի պահպանման (իրացման) Հայաստանի Հանրապետության փորձը

Օրինականության սկզբունքը կարևոր է ինչպես սոցիալապես վտանգավոր արարքների քրեականացման, հանցակազմերի ձևավորման, այնպես էլ կոնկրետ քրեական գործերով դրանց մեկնաբանման և կիրառման գործընթացում:

Հայաստանի իրավակիրառ պրակտիկայում, ցավոք, եղել են քրեական օրենքի նորմերի անալոգիայով քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքեր: Այսպես, 2000-ականների կեսերին Եհովայի վկաները իրենց աշխատանքային, քաղաքացիական պարտականությունները կատարելուց խուսափելու համար պատասխանատվության են ենթարկվել (անալոգիայով) զինվորական հանցագործությունների համար (զորամասն ինքնակամ լքելը, դասալքությունը և այլն): Այդ պահի դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքում բացակայում էին քրեականացված արարքներ, որոնք նախատեսում են տվյալ կատեգորիայի անձանց պատասխանատվությունն իրենց աշխատանքային պարտականություններից խուսափելու համար: Սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատեց կոնվենցիոն նորմերի խախտում, և ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռների վերանայման արդյունքում տվյալ անձինք արդարացվել են: Նշվածից հետո այդ արարքները նախատեսվել են ՀՀ քրեական օրենսգրքում:

Հաջորդը բերենք ՀՀ ուժը կորցրած քրեական օրենսգրքի 300-1-րդ հոդվածի՝ Սահմանադրական կարգը տապալելը հակասահմանադրականության օրինակ: ՀՀ Սահմանադրա-

կան դատարանը, ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի բողոքի հիման վրա քննելով ՀՀ քրեական օրենսգրքի 300-1-րդ հոդվածի (Սահմանադրական կարգը տապալելը) սահմանադրականությունը, այդ նորմը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր՝ բերելով հետեւյալ հիմնական փաստարկները.

ՀՀ քրեական օրենսգրքի 300-1-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական կարգը տապալելը, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 1-5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմի փաստացի ոչնչացումը, որն արտահայտվում է իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով: Այս հոդվածը վերաբերում է համաչափության սկզբունքին և իրավական որոշակիությանը:

Դատարանն արձանագրել է, որ ոչ ոք չի կարող երկու անգամ դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Սահմանադրական դատարանը հոդվածի դիսպոզիցիայում թվարկված գնահատողական մի շարք տերմինների պարզաբանման նպատակով դիմել է Վենետիկի հանձնաժողով եւ մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հաշվի առնելով տվյալ մարմինների իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ քրեական օրենսգրքի 300-1-րդ հոդվածները հակասում են Սահմանադրության 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին¹⁵: Դրանով արձանագրվել է, որ 2008 թվականի մարտի դեպքերից հետո սույն հոդվածի քրեականացումը հանգեցրել է օրինականության սկզբունքի խախտման:

Եզրակացություն

Իրականացված հետազոտության արդյունքում հաջողվել է բացահայտել օրինականության սկզբունքի (Nullum crimen sine lege) իրացման հիմնական առանձնահատկություններն ինչպես Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունում, այնպես էլ միջազգային քրեական իրավունքում: Այս սկզբունքը հիմնարար նշանակություն է պահպանում քրեական պատասխանատվության արդար և իրավական համակարգի կառուցման համար՝ ապահովելով իրավական որոշակիություն, կանխատեսելիություն և պաշտպանություն պետության կողմից կամայականություններից: ՀՀ նոր Քրեական օրենսգրքի վերլուծությունը ցույց է տվել, որ ազգային օրենսդիրը հետևողական քայլեր է ձեռնարկում ժամանակակից իրավական չափանիշներին համապատասխանող օրինականության սկզբունքի ներդրման և նորմատիվային ամրապնդման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում հանցագործությունների ձևակերպմանը, պատժամիջոցների իրավական որոշակիությանը և քրեական օրենքի գործողության ժամանակային սահմաններին:

Հռոմեական կանոնադրության դրույթների, միջազգային քրեական դատարանի պրակտիկայի, ինչպես նաև այլ միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հաստատել nullum crimen sine lege սկզբունքի համընդհանուր բնույթը և դրա կարևորությունը միջազգային քրեական պատասխանատվության կարգավորման գործում: Միջազգային իրավասության մեջ այս սկզբունքը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և օրինականության պահպանման կարևոր երաշխիք միջազգային բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերը քննելիս:

Հայաստանում իրավակիրառ պրակտիկան վկայում է նշված սկզբունքի պահպանման

¹⁵ Постановление Конституционного суда Республики Армения по делу Роберта Кочаряна от 26 марта 2021 года. ՍԴՌ-1586.

դրական միտումների առկայության մասին, սակայն առկա են նաև որոշակի մարտահրավերներ՝ բացերի իրավական կարգավորման, նորմերի մեկնաբանման և դրանց կիրառման նկատմամբ դատական վերահսկողության ուժեղացման անհրաժեշտության հետ: Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում ազգային օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային չափանիշներին և դրանց համապատասխան դատական պրակտիկայի զարգացումը:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է օրինականության սկզբունքի (*Nullum crimen sine lege*) վերլուծությանը՝ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության մեջ դրա ամրագրման և ՄՔԴ Հռոմի կանոնադրության դրույթներին համապատասխանության համատեքստում: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել նշված սկզբունքի տարբերակիչ առանձնահատկությունները և դրա կիրառման առանձնահատկությունները իրավական կարգավորման երկու մակարդակներում: Քննարկվում են Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքի դրույթները, որոնք արտացոլում են քրեական իրավունքում օրինականության ապահովման ժամանակակից մոտեցումները, ինչպես նաև Հռոմի կանոնադրության և Միջազգային քրեական դատարանի գործունեության շրջանակներում *Nullum crimen sine lege* սկզբունքի նշանակությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանում իրավակիրառ պրակտիկայի վերլուծությանը, որն ուղղված է քրեական պատասխանատվության ենթարկելի օրինականության սկզբունքի պահպանմանը և իրավական որոշակիության ապահովմանը: Իրականացված համեմատական-իրավական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել ինչպես ազգային մոտեցման առանձնահատկությունները, այնպես էլ միջազգային չափանիշներին համապատասխանության աստիճանը:

Annotation. The article is devoted to the analysis of the principle of legality (*Nullum crimen sine lege*) in the context of its consolidation in the national legislation of the Republic of Armenia and compliance with the provisions of the Rome Statute of the ICC. The purpose of the study is to identify the distinctive features of this principle and the specifics of its application at two levels of legal regulation. The provisions of the new Criminal Code of the Republic of Armenia reflecting modern approaches to ensuring legality in criminal law are discussed. Special attention is paid to the analysis of law enforcement practice in Armenia, aimed at observing the principle of legality and ensuring legal certainty when bringing to criminal responsibility. The comparative legal analysis makes it possible to identify both the features of the national approach and the degree of compliance with international standards.

Аннотация. Статья посвящена анализу принципа законности (*Nullum crimen sine lege*) в контексте его закрепления в национальном законодательстве Республики Армения и соответствия положениям Римского статута МУС. Целью исследования является выявление отличительных особенностей указанного принципа и особенностей его применения на двух уровнях правового регулирования. Анализируются положения нового Уголовного кодекса Республики Армения, отражающие современные подходы к обеспечению законности в уголовном праве, особое внимание уделяется анализу правоприменительной практики в Армении, направленной на соблюдение принципа законности и обеспечение правовой определенности при привлечении к уголовной ответственности. Проведенный сравнительно-правовой анализ позволяет выявить как особенности национального подхода, так и степень его соответствия международным стандартам.

Բանալի բառեր – *Nullum crimen sine lege, օրինականության սկզբունք, Միջազգային քրեական իրավունք, Հռոմի կանոնադրություն, Միջազգային քրեական դատարան:*

Keywords: *Nullum crimen sine lege, the principle of legality, international criminal law, the Rome Statute, and the International Criminal Court.*

Ключевые слова: *Nullum crimen sine lege, принцип законности, международное уголовное право, Римский статут, Международный уголовный суд.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Cryer R., Friman H., Robinson D., Wilmschurst E. An Introduction to International Criminal Law and Procedure. — 2nd ed. — Cambridge: Cambridge University Press, 2009. — P. 17.
2. Arajärvi, Noora, Between Lex Lata and Lex Ferenda? Customary International (Criminal) Law and the Principle of Legality (February 5, 2011). Tilburg Law Review: Journal of International and European Law, Vol. 15, No. 2, pp. 163-183, 2011.
3. Milutinovic, Decision on Dragoljub Ojdanic’s Motion Challenging Jurisdiction: Joint Criminal Enterprise, para. 10 (to the effect that principle of legality is substantive rule of criminal law protecting the accused, and not a matter of personal jurisdiction).
4. Compare Nuremberg Judgment 1 IMT TRIAL at 219, discussed in Introduction
5. Herbert L.A Hart, The Concept of Law, at 202 and 207, italics added.
6. Souza Dias T., de. Accessibility and foreseeability in the application of the principle of legality under general international law: A time for revision? // Human rights review. - Oxford, 2019. - N 19. - P. 649-674.
7. Max Planck Claus Kreß Nulla poena nullum crimen sine lege Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg and Oxford University Press. P. 8.
8. Ibid., p. 9; Penart v Estonia (dec.), No 14685/04, p. 9, 24 January 2006.
9. Article 6(c) of the Nuremberg Charter.
10. UNGA Res 95 (I) (11 December 1946) UN Doc A/RES/1/95; Kolk and Kislyiy v Estonia (dec.), Nos 23052/04 and 24018/04, p. 8–9, ECHR 2006-I.; Penart v Estonia (dec.), No 14685/04, p. 9, 24 January 2006
11. Канубриков В.А. Принцип законности в уголовном праве России: теоретические и правоприменительные проблемы: автореф. дис. ... канд. юрид. наук: Волгоград, 2011. С. 4.
12. Саргсян А.А. Деятельное раскаяние как основание освобождения от уголовной ответственности по законодательству Армении и России // Союз криминалистов и криминологов, № 1, 2020. С. 66.
13. Постановление Конституционного суда Республики Армения по делу Роберта Кочаряна от 26 марта 2021 года. ՍԴՈ-1586.

Ավետիսյան Դ. - Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլիասցե՝ dianka.avetisyan.2001@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 17.09.2025 թ., տրվել է գրախոսության 17.09.2025 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Ռուս-Հայկական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-118>

ԱԼԻՍԱ ԱՄԻՐԻԽԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ALISA AMIRKHANYAN

Senior Prosecutor at the Department of Organizational, Supervisory and Legal Support Affairs of the Prosecutor General's Office of the Republic of Armenia
Applicant at the Chair of Criminal Law of Yerevan State University

АЛИСА АМИРХАНИЯН

Старший прокурор Управления организационно-контрольного и правового обеспечения Генеральной прокуратуры Республики Армения, соискатель кафедры уголовного права Ереванского государственного университета
<https://orcid.org/0009-0003-7169-9701>

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՄԱՆ ՀԱՆՑԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ՝ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ

THE SUBJECT OF THE CRIME OF ILLICIT ENRICHMENT ACCORDING TO THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA AND INTERNATIONAL EXPERIENCE

СУБЪЕКТ ПРЕСТУПЛЕНИЯ НЕЗАКОННОГО ОБОГАЩЕНИЯ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И МЕЖДУНАРОДНОМУ ОПЫТУ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հոչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նմանաբնույթ պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթությունում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների վերլուծությունը:

Ըստ այդմ՝ հոդվածում փորձ է արվել քննարկման առարկա դարձնել ապօրինի հարստաց-

ման սուբյեկտին՝ ըստ ներպետական օրենսդրության, ինչպես նաև միջազգային փորձի: Հոդվածում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել խնդրո առարկային առնչվող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին (ինչպես արարքի քրեականացման պահին գործող, այնպես էլ ներկայում գործող), 2019 թվականի ապրիլի 16-ին կայացրած ՍԴՈ-1453 որոշմամբ ձևակերպված իրավական դիրքորոշումներին, ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման առումով ուղենիշային համարվող միջազգային-իրավական փաստաթղթերին, ինչպես նաև շուրջ երկու տասնյակ օտարերկրյա պետությունների ներպետական օրենսդրական կարգավորումներին:

Հիմնական հետազոտություն

Ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտը՝ ըստ ՀՀ օրենսդրության և միջազգային փորձի

Քրեական իրավունքի գիտության մեջ համընդհանուր ճանաչում ստացած ամենաընդհանրական ձևակերպման համաձայն՝ հանցանքի սուբյեկտը հանցանք կատարած անձն է:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը:*

Հանցագործության սուբյեկտի հիշյալ սահմանումից կարելի է բխեցնել հանցագործության սուբյեկտի հիմնական հատկանիշները՝ մեղսունակությունը, ֆիզիկական անձ լինելը, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթակա լինելու օրենքով նախատեսված տարիքին հասած լինելը: Ինչ վերաբերում է իրավաբանական անձին, ապա ՀՀ քրեական օրենսգրքում այն նախատեսված է ոչ թե որպես հանցագործության սուբյեկտ, այլ քրեական պատասխանատվության սուբյեկտ:

Բացի վերոնշյալ հիմնական հատկանիշներից, որոնք պարտադիր են հանցագործության սուբյեկտի համար, վերջինս կարող է օժտված լինել նաև հանցագործության հատուկ սուբյեկտին բնորոշ լրացուցիչ հատկանիշներով: Հատկանշական է, որ, ի տարբերություն 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքը 20-րդ հոդվածում սահմանում է հանցագործության հատուկ սուբյեկտին և նախատեսում վերջինիս կողմից կատարված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հանցագործության հատուկ սուբյեկտը հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է սույն օրենսգրքի Հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան քրեական պատասխանատվության ենթարկելու սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված համապատասխան հանցագործության համար:

Ապօրինի հարստացման հանցակազմի դիսպոզիցիայի վերլուծությունից ակնհայտ է, որ հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը:** Սա նշանակում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը ձևակերպված է բլանկետային դիսպոզիցիայի միջոցով, և յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողը հիշյալ հանցակազմի սուբյեկտի առկայության կամ բացակայության հարցը լուծելիս պետք է ուսումնասիրի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առարկա դարձնելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1 (ապօրինի հարստանալը) և 314.3 (Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը) հոդվածներով նախատեսված հանցագործությունների սուբյեկտին առնչվող որոշ հարցադրումներ, 2019 թվականի ապրիլի 16-ին կայացրած ՍԴՈ-1453 որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «թե՛ Օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին, թե՛ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերը նախատեսում են հատուկ սուբյեկտ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող կամ հայտարարատու պաշտոնատար անձ:

Այս հանցակազմերի մեկնաբանությունից հետևում է, որ վերջիններս ձևակերպված են բլանկետային դիսպոզիցիայով, այսինքն՝ այդ հանցակազմերի որոշ տարրեր, այդ թվում՝ սուբյեկտային կազմը, կարող են որոշվել դրանցում նշված՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթների վերլուծության ու կոնկրետ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանող դրույթին հղում կատարելու միջոցով, քանի որ Օրենսգրքը չի բացահայտում, թե՛ ո՞վ է հայտարարագիր ներկայացնող կամ հայտարարատու պաշտոնատար անձը, և ուղղակիորեն հղում է անում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին»:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածն ուղղակի հղում չի պարունակում «Հանրային ծառայության մասին» օրենքին, ինչպես նախկին օրենսգրքի 310.1 հոդվածում էր նախատեսվում, այդուհանդերձ, «ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող» ձևակերպումից ինքնին պարզ է, որ խոսքը հանրային ծառայության մասին օրենսդրությանը, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքին է վերաբերում:

Այսպես՝ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 9-ից գործող (որոշ բացառություններով) «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձինք են՝ **պետական պաշտոն զբաղեցնող անձինք, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք, հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, ոստիկանության, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք:**

Նույն հոդվածի 1.1 մասի համաձայն՝ օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են համարվում նաև **պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակեր-**

պության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր:

Հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

Հատկանշական է, որ ապօրինի հարստացման քրեականացման պահին գործող «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի համեմատ՝ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքը նախատեսում է հայտարարագրման սուբյեկտների շատ ավելի լայն շրջանակ: Ընդ որում, այդ շրջանակը Օրենքի 34-րդ հոդվածում կատարված լրացումներով, անընդհատ ընդլայնվել է: Նման մոտեցումը գտնում ենք՝ համահունչ է կոռուպցիայի դեմ պայքարի ներկայիս առաջնահերթություններին, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների մոտեցումներին¹, և վերացնում է նախկինում ստեղծված այն իրավիճակը, երբ կոռուպցիոն հավասար կամ առավել բարձր ռիսկայնություն ունեցող այս կամ այն պաշտոնատար անձը դուրս էր մնում գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակից:

Համեմատական վերլուծության ենթարկելով Օրենքի՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի հայտարարատու պաշտոնատար անձանց² հետ՝ պարզ է դառնում, որ ընդլայնվել է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկը՝ դրանում, ի թիվս այլ սուբյեկտների, ընդգրկելով նաև հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց շատ ավելի լայն շրջանակ³: Այսպես՝ Օրենքի համաձայն՝ հայտարարագրման պարտականություն ունեն Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, ռեֆերենտները, Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի և օգնականի, Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, նախարարների, Ազգային ժողովի նախագահի տեղակալների, գլխավոր դատախազի, Կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմինների ղեկավարների, անկախ պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի նախագահների, մարզպետի խորհրդականի, օգնականի, գլխավոր դատախազի, նախարարի մամուլի քարտուղարի, նախարարությանը ենթակա պետական մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարի պաշտոնները զբաղեցնող անձինք և այլն:

Օրենքում հայտարարագրման սուբյեկտների շրջանակի ընդլայնումը պայմանավորված էր նաև պետական կառավարման ձևի փոփոխությամբ: Այս հանգամանքով պայմանավորված՝ հայտարարագրման պարտականություն սահմանվեց, օրինակ՝ փոխվարչապետի, վերջինիս խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի, արարողակարգի պատասխանատուի և այլ պաշտոններ զբաղեցնող անձանց համար:

¹ Տե՛ս այդ թվում՝ Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման չորրորդ փուլի «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» 8.12.2017 թվականի զեկույցը, էջեր 15-16, հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680775f12>:

² Տե՛ս 2011 թվականի օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ կետ և 32-րդ հոդված:

³ Տե՛ս Նոր օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը ՀՀ-ում գործել է նաև մինչև ապօրինի հարստացման քրեականազումը, իսկ ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ **Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել**՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձն ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, երբ վերջինիս օրինական եկամուտներն էականորեն գերազանցող ու ողջամտորեն չհիմնավորվող գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումն ընդգրկող հաշվետու ժամանակահատվածը հաջորդում է ապօրինի հարստացումը քրեականազրած օրենքի ուժի մեջ մտնելու պահին:

Բացի հայտարարատու պաշտոնատար անձանցից՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեն նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները: Ընդ որում, Օրենքի քննարկվող հոդվածի համաձայն՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:

Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

Օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:

Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն»:

Ինչպես բխում է օրենքի վերոնշյալ դրույթների բովանդակությունից, հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն իրենց գույքի, եկամտի և ծախսերի վերաբերյալ առանձին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեն, այլ **պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները**: Միևնույն ժամանակ, ձևավորված իրավակիրառ պրակտիկան էականորեն տարբերվում է նշված նորմատիվ կարգավորումից. գործնա-

կանում ընտանիքի անդամները ներկայացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ առանձին հայտարարագրեր: Մասնավորապես՝ նրանք հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասին առանձին ծանուցվում են հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով, հայտարարագիր լրացնելու համար համակարգ են մուտք գործում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած անհատական մուտքանվան և գաղտնաբառի միջոցով, հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնում և հանձնում են միայն իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ պարունակող հայտարարագիր: Նշված իրավիճակը ոչ միայն վկայում է նորմատիվ կարգավորման և իրավակիրառ պրակտիկայի միջև անհամապատասխանության մասին, այլև հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խախտման, քանի որ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց համար հստակ չէ իրենց պարտականությունների ծավալը և իրականացման ձևը:

Ներկայացված իրավիճակը գործնականում անխուսափելիորեն առաջացնում է խնդրահարույց իրավիճակներ, մասնավորապես՝ կապված Օրենքի 36-րդ հոդվածում նախատեսված՝ հայտարարագիր ներկայացնելու ժամկետների հետ: Այսպես՝ հիշյալ հոդվածում սահմանվում են **հայտարարատու պաշտոնատար անձի** կողմից հայտարարագրերի ներկայացման ժամկետները, իսկ հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամների համար հայտարարագրերի ներկայացման ժամկետներ նախատեսված չեն, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն իրենց **գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացնում են պաշտոնատար անձի հայտարարագրում**: Ստացվում է, որ գործնականում հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ ներկայացնում են առանձին հայտարարագիր, սակայն հայտարարագրի ներկայացման ժամկետներ վերջիններիս համար օրենսդրորեն նախատեսված չէ, ինչն ավելի է խորացնում առկա իրավական անորոշությունը: Ընդ որում, նշված հարցի առնչությամբ դատական պրակտիկայում ևս առկա են տարբեր մոտեցումներ⁴:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հիմնավորված է այն մոտեցումը, ըստ որի՝ պաշտոնատար անձի հայտարարագրման պարտականություն ունեցող ընտանիքի անդամների կողմից առանձին հայտարարագիր ներկայացնելու պահանջը հստակ ամրագրվի օրենքով: Նման կարգավորումը կվերացնի նորմատիվ և գործնական կարգավորումների միջև հակասությունը, կապահովի իրավական որոշակիությունը և կնպաստի հայտարարագրման ենթակա անձանց անձնական պատասխանատվության սկզբունքի իրականացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքում՝ նախատեսելով, որ պաշտոնատար անձի՝ հայտարարագրման պարտականություն ունեցող ընտանիքի անդամները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ առանձին հայտարարագրեր: Միաժամանակ, նշված կարգավորման արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համակողմանիորեն վերանայել հայտարարագրման ինստիտուտը կարգավորող հարակից նորմերը՝ ներառյալ հայտարարագրերի բովանդակությանը, ներկայացման կարգին և ժամկետներին

⁴ Տե՛ս ՀՀ վարչական դատարանի ՎԴ/4967/05/24 գործով 25.04.2024 թվականին, ՎԴ/4977/05/24 գործով 21.10.2024 թվականին, ՎԴ/11050/05/21 գործով 07.11.2024 թվականին կայացված վճիռներ:

վերաբերող դրույթները:

Ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման համատեքստում հետաքրքրական է նաև պարզել, թե ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտները կարող են հանդիսանալ ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտներ, թե՞ ոչ:

Այսպես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 4. Ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն՝

1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի պարզեցված հաշվարկներ:

2) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր), բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածով սահմանված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նույնպես համարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր, իսկ այն ներկայացնելու պարտականություն ունեցող անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, վերջինս գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում չի կարող համարվել ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտ (եթե, իհարկե, օրենքի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնող չի համարվում)՝ հետևյալ հիմնավորումներով:

1. Ապօրինի հարստանալու հանցանքի քրեականացման նպատակը, ի սկզբանե, եղել է կոռուպցիայի դեմ պայքարը⁵: Թերևս սա հաշվի առնելով է օրենսդիրը, ինչպես նախկին քրեական օրենսգրքում, այնպես էլ գործող քրեական օրենսգրքում այն նախատեսել որպես հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություն և ներառել ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածով սահմանվող կոռուպցիոն հանցանքների ցանկում:

Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման նպատակն այլ է: Այսպես՝ համաձայն ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման նպատակով ընդունված օրենսդրական փաթեթի հիմնավորման⁶՝ հայտարարագրման համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է ունենալ անձնավորված հաշվառման համապարփակ համակարգ, որով հնարավոր կլինի առավել հեշտությամբ և ճշտության ավելի բարձր աստիճանով տեղորոշել ոլորտային քաղաքականությունների իրական շահառուներին՝ դրանով իսկ բարձրացնելով Կառավարության կողմից իրականացվող ոլորտային քաղաքականությունների հասցեականությունը, հետևաբար նաև՝ արդյունավե-

⁵ Տե՛ս «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը՝ հետևյալ համացանցային հղումով՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0>:

⁶ Տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://e-gov.am/sessions/archive/2022/11/17/>:

տությունը:

2. Տարբեր են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով և Պետական եկամուտների կոմիտե ներկայացվող հայտարարագրերի բովանդակային պահանջները: Այսպես՝ օրենքով սահմանված անձանց շրջանակի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացվում գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր, որը համահունչ է ապօրինի հարստանալու հանցանքի օբյեկտիվ կողմի դրսևորումներին, այնինչ Պետական եկամուտների կոմիտե է ներկայացվում բացառապես ֆիզիկական անձանց եկամուտների մասին հայտարարագիր, որով հնարավոր չէ ամբողջական և օբյեկտիվ պատկերացում կազմել անձի գույքային դրության մասին, հետևաբար նաև հնարավոր չէ պարզել ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածի իմաստով ապօրինի հարստանալու հանգամանքը:

Հատկանշական է, որ ընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրման համատեքստում ապօրինի հարստանալու հանցանքի սուբյեկտի շրջանակը հստակեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ հավանության է արժանացել և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը⁷ որով առաջարկվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ և 444-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների սուբյեկտները:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ են հանդիսանում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք, որոնց մեջ ներառվում են ինչպես հայտարարատու պաշտոնատար անձինք, այնպես էլ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները, որոնց շրջանակը սպառիչ կերպով սահմանվում է օրենքում:

Ապօրինի հարստացման հանցագործության սուբյեկտի նման կամ նմանաբնույթ շրջանակ սահմանվում է նաև աշխարհի շատ այլ երկրների օրենսդրությամբ: Նման մոտեցումը, նախ և առաջ, բխում է միջազգային-իրավական փաստաթղթերում ապօրինի հարստացման սուբյեկտին տրված սահմանումից: Այսպես՝ ինչպես 2003 թվականի ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 20-րդ հոդվածում, այնպես էլ 1996 թվականի Կոռուպցիայի դեմ միջամերիկյան կոնվենցիայի IX-րդ հոդվածում, որպես ապօրինի հաստացման սուբյեկտ՝ սահմանվում է պաշտոնատար անձը կամ պետական պաշտոնյան:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 2-րդ հոդվածի ա) կետի համաձայն՝ «պաշտոնատար անձ» նշանակում է.

i) նշանակովի կամ ընտրովի ցանկացած անձ, որը մշտական կամ ժամանակավոր հիմունքներով, վարձատրությամբ կամ առանց աշխատանքի վարձատրության որևէ պաշտոն է զբաղեցնում Մասնակից պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմնում՝ անկախ այդ անձի պաշտոնի մակարդակից.

ii) պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ, այդ թվում՝ պետական գերատեսչության կամ պետական ձեռնարկության համար, կամ որևէ հանրային ծառայություն մատուցող, ինչպես դա սահմանված է Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է այդ Մասնակից պետության իրավական կարգավորման համապա-

⁷ Տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=15898&Reading=0>:

տասխան բնագավառում.

iii) որևէ այլ անձ, որը Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ սահմանվում է որպես «պաշտոնատար անձ»:

Ի տարբերություն վերոնշյալ կոնվենցիաների՝ 2003 թվականի Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Աֆրիկյան միության կոնվենցիայի 8-րդ հոդվածում ապօրինի հարստացման սուբյեկտ է համարվում «պաշտոնատար կամ ցանկացած այլ անձ»:

Չնայած այն հանգամանքին, որ հակակոռուպցիոն միջազգային-իրավական փաստաթղթերը սահմանում են այն նվազագույն չափանիշները, որոնք պետք է իրացվեն ներպետական օրենսդրությամբ և առավել խիստ չափանիշների նախատեսումը, այդ թվում՝ ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման առումով, թողնում պետության իրավասությանը, ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող մի շարք երկրների օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս վկայել, որ հանցակազմի սուբյեկտը համընկնում է գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակի հետ ու հիմնականում ընդգրկում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իշխանական լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց կամ պետական մարմիններում, ձեռնարկություններում աշխատող հանրային ծառայողների հետ:

Այսպես՝ **Մոլդովայի քրեական օրենսգրքի**⁸ 330.2 հոդվածի համաձայն՝ «Պաշտոնատար կամ հանրային անձի կողմից անձամբ կամ երրորդ անձի միջոցով սեփականություն ունենալը, որի արժեքը էականորեն գերազանցում է իր եկամուտները և որի վերաբերյալ ապացույցների հիման վրա հաստատվել է, որ այն չէր կարող ձեռք բերվել օրինական ճանապարհով՝ պատժվում է տուգանքով՝ 6000–ից 8000 պայմանական միավորի չափով, կամ ազատազրկմամբ՝ 3–ից 7 տարի ժամկետով՝ երկու դեպքում էլ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 10–ից 15 տարի ժամկետով»:

Մոլդովայի քրեական օրենսգրքի 330.2 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առավել խիստ պատասխանատվություն է նախատեսվում հոդվածի առաջին մասով նախատեսված արարքի համար, եթե այն կատարվել է պատասխանատու պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից: Այս դեպքում որպես սանկցիա՝ նախատեսվում է տուգանքը՝ 8000–ից 10000 պայմանական միավորի չափով կամ ազատազրկումը՝ 7–ից 15 տարի ժամկետով՝ երկու դեպքում էլ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 10–ից 15 տարի ժամկետով:

Թուրքիայում պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրման, վերջիններիս կողմից ձեռք բերված գույքի նկատմամբ վերահսկողության, որոշ պաշտոնական հանցագործությունների դեպքում պաշտոնյաների և վերջիններիս հանցակիցների նկատմամբ քրեական հետապնդմանն ու դատավարական կարգին առնչվող հարցերը կարգավորված են 1990 թվականին ընդունված «Սեփականության հայտարարագրման և կաշառակերության ու կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքում⁹: Հիշյալ օրենքի 4-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում ապօրինի հարստացման համար:

Քննարկվող օրենքի 2-րդ հոդվածում թվարկվում է այն անձանց շրջանակը, ովքեր պետք

⁸ Տե՛ս Մոլդովայի քրեական օրենսգրքը (18.04.2002 թվականի No. 985)՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://natlex.ilo.org/dyn/natlex2/natlex2/files/download/64897/MDA-64897.pdf>

⁹ Տե՛ս Թուրքիայի «Սեփականության հայտարարագրման և կաշառակերության ու կոռուպցիայի դեմ պայքարի մասին» 04.05.1990 թվականի համար 20 508 օրենքը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ http://acrec.org.ua/wp-content/uploads/2017/02/b_Turkey-Law-3628.pdf

է հայտարարագրեն իրենց սեփականությունը: Այս ցանկում ընդգրկված անձինք, Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, ըստ էության, նույնանում են ապօրինի հարստացման սուբյեկտների հետ: Այսպես՝ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարագրման պարտականություն ունեն՝ պաշտոնատար անձինք, ովքեր բոլոր տեսակի ընտրությունների ընթացքում որոշակի պարտականություններ ունեն, Նախարարների խորհրդի անդամները, ովքեր նշանակվում են Խորհրդարանի կողմից, նոտարները, Թուրքիայի ավիացիոն ընկերության գլխավոր տնօրինության և կենտրոնական տեսչական խորհրդի անդամները, պետական ու համայնքային հիմնարկների և ձեռնարկությունների հանրային ծառայողները, քաղաքական կուսակցությունների ղեկավարները, ՁԼՄ-ների տնօրենները և այլն:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գույքը, որը օրենքի հիման վրա և հասարակական բարոյականության տեսանկյունից չի կարող ապացուցվել, որ վերոնշյալ շրջանակի անձանց կողմից ձեռք է բերվել օրինական եղանակով, ինչպես նաև ծախսերի ավելացումը, որոնք սոցիալական կյանքին համապատասխանության առումով չեն կարող համարժեք համարվել անձի եկամուտներին, համարվում են սեփականության անարդարացի ձեռքբերում՝ Օրենքի գործողության համատեքստում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ եթե առավել խիստ պատիժ նախատեսված չէ օրենքում, նրանք, ովքեր, անարդարացի ձևով ձեռք են բերել սեփականություն, ենթակա են պատժի՝ 3-ից 5 տարի ժամկետով ազատազրկման և տուգանքի՝ 5 միլիոնից 10 միլիոն լիրայի չափով: Նրանք, ովքեր մաքսանենգությամբ են զբաղվում կամ թաքցնում են ապօրինի եղանակով ձեռք բերված գույքը, ենթակա են նույն պատժին: Ընդ որում, Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ պատժի ենթարկված անձինք հեռացվում են հանրային ծառայությունից իրենց ողջ կյանքի ընթացքում:

Արգենտինայի քրեական օրենսգրքի¹⁰ 268/2 հոդվածի համաձայն՝ «Անձը, ով, համաձայն օրենքի պահանջի, չի կարողանա հիմնավորել իր կամ իր կողմից օգտագործվող՝ զգալի չափերի հասնող գույքային հարստացման ծագումը կամ հարստացումը, որը նպատակ ունի թաքցնել հայտարարատու անձի հարստացումը, որը ձեռք է բերվել պետական պաշտոն կամ պետական համակարգում աշխատանք ստանձնելուց հետո, ընդհուպ՝ պարտականությունները դադարեցնելուց հետո 2 տարվա ընթացքում, ենթակա է պատժի՝ 2-ից մինչև 6 տարի ժամկետով քրտնաջան աշխատանքների կամ ազատազրկման, հարստացման արժեքի 50-ից մինչև 100 տոկոսի չափով տուգանքով և զբաղեցրած պաշտոնից կամ աշխատանքից հեռացմամբ և ցմահ որակազրկմամբ: Հարստացում կհամարվի ոչ միայն, երբ անձի եկամուտները կաճեն գումարի և/կամ գույքի ավելացման եղանակով, այլ նաև, երբ անձի պարտքերը չեղյալ և/կամ պարտավորությունները մարված կհամարվեն»:

Ինչպես բխում է հոդվածի դիսպոզիցիայից, հանցակազմի սուբյեկտ են հանդիսանում պետական պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձինք, ինչպես նաև այն անձինք, ովքեր թեև պետական պաշտոն չեն զբաղեցնում (զբաղեցել), սակայն պետական համակարգի աշխատող են հանդիսանում (հանդիսացել):

Նմանաբնույթ մոտեցում է նախատեսված նաև **Սինա Լեոնեի** Հակակոռուպցիոն ակտում¹¹, որտեղ ևս ապօրինի հարստացման սուբյեկտ են հանդիսանում ինչպես գործող, այնպես էլ նախկին պաշտոնատար անձինք:

¹⁰ Տե՛ս Արգենտինայի քրեական օրենսգրքը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://constitutions.ru/?p=5847>

¹¹ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 12:

Պերուի քրեական օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն¹² «Յուրաքանչյուր պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող, ով իր գործառույթների իրականացման ընթացքում ապօրինի ավելացնում է իր ակտիվները օրինական վաստակից ավելի և չի կարողանում ողջամտորեն հիմնավորել վերոնշյալ ավելացումը, պետք է պատժվի ոչ պակաս քան 5, ոչ ավել քան 10 տարի ժամկետով ազատազրկմամբ և պաշտոն զբաղեցնելու մշտական արգելքով»:

Հանցակազմի սուբյեկտ են համարվում նաև այն անձինք, ովքեր պաշտոն են զբաղեցնում ոչ միայն պետական մարմիններում, այլև՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող ձեռնարկություններում:

Պերուի Հանրապետությունում ապօրինի հարստացումը կհամարվի կատարված ծանրացուցիչ հանգամանքներում, եթե պետական պաշտոնատար անձը զբաղեցրել է բարձր պետական պաշտոններ պետական մարմիններում կամ պետությանը սեփականության իրավունքով պատկանող ձեռնարկություններում, կամ նրա նկատմամբ հարուցված է անվտանգության (իմպիզմենթի) վարույթ: Այդ դեպքում սանկցիան ընդգրկում է ոչ պակաս քան 8, ոչ ավելի քան 18 տարի ժամկետով ազատազրկում և պաշտոն զբաղեցնելու մշտական արգելք¹³:

Չինաստանի քրեական օրենքի¹⁴ 395-րդ հոդվածի համաձայն՝ «Երբ պետական պաշտոնյայի ունեցվածքը կամ ծախսերն ակնհայտորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և երբ տարբերությունը հսկայական է, նրանք պետք է պարզաբանեն իրենց ունեցվածքի աղբյուրը: Եթե պետական պաշտոնյային չհաջողվի պարզաբանել իր եկամտի աղբյուրների օրինական լինելը, այն մասը, որը գերազանցում է վերջինիս օրինական եկամուտները, կհամարվի անօրինական ձեռքբերում և նա կդատապարվի 5 տարվա ժամկետը չգերազանցող ազատազրկման կամ կալանքի և ունեցվածքի տարբերությունը կրճատագրավի հոգուտ պետության»:

Ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման առումով նմանատիպ մոտեցում է նախատեսված նաև **Հնդկաստանի** «Կոռուպցիայի կանխարգելման» ակտի 13-րդ կետում¹⁵, **Չիլիի** քրեական օրենսգրքի 241-րդ հոդվածում¹⁶, **Պանամայի** քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածում¹⁷, **Մալազիայի** «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքի 32-րդ հոդվածում¹⁸:

Ապօրինի հարստացման հանցագործության փոքր-ինչ այլ սուբյեկտային կազմ է սահմանված **Մակեդոնիայի** քրեական օրենսգրքում¹⁹: Բացի պետական հիմնարկներում պաշտոններ զբաղեցնող անձանցից, հանցագործության սուբյեկտ է հանդիսանում նաև ցանկացած իրա-

¹² Տե՛ս Պերուի քրեական օրենսգրքը (1991 թվականի ապրիլի 3-ի թիվ 635)՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.legal-atlas.net/sites/default/files/law/Peru_CriminalCode_1991.pdf

¹³ Տե՛ս «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, 2016 թվական, Երևան, էջեր 35-36:

¹⁴ Տե՛ս Չինաստանի 1.07.1979 թվականի Քրեական օրենքը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ http://www.npc.gov.cn/zgrdw/englishnpc/Law/2007-12/13/content_1384075.htm:

¹⁵ Տե՛ս Հնդկաստանի «Կոռուպցիայի կանխարգելման» ակտ, 1988՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.indiacode.nic.in/bitstream/123456789/15302/1/pc_act_1988.pdf

¹⁶ Տե՛ս Չիլիի քրեական օրենսգրքը, 1994՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.wipo.int/wipolex/en/legislation/details/18826>

¹⁷ Տե՛ս Պանամայի քրեական օրենսգրքը (18.05.2007)՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.wipo.int/wipolex/en/legislation/details/7203>

¹⁸ Տե՛ս «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, 2016 թվական, Երևան, էջեր 37 և 42:

¹⁹ Տե՛ս Մակեդոնիայի քրեական օրենսգրքը (1.11.1996)՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/Criminal-Code-en.pdf>

վաբանական անձի պաշտոնյան կամ պատասխանատու անձը: Այսպես՝ Մակեդոնիայի քրեական օրենսգրքի 359-ա հոդվածի 1-ին պարագրաֆի համաձայն՝ «Պետական ձեռնարկության, պետական կառույցի կամ այլ իրավաբանական անձի պաշտոնյան կամ պատասխանատու անձը, ով տնօրինում է պետական կապիտալը և, հակառակ ունեցվածքի կարգավիճակի կամ դրա փոփոխության մասին ծանուցելու իր իրավական պարտավորությանը, տրամադրում է սխալ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն իր կամ իր ընտանիքի անդամների ունեցվածքի մասին, որը զգալիորեն գերազանցում է նրա օրինական եկամուտը, պետք է դատապարտվի վեց ամսվանից մինչև հինգ տարվա ազատազրկման և վճարի տուգանք»:

Գայանայի Անաշտության հանձնաժողովի ակտի 41-րդ կետում ևս ապօրինի հարստացման սուբյեկտը սահմանվում է բավականին ընդհանրական՝ ապօրինի հարստացման սուբյեկտ է հանդիսանում «հանրային անձը»²⁰:

Որոշ երկրներում էլ, ապօրինի հարստացման սուբյեկտն ընդգրկում է ինչպես պաշտոնատար անձին, այնպես էլ վերջինիս ընտանիքի անդամներին: Այսպես՝ **Եգիպտոսում** և **Սալվադորում** քննարկվող հանցանքի սուբյեկտ են համարվում նաև պաշտոնատար անձի ամուսինն ու անչափահաս երեխաները, իսկ **Պարագվայի** օրենսդրությամբ՝ նաև առաջին և երկրորդ գծի արյունակցական կապի մեջ գտնվող հարազատները²¹: Ինչպես տեսանք վերևում, նման մոտեցում է ամրագրված նաև ՀՀ օրենսդրությամբ:

Ընդ որում, նման մոտեցումը համահունչ է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, որի 20-րդ հոդվածում, թեպետ ապօրինի հարստացման սուբյեկտ է սահմանվում պաշտոնատար անձը, այդուհանդերձ, Կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ «Չխախտելով սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, կարող են պահանջվել այն բանի համար, որ ֆինանսական հիմնարկներից, որոնց վրա տարածվում է նրա իրավագործությունը, պահանջի ստուգել հաճախորդների ինքնությունը, խելամիտ միջոցներ ձեռնարկել այն միջոցների սեփականատեր բենեֆիցիարների ինքնությունը պարզելու համար, որոնք դեպոզիտային են մեծ ծավալի միջոցներով հաշիվներում, և իրականացնել վերահսկողության առավել խիստ միջոցներ այն հաշիվների նկատմամբ, որոնք փորձում են բացել, կամ որոնք վարվում են նշանակալից պետական լիազորություններով օժտված կամ նախկինում օժտված անձանց, նրանց ընտանիքների անդամների և նրանց հետ սերտորեն կապված գործընկերների կողմից կամ վերոթվարկյալ անձանցից որևէ մեկի անունից»:

Ապօրինի հարստացումը քրեականացրած որոշ երկրների օրենսդրությամբ էլ հիշյալ հանցագործության սուբյեկտ կարող է լինել յուրաքանչյուր ոք:

Այսպես՝ **Լիտվայի** քրեական օրենսգրքի²² 189.1 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ, ով տիրապետում է ավելի քան 500 MSL ակտիվների, իմանալով կամ երբ նա կարող էր կամ պետք է իմանար, որ ակտիվները չեն կարող ձեռք բերվել օրինական եկամտով, պատժվում է տուգանքով կամ կալանքով կամ ազատազրկմամբ՝ մինչև 4 տարի ժամկետով»: Ընդ որում, հիշյալ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձինք ևս համարվում են ապօրինի հարստացման սուբյեկտներ:

²⁰ Տե՛ս Գայանայի Անաշտության հանձնաժողովի ակտը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ http://www.oas.org/juridico/spanish/mesicic2_guy_integrity_comm_act.pdf

²¹ On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 15:

²² Տե՛ս Լիտվայի քրեական օրենսգրքը (26.09.2000 VIII-1968)՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/a84fa232877611e5bca4ce385a9b7048?jfwid=q8i88110w>

Հետաքրքիր մոտեցում է ամրագրված **Կոլումբիայի** քրեական օրենսգրքում, որի 412-րդ հոդվածում քրեական պատասխանատվություն է նախատեսվում ապօրինի հարստացման համար՝ որպես կոռուպցիոն բնույթի հանցագործություն, իսկ 327-րդ հոդվածում մասնավոր անձանց կողմից ապօրինի հարստացման համար՝ որպես սեփականության և հասարակական կարգի դեմ ոտնձգող հանցագործություն: Վերջինը քրեական պատասխանատվություն է սահմանում անձի համար, ով անձամբ կամ երրորդ անձի միջոցով, իր անձնական կամ երրորդ անձի շահի համար, չհիմնավորված ձևով ավելացրել է իր ակտիվները, որը բխել է նրա այս կամ այն հանցավոր գործունեությունից²³:

Ուգանդայի, Պակիստանի և Ռուանդայի օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ապօրինի հարստացման մասին դրույթները կարող են կարող են կիրառվել «ցանկացած անձի» նկատմամբ: Այդ դրույթներն սահմանվում են կոռուպցիայի դեմ պայքարի մասին օրենքներում, այլ ոչ թե ավելի ընդհանուր քրեական օրենսգրքերում կամ հանցագործությունից ստացված եկամուտների մասին օրենքներում: Սա հարց է առաջացնում, թե արդյոք այս դրույթները կարող են կիրառվել կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստից դուրս²⁴:

Այսպիսով՝ ինչպես բխում է վերոգրյալից, ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման առումով պետությունները, ղեկավարվելով հակակոռուպցիոն բնույթ ունեցող միջազգային-իրավական ակտերում առկա կարգավորումներով, ներպետական օրենսդրությանը համահունչ, իրենց իրավական մշակույթի, հասարակական պահանջունքների, կոռուպցիոն երևույթների տարածվածության և այլ հանգամանքների հաշվառմամբ, ապօրինի հարստացման սուբյեկտի տարբեր շրջանակներ են նախատեսել:

Եզրակացություն

Քննարկման առարկա դարձնելով ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտին առնչվող հարցադրումները՝ կարող ենք եզրակացնել՝

➤ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցանքի սուբյեկտը հատուկ է՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը, այդ թվում՝ ինչպես հայտարարատու պաշտոնատար անձը, այնպես էլ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները:

➤ Համեմատական վերլուծության ենթարկելով 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվող հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը ապօրինի հարստացման քրեականացման պահին գործող՝ 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի հայտարարատու պաշտոնատար անձանց հետ՝ պարզ է դառնում, որ գործող օրենքում էականորեն ընդլայնվել է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը:

➤ «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասում առկա դրույթը խնդրահարույց է և ենթակա է վերանայման՝ այն տրամաբանությամբ, որ պաշտոնատար անձի՝ հայտարարագրման պարտականություն ունեցող ընտանիքի անդամները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնեն իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ առանձին հայտարարագրեր:

²³ Տե՛ս Կոլումբիայի քրեական օրենսգրքը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/ExecutiveSummaries/V1406898-1e.pdf>

²⁴ Տե՛ս Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance, p. 49

➤ Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նույնպես համարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր, իսկ այն ներկայացնելու պարտականություն ունեցող անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, վերջինս գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում չի կարող համարվել ապօրինի հարստացման հանցանքի սուբյեկտ:

➤ Ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող մի շարք երկրների օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս վկայել, որ որոշ երկրներում հանցակազմի սուբյեկտը համընկնում է գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակի հետ ու հիմնականում ընդգրկում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իշխանական լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց կամ պետական մարմիններում, ձեռնարկություններում աշխատող հանրային ծառայողների հետ, իսկ որոշ երկրներում էլ նախատեսվում է սուբյեկտների շատ ավելի լայն շրջանակ՝ ընդգրկելով այդ թվում՝ նաև ֆիզիկական անձանց:

Ամփոփագիր: Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հոշակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթությունում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների վերլուծությունը:

Ըստ այդմ, հոդվածում փորձ է արվել քննարկման առարկա դարձնել ապօրինի հարստացման սուբյեկտին՝ ըստ ներպետական օրենսդրության, ինչպես նաև միջազգային փորձի: Հոդվածում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել խնդրո առարկային առնչվող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին (ինչպես արարքի քրեականացման պահին գործող, այնպես էլ ներկայումս գործող), 2019 թվականի ապրիլի 16-ին կայացրած ՍԴՌ-1453 որոշմամբ ձևակերպված իրավական դիրքորոշումներին, ապօրինի հարստացման սուբյեկտի սահմանման առումով ուղենիշային համարվող միջազգային-իրավական փաստաթղթերին, ինչպես նաև շուրջ երկու տասնյակ օտարերկրյա պետությունների ներպետական օրենսդրական կարգավորումներին՝ ներկայացնելով համապատասխան եզրահանգումներ:

Annotation. The prevention of corruption and the fight against it have been declared as priorities of strategic importance in the Republic of Armenia.

In such circumstances, it is important to introduce new internationally accepted tools for fighting corruption and their continuous improvement, aimed at combating corruption both in the civil, administrative and criminal spheres.

In this context, the analysis of the characteristics of the crime of illicit enrichment becomes more important.

Accordingly, in the article, an attempt was made to address the subject of illicit enrichment, according to domestic legislation, as well as international experience. The article, among other things, refers to the relevant provisions of the RA Law “On Public Service” (both in force at the time of the criminalization of the article and currently in force), the legal positions formulated by the relevant decision of the Constitutional Court of the Republic of Armenia, international legal documents considered as guidelines in terms of defining the subject of illicit enrichment, as well as domestic legislative regulations of about two dozen foreign countries and presenting relevant conclusions.

Аннотация. Предупреждение и борьба с коррупцией объявлены в Республике Армения приоритетами стратегического значения. В этих условиях особую значимость приобретает внедрение международно признанных антикоррупционных инструментов и их последовательное совершенствование, направленное на противодействие коррупции в гражданско-правовой, административно-правовой и уголовно-правовой сферах.

В данном контексте особого внимания заслуживает анализ элементов состава преступления незаконного обогащения. В статье предпринята попытка комплексного исследования субъекта незаконного обогащения с учётом норм национального законодательства и международного опыта. В частности, анализируются положения Закона РА «О публичной службе» (как действовавшие на момент криминализации соответствующего деяния, так и действующие в настоящее время), правовые позиции, сформулированные в постановлении ПКС-1453 от 16 апреля 2019 г., а также положения международно-правовых актов и национального законодательства ряда иностранных государств, имеющих существенное значение для определения субъекта преступления незаконного обогащения. На основе проведенного анализа формулируются соответствующие выводы.

Բանալի բառեր - *ապօրինի հարստացման սուբյեկտ, կոռուպցիայի դեմ պայքար, գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում, հայտարարարու պաշտոնավար անձ, «Հանրային ծառայության մասին» օրենք:*

Keywords - *illegal enrichment; fight against corruption; declaration of property, income and expenses; declarant official; Law “On Public Service”.*

Ключевые слова: *субъект незаконного обогащения, борьба с коррупцией, декларирование имущества, доходов и расходов, должностное лицо, представляющее декларацию, Закон Республики Армения «О публичной службе».*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք (05.05.2021 թվականի ՀՕ-199-Ն). (Criminal Code of the Republic of Armenia (05.05.2021 No. 199-N))
2. «Հանրային ծառայության մասին» 26.05.2011 թվականի ՀՕ-172-Ն օրենք. (“Law on Public Service” (26.05.2011 No. 172-N))
3. «Հանրային ծառայության մասին» 23.03.2018 թվականի ՀՕ-206-Ն օրենք. (“Law on Public Service” (23.03.2018 No. 206-N))
4. Մոլդովայի քրեական օրենսգիրքը (18.04.2002 թվականի No. 985)՝ հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://natlex.ilo.org/dyn/natlex2/natlex2/files/download/64897/MDA-64897.pdf> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025). (Criminal Code of the Republic of Moldova (18.04.2002 No. 985))
5. Թուրքիայի «Սեփականության հայտարարագրման և կաշառակերության ու կոռուպցիայի դեմ պայքարի մասին» 04.05.1990 թվականի համար 20 508 օրենքը, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ http://acrec.org.ua/wp-content/uploads/2017/02/b_Turkey-Law-3628.pdf (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025). (“Law on Declaration of Assets and Combating Bribery and Corruption” (04.05.1990 No. 20 508))
6. Արգենտինայի քրեական օրենսգիրք, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://constitutions.ru/?p=5847> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025). (Criminal code of Argentina)
7. Պերուի քրեական օրենսգիրքը (3.04.1991 թվականի թիվ 635), որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://constitutions.ru/?p=5847>

ցային հղմամբ՝ https://www.legal-atlas.net/sites/default/files/law/Peru_CriminalCode_1991.pdf (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Penal Code of Peru (3.04.1991 No. 635))

8. Չինաստանի 1.07.1979 թվականի Քրեական օրենք, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ http://www.npc.gov.cn/zgrdw/englishnpc/Law/2007-12/13/content_1384075.htm (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Law of the People's Republic of China (1.07.1979))

9. Հնդկաստանի «Կոռուպցիայի կանխարգելման» ակտ, 1988, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.indiacode.nic.in/bitstream/123456789/15302/1/pc_act,_1988.pdf (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(The Prevention of Corruption Act of India (1988))

10. Չիլիի քրեական օրենսգրք, 1994, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.wipo.int/wipolex/en/legislation/details/18826> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Code of Chile (1994))

11. Պանամայի քրեական օրենսգրքը (18.05.2007), որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.wipo.int/wipolex/en/legislation/details/7203> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Code of the Republic of Panama 18.05.2007))

12. Մակեդոնիայի քրեական օրենսգրքը (1.11.1996), որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/Criminal-Code-en.pdf> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Code of the former Yugoslav Republic of Macedonia (1.11.1996))

13. Գայանայի Անշահողության հանձնաժողովի ակտը, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ http://www.oas.org/juridico/spanish/mesicic2_guy_integrity_comm_act.pdf (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Integrity Commission Act of Guyana)

14. Լիտվայի քրեական օրենսգրք (26.09.2000 VIII-1968), որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/a84fa232877611e5bca4ce385a9b7048?jfwid=q8i88110w> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Code of the Republic of Lithuania (26.09.2000 VIII-1968))

15. Կոլումբիայի քրեական օրենսգրք, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/ExecutiveSummaries/V1406898-1e.pdf> (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Criminal Code of Colombia)

16. ՀՀ վարչական դատարանի ՎԴ/4967/05/24 գործով 25.04.2024 թվականին կայացված վճիռ.

17. ՀՀ վարչական դատարանի ՎԴ/4977/05/24 գործով 21.10.2024 թվականին կայացված վճիռ.

18. ՀՀ վարչական դատարանի ՎԴ/11050/05/21 գործով 07.11.2024 թվականին կայացված վճիռ.

19. «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, 2016 թվական, Երևան.

(“Analysis regarding the advisability of criminalization of illicit enrichment” Armenian Lawyers Association, 2016, Yerevan)

20. Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման չորրորդ փուլի «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» 8.12.2017 թվականի զեկույց, որը հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680775f12>. (վերջին մուտքի ամսաթիվ՝ 06.05.2025).

(Fourth Evaluation Report of Group of States against Corruption on “Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors”, 8.12.2017)



21. On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger.

22. Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance.

Ամիրխանյան Ա. - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ Amirkhanyan.alisa@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 19.10.2025 թ., տրվել է գրախոսության 19.10.2025 թ., երաշխավորվել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու Մ. Մկրտչյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-135>

ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

VIRAB HAMBARDZUMYAN
Lecturer at Yerevan State University,
Department of Criminal Law

ВИРАБ АМБАРЦУМЯН
Преподаватель кафедры уголовного права
Ереванского государственного университета
<https://orcid.org/0009-0007-2662-1592>

ՍԱՌԸ ԶԵՆՔ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԴՈԿՏՐԻՆԱԼ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

THE LEGAL MEANING OF THE CONCEPT OF COLD WEAPONS: DOCTRINAL AND PRACTICAL ISSUES

ЮРИДИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЯ ХОЛОДНОГО ОРУЖИЯ. ДОКТРИНАЛЬНЫЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

I. Ներածություն

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ սառը զենքը կտրող, ծակող, ջարդող սարք է, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ անմիջական շփման դեպքում կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասագերծելու համար:

Օրենքը սահմանում է նաև սառը զենքի շրջանառության վրա տարածվող սահմանափակումները: Մասնավորապես, արգելվում է որպես քաղաքացիական և ծառայողական զենք, շրջանառության մեջ մտցնել 90 մմ-ից ավելի երկարության շեղքով կամ սայրով սառը զենք, որի շեղքը կամ սայրը դուրս է գալիս բռնակից հատուկ կոճակը կամ լծակը սեղմելու միջոցով կամ ծանրության ուժի կամ արագացված շարժման ազդեցությամբ և ինքնաբերաբար ամրակցվում, բացառությամբ մշակութային արժեք ունեցող, այդ թվում՝ պատմական նշանակություն ունեցող սառը զենքի, դրանց պատճենների և կրկնօրինակների²:

Չնայած սառը զենքի բնութագրիչ հատկանիշներն ունեն հստակ օրենսդրական ամ-

¹ Տես ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է:

² Տես Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:

րագրում, այդուհանդերձ, առարկայի՝ սառը զենք լինելու հանգամանքը որոշելու համար անհրաժեշտ է կատարել փորձաքննություն, որի ընթացքում փորձագետն օգտվում է վերաբերելի օրենսդրական ակտերից, որպես տեղեկատու գրականություն՝ սառը զենքի ստանդարտներից, գիտական աղբյուրներից, ինչպես նաև կիրառում համապատասխան բնագավառի հատուկ մեթոդիկա:

Օրինակ, **սառը շեղբավոր զենքի**³, այդ թվում՝ ընդհանուր նշանակության որսորդական դանակների, որսորդական դաշույնների, գոյատևման դանակների տեխնիկական բնութագրերին ներկայացվող **քրեագիտական պահանջները** սահմանված են ՀՀ Կառավարության N 429-Ն որոշմամբ⁴ (այսուհետ նաև՝ Որոշում):

Որոշման համաձայն՝

«25. Սառը շեղբավոր (...) զենքի կոնկրետ նմուշները պետք է՝

1) նախատեսված լինեն մարդու կյանքին և առողջությանը ծանր մարմնական վնասվածք հասցնելու, կենդանիներին խոցելու և դրանց հարձակումից պաշտպանվելու համար.

2) իրենց կառուցվածքով և անհատական հատկանիշներով պիտանի լինեն նշանակելու խոցելու համար» (...):

Սառը շեղբավոր զենքերի կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական բնութագրերը⁵, մակնշումը և փորձարկման մեթոդները սահմանված են առանձին **ստանդարտներով** (ԳՕՍ):

Որոշման համաձայն՝

«(...) 37. Որսորդական դանակների կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական բնութագրերը, մակնշումը և փորձարկման մեթոդները պետք է համապատասխանեն ԳՕՍ Ռ 51500-99 «Դանակներ և դաշույններ որսորդական. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտին:

(...)

41. Որսորդական դաշույնների կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական բնութագրերը, մակնշումը և փորձարկման մեթոդները պետք է համապատասխանեն ԳՕՍ Ռ 51500-99 «Դանակներ և դաշույններ որսորդական. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտին:

(...)

45. Գոյարևման դանակների կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական բնութագրերը, մակնշումը և փորձարկման մեթոդները պետք է համապատասխանեն ԳՕՍ Ռ 51548-2000 «Դանակներ գոյարևման. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտին»:

Ինչպես նկատում ենք, սառը զենքերի քննության քրեագիտական մեթոդիկան, ելնելով

³ Հարկ է նշել, որ առանձին ստանդարտներով սահմանվում են նաև սառը շեղբավոր զենք չհամարվող՝ սառը և նետողական զենքին նմանվող հուշանվերային ու գեղազարդային իրերի, առարկաների, որսորդական հանդերձանքի մաս կազմող և արդյունաբերական ու սպորտային որսի (այդ թվում՝ ստորջրյա), ինչպես նաև կենցաղային կարիքների համար (տնային կենդանիներին մորթագերծելու և մասնատելու) նախատեսված հատուկ նշանակության որսորդական դանակների, զբոսաշրջային հանդերձանքի մաս կազմող և արշավների, սպորտային տուրիզմով, ալպինիզմով զբաղվելու և կենցաղում օգտագործելու համար նախատեսված զբոսաշրջային դանակների կառուցվածքային առանձնահատկություններին, տեխնիկական բնութագրերին, մակնշմանը, փաթեթավորմանը ներկայացվող պահանջները և վերահսկման մեթոդները:

⁴ Տե՛ս ՀՀ կառավարության «Քաղաքացիական, ծառայողական զենքի և ռազմաթերթի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» 2021 թվականի ապրիլի 1-ի N 429-Ն որոշումը:

⁵ Տե՛ս նաև ՀՀ կառավարության «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 2005 թվականի ապրիլի 21-ի N 605-Ն որոշումը:

համապատասխան ստանդարտներից, ներառում է **գործարանային արտադրության** սառը շեղբավոր զենքի նկարագրությունը և բնութագիրը: Նշված ստանդարտներում յուրաքանչյուր տեսակի համար սահմանվում են տարբեր պահանջներ, որոնք վերաբերում են սառը շեղբավոր զենքի շեղբի լայնությանը, երկարությանը, հաստությանը, սայրին և այլն:

Այս համատեքստում հարկ է նշել, որ քրեագետ-փորձագետների շրջանում իրականացված հարցումները ցույց են տվել, որ վերջիններս խուսափում են **ինքնաշեն դանակը** դասել սառը զենքերի շարքին՝ դրա համար համապատասխան ստանդարտների բացակայության պատճառով⁶: Բացի դրանից՝ արդի ժամանակներում աճում է արտաքին տեսքով և կառուցվածքով սառը զենքին նմանվող դանակների և այլ առարկաների արտադրությունը, որոնց տեխնիկական բնութագրերը սառը զենքի համար սահմանված տեխնիկական բնութագրերից կարող են տարբերվել ընդամենը մեկ չափանիշով, օրինակ՝ շեղբի հաստությունը կարող է լինել ավելի փոքր: Այդպիսի դանակների (առարկանների) հասանելիությունը, որոնք հաճախ նաև իրենց վնասաբեր ազդեցությամբ գերազանցում են սառը զենքին, հնարավորություն է տալիս քաղաքացիներին շրջանցել քրեաիրավական արգելքը, ազատորեն կրել դրանք և օգտագործել հանցագործություններ կատարելու նպատակով: Ընդ որում, այս ոլորտում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ կենցաղային իրերի, մասնավորապես, խոհանոցային դանակների գործադրմամբ անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործությունների թվը զգալիորեն գերազանցում է սառը զենքի կիրառմամբ կատարված հանցագործությունների թվին⁷: Ըստ առկա տվյալների՝ ՀՀ-ում նույնպես բազմաթիվ են դեպքերը, երբ որպես սպանության կամ մարմնական վնասվածք պատճառելու գործիք կիրառվել են սառը զենք չհանդիսացող դանակներ, այդ թվում՝ տնտեսակենցաղային նշանակության⁸:

Հարկ է նշել, որ սառը զենքերի կառուցվածքային առանձնահատկություններին և տեխնիկական բնութագրերին ներկայացվող պահանջները բազմաթիվ խնդիրներ են առաջացնում նաև նշված առարկաների փորձաքննության ընթացքում: Դեռևս 2001 թվականին ոլորտի հետազոտողներ Ս. Ա. Վախրուշևը և Ս. Ա. Գոնտարը արձանագրեցին, որ առկա է ճգնաժամ դանակների՝ որպես «սառը զենք» կամ «կենցաղային նշանակության արտադրանք» քրեագիտական սերտիֆիկացման գործընթացում: Ըստ նրանց՝ հստակ չափանիշների բացակայության, ինչպես նաև առարկայի էությունն իրականում չարտացոլող արհեստական ստանդարտների (օրինակ՝ սայրի թեքության աստիճանը, վնասակար հատկությունների բավարարությունը և այլն) կիրառման հետևանքով անորոշ են սահմանները սառը զենք համարվող և այդպիսին չհամարվող դանակների միջև⁹: Բանն այն է, որ մի կողմից՝ սառը զենքի այս կամ այն տեսակի բնութագրիչ հատկանիշները խիստ բազմազան են, իսկ մյուս կողմից՝ դրանք մոտ են տնտեսակենցաղային նշանակության առարկաների հատկանիշներին: Այս պայմաններում հաճախ դժվար է տարբերակել սառը զենքը տնտեսակենցաղային նշանակության առարկաներից, իսկ որոշ դեպքերում՝ սառը զենքի մեկ տեսակը մյուսից:

⁶ Տե՛ս *Казанцев С.Я., Мазуренко П.Н.*, Проблемы экспертизы холодного оружия // Традиции криминалистических школ Казанского университета и современные тенденции противодействия преступности / Материалы Всероссийской научно-практической конференции (г. Казань, 29-30 ноября 2007 г.) – Казань: Изд-во Казанск. гос. ун-та, 2008. – էջ 249:

⁷ Տե՛ս *Певницкий С.Г.*, Некоторые вопросы, возникающие при производстве по делам, связанным с коллекционированием антикварного оружия // Адвокатская практика. 2005. № 1:

⁸ Տե՛ս Վ. Համբարձումյան, «Ձենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը սահմանող օրենսդրության սոցիալական հիմնավորվածությունը», Բանբեր Արդարադատության ակադեմիայի, 2025, № 1(14), էջ 109:

⁹ Տե՛ս *Вахрушев С.А., Гонтарь С.А.*, Ножи – холодное оружие или универсальный инструмент (уголовно-правовой и криминалистический анализ) // Закон и право. – 2001.-№8, էջեր 13-23:

Այս առումով հարկ է նշել, որ սույն հետազոտության շրջանակում մեր կողմից ՀՀ ԱՆ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ՀՀ ԱՆ Փորձագիտական Կենտրոն ՊՈԱԿ-ի հետքաբանական փորձաքննությունների բաժնում 2022 թվականի հունվարի մեկից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում առարկայի սառը զենք հանդիսանալու հանգամանքը պարզելու նպատակով իրականացվել է ընդհանուր 190 փորձաքննություն և հետազոտված օբյեկտներից սառը զենք է հանդիսացել ընդամենը 95-ը կամ 50%-ը:

Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ **սառը զենքերի հետազոտության մեթոդիկան չունի գիտական և իրավական արժեք**: Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները (շեղքի երկարություն, շեղքի հաստություն, բռնակի ձև, մետաղի կարծրություն) հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առարկայի իրական հանրային վտանգավորությունը: Հարկ է նշել, որ համանման դիրքորոշում ունեն նաև ոլորտի այլ հետազոտողներ¹⁰:

Հիմնական հետազոտություն

II. Արտասահմանյան երկրների փորձը

Քննարկվող հարցի առնչությամբ բավականին ուշագրավ է արտասահմանյան երկրների փորձը: Մասնավորապես, սույն թեմայի շրջանակում մեր կողմից իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրությանն ընդհանրապես խորթ է «սառը զենք» հասկացությունը, և այդ երկրներում ապօրինի շրջանառության առարկա են հանդիսանում դանակը (շեղքավոր այլ առարկաները), ինչպես նաև անձին մարմնական վնասվածք պատճառելու կամ շարքից հանելու համար պատրաստված կամ հարմարեցված այլ առարկաները (հանրավտանգ առարկաներ):

Այսպես՝ **Ֆինլանդիայի քրեական օրենսգրքով** քրեական պատասխանատվություն է նախատեսված անձի կողմից հասարակական վայրում «Հասարակական կարգի մասին» օրենքի 9-րդ հոդվածի պահանջների խախտմամբ՝ իր մոտ կամ հասարակական վայրում գտնվող տրանսպորտային միջոցում **վտանգավոր առարկա** կրելու համար¹¹:

Ֆինլանդիայի «Հասարակական կարգի մասին» օրենքով արգելվում է հանրային վայրում այնպիսի առարկաներ կամ նյութեր կրելը, որոնք նախատեսված են կամ հարմար են այլ անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելու համար՝

1) սուր զենքեր, կտրված ապակի և այլ նմանատիպ առարկաներ, որոնք հարմար են կտրելու կամ ծակելու համար,

2) մահակներ, շղթաներ, աղեղներ, մետաղալարեր, լարեր, բեյսբոլի մահակներ և այլ նմանատիպ առարկաներ, որոնք հարմար են հարվածներ հասցնելու համար,

3) նետեր, մետաղական գնդակներ և այլ նմանատիպ առարկաներ, որոնք հարմար են

¹⁰ Звягин В.А., О декриминализации изготовления и сбыта холодного оружия // Журнал российского права. – 2015. – №3, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://cyberleninka.ru/article/n/o-dekriminalizatsii-izgotovleniya-i-sbyta-holodnogo-oruzhiya/viewer>:

¹¹ Տես Ֆինլանդիայի քրեական օրենսգրքը, գլուխ 41, հոդված 5, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/cld/uploads/res/document/fin/the-criminal-code-of-finland_html/Criminal_code_of_Finland.pdf?utm_source=chatgpt.com (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

նետելու համար,

4) քայքայող նյութեր, ինչպես նաև այլ նյութեր, որոնք հարմար են անձին ծանր մարմնական վնաս պատճառելու կամ ժամանակավորապես կաթվածահար անելու համար,

5) օդաճնշիչ, զսպանակային մեխանիզմով գործող զենքեր, աղեղներ, նետողական զենքեր, ինչպես նաև այլ նմանատիպ առարկաներ, որոնք հարմար են կրակելու համար,

6) լազերներ, որոնք վտանգ են ներկայացնում մարդու առողջության համար:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածում ամրագրված է, որ հիշյալ պահանջները չեն տարածվում այն առարկաների և նյութերի վրա, որոնք անձը կրում է աշխատանքային հանձնարարության կատարումն ապահովելու կամ այլ իրավաչափ նպատակով¹²:

Նորվեգիայի քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսված հանրային վայրում **դանակ** կամ **համանման այլ սուր գործիք**, որը կարող է օգտագործվել անձի նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու նպատակով, կրելու համար:

Տվյալ դեպքում ևս նախատեսված արգելքը չի տարածվում այն դանակների կամ գործիքների վրա, որոնք անձը օգտագործում կամ կրում է աշխատանքի, բնության գրկում հանգստի կամ այլ իրավաչափ նպատակով¹³:

Անգլիայում քրեական պատասխանատվություն է նախատեսված առանց իրավաչափ նպատակի կամ օրենքով տրված լիազորության հանրային վայրում շեղբավոր կամ սուր ծայր ունեցող առարկա կրելու համար:

Նշված հանցագործության առարկա են հանդիսանում բոլոր **դանակները և շեղբավոր այլ առարկաները**՝ բացառությամբ փոքր շեղբով ծալովի դանակի (շեղբը՝ ոչ ավելի քան երեք դյույմ¹⁴): «Հանրային վայր» հասկացությունը տվյալ դեպքում ներառում է ցանկացած տարածք, որին հասարակությունն ունի հասանելիություն: Դա կարող է ներառել նաև մասնավոր տրանսպորտային միջոցը, եթե այն գտնվում է հանրային տարածքում:

Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության նշված արարքը կատարելու համար, եթե կարողանում է ապացուցել, որ շեղբավոր առարկան պահել է աշխատանքի կամ կրոնական նպատակներով կամ այն կազմում է ազգային հագուստի մաս: Բացի դրանից՝ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության նշված արարքը կատարելու համար, եթե ապացուցում է, որ ունեցել է տվյալ առարկան իր մոտ պահելու հիմնավոր պատճառ կամ օրինական հիմք: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ անգլիական օրենսդրությունը չի բացահայտում այն դեպքերը, որոնք կարող են դիտարկվել հիշյալ առարկաները կրելու հիմնավոր պատճառ¹⁵:

Իռլանդիայի օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված հանրային վայրում **դանակ** կամ **շեղբավոր** կամ **սուր ծայր ունեցող այլ առարկա** կրելու համար: Այստեղ նույնպես անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ ունեցել է վերը նշված առարկաներն իր մոտ պահելու հիմնավոր պատճառ

¹² Տե՛ս «Հասարակական կարգի մասին» Ֆինլանդիայի օրենքը, գլուխ 3, հոդված 10, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.finlex.fi/api/media/statute-foreign-language-translation/688459/mainPdf/main.pdf?timestamp=2003-06-26T21%3A00%3A00.000Z> (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

¹³ Տե՛ս Նորվեգիայի քրեական օրենսգրքը, հոդված 189, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/uploads/icsant/documents/Legislation/Norway/The_Penal_Code_-_Lovdata.pdf?utm_source=chatgpt.com (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

¹⁴ Հավասար է 7.62 սանտիմետրի:

¹⁵ Տե՛ս William Downs, Knives, offensive weapons and serious violence, The House of Commons Library, 14 October 2025, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://researchbriefings.files.parliament.uk/documents/SN00330/SN00330.pdf> (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

կամ օրինական հիմք: Այդպիսի հիմք կարող է հանդիսանալ նաև հիշյալ առարկաների կրումը աշխատանքում օգտագործելու կամ հանգստի նպատակով:

Իռլանդիայի օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև հանրային վայրում առանց հիմնավոր պատճառի կամ օրինական հիմքի **ծալովի դանակ կամ մարդուն մարմնական վնասվածք պատճառելու կամ շարքից հանելու համար պատրաստված կամ հարմարեցված այլ առարկա** կրելու համար:

Իռլանդական օրենսդրությամբ ևս բացահայտված է «հանրային վայր» հասկացության բովանդակությունը: Մասնավորապես, հանրային վայր է համարվում ցանկացած ավտոմայրուղի, ինչպես նաև այն բոլոր շենքերը կամ վայրերը, որտեղ տվյալ պահին հանրությունն ունի կամ կարող է ունենալ իրավունք մուտք գործել՝ անկախ նրանից՝ վճարովի է մուտքը, թե ոչ: «Հանրային վայր» հասկացությունը ներառում է նաև ակումբային տարածքները, ինչպես նաև ցանկացած գնացք, նաև կամ անձանց փոխադրման համար վճարովի հիմունքներով օգտագործվող տրանսպորտային միջոց¹⁶:

Գանիայի օրենսդրությամբ արգելվում է հանրային վայրերում, կրթական հաստատություններում, երիտասարդական ակումբներում, ժամանցի կամ նմանատիպ այլ վայրերում կրել կամ պահել **դանակներ կամ շեղբավոր զենքեր** կամ **նմանատիպ այլ առարկաներ**¹⁷, բացառությամբ այն դեպքերի, երբ դա իրականացվում մասնագիտական գործունեության շրջանակում կամ նախատեսված է որսի, ձկնորսության, սպորտային գործունեության համար կամ ընդունելի և իրավաչափ այլ նպատակով¹⁷:

Նոր Զելանդիայի օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված հանրային վայրում առանց հիմնավոր պատճառի **դանակ** կրելու համար¹⁸:

Գերմանիայի օրենսդրությամբ, ի թիվս այլնի, արգելվում է կրել **կտրող-ծակող զենք** կամ **կտրող-ծակող շեղբով դանակներ**, որոնք կարող են ամրակցվել մեկ ձեռքով (մեկ ձեռքով ամրակցվող դանակներ) կամ ամրակցված դանակներ, որոնց շեղբի երկարությունը 12 սմ-ից ավելի է¹⁹:

Գերմանական օրենսդրությամբ կտրող-ծակող զենք է համարվում՝ կտրող, ծակող, խոցող, հարվածող, նետվող սարքը, որը նախատեսված է մարդու մկանային ուժի օգնությամբ մարմնական վնասված պատճառելու համար²⁰:

Կարծում ենք՝ քննարկվող թեմայի համատեքստում գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում նաև զենք հասկացության բովանդակության բացահայտումը:

«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «զենք» հասկացությունը սահմանվում է որպես՝ սարք կամ առարկա, որը նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար: Միևնույն ժամանակ, ըստ օրենքի՝ զենք չեն համարվում **արտաքին տեսքով կամ կառուցվածքով զենքին նմանվող առարկաները, սարքերը կամ գործիքները, որոնք ունեն**

¹⁶ Տե՛ս «Ձենքերի և վտանգավոր առարկաների մասին» Իռլանդիայի օրենքը, բաժին 3, հոդված 9, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.irishstatutebook.ie/eli/1990/act/12/enacted/en/print#sec9> (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

¹⁷ Տե՛ս «Դանակների և շեղբավոր զենքերի մասին» Գանիայի օրենքը (Knivloven), §1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://dansklove.dk/knivloven> (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

¹⁸ Տե՛ս «Ընդհանուր բնույթի հանցագործությունների մասին» Նոր Զելանդիայի օրենքը, 1981 թ., հոդված 13a, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.legislation.govt.nz/act/public/1981/0113/latest/whole.html#DLM53545> (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

¹⁹ «Ձենքի մասին» Գերմանիայի օրենքը (WaffG), հոդված 42a, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_waffg/englisch_waffg.html (վերջին մուտք՝ 26.11.2025 թ.):

²⁰ Տե՛ս նույն տեղում, գլուխ 2, մաս 1, կետ 1.1:

արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային և դեկորատիվ նշանակություն:

Հարկ է նկատել, որ հիշյալ երկրներում հնարավոր չէ գտնել «զենք» հասկացության միասնական սահմանում: Այդ երկրներում հրազենի (բաղկացուցիչ մասերի, ռազմամթերք) և դանակների (հանրավտանգ այլ առարկաների) շրջանառության կարգավորումն հիմնականում իրականացվում է տարբեր իրավական ակտերով, որտեղ համապատասխանաբար առանձին բացահայտվում է այդ հասկացությունների բովանդակությունը:

Այս առումով թերևս բացառություն է կազմում գերմանական օրենսդրությունը, որտեղ սահմանված է «զենք» հասկացությունը, որը, ի թիվս այլնի, ներառում է նաև առարկաները, որոնք իրենց բնույթով նախատեսված են մարդու հարձակողական կամ պաշտպանական կարողությունը վերացնելու կամ էականորեն նվազեցնելու համար, ներառյալ՝ կտրող և ծակող (հարվածող) զենքերը կամ առարկաները, որոնք իրենց բնութագրի, գործողության մեխանիզմի կամ կիրառման եղանակի շնորհիվ ունակ են նվազեցնել կամ չեզոքացնել մարդու հարձակվելու կամ պաշտպանվելու կարողությունը՝ **նույնիսկ եթե դրանք սկզբնապես նախատեսված չեն եղել այդ նպատակի համար**²¹:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հնարավոր է առանձնացնել քննարկվող հարցի առնչությամբ վերը նշված երկրների օրենսդրությանը բնորոշ հետևյալ հիմնական հատկանիշները՝

➤ Հիշյալ երկրների օրենսդրությանը խորթ է «սառը զենք» հասկացությունը: Այդ երկրներում ապօրինի շրջանառության առարկա են հանդիսանում դանակը (շեղբավոր այլ առարկաները), անձին մարմնական վնասվածք պատճառելու կամ շարքից հանելու համար պատրաստված կամ հարմարեցված այլ առարկաները (հանրավտանգ առարկաներ):

➤ Քրեական պատասխանատվություն է նախատեսված հիշյալ առարկաները հասարակական/հանրային վայրում կրելու համար:

➤ Օրենսդրությունը հիմնականում բացահայտում է «հասարակական/հանրային վայր» հասկացության բովանդակությունը:

➤ Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության հիշյալ առարկաները հասարակական (հանրային) վայրում կրելու համար, եթե դա պայմանավորված է աշխատանքային (ծառայողական, մասնագիտական) պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ կամ ունեցել է այդ առարկաներն իր մոտ պահելու հիմնավոր պատճառ կամ օրինական հիմք:

➤ Այդ առարկաները հասարակական վայրում իր մոտ պահելու համար հիմնավոր պատճառի կամ օրինական հիմքի ապացուցման պարտականությունը կրում է այն անձը, ում մոտ դրանք գտնվում են:

Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ արտասահմանյան երկրների փորձն առավել համահունչ է ժամանակակից միտումներին և մարտահրավերներին: Կարծում ենք՝ հիշյալ երկրներում առկա իրավակարգավորումների հաջող տեղայնացումը և ներդրումը ներպետական օրենսդրության մեջ հնարավորություն կտա չեզոքացնել վերը արձանագրված մտահոգություններն ու ռիսկերը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ապաքրեականացնել սառը զենք կրելը, ինչպես նաև «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքից դուրս բերել սառը զենքի վերաբերյալ առկա իրավակարգավորումները: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք

²¹ Տե՛ս «Ձենքի մասին» Գերմանիայի օրենքը (WaffG), հոդված 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_waffg/englisch_waffg.html (վերջին մուտք՝ 08.12.2025 թ.):

ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ գլխում նախատեսել հետևյալ բովանդակությամբ նոր հանցակազմ՝

«Հոդված 334.1. Դանակ կամ հանրավտանգ այլ առարկա կրելը

1. Հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղքով կամ սայրով ծալովի դանակի), կռիվազենք, լախաբ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապարիկից երեսնապարիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հանրային է համարվում ցանկացած վայր, որտեղ տվյալ պահին հանրությունն ունի կամ կարող է ունենալ ազատորեն մուտք գործելու իրավունք, ներառյալ փողոցները, տրանսպորտային միջոցների կայանատեղիները, օդանավակայանները, շուկաները, պուրակները, այգիները, կինոթատրոնները, ցուցասրահները, մարզադաշտերը, ուսումնական հաստատությունները, հասարակական տրանսպորտը և հասարակական սննդի սպասարկման վայրերը:

4. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն հոդվածով նախատեսված հանցագործության համար, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առարկաների կրումը պայմանավորված է եղել աշխատանքային (ծառայողական, մասնագիտական) պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ կամ ունեցել է այդ առարկաներն իր մոտ պահելու իրավաչափ նպատակ կամ օրինական հիմք: Նշված առարկաների կրումն ինքնապաշտպանության նպատակով արգելվում է»:

Իրավաչափ կարող է համարվել, օրինակ, նշված առարկաների կրումը սպորտի, որսի, ձկնորսության նպատակով՝ դրանց կազմակերպման վայրերում: Ընդ որում, հիմք ընդունելով փաստերի իրավական կանխավարկածը²² յուրաքանչյուր դեպքում հասարակական վայրում այդ առարկաներն իր մոտ պահելու իրավաչափ նպատակի կամ օրինական հիմքի ապացուցման պարտականությունը պետք կրի այն անձը, ում մոտ դրանք հայտնաբերվել են: Օրինակ, երբ անձը խոհանոցային դանակով կամ այլ կտրող-ծակող առարկայով շրջում է փողոցով, ապա իրավասու մարմնի կողմից այդ փաստը հայտնաբերելու դեպքում՝ անձը պետք է ներկայացնի ողջամիտ բացատրություն նշված առարկան իր մոտ պահելու իրավաչափ նպատակի վերաբերյալ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ առարկայի՝ դանակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող առարկա կամ մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստված կամ հարմարեցված այլ առարկա լինելու հանգամանքը քրեական վարույթով կարող է գնահա-

²² Եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, ապա ապացուցված են համարվում՝ փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա **բացառիկ իրազեկության հանգամանք**: Տես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

տել վարույթն իրականացնող մարմինը: Այս հանգամանքը կբացառի յուրաքանչյուր դեպքով փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը²³, որն էլ իր հերթին կհանգեցնի քրեադատավարական ռեսուրսի խնայմանը և կնպաստի քրեական վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելուն:

Հարկ է անդրադառնալ նաև այն հարցին, որ *կտրող, ծակող, հարվածող, ջարդող առարկա* գնահատողական հասկացությունների օրենսդրական մակարդակում կիրառման առաջարկն առաջին հայացքից կարող է որոշակի տարակուսանք առաջացնել: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ համաբնույթ հասկացությունների կիրառումն ինքնին խորթ չէ ՀՀ քրեական օրենսդրությանը: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 512-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված ձեռքակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից զենք, **կտրող-ծակող կամ կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք, նյութ** կամ **առարկա** պատրաստելու, ձեռք բերելու, պահելու, կրելու, իրացնելու կամ այդ անձին այդպիսի առարկա փոխանցելու համար:

III. Հանցանքը որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ կատարելը

Սույն թեմայի շրջանակում առանձին տեսագործական հետաքրքրություն է ներկայացնում նաև Ֆրանսիայի և Շվեյցարիայի ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումների վերլուծությունը:

Այսպես՝ **Ֆրանսիայի քրեական օրենսդրությամբ** զենքի գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը համարվում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմերի ծանրացնող հանգամանք: Միաժամանակ, Ֆրանսիայի քրեական օրենսգրքը սահմանում է «զենք» հասկացությունը, այն բնորոշելով որպես ցանկացած առարկա, որը նախատեսված է մարդուն սպանելու կամ մարմնական վնասվածք պատճառելու համար²⁴:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքում զենք է համարվում նաև մարդու համար վտանգավոր ցանկացած այլ առարկա, եթե հանցավորն այն օգտագործել կամ նախատեսել է օգտագործել սպանելու, մարմնական վնաս պատճառելու կամ սպառնալու համար:

Այստեղ զենքին է հավասարեցվում նաև ցանկացած այլ առարկա, որը օգտագործվել է սպանելու, մարմնական վնաս պատճառելու կամ սպառնալու համար և իր արտաքին տեսքով բավականաչափ նման է զենքին և կարող է շփոթության պատճառ դառնալ: Ուշագրավ է այն, որ **Ֆրանսիական օրենսդրությունն ընդհուպ զենք է համրում կենդանուն, եթե այն օգտագործվել է սպանելու, մարմնական վնաս պատճառելու կամ անձին սպառնալու համար**²⁵:

Հարկ է նշել, որ Ֆրանսիայում զենքի շրջանառությունը կանոնակարգվում է առանձին իրավական ակտով, որտեղ զենքերը դասակարգվում են 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբի համար սահմանելով զենքերի առանձին ցանկ²⁶:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմերի որակյալ հատկա-

²³ Կարծում ենք՝ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ միայն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը կունենա առերևույթ կասկածներ նշված առարկաների պիտանելիության վերաբերյալ (նյութի կարծրություն և այլն):

²⁴ Տե՛ս Ֆրանսիայի քրեական օրենսգրքը, հոդված 132-75, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/french_penal_code_33.pdf (վերջին մուտք՝ 10.12.2025 թ.):

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս Ֆրանսիայի «Ներքին անվտանգության» օրենսգրքը (Code de la sécurité intérieure (CSI)), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legifrance.gouv.fr/codes/texte_lc/LEGITEXT000025503132/ (վերջին մուտք՝ 10.12.2025 թ.):

նիշ է համարվում զենք կամ **այլ վտանգավոր առարկա** գործադրելու հանգամանքը²⁷:

Վտանգավոր առարկա հասկացության բովանդակությունը բացահայտված է Շվեյցարիայի «Ջենքի մասին» օրենքում, որի համաձայն՝ վտանգավոր առարկա են հանդիսանում գործիքները, կենցաղային սարքավորումները և սպորտային պարագաները, որոնք կարող են օգտագործվել անձին վնաս պատճառելու համար²⁸: Միևնույն ժամանակ, ըստ նշված օրենքի՝ գրպանի դանակները, ինչպիսիք են շվեյցարական բանակի գրպանի դանակը (Swiss Army Pocket Knife)²⁹ և նմանօրինակ առարկաները, չեն համարվում վտանգավոր առարկաներ³⁰:

Այսպիսով ֆրանսիական և շվեյցարական օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ նշված երկրներում **որոշ առարկաներ թեև ինքին զենք չեն համարվում և գտնվում են ազատ շրջանառության մեջ, այդուհանդերձ, այդ առարկաները հանցանք կատարելիս անձի կողմից գործադրվելու (գործադրվելու սպառնալիքի) փաստի ուժով հավասարեցվում են զենքին և հանգեցնում առավել խիստ քրեական պատասխանատվության**:

Հարկ է նկատել, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Նախկին քրեական օրենսգիրք) առկա իրավակարգավորումները բովանդակային առումով համահունչ էին հիշյալ իրավակարգավորումներին: Մասնավորապես, ֆրանսիական (շվեյցարական) մոդելի համանմանությամբ նախկին քրեական օրենսգրքով բազմաթիվ հանցակազմերի որակյալ հատկանիշ էր նախատեսված՝ հանցանքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելը:

Հարկ է արձանագրել, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Գործող քրեական օրենսգիրք) հիշյալ որակյալ հատկանիշն էական բովանդակային փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում կարևորվել է առարկայի կամ միջոցի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով որոշման շրջանակում անդրադառնալով հիշյալ ծանրացնող հանգամանքին արձանագրել է՝ «(...) **որակյալ է համարվում ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործումը, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացումը, այն է՝ առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը**: Այլ կերպ՝ արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է նախևառաջ ուշադրություն դարձնել հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և վերջինիս կողմից օբյեկտիվորեն իրականացված գործողությունների բնույթին:

Մասնավորապես, վերոնշյալ որակյալ հանգամանքն անձին մեղսագրելու համար, կարևոր է, որ վերջինս մարմնական վնասվածք պատճառելու համար **նախապես որոշակի ակտիվ գործողություններ իրականացնի, այն է՝ պատրաստի կամ հարմարեցնի համապատասխան առարկան կամ միջոցը**: Հաշվի առնելով «պատրաստել» կամ «հարմարեցնել» արտահայտությունների լեզվաբացատրական նշանակությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ

²⁷ Տե՛ս Շվեյցարիայի քրեական օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757_781_799/en#book_1/part_1/tit_3/chap_2/sec_2/lvl_5/lvl_a (վերջին մուտք՝ 10.12.2025 թ.):

²⁸ Տե՛ս «Ջենքի մասին» Շվեյցարիայի օրենքը, հոդված 4, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.fedlex.admin.ch/eli/cc/1998/2535_2535_2535/en#art_28_a (վերջին մուտք՝ 10.12.2025 թ.):

²⁹ Սրանք հիմնականում շվեյցարական հայտնի «Victorinox» բազմաֆունկցիոնալ դանակներն են, որոնց շեղի երկարության տարածված չափն ըստ բաց աղբյուրների՝ 60 մմ է:

³⁰ Տե՛ս նույն տեղում:

առկա դոկտրինայի մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առարկան կամ միջոցը **պատրաստել** ասելով պետք է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստի առարկա կամ միջոց է ստացվում կամ ստեղծվում: Ինչ վերաբերում է առարկան կամ միջոցը **հարմարեցնելուն**, ապա այն ենթադրում է հանցավորի կողմից **արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար** (օրինակ՝ մեքադյա ձողը կամ խոհանոցային դանակը սրելը, մեքադակնան մալուխը ընդհանուր զանգվածից կտրելով առանձնացնելը և այլն) (...)³¹:

Կարծում ենք՝ Գործող քրեական օրենսգրքում նախատեսված այս դրույթը ենթակա է արմատական լրամշակման և վերաձևակերպման: Բանն այն է, որ օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով կոնկրետ հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, անհարկի նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը: Մասնավորապես, եթե նախկինում արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար ինքնին բավարար էր որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման փաստը, ապա կատարված փոփոխության պայմաններում, անհրաժեշտ է ոչ միայն հավաստել անձի կողմից համապատասխան առարկան կամ միջոցը գործադրելու, այլև դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հանգամանքը: Ընդ որում՝ **հարկ է նկատել, որ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հատկանիշը օրենսդրորեն տարածվել է ոչ միայն առարկայի, այլ նաև միջոցի վրա**: Օրինակ, երբ անձը որևէ մեկին մարմնական վնասվածք պատճառելու համար օգտագործում է ազոտական թթու (կիսլատա), ապա հիշյալ ծանրացնող հանգամանքը կարող է վերագրվել անձին, եթե վերջինս նախապես պատրաստել է կամ հարմարեցրել այն:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցում որպես քննարկվող փոփոխության հիմնավորվում նշվում է այն, որ **անձի բարձր հանրային վտանգավորության** մասին իրականում վկայում է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ հանցանքի կատարումը, այլ ոչ թե որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ առողջությանը վնաս պատճառելը, երբ առարկան կարող է վերցվել նաև դեպքի վայրից: Դեպքի վայրից վերցրած առարկայով պատճառված վնասը կորակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի³²: Այդուհանդերձ, մեր կարծիքով հիշյալ ծանրացնող հանգամանքի բովանդակությունը **պետք է առավելապես արտացոլի ոչ թե անձի, այլ արարքի հանրային վտանգավորությունը**: Միաժամանակ, անձի հանրային վտանգավորությունը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի քրեաիրավական այլ ինստիտուտների կիրառման շրջանակում, օրինակ՝ պատիժ նշանակելիս:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև մտքում ունենալով միասնական իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք հիշյալ քրեաիրավական

³¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ռուստամ Շավալյանի գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշումը:

³² Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական, էջ 256:

նորմը վերաձևակերպել և համապատասխան հանցակազմերի որակյալ հատկանիշ նախատեսել հանցանքը՝ «դանակի, կռիվազենքի, լախտի, մահակի կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկայի, ինչպես նաև մարմնական վնասվածք պատճառելու ունակությամբ օժտված միջոցի գործադրմամբ» կատարելը:

IV. Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հետևյալն են՝

1. Սառը զենքի հետազոտության մեթոդիկան չունի գիտական և իրավական արժեք: Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առարկայի իրական հանրային վտանգավորությունը:

2. Արտասահմանյան երկրների փորձն առավել համահունչ է ժամանակակից միտումներին ու մարտահրավերներին: Այդ փորձի հաջող տեղայնացումը և ներդրումը ներպետական օրենսդրության մեջ հնարավորություն կտա չեզոքացնել սույն հետազոտության շրջանակում արձանագրված մտահոգություններն ու ռիսկերը:

Այսպես՝

➤ Արտասահմանյան երկրների օրենսդրությանը խորթ է «սառը զենք» հասկացությունը: Այդ երկրներում ապօրինի շրջանառության առարկա են հանդիսանում դանակը (շեղքավոր այլ առարկաները), անձին մարմնական վնասվածք պատճառելու կամ շարքից հանելու համար պատրաստված կամ հարմարեցված այլ առարկաները (հանրավտանգ առարկաներ):

➤ Քրեական պատասխանատվություն է նախատեսված հիշյալ առարկաները հասարակական/հանրային վայրում կրելու համար:

➤ Օրենսդրությունը հիմնականում բացահայտում է «հասարակական/հանրային վայր» հասկացության բովանդակությունը:

➤ Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության հիշյալ առարկաները հասարակական (հանրային) վայրում կրելու համար, եթե դա պայմանավորված է աշխատանքային (ծառայողական, մասնագիտական) պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ կամ ունեցել է այդ առարկաներն իր մոտ պահելու հիմնավոր պատճառ կամ օրինական հիմք:

➤ Այդ առարկաները հասարակական վայրում իր մոտ պահելու համար հիմնավոր պատճառի կամ օրինական հիմքի ապացուցման պարտականությունը կրում է այն անձը, ում մոտ դրանք գտնվում են:

3. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ապաքրեականացնել սառը զենք կրելը, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքից դուրս բերել սառը զենքի վերաբերյալ առկա իրավակարգավորումները, միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ գլխում նախատեսել հետևյալ բովանդակությամբ նոր հանցակազմ՝

«Հոդված 334.1. Դանակ կամ հանրավտանգ այլ առարկա կրելը

1. Հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղքով կամ սայրով ծալովի դանակի), կռիվազենք, լախտ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապարիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապարիկից երեսնապարիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հանրային է համարվում ցանկացած վայր, որտեղ տվյալ պահին հանրությունն ունի կամ կարող է ունենալ ազատորեն մուտք գործելու իրավունք, ներառյալ փողոցները, տրանսպորտային միջոցների կայանատեղիները, օդանավակայանները, շուկաները, պուրակները, այգիները, կինոթատրոնները, ցուցասրահները, մարզադաշտերը, ուսումնական հաստատությունները, հասարակական տրանսպորտը և հասարակական սննդի սպասարկման վայրերը:

4. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն հոդվածով նախատեսված հանցագործության համար, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առարկաների կրումը պայմանավորված է եղել աշխատանքային (ծառայողական, մասնագիտական) պարտականությունները կատարելու անհրաժեշտությամբ կամ ունեցել է այդ առարկաներն իր մոտ պահելու իրավաչափ նպատակ կամ օրինական հիմք: Նշված առարկաների կրումն ինքնապաշտպանության նպատակով արգելվում է»:

4. Օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով կոնկրետ հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, անհարկի նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը: Ընդ որում, հարկ է նկատել, որ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հատկանիշը օրենսդրորեն տարածվել է ոչ միայն առարկայի, այլ նաև միջոցի վրա:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև մտքում ունենալով միասնական իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք հիշյալ քրեաիրավական նորմը վերածնակերպել և համապատասխան հանցակազմերի որակյալ հատկանիշ նախատեսել հանցանքը՝ «դանակի, կոփազենքի, լախտի, մահակի կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկայի, ինչպես նաև մարմնական վնասվածք պատճառելու ունակությամբ օժտված միջոցի գործադրմամբ» կատարելը:

Ամփոփագիր: Սառը զենքի հետազոտության մեթոդիկական չունի գիտական և իրավական արժեք: Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առար-

կայի իրական հանրային վտանգավորությունը:

Այս համատեքստում արտասահմանյան երկրների փորձն առավել համահունչ է ժամանակակից միտումներին և մարտահրավերներին: Արտասահմանյան երկրներում առկա իրավակարգավորումների հաջող տեղայնացումը և ներդրումը ներպետական օրենսդրության մեջ հնարավորություն կտա չեզոքացնելու սույն հետազոտության շրջանակում արձանագրված մտահոգություններն ու ռիսկերը:

Հոդվածի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներով առաջարկել ենք ապաքրեականացնել սառը զենք կրելը, «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքից դուրս բերել սառը զենքի վերաբերյալ առկա իրավակարգավորումները, միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ գլխում նախատեսել նոր հանցակազմ, որը քրեական պատասխանատվություն կսահմանի հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60 մմ երկարության շեղբով կամ սայրով ծալովի դանակի), կոփազենք, լախտ, մահակ կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելու համար:

Հոդվածի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում արձանագրել ենք, որ օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, անհարկի նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկել ենք վերաձևակերպել նաև հիշյալ քրեաիրավական նորմը:

Annotation. The methodology for the examination of cold weapons lacks both scientific and legal value. The structural distinguishing characteristics of cold weapons established in the relevant standards are outdated and artificial and do not allow for an adequate differentiation between weapons and household items or other objects posing a public danger. From the perspective of threats to human life and health, such characteristics are not of material significance, and no forensic criterion, in and of itself, is capable of determining the actual level of an object's public dangerousness.

In this context, foreign experience is more consistent with contemporary trends and challenges. The successful localization and implementation of foreign legal regulations into domestic legislation would make it possible to neutralize the problems and risks identified within the scope of the present research.

Based on the results of the research conducted within the framework of the article, it is proposed to decriminalize the carrying of cold weapons, to remove the existing legal regulations concerning cold weapons from the Law of the Republic of Armenia “On the Regulation of Arms Circulation,” and, at the same time, to introduce a new corpus delicti in Chapter 35 of the Criminal Code of the Republic of Armenia establishing criminal liability for carrying, in a public place, a knife (with the exception of a folding knife with a blade or edge length of up to 60 mm), a knuckle-duster, a club, a baton, or any other cutting, piercing, striking, or crushing object.

The research conducted within the framework of the article also demonstrates that the legislator, by treating the commission of an offense through the use of an object or means specifically prepared or adapted in advance for inflicting bodily injury as an aggravating element of the offense under the current Criminal Code of the Republic of Armenia, has, in comparison with the former Criminal Code of the Republic of Armenia, unjustifiably narrowed the substantive scope of the said qualifying circumstance.

In light of the foregoing, it is also proposed to revise the wording of the aforementioned criminal law provision.

Аннотация. Методика исследования холодного оружия в её современном виде не обладает ни достаточной научной, ни правовой ценностью. Закрепленные в действующих стандартах конструктивные отличительные признаки холодного оружия носят устаревший и во многом искусственный характер и не позволяют надлежащим образом разграничивать оружие и предметы бытового назначения либо иные общественно опасные объекты. С точки зрения реальной угрозы жизни и здоровью человека указанные признаки не имеют решающего значения, а ни один криминалистический критерий сам по себе не способен адекватно определить степень общественной опасности конкретного предмета.

В данном контексте зарубежный опыт в большей степени соответствует современным тенденциям и вызовам. Последовательная локализация и имплементация зарубежных правовых моделей во внутреннее законодательство способны нейтрализовать выявленные в рамках настоящего исследования проблемы и минимизировать связанные с ними правовые риски.

По результатам проведенного исследования предлагается декриминализировать ношение холодного оружия, исключить действующие нормы, регулирующие оборот холодного оружия, из Закона Республики Армения «О регулировании оборота оружия», а также одновременно предусмотреть в главе 35 Уголовного кодекса Республики Армения новый состав преступления, устанавливающий уголовную ответственность за ношение в общественном месте ножа (за исключением складного ножа с длиной клинка или лезвия до 60 мм), кастета, дубинки, палицы либо иного режущего, колющего, ударного или дробящего предмета.

В ходе исследования также установлено, что законодатель, рассматривая в действующем Уголовном кодексе Республики Армения совершение преступления с применением предмета или средства, заранее подготовленного либо приспособленного для причинения телесных повреждений, в качестве квалифицирующего признака, необоснованно сузил его содержание по сравнению с ранее действовавшим уголовным законодательством.

Исходя из изложенного, обосновывается необходимость переработки формулировки соответствующей уголовно-правовой нормы.

Բանալի բառեր - սառը զենք, հետազոտության մեթոդիկա, քրեագիտական չափանիշ, ստանդարտներ, իրավական նշանակություն, արտասահմանյան երկրների փորձ, ապաքրեականացում, դանակ, հանրապետական առարկաներ, իրավակարգավորումների տեղայնացում:

Keywords: cold weapons, methodology of forensic examination, criminalistic criteria, standards, legal significance, foreign experience, decriminalization, knife, objects posing a public danger, localization of legal regulation.

Ключевые слова: холодное оружие, методика экспертного исследования, криминалистические критерии, стандарты, правовое значение, зарубежный опыт, декриминализация, нож, общественно опасные предметы, локализация правового регулирования.

Օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկ

1. Իրավական ակտեր

1. «Դանակների և շեղբավոր զենքերի մասին» Դանիայի օրենք (Knivloven), <https://danskelove.dk/knivloven>,
2. «Չենքի մասին» Գերմանիայի օրենք (WaffG), https://www.gesetze-im-internet.de/englisch_waffg/englisch_waffg.html,
3. «Չենքի մասին» Շվեյցարիայի օրենք, https://www.fedlex.admin.ch/eli/cc/1998/2535_2535_2535/en#art_28_a,
4. «Ընդհանուր բնույթի հանցագործությունների մասին» Նոր Զելանդիայի օրենք, <https://www.legislation.govt.nz/act/public/1981/0113/latest/whole.html#DLM53545>,
5. «Հասարակական կարգի մասին» Ֆինլանդիայի օրենք, <https://www.finlex.fi/api/media/statute-foreign-language-translation/688459/mainPdf/main.pdf?timestamp=2003-06-26T21%3A00%3A00.000Z>,
6. Չենքերի և վտանգավոր առարկաների մասին» Իռլանդիայի օրենք, <https://www.irishstatutebook.ie/eli/1990/act/12/enacted/en/print#sec9>
7. ՀՀ կառավարության «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 2005 թվականի ապրիլի 21-ի N 605-Ն որոշում,

8. ՀՀ կառավարության «Քաղաքացիական, ծառայողական զենքի և ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» 2021 թվականի ապրիլի 1-ի N 429-Ն որոշում,
9. ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023թ., ՀՕ-368-Ն: Գործում է,
10. Նորվեգիայի քրեական օրենսգիրք, https://www.unodc.org/uploads/icsant/documents/Legislation/Norway/The_Penal_Code_-_Lovdata.pdf?utm_source=chatgpt.com
11. Շվեյցարիայի քրեական օրենսգիրք, https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757_781_799/en#book_1/part_1/tit_3/chap_2/sec_2/lvl_5/lvl_a,
12. Ֆինլանդիայի քրեական օրենսգիրք, https://www.unodc.org/cld/uploads/res/document/fin/the-criminal-code-of-finland_html/Criminal_code_of_Finland.pdf?utm_source=chatgpt.com,
13. Ֆրանսիայի «Ներքին անվտանգության» օրենսգիրք (Code de la sécurité intérieure (CSI)), https://www.legifrance.gouv.fr/codes/texte_lc/LEGITEXT000025503132/,
14. Ֆրանսիայի քրեական օրենսգիրք, https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/french_penal_code_33.pdf,

II. Դատական ակտեր

15. Վճռաբեկ դատարանի՝ Ռուստամ Շավալյանի գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշումը,

III. Գրականություն

16. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնարանման ուղեցույց,
17. Վ. Համբարձումյան, «Ձենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը սահմանող օրենսդրության սոցիալական հիմնավորվածությունը», Բանբեր Արդարադատության ակադեմիայի, 2025, № 1(14),
18. William Downs, Knives, offensive weapons and serious violence, The House of Commons Library, 14 October 2025, <https://researchbriefings.files.parliament.uk/documents/SN00330/SN00330.pdf>,
19. Вахрушев С.А., Гонтарь С.А. Ножи – холодное оружие или универсальный инструмент (уголовно-правовой и криминалистический анализ) //Закон и право. – 2001.-№8,
20. Звягин В.А., О декриминализации изготовления и сбыта холодного оружия // Журнал российского права. – 2015. – №3, <https://cyberleninka.ru/article/n/o-dekriminalizatsii-izgotovleniya-i-sbyta-holodnogo-oruzhiya/viewer>
21. Казанцев С.Я., Мазуренко П.Н., Проблемы экспертизы холодного оружия // Традиции криминалистических школ казанского университета и современные тенденции противодействия преступности / Материалы Всероссийской научно-практической конференции (г. Казань, 29-30 ноября 2007 г.) – Казань: Изд-во Казанск. гос. ун-та, 2008,
22. Певницкий С.Г., Некоторые вопросы, возникающие при производстве по делам, связанным с коллекционированием антикварного оружия // Адвокатская практика. 2005. № 1

Համբարձումյան Վ. - ԵԴՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլիաւցե՝ virab.hamardzumyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 19.01.2026 թ., տրվել է գրախոսության 19.01.2026 թ., երաշխավորվել է Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵԴՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Առաքելյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-151>

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

*Доктор юридических наук, доцент,
начальник Научно-исследовательского центра
прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз
Национальной академии наук Республики Армения,
преподаватель кафедры правоведения,
политологии и международных отношений
Международного университета «Евразия»*

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի
քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության, քաղաքագիտության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս*

GEVORG ISRAYELYAN

*Doctor of Law, Associate Professor,
Head of the Scientific Research Center of
Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy of
Sciences of the Republic of Armenia,
Lecturer of the Department of Law,
Political science and International relations at
Eurasia International University
<https://orcid.org/0009-0008-4062-8712>*

ОСНОВНЫЕ СОСТАВЫ ПОЛОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ, ПОТЕРПЕВШИМ ОТ КОТОРЫХ ЯВЛЯЕТСЯ РЕБЕНОК: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ НОРМ ДЕЙСТВУЮЩЕГО И ПРЕДЫДУЩЕГО УГОЛОВНЫХ ЗАКОНОВ

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԸ, ՈՐՈՆՑԻՑ ՏՈՒԺՈՂԸ ԵՐԵԽԱՆ Է.
ԳՈՐԾՈՂ ԵՎ ՆԱԽՈՐԴ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

THE MAIN COMPONENTS OF SEXUAL CRIMES, THE VICTIM OF WHICH IS A CHILD: A COMPARATIVE ANALYSIS OF THE NORMS OF CURRENT AND PREVIOUS CRIMINAL LAWS

Введение

Одной из задач правоохранительной деятельности является защита прав, свобод и законных интересов человека и гражданина. Наиболее опасными проявлениями нарушений прав и свобод человека являются преступные посягательства против человека, в том числе преступления против половой свободы и половой неприкосновенности, которые в обиходе принято называть половыми (сексуальными) преступлениями. Безусловно, эти преступления характеризуются повышенной опасностью, когда совершаются в отношении ребенка.

Одним из важных средств борьбы с рассматриваемыми преступлениями является уголовно-правовой инструментарий. Эффективность борьбы может быть обеспечена, прежде всего, за счёт качественной регламентации соответствующих деяний, которые, кроме прочего, должны учитывать пробелы предыдущих регулирований.

Учитывая сказанное, а также то обстоятельство, что обсуждаемая в настоящей статье проблема в Республике Армения изучена недостаточно, актуальность данного исследования очевидна.

Половые преступления, совершаемые против ребенка, можно подразделить на две группы: преступления, которые совершаются только по отношению ребенка (иными словами – потерпевшим от деяния, описанного в основном составе преступления, является ребенок) и преступления, совершение которых против ребенка влечет более строгое наказание, т.к. указанный признак является обстоятельством, отягчающим ответственность. Целью данного научного исследования является сравнительный анализ тех основных составов половых преступлений, потерпевшим от которых является ребенок, в действующем и предыдущем уголовных законах и представление рекомендаций по совершенствованию регламентаций.

Исследование проведено путем применения сравнительного анализа, логических, формального-юридического методов.

Основная часть

Основные составы половых преступлений, совершаемые против ребенка

Как было отмечено выше, половые преступления, совершаемые против ребенка можно подразделить на две группы: преступления, которые совершаются только по отношению ребенка (иными словами – потерпевшим от деяния, описанного в основном составе преступления, является ребенок) и преступления, совершение которых против ребенка влечет более строгое наказание, т.к. указанный признак является обстоятельством, отягчающим ответственность.

Уголовный кодекс Республики Армения (далее – УК) содержит 5 составов половых преступлений, из которых к первой группе относятся сексуальные действия с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста, совершение развратного деяния, предложение полового сношения или иных действий сексуального характера или предложение по созданию либо производству детской порнографии лицу, не достигшему шестнадцатилетнего возраста (груминг), а ко второй группе – насильственные действия сексуального характера, понуждение

к действиям сексуального характера.

Далее представим результаты сравнительного анализа первой группы основных составов преступлений.

1. Сексуальные действия с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста.

В основном составе (ч. 1, ст. 200 УК) перечислены виды сексуальных действий. Так, к этим действиям относятся половое сношение, иные действия сексуального характера, в том числе – имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей. В предыдущем законе было зафиксировано половое сношение и иные действия сексуального характера.

Отметим, что имитация полового сношения может выражаться фрикциями дылдо во влагалище, в межбедренное пространство и т.п., а удовлетворение сексуальных потребностей – понуждением потерпевшего лица к мастурбации полового члена преступника, движением члена по брюшному пространству потерпевшего лица и т.п.¹

Подобная подробная трактовка действий сексуального характера в данном и других составах половых преступлений не уместна, т.к. виды указанных действий детально описаны в научной литературе² и, что важно, для квалификации конкретного деяния значения не имеют. Иными словами, создана ненужная дополнительная нагрузка закона.

В отличие от предыдущего, в действующем УК не указано, что возраст потерпевшего должен быть заведомо известен преступнику. Данный подход обусловлен тем, что признак преступления (недостижение соответствующего возраста потерпевшего лица) так или иначе должен быть осознан преступником³.

Следует иметь в виду, что если обсуждаемое преступление совершено по отношению лица от 12 до 14 лет, то деяние квалифицируется п. 1 ч. 2 ст. 200, т.е. указанный признак является квалификационным. Следовательно, при совершении обсуждаемого преступления против лица, не достигшего 12 лет, деяние квалифицируется как насильственное действие сексуального характера по отношению лица, находящегося в беспомощном состоянии (ч. 4, ст. 198 УК).

2. Совершение развратного деяния.

Ст. 201 предусматривает ответственность за совершение развратного деяния. Очевидно, что УК использовал формулировку «развратное деяние», вместо «развратных действий». Это обстоятельство обусловлено тем, что указанное преступление может быть совершено также бездействием. Например, прекращение просмотра порнофильма при появлении потерпевшего лица⁴.

¹ См.: Իւրախեցյան Գ. Վ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իւրախեցյան: Եր.: Հեղ. հրատ., 2023, հատոր 1, ս. 243:

² См.: Расследование многоэпизодных убийств, совершенных на сексуальной почве: Научно-методическое пособие /Под ред. А.И. Дворкина. – М.: Издательство «Экзамен», 2003, с. 252-253, Իւրախեցյան Գ. Վ., Հարությունյան Ա. Ա., Մեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործական մեկնաբանություններ: Երևան, Աստղիկ Գրատուն, 2018, ս. 49-52:

³ См.: *Израелян Г. В.* Половые преступления: новые регламентации и пути их совершенствования в Республике Армения //Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции: сб. науч. тр. / ГУ «Науч.-практ. центр проблем укрепления законности и правопорядка Генер. Прокуратуры Респ. Беларусь»; редкол.: И. А. Мороз (гл. ред.) [и др.]. — Минск: Изд. центр БГУ, 2025. — Вып. 18, с. 105.

⁴ См.: ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների

Термин «развратные действия» в предыдущем УК был неопределенным, поскольку не было ясно какие деяния он предполагал. В действующем УК указаны следующие деяния – распространение, показ порнографического материала или предмета среди лиц, не достигших шестнадцатилетнего возраста, половое сношение, раздевание либо совершение сексуальных действий в присутствии указанных лиц, ведение разговора сексуального характера с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста, либо совершение иного деяния, направленного на возбуждение сексуального желания (например, прекращение полового сношения при появлении потерпевшего лица).

3. Предложение полового сношения или иных действий сексуального характера либо предложение по созданию или производству детской порнографии лицу, не достигшему шестнадцатилетнего возраста (груминг).

В истории отечественного законодательства УК впервые предусматривает ответственность за груминг (ст. 202). Указанное преступление предполагает предложение встречи лицу, не достигшему 16-летнего возраста, лицом, достигшим 18-летнего возраста, с использованием информационно-коммуникационных технологий, и совершения действия, направленного на встречу, с целью полового сношения или совершения иных действий сексуального характера, в том числе имитации полового сношения или удовлетворение сексуальной потребности, либо создания или производства детской порнографии, если отсутствуют признаки преступлений, предусмотренных статьями 189 (траффикинг, или эксплуатация ребенка) или статьями 198-201 УК (виды других преступлений против половой свободы и половой неприкосновенности).

Таким образом, обязательными признаками данного состава преступления являются с объективной стороны – два действия (предложение о встрече и совершение действия, направленного на встречу), средство – информационно-коммуникационные технологии, а с субъективной стороны – вышеуказанная цель. Также прямо обозначены возраст преступника и потерпевшего лица.

Из буквы закона следует: если преступник, используя информационно-коммуникационные технологии, с целью совершения, например, полового сношения предложит встречу потерпевшему, встретится с ним и совершит указанное действие, то деяние будет квалифицировано только ст. 200 УК⁵.

Следовательно, по нашему мнению, груминг, по своей сути, является подготовительным действием к другим преступлениям (иные половые преступления, создание, распространение или хранение порнографических материалов или предметов). Например, преступник предлагает встречу, встречается с потерпевшим лицом, с которым имеет насильственное половое сношение. В таком случае деяние квалифицируется не по статье 202, а по статье 198. Следовательно, предусмотрение груминга не целесообразно.

Предложения, направленные на устранение проблематичных регламентаций

Учитывая вышеуказанное, в целях совершенствования регламентаций предлагается признать утратившими силу:

մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբրիելյան և այլք: ԵԽ, Երևան, 2022, с. 292 // <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (дата допуска: 11.12.2025).

⁵ См.: Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտազործական մեկնաբանություններ): Ս. Վ. Առաքելյան, Ա. Վ. Բարսեղյան: – Եր.: Արդարադատության ակադեմիա, 2023, с. 27:

1) выражение «половое сношение, иные действия сексуального характера, в том числе – имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей» в основных составах соответствующих половых преступлений, т.к. виды сексуальных действий подробно описаны в научной литературе, для квалификации соответствующих деяний, по сути, значения не имеют (нет разницы – совершено половое сношение или иное действие сексуального характера), следовательно, создана ненужная дополнительная нагрузка закона. Вместо указанных выражений предлагается в диспозициях использовать термин «действия сексуального характера», которое вмещает как половое сношение, так и иные действия сексуального характера, в том числе – имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей;

2) ст. 202, т.к. груминг является подготовительным действием к другим преступлениям (иные половые преступления, создание, распространение или хранение порнографических материалов или предметов)⁶.

Закключение

Подводя итоги выполненного и изложенного выше научного исследования, в заключении считаем важным сформулировать следующие выводы и предложения:

1. В рамках настоящего исследования половые преступления подразделены на две группы: преступления, которые совершаются только по отношению ребенка (иными словами – потерпевшим от деяния, описанного в основном составе преступления, является только ребенок) и преступления, совершение которых против ребенка влечет более строгое наказание, т.к. указанный признак является обстоятельством, отягчающим ответственность. УК содержит 5 составов половых преступлений, из которых к первой группе относятся сексуальные действия с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста, совершение развратного деяния, предложение полового сношения или иных действий сексуального характера или предложение по созданию или производству детской порнографии лицу, не достигшему шестнадцатилетнего возраста (груминг), а ко второй группе – насильственные действия сексуального характера, понуждение к действиям сексуального характера.

2. Сравнительный анализ первой группы основных составов преступлений показал:

- В основном составе сексуальных действий с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста, перечислены виды сексуальных действий – половое сношение, иные действия сексуального характера, в том числе имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей. В предыдущем законе было зафиксировано половое сношение и иные действия сексуального характера.

Кроме того не указано, что возраст потерпевшего должен быть заведомо известен преступнику. Данный подход обусловлен тем, что признак преступления (недостижение соответствующего возраста потерпевшего лица) так или иначе должен быть осознан преступником.

- УК использовал формулировку «развратное деяние», вместо «развратных действий», имеющий место в предыдущем законе. Это обстоятельство обусловлено тем, что указанное

⁶ См.: *Израелян Г. В.* Половые преступления: новые регламентации и пути их совершенствования в Республике Армения // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции: сб. науч. тр. / ГУ «Науч.-практ. центр проблем укрепления законности и правопорядка Генер. Прокуратуры Респ. Беларусь»; редкол.: И. А. Мороз (гл. ред.) [и др.]. — Минск: Изд. центр БГУ, 2025. — Вып. 18, с. 106-107.

преступление может быть совершено также бездействием. Кроме того, термин «развратные действия» в предыдущем УК был неопределенным, поскольку не было ясно, какие деяния он предполагал. В действующем УК указан круг соответствующих деяний.

3. Предусмотрен груминг – как половое преступление, которое не было известно предыдущему закону. Обязательными признаками данного состава преступления являются с объективной стороны два действия (предложение о встрече и совершение действия, направленного на встречу), средство – информационно-коммуникационные технологии, с субъективной стороны – цель преступления. Также прямо обозначены возраст преступника и потерпевшего лица.

4. В целях совершенствования регламентаций предлагается признать утратившими силу:

1) выражение «половое сношение, иные действия сексуального характера, в том числе – имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей» в основных составах соответствующих половых преступлений, т.к. указанные виды сексуальных действий подробно описаны в научной литературе, для квалификации соответствующих деяний, по сути, значения не имеют, следовательно, создана ненужная дополнительная нагрузка закона. Вместо указанных выражений предлагается в диспозициях использовать термин «действия сексуального характера», которое вмещает как половое сношение, так и иные действия сексуального характера, в том числе – имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей;

2) ст. 202, т.к. груминг является подготовительным действием к другим преступлениям (иные половые преступления, создание, распространение или хранение порнографических материалов или предметов).

Аннотация. Сравнительный анализ, проведенный автором, показал наличие таких регламентаций, которые не были известны предыдущему уголовному закону. Так, в основном составе сексуальных действий с лицом, не достигшим шестнадцатилетнего возраста, перечислены виды сексуальных действий – половое сношение, иные действия сексуального характера, в том числе имитация полового сношения и удовлетворение сексуальных потребностей. Последнее выражение отсутствовало в предыдущем законе. Кроме того, не указано, что возраст потерпевшего должен быть заведомо известен преступнику. Данный подход обусловлен тем, что признак преступления должен быть осознан преступником. УК использовал формулировку «развратное деяние», вместо «развратных действий», имеющий место в предыдущем законе. Это обстоятельство обусловлено тем, что указанное преступление может быть совершено также бездействием. Термин «развратные действия» в предыдущем УК был неопределенным, поскольку не было ясно, какие деяния он предполагал. В действующем УК указан круг соответствующих деяний. Предусмотрен груминг как половое преступление, которое не было известно предыдущему закону.

В результате исследования были выявлены проблемные регламентации, по устранению которых автор сформулировал соответствующие предложения.

Ամփոփագիր: Հեղինակի կողմից կատարված համեմատական վերլուծության արդյունքները հավաստեցին այնպիսի կարգավորումների առկայությունը, որոնք հայտնի չէին նախորդ քրեական օրենսդրությանը: Այսպես, տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողությունների հիմնական հանցակազմում թվարկված են սեքսուալ բնույթի գործողությունների տեսակները՝ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը: Վերջին արտահայտությունը նախկին

օրենքում բացակայում էր: Բացի դրանից՝ մատնանշված չէ, որ տուժողի տարիքը պետք է հայտնի լինի հանցագործին: Այս մոտեցումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ հանցագործության հատկանիշը պետք է գիտակցվի կատարողի կողմից: Քրեական օրենսգրքում օգտագործվել է «անառակաբարո արարք» եզրը՝ «անառակաբարո գործողություններ»-ի փոխարեն, որը նախատեսված էր նախորդ օրենքում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ նշված հանցագործությունը կարող է կատարվել նաև անգործությամբ: Նախորդ քրեական օրենսգրքում «անառակաբարո գործողություններ» եզրն անորոշ էր, քանի որ պարզ չէր, թե ինչպիսի գործողություններ է դա ենթադրում: Գործող քրեական օրենսգրքը սահմանում է համապատասխան արարքների շրջանակը: Նախատեսվել է գրումինգը որպես սեռական հանցագործություն, որն ամրագրված չէր նախորդ օրենքով:

Հետազոտության արդյունքում բացահայտվել են խնդրահարույց կարգավորումներ, որոնց շտկման համար հեղինակի կողմից ձևակերպվել են համապատասխան առաջարկություններ:

Annotation. A comparative analysis, conducted by the author, showed the existence of such regulations that were not known to the previous criminal law. Thus, the main composition of sexual acts with a person under the age of sixteen lists the types of sexual acts – sexual intercourse, other sexual acts, including imitation of sexual intercourse and satisfaction of sexual needs. The latter expression was missing from the previous law. Besides, it is not indicated that the age of the victim should be known to the perpetrator. This approach is based on the fact that the sign of a crime must be recognized by the perpetrator. The Criminal Code used the phrase "depraved deed" instead of the "depraved acts" that took place in the previous law. This circumstance is due to the fact that the specified crime can also be committed by inaction. The term "depraved acts" in the previous Criminal Code was vague, as it was not clear what acts he was suggesting. The current Criminal Code specifies the range of relevant acts. Grooming is provided for as a sexual offense, which was not prohibited by the previous law.

As a result of the research, problematic regulations were identified, for the elimination of which the author formulated appropriate proposals.

Ключевые слова: ребенок, половые преступления, половая свобода, половая неприкосновенность.

Բանալի բառեր – երեխա, սեռական հանցագործություններ, սեռական ազատություն, սեռական անձեռնմխելիություն:

Keywords: child, sexual crimes, sexual freedom, sexual integrity.

Список использованной литературы

1. Исраелян Г. В. Половые преступления: новые регламентации и пути их совершенствования в Республике Армения // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции: сб. науч. тр. / ГУ «Науч.-практ. центр проблем укрепления законности и правопорядка Генер. Прокуратуры Респ. Беларусь»; редкол.: И. А. Мороз (гл. ред.) [и др.]. — Минск: Изд. центр БГУ, 2025. — Вып. 18. — 344 с.

2. Расследование многоэпизодных убийств, совершенных на сексуальной почве: Научно-методическое пособие / Под ред. А.И. Дворкина. – М.: Издательство «Экзамен», 2003. – 416 с.

3. Իսրայելյան Գ. Վ. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. իրատ., 2023. Հատոր 1. - 264 էջ:

4. Իսրայելյան Գ. Վ., Հարությունյան Ա. Ս., Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական մեկնաբանություններ: Երևան, Աստղիկ Գրատուն, 2018. – 104 էջ:

5. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների

մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբուզյան և այլք: ԵԽ, Երևան, 2022 // <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57>:

6. Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործնական մեկնաբանություններ): Ս. Վ. Առաքելյան, Ա. Վ. Բարսեղյան: – Եր.: Արդարադատության ակադեմիա, 2023. – 444 էջ:

Израелян Г. - доктор юридических наук, доцент, начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения, преподаватель кафедры правоведения, политологии и международных отношений Международного университета «Евразия», эл. почта: g_i_1979@mail.ru.

Статья представлена в редакцию 12.12.2025 г., отправлена на рецензию 12.12.2025 г., рецензент: проректор Образовательного комплекса МВД РА, координирующий учебные работы, доктор юридических наук, доцент М.М. Маркосян, принята к публикации: 08.04.2026 г.

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-159>

ՍՈՒՐԵՆ ԲԱԴԻՆՅԱՆ
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

SUREN BAGHINYAN
*PhD student of the Criminal Procedure and Criminalistics
Department of Yerevan State University*

СУРЕН БАГИНЯН
*Соискатель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
<https://orcid.org/0009-0001-6726-3660>*

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿՏԻԿԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**TACTICAL AND TECHNOLOGICAL BASES AND PECULIARITIES
OF INTERACTION BETWEEN BODIES CONDUCTING CRIMINAL
PROCEEDINGS AND OPERATIONAL-SEARCH ACTIVITIES DURING
THE INVESTIGATION OF HIGH TREASON**

**ТАКТИКО-ТЕХНОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ И ОСОБЕННОСТИ
ВЗАИМОДЕЙСТВИЯ ОРГАНОВ, ОСУЩЕСТВЛЯЮЩИХ УГОЛОВНОЕ
ПРОИЗВОДСТВО И ОПЕРАТИВНО-РОЗЫСКНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ,
В ХОДЕ РАССЛЕДОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ**

Ներածություն

Պետական դավաճանությունների քննության ընթացքում կարևորագույն նշանակություն ունի վարույթն իրականացնող մարմնի արդյունավետ փոխգործողության կազմակերպումն օպերատիվ-հետախուզական գործունեություն (այսուհետ՝ ՕՀԳ) իրականացնող մարմինների հետ, որը երաշխավորում է վարույթային գործողությունների բնականոն և դինամիկ իրականացումը: Պետական դավաճանության բացահայտմանն ուղղված վարույթային գործողու-

թյունների կատարման երկարաձգումը չափազանց բացասական ազդեցություն է ունենում քննության արդյունքների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ հետքերի անհետացման ընթացքն այնքան օրինաչափ է, որքան՝ դրանց առաջացումը: Դավաճանական գործողություններ կատարած անձինք, որպես կանոն, ակտիվորեն մասնակցում են հանցանքի հետքերի քողարկմանը և քննությանը խոչընդոտելուն, կարող են թաքնվել երկրի սահմաններից դուրս, իրացնել հավաքված տեղեկությունները, ինչը լրացուցիչ վնաս հասցնում է Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը:

Ինչպես ցույց է տալիս վերջին տարիների քննչական պրակտիկայի վերլուծությունը, պետական դավաճանության դեպքերով հատկապես քրեական վարույթի նախաձեռնման և քննության սկզբնական փուլի համար առանցքային նշանակություն ունի քրեական վարույթ և ՕՀԳ իրականացնող մարմինների կազմակերպված և գրագետ փոխգործողության ապահովումը: Ավելին, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, քրեական գործի հարուցման քրեադատավարական փուլի որպես այդպիսին վերացումը, այդ ընթացքում ստուգողական գործողությունների իրականացման անհնարինությունը ներկայում անհրաժեշտաբար պայմանավորում են հետաքննության մարմինների կողմից իրականացվող ՕՀԳ-ի ոչ միայն իրավական, այլ նաև գործնական, մարտավարական հիմքերի լրջագույն վերանայում¹:

Նման պարագայում պետական դավաճանության քննության ընթացքում քրեական վարույթ և ՕՀԳ իրականացնող մարմինների փոխգործողության կազմակերպահրավական, տակտիկական հիմքերի ուսումնասիրումը, դրանց առանձնահատկությունների վերհանումը հրատապ խնդիր է:

Հիմնական հետազոտություն

Քրեական վարույթ և ՕՀԳ իրականացնող մարմինների համատեղ աշխատանքի նշանակությանն անդրադառնալիս Ա. Սիմոնյանը նշում է. «Հանցագործությունների բացահայտման կարևորագույն երաշխիքներից է իրավապահ համակարգի մարմինների ակտիվ և արդյունավետ փոխգործողությունը, ինչպես նաև՝ համագործակցությունն այլ պետական և ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների հետ: Ընդ որում, հանցագործությունների արդյունավետ քննության, ինչպես նաև դրանց կանխման ու խափանման տեսանկյունից առավել կարևորվում է հատկապես քննչական և հետաքննության մարմինների աշխատակիցների համաձայնեցված գործունեության ապահովումը»²:

Պետական դավաճանության քննության տեսանկյունից ուշագրավ է մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն պնդումը, որ քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործակցությունը, հատկապես զգացվում է բարդ կամ բազմադրվագ, ինչպես նաև հասարակական հնչեղություն ունեցող գործերով: Փոխգործակցության ապահովումն առավել ընդգծվում է կազմակերպված խմբերի կողմից կատարված հանցագործությունների քննության ժամանակ, երբ փոխգործակցության հիմնական պայմաններից մեկը տեղեկատվության փոխանակումն է, որը թույլ է տալիս արդյունավետ և ժամանակին օգտագործել քննիչի և օպերատիվ ստորաբաժանումների ուժերն ու միջոցները³:

¹ Տե՛ս Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ, Իրավակիրառական ուղեցույց /Հեղինակային խումբ, գիտ. խմբ. Վ.Գ. Ենգիբարյան- Եր., ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ, 2023, էջ 111:

² Տե՛ս Սիմոնյան Ա., Որոշ նկատառումներ քրեադատավարական փոխգործողության հեռանկարային իրավակարգավորումների վերաբերյալ//Բանբեր Արդարադատության ակադեմիայի, Երևան, № 1, էջ 101:

³ Տե՛ս Ենգիբարյան Վ., Մարտիկյան Ռ., Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության հրատապ հիմնախնդիրները, «Դատական իշխանություն»

Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ քրեադատավարական փոխգործողության հիմքերի և ձևերի վերաբերյալ միասնական սահմանում գոյություն չունի: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ հետաքննության մարմնի և քննիչի փոխգործողություն ասելով՝ պետք է հասկանալ այդ մարմնի՝ միմյանցից անկախ և օրենքի վրա հիմնված փոխգործողությունը, որի դեպքում նրանք գործում են համաձայնեցված՝ նպատակ հետապնդելով կանխել, խափանել և բացահայտել հանցագործությունները, քրեական պատասխանատվության ենթարկել մեղավորներին, ապահովել պատճառված վնասի հատուցումը⁴:

Որոշ հեղինակներ էլ քննիչի և հետաքննության մարմնի փոխգործողությունն ավանդականորեն դասակարգում են տարբեր հիմքերով՝

ա) քրեական դատավարության օրենքով կարգավորվող,

բ) գերատեսչական և միջգերատեսչական հրամաններով և կարգադրություններով նախատեսված,

գ) քննչական պրակտիկայում ձևավորված, բայց իրենց նորմատիվ ամրագրումը չստացած⁵:

Փոխգործողության դասակարգման յուրօրինակ ձև է առաջարկում Ի. Ֆ. Գերասիմովը, որը փոխգործունեությունը բաժանում է 2 խմբի՝ դատավարականի և կազմակերպատակտիկականի⁶:

Փոխգործողության քրեադատավարական ձևի տեսանկյունից՝ առավել ընդունելի է Ռ. Ս. Բելկինի տեսակետը, համաձայն որի՝ անկախ նրանից՝ փոխգործողությունը ժամանակավոր է, թե մշտական, իրականացվում է մեկ քննչական գործողության, թե ապացուցման ողջ գործընթացի ընթացքում, միևնույն է, այն որոշակի առանձին գործողությունների, օպերացիաների մեթոդների ու միջոցների կիրառման եղանակով իրականացվող գործունեություն է⁷:

Պետական դավաճանության քննության տեսանկյունից ուշագրավ է մասնագիտական գրականության մեջ պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանի և Բ. Մ. Հովհաննիսյանի արտահայտած տեսակետը, ըստ որի՝ օպերատիվ-հետախուզական մարմինների աշխատողների՝ քննիչի հետ փոխգործողության մեջ մտնելը միայն տակտիկական հնարք չէ, այլև օրենքի պահանջ, իսկ քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության հիմքում ընկած է փոխադարձ կապը և փոխկախվածությունը⁸:

Ամփոփելով՝ նշենք, որ մենք համակարծիք ենք պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի արտահայտած տեսակետին, ըստ որի՝ հանցագործությունների քննության և բացահայտման ընթացքում իրավապահ մարմինների փոխգործողությունը բնորոշվում է որպես օրենքի, գերատեսչական և միջգերատեսչական նորմատիվ ակտերի վրա հիմնված, տեղով, ժամանակով, խնդիրներով և նպատակներով համաձայնեցված և իրենց հատուկ ուժերի, միջոցների, հնարքների և մեթոդների օգտագործմամբ նախաքննություն և հետաքննություն իրականացնող մարմին-

գիտամեթոդական ամսագիր, № 11-12/245-246, 2019, էջեր 94-96:

⁴ Տե՛ս Գуткин И. М., Органы дознания и предварительного следствия системы МВД и их взаимодействие. М., 1973, էջ 70:

⁵ Տե՛ս Балашов А. Н., Взаимодействие следователя и органа дознания при расследовании преступлений. М., 1973; Герасимов И. Ф., Взаимодействие органов предварительного следствия и дознания при расследовании особо опасных преступлений. Свердловск, 1965; Дубинский А. Я., Взаимодействие следователя с органом дознания. Киев, 1970; Рогожин В. А., Взаимодействие следователя с органами дознания при производстве расследования по делам о преступлениях, совершенных несовершеннолетними. Киев, 1985:

⁶ Տե՛ս Герасимов И. Ф., Некоторые проблемы раскрытия преступлений. Свердловск, 1976, էջեր 132-151:

⁷ Տե՛ս Белкин Р. С., Теория доказывания: Научно-методическое пособие. М., Норма, 1999, էջ 130:

⁸ Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Բ.Մ., Օհանյան Լ.Պ., Քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության տակտիկան, Դասախոսություն, Երևան, 1981, էջեր 3-5:

ների համատեղ գործունեություն, որն ուղղված է հանցագործությունների, հանցանք կատարած անձանց բացահայտման նպատակով ապացուցողական տեղեկություններ պարունակող աղբյուրներ որոնելուն⁹:

Ինչ վերաբերում է քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի դատավարական փոխգործողության իրավական հիմքերին, ապա դրանք կարգավորվում են ՀՀ ՔԴՕ-ով, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում տրված է հետաքննության սահմանումը, համաձայն որի՝ հետաքննությունը հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն է, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների (այսուհետ՝ ՕՀՄ) կատարումը:

Նախաքննության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև հանցագործությունների արագ բացահայտման տեսանկյունից կարևոր է, թե քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության շրջանակներում ով պետք է հանդես գա նախաձեռնությամբ: Այս իմաստով հատկանշական է, որ գործող քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ գաղտնի քննչական գործողությունը կարող է նախաձեռնվել միայն ու բացառապես քննիչի կողմից, այնուհետև դրա կատարումը հանձնարարվել հետաքննության մարմնին, մինչդեռ քրեական վարույթի շրջանակում ՕՀՄ-ներ կարող են նախաձեռնվել ինչպես քննիչի, այնպես էլ հետաքննության մարմնի կողմից:

Այս տեսանկյունից մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ բոլոր դեպքերում, կարևոր չէ, թե ով է փոխգործողության նախաձեռնողը. այն կարող է լինել ինչպես քննիչը, այնպես էլ հետաքննության մարմնի աշխատակիցը, էական է այն, որ նախաձեռնողը պետք է կարողանա հոգեբանական կապ հաստատել փոխգործողության մյուս մասնակցի հետ, քանի որ հանցագործություններ քննելիս քննիչի և հետաքննության մարմնի միջև հանձնարարություններից բացի՝ առաջանում են նաև փոխգործողության այլ՝ ոչ դատավարական ձևեր, և փոխգործողության բոլոր տեսակների համար բնութագրական ու անհրաժեշտ է քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև անձնական շփման հաստատումը: Հետևաբար՝ էական նշանակություն են ձեռք բերում ինչպես քննիչի, այնպես էլ հետաքննության մարմնի աշխատակցի անձնական հաղորդակցական հատկությունները: Հաղորդակցման անձնական հատկություններին են վերաբերում. քաղաքավարությունը, բարյացակամությունը, հարգալից վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ուրիշին լսելու ունակությունը, հետաքրքրությունը մարդկանց նկատմամբ և այլն, այլ կերպ ասած՝ կարևոր է նրանց միջև հոգեբանական կապի հաստատումը¹⁰:

Հետաքննության մարմնի կողմից նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթով ՕՀՄ-ներ իրականացնելու համար հանձնարարության պարտադիր բնույթն ընդգծել է նաև Վճռաբեկ դատարանը՝ *Գոռ Սարգսյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման* մեջ, մասնավորապես արձանագրելով՝ *նախաքննության փուլում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնի կողմից իրականացվել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, այնինչ քրեական գործի նյութերում բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ դա-*

⁹ Մանրամասն տե՛ս Енгибарян В. Г., Теоретические основы взаимодействия органов расследования// «Դատական իշխանություն», Երևան, 2010 թ. մայիս, 5 (130), էջ 87:

¹⁰ Տե՛ս *Ենգիբարյան Վ., Չախոյան Ա.*, Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության ձևերի քրեադատավարական և կազմակերպատակտիկական առանձնահատկությունները// «Պետություն և իրավունք», 2016թ. № 2 (72) էջ 176:

տրախազի ցուցումը կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ մասի 4-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ քննիչի հանձնարարությունը՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ¹¹:

Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ հանձնարարությունն արդյունավետ ու նպատակահարմար փոխգործողության ձև է, որը սահմանված է օրենքով¹²: Հանձնարարություն տալով՝ քննիչը հետաքննության մարմնի առջև խնդիր է դնում, սակայն դրա լուծման ուղիները և միջոցները որոշում է հետաքննության մարմինը:

Այդուհանդերձ, հարկ է հիշատակել, որ ՕՀԳ իրականացնող մարմինների և քննիչի համագործակցությունը չի նշանակում ծառայողական ենթակայություն, դատավարական և օպերատիվ-հետախուզական գործունեության միաձուլում: Դրանցից յուրաքանչյուրը շարունակում է մնալ ինքնուրույն մարմին՝ գործելով իր իրավասությանը խիստ համապատասխան¹³:

Պետական դավաճանության քննության տեսանկյունից առավել կարևորվում է նաև փոխգործողության կազմակերպատակտիկական ձևը, որի ամենատարածված դրսևորումներն ըստ Ի. Ֆ. Գերասիմովի և Ն. Ա. Յակուբովիչի՝ համարվում են.

- համատեղ դեպքի տեղ մեկնումը,
- քննության համատեղ պլանավորումը,
- հատուկ խմբերի կողմից բարդ և բազմադրվագ գործերի քննության կազմակերպումը, որոնց կազմի մեջ մտնում են քննիչները և հետաքննության մարմինները,
- քննիչների և հետաքննության մարմինների՝ այլ վայրեր համատեղ մեկնումը, քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելը, քննվող գործի շրջանակներում¹⁴:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև առաջացող և պրակտիկայում շատ հանդիպող ու ամենատարածված փոխգործողության ձևը քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի համատեղ մեկնումն է դեպքի վայր¹⁵:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողությունների հաջորդ ձևը համատեղ գործունեության պլանավորումն է, որին հատուկ են որոշակի հոգեբանական առանձնահատկություններ: Ամենից առաջ հարկ է նշել, որ դրա համար կարևոր նշանակություն ունի գործնական, ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը:

Ընդ որում, պետք է նշել, որ քննիչի և հետաքննության մարմնի համատեղ գործունեության անհրաժեշտ ձևերից է տեղեկությունների համակարգված փոխանակումը: Փոխգործո-

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի ԵԿԴ/0229/01/16 որոշման 19-րդ կետը:

¹² Տե՛ս Мельников А. С., Поручение как одна из форм взаимодействия следователя с органами дознания// Совершенствование деятельности правоохранительных органов по борьбе с преступностью в современных условиях: материалы Международной научно-практической конференции (03–04 ноября 2011 г.). Вып. 8, Тюмень: ООО «Вектор Бук», Тюм. обл. Дума, ГАОУ ВПО ТО «ТГАМЭУП», 2011, էջեր 208–210; Кругликов А., Поручения следователя органам дознания о проведении оперативно-розыскных мероприятий в стадии возбуждения уголовного дела / А. Кругликов // Уголовное право, 2011, № 4, էջեր 88–92:

¹³ Տե՛ս Козусев А., Надзор за исполнением законов в оперативно-розыскной деятельности / А. Козусев // Законность, 1997, № 2, էջ 20:

¹⁴ Ратинов А. Р., Якубович Н. А., Взаимодействие следователей прокуратуры и органов милиции при расследовании и предупреждении преступлений. М., 1964, էջ 48:

¹⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Ենգիբարյան Վ., Չախոյան Ա., Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության ձևերի քրեադատավարական և կազմակերպատակտիկական առանձնահատկությունները// «Պետություն և իրավունք», Երևան, 2016թ. № 2 (72), էջեր 179-181:

ղության յուրաքանչյուր ձևի կիրառումը պետք է ավարտվի քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի համատեղ գործունեության արդյունքների ամփոփմամբ:

Համատեղ գործունեության արդյունքների ընկալումը, այսինքն՝ այն բանի գիտակցումը, որ ստեղծված կոմունիկատիվ կապը բերում է շոշափելի, օբյեկտիվ արդյունքների, ամրապնդում է փոխգործակցող քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի հարաբերությունները և լուրջ հիմքեր է ստեղծում ապագայում փոխգործողության համար¹⁶:

Հարկ է նշել, որ փոխգործողության կազմակերպման որոշ ձևեր մշակվել են նաև քննչական պրակտիկայի կողմից: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում իր իրավական կարգավորումն է ստացել գերատեսչական նորմատիվ ակտերում: Այս իմաստով միանգամայն համամիտ ենք Վ. Ենգիբարյանի և Ա. Չախոյանի տեսակետին, ովքեր գտնում են, որ դատավարական փոխգործողության ձևերն առավել լիարժեք արտացոլված են պրոֆեսոր Ա.Ա. Չուվիլևայի աշխատությունում.

➤ քննչական և օպերատիվ խմբի համատեղ հերթապահություն, որը նախատեսված է հերթապահ մաս հանցագործությունների մասին հաղորդումներ ստանալու արտակարգ դեպքերի համար,

➤ քննիչի և ոստիկանության աշխատակիցների քրեական գործերով աշխատանքն օպերատիվ-քննչական խմբի կազմում,

➤ քրեական գործ հարուցելու համար տվյալների միասնական քննարկում՝ դրանք բավարար լինելու առումով, որոնք ձեռք են բերվել օպերատիվ-հետախուզական եղանակով,

➤ քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու համար համաձայնեցված պլաններ կազմելը¹⁷:

Փոխգործողության կազմակերպական ձևի առանձնահատկությունը, ի տարբերություն դատավարականի, նրա անընդհատ կատարելագործումն է: Ի հայտ են գալիս նոր տեսակներ՝ պահանջելով իրենց փորձարկումները և դրանց հետագա ամրագրումը ենթաօրենսդրական ակտերում: Այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչյուրը պետք է հիմնված լինի երկու չափանիշների վրա.

ա) ցանկացած տեսակի փոխգործողությունը պետք է հիմնված լինի ֆունկցիոնալ պարտականությունների հետևողականության և ճիշտ բաժանման վրա:

բ) փոխգործողության ձևը և միջոցները չեն կարող հակասել օրենքներին¹⁸:

Քննիչի և հետաքննության մարմինների փոխգործողության զարգացմանը համընթաց, ինչպես կարծում է Ս. Վ. Բաժանովը, հետաքննության մարմինների գերիշխող գործառույթը դառնում է օպերատիվ-հետախուզական գործունեությունը¹⁹: Քննիչների և օպերատիվ աշխատակիցների (ոստիկանության) փոխգործողությունը կարգավորող օրենսդրության բացակայության պատճառով, այն կատարելագործվում է հենց պրակտիկայի ուժով:

Պետական դավաճանության քննության տեսանկյունից՝ առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ ՕՀ օրենքով սահմանված կարգով հետաքննության մարմինն իրավասու է նախաձեռնել և իրականացնել ՕՀՄ-ների ՕՀԳ-ի իրականացման փուլում, երբ դեռ չկա նախա-

¹⁶ Տե՛ս *Дулов А. В.*, Судебная психология. Изд. 2-е испр. И доп. Минск, «Вышейшая школа», 1975, էջ 93:

¹⁷ Տե՛ս *Чувилев А. А.*, Взаимодействие следователя органа внутренних дел с милицией. - М.: МВШМ МВД СССР, 1981- С. 15:

¹⁸ Մանրամասն տես *Ենգիբարյան Վ., Չախոյան Ա.*, Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության ձևերի քրեադատավարական և կազմակերպատակտիկական առանձնահատկությունները // «Պետություն և իրավունք», 2016 թ., № 2 (72) էջեր 182-183:

¹⁹ Տե՛ս *Бажанов С. В.*, Становление и развитие групповых методов расследования. М., Инфра-М, 1997, էջեր 11-13:

ծեռնված քրեական վարույթ, որը կարող է նախաձեռնվել դրանց կատարման արդյունքներով՝ ՀՀ ՔԴՕ-ի 177-րդ հոդվածով նախատեսված կարգով հետաքննության մարմնի կողմից պատշաճ հաղորդում ներկայացնելու հիմքով:

Բանն այն է, որ, ինչպես վկայում է քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը, պետական դավաճանության դեպքերը, որպես կանոն, բացահայտվում են ՕՀԳ փուլում ՕՀՄ-ներ իրականացնելու արդյունքում, ինչն էլ հիմք է հանդիսանում քրեական վարույթ նախաձեռնելու համար: Հատկանշական է, որ վերջին տարիների քննչական պրակտիկայի վերլուծության արդյունքները վկայում են, որ պետական դավաճանության քրեական վարույթները նախաձեռնվել են բացառապես հետաքննության մարմնի հաղորդման հիման վրա: Թերևս, նման հանգամանքը կարող ենք համարել այս տեսակ գործերի քննության օրինաչափություններից, ինչը բնավ ունի իր պատճառները:

Այս իմաստով հարկ է նկատել, որ հատկապես վերջին տարիներին պետական դավաճանության դեպքերը բացահայտվել են մեծամասամբ հակահետախուզական գործունեության շրջանակում, ինչը ևս քննարկվող տեսակի հանցագործությունների քննությանն ու բացահայտմանը բնորոշ օրինաչափություն է: Բանն այն է, որ պետական դավաճանության հնարավոր դեպքերի մասին օպերատիվ տեղեկությունները կարող են ստացվել հակահետախուզական գործունեության շրջանակում, հատկապես պետական գաղտնիքի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու շրջանակում, հետևաբար նման պայմաններում դրանք կարող են ստացվել այդպիսի գործառույթ իրականացնող մարմինների կողմից:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ հակահետախուզական գործունեությունը բնորոշվում է որպես՝ ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում իրականացվող գործունեություն՝ ուղղված օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտմանը, կանխմանը և խափանմանը:

Ինչպես ցույց է տալիս քննչական պրակտիկայի վերլուծությունը, ռազմական, պաշտպանական ոլորտում պետական դավաճանության դեպքերը բացահայտվել են ազգային անվտանգության մարմինների ռազմական հակահետախուզական գործունեության շրջանակներում:

Ինչպես արդեն նշել ենք, պետական դավաճանության դեպքերի բացահայտման և քրեական վարույթի նախաձեռնման համար հիմք կարող է հանդիսանալ նաև պետական գաղտնիքի պահպանության ուղղությամբ իրականացվող գործունեության արդյունքները:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետերով, նախատեսված է, որ ազգային անվտանգության մարմինները մասնակցում են պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում են պետական մարմիններում, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում, զինվորական կազմավորումներում, կազմակերպություններում պետական գաղտնիքի պահպանումը, սահմանված կարգով իրականացնում են միջոցառումներ՝ կապված քաղաքացիներին պետական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվության հետ:

Նույն հոդվածի 32-րդ կետով էլ սահմանված է, որ արտաքին հակահետախուզական գործունեության շրջանակներում, վարչապետի որոշմամբ սահմանված կարգով համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության հետ,

իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում անվտանգության ապահովմանը:

Պետական գործունեության վերը թվարկված ուղղությունների համատեքստում առավել ընդգծվում է ՕՀԳ-ի դերը, որի հատկանիշների համակցությունը որոշակիորեն հիմք է տալիս «նմանեցնելու» կամ երբեմն «նույնականացնելու» ՕՀԳ-ն հետախուզական և հակահետախուզական պետական ինքնուրույն գործունեության տեսակների հետ: Դրան նպաստում է նաև «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանումը, ըստ որի՝ արտաքին հետախուզական գործունեությունն արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից իրականացվող գործունեություն է, որն ուղղված է արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը, Հայաստանի Հանրապետության կենսական շահերին առնչվող տեղեկատվություն ստանալուն և մշակելուն, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, շրջակա միջավայրի պահպանության և կենսական այլ ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն աջակցելուն:

Միևնույն ժամանակ «Ազգային անվտանգության մարմինների լիազորությունները» սահմանող 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված է՝ «*օրենքով սահմանված կարգով իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ*»:

Պետական գործունեության նշված երեք կարևորագույն տեսակները, անշուշտ, ունեն ընդհանրություններ, սակայն ավելի շատ՝ տարբերություններ:

Հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական պետական գործունեության տեսակների բովանդակային տարբերությունները պայմանավորված են վերջիններիս առջև դրված օրենսդրական ուղղվածությամբ, գլխավոր նպատակներով և խնդիրներով, ինչպես նաև օբյեկտներով:

Ինչպես տեսնում ենք, պետության այդ երեք գործունեության տեսակներն ունեն տարբերություններ և ընդհանրություններ, սակայն նույնը կամ նույնական չեն²⁰:

Հարկ է նկատի ունենալ, որ պետական դավաճանության դեպքերի բացահայտման և քրեական վարույթի նախաձեռնման տեսանկյունից անխուսափելի է ազգային անվտանգության մարմինների ներգերատեսչական փոխգործողությունը, քանի որ պետական դավաճանությունների կատարման մեխանիզմի կոնսպիրատիվ բնույթը պահանջում է օպերատիվ-հետախուզական և օպերատիվ տեխնիկական ստորաբաժանումների համակարգված և կոորդինացված աշխատանք:

Կոորդինացիան կամ համակարգումը բովանդակային տեսանկյունից համատեղ գործունեության սուբյեկտներից մեկի, կազմակերպչական դերի դրսևորման ժամանակ կարգավորված փոխազդեցությունն է, որի պարագայում առկա է հարաբերությունների որոշակի աստիճանակարգություն:

Ա. Սիմոնյանի կարծիքով՝ այդուհանդերձ համակարգման իրավական բնույթը, դրա իրավական նշանակությունը և բովանդակությունը տարբեր են և կախված են նրանից, թե որպես իրավահարաբերությունների, որ ոլորտում է այն դրսևորվում:

²⁰ Տե՛ս Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ: Իրավակիրառական ուղեցույց /Հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Վ.Գ. Ենգիբարյան, Եր., ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ, 2023, էջեր 23-27:

Հանցագործությունների կանխարգելման կազմակերպման արդյունավետության ապահովման տեսանկյունից՝ առավել նպատակահարմար է տարբերակել համակարգման երկու հիմնական մոդել՝

1. ըստ աստիճանակարգության՝ ստորադաս մարմինների աշխատանքի համակարգում կամ կոշտ համակարգում,

2. ինքնուրույն, միմյանցից անկախ, ենթակայական աստիճանակարգության տակ չգտնվող մարմինների աշխատանքների համակարգում կամ մեղմ համակարգում²¹:

Անդրադառնալով ՕՀԳ տարբեր մասնագիտացված ստորաբաժանումների համագործակցությանը՝ Ս. Բալանյանը նշում է, որ *նեղ իմաստով՝ դա տարբեր գերատեսչությունների օպերաշխատողների հարաբերություններն են, որոնք ծագում են տարբեր փուլերում կոնկրետ օպերատիվ ստորաբաժանումների հետ կապված՝ ելակետային ինֆորմացիայի ստացումից և գնահատումից մինչև պլանավորումը և հավաքված տվյալների իրացման օպերատիվ-տեխնիկական և ուժային ապահովումը (օպերատիվ-մարտավարական փոխգործակցություն)*²²:

ՕՀԳ իրականացնող մարմինների միջգերատեսչական փոխգործակցության ձևերից մեկը տեղեկատվության փոխանցումն է, սակայն որպես հիմնական ձև այն կարող է դրսևորվել ինչպես առանձին, այնպես էլ համատեղ ՕՀՄ-ներ անցկացնելով, ինչպես նաև օպերատիվ ստուգման օբյեկտների անձնական տվյալների, նրանց գործունեությանն ու կապերին վերաբերող տեղեկությունները ՕՀԳ իրականացնող մարմինների արխիվային ու հաշվառումային տվյալներով ստուգելու միջոցով և այլն:

Ինչպես իրավագիտորեն նշում է Ս. Բալանյանը՝ «ՕՀԳ նշված սուբյեկտների մարտավարական փոխգործակցությունն ապահովում է.

- օպերատիվ ստուգման օբյեկտների նկատմամբ անընդմեջ հետևելը.
- ստուգվող անձանց միջավայրում ինֆորմացիայի հաղորդման ուղիների փակում.
- ՕՀՄ իրականացման ընթացքում անհրաժեշտ ինֆորմացիայի «ստուգման» ուղիների կազմակերպում, այդ թվում՝ գաղտնի ուղիներով.

- գանազան օպերատիվ-հետախուզական մարմինների արխիվների և հաշվառումների տվյալների օգտագործում, որոնք վերաբերում են օպերատիվ ստուգման անձին, նրա գործունեությանը և կապերին²³»:

Բոլոր դեպքերում ՕՀԳ իրականացնող մարմինների փոխգործակցությունը նպատակաուղղված է հանցավորության դեմ տարվող պայքարում արդյունավետության ապահովմանը, ինչը նպաստում է ՕՀԳ նպատակների և խնդիրների կատարմանը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ պետական դավաճանության դեպքերի բացահայտման ու քննության առանձնահատկությունների շարքին կարելի է դասել դրանց կամ առանձին դրվագների հնարավոր հետագա կատարման կանխարգելումը, խափանումը: Վերջինս դարձյալ բացատրվում է այս տեսակ հանցագործությունների մեխանիզմի առանձնահատկություններով, քանի որ որոշ դեպքերում դրանք կրում են պարբերական, շարունակական բնույթ, ուստի դրանց բացահայտմանը զուգահեռ անհրաժեշտ է ձեռնարկել հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումներ՝ դրանց հետագա ընթացքը, հնարավոր հետևանքների վրա հասնելը կանխելու ուղղությամբ:

²¹ Այդ մասին առավել մանրամասն տես, Սիմոնյան Ա., Փոխգործողության համակարգումը հանցագործությունների կանխարգելման կազմակերպման համատեքստում//Բանբեր Արդարադատության ակադեմիայի, Երևան, 2022, № 1 (7), էջեր 111-112:

²² Տես Բալանյան Ս. Պ., Օպերատիվ-հետախուզական գործունեություն (տեսական մաս): Երևան 2014, էջ 67:

²³ Տես Բալանյան Ս. Պ., Օպերատիվ-հետախուզական գործունեություն (տեսական մաս): Երևան, 2014, էջ 68:

Միայն ՕՀՄ-ների միջոցով կարելի է բավարար ամբողջականությամբ հետևել, թե հանցագործությունների նախապատրաստման և կատարման տարբեր փուլերում ինչպես է առաջանում հանցավոր մտադրությունը, կոնկրետ ինչ արարքներով է այն իրականացվում, ինչ գործոններով է այն համապատասխանեցվում կոնկրետ վայրի և ժամանակի պայմաններում, ինչ զարգացող միտումներն են ի հայտ գալիս հանցագործության դրսևորումների և դրա առավել ինտենսիվ տարածման ոլորտներում:

Այս տեսանկյունից ՕՀԳ-ի արդյունավետ իրականացման, հետևաբար կոնկրետ նպատակներին հասնելու համար առավել կարևոր նշանակություն է ձեռք բերում ՕՀՄ-ների համալիրի կամ կոմբինացիաների իրականացումը, որը համաձայնեցված և փոխկապակցված միջոցառումների համակարգ է՝ նպատակի, ժամանակի, վայրի և մեկ կենտրոնից ընդհանուր պլանի համաձայն իրականացվող գործողություններով: Դրանք, որպես կանոն, կիրառվում են կազմակերպված հանցավոր խմբերն ու համայնքները բացահայտելու, նրանց հանցավոր գործունեությունը խափանելու համար²⁴: Միաժամանակ կազմակերպված խմբերի կողմից կատարված հանցագործությունների քննության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է վարույթն իրականացնող մարմինների և օպերատիվ ստորաբաժանումների համագործակցության ճիշտ կազմակերպումից: Այդպիսի համագործակցության հիմնական պայմաններից մեկը տեղեկատվության փոխանակումն է, որը թույլ է տալիս ռացիոնալ և ժամանակին օգտագործել այդ մարմինների ուժերն ու միջոցները: Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության կիրառումը թույլ է տալիս արդյունավետորեն որոշել քննչական գործողության ժամանակը, տեղը, մասնակիցներին, ներգրավել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ներգրավել մասնագետների, ճիշտ պլանավորել տակտիկական հնարքների ընտրությունն ու հերթակառությունը²⁵:

Ընդ որում, հատկանշական է, որ քննչական պրակտիկայում պետական դավաճանության առերևույթ դեպքերով վարույթ նախաձեռնվելու պարագայում վարույթն իրականացնող մարմինը փոխգործողությունը շարունակում է այն բացահայտած, ինչպես նաև հաղորդում ներկայացրած հետաքննության մարմնի հետ, քանի որ վերջիններս առավել տեղեկացված են դեպքի մանրամասներին և քննչական հանձնարարությունների շրջանակներում՝ ավելի լավ կարող են կանխատեսել հետագա հնարավոր զարգացումները, պարզել դեպքին հնարավոր առնչություն ունեցող անձանց շրջանակը, պատճառված վնասի իրական բնույթն ու չափը և այլն:

Մեր կարծիքով, թեև գործնականում չի բացառվում նաև հետաքննության մյուս մարմինների հետ փոխգործողությունը առանձին խնդիրների, օրինակ՝ ականատեսների, հանդիպումների տեսագրությունների հայտնաբերման, թվային տեղեկատվության, հաղորդակցման այլ միջոցների հայտնաբերման և այլ դեպքերում, այնուամենայնիվ ՕՀԳ փուլում պետական դավաճանության դեպքը հայտնաբերած օպերատիվ ստորաբաժանման հետ փոխգործողությունը գաղտնի քննչական գործողությունների կամ ՕՀՄ-ների հանձնարարությունների շրջանակներում միանգամայն արդարացված է, քանի որ հնարավոր է, որ դեռևս վերջիններիս տեսադաշտում են գտնվում կամ հայտնվեն վարույթի համար հետաքրքրություն ներկայացնող անձինք, ի հայտ գան նոր կապեր և այլն:

²⁴ Տե՛ս *Шумилов А. Ю.*, Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». М., 1999; *Маршунов М. Н.*, Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности» в схемах и таблицах. Постатейный комментарий. М., 1998.

²⁵ Տե՛ս *Мешков В. М., Попов В. Л.*, Оперативно-розыскная тактика и особенности легализации полученной информации в ходе предварительного следствия. М., 1999, էջ 46:

Տեղին է մեջբերել Ա. Մարկուշինի տեսակետն այս կապակցությամբ, ըստ որի՝ «ՕՀԳ արդյունքների օգտագործումը հանցագործությունների բացահայտման ու քննության և թաքնվող հանցագործների հետախուզման մեջ օբյեկտիվորեն պայմանավորում է օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների աշխատակիցների և (հետաքննության մարմնի, հետաքննիչի, քննիչի, դատախազի ու դատավորի) քրեական վարույթի սուբյեկտների (պաշտոնատար անձանց) փոխգործակցության անհրաժեշտությունը»²⁶:

Այս իմաստով ՕՀՄ-ների մասին կարևոր իրավակարգավորում է պարունակում ՔԴՕ 86-րդ հոդվածը, որը սահմանում և թվարկում է ապացույցի տեսակները: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ «*օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքով կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված փյուլները քրեական վարույթում ապացույց չեն*»: Այս իմպերատիվ կարգավորման համատեքստում, սակայն, հետաքրքրական է, որ նույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում որպես քրեական վարույթում ապացույցի առանձին տեսակ են սահմանված «*արտավարության փաստաթղթերը*»: Այդպիսին, համաձայն օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի, կարող են ճանաչվել և կցվել վարույթի նյութերին նաև քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված ՕՀԳ-ի արդյունքով դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթեր, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով: Այսինքն՝ վերոգրյալ իմպերատիվ նորմից, այնուամենայնիվ, առկա է բացառություն:

Պետական դավաճանության քննության տեսանկյունից հատուկ կարևորվում է նաև քրեական վարույթ և ՕՀԳ իրականացնող մարմինների փոխգործողությունը քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համատեքստում: Այսպես, ՀՀ ՔԴՕ 173-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում է ստացել: Հոդվածի նշված մասում թվարկված են այն սուբյեկտները, որոնց հաղորդման հիման վրա քննիչը պարտավոր է վարույթ նախաձեռնել: Այդ սուբյեկտների շարքում են նաև ՕՀԳ-ն իրականացնող մարմինները, որոնք հաղորդում կարող են ներկայացնել իրենց լիազորությունների իրականացման կապակցությամբ: Այսպիսով՝ ՕՀԳ-ն իրականացնող մարմնի հաղորդումը քրեական վարույթ նախաձեռնելու հիմք կարող է հանդիսանալ, եթե բավարարի հետևյալ պահանջներին. *լինի առերևույթ հանցանքի մասին և պատշաճ ձևակերպված*²⁷:

Նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հաղորդումը կարող է համարվել առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով «*փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական*»:

Ակնհայտ է, որ նման ձևակերպումը չի պարունակում դեպքը կամ արարքը բնութագրող տեղեկությունների կամ հատկանիշների հստակ շրջանակ, փոխարենը սահմանվում է, որ դրանք պետք է բավարար լինեն վերոգրյալ դեպքը կամ արարքը փաստելու, ինչպես նաև քրեական օրենսգրքով դրանց նախատեսված լինելու վերաբերյալ նախնական գնահատական տալու համար: Դրանից հետևում է, որ հանցանքի մասին հաղորդումն ինքնին վարույթ

²⁶ Տե՛ս *Маркушин А.*, Оперативно-розыскная деятельность. Москва, «Юрайт», 2013», էջ 279:

²⁷ Տե՛ս Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ: Իրավակիրառական ուղեցույց /Հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Վ.Գ. Ենգիբարյան- Եր., ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ, 2023, էջ 52:

նախաձեռնելու հիմք չի կարող հանդիսանալ, եթե դրանում առկա տեղեկությունները փաստված և գնահատված չեն, ինչը հնարավոր է կատարել միայն որոշակի ստուգողական աշխատանքներով, որոնց մեջ իրենց կարևոր տեղն ունեն ՕՀՄ-ները:

Ինչպես արդեն նշել ենք, պետական դավաճանության դեպքերի բացահայտմանը բնորոշ օրինաչափություններից է դրանց մասին տեղեկությունների ստացումը ՕՀԳ-ի իրականացման ճանապարհով, ինչպես նաև դրանց մասին օպերատիվ աշխատակցի կողմից պատշաճ հաղորդում ներկայացնելով: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ քննարկվող հանցագործությունների դեպքերով, ի տարբերություն մյուս հանցատեսակների, քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերը ակնհայտ են:

Այդուհանդերձ, խնդրո առարկա է հաղորդման բովանդակության ծավալի չափանիշների հարցը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հանցագործության մասին ներկայացվող հաղորդման բովանդակության կապակցությամբ արդեն արտահայտել է իրավական դիրքորոշում: Մասնավորապես, համաձայն Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի Է. Կարապետյանի գործով 13.07.2007 թ. № ՎԲ-133/07, Ռ. Նիազյանի գործով 31.05.2014թ. № ԵԿԴ/0118//11/13 և Հ. Մանուկյանի գործով 30.03.2019թ. № ԵԿԴ/0154/11/14 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների՝ *որպեսզի հանցագործության մասին հաղորդումը քրեական գործ հարուցելու համար առիթ հանդիսանա, այն պետք է պարունակի տեղեկություն նախապատրաստվող կամ կատարված կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող, այլ ոչ թե՛ ցանկացած տվյալների առկայության մասին:*

Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման վերլուծությունից հետևում է, որ ներկայիս քրեադատավարական իրավակարգավորումների համատեքստում քննիչի կամ դատախազի կողմից հանրային քրեական վարույթ կարող է նախաձեռնվել այն պարագայում, երբ ներկայացված հաղորդման բովանդակությունը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշների վերաբերյալ տեղեկություններ, ընդ որում այն ծավալով, որպեսզի հնարավոր լինի նկարագրված արարքին տալ նախնական իրավական գնահատական: Հակառակ դեպքում ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, որի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը:

Եզրակացություն

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնվող քրեական վարույթների քրեադատավարական և կազմակերպչական առանձնահատկություններից է օպերատիվ և քննչական աշխատանքի առավել համապարփակ համադրումը, ինչը վարույթն իրականացնող մարմնից պահանջում է մի կողմից քրեադատավարական գործիքակազմի տակտիկապես գրագետ օգտագործում, մյուս կողմից՝ գերատեսչական փոխգործողության արդյունավետ կազմակերպում մինչդատական վարույթի ողջ ընթացքում, ընդ որում՝ դեռևս պետական դավաճանության դեպքի մասին հաղորդում ստանալու պահից: Վերջինս հատկանշական է պետական դավաճանության դեպքերին օպերատիվ-հետախուզական գործիքակազմով անձի հնարավոր փախուստը խափանելու, հանցակիցներին չեզոքացնելու, ինչպես նաև վտանգավոր հետևանքների առաջացումը նախականիսելու համար:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է պետական դավաճանության քննության ընթացքում տարբեր մարմինների փոխգործողության հիմնահարցերին: Պետական դավաճանությունների քննության արդյունավետությունը մեծապես կախված է քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական մարմինների (ՕՀԳ) միջև կազմակերպված փոխգործակցությունից: Վարույթային գործողությունների երկարաձգումը կամ հետքերի ոչ ժամանակին բացահայտումը կարող է թույլ տալ հանցագործներին թաքնվել, վնաս հասցնել պետության անվտանգությանը և խոչընդոտել քննությանը:

Փոխգործողությունը ներառում է տեղեկատվության փոխանակում, քննիչների և օպերատիվ ստորաբաժանումների ուժերի արդյունավետ համադրություն: Փոխգործակցությունը կարող է հիմնվել քրեադատավարական, գերատեսչական և պրակտիկայով ձևավորված հիմքերի վրա, իսկ ժամանակի և մեթոդների առումով կարող է լինել ժամանակավոր կամ մշտական:

Պետական դավաճանության քննության դեպքում փոխգործակցության հիմքում ընկած են ոչ միայն օրենքի պահանջները, այլև անձնական շփումն ու հաղորդակցական ունակությունները: Նախաքննության փուլում ՕՀՄ իրականացնող մարմինների գործունեությունը հաճախ սկսվում է քննիչի հանձնարարությամբ, սակայն խնդիրների լուծման եղանակները որոշում է հետաքննության մարմինը:

Հեղինակը եզրակացնում է, որ պետական դավաճանության քննության ընթացքում առավել արդյունավետ է վարույթն իրականացվող մարմնի կողմից փոխգործողությունը շարունակել ՕՀՄ-ի գործունեությունը իրականացնող այն մարմնի և ստորաբաժանման հետ, որոնց հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթը:

Annotation. This article is dedicated to the fundamental issues of interaction between various bodies during the investigation of high treason. The effectiveness of high treason investigations largely depends on the organized cooperation between criminal proceedings and bodies conducting operational-search activities (OSA). Delays in procedural actions or the untimely discovery of evidence may allow perpetrators to go into hiding, damage state security, and obstruct the investigation.

Interaction includes the exchange of information and the effective combination of the efforts of investigators and operational units. This cooperation can be based on criminal procedure, departmental regulations, or established practice; in terms of duration and methods, it may be temporary or permanent.

In cases of high treason investigation, interaction is grounded not only in legal requirements but also in personal contact and communication skills. During the pre-trial investigation phase, the activities of the bodies conducting OSA often begin with an investigator's assignment; however, the methods for solving these tasks are determined by the investigative body.

The author concludes that during the investigation of high treason, it is most effective for the body conducting the proceedings to continue interacting with the specific OSA body and unit whose report initiated the criminal proceedings.

Аннотация. Статья посвящена вопросам взаимодействия различных органов в ходе расследования государственной измены. Эффективность расследования государственной измены во многом зависит от организованного взаимодействия между уголовным производством и органами, осуществляющими оперативно-розыскную деятельность (ОРД). Затягивание процессуальных действий или несвоевременное раскрытие улик может позволить преступникам скрыться, нанести ущерб безопасности государства и помешать расследованию.

Взаимодействие предполагает обмен информацией, эффективное сочетание сил следователей и оперативных подразделений. Взаимодействие может основываться на уголовно-процессуальных, ведомственных и практических основах, а с точки зрения времени и методов может быть временным или постоянным.

В случае расследования государственной измены в основе взаимодействия лежат не только требования закона, но и личное общение и коммуникативные способности. На этапе предварительного расследования

деятельность оперативно-розыскных органов, осуществляющих ОРД, часто начинается с поручения следователя, но способы решения проблем определяет орган дознания.

Автор приходит к выводу, что в ходе расследования государственной измены наиболее эффективно продолжать взаимодействие органа, осуществляющего производство, с органом и подразделением, осуществляющим ОРД, на основании сообщения которого было возбуждено уголовное производство.

Բանալի բառեր - պետական դավաճանություն, քրեական վարույթ, քննիչ, կրիմինալիստիկա, փակփոխակա, օպերատիվ-հետախուզական գործունեություն, փոխգործողություն:

Keywords: high treason, criminal proceeding, investigator, forensic, tactic, operative-search activity, interaction.

Ключевые слова: государственная измена, уголовное производство, следователь, криминалистика, тактика, оперативно-розыскная деятельность, взаимодействия.

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալանյան Ս. Պ., Օպերատիվ-հետախուզական գործունեություն (տեսական մաս). Երևան, 2014:
2. Ենգիբարյան Վ., Մարտիկյան Ռ., Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության հրատապ հիմնախնդիրները // «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 2019, № 11-12/245-246, էջ 94-96:
3. Ենգիբարյան Վ., Չախոյան Ա., Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության ձևերի քրեադատավարական և կազմակերպատակտիկական առանձնահատկությունները // «Պետություն և իրավունք». 2016, № 2 (72):
4. Հովհաննիսյան Բ. Մ., Օհանյան Լ. Պ., Քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության տակտիկան. Դասախոսություն. Երևան, 1981:
5. Սիմոնյան Ա., Որոշ նկատառումներ քրեադատավարական փոխգործողության հեռանկարային իրավակարգավորումների վերաբերյալ // Բանբեր Արդարադատության ակադեմիայի. Երևան, № 1, 201, էջ 101:
6. Սիմոնյան Ա., Փոխգործողության համակարգումը հանցագործությունների կանխարգելման կազմակերպման համատեքստում // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, Երևան, 2022, № 1 (7), էջ 111-112:
7. Վճռաբեկ դատարանի Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի ԵԿԴ/0229/01/16 որոշման 19-րդ կետ:
8. Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ. Իրավակիրառական ուղեցույց / Հեղինակային խումբ: Գիտ. խմբ. Վ. Գ. Ենգիբարյան, Երևան, ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ, 2023:
9. Бажанов С. В., Становление и развитие групповых методов расследования, М.: Инфра-М, 1997:
10. Балашов А. Н., Взаимодействие следователя и органа дознания при расследовании преступлений. М., 1973:
11. Белкин Р. С., Теория доказывания: научно-методическое пособие. М.: Норма, 1999:
12. Герасимов И. Ф., Взаимодействие органов предварительного следствия и дознания при расследовании особо опасных преступлений. Свердловск, 1965:
13. Герасимов И. Ф., Некоторые проблемы раскрытия преступлений. Свердловск, 1976:
14. Гуткин И. М., Органы дознания и предварительного следствия системы МВД и их взаимодействие. М., 1973:
15. Дубинский А. Я., Взаимодействие следователя с органом дознания, Киев, 1970:
16. Дулов А. В., Судебная психология. 2-е изд., испр. и доп. Минск: Высшая школа, 1975:
17. Козусев А., Надзор за исполнением законов в оперативно-розыскной деятельности // Законность.

1997, № 2:

18. Кругликов А., Поручения следователя органам дознания о проведении оперативно-розыскных мероприятий в стадии возбуждения уголовного дела // Уголовное право. 2011. № 4:

19. Маркушин А., Оперативно-розыскная деятельность. М.: Юрайт, 2013.

20. Маршунов М. Н., Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности» в схемах и таблицах. Постатейный комментарий. М., 1998:

21. Мельников А. С., Поручение как одна из форм взаимодействия следователя с органами дознания // Совершенствование деятельности правоохранительных органов по борьбе с преступностью в современных условиях: материалы Международной научно-практической конференции (03–04 ноября 2011 г.). Вып. 8. Тюмень: ООО «Вектор Бук», 2011.

22. Мешков В. М., Попов В. Л., Оперативно-розыскная тактика и особенности легализации полученной информации в ходе предварительного следствия. М., 1999.

23. Ратинов А. Р., Якубович Н. А., Взаимодействие следователей прокуратуры и органов милиции при расследовании и предупреждении преступлений. М., 1964.

24. Рогожин В. А., Взаимодействие следователя с органами дознания при производстве расследования по делам о преступлениях, совершенных несовершеннолетними. Киев, 1985:

25. Чувилев А. А., Взаимодействие следователя органа внутренних дел с милицией. М.: МВШМ МВД СССР, 1981.

26. Шумилов А. Ю., Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности», М., 1999:

Բաղինյան Ս. - ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ sbaghinyan777@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 11.03.2026 թ., տրվել է գրախոսության 11.03.2026 թ., երաշխավորվել է ՀՀ վաստակավոր իրավաբան, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2026.1-3-174>

ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

HOVSEP KOCHARYAN
PhD in Law

ОВСЕП КОЧАРЯН
Кандидат юридических наук
<https://orcid.org/0009-0005-5533-2605>

**ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ԼՈՒՅՍԻ
ՆԵՐՔՈ. ԿԻԲԵՌԱԳՐԵՍԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**THE CRIME OF AGGRESSION UNDER THE ROME STATUTE:
CHALLENGES OF CYBERAGGRESSION AND INFORMATION
SOVEREIGNTY IN THE CONTEXT OF THE CRIMINAL CODE OF THE
REPUBLIC OF ARMENIA**

**ПРЕСТУПЛЕНИЕ АГРЕССИИ ПО РИМСКОМУ СТАТУТУ: ВЫЗОВЫ
КИБЕРАГРЕССИИ И ИНФОРМАЦИОННОГО СУВЕРЕНИТЕТА В
КОНТЕКСТЕ УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

*The research was supported by the higher Education and Science Committee of MESCS RA
(Research project N. 25YR-5E005)*

Ներածություն.

Սույն հոդվածում քննարկվում է միջազգային քրեական իրավունքի շրջանակում ագրեսիայի հանցագործության համար պատասխանատվություն սահմանելու խնդիրները: Հատուկ ուշադրություն է դարձվում ագրեսիայի հանցագործության իրականացմանը կիբեռ-հարձակումների միջոցով՝ այսինքն՝ կիբեռագրեսիային: Բացի դրանից՝ քննարկվում է նաև ագրեսիայի շարունակական հանցագործություն լինելու հնարավորությունը: Հեղինակը, վեր-

լուծելով Հռոմի Ստատուտի 8bis հոդվածի հատկանիշները, եզրակացնում է, որ 8bis հոդվածով նախատեսված հանցակազմը էապես բարդացնում են այդ դրույթների կիրառումը կիրքեռագրեսիայի նկատմամբ: Միաժամանակ, հոդվածի հեղինակը փաստում է կիրքեռագրեսիայի կուլմներով իրականացված ագրեսիայի հանցագործության ներառման հնարավորությունն ու նույնիսկ դրա անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ժամանակակից անվտանգության սպառնալիքները:

Հիմնական հետազոտություն

1. Ագրեսիայի հանցագործության իրավական բնութագիրը միջազգային իրավունքի լույսի ներքո

Ագրեսիայի՝ որպես քաղաքական-իրավական երևույթի սահմանումն իրավագիտրեն դասվում է ժամանակակից միջազգային իրավունքի առավել բարդ հարցերի շարքին¹: Այն համարվում է միջազգային խաղաղության դեմ ուղղված ամենածանր հանցագործություններից մեկը: Հաշվի առնելով ագրեսիայի սպառնալիքների լրջության մակարդակը՝ նպատակահարմար է ուսումնասիրել և կատարելագործել ագրեսիայի կարգավորումը ՀՀ քրեական օրենսդրության համատեքստում²:

Նշենք, որ ագրեսիվ պատերազմի քաղաքական և իրավական դատապարտումն առաջին անգամ ամրագրվել է 1928 թ. Վաշինգտոնում ստորագրված պատերազմից հրաժարվելու պայմանագրում՝ որպես ազգային քաղաքականության գործիք: Այդ միջազգային փաստաթուղթը հայտնի դարձավ որպես Բրայան-Քելոգի դաշնագիր անվանմամբ³: Չնայած նշված դաշնագրում բացակայում էր «ագրեսիվ պատերազմ» տերմինը իր ժամանակակից նորմատիվ մեկնաբանությամբ, այնուամենայնիվ, տվյալ միջազգային փաստաթուղթը ամրապնդեց այն գաղափարը, որ ագրեսիվ պատերազմը չպետք է օգտագործվի որպես միջազգային վեճերի կարգավորման գործիք⁴:

Որոշ ժամանակ անց՝ 1933 թ., ընդունվեց ագրեսիայի սահմանման մասին կոնվենցիան: Սույն կոնվենցիայով ներկայացվեց ագրեսիայի քաղաքական և իրավական սահմանումը՝ հիմնված չորս իրավիճակների վրա, որոնցում մի պետություն հանցավոր կերպով զինված ուժեր է կիրառում մեկ այլ պետության դեմ: Բացի դրանից՝ կոնվենցիան ամրագրեց նաև պատերազմ հայտարարելը որպես ագրեսիայի հանցակազմի մի մաս, որն ինքնին ոչ մի կապ չունի զինված ուժերի կիրառման հետ⁵:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ վերոնշյալ միջազգային փաստաթղթերում ագրեսիան դատապարտվում էր միայն որպես միջազգային իրավունքի խախտում, սակայն չէր դիտարկվում որպես միջազգային հանցագործություն, որի համար հնարավոր կլիներ ենթարկել անհատական քրեական պատասխանատվության:

Ագրեսիվ պատերազմի համար քրեական պատասխանատվության կարգավորումն առա-

¹ Casey-Maslen, Stuart (2021). “Jus ad Bellum, Aggression, and the Right to Life”. The Right to Life under International Law: An Interpretative Manual. Cambridge University Press. pp. 122–140. ISBN 978-1-108-49478-6.

² Terzyan, A. (2024). Armenia in the Aftermath of the War: Between Changing Landscapes and Unchanging Problems. Eurasia Institutes. DOI: 10.47669/PSPRP-1-2024. Available at: https://eurasiainstitutes.org/files/file/psrp_2024_number_1.pdf

³ General Treaty For the Renunciation of War (Kellogg-Briand Pact). Paris, 27 August 1928.

⁴ League of Nations, Treaty Series, vol. 94, p. 57 (No. 2137). Available at: <https://treaties.un.org/doc/Publication/UNTS/LON/Volume%2094/v94.pdf>

⁵ Convention for the Definition of Aggression, London, 3 July 1933. Available at: <https://www.iiij.org/wp-content/uploads/2016/08/Convention-for-the-Definition-of-Aggression-1933.pdf>

ջին անգամ տեղի է ունեցել Նյուրնբերգի և Տոկիոյի դատավարությունների համատեքստում՝ համապատասխանաբար, Գերմանիայի և Ճապոնիայի գլխավոր ռազմական հանցագործների նկատմամբ: Մասնավորապես՝ այդ հանցակազմի արտաքին դրսևորումներն էին՝ *պլանավորումը, նախապատրաստումը, նախաձեռնումն ու իրականացումը*: Նշենք, որ տվյալ հանցակազմը սահմանված էր եվրոպական երկրների Առանցքի գլխավոր ռազմական հանցագործներին դատապարտելու համար ստեղծված միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության 6-րդ հոդվածի «ա» կետում⁶, ինչպես նաև Հեռավոր Արևելքի միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության 5-րդ հոդվածի «ա» կետում⁷:

Սակայն վերոնշյալ փաստաթուղթը նույնպես զերծ չէր խնդիրներից՝ փաստաթղթում բացակայում էր ագրեսիայի (ագրեսիվ պատերազմի) նորմատիվ սահմանումը: Բանն այն էր, որ այդ հանցակազմի որոշ հատուկ ձևերի քրեականացումն ու ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելը հիմնված էին Առանցքի երկրների՝ Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից վարվող ագրեսիվ պատերազմի համընդհանուր ճանաչման վրա՝ որպես անհերքելի պատմական իրադարձություն: Այնուհանդերձ, հենց այս նախադեպերը դարձան այն հիմնասյուները, որոնց վրա հետագայում կառուցվեց միջազգային քրեական իրավունքի զարգացումը⁸:

Նշենք, որ ագրեսիայի հանցագործության առաջին իրավական սահմանումը տրվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1974 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 3314 բանաձևի (այսուհետ՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 3314 բանաձև) 1-ին հոդվածում⁹: Տվյալ փաստաթղթով ագրեսիա է համարվում մեկ պետության կողմից զինված ուժի կիրառումը մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ կամ ՄԱԿ-ի Կանոնադրության հետ անհամապետելի ցանկացած այլ եղանակով:

Միևնույն ժամանակ, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը, որն արդեն իսկ ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետում, գործող միջազգային իրավունքի ամենակարևոր համընդհանուր *jus cogens* նորմերից մեկն է¹⁰: Կարելի է պնդել, որ վերոնշյալ նորմերն առավել նպատակային են արտահայտում միջազգային հանրության ցանկությունը՝ մարդկությանն ազատել պատերազմների արհավիրքներից, որոնցում նա ներգրավված էր, հատկապես 20-րդ դարի առաջին կեսին: Ավելին՝ դրանով է պայմանավորված նաև այսօր գոյություն ունեցող միջազգային իրավունքի զարգացումը և ՄԱԿ-ի գործունեությունը որպես այդպիսին¹¹:

⁶ See: The Charter of the International Military Tribunal (or Nuremberg Charter) (Art. 6(a)): (a) *Crimes Against Peace: namely, planning, preparation, initiation or waging of a war of aggression, or a war in violation of international treaties, agreements or assurances, or participation in a Common Plan or Conspiracy for the accomplishment of any of the foregoing*; (Available at: https://legal.un.org/ilc/documentation/english/a_cn4_5.pdf)

⁷ International Military Tribunal For The Far East. (Art 5(a)), Available at: https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.3_1946%20Tokyo%20Charter.pdf

⁸ Sellars, K. (2010). Imperfect Justice at Nuremberg and Tokyo (November 1, 2010). Kirsten Sellars, 'Imperfect Justice at Nuremberg and Tokyo', *European Journal of International Law* 21 (2010), 1085-1102. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=1906444>

⁹ United Nations General Assembly resolution 3314 (XXIX) of 14 December 1974

¹⁰ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն (ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12)). Available at: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75801>

¹¹ Fremuth, M.L. (2022). The Crime of Aggression and the Prohibition of the Use of Force—Reflections on the Relationship between the Rome Statute and General Public International Law. In: Bock, S., Conze, E. (eds) *Rethinking the Crime of Aggression*. T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-94-6265-467-9_10

Մասնավորապես՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 3314 բանաձևի¹² 3-րդ հոդվածում թվարկված են ագրեսիայի *7 հիմնական գործողություններ*¹³: Հատկանշական է, որ բանաձևի 4-րդ հոդվածը սահմանում է գործողությունների ոչ սպառիչ ցանկ: Դա նշանակում է, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն իր հայեցողությամբ կարող է ագրեսիա ճանաչել նաև այլ գործողությունը, որը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին: Նշենք, որ բանաձևով սահմանված ցուցակը բառացիորեն սահմանվում է նաև Հռոմի Ստատուտի մեջ՝ հաշվի առնելով Կամպալայի բանաձևի ընդունման համաձայն նոր 8bis-ի հոդվածի ներառման համար կատարված փոփոխությունները¹⁴:

Հիմնարար տարբերությունն ագրեսիայի սահմանումների այն է, որ ագրեսիայի գործողությունների ցուցակը համարվում է փակված Հռոմի Ստատուտի ներկայիս խմբագրության մեջ, իսկ ՄԱԿ-ի ԳԱ 3314 բանաձևի 4-րդ հոդվածը նախատեսում է, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը կարող է դիտարկել ագրեսիայի ակտ նաև այն գործողություններն, որոնք ներառված չեն հանցակազմի սպառիչ ցուցակում¹⁵: Իր հերթին՝ Հռոմի Ստատուտը նման դրույթ չի նախատեսում¹⁶:

Իհարկե, Հռոմի Ստատուտի սպառիչ ցանկի հետ կապված տարբեր մոտեցումներ կան¹⁷: Այսպես, Ա. Կասսեզեն ընդգծել է հնարավորինս նեղ մեկնաբանման անհրաժեշտությունը՝ հիմնվելով «չկա հանցանք առանց օրենքի» (*nullum crimen sine lege*) սկզբունքի վրա¹⁸: Մյուս կողմից՝ Ու. Շաբասը նշում է, որ «զինված ուժի ցանկացած այլ կիրառում, որը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը» ձևակերպումը կարող է մեկնաբանվել ի նպաստ ժամանակակից

¹² United Nations General Assembly resolution 3314 (XXIX) of 14 December 1974

¹³ Any of the following acts, regardless of a declaration of war, shall, subject to and in accordance with the provisions of article 2, qualify as an act of aggression:

- (a) *The invasion or attack by the armed forces of a State of the territory of another State, or any military occupation, however temporary, resulting from such invasion or attack, or any annexation by the use of force of the territory of another State or part thereof,*
- (b) *Bombardment by the armed forces of a State against the territory of another State or the use of any weapons by a State against the territory of another State;*
- (c) *The blockade of the ports or coasts of a State by the armed forces of another State;*
- (d) *An attack by the armed forces of a State on the land, sea or air forces, or marine and air fleets of another State;*
- (e) *The use of armed forces of one State which are within the territory of another State with the agreement of the receiving State, in contravention of the conditions provided for in the agreement or any extension of their presence in such territory beyond the termination of the agreement;*
- (f) *The action of a State in allowing its territory, which it has placed at the disposal of another State, to be used by that other State for perpetrating an act of aggression against a third State;*
- (g) *The sending by or on behalf of a State of armed bands, groups, irregulars or mercenaries, which carry out acts of armed force against another State of such gravity as to amount to the acts listed above, or its substantial involvement therein.*

¹⁴ Rome Statute of the International Criminal Court. Published by the International Criminal Court ISBN No. 92-9227-386-8 ICC-PIOS-LT-01-003/18_En

¹⁵ *The acts enumerated above are not exhaustive and the Security Council may determine that other acts constitute aggression under the provisions of the Charter.*

¹⁶ Article 8bis - Crime of Aggression. Available at: <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/icc-statute-amendment-arts8bis-15bis-15ter-2010/article-8bis>

¹⁷ Baek B-S. (2006). The Definition and Jurisdiction of the Crime of Aggression and the International Criminal Court // Cornell Law School Graduate Student Paper. 2006. N 19. P. 25.

¹⁸ Cassese, A. (2008). International Criminal Law, 2nd edn (Oxford University Press, 2008); Cassese International Criminal Law / Rev. by A. Cassese and others. Oxford, 2013. P. 141; Grover L. Interpreting the Crime of Aggression. In: Kreß C, Barriga S, eds. The Crime of Aggression: A Commentary. Cambridge University Press, 2016:375-411.

ուժի կիրառման ձևերի, այդ թվում՝ կիբեռհարձակումներին¹⁹: Միևնույն ժամանակ, Ա. Յիմերմանը զբաղեցնում է միջանկյալ դիրք՝ պնդելով, որ դատարանը ստիպված կլինի հաշվի առնել ինչպես փակ ցանկի տառացի ամրագրված լինելը, այնպես էլ ՄԱԿ-ի կանոնադրությանը հակասելու ընդհանուր չափանիշը, ինչը ճանապարհ է բացում «*միջին*» մեկնաբանության համար՝ ներառելով միայն այն ձևերը, որոնք ֆունկցիոնալ առումով համարժեք են թվարկվածներին (օրինակ՝ հիբրիդային հարձակումները ֆիզիկապես կործանիչ հետևանքներով)²⁰:

Հետևաբար, դատական պրակտիկայում ագրեսիայի հանցակազմի բացության աստիճանի հարցը դեռ լուծված չէ: Դրա ապագա մեկնաբանությունը կախված կլինի առաջին կոնկրետ գործից՝ լինի դա ՄՔԴ-ում, թե հնարավոր հատուկ տրիբունալի շրջանակում: Մինչև դա՝ քննարկումը մնում է հիմնականում տեսական դաշտում և հիմնվում է օրինականության սկզբունքի ու միջազգային քրեական իրավունքն ագրեսիայի նոր ձևերին հարմարեցնելու անհրաժեշտության միջև հավասարակշռության վրա:

Միևնույն ժամանակ՝ ներկայիս ՀՀ ՔՕ-ի 149-րդ հոդվածի երկրորդ մասով նույնպես ամրագրված են ագրեսիայի բաղադրիչ գործողությունների ծավալուն ցանկ, որը հիմնված է հենց ՄԱԿ-ի ԳԱ 3314 բանաձևի ագրեսիայի սահմանման վրա: Այնուամենայնիվ, խնդրահարույց է նույն մասի 8-րդ կետը, որտեղ ագրեսիա են համարվում նաև այլ արարքները, որոնք ագրեսիա են համարվում միջազգային իրավունքի համաձայն²¹:

Մեր կարծիքով՝ նման բաց և ընդհանրական ձևակերպումը գործնականում կարող է հանգեցնել քրեական իրավունքի կանխատեսելիության սկզբունքի խախտման, քանի որ այն չի ապահովում հանցագործության հստակ սահմանում: Խնդիրն այն է, որ միջազգային իրավունքում ագրեսիայի գնահատման չափանիշները շարունակաբար փոխվում են և շատ հաճախ լուծվում են *case-by-case* սկզբունքով, որի արդյունքում ՀՀ օրենսդրության մեջ հնարավոր է ձևավորվի իրավական անորոշություն: Օրինակ՝ երբ նոր տեխնոլոգիական իրադարձությունները, ինչպիսիք են կիբեռհարձակումները, քննության են առնվում, դատարանին կարող է դժվար լինել որոշել, արդյոք այդպիսի գործողությունները կարելի է դիտարկել որպես ագրեսիա, և արդյոք այդպիսի գործողությունները հատում են կամ կարող են հատել ագրեսիայի սահմանը: Արդյունքում, ՀՀ դատարանը տվյալ դեպքերում ստիպված կլինի քաղաքական գնահատականների հիման վրա որոշում կայացնել, ինչը կարող է ունենալ անցանկալի քաղաքական և իրավական հետևանքներ: Բացի դրանից՝ 8-րդ կետը չի հստակեցնում, թե կոնկրետ որ միջազգային իրավունքի աղբյուրներն են հիմք հանդիսանում՝ սովորույթային իրավունք, պայմանագիր, բանաձև, դատարանի որոշում և այլն, երբ Հռոմի Ստատուտն հղում է անում կոնկրետ բանաձևի, ոչ թե *միջազգային իրավունքի* ընդհանրական հասկացության վրա: Դա իր հերթին ՀՀ դատարաններին կարող է տալ չափազանց լայն հայեցողություն՝ որոշելու՝ ինչն է ագրեսիա միջազգային իրավունքի տեսանկյունից:

Ավելին՝ Հռոմի Ստատուտի 15-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ ՄՔԴ-ն կարող է սկսել հետաքննել ագրեսիայի գործը, եթե ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը փոխանցի գործը ՄՔԴ-ին²²: Այնուամենայնիվ, ոչինչ չի պարտադրում ՄՔԴ-ին հետաքննել իրավիճակներ

¹⁹ Schabas, W. (2017). The International Criminal Court: A Commentary on the Rome Statute. Oxford Commentaries on International Law. ISBN: 0191060305, 9780191060304; See also: Tsilonis, V. (2024). The Crime of Aggression: The Birth of a Crime. In: The Jurisdiction of the International Criminal Court. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-46138-5_6

²⁰ A Zimmermann, 'Amending the Amendment Provisions of the Rome Statute: The Kampala Compromise on the Crime of Aggression and the Law of Treaties' (2012) 10 JICJ 209

²¹ ՀՀ Քրեական Օրենսգրք - Հոդված 149-րդ: <https://www.arlis.am/hy/acts/165138>

²² Schabas, W.A., (2016). 'Exercise of jurisdiction over the crime of aggression (Security Council referral)/Exercice de

րը, որոնց օբյեկտիվ կողմը ներառված չէ Ցbis հոդվածում նշված սպառիչ ցուցակում: Եվ ներկայում, իրավակիրառ արակտիկայի բացակայության պայմաններում դժվար է կանխատեսել, թե ինչպես է ՄՔԴ-ն լրացնելու նշված իրավական բացը:

Միննույն ժամանակ, ՄՔԴ-ն հաշվետու չէ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին և անկախ միջազգային դատական մարմին է, որը ՄԱԿ-ի ենթակառուցվածք չէ: Բացի դրանից՝ ՄՔԴ-ն ունի իր միջազգային իրավասությունները, և դա ամրագրված է Հռոմի Ստատուտի 4-րդ հոդվածի 1-ին մասում: Ընդգծենք, որ սա միանգամայն աննախադեպ երևույթ է միջազգային իրավունքում, քանի որ նույնիսկ ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինը՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանը, չունի միջազգային իրավասությունները:²³

Նշենք, որ Հռոմի Ստատուտը ագրեսիայի հանցագործության քննության համար նախատեսում է քաղաքական բաղադրիչի առկայություն, մասնավորապես՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի գնահատականը, թե արդյոք կատարվել է ագրեսիա, թե ոչ: Չնայած ՄՔԴ-ն կարող է ինքնուրույն որոշում կայացնել, այնուամենայնիվ քաղաքական բաղադրիչը կարևոր դեր է խաղում այդ հարցում²⁴: Սա կարող է հանգեցնել դեպքերի, երբ ՀՀ դատարաններն ստիպված լինեն իրավական գնահատական տալ այնպիսի գործողություններին, որոնք միջազգային հարթությունում ընկալվում են որպես ինքնապաշտպանություն կամ արձագանք արտաքին սպառնալիքին կամ էլ որոնց միջազգային մակարդակով գնահատական այդպես էլ չի տրվել: Օրինակ՝ 2014 թվականին ՌԴ-ի կողմից սկսված զինված գործողություններն Ուկրաինայի տարածքում միջազգային հանրության մեծ մասի կողմից դիտարկվել էր որպես ագրեսիա²⁵: Սակայն ՌԴ-ն իր գործողություններն ներկայացնում է որպես ինքնապաշտպանության և հայրենակիցների պաշտպանության միջոց, ինչպես նաև ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացում²⁶:

Խնդիրն այն է, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը քաղաքական պատճառներով (ներառյալ՝ ՌԴ-ի վետոյի իրավունքի պատճառով), չկարողացավ տալ հստակ գնահատական՝ ագրեսիայի առկայության վերաբերյալ հարցին²⁷: Այդ իրավիճակում, եթե որևէ ազգային դատարան փորձի ինքնուրույն քննել այս գործողությունները որպես ագրեսիա՝ առանց միջազգային քաղաքական գնահատականի, ապա դա կարող է դիտվել որպես իրավասության գերազանցում, ինչը կարող է հանգեցնել միջազգային քաղաքական լարվածության պետությունների միջև:

Բացի դրանից՝ ագրեսիայի իրավական գնահատման ամենակարևոր հարցերից մեկը այն

la compétence à l'égard du crime d'agression (Renvoi par le Conseil de sécurité), The International Criminal Court: A Commentary on the Rome Statute, 2nd Edition, Oxford Commentaries on International Law (2016; online edn, Oxford Law Pro), <https://doi.org/10.1093/law/9780198739777.003.0020>, accessed 6 Sept. 2025.

²³ Luder, S.R. (2002). The legal nature of the International Criminal Court and the emergence of supranational elements in international criminal justice. Available at: https://www.icrc.org/sites/default/files/external/doc/en/assets/files/other/079-092_luder.pdf

²⁴ Steinberg, H., Politics and Justice at the International Criminal Court (September 23, 2024). 57 Israel Law Review 2 (2024); UCLA School of Law, Public Law Research Paper No. 24-34, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4965347> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.4965347>

²⁵ Trahan, J. (2022). "Revisiting the History of the Crime of Aggression in Light of Russia's Invasion of Ukraine". Vol: 26; Issue: 2. Clinical Professor, NYU Center for Global Affairs; Convenor, The Global Institute for the Prevention of Aggression. Available at: <https://www.asil.org/insights/volume/26/issue/2>

²⁶ Pelliconi, A.M. (2024). Self-Defence As Remedial Self-Determination: Continuity in Russian Narratives to Justify Imperialism and the Use of Force. Neth Int Law Rev 71, 233–260 (2024). <https://doi.org/10.1007/s40802-024-00260-w>

²⁷ Grzebyk, P. (2023). Crime of Aggression against Ukraine: The Role of Regional Customary Law, Journal of International Criminal Justice, Volume 21, Issue 3, July 2023, Pages 435–459, <https://doi.org/10.1093/jicj/mqad035>

է, թե արդյոք տվյալ արարքը հասել է այնպիսի աստիճանի, որը կարող է դիտվել որպես միջազգային խաղաղության խախտում և, հետևաբար, ագրեսիա: Ինչպես տեսնում ենք, այս հարցի լուծումը մեծապես կախված է հենց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հայեցողական լիազորություններից, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի Կանոնադրության 39-րդ հոդվածում²⁸: Այսպես՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը կարող է գալ այն եզրակացության, որ զինված ուժի կիրառումը բավականաչափ լուրջ չէ ագրեսիա համարվելու համար: Այսինքն, որոշ դեպքերում ագրեսիայի փաստը իրավաբանորեն չի ճանաչվում, եթե միջազգային անվտանգության սպառնալիքի մակարդակը գնահատվում է որպես անբավարար բարձր: Դա նշանակում է, որ զինված ուժերի կիրառմամբ իրավախախտումները ագրեսիա կճանաչվեն միայն այն դեպքում, եթե այդ ուժի կիրառումը էապես խախտի պետությունների միջև խաղաղ համակեցության հարաբերությունները: Այսինքն՝ ոչ միայն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հայտարարությունն է որոշում հանցագործության փաստը, այլև գործողության բուն էությունը և դրա հետևանքների լրջությունն ու ծավալը: Այս համատեքստում առաջանում են մի քանի հիմնական խնդիրներ՝

- Միջազգային մակարդակով դեռևս չեն մշակվել հստակ չափանիշներ, որոնք թույլ են տալիս որոշել, թե երբ է խաղաղության խախտումը համարվում բավական լուրջ՝ ագրեսիա համարվելու համար:

- Զինված սահմանային բախումների և լայնածավալ ագրեսիվ գործողությունների միջև հստակ տարբերություն չկա:

- Ագրեսիայի իրավական ճանաչման գործընթացը հաճախ կախված է քաղաքական շահերից և սուբյեկտիվ հետևանքներից, հատկապես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամների կողմից վետոյի իրավունքի կիրառման դեպքում:

Առավել հակասական իրավիճակ տեղի է ունենում այն ժամանակ, երբ Անվտանգության խորհրդի մշտական անդամը հենց ինքն է հանդիսանում այն կողմը, որը ենթադրաբար ագրեսիա է իրականացրել: Արդյունքում՝ նա կարող է արգելափակել կամ կանխել ագրեսիայի փաստի միջազգային ճանաչումը²⁹: Սա լուրջ սահմանափակում է միջազգային իրավունքի արդյունավետության և արդարության ապահովման տեսանկյունից: Դա նշանակում է, որ պետք է միջազգային մակարդակով մշակել հստակ, իրավաչափ և ոչ քաղաքական չափանիշներ, որոնք թույլ կտան գնահատել խաղաղության խախտման լրջությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդից անկախ ՀՀ քաղաքական կոնյունկտուրայի աստիճանը:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչպես քաղաքական գնահատականների բացակայությունը կարող է բարդացնել ագրեսիայի իրավական սահմանման գործընթացը: Չնայած ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների կամ պատերազմական հանցագործությունների հետ կապված ձևավորվել են ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակներում որոշակի ըմբռնում, ագրեսիայի հանցագործության վերաբերյալ այդպիսի համընդհանուր համաձայնություն դեռևս չկա: Ավելին՝ այս հանցագործության ներառումը Հռոմի Ստատուտի մեջ տեղի է ունեցել ուժեղ դիմադրության և երկարատև բա-

²⁸ “The Security Council shall determine the existence of any threat to the peace, breach of the peace, or act of aggression and shall make recommendations, or decide what measures shall be taken in accordance with Articles 41 and 42, to maintain or restore international peace and security.”. Charter of the United Nations. Available at: <https://legal.un.org/repository/art39.shtml>

²⁹ *Cajjgal, A., dos Santos, et al.* (2023). The United Nations Security Council in the 21st Century: Evaluating its Design and Structure. *OxJournal*. Available at: <https://www.oxjournal.org/the-united-nations-security-council-in-the-21st-century-evaluating-its-design-and-structure/>

նակցությունների պայմաններում³⁰: Նույնիսկ եթե ներկայում ագրեսիան համարվում է Հռոմի Ստատուտով ամրագրված միջազգային հանցագործություն, այն դեռ չունի այնպիսի ճանաչում, ինչպես՝ օրինակ միջազգային հանցագործությունների վերոնշյալ երեք տեսակները:

Ագրեսիայի առանձնահատկությունն այն է, որ դրա շրջանակում պաշտպանվող իրավական արժեքը ոչ թե կոնկրետ անձանց կյանքի կամ ազատության իրավունքն է, այլ սուսկ պետության ինքնիշխանությունը, քաղաքական անկախությունը և փարածքային ամբողջականությունը:³¹ Նույնիսկ եթե կարելի է ենթադրել, որ, ի վերջո, պաշտպանվում է տվյալ պետության ողջ բնակչության անվտանգությունը, այնուամենայնիվ, ի տարբերություն մյուս Հռոմի Ստատուտով ամրագրված միջազգային հանցագործությունների, ուղղակիորեն իրավական պաշտպանություն է ստանում հենց պետությունը: Կարելի է եզրակացնել, որ այս հանգամանքով է նաև պայմանավորված այն փաստը, որ ագրեսիայի հանցագործությունը միշտ չէ, որ դիտվում է որպես մարդկության ընդհանուր բարեկեցության դեմ ուղղված միջազգային հանցագործություն:

Բացի դրանից՝ չնայած ագրեսիայի հանցակազմի իրավական ամրագրումն առկա է Հռոմի Ստատուտի մեջ, ագրեսիվ պատերազմը (*jus ad bellum*) ի սկզբանե հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին³²: Մասնավորապես, ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված է ուժի կամ ուժի կիրառման սպառնալիք չկիրառելու պարտավորությունը: Այսինքն՝ եթե ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը հավանություն է տալիս ռազմական գործողություններին՝ որպես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման միջոց, և երկրորդ, եթե պետությունը ռազմական ուժ է կիրառում անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության նպատակով՝ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համապատասխան, այս բացառությունների շրջանակներում ագրեսիայի հանցագործությունը չի կարող դիտարկվել³³:

Վերջապես, հարկ է ընդգծել, որ ագրեսիայի հանցագործությունը դեռևս չունի կիրառման ձևավորված դատական պրակտիկա³⁴: Ինչպես այլ միջազգային հանցագործությունների դեպքում, այստեղ նույնպես նախքան ագրեսիվ գործողություններին իրավական որակավորում տալը, անհրաժեշտ է հաստատել համատեքստային պայմանների առկայությունը³⁵:

II. Ագրեսիայի հանցագործության հիմնախնդիրները՝

1. Պետության կողմից ուժ գործադրելու խնդիրն այլ պետության ինքնիշխանության նկատմամբ

Ագրեսիայի հանցագործության դեպքում պաշտպանվող իրավական շահերն են մեկ այլ պետության ինքնիշխանությունը, փարածքային ամբողջականությունը, կամ քաղաքական անկախությունը: Այս արժեքները միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներ են: Դա նշա-

³⁰ McDougal, C. (2013), *The Crime of Aggression under the Rome Statute of the International Criminal Court*, Cambridge University Press, 2013.

³¹ Luban, D. (2024). *The Crime of Aggression: Its Nature, the Leadership Clause, and the Paradox of Immunity*. Georgetown University Law Center. Available at: <https://scholarship.law.georgetown.edu/cgi/viewcontent.cgi?article=3645&context=facpub>

³² McDougal, C. (2013), *The Crime of Aggression under the Rome Statute of the International Criminal Court*, Cambridge University Press, 2013.

³³ Dinstein, Y. (2017). *War, Aggression and Self-Defence* (6th ed.). Cambridge: Cambridge University Press.

³⁴ Սակայն կան դատական նախադեպեր ՄԱԿ-ի Միջազգային Դատարանում (ICJ): Օրինակ՝ *Congo v. Uganda* դատական գործը: <https://www.icj-cij.org/case/116>

³⁵ Hajdin N.R. (2021). The actus reus of the crime of aggression. *Leiden Journal of International Law*. 2021;34(2):489-504. doi:10.1017/S0922156521000042

նակում է, որ դրանց նկատմամբ ցանկացած միջամտություն կամ ոտնձգություն հակասում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված նորմերին և խաթարում պետությունների միջև խաղաղ գոյակցության համակարգի ստեղծմանը: Այսպես, *պետության ինքնիշխանությունը* ենթադրում է իր ամբողջ տարածքում ազատորեն իշխանություն իրականացնելու նրա իրավունքը՝ առանց արտաքին ճնշման կամ միջամտության: *Տարածքային ամբողջականությունն* էլ իր հերթին նշանակում է պետության սահմանների անխախտելիություն, իսկ *քաղաքական անկախություն*՝ ներքին և արտաքին քաղաքականության մեջ ինքնուրույն որոշումներ կայացնելու նրա իրավունքը³⁶: Ազրեսիան, լինելով հենց այդ հիմնարար սկզբունքների դեմ ուղղված հանցագործություն, ոչ միայն խախտում է սլյալ պետության իրավունքներն, այլև սպառնում է նաև միջազգային կայունությանն ու իրավական կարգին: Այդ իսկ պատճառով Հռոմի Ստատուտը դիտարկում է ազրեսիան որպես ծանր միջազգային հանցագործություն, որն արժանացել է խիստ դատապարտման:

Ազրեսիայի հանցագործության շրջանակում պետության կողմից ուժի կիրառումը ենթադրում է, որ այն ուղղված է *մեկ այլ պետության դեմ* և իրականացվում է *զինված ուժերի կամ ռազմական կառույցների օգտագործմամբ*: Անհրաժեշտ է նաև ապացուցել, որ նշված զինված ուժերը կամ ռազմական կառույցները գտնվում են *այդ պետության անմիջական կամ էական վերահսկողության ներքո*: Մեր կարծիքով, նախկինում գործնականում դժվար էր պատկերացնել մի իրավիճակ, երբ դասական ազրեսիայի հանցագործությունը կարող է կատարվել բացառապես ոչ պետական խմբավորումների կողմից: Որպես կանոն՝ ազրեսիվ բնույթ կրող գործողություններն իրավական տեսանկյունից կարող են վերագրվել միայն պետական մակարդակով կազմակերպված կամ պետության հստակ վերահսկողության ներքո գործող ուժերին: Ավելին՝ ազրեսիայի հանցագործության համատեքստում պետությունը չի կարող ազատվել պատասխանատվությունից՝ այնպես, որ գործողությունները կատարվել են ինքնուրույն գործող անկախ խմբերի կամ միավորումների կողմից: Սակայն ազրեսիայի հանցագործությունը ճանաչելու համար վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն կիրառված ուժի բնույթն, այլև իրավական կապը նրա գործող պետության հետ, ինչպես նաև գործողության վասակարության աստիճանը, բնույթը, լրջությունն ու ծավալը՝ որպես միջազգային խաղաղության և անվտանգության խախտման դրսևորում: Սակայն արդի միջազգային հարաբերություններում և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում ձևավորվել է մի նոր իրողություն, որտեղ պետությունների միջև ազրեսիայի իրականացումը կարող է ձեռք բերել ոչ ավանդական ձևեր³⁷: Հատկապես վերջին տարիներին զարգացած կիբեռհարձակողական տեխնոլոգիաներն ու հաքերային գործելաոճերը հանգեցրել են այն իրավիճակին, երբ ազրեսիվ գործողություններ կարող են իրականացվել նաև ոչ պետական՝ մասնավոր խմբավորումների կամ անհատների կողմից³⁸: Այստեղ կիբեռազրեսիայի համատեքստում իրավական դաշտը բախվում է մի շարք բարդությունների. մասնավոր սուբյեկտների կողմից իրականացված վասաբեր գործողությունները երբեմն ունեն այնպիսի ծավալ և հետևանքներ, որոնք համադրելի են ավանդական

³⁶ Cryer, R. (2006). International Criminal Law vs State Sovereignty: Another Round? The European Journal of International Law, Vol. 16, No. 5. Available at: www.ejil.org/pdfs/16/5/333.pdf

³⁷ Scheffer, D. (2017). The Missing Pieces in Article 8 bis (Aggression) of the Rome Statute. Available at: https://journals.law.harvard.edu/ilj/2017/04/the-missing-pieces-in-article-8-bis-aggression-of-the-rome-statute/#_ftn1

³⁸ Trahan J. (2022). Contributing to Cyber Peace by Maximizing the Potential for Deterrence: Criminalization of Cyberattacks under the International Criminal Court's Rome Statute. In: Shackelford SJ, Douzet F, Ankersen C, eds. Cyber Peace: Charting a Path Toward a Sustainable, Stable, and Secure Cyberspace. Cambridge University Press; 2022:131-153. Available at: <https://www.cambridge.org/core/books/cyber-peace/contributing-to-cyber-peace-by-maximizing-the-potential-for-deterrence/D6CB4F5110F5357FAF1C42121FC90E07>

զինված հարձակման հետևանքների հետ: Այս պարագայում խիստ խնդրահարույց է դառնում պետության պատասխանատվության սահմանումը, հատկապես երբ պետությունը ձևապես անտեղյակ է տվյալ գործողություններից: Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ միջազգային իրավունքի մեջ գոյություն ունի նաև պետության անգործության միջոցով մեղսակցության կամ համապարտության մոտեցում, երբ պետությունը կարող է ենթարկվել իրավական պատասխանատվության այն դեպքում, երբ կանխատեսելի էր մասնավոր սուբյեկտների վարքագիծը, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել դրանք կանխելու ուղղությամբ: Ավելին՝ որոշ դեպքերում միջազգային համայնքը կարող է ենթադրել պետության ոչ ֆորմալ աջակցություն՝ տեղեկատվական, նյութական կամ տեխնոլոգիական հենքի ձևով: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ ագրեսիայի հանցագործության իրավական ըմբռնման շրջանակը ժամանակակից իրողությունների պայմաններում ենթակա է վերանայման: Եթե նախկինում ագրեսիան դիտվում էր որպես զուտ ֆիզիկական ուժի կիրառմամբ իրականացվող հանցագործություն, ապա այժմ անհրաժեշտ է, որ իրավական նորմերը ներառեն նաև անտեսանելի, բայց իրական վնասներ պատճառող մեթոդների, այդ թվում՝ կիբեռգործողությունների պատշաճ իրավական գնահատման հնարավորությունը:

Բացի դրանից՝ ՀՀ ՔՕ-ի 149-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ագրեսիայի դիսպոզիցիայի հետևյալ ձևակերպումը՝ **Պեպության քաղաքական կամ ռազմական գործողությունները փաստացի ղեկավարող կամ վերահսկող կամ ուղղորդող անձի կողմից ագրեսիա պլանավորելը, նախապատրաստելը, նախաձեռնելը կամ իրականացնելը**: Ավելին՝ սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է ագրեսիայի կոնկրետ դրսևորումներն, նրանք «իր բնույթով, լրջությամբ ու ծավալով **ակնհայտորեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կոպիտ խախտում է**»:

Ինչպես կարելի է նկատել, որ ՀՀ ՔՕ-ում բացակայում է ագրեսիայի ուղղվածության հստակ իրավաբանական նկարագրությունը: Մասնավորապես՝ ագրեսիայի դիսպոզիցիայում չեն հիշատակվում պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության օբյեկտներն, ինչը կարող է իրավական մեկնաբանման առումով ստեղծել անորոշություններ: Այսինքն՝ հնարավոր է պնդել, որ ՀՀ ՔՕ-ի 149-րդ հոդվածի դիսպոզիցիան իմպլեմենտացրել է ագրեսիայի միջազգային սահմանում, բայց ոչ ամբողջ բովանդակությամբ: Թեև հոդվածի երկրորդ մասում շարադրված են ագրեսիայի կոնկրետ արարքները, սակայն հանցագործության ընդհանուր նկարագրության մեջ **ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության** հասկացությունների բացակայությունը կարող է ստեղծել իրավաբանական անորոշություններ: Հարկ է նշել, որ ուժի կիրառման ձևերը չեն սահմանափակվում միայն ֆիզիկական կամ դասական ռազմական միջոցներով: Օրինակ՝ տեղեկատվական պատերազմը կամ կիբեռհարձակումները, որոնք ուղղված են մեկ այլ պետության կենսական ենթակառուցվածքների գործունեությունը խաթարելուն, կարող են նույնպես դիտվել որպես ագրեսիա³⁹: Մեր կարծիքով՝ դրանք իրականում կարող են համարվել ագրեսիայի նոր ձևեր, քանի որ կիբեռհարձակումների միջոցով պետությունները կարող են խաթարել տուժող-պետության կարևոր ենթակառուցվածքները: Դա կարող է հանգեցնել տուժող-պետության ներքին ապակայունացման ու միջազգային լարվածության: Ավելին՝ 2025 թ. մարտի 6-ին հրապարակված *Draft Policy on Cyber-Enabled Crimes under the Rome Statute*⁴⁰ փաստաթղթում ՄԲԴ-ի դատախազության գրասենյակը (*Office of the*

³⁹ Trahan, J. (2021). The Criminalization of Cyber-operations Under the Rome Statute, *Journal of International Criminal Justice*, Volume 19, Issue 5, November 2021, Pages 1133–1164, <https://doi.org/10.1093/jicj/mqab066>

⁴⁰ Draft Policy on Cyber-Enabled Crimes under the Rome Statute. 6 March 2025. Available at: <https://www.icc-cpi.int/>

Prosecutor) անդրադառնում է կիրեռահանցագործության թեմային: Մասնավորապես՝ փաստաթուղթը հստակ ընդգծում է, որ Հռոմի Ստատուտի տեխնոլոգիական առումով նեյտրալ է: Դա նշանակում է, որ Ստատուտով նախատեսված հանցագործությունները (ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները և ագրեսիայի հանցագործությունը) կարող են իրականանալ նաև կիրեռ-միջոցներով: Թեև առանձին *կիրեռագրեսիա* տերմինը փաստաթղթում որպես ինքնուրույն հանցակազմ չի ձևակերպվում, այնուամենայնիվ, կիրեռհարձակումները կարող են ընկալվել որպես ագրեսիայի գործողությունների մաս՝ կախված կոնկրետ հետևանքներից և խախտման աստիճանից: Այլ կերպ ասած, կիրեռագրեսիան չի դիտարկում որպես նոր և առանձին կատեգորիա, այլ այն տեղավորում է արդեն իսկ գոյություն ունեցող իրավական շրջանակներում՝ Հռոմի Ստատուտի համապատասխան դրույթների ներքո⁴¹:

Սակայն այստեղ էլ առաջանում են մի շարք հետաքրքիր հիմնահարցեր: Այսպես, որտեղ է պետության տեղեկատվական անկախության սահմանը, և այդ սահմանը երբ ու ինչպես է խախտվում, եթե պետությունն ենթարկվում է կիրեռագրեսիայի: Կիրեռագրեսիան, որպես նոր ձևաչափի ագրեսիա, երբեմն չի գտնվում ավանդական ռազմական ագրեսիայի կամ այլ դասական մեթոդների շրջանակում: Հենց այս փաստն է առաջացնում իրավաբանական անորոշություն այնպիսի հարցերում, ինչպիսիք են կիրեռագրեսիայի օբյեկտի բնույթը: Հետևաբար՝ անորոշ է մնում այն հարցը, որ համատեքստում պետք է գնահատել պետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը կամ ինքնիշխանությունը թվային և տեղեկատվական դաշտերում, հատկապես երբ թվային տարածքում են իրականացվում այդպիսի կիրեռհարձակումները: Եվ, ընդհանրապես, որտեղ են թվային տարածքում վերջանում պետական և մասնավոր սուբյեկտների միջամտությունները: Բացի դրանից՝ երբ պետք է համարվել, որ այդ գործողությունները խախտում են հենց պետական ինքնիշխանությունը թվային տարածքում: Ավելին՝ կիրեռհարձակումների բնույթից ելնելով՝ հաճախ հնարավոր չէ պարզել, թե պետությունն իրականում պատրաստել է այդ հարձակումը, թե պարզապես չի կանխել մասնավոր սուբյեկտի գործողությունը:

Վերոնշյալ հարցերը կարևոր են հատկապես պետությունների տեղեկատվական անկախության տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում պետության անկախությունը բխում է ոչ միայն տնտեսական ու քաղաքական ոլորտներից, այլև թվային և ինտերնետային տարածքների միջոցով⁴² : Այստեղ անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղ է սկսվում և ավարտվում պետության իրավունքը՝ վերահսկելու իր թվային ենթակառուցվածքները⁴³:

Ավելին՝ այդ հարցերն ակտուալ են դառնում նաև ՀՀ-ում: Արդյո՞ք ՀՀ-ի պետական համակարգերը, որոնք առնչվում են քաղաքացիների տվյալների և հանրային ծառայությունների թվային հոսքերի կառավարման հետ, համարվում են պետական տեղեկատվական անկախության հիմքեր: Ինչպես պետք է իրավաբանական տեսանկյունից վերաբերվել այդ ենթակառուցվածքների խափանմանը, երբ դրանք ենթարկվում են արտաքին կամ ներքին կիրեռհարձակումների: Կարելի է այսպիսի գործողությունները համարել ինքնիշխանության սպառ-

sites/default/files/2025-03/250306-OTP-Policy-on-Cyber-Enabled-Crimes-for-public-consultation.pdf

⁴¹ *Trahan, J.* (2021). “The Criminalization of Cyber-operations Under the Rome Statute”, *Journal of International Criminal Justice*, Volume 19, Issue 5, November 2021, pp. 1133–1164, <https://doi.org/10.1093/jicj/mqab066>

⁴² *Дзейтова, P.A.* (2021). Ответственность за киберагрессию по международному уголовному праву: основание и условия наступления. *Вестн. Моск. Ун-та. Сер. 11. Право.* 2021. № 6

⁴³ *Fratini, S., Hine, E., Novelli, C. et al.* (2024). Digital Sovereignty: A Descriptive Analysis and a Critical Evaluation of Existing Models. *DISO* 3, 59 (2024). <https://doi.org/10.1007/s44206-024-00146-7>

նախք: Եվ վերջապես, առանցքային հարց է, թե պետք է արդյոք իրավաբանորեն ընդլայնել ու հստակեցնել տեղեկատվական անկախության իրավաբանական դաշտը՝ հաշվի առնելով թվային սպառնալիքները և կիբեռհարձակումների հետ կապված նոր մարտահրավերները:

Մեր կարծիքով՝ նշված բացը ՀՀ օրենսդիրը չի լրացնում: Օրինակ՝ գոյություն չունի հատուկ հանցակազմ կիբեռագրեսիայի համար այն պարագայում, երբ կիբեռհարձակումներն իրենց ծանրության մակարդակով չեն զիջում դասական ագրեսիային: Ճիշտ է, ոչ Հռոմի Ստատուտը և ոչ էլ ՄԱԿ-ի բանաձևը չեն նախատեսում կոնկրետ և արդիական սահմանում այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են կիբեռհարձակումները, սակայն կիբեռհարձակումների դեմ պայքարի միջազգային իրավունքն ընթացիկ փուլում ակտիվորեն զարգանում է: Այսօր շատ իրավաբաններ ու փորձագետներ կոչ են անում ամրապնդել այս նոր տեսակի ագրեսիայի քրեականացմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունները՝ հակազդելու համար համաշխարհային թվային վտանգներին⁴⁴:

Միևնույն ժամանակ նշենք, որ ագրեսիայի հանցագործության անհրաժեշտ նախադրյալն է երկու պետությունների առկայությունը՝ մեկը որպես ագրեսոր, իսկ մյուսը՝ որպես տուժող կողմ⁴⁵: Իսկ ինչպես որակել այն գործողությունը, երբ մասնավոր սուբյեկտների՝ հաքերների կողմից իրականացվում են կիբեռհարձակումներ՝ առանց պետության իմացության: Արդյոք կարելի է դա համարվել ագրեսոր-պետության կողմից կատարված կիբեռագրեսիա: Գործնականում մասնավոր սուբյեկտները (ինչպիսիք են, օրինակ, հաքերները) կարող են հարձակվել այլ պետության ենթակառուցվածքների վրա՝ առանց որևէ պետական աջակցություն կամ հաստատման: Իհարկե, եթե դրանք կատարվում են պետության անունից կամ պետական շահերի շրջանակում, ապա դրանք կարող են դիտվել որպես պետության կողմից իրականացված ագրեսիա, ինչը ենթադրում է նաև միջազգային պատասխանատվություն: Սակայն, եթե հաքերները գործում են անկախ՝ առանց պետության աջակցման կամ ներգրավվածության, բայց գործում են պետության շահերից ելնելով, ապա ինչպես որակել այդպիսի հանցագործությունը: Այս խնդիրը նույնպես ստեղծում է իրավաբանական անորոշություն, քանի որ առկա չեն համընդհանուր ընդունված չափանիշներ, որոնք կսահմանեն, թե երբ են կիբեռհարձակումները համարվում պետության կողմից իրականացված: Սա պահանջում է իրավաբանական որոշակիություն և նոր միջազգային ստանդարտների մշակման անհրաժեշտություն, որոնք կկարգավորեն մասնավոր սուբյեկտների կողմից իրականացվող կիբեռհարձակումների իրավաբանական բնույթը:

Չմոռանանք, որ տեղեկատվական տեխնոլոգիաները ստեղծում են նոր, նախկինում անհայտ մարտահրավերներ ինչպես միջազգային քրեական իրավունքի, այնպես էլ ներպետական իրավունքի համար, որոնք դասական ագրեսիայի դեպքում կարող են չգործել: Գործնականում դժվար է գնահատել, թե երբ է մասնավոր սուբյեկտների գործողությունը հասնում այդպիսի բնույթի, լրջության և ծավալի, որպեսզի պետությունը պատասխանատվության ենթարկվի դրա համար: Այդ իսկ պատճառով ժամանակի ընթացքում ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքները պետք է համապատասխանեցվեն և փոփոխվեն՝ հաշվի առնելով կիբեռհարձակումների տարածումը և դրանց միջազգայնորեն վտանգավոր բնույթը:

Ավելին՝ ագրեսիայի և ագրեսիվ պատերազմի իրավական բնույթը հասկանալու համար

⁴⁴ Дзейтова, Р.А. (2021). Ответственность за киберагрессию по международному уголовному праву: основание и условия наступления. Вестн. Моск. Ун-та. Сер. 11. Право. 2021. № 6

⁴⁵ Schabas, W.A. (2016). 'Crime of aggression/Crime d'agression', The International Criminal Court: A Commentary on the Rome Statute, 2nd Edition, Oxford Commentaries on International Law (2016; online edn, Oxford Law Pro), <https://doi.org/10.1093/law/9780198739777.003.0011>, accessed 21 Oct. 2025.

կարևոր է նաև *պետություն* հասկացության հստակ սահմանումը⁴⁶ : Միջազգային իրավունքի գործող դրույթների համաձայն՝ զինված ուժի կիրառումը ոչ պետական հասարակական-իրավական կազմավորումների, էթնիկ կամ կրոնական համայնքների, ինքնորոշման իրավունքը պաշտպանող շարժումների կամ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող այլ կառույցների դեմ չի կարող դիտարկվել որպես ագրեսիա: Օրինակ՝ Իսրայելի կողմից իրականացված գործողությունների իրավական որակումը որպես ագրեսիա կարող է առաջացնել բարդություններ՝ պայմանավորված Պաղեստինի միջազգային իրավական կարգավիճակի որոշակի առանձնահատկություններով, չնայած այն հանգամանքին, որ Պաղեստինը ճանաչված է որպես պետություն բազմաթիվ պետությունների և ՄԱԿ-ի կողմից⁴⁷ : Այդուհանդերձ, *պետություն* հասկացության իրավական բնույթի շուրջ առկա է տեսական ու գործնական անորոշություններ, որը խոչընդոտում է ագրեսիայի հանցագործության ճիշտ իրավական գնահատականին և իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը⁴⁸:

Նշենք, որ ՀՀ ՔՕ-ում ևս բացակայում է հստակ չափանիշ այն մասին, թե ինչպես պետք է գնահատել *պետություն* հասկացության իրավաչափությունը՝ մասնավորապես չճանաչված, մասամբ ճանաչված կամ նորաստեղծ կազմավորումների դեպքում⁴⁹ : Հարցն էլ ավելի է բարդանում այն պարագայում, երբ իրավունքի տարբեր ճյուղերում *պետություն* հասկացության մեկնաբանությունները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ եթե ընդհանուր իրավունքի տեսության մակարդակով պետությունը հասկացվում է որպես ինքնիշխան քաղաքական և տարածքային կազմակերպություն, որն ունի իշխանության ապարատ և իր որոշումները իր տարածքում ամբողջ բնակչությանը պարտադրելու լիազորություն, ապա միջազգային իրավունքում պետության իրավասուբյեկտության հարցը լրացվում է ճանաչման խնդրով: Մասնավորապես՝ հարկ է նշել, որ միջազգային իրավունքում կիրառվում են երկու հիմնական մոտեցում այս հարցի վերաբերյալ՝

1. *Դեկլարատիվ*, ըստ որի՝ պետությունը կարող է գոյություն ունենալ նույնիսկ առանց միջազգային ճանաչման,

2. *Կոնստիտուտիվ*, որի համաձայն՝ պետության միջազգային սուբյեկտայնությունը ձևավորվում է միայն այն դեպքում, երբ այն ճանաչվում է այլ պետությունների կողմից:⁵⁰

Ուշագրավ է, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 3314 (1974) բանաձևով ամրագրված ագրեսիայի սահմանումը ագրեսիան պայմանավորված չի դարձնում պետականության ճանաչմամբ: Սա ենթադրում է պետականության հռչակող (*դեկլարատիվ*) տեսության լռակյաց ընդունում, ըստ որի՝ որևէ քաղաքական միավոր կարող է որակվել որպես պետություն, եթե բավարարում է Մոնտեվիդեոյի Կոնվենցիայի 1933 թ. ավանդական չափանիշներին՝ *մշտական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ միջազգային հարաբերություններ հաստատելու կարողություն՝ անկախ պաշտոնական դիվանագիտական*

⁴⁶ Rickart, A. (2015) “Emerging Issues: To Be or Not to Be, That Is the Statehood Question,” University of Baltimore Journal of International Law: Vol. 3: Iss. 2, Article 7. Available at: <https://scholarworks.law.ubalt.edu/ubjil/vol3/iss2/7>

⁴⁷ Sabel R. (2022). Is Palestine a State? In: International Law and the Arab-Israeli Conflict. Cambridge University Press; 2022:390-399. Available at: <https://www.cambridge.org/core/books/abs/international-law-and-the-arab-israeli-conflict/is-palestine-a-state/24D4ED9B1AF29E4F16C69020977B5477>

⁴⁸ Ronen, Y. (2020). Palestine in the ICC: Statehood and the Right to Self-determination in the Absence of Effective Control, *Journal of International Criminal Justice*, Volume 18, Issue 4, September 2020, Pages 947–966, <https://doi.org/10.1093/jicj/mqaa051>

⁴⁹ Lee, H. (2016). DeFining “State” For The Purpose of The International Criminal Court: The Problem Ahead After The Palestine Decision. *University Of Pittsburgh Law Review* Vol. 77. DOI 10.5195/lawreview.2016.405

⁵⁰ Grzybowski, J. (2017). To Be or Not to Be: The Ontological Predicament of State Creation in International Law, *European Journal of International Law*, Volume 28, Issue 2, May 2017, Pages 409–432, <https://doi.org/10.1093/ejil/chx031>

*ճանաչումից*⁵¹ : Մինչդեռ Հռոմի Ստատուտն այս հարցին չի անդրադառնում՝ թողնելով այն մեկնաբանության դաշտում: Մեր կարծիքով՝ այս իրավական լուծումը բարդացնում է մի շարք գործնական և կարգավորող հարցերի լուծումը, հատկապես վիճարկվող կամ չճանաչված միավորների առնչությամբ⁵² : Օրինակ՝ իրավաբանորեն հնարավոր է որակել ուժի կիրառումն Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի) դեմ որպես ագրեսիա: Ինչպես կարելի է ագրեսիայի հանցագործության հարցը դիտարկել, եթե ղեկավարվում ենք պետականության հռչակող (*դեկլարատիվ*) մոտեցմամբ և նկատի ունենք, որ Արցախի Հանրապետությունը բավարարել է պետականության օբյեկտիվ չափանիշներին⁵³ : Այս հարցադրումը մնում է արդիական անգամ այն պարագայում, երբ գոյություն ունեն ՄԱԿ-ի բանաձևեր, որոնք հաստատում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, և միջազգային հանրությունը չի ճանաչում Արցախի Հանրապետությունը⁵⁴: Եթե ագրեսիան իրավաբանորեն սահմանվում է որպես ուժի կիրառում այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ, ապա հիմնարար հարց է առաջանում՝ արդյո՞ք Արցախի Հանրապետությունը կարող է որակվել որպես «պետություն» ագրեսիայի հանցագործության համատեքստում⁵⁵ : Այս հարցը մաքուր տեսական չէ. այն լրջագույն հետևանքներ կարող է ունենալ իրավական պատասխանատվության, գրհի կարգավիճակի և Հռոմի Ստատուտով նախատեսված իրավասության ծավալի առումով, հատկապես այնպիսի պետությունների համար, ինչպիսին Հայաստանն է, որոնք ձգտում են իրենց ներքին օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Այսպիսի պայմաններում, երբ չճանաչված միավորների նկատմամբ ագրեսիայի համատեքստում պաշտպանվածության իրավական կարգավիճակը հստակ չէ, ստեղծվում է իրավական վակուում՝ բնակչությանը զրկելով հնարավոր պաշտպանությունից, անգամ եթե այդ բնակչությունն ապրում է միավորի տարածքում, որն օբյեկտիվորեն կարող է բավարարել պետականության չափանիշներին⁵⁶: Դա միևնույն ժամանակ խոր մտածելու առիթ է տալիս՝ արդյո՞ք ագրեսիայի արգելքի պաշտպանական նպատակները պետք է կախված լինեն դիվանագիտական ճանաչումից, թե՛ իրականում գոյություն ունեցող և ինքնորոշվող քաղաքական համայնքներից, որոնք գործում են հակամարտության գոտիներում:

Մեր կարծիքով՝ այս տեսական տարաձայնությունները լրացուցիչ դժվարություններ են ստեղծում ագրեսիայի իրավական կոնկրետացման և մեկնաբանման գործընթացում: Այս խնդիրը հատկապես արդիական է ժամանակակից աշխարհում՝ հաշվի առնելով պետությունների մասնատման միտումները, նոր տարածքային սուբյեկտների առաջացումը, ինչպես նաև դրանց միջազգային ճանաչման անորոշությունը⁵⁷ : Արդյունքում, *պետություն* հասկացության

⁵¹ Kumar, A.V. (2024). Challenges Facing the Montevideo Convention on the Rights and Duties of States. *Hull Law Review*, Volume 1 (2023-2024). pp. 19-24. Available at: <https://www.hlr.wordpress.hull.ac.uk/wp-content/uploads/2024/09/Hull-Law-Review-Vol-1-2023-24-Archana-Challenges-facing-the-Montevideo-Convention.pdf>

⁵² Tataryn, A., Ertürk, E. Unrecognised States: The Necessary Affirmation of the Event of International Law. *Law Critique* 32, 331-345 (2021). <https://doi.org/10.1007/s10978-021-09302-1>

⁵³ Shikova, N. (2023). Statehood and Recognition of Statehood. In: *Self-Determination and Secession*. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-34322-3_4

⁵⁴ Resolution 822 (1993). Adopted by the Security Council at its 3205th meeting, on 30 April 1993. Available at: <https://2001-2009.state.gov/p/eur/rls/or/13508.htm>

⁵⁵ Petrossian G. (2024). Legal Battles Over Nagorno-Karabakh: A Review of the Jurisprudence to Date. Vol. 28. Issue: 11. Available at: <https://www.asil.org/insights/volume/28/issue/11>

⁵⁶ Khachatryan, D. (2023). Transboundary Elements of Crime: A Case of Armenian Ethnic Cleansing before the ICC?, *Völkerrechtsblog*, 24.11.2023, doi: 10.17176/20231124-093603-0.

⁵⁷ Buzard, K.; Graham, B.A.T.: *Horne B.* (2017). “Unrecognized States: A Theory of Self-Determination and Foreign

սահմանման հարցը ագրեսիայի հանցագործության իրավական կիրառելիության հիմնական խնդիրներից մեկն է, նամանավանդ երբ արդեն գիտական ասպարեզում խոսում են նույնիսկ թվային պետությունների կամ թվային ինքնիշխանության մասին⁵⁸: Միևնույն ժամանակ, չնայած միջազգային իրավունքում կա տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության մեկնաբանման համեմատաբար հստակ ըմբռնում, ինքնիշխանության ըմբռնումը միևնույն է շարունակում է մնալ վիճելի հիմնախնդիր⁵⁹: Միջազգային իրավունքի տեսությունը մշակել է ինքնիշխանության բովանդակության և բնույթի մի շարք տարբերակված մոտեցումներ: Դրանցից առանձնանում են, օրինակ՝

- *Մնացորդային ինքնիշխանության տեսությունը*, ըստ որի՝ պետության ինքնիշխանությունն արտահայտվում է միջազգային կառույցներին չվերապահված գործառույթներով:

- *Սահմանափակ ինքնիշխանության մոդելը*, որը վերաբերում է միջազգային պայմանագրերով կամ կազմակերպությունների կողմից պետությունների ինքնավարության սահմանափակմանը:

- *Նորմատիվ և իրավական ինքնիշխանության տեսությունը*, որը ընդգծում է միջազգային նորմերի շրջանակներում գործելու պետության իրավունքը՝ պահպանելով միջազգային իրավունքի գերակայությունը⁶⁰:

Նման դոկտրինալ մոտեցումների բազմազանությունը բարդացնում է իրավական վերլուծությունը և մեկնաբանությունը, որն անհրաժեշտ է գնահատելու համար, թե արդյո՞ք զինված ուժի կիրառումը համարվում է ագրեսիա տվյալ իրավիճակում⁶¹: Երբ ինքնիշխանության չափանիշները հստակ սահմանված չեն, հարցեր են առաջանում հանցավոր ոտնձգության օբյեկտի վերաբերյալ: Այսինքն՝ ինչ կոնկրետ օբյեկտ է խախտվել տվյալ գործողությամբ: Ավելին՝ ինքնիշխանության գաղափարը միջազգային իրավունքում ենթարկվում է փոփոխությունների: Հետևաբար, էլ ավելի է բարդանում տվյալ օբյեկտի ընկալումը: Օրինակ՝ թվային միջավայրում հստակ չէ՝ արդյո՞ք կիրառելի է իրավունքում ենթարկվում է փոփոխությունների: Հետևաբար, էլ ավելի է բարդանում տվյալ օբյեկտի ընկալումը: Օրինակ՝ թվային միջավայրում հստակ չէ՝ արդյո՞ք կիրառելի է իրավունքում ենթարկվում է փոփոխությունների: Հետևաբար, էլ ավելի է բարդանում տվյալ օբյեկտի ընկալումը: Օրինակ՝ հարձակումը ֆինանսական համակարգի վրա՝ կարող է դիտվել որպես ագրեսիա:

Այսինքն՝ ինքնիշխանության բազմամակարդակ մեկնաբանությունը խոչընդոտում է ագրեսիայի ակտերի հստակ քրեաիրավական որակմանը: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է մշակել համաձայնեցված միջազգային ստանդարտներ՝ ինքնիշխանությունը որպես պաշտպանության արժանի իրավական արժեք հստակեցնելու նպատակով, հատկապես թվային տեխնոլոգիայի դարաշրջանում, երբ առաջանում են հարցեր թվային/տեղեկատվական

Influence”, The Journal of Law, Economics, and Organization, Volume 33, Issue 3, August 2017, Pages 578–611, <https://doi.org/10.1093/jleo/eww017>

⁵⁸ Vardanyan, L.; Kocharyan, H. (2022). Critical views on the phenomenon of EU digital sovereignty through the prism of global data governance reality: main obstacles and challenges. *European Studies – the Review of European law, Economics and Politics*, 2022, vol. 9, no. 2, pp. 110–132 DOI: 10.2478/eustu-2022-0016; Gábris, T., Hamul’ák, O. (2023). Digital Sovereignty or Sovereignty with Digital Elements?. In: Ramiro Troitifo, D., Kerikmäe, T., Hamul’ák, O. (eds) *Digital Development of the European Union*. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-27312-4_16; Zhuk, A. (2023). Virtual Sovereignty: Examining the Legal Status of Micronations in Cyberspace Through the Case of the Republic of Errant Menda Lerenda. *DISO 2*, 45 (2023). <https://doi.org/10.1007/s44206-023-00067-x>

⁵⁹ Volk, C. (2019). The Problem of Sovereignty in Globalized Times. *Law, Culture and the Humanities*, 18(3), 716–738. <https://doi.org/10.1177/1743872119828010> (Original work published 2022)

⁶⁰ Cao, R. (2019). Sovereignty, The Core Tenant of Public International Law? (March 19, 2019). Available at SSRN: <https://ssrn.com/abstract=3355874> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.3355874>

⁶¹ Merezko, O. (2020). The Mystery of the State and Sovereignty in International Law, 64 *St. Louis U. L.J.* (2020). Available at: <https://scholarship.law.slu.edu/lj/vol64/iss1/4>

ինքնիշխանության համատեքստում:

2. ՄԱԿ-ի Կանոնադրության ակնհայտ ուղնահարման հիմնախնդիրները ագրեսիայի հանցագործության համարեքստում

Մի պետության գործողությունները մեկ այլ պետության նկատմամբ որպես *ակնհայտ խախտում* որակելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել Հռոմի Ստատուտի 8bis հոդվածում սահմանված **երեք հիմնական չափանիշների համադրության շրջանակում**: Այս չափանիշներն են՝ *բնույթը*, *լրջությունը* և *ծավալը*, և միայն դրանց միաժամանակյա առկայության դեպքում այդ գործողությունները կարող են դիտվել որպես ագրեսիայի հանցագործության շրջանակներում ակնհայտ խախտում⁶²:

Մասնավորապես՝ գործողության *բնույթը* վերաբերում է խախտման ձևին՝ անկախ այն բանից, թե դա կատարվել է տարածք ներխուժելու, օկուպացիայի, ուժակոծության, նավահանգստի արգելափակման կամ որևէ այլ եղանակով: Միևնույն ժամանակ, *լրջության* շրջանակում վերլուծվում է, օրինակ, թե որքան ժամանակ են մնացել օկուպացիոն ուժերը տվյալ տարածքում, որքան ռազմական հարվածներ են հասցվել կամ որքան ինտենսիվ են եղել ռազմական գործողությունները: Այստեղ չափվում է գործողության խորությունը և դրա հետևանքների ազդեցությունը պետության տարածքային ամբողջականության, ինքնիշխանության և անվտանգության վրա: Իսկ *ծավալը* վերաբերում է աշխարհագրական տարածքի ծածկույթի մասշտաբին: Այստեղ գնահատվում է, թե ո՞ր տարածքն է ներգրավված ագրեսիվ գործողությունների մեջ և ի՞նչ մասշտաբով է տեղի ունեցել այդպիսի միջամտությունը⁶³: Թեև զոհերի թիվը որոշիչ դեր չի խաղում ագրեսիայի հանցագործության դեպքում, տարածքային և ռազմավարական նշանակության հարցերը դեռևս կարևոր են ագրեսիայի իրավական որակման համար:

Սակայն այստեղ նույնպես կան հիմնախնդիրներ: Օրինակ՝ եթե դասական ագրեսիայի դեպքում *ծավալ* կամ *ծածկույթ* հասկացությունները հիմնականում վերաբերում է տարածքային ներխուժման լայնությանը կամ ներգրավված աշխարհագրական գոտիների չափերին, ապա թվային կամ կիբեռ-տարաբնույթ միջավայրում այդ ընկալումը պետք է ենթարկվի վերահամաստավորման: Թվային տարածքում ագրեսիվ գործողությունների *ծավալի* կամ *ծածկույթի* բնույթը ենթադրում է ոչ թե ֆիզիկական տարածքի ծավալային ընդլայնում, այլ՝ այն ցանցային ենթակառուցվածքների կամ թվային համակարգերի բազմազանությունն ու կարևորությունը, որոնց վրա տարածվում է հարձակումը: Ավելին՝ Հռոմի Ստատուտի 8bis հոդվածը պահանջում է, որ գործողությունն իր *լրջությամբ* համարժեք լինի ՄԱԿ-ի Կանոնադրության կոպիտ խախտմանը: Սակայն թվային միջավայրում դժվար է չափել, թե ի՞նչ մակարդակի վնաս պետք է պատճառի կիբեռհարձակումը, որպեսզի հասնի այդ շեմին:

Այնուամենայնիվ՝ միայն վերոնշյալ երեք չափանիշների համադրությամբ այս արարքը կարող է որակվել որպես *ակնհայտ խախտում*, որն իր հերթին համարվում է ագրեսիայի հանցագործության էական տարր՝ Հռոմի Ստատուտի պահանջներին համապատասխան: Հակառակ դեպքում, եթե որևէ չափանիշ բացակայում է կամ ներկայացված է անբավարար մակարդակով, հնարավոր չէ խոսել Հռոմի Ստատուտի շրջանակներում ագրեսիայի հանցագործության առկայության մասին:

3. Ղեկավարի դերակատարության հիմնախնդիրը ագրեսիայի հանցագործության

⁶² Wong, M. S. (2016). The crime of aggression and public international law. Retrieved from <https://hdl.handle.net/1887/38952>

⁶³ Sayapin, S. (2014). The Crime of Aggression in the Rome Statute of the International Criminal Court. In: The Crime of Aggression in International Criminal Law. T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-90-6704-927-6_5

համարտեքստում

Ագրեսիայի հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու համար անհրաժեշտ է, որ տվյալ անձը զբաղեցնի այնպիսի պաշտոն, որը թույլ է տալիս նրան ուղղակիորեն ղեկավարել կամ վերահսկել պետության ռազմական կամ քաղաքական գործողությունները: Նշենք, որ խոսքը կարող է վերաբերել ոչ միայն պետական պաշտոն զբաղեցնող անձանց (օրինակ՝ նախագահի, վարչապետի կամ պաշտպանության նախարարի), այլ նաև այն անձանց, որոնք փաստացի, *de facto*, կատարել են ղեկավար գործառույթներ⁶⁴: Իհարկե՝ նման անձինք թեև պաշտոնապես նշանակված չեն լինում, սակայն այս հանգամանքը կարևոր է այն առումով, որ ագրեսիայի հանցագործությունը, ի տարբերություն այլ միջազգային հանցագործությունների, չի կարող կատարվել շարքային զինծառայողի կամ ստորադաս պաշտոնատար անձի կողմից: Այն նախատեսված է բացառապես բարձրագույն օղակի ղեկավարների համար, որոնք ունակ են ռազմաքաղաքական մակարդակով որոշումներ կայացնել և ռազմական ուժի կիրառում նախաձեռնել: Այսպիսով, ագրեսիայի հանցագործության կառուցվածքում ղեկավար դերը սահմանափակող նշանակություն ունի՝ չեզոքացնելով ստորին օղակի ղեկավարներին քրեական պատասխանատվության ենթարկելու ռիսկը և այն կենտրոնացնելով պետության ռազմաքաղաքական ղեկավարության վրա: Այսինքն՝ Հռոմի Ստատուտի 8bis հոդվածի համաձայն՝ ագրեսիայի հանցագործության համար պահանջվում է, որպեսզի տվյալ անձը փաստացի ղեկավարի կամ վերահսկի պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները⁶⁵:

ՀՀ ՔՕ-ի համապատասխան դրույթում ևս կրկնվում է *փաստացի ղեկավարող կամ վերահսկող կամ ուղղորդող անձի* ձևակերպումը: Սակայն գործնականում նման չափորոշիչների կիրառումը բախվում է իրավական և դատավարական գնահատման խնդիրների: Ո՛վ կարող է համարվել *փաստացի ղեկավարող*, արդյո՞ք միայն երկրի բարձրագույն ղեկավարությունը, թե նաև քաղաքական որոշումների վրա ազդեցություն ունեցող այլ անձինք: Այս հարցադրումը հատկապես բարդ է, օրինակ, խորհրդարանական համակարգերում, որտեղ որոշումները կոլեգիալ են, իսկ պատասխանատվության սահմանումը՝ բարդ: Ավելին՝ տվյալ խնդիրն էլ ավելի է բարդանում կիբեռագրեսիայի տեսանկյունից⁶⁶:

Հեռանկարային համատեքստում *արդյունավետ վերահսկողության* կամ *ղեկավարման* հասկացությունները, որոնք վերաբերում են 8bis հոդվածին, իրավականորեն չեն սահմանափակված: Նման պնդում կարելի է անել նաև ՀՀ ՔՕ-ում սահմանված ագրեսիայի դիսպոզիցիայի համատեքստում: Նշենք, որ տվյալ կոնտեքստում միջազգային իրավունքի դոկտրինայում մշակվել են տարբեր վերահսկողության տեսություններ՝

Ընդհանուր վերահսկողության տեսության գործածված թեստը՝ *Prosecutor v. Tadić* գործով, որը կիրառել է Նախկին Յուրգոսլավիայի միջազգային տրիբունալը⁶⁷:

1) *Արդյունավետ վերահսկողության տեսությունը*, որը մշակվել է Նախկին Յուրգոսլավիայի միջազգային տրիբունալի կողմից և օգտագործվել է հետագայում նաև Ռուանդայի միջազգային տրիբունալի, Սիերրա-Լեոնեի հատուկ դատարանի և Միջազգային քրեական դա-

⁶⁴ *Heller, K.J.* (2007). Retreat from Nuremberg: The Leadership Requirement in the Crime of Aggression, *European Journal of International Law*, Volume 18, Issue 3, June 2007, Pages 477–497, <https://doi.org/10.1093/ejil/chm025>

⁶⁵ *Nerlich, V.* (2017). The Crime of Aggression and Modes of Liability – Is There Room Only for Principals? *Harvard Law Journal*. available at: https://journals.law.harvard.edu/ilj/2017/04/the-crime-of-aggression-and-modes-of-liability-is-there-room-only-for-principals/#_ftn8

⁶⁶ *Дзейтова, Р.А.* (2021). Ответственность за киберагрессию по международному уголовному праву: основание и условия наступления. *Вестн. Моск. Ун-та. Сер. 11. Право*. 2021. № 6

⁶⁷ *Prosecutor v. Tadić*. Case No IT-94–1-A. 15 July 1999. Para 403.

տարանի (ՄՔԴ) կողմից⁶⁸:

2) Հանցագործության վերահսկողության տեսություն (իրամանատարների և այլ ղեկավարների պատասխանատվության տեսություն), որը դիտարկվել է *Prosecutor v. Milomir Stakić* և *Prosecutor v. Lubanga* դատական գործերում⁶⁹:

Վերահսկողություն և ղեկավարություն հասկացությունները մեկնաբանվել են նաև Հատուկ աշխատանքային խմբի կողմից՝ Ագրեսիայի հանցագործության վերաբերյալ (*Special Working Group on Crime of Aggression*)⁷⁰: Համաձայն այդ մեկնաբանությանը՝ «վերահսկողություն» հասկացությունը ներառում է այն անձանց, որոնց մասնակցությամբ ագրեսիայի գործողությունը չէր իրականացվի, իսկ ղեկավարությունը ներառում է միայն այն անձանց, որոնք ունեն որոշում կայացնելու իրավունք, սակայն չեն ղեկավարում պետության գործառնությունները: Կարծում ենք, որ ապագայում այս հասկացությունների բովանդակությունը կզարգացվի ՄՔԴ-ի դատական պրակտիկայի կողմից:

Նշենք, որ նույնիսկ եթե լայնորեն մեկնաբանենք ագրեսիայի հանցագործության սուբյեկտների շրջանակը, Հռոմի Ստատուտի Ցեյս հոդվածի կիրառությունը կիրեռագրեսիայի պարագայում կարող է դժվարություններ առաջացնել: Կիրեռագործողությունները, որոնք մեծ մասամբ իրականացվում են հաքերների կողմից, որոնք չեն հանդիսանում պետությունների ղեկավարներ և չունեն ինչպես արդյունավետ վերահսկողություն, այնպես էլ պետական գործերի ղեկավարման իրավունք, կարող են չհամապատասխանել ագրեսիայի հանցագործության համար սահմանված սուբյեկտների պահանջներին: Այնուամենայնիվ, որոշ կիրեռագործողություններ ակնհայտորեն ունեն ղեկավարության ածանցյալ տարրեր: Օրինակ՝ կարելի է հիշատակել *Stuxnet* ծրագրի կիրառումն Իրանի դեմ⁷¹: Սակայն հակառակ օրինակներ նույնպես կան միջազգային պրակտիկայում, և ոչ բոլոր կիրեռագործողությունները՝ կարելի դիտարկել որպես կիրեռագրեսիա: Բացի դրանից՝ գոյություն ունի կարծիք, որ հաքերը կարող է ունենալ արդյունավետ վերահսկողություն/ղեկավարություն կարևոր պետական ակտիվների նկատմամբ: Որպես օրինակներ բերվում է հաքերի կողմից ռազմական հրթիռների գործարկումն ու սահմանին ներխուժման մասին կեղծ հրամանները⁷²:

Միևնույն ժամանակ՝ Գ. Վերլեն պնդում է, որ ագրեսիայի հանցագործության սուբյեկտի համար որոշիչ դեր է խաղում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը, որն անպայման չի կապված անձի իրավաբանական կարգավիճակի հետ⁷³: Այսինքն, եթե անձը *de facto* ունի արդյունավետ վերահսկողություն պետական և ռազմական գործերի նկատմամբ և կարող է նպաստել ագրեսիայի իրականացմանը, այդպիսի անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի անկախ նրանից, թե ունեցել է արդյոք համապատասխան իրավաբանական կարգավիճակ: Ակնհայտ է, որ բազմաթիվ դեպքերում

⁶⁸ *Prosecutor v. Delalić et al.* Case No IT-96-21-A. 20 February 2001. Para 256; *Prosecutor v. Kordić and Čerkez.* Case No IT-01-47A. 22 April 2008. Para 21.

⁶⁹ *Prosecutor v. Milomir Stakić.* Case No IT-97-24-T. 31 July 2003. Para 440.; *Prosecutor v. Lubanga.* Case No ICC-01/04-01/06. 29 January 2007. Para 342.

⁷⁰ *Hajdin N.* (2017). The Nature of Leadership in the Crime of Aggression: The ICC's New Concern?// *Int'l Crim. L. Rev.* 2017. N 17. P. 20.

⁷¹ *Fruhlinger, J.* (2022). Stuxnet explained: The first known cyberweapon. CSO, Analysis. Available at: <https://www.csoonline.com/article/562691/stuxnet-explained-the-first-known-cyberweapon.html>; See also:

⁷² *Miller K.* (2014). The Kampala Compromise and Cyberattacks: Can there be an international crime of cyber-aggression? // *S. Cal. Interdisciplinary L. J.* 2014. N 23.

⁷³ *Werle G.* (2009). The Crime of Aggression Between International and Domestic Criminal Law // *Criminal law between War and Peace: Justice and Cooperation in Criminal Matters in International Military Interventions* / Ed. by S. Manacorda., A. Nieto. Cuenca, 2009. P. 412.

փաստացի վերահսկողությունը բխում է անձի իրավաբանական դիրքից: Սակայն մյուս բոլոր իրավիճակներում որոշիչը պետք է լինի արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը:

Ավելին՝ նշենք, որ ղեկավար պաշտոնատար անձը կարող է կրել քրեական պատասխանատվություն Հռոմի Ստատուտի 8bis հոդվածի 2-րդ մասի համաձայն ագրեսիայի առանձին գործողությունների մշակման, նախապատրաստման, նախաձեռնման կամ իրականացման համար: Սա նշանակում է, որ հանցագործության տարրերը կարող են առաջանալ նաև այն դեպքում, երբ տվյալ գործողությունը կատարվել է ագրեսիայի գործընթացի ինչ-որ մի փուլում՝ անկախ ժամանակավոր դասակարգումից: Այսինքն, յուրաքանչյուր գործողություն ինքնին կարող է դիտվել որպես քրեորեն պատժելի արարք: Մասնավորապես՝ ագրեսիվ գործողությունների օրինակները ներառում են՝

- Զինված ներխուժում կամ հարձակում այլ պետության տարածքի վրա, ներառյալ ցանկացած երկարության ռազմական օկուպացիան:

- Ռմբակոծություն, որի ժամանակ պետության զինված ուժերը ուժ են կիրառում այլ պետության տարածքի դեմ:

- Շրջափակում, որի դեպքում ռազմածովային նավատորմը կամ պետության այլ զինված ստորաբաժանումներն իրականացնում են այլ պետության նավահանգիստների կամ առափնյա գծի շրջափակում:

- Հարձակում այլ պետության ցամաքային, ծովային կամ օդային զինված ուժերի, այդ թվում՝ ռազմածովային ուժերի կամ ավիացիոն կազմավորումների վրա:

- Զինված ուժերի կիրառումն այլ պետության տարածքում, եթե դա արվում է միջազգային պայմանագրով սահմանված պայմանների խախտմամբ կամ համաձայնագրի ավարտից հետո ներկայության շարունակմամբ:

- Երրորդ պետության դեմ ագրեսիվ գործողություններ կատարելու համար այլ պետության կողմից այն օգտագործելու նպատակով տարածքի տրամադրում:

- Վարձկաններ, անկանոն զինված խմբավորումներ կամ այլ ռազմական կազմավորումներ ուղարկելը կամ նրանց գործունեությունը ղեկավարելը, որոնք իրենց գործողություններով համարժեք են վերը նշված ագրեսիվ գործողություններին⁷⁴:

Վերոնշյալ գործողություններն, ըստ Հռոմի Ստատուտի, համարվում են ագրեսիայի հստակ իրավական ձևեր: Դրանցից յուրաքանչյուրը, որը կատարվել է ղեկավար պաշտոն զբաղեցնող և դիտավորություն ունեցող անձի կողմից, ենթակա է անհատական քրեական պատասխանատվության միջազգային քրեական իրավունքի շրջանակներում: Այդպիսի ղեկավար անձի սուբյեկտիվ կողմի առկայությունը կարևոր նախապայման է նրա քրեական պատասխանատվության հաստատման համար: Այս իմաստով պահանջվում է, որ տվյալ անձը գործի ոչ միայն գիտակցաբար, այլև դիտավորյալ՝ ունենալով հստակ պատկերացում, որ իր գործողությունները ներկայացնում են ՄԱԿ-ի Կանոնադրության ակնհայտ խախտում՝ համաձայն Հռոմի Ստատուտի 30-րդ հոդվածի:

Մեր կարծիքով՝ ՀՀ ՔՕ-ի 149-րդ հոդվածը արտացոլում է Հռոմի Ստատուտի այս մոտեցումը: Այն նաև սահմանում է զինված ուժերի կողմից ագրեսիայի բազմամակարդակ դրսևորումները, ներառյալ օկուպացիան, ռմբակոծությունը, շրջափակումը, վարձկանների ուղարկումը և այլն: Մասնավորապես՝ օրենսդիրը հստակ նշում է ՄԱԿ-ի կանոնադրության խախտման

⁷⁴ Article 8bis - Crime of Aggression. Available at: <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/icc-statute-amendment-arts8bis-15bis-15ter-2010/article-8bis>

բնույթը, որը համապատասխանում է Կանոնադրության պահանջներին պահանջներին:

4. Չինված ուժերի որպես ագրեսիայի գործողության ընկալման խնդիրը

Ագրեսիայի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այն գործողություններում, որոնք կատարում է այնպիսի անձ, ով իրականում կարող է ղեկավարել կամ վերահսկել պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները, և որը պլանավորել, նախապատրաստել, նախաձեռնել կամ իրականացրել է ագրեսիայի ակտ, որն էլ ըստ իր բնույթի, լրջության և ծավալի՝ հանդիսանում է ՄԱԿ-ի կանոնադրության ակնհայտ կոպիտ խախտում: Նույն հոդվածի 2-րդ մասում տրված է *ագրեսիայի ակտի* սահմանումը և թվարկված են զինված ուժի կիրառման յոթ ձևեր, որոնք, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի թիվ 3314 բանաձևի, պետք է որակավորվեն որպես ագրեսիա:

Սակայն խնդիրն այն է, որ ներկայացվում են միայն մեկ պետության կողմից մեկ այլ պետության դեմ զինված ուժի կիրառման ձևերը՝ առանց «զինված ուժ» հասկացության բացատրության⁷⁵: Առաջին հայացքից հասկացությունը վերաբերում է ավանդական զենքերին և ռազմական գործողությունների ձևերին, ինչպիսիք են՝ ներխուժումը, ռմբակոծությունը, օկուպացիան և այլն: Մինչդեռ նշենք, որ ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում և տարածվում են հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտներում: Նրանք բերում են նոր սպառնալիքներ, հատկապես կիբեռհարձակումների ձևով: Դա հասկանում է նաև ՀՀ օրենսդիրը, որն արդեն զբաղվում է կիբեռանվտանգության օրենսդրության մշակմամբ: Այս պայմաններում հրատապ է դառնում այն հարցը, թե արդյոք հնարավոր է ագրեսիայի ակտ իրականացնել կիբեռտեխնոլոգիաների միջոցով, որի նպատակն է խաթարել պետության կենսական ենթակառուցվածքների աշխատանքը, կաթվածահար անել պետական կառավարման համակարգը և ապակայունացնել պետության հասարակական-քաղաքական համակարգը:

Մեր կարծիքով՝ կիբեռհարձակումների ագրեսիայի հնարավոր ձև ճանաչելու անհրաժեշտությունը հատկապես ակնհայտ է դառնում՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում լարվածության ֆոնին նման հարձակումների թվի աճը: Բացի դրանից՝ պետք է հիմք ընդունվի նաև այն փաստը, որ մի շարք պետություններ արդեն ընդունել են կիբեռանվտանգության ազգային ռազմավարություններ, որոնք կիբեռհարձակումները դիտարկում են որպես ազգային անվտանգության սպառնալիք:

Ավելին՝ արդյունաբերական հեղափոխության պայմաններում թվային տեխնոլոգիաներն արդեն սկսում են օգտագործվել ագրեսիվ նպատակներով⁷⁶: Դա արտահայտվում է նոր ռազմական ստորաբաժանումների ստեղծմամբ, որոնց ուշադրության կենտրոնում են կիբեռգործողությունները, կիբեռհարձակումներից կառավարման համակարգերի պաշտպանությունը և համակարգչային ցանցերի ռազմավարական կառավարումն ու կիրառումը:

Այնուամենայնիվ, եթե կիբեռհարձակումները ճանաչվեն որպես զինված ուժի կիրառում, բաց է մնում այն հարցը, թե ինչ չափանիշներով պետք է գնահատել դրանց հասարակական վտանգը: Արդյոք դրանք հասնում են այն աստիճանի, որ դիտարկվեն որպես ագրեսիա ՄԱԿ-ի կանոնադրության խախտման և Հռոմի Ստատուտի տեսանկյունից:

Բացի դրանից՝ ևս մեկ անգամ մատնանշենք, որ այժմ հատկապես կարևոր է հստակեցնել

⁷⁵ How is the term “armed conflict” defined in international humanitarian law?: ICRC opinion paper. International Review of the Red Cross. 2024;106(925):497-522. doi:10.1017/S1816383124000122

⁷⁶ Tanga, O.; Akinradewo, O, *et al.* (2022). Cyber attack risks to construction data management in the fourth industrial revolution era: a case of Gauteng province, South Africa. Journal of Information Technology in Construction (ITcon), Vol. 27, pg. 845-863, DOI: 10.36680/j.itcon.2022.041

տեղեկատվական ինքնիշխանության իրավական հայեցակարգը տեղեկատվական տարածքի նկատմամբ, որն այսօր դառնում է պետությունների ազգային անվտանգության անբաժանելի բաղադրիչը⁷⁷: ՀՀ ՔՕ-ն ներկայում սահմանափակվում է միայն ֆիզիկական ուժի կիրառմամբ (օրինակ՝ ռմբակոծում, օկուպացիա, ներխուժում և այլն) և չի անդրադառնում այն փաստին, որ ժամանակակից ազրեսիան կարող է դրսևորվել նաև կիբեռնոհարձակումների, կիբեռնոկուպացիայի կամ տեղեկատվական միջամտությունների ձևով, ինչը օր օրի ավելի արդիական է դառնում և պահանջում է համապատասխան իրավական արձագանք⁷⁸:

5. Ազրեսիայի հանցագործության երկակի պատասխանատվության խնդիրը

Ազրեսիայի հանցագործությունը միջազգային իրավունքի համատեքստում հանդիսանում է մի առանձնահատուկ սուր իրավական և տեսական խնդիր՝ կապված պատասխանատվության երկակիության երևույթի հետ: Էսոսքը վերաբերում է պետական պատասխանատվության (միջազգային հանրային իրավունքի շրջանակում) և անհատական քրեական պատասխանատվության (միջազգային քրեական իրավունքի շրջանակում) միաժամանակյա գոյությանը: Այս լարումն առավել ընդգծված է կիբեռնազրեսիայի համատեքստում, երբ գործողությունները կարող են իրականացվել գաղտնի, սահմաններից դուրս և հաճախ առանց հստակ վերագրելիության հնարավորության:

ՀՀ-ի նման պետության համար, որը գործում է անկայուն աշխարհաքաղաքական միջավայրում և միաժամանակ ունի զարգացող, սակայն թվայնացման տեմպերով աճող ենթակառուցվածքներ, պատասխանատվության այս երկակիության հետևանքները ոչ միայն տեսական են, այլ նաև ուղղակի գործնական բնույթ ունեն:

Միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունը կարող է ենթարկվել պատասխանատվության կիբեռնազրեսիայի գործողությունների համար, եթե դրանք խախտում են այլ պետության ինքնիշխանությունը կամ քաղաքական անկախությունը, նույնիսկ այն դեպքում, երբ գործողությունները իրականացվել են միջնորդ կառույցների կամ արտաքինից անկախ թվացող դերակատարների միջոցով: Միևնույն ժամանակ, քաղաքական կամ ռազմական իշխանություն ունեցող պաշտոնյաները կարող են ենթարկվել քրեական հետապնդման Հռոմի Ստատուտի շրջանակում, եթե իրենք ծրագրել կամ նախաձեռնել են նման գործողությունները:

Այսպիսով, ձևավորվում է պատասխանատվության երկակի ռեժիմ, որը ընդգրկում է իրավունքի երկու սուբյեկտների՝ պետության և անհատի՝ և կարգավորվում է հանրային իրավունքի երկու տարբեր ճյուղերով՝ միջազգային պետական պատասխանատվության իրավունքով և միջազգային քրեական իրավունքով:

Հատկապես ՀՀ-ի համար, սրընթաց զարգացող թվային միջավայրում, գործողությունների իրավական վերագրելիության անորոշությունը լուրջ դժվարություններ է առաջացնում: Օրինակ՝ կիբեռնոհարձակումները կարող են իրականացվել ոչ պետական դերակատարների, մասնավոր սուբյեկտների կամ երրորդ կողմերի կողմից, ինչն էապես բարդացնում է պետության վերագրելիության հնարավորությունը: Եթե կիբեռնագործողության հետևանքները համարժեք են ուժի կիրառմանը կամ ազրեսիայի ակտին, սակայն այդ գործողությունները հնարավոր չէ ուղղակիորեն կապել պետական իշխանությունների հետ, արդյոք արդարացված կլինի

⁷⁷ Vardanyan, L., Kocharyan, H., Hamul'ák, O., Kerikmäe, T. (2023). Digital Sovereignty in the EU: Searching for Legal Mechanisms for Marking the Borders. In: Ramiro Troitiño, D., Kerikmäe, T., Hamul'ák, O. (eds) Digital Development of the European Union. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-27312-4_14

⁷⁸ Ophardt, J.A. (2010). Cyber Warfare and the Crime of Aggression: The Need for Individual Accountability on Tomorrow's Battlefield, 9 Duke Law & Technology Review 1-28 (2010).

պետության միջազգային պատասխանատվության ենթարկումը, և հնարավոր կլինի արդյոք քրեական պատասխանատվություն սահմանել անհատների համար՝ հաշվի առնելով «արդյունավետ վերահսկողության» պահանջն ու բարձր ապացուցողական շեմը:

Ավելին, այստեղ կարող են առաջանալ բարդություններ, կապված ստեղծման ոչ դիտավորյալ բնույթի կամ *non bis in idem* սկզբունքի հետ: Կարող է լինել իրավիճակ, երբ պետությունը ենթարկվի միջազգային իրավական պատասխանատվության մի մեխանիզմով՝ կիբեռագրեսիայի գործողության համար, իսկ միևնույն ժամանակ անհատը՝ մեկ այլ քրեական մեխանիզմով: Չնայած այն հանգամանքին, որ այս երկու պատասխանատվության ձևերը ֆորմալ առումով պատկանում են տարբեր իրավական համակարգերի՝ միջպետական պատասխանատվության և անհատական քրեական հետապնդման, դրանց բովանդակային հատումը կարող է լրջորեն խաթարել իրավական ընթացակարգերի օբյեկտիվությունը՝ հատկապես քաղաքականացմամբ պայմանավորված պայմաններում:

ՀՀ-ի համար, որն ակտիվորեն իրականացնում է իր քրեական օրենսդրության ներդաշնակեցում միջազգային ստանդարտների հետ, այդ թվում՝ ագրեսիայի քրեականացման ուղղությամբ, վերոնշյալ խնդիրներն ունեն առանցքային նշանակություն: Պետությունն անխուսափելիորեն պետք է մշակի հստակ մոտեցումներ՝ կիբեռագրծողությունների իրավական կարգավորման վերաբերյալ, ապահովի միջազգային պարտավորությունների կատարումը, արդյունավետ կիրառի ներքին քրեական հետապնդման մեխանիզմները և միաժամանակ հաշվի առնի երկակի պատասխանատվության համակարգում առկա քաղաքական ճնշումների կամ մանիպուլյացիաների վտանգները՝ հատկապես մի ժամանակաշրջանում, երբ տեղեկատվական պատերազմները, կիբեռլրտեսությունն ու թվային հարձակումները դարձել են ժամանակակից հակամարտությունների նոր պրակտիկա:

6. Պետության ինքնապաշտպանության իրավունքը՝ զինված ուժի իրավաչափ կիրառման խնդիրը

ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր անդամ պետության անհատական կամ համատեղ ինքնապաշտպանություն իրականացնելու իրավունքը, եթե նրա վրա զինված հարձակում է կատարվել: Սույն դրույթի համաձայն՝ զինված ուժի գործադրումն օրինական է համարվում միայն այն դեպքում, եթե այն՝

- 1) պատասխան է այն ագրեսիային, որն արդեն տեղի է ունեցել,
- 2) համարժեք է իր ծավալով և կատարվում է ժամանակին:

Սակայն միջազգային իրավունքի տեսության և պետությունների միջազգային հարաբերությունների պրակտիկայում շարունակում է քննարկվել կանխարգելիչ (պրեվենտիվ) ինքնապաշտպանության իրավաչափության հարցը⁷⁹: Նման իրավիճակում պետությունը զինված ուժերը կիրառում է մեկ այլ պետության դեմ՝ հնարավոր ագրեսիան կանխելու նպատակով, երբ վտանգն ընկալվում է որպես անհետաձգելի: Որպես օրինակ՝ գիտության մեջ հաճախ բերվում է 1981 թվականին Իսրայելի կողմից Իրաքի ատոմային ռեակտորի նախնական ռմբակոծումը⁸⁰: Չնայած ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը միջադեպը որակել է որպես ագրեսիա, իրավիճակը ցույց է տվել, թե որքան դժվար է հստակ տարբերել ագրեսիան և հնարավոր ագրեսիայից ինքնապաշտպանությունը:

⁷⁹ Henderson, C. (2018). Preventative Self-Defence. In *The Use of Force and International Law* (pp. 274–307). chapter, Cambridge: Cambridge University Press.

⁸⁰ Mallison, W.T. & Mallison, S.V. (1982). The Israeli Aerial Attack of June 7, 1981 upon the Iraqi Nuclear Reactor: Aggression or Self-Defense?, 15 *Vanderbilt Law Review* 417 (1982) Available at: <https://scholarship.law.vanderbilt.edu/vjtl/vol15/iss3/1>

Այսինքն՝ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի լայն մեկնաբանությունը, որը փորձում է օրինականացնել կանխարգելիչ ինքնապաշտպանությունը, իրավական երկակիություն է առաջացնում հնարավոր հետևանքների գնահատման մեջ: Մի կողմից, նման մոտեցումը կարող է դառնալ ագրեսիվ գործողությունների քողարկված արդարացում, երբ պետությունը, ապավինելով հնարավոր սպառնալիքին, իրականում անցնում է ագրեսիվ հարձակման: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել, որ ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս միանվագ հարվածով լրջագույն վնաս հասցնել մեկ այլ պետության ռազմական ենթակառուցվածքին, ինչը կարող է փաստացի բացառել այդ պետության կողմից հետագա պատասխան գործողությունների հնարավորությունը: Այսպիսով, հարձակողական ինքնապաշտպանության գաղափարը շարունակում է վիճելի մնալ միջազգային իրավունքում՝ դառնալով սահմանային գոտի ագրեսիայի և ինքնապաշտպանության միջև, ինչը լուրջ խնդիր է ագրեսիայի հանցագործության իրավական որակման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ կիրառելի իրենց բնույթով հաճախ կարող են չհամապատասխանել ավանդական «զինված հարձակման» չափանիշին, քանի որ դրանք սովորաբար չեն ուղեկցվում ֆիզիկական ուժի կիրառությամբ, այնուամենայնիվ, նրանք կարող են բերել նույնքան խոշոր հետևանքների՝ պետական կառավարման, էներգետիկ, առողջապահական կամ ֆինանսական ոլորտների ծայրահեղ խափանումների և նույնիսկ մարդկային զոհերի: Արդյունքում առաջանում է տրամաբանական խնդիր՝ արդյոք պետությունը կարող է կիրառել ուժ, եթե կիրառելի չի հանգեցրել անմիջական մարդկային զոհերի, բայց սպառնացել է կենսական ենթակառուցվածքների ֆունկցիաներին: Բացի դրանից՝ կիրառելի այլ առանձնահատկությունն է հարձակման աղբյուրի և հեղինակության բնույթի անորոշությունը. հաքերային խմբավորումները, ոչ պետական սուբյեկտները կամ համակարգված պրոքսիները թույլ են տալիս իրական հարձակում իրականացնողին՝ պետությանը կամ այլ սուբյեկտներին, մնալ անանուն կամ դժվարավերահսկելի: Այս դեպքում շատ բարդ է հաստատել, թե ով է պատասխանատուն՝ առանց որի ինքնապաշտպանության իրավաչափության հենարանը թուլանում է: Ինքնապաշտպանությունը կիրառելի պատասխանների տեսքով կարող է դրսևորվել ոչ միայն ֆիզիկական ուժով, այլև հակահարձակումների միջոցով՝ հարձակման աղբյուրը չեզոքացնելու, տվյալների վերականգման կամ վնասների կանխարգելման նպատակով, սակայն այստեղ էլ իրավական սահմանը բարդ է՝ որտեղ է ավարտվում օրինական կիրառելի կայի հարթությունը և սկսվում կիրառելի ագրեսիայի կամ այլ պետության ինքնիշխանության նկատմամբ ագրեսիայի ռեժիմը:

7. Մարդասիրական (հումանիտար) միջամտության զինված ուժի իրավաչափ կիրառման խնդիրը

Հումանիտար միջամտության ֆենոմենը, հանդիսանալով միջազգային իրավունքի տեսության և պետությունների փոխհարաբերությունների պրակտիկայում լայնորեն հայտնի գործընթաց, ենթադրում է մեկ պետության կողմից զինված ուժի կիրառում մեկ այլ պետության տարածքում⁸¹: Դա կատարվում է առանց վերջինիս համաձայնության՝ հումանիտար աղետը կանխելու կամ կասեցնելու նպատակով⁸²: Նշենք, որ այսօր նույնիսկ ակտիվորեն քննարկ-

⁸¹ McCabe, A.H. (2014). Balancing “Aggression” and Compassion in International Law: The Crime of Aggression and Humanitarian Intervention, 83 Fordham L. Rev. 991 (2014). Available at: <https://ir.lawnet.fordham.edu/flr/vol83/iss2/20>

⁸² Ruys, T. (2018). Criminalizing Aggression: How the Future of the Law on the Use of Force Rests in the Hands of the ICC, European Journal of International Law, Volume 29, Issue 3, August 2018, Pages 887–917, <https://doi.org/10.1093/ejil/chy053>

վում է *Responsibility to Protect* հայեցակարգը, որը գիտության մեջ կարելի է դիտարկել որպես հումանիտար ինտերվենցիայի նոր դրսևորում⁸³ : Այն կարող է վերաբերել ցեղասպանության քաղաքականության, մարդու իրավունքների պաշտպանության, էթնիկ զտումների կամ քաղաքացիական պատերազմի հետևանքների կանխարգելմանը կամ դադարեցմանը: Իր էությանմը՝ մարդասիրական (հումանիտար) միջամտությունն այն գործողությունն է, որի միջոցով մի պետություն փորձում է հասնել մարդասիրական նպատակներին՝ մեկ այլ պետության տարածքում զինված ուժ կիրառելով: Իրավական տեսանկյունից, եթե ելնենք ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 3314 բանաձևում տրված ագրեսիայի իրավական սահմանումից, ապա նման միջամտությունը կարող է դիտարկվել որպես ագրեսիա: Դա կարող է լինել այն դեպքում, երբ խախտվում է տվյալ պետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը, և եթե ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն արձանագրում է միջազգային խաղաղության խախտման փաստը: Սակայն, այս կոնտեքստում անհասկանալի է մնում մարդու իրավունքների պաշտպանության կամ պետական ինքնիշխանության պահպանման նախապատվությունների հարցը:

Մի կողմից, միջազգային իրավունքը շեշտը դնում է հենց պետական ինքնիշխանության անսասանության վրա: Դա հանգեցնում է իրավիճակների, երբ միջազգային հանրությունը մնում է անգործուն և ի վիճակի չէ կանխել հումանիտար աղետները, մինչդեռ դրանք կարող էին կանխվել պատշաճ և ժամանակին զինված միջամտության պարագայում: Մյուս կողմից, մարդասիրական նպատակների առաջնահերթությունը, եթե այն չի ուղեկցվում միջազգային իրավական վերահսկողությամբ, կարող է վերածվել քաղաքական շահերից բխող միջամտության և չարաշահումների գործիքի: Մասնավորապես, որոշ պետություններ կարող են վկայակոչել մարդասիրական նպատակներ, բայց փաստացի հետապնդել աշխարհաքաղաքական և/կամ գաղափարական շահեր: Իրավիճակը բարդանում է նաև այն դեպքում, երբ նման մարդասիրական միջամտությունն իրականացվում է առանց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի թույլտվության: Այս դեպքում դա կարող է *de facto* վերածվել այլ պետության ներքին գործերին միջամտության, նույնիսկ եթե այն իրականացվում է մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:

Միևնույն ժամանակ, հնարավոր է նաև մի իրավիճակ, երբ պետությունը, մարդասիրական նպատակներով զինված միջամտություն իրականացնելով, ի վերջո խախտի մեկ այլ պետության ինքնիշխանությունն ու անկախությունը, բայց այդ գործողությունները չդիտարկվեն որպես ագրեսիա, քանի որ դրանք չեն հասնում միջազգային վտանգի մակարդակի, որը հնարավոր կլինի դիտարկել որպես ՄԱԿ-ի Կանոնադրության ակնհայտ խախտում: Այսինքն՝ մարդասիրական միջամտության իրավաչափության հարցը շարունակում է մնալ միջազգային իրավունքի ամենաբարդ և հակասական հարցերից մեկը: Սա նախևառաջ պահանջում է հստակ միջազգային իրավական չափանիշների սահմանում՝ քաղաքական շահարկումները կանխելու, ինչպես նաև մարդասիրական լայնածավալ ճգնաժամերի պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Ավելին՝ հարց է առաջանում՝ արդյոք կիրառելի են իրավունքները կարող են դիտվել որպես մարդասիրական միջամտության միջոց կամ *Responsibility to Protect*-ի միջոց⁸⁴: Առանց միջազգային իրավական հստակ մեխա-

⁸³ Hall, B., & Khudayberdieva, N. (2019). International Law and the Responsibility to Protect. Oxford Research Encyclopedia of International Studies. Available at: <https://oxfordre.com/internationalstudies/view/10.1093/acrefore/9780190846626.001.0001/acrefore-9780190846626-e-231>.

⁸⁴ Neilsen, R. (2023). Coding protection: 'cyber humanitarian interventions' for preventing mass atrocities, International Affairs, Volume 99, Issue 1, January 2023, Pages 299–319, <https://doi.org/10.1093/ia/iac261>

նիզմների և վերահսկման, նման կիրառմիջամտությունը հեշտությամբ կարող է վերաժվել քաղաքական շահարկման և ուժի չարաշահման միջոցի, հատկապես եթե այն իրականացվում է միակողմանիորեն՝ առանց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի թույլտվության:

8. Ագրեսիան որպես շարունակվող հանցագործություն

Հատկապես կարևոր է արդարադատության իրականացման խնդիրը շարունակվող հանցագործություններին, քանի որ ՄՔԴ-ը իրավասությունը *ratione temporis* սահմանափակված է: Ըստ Հռոմի Ստատուտի 11-րդ հոդվածի 1-ին կետի նախատեսվում է, որ ՄՔԴ-ի իրավասությունը տարածվում է միայն այն հանցագործությունների վրա, որոնք կատարվել են այդ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2002 թվականից սկսած: Մինևույն ժամանակ՝ ագրեսիայի հանցագործության նկատմամբ կիրառվում են լրացուցիչ սահմանափակումներ՝ համաձայն Ստատուտի 15-րդ bis հոդվածի:

Իրավասության սահմանափակումները տարածվում են նաև այն հանցագործությունների վրա, որոնք կատարվել են մինչև Հռոմի Ստատուտի ուժի մեջ մտնելը տվյալ պետության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի կողմ չհանդիսացող պետությունը համաձայն է ՄՔԴ իրավասության հետ՝ Ստատուտի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Այս համատեքստում ընդգծվում է ICC-ASP/16/Res բանաձևի ընդունումից հետո ագրեսիան որպես շարունակական հանցագործություն դիտարկելու իրավաչափությունը, ինչպես նաև ՄՔԴ իրավասության հնարավոր տարածումը ագրեսիայի ակտերին, որոնք սկսվել են մինչև դատարանի իրավասության ի հայտ գալը⁸⁵:

Դատելով վերը նշված իրավական սահմանումներից՝ կարելի է ենթադրել, որ ագրեսիան կարող է դիտվել որպես շարունակական հանցագործություն⁸⁶, բայց *կարող է ձևակերպումն արդեն մատնանշում է հնարավոր իրավական տարածայնությունների հնարավորության*: Խնդիրը նրանում է, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 3314 բանաձևի 3-րդ հոդվածում և Հռոմի Ստատուտում նշված գործողությունները միշտ չէ, որ երկարատև են: Օրինակ՝ զինված ներխուժումը և ուժեղացումը կարող են դիտվել որպես մեկանգամյա գործողություն և, հետևաբար, չեն համարվում շարունակվող հանցագործություն: Բայց մինևույն ժամանակ՝ ռազմական օկուպացիան, որը նույնպես ներառված է ագրեսիայի ձևերի ցանկում, շարունակական բնույթ է կրում, քանի որ դրանց դադարեցումը հնարավոր է օկուպացված տարածքի ազատագրմամբ:

Հանցագործության օբյեկտը չի կարող «անհետանալ», և սուբյեկտիվ կողմի փոփոխությունը (օրինակ՝ նոր կառավարության ստեղծումը) ինքնին չի հանգեցնում հանցագործության դադարեցմանը, քանի դեռ այդ փոփոխությունը չի ուղեկցվում գործողությունների դադարեցմամբ: Օրինակ՝ նավահանգիստների կամ ավերի արգելափակումը (շրջափակումը) իր էությամբ կարելի է համարել շարունակական հանցագործություն: Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ այլ պետության տարածքն օգտագործվում է հարձակման համար, որի ավարտը կախված է պետության տարածքի օգտագործման դադարեցումից:

Ամենադժվար հարցերից մեկը վերաբերում է անկանոն զինված խմբավորումների օգտա-

⁸⁵ Resolution ICC-ASP/16/Res.5 Adopted at the 13th plenary meeting, on 14 December 2017, by consensus ICC-ASP/16/Res.5 Activation of the jurisdiction of the Court over the crime of aggression. https://asp.icc-cpi.int/sites/asp/files/asp_docs/Resolutions/ASP16/ICC-ASP-16-Res5-ENG.pdf

⁸⁶ Кантур Р.А. Агрессия как длящееся преступление в свете принятия резолюции ICC-ASP/16/Res.5 Ассамблеей государств-участников Римского статута Международного уголовного суда // Международное право и международные организации / International Law and International Organizations. 2018. № 2. С. 32-41. DOI: 10.7256/2454-0633.2018.2.25158 URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=25158

գործմանը, որոնք համարվում են ագրեսիայի ձև միայն այն դեպքում, եթե նրանք կատարում են այնպիսի լրջության հանցագործություններ, որոնք համարժեք են ագրեսիայի այլ ձևերի: Սակայն այստեղ հստակ չափանիշներ նույնպես սահմանված չեն:

Այս վերլուծությունից հետևում է, որ ագրեսիայի որոշ ձևեր կարող են դիտվել որպես շարունակական հանցագործություններ, ինչը հնարավորությունների պատուհան է բացում ՄՔԴ-ի իրավասությունը նման գործողությունների նկատմամբ տարածելու համար, նույնիսկ եթե այդ գործողությունները սկսվել են մինչև ՄՔԴ-ի իրավասության ուժի մեջ մտնելը, բայց դեռ ավարտված չեն:

Այս մոտեցումը հիմնավորվում է հետևյալով՝

- Շարունակվող հանցագործության հիմնական նշաններից մեկն այն է, որ հանցագործությունը շարունակվում է մինչև դրա վերջնական դադարեցումը, Հետևաբար, ՄՔԴ-ի իրավասությունը կարող է ընդլայնվել:

- Ագրեսիայի ժամանակ հաճախ են տեղի ունենում շարունակական հանցագործություններ (*reiterato delicto*), որոնք «սնուցում» են այս հանցագործությունը և իրավաբանորեն արդարացնում դրա շարունակական ընթացքը:

- Վաղեմության ժամկետների հաշվարկը սահմանափակ չէ, քանի դեռ հանցագործությունը շարունակվում է, ինչը նույնպես խոսում է այս տեսության օգտին:

Արդյունքում, եթե իրավաբանորեն հնարավոր է ցույց տալ, որ ագրեսիան շարունակում է գործել տվյալ պահին (օրինակ՝ օկուպացիայի շարունակություն, ռազմական ներկայություն, շրջափակման առկայություն և այլն), ՄՔԴ-ի իրավասության կիրառումը համարժեք և անհրաժեշտ է միջազգային արդարադատության և խաղաղության ապահովման համար:

Բացի դրանից՝ նշենք, որ կիբեռհարձակումները, ի տարբերություն ավանդական զինված ներխուժման կամ ռմբակոծության, հաճախ իրականանում են փուլ առ փուլ՝ ընդգրկելով պետական կառավարման համակարգերի խափանում, կարևոր ենթակառուցվածքների փաստում, տնտեսական համակարգի կաթված, սոցիալական անկայունության հրահրում և տեղեկատվական մանիպուլյացիաներ: Այս ամենը կարող է տեղի ունենալ շաբաթների, ամիսների կամ նույնիսկ տարիների ընթացքում, ինչն առավել հստակեցնում է կիբեռհարձակման շարունակական բնույթը:

Ավելին՝ Հռոմի Ստատուտի 8bis հոդվածը ագրեսիայի հանցագործության համար պահանջում է, որ ուժի ակտը լինի ըստ իր *բնույթով, ծանրությամբ և ծավալով* ՄԱԿ-ի Կանոնադրության *ակնհայտ խախտում*: Սովորաբար իրավակիրառ պրակտիկան հիմնվում է այն հարցի վրա, թե արդյոք կոնկրետ գործողությունը հասնում է այդ «ծանրության շեմին» (*threshold of gravity*): Սակայն կիբեռհարձակումների պարագայում այդ շեմը կարող է ձևավորվել ոչ թե մեկանգամյա գործողության, այլ կուտակային հետևանքների միջոցով, ինչն արդեն իսկ պահանջում է դոկտրինալ վերանայում: Այսինքն՝ առանձին կիբեռհարձակումը (օրինակ՝ տվյալների գողություն կամ DDoS հարձակում) կարող է չհամարվել կիբեռագրեսիա, սակայն նմանօրինակ բազմակի գործողությունների շղթան, եթե դրանք համակարգված են, համակարգվում են պետական մակարդակով և ուղղված են մեկ այլ պետության սուվերենության խաթարմանը, կարող է գնահատվել որպես ագրեսիայի շարունակվող հանցավոր վարքագիծ: Այսինքն՝ շարունակվող հանցագործության որակումը միջազգային քրեական իրավունքում թույլ է տալիս ընդլայնել նաև հանցանքի քննության ժամանակային իրավասությունը, այդ թվում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը այն դեպքերում, երբ հանցավոր վարքագիծը սկիզբ է առել մի փուլում, երբ պետությունը կամ միջազգային ատյանը դեռևս չունեն իրավասություն, սակայն հանցագործությունը շարունակվել է իրավա-

սության ձեռքբերումից հետո: Այս տեսանկյունից, եթե օրինակ՝ ՀՀ-ում Հռոմի Ստատուտը ուժի մեջ մտել է X թվականին, իսկ կիբեռհարձակումները սկսել են X-ից առաջ և շարունակվել X-ից հետո, ապա վերջիններիս շարունակական բնույթը կարող է իրավաբանորեն հիմք հանդիսանալ՝ ներառելու դրանք քրեական հետապնդման գործընթացում: Իհարկե, կիբեռհարձակումների համատեքստում քրեական պատասխանատվության հստակեցումը բարդանում է մի շարք գործոններով, օրինակ՝ անանունության բարձր մակարդակ (*attribution problem*), հիբրիդային դերակատարների ներգրավվածություն (պետական և ոչ պետական), տարածաշարքային դիվերսիվիկացիա և այլն: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, շարունակվող ագրեսիայի որակումը, սակայն, կարող է թույլ տալ իրավականորեն համադրել մի շարք առանձին գործողություններ մեկ միասնական հանցավոր գործողության շրջանակում՝ ձևավորելով ինտեգրված քրեական պատասխանատվության հիմք:

Եզրակացություն

Իրավական վերլուծությունն արձանագրում է, որ ագրեսիայի հանցագործության իրավական կառուցվածքը շարունակում է մնալ բարդ ու բազմաշերտ՝ պայմանավորված ինչպես նյութական իրավունքի, այնպես էլ իրավակիրառման մեխանիզմների բացերով և քաղաքական կոնտինգենտով: Օրինակ՝ ագրեսիայի որոշ ձևերի շարունակական բնույթը իրավական տեսանկյունից հիմք է ստեղծում ՄՔԴ-ի *ratione temporis* իրավասության ավելի լայն կիրառման համար: Թեև Հռոմի Ստատուտն ընդգծում է ՄՔԴ-ի իրավասության ժամանակային սահմանափակումը, այնուամենայնիվ՝ շարունակական հանցագործությունների նկատմամբ այդ սահմանափակումը կարող է դիտարկվել իբրև սկսման պահով պայմանավորված, այլ ոչ թե ավարտման: Այդ իմաստով՝ այն ագրեսիվ արարքները, որոնք դեռ չեն դադարել (օրինակ՝ օկուպացիա, շրջափակում, ռազմական ներկայություն և այլն), կարող են իրավաչափ կերպով ընկնել ՄՔԴ-ի իրավասության շրջանակում՝ նույնիսկ եթե դրանց սկիզբը նախորդել է ՄՔԴ-ի իրավասության ակտիվացմանը:

Հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում ագրեսիայի դրսևորման ձևերը զգալիորեն տարբերվում են դասական պատկերացումներից: Այդ պատճառով անհրաժեշտ է վերանայել ագրեսիայի հանցակազմի շրջանակը՝ ներառելով ոչ միայն ֆիզիկական ուժի կիրառման դեպքերը, այլև տեղեկատվական միջամտությունները, կիբեռհարձակումները և հիբրիդային բնույթի պատերազմները:

Բացի դրանից՝ կարևորվում է *պեպուլյաթս* իրավահրավական կատեգորիայի մեկնաբանման միասնական մոտեցման ձևավորումը, մասնավորապես՝ ագրեսիայի հանցակազմի կիրառման նպատակներով: Նպատակահարմար է հենվել միջազգային իրավունքի սուբյեկտայնության դեկլարատիվ մոդելի վրա, քանի որ կոնստիտուտիվ մոտեցումը ստեղծում է կիրառման բարդություններ, մասնավորապես՝ այնպիսի դեպքերում, ինչպիսին կարող է լինել, օրինակ՝ Արցախի Հանրապետության միջազգային իրավական կարգավիճակի խնդիրը Ադրբեյջանի կողմից հնարավոր ագրեսիայի կիրառման համատեքստում:

Չնայած նրան, որ ՀՀ ՔՕ-ի 149-րդ հոդվածի միջոցով նախատեսվել է ագրեսիայի հանցագործության ներմուծումը ազգային օրենսդրություն, սակայն դրա գործնական արդյունավետությունը սահմանափակվում է վերոնշյալ տեսական և գործնական բացերի առկայությամբ: Այս խնդիրների հաղթահարման ուղղությամբ նպատակահարմար է բարեփոխել օրենսդրական կարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակակից միջազգային իրավական պրակտիկայի պահանջներին՝ ներառելով նաև կիբեռանվտանգության և տեղեկատվական ինքնիշխանության պաշտպանության իրավական մեխանիզմներ:

Ամփոփագիր: Սույն հոդվածում քննարկվում է միջազգային քրեական իրավունքի շրջանակում ագրեսիայի հանցագործության համար պատասխանատվություն սահմանելու խնդիրները: Հատուկ ուշադրություն է դարձվում ագրեսիայի հանցագործության իրականացմանը կիրեռհարձակումների միջոցով՝ այսինքն՝ կիրեռագրեսիային: Բացի դրանից՝ քննարկվում է նաև ագրեսիայի շարունակական հանցագործություն լինելու հնարավորությունը: Հեղինակը, վերլուծելով Հռոմի Ստատուտի 8bis հոդվածի հատկանիշները, եզրակացնում է, որ 8bis հոդվածով նախատեսված հանցակազմը էապես բարդացնում են այդ դրույթների կիրառումը կիրեռագրեսիայի նկատմամբ: Միաժամանակ, հոդվածի հեղինակը փաստում է կիրեռհարձակումներով իրականացված ագրեսիայի հանցագործության ներառման հնարավորությունն ու նույնիսկ դրա անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ժամանակակից անվտանգության սպառնալիքները:

Annotation. This article discusses the challenges of establishing responsibility for the crime of aggression within the framework of international criminal law. Special attention is given to the commission of the crime of aggression through cyberattacks – that is, to cyber aggression. In addition, the article explores the possibility of aggression being considered a continuing crime. By analyzing the elements of Article 8 bis of the Rome Statute, the author concludes that the legal construction provided in Article 8 bis significantly complicates its application to acts of cyber aggression. At the same time, the author argues for both the possibility and even the necessity of including cyber-based acts of aggression under the crime of aggression, taking into account modern security threats.

Аннотация. В настоящей статье рассматриваются проблемы установления ответственности за преступление агрессии в рамках международного уголовного права. Особое внимание уделяется осуществлению преступления агрессии посредством кибератак, т.е. киберагрессии. Кроме того, анализируется возможность квалификации агрессии как продолжаемого преступления. Автор, анализируя признаки статьи 8 bis Римского статута, приходит к выводу, что предусмотренный данной статьей состав преступления существенно осложняет применение соответствующих положений к киберагрессии. Вместе с тем автор статьи обосновывает возможность и даже необходимость включения агрессии, осуществляемой посредством кибератак, в сферу действия преступления агрессии с учётом современных угроз безопасности.

Բանալի բառեր - միջազգային քրեական իրավունք, ագրեսիա, կիրեռագրեսիա, կիրեռհարձակում, զինված ուժի կիրառում, ագրեսիայի ակտ:

Keywords: *International criminal law, aggression, cyber aggression, cyberattack, use of armed force, act of aggression.*

Ключевые слова: *Международное уголовное право; агрессия; киберагрессия; кибератака; применение вооруженной силы; акт агрессии.*

Օգտագործված գրականության ցանկ

- 1) A Zimmermann, (2012). 'Amending the Amendment Provisions of the Rome Statute: The Kampala Compromise on the Crime of Aggression and the Law of Treaties'. *JICJ*, 2012, N 10, p. 209.
- 2) Baek B-S. (2006). 'The Definition and Jurisdiction of the Crime of Aggression and the International Criminal Court'. *Cornell Law School Graduate Student Paper*. 2006. N 19., p. 25.
- 3) Buzard, K.; Graham, B.A.T; Horne, B. (2017). 'Unrecognized States: A Theory of Self-Determination and Foreign Influence'. *The Journal of Law, Economics, and Organization*, Vol. 33, Issue 3, August 2017, pp. 578–611, <https://doi.org/10.1093/jleo/eww017>
- 4) Cajjal, A., dos Santos, *et al.* (2023). 'The United Nations Security Council in the 21st Century: Evaluating its Design and Structure'. *OxJournal*. Available at: <https://www.oxjournal.org/the-united-nations-security-council->

in-the-21st-century-evaluating-its-design-and-structure/

- 5) Cao, R. (2019). 'Sovereignty, The Core Tenant of Public International Law?' (March 19, 2019). Available at: <https://ssrn.com/abstract=3355874>.
- 6) Casey-Maslen, S. (2021). 'Jus ad Bellum, Aggression, and the Right to Life. The Right to Life under International Law: An Interpretative Manual'. *Cambridge University Press*. pp. 122–140. ISBN 978-1-108-49478-6.
- 7) Cassese, A. (2008). 'International Criminal Law, 2nd edn (Oxford University Press, 2008); Cassese International Criminal Law' / Rev. by A. Cassese and others. Oxford, 2013. P. 141;
- 8) Cryer, R. (2006). 'International Criminal Law vs State Sovereignty: Another Round?' *The European Journal of International Law*, Vol. 16, No. 5. Available at: www.ejil.org/pdfs/16/5/333.pdf
- 9) Dinstein, Y. (2017). 'War, Aggression and Self-Defence' (6th ed.). Cambridge: Cambridge University Press.
- 10) Fratini, S., Hine, E., Novelli, C. *et al.* (2024). 'Digital Sovereignty: A Descriptive Analysis and a Critical Evaluation of Existing Models'. *DISO* 3, 59 (2024). <https://doi.org/10.1007/s44206-024-00146-7>
- 11) Fremuth, M.L. (2022). 'The Crime of Aggression and the Prohibition of the Use of Force—Reflections on the Relationship between the Rome Statute and General Public International Law'. In: Bock, S., Conze, E. (eds) *Rethinking the Crime of Aggression*. T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-94-6265-467-9_10
- 12) Fruhlinger, J. (2022). 'Stuxnet explained: The first known cyberweapon'. *CSO, Analysis*. Available at: <https://www.csoonline.com/article/562691/stuxnet-explained-the-first-known-cyberweapon.html>; See also:
- 13) Gábris, T., Hamul'ák, O. (2023). 'Digital Sovereignty or Sovereignty with Digital Elements?'. In: Ramiro Troitiño, D., Kerikmäe, T., Hamul'ák, O. (eds) *Digital Development of the European Union*. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-27312-4_16; Zhuk, A. (2023). *Virtual Sovereignty: Examining the Legal Status of Micronations in Cyberspace Through the Case of the Republic of Errant Menda Lerenda*. *DISO* 2, 45 (2023). <https://doi.org/10.1007/s44206-023-00067-x>
- 14) Grzebyk, P. (2023). 'Crime of Aggression against Ukraine: The Role of Regional Customary Law', *Journal of International Criminal Justice*, Volume 21, Issue 3, July 2023, Pages 435–459, <https://doi.org/10.1093/jicj/mqad035>
- 15) Grzybowski, J. (2017). 'To Be or Not to Be: The Ontological Predicament of State Creation in International Law', *European Journal of International Law*, Volume 28, Issue 2, May 2017, Pages 409–432, <https://doi.org/10.1093/ejil/chx031>
- 16) Grover, L. (2016). 'Interpreting the Crime of Aggression'. In: Kreß C, Barriga S, eds. *The Crime of Aggression: A Commentary*. Cambridge University Press; 2016:375–411.
- 17) Hajdin, N.R (2017). 'The Nature of Leadership in the Crime of Aggression: The ICC's New Concern?'. *Int'l Crim. L. Rev.* 2017. N 17. p. 20.
- 18) Hajdin N.R. (2021). 'The actus reus of the crime of aggression'. *Leiden Journal of International Law*. 2021; Vol. 34, No. 2, pp. 489-504. <https://doi.org/10.1017/S0922156521000042>.
- 19) Hall, B., & Khudayberdieva, N. (2019). 'International Law and the Responsibility to Protect'. *Oxford Research Encyclopedia of International Studies*. Available at: <https://oxfordre.com/internationalstudies/view/10.1093/acrefore/9780190846626.001.0001/acrefore-9780190846626-e-231>.
- 20) Heller, K.J. (2007). 'Retreat from Nuremberg: The Leadership Requirement in the Crime of Aggression'. *European Journal of International Law*, Vol. 18, Issue 3, June 2007, pp. 477–497, <https://doi.org/10.1093/ejil/chm025>
- 21) Henderson, C. (2018). 'Preventative Self-Defence. In *The Use of Force and International Law*' *Cambridge University Press*, pp. 274–307.
- 22) Khachatryan, D. (2023). 'Transboundary Elements of Crime: A Case of Armenian Ethnic Cleansing before the ICC?'. *Völkerrechtsblog*, 24.11.2023, doi: 10.17176/20231124-093603-0.
- 23) Kumar, A.V. (2024). 'Challenges Facing the Montevideo Convention on the Rights and Duties of States'. *Hull*

Law Review, Vol. 1. pp. 19-24. Available at: <https://www.hlr.wordpress.hull.ac.uk/wp-content/uploads/2024/09/Hull-Law-Review-Vol-1-2023-24-Archana-Challenges-facing-the-Montevideo-Convention.pdf>

24) Lee, H. (2016). ‘Defining “State” For The Purpose of The International Criminal Court: The Problem Ahead After The Palestine Decision’. *University Of Pittsburgh Law Review*, Vol. 77., <https://doi.org/10.5195/lawreview.2016.405>

25) Luban, D. (2024). ‘The Crime of Aggression: Its Nature, the Leadership Clause, and the Paradox of Immunity’. *Georgetown University Law Center*. Available at: <https://scholarship.law.georgetown.edu/cgi/viewcontent.cgi?article=3645&context=facpub>

26) Luder, S.R. (2002). ‘The legal nature of the International Criminal Court and the emergence of supranational elements in international criminal justice’. Available at: https://www.icrc.org/sites/default/files/external/doc/en/assets/files/other/079-092_luder.pdf

27) Mallison, W.T. & Mallison, S.V. (1982). ‘The Israeli Aerial Attack of June 7, 1981 upon the Iraqi Nuclear Reactor: Aggression or Self-Defense?’. *Vanderbilt Law Review*, Vol. 15, p. 417. Available at: <https://scholarship.law.vanderbilt.edu/vjtl/vol15/iss3/1>

28) McCabe, A.H. (2014). ‘Balancing “Aggression” and Compassion in International Law: The Crime of Aggression and Humanitarian Intervention’. *Fordham L. Rev.*, Vol. 83, p. 991, Available at: <https://ir.lawnet.fordham.edu/flr/vol83/iss2/20>

29) McDougal, C. (2013), ‘The Crime of Aggression under the Rome Statute of the International Criminal Court’, *Cambridge University Press*, 2013. Available at: <https://www.cambridge.org/core/books/crime-of-aggression-under-the-rome-statute-of-the-international-criminal-court/A4838ACE82858DDF153A1F71CD29E25B>

30) Merezko, O. (2020). ‘The Mystery of the State and Sovereignty in International Law’. *St. Louis U. L.J.*, Vol. 64. Available at: <https://scholarship.law.slu.edu/lj/vol64/iss1/4>

31) Miller K. (2014). ‘The Kampala Compromise and Cyberattacks: Can there be an international crime of cyber- aggression?’ *S. Cal. Interdisciplinary L. J.*, N. 23. Available at: <https://gould.usc.edu/why/students/orgs/ilj/assets/docs/6%20-%20Miller.pdf>

32) Neilsen, R. (2023). ‘Coding protection: ‘cyber humanitarian interventions’ for preventing mass atrocities, International Affairs’. Vol. 99, Issue 1, pp. 299–319, <https://doi.org/10.1093/ia/iia261>

33) Nerlich, V. (2017). ‘The Crime of Aggression and Modes of Liability – Is There Room Only for Principals?’ *Harvard Law Journal*. Available at: https://journals.law.harvard.edu/ilj/2017/04/the-crime-of-aggression-and-modes-of-liability-is-there-room-only-for-principals/#_ftn8

34) Ophardt, J.A. (2010). ‘Cyber Warfare and the Crime of Aggression: The Need for Individual Accountability on Tomorrow’s Battlefield’. *Duke Law & Technology Review*, Vol. 9, pp. 1-28.

35) Pelliconi, A.M. (2024). ‘Self-Defence As Remedial Self-Determination: Continuity in Russian Narratives to Justify Imperialism and the Use of Force’. *Neth Int Law Rev*, Vol. 71, pp. 233–260. <https://doi.org/10.1007/s40802-024-00260-w>

36) Petrossian G. (2024). ‘Legal Battles Over Nagorno-Karabakh: A Review of the Jurisprudence to Date’. *American Society of International Law*. Vol. 28. Issue: 11. Available at: <https://www.asil.org/insights/volume/28/issue/11>

37) Rickart, A. (2015). ‘Emerging Issues: To Be or Not to Be, That Is the Statehood Question’. *University of Baltimore Journal of International Law*. Vol. 3: Iss. 2, Article 7. Available at: <https://scholarworks.law.ubalt.edu/ubjil/vol3/iss2/7>

38) Ronen, Y. (2020). ‘Palestine in the ICC: Statehood and the Right to Self-determination in the Absence of Effective Control’. *Journal of International Criminal Justice*, Vol. 18, Issue 4, pp. 947–966, <https://doi.org/10.1093/jicj/mqaa051>

39) Ruys, T. (2018). ‘Criminalizing Aggression: How the Future of the Law on the Use of Force Rests in the Hands of the ICC’. *European Journal of International Law*. Vol. 29, Issue 3, pp. 887–917, <https://doi.org/10.1093/>

ejil/chy053

40) Sabel R. (2022). 'Is Palestine a State? In: International Law and the Arab-Israeli Conflict'. *Cambridge University Press*; pp. 390-399. Available at: <https://www.cambridge.org/core/books/abs/international-law-and-the-arab-israeli-conflict/is-palestine-a-state/24D4ED9B1AF29E4F16C69020977B5477>

41) Sayapin, S. (2014). 'The Crime of Aggression in the Rome Statute of the International Criminal Court'. In: *The Crime of Aggression in International Criminal Law. T.M.C. Asser Press, The Hague*. https://doi.org/10.1007/978-90-6704-927-6_5

42) Schabas, W. (2017). 'The International Criminal Court: A Commentary on the Rome Statute. Oxford Commentaries on International Law'. ISBN: 0191060305, 9780191060304;

43) Schabas, W.A, (2016). 'Crime of aggression/Crime d'agression', *The International Criminal Court: A Commentary on the Rome Statute, 2nd Edition, Oxford Commentaries on International Law* (2016; online edn, Oxford Law Pro), <https://doi.org/10.1093/law/9780198739777.003.0011>, accessed 21 Oct. 2025.

44) Schabas, W.A, (2016). 'Exercise of jurisdiction over the crime of aggression (Security Council referral)/ Exercice de la compétence à l'égard du crime d'agression (Renvoi par le Conseil de sécurité)', *The International Criminal Court: A Commentary on the Rome Statute, 2nd Edition, Oxford Commentaries on International Law* (2016; online edn, Oxford Law Pro), <https://doi.org/10.1093/law/9780198739777.003.0020>, accessed 6 Sept. 2025.

45) Scheffer, D. (2017). 'The Missing Pieces in Article 8 bis (Aggression) of the Rome Statute'. Available at: https://journals.law.harvard.edu/ilj/2017/04/the-missing-pieces-in-article-8-bis-aggression-of-the-rome-statute/#_ftn1

46) Sellars, K. (2010). 'Imperfect Justice at Nuremberg and Tokyo'. *European Journal of International Law*, Vol. 21 pp. 1085-1102. Available at: <https://ssrn.com/abstract=1906444>

47) Shikova, N. (2023). 'Statehood and Recognition of Statehood. In: Self-Determination and Secession'. *Springer, Cham*. https://doi.org/10.1007/978-3-031-34322-3_4

48) Steinberg, H., (2024). 'Politics and Justice at the International Criminal Court' (September 23, 2024). *Israel Law Review*, Vol. 57, No. 2. Available at: <https://ssrn.com/abstract=4965347>.

49) Tanga, O.; Akinradewo, O, *et al.* (2022). 'Cyber attack risks to construction data management in the fourth industrial revolution era: a case of Gauteng province, South Africa'. *Journal of Information Technology in Construction (ITcon)*, Vol. 27, pp. 845-863, <https://doi.org/10.36680/j.itcon.2022.041>

50) Tataryn, A., Ertürk, E. (2021). 'Unrecognised States: The Necessary Affirmation of the Event of International Law'. *Law Critique*, Vol. 32, pp. 331-345. <https://doi.org/10.1007/s10978-021-09302-1>

51) Terzyan, A. (2024). 'Armenia in the Aftermath of the War: Between Changing Landscapes and Unchanging Problems'. *Eurasia Institutes*. Available at: https://eurasiainstitutes.org/files/file/psrp_2024_number_1.pdf

52) Trahan J. (2022). 'Contributing to Cyber Peace by Maximizing the Potential for Deterrence: Criminalization of Cyberattacks under the International Criminal Court's Rome Statute'. In: Shackelford SJ, Douzet F, Ankersen C, eds. *Cyber Peace: Charting a Path Toward a Sustainable, Stable, and Secure Cyberspace*. Cambridge University Press; 2022:131-153. Available at: <https://www.cambridge.org/core/books/cyber-peace/contributing-to-cyber-peace-by-maximizing-the-potential-for-deterrence/D6CB4F5110F5357FAF1C42121FC90E07>

53) Trahan, J. (2021). 'The Criminalization of Cyber-operations Under the Rome Statute'. *Journal of International Criminal Justice*, Vol. 19, Issue 5, pp. 1133-1164, <https://doi.org/10.1093/jicj/mqab066>

54) Trahan, J. (2022). 'Revisiting the History of the Crime of Aggression in Light of Russia's Invasion of Ukraine'. *NYU Center for Global Affairs*. Vol: 26; Issue: 2. Available at: <https://www.asil.org/insights/volume/26/issue/2>

55) Tsilonis, V. (2024). 'The Crime of Aggression: The Birth of a Crime. In: The Jurisdiction of the International Criminal Court'. *Springer, Cham*. https://doi.org/10.1007/978-3-031-46138-5_6

56) Vardanyan, L., Kocharyan, H., *et al.* (2023). 'Digital Sovereignty in the EU: Searching for Legal Mechanisms

for Marking the Borders'. In: Ramiro Troitiño, D., Kerikmäe, T., Hamul'ák, O. (eds) Digital Development of the European Union. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-27312-4_14

57) Vardanyan, L.; Kocharyan, H. (2022). 'Critical views on the phenomenon of EU digital sovereignty through the prism of global data governance reality: main obstacles and challenges'. *European Studies – the Review of European law, Economics and Politics*, 2022, Vol. 9, No. 2, pp. 110–132. <https://doi.org/10.2478/eustu-2022-0016>

58) Volk, C. (2019). 'The Problem of Sovereignty in Globalized Times. Law', *Culture and the Humanities*, Vol .18, No. 3, pp. 716–738. <https://doi.org/10.1177/1743872119828010>

59) Werle, G. (2009). 'The Crime of Aggression Between International and Domestic Criminal Law: Criminal law between War and Peace: Justice and Cooperation in Criminal Matters in International Military Interventions'. Ed. by S. Manacorda., A. Nieto. Cuenca, 2009. p. 412.

60) Wong, M.S. (2016). 'The crime of aggression and public international law'. Retrieved from <https://hdl.handle.net/1887/38952>

61) Дзейтова, Р.А. (2021). 'Ответственность за киберагрессию по международному уголовному праву: основание и условия наступления'. *Вестн. Моск. Ун-та. Сер. 11. Право*. 2021. № 6. Available at: <https://cyberleninka.ru/article/n/otvetstvennost-za-kiberagressiyu-po-mezhdunarodnomu-ugolovnomu-pravu-osnovanie-i-usloviya-nastupleniya>

62) Кантур, Р.А. (2018). 'Агрессия как длящееся преступление в свете принятия резолюции ICC-ASP/16/Res.5 Ассамблеей государств-участников Римского статута Международного уголовного суда'. *Международное право и международные организации / International Law and International Organizations*. № 2. С. 32-41. DOI: 10.7256/2454-0633.2018.2.25158. Available at: https://nbpublish.com/library_read_article.php?id=25158

Քոչարյան Հ. - իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիսուցե՝ hovsep.kocharyan.28@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 21.10.2025 թ., տրվել է գրախոսության 21.10.2025 թ., երաշխավորվել է ի.գ.թ. Լ. Վարդանյանի կողմից, ընդունվել է տպագրության 08.04.2026 թ.:

ՀԿԴ/0067/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

«29» հունվարի 2026 թվական

քաղաք Երևան

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) հայցի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Անահիտ Օնիկի Առաքելյանի, Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի, Մարտուն Սարգսի Մաթևոսյանի, Իշխան Արշավիրի Վարդանյանի, Սամվել Ալբերտի Մայրապետյանի, Արսեն Լևոնի Արզումանյանի, Երրորդ անձինք Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի, «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն), Աիդա Մուխայելի Սամսոնյանի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ աճուրդներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 01.11.2024 թվականի որոշման դեմ Դատախազության բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

1.1. Դիմելով ՀՀ Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ Դատախազությունը պահանջել է անվավեր ճանաչել 26.05.2007 թվականի լոտ 16, 18, 19, 21, 22 և 24 հողամասերի աճուրդները և կիրառել անվավերության հետևանքներ: Քաղաքացիական գործին տրվել է թիվ ԿԴ2/2846/02/19 համարը:

1.2. ՀՀ Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մուշեղյան) 09.11.2022 թվականի որոշմամբ թիվ ԿԴ2/2846/02/19 քաղաքացիական գործն ըստ ենթակայության հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

1.3. ՀՀ հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ Դատարան) գործին տրվել է նոր՝ թիվ ՀԿԴ/0067/02/22 համարը:

1.4. Դատարանի (դատավոր՝ Կ. Բադալյան) 12.01.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. «Անվավեր ճանաչել Կոտայքի մարզպետարանի կողմից 26.05.2007 թվականին իրականացված լոտ 16, լոտ 18, լոտ 19, լոտ 21, լոտ 22 և լոտ 24 հողամասերի աճուրդները: Որպես 26.05.2007 թվականի լոտ 16 հողամասի աճուրդի անվավերության

հետևանք անվավեր ճանաչել՝ - 31.05.2007թ. Կոտայքի մարզպետի և Մարտուն Սարգսի Մաթևոսյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2586 պայմանագիրը, - 26/09/2007 թվականին Մարտուն Սարգսի Մաթևոսյանի և Աիդա Մուխայելի Սամսոնյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 4311 պայմանագիրը, -
 ▪¹ հողամաս հասցեով անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝²) նկատմամբ 01/09/2017 թվականին Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել
³ հողամաս հասցեով գրանցված անշարժ գույքից (կադաստրային ծածկագիր՝⁴) լոտ 16 հողամասի մասը՝ համաձայն լոտ 16-ի աճուրդի միջոցով օտարման համար հիմք հանդիսացած հատակագծի, իսկ անշարժ գույքի մնացած մասի նկատմամբ գրանցել Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքը: ՀՀ Կոտայքի մարզպետարանին պարտավորեցնել Մարտուն Սարգսի Մաթևոսյանին վերադարձնել անվավեր ճանաչված 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2586 պայմանագրի գինը կազմող 3.435.500 ՀՀ դրամ գումարը, Մարտուն Սարգսի Մաթևոսյանին պարտավորեցնել Աիդա Մուխայելի Սամսոնյանին վերադարձնել անվավեր ճանաչված 26/09/2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 4311 պայմանագրի գինը կազմող 7.150.000 ՀՀ դրամ գումարը:

Որպես 26.05.2007 թվականի լոտ 18 հողամասի աճուրդի անվավերության հետևանք անվավեր ճանաչել՝ - 31.05.2007թ. Կոտայքի մարզպետի և Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագիրը, - 20/12/2007 թվականին Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 7316 պայմանագիրը, - Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ միջև 17/03/2009 թվականին կնքված թիվ 1597 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը՝ թիվ 18 լոտի հողամասի մասով, և նույն հողամասի նկատմամբ «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ սեփականության իրավունքի 18/07/2011 թվականի պետական գրանցումը՝⁵ մատյանի՝⁶ համարի ներքո: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել իրավունքների պետական գրանցման միասնական⁷ մատյանի⁸ համարի տակ 18/07/2011 թվականին «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ սեփականության իրավունքով գրանցված հողամասը: Վերականգնել «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ պահանջի իրավունքը Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի նկատմամբ Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ միջև 17/03/2009 թվականին կնքված թիվ 1597 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով թիվ 18 լոտի հողամասի գրավադրմամբ ապահովված պահանջի չափով: ՀՀ Կոտայքի մարզպետարանին պարտավորեցնել Սամվել Հովհաննեսի Գրիգորյանին վերադարձնել անվավեր ճանաչված 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 8.093.500 ՀՀ դրամ գումարը: Սամվել Հովհաննեսի Գրիգորյանին պարտավորեցնել Նիկիտա Ավետիկի Աբրահամյանին վերադարձնել անվավեր ճանաչված 20/12/2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ

¹ Առկա է անձնական տվյալ:
² Առկա է անձնական տվյալ:
³ Առկա է անձնական տվյալ:
⁴ Առկա է անձնական տվյալ:
⁵ Առկա է անձնական տվյալ:
⁶ Առկա է անձնական տվյալ:
⁷ Առկա է անձնական տվյալ:
⁸ Առկա է անձնական տվյալ:

7316 պայմանագրի գինը կազմող 40.000.000 ՀՀ դրամ գումարը:

Որպես 26.05.2007 թվականի լուս 19 հողամասի աճուրդի անվավերության հետևանք անվավեր ճանաչել՝ - 31.05.2007թ. Կոտայքի մարզպետի և Անահիտ Օնիկի Առաքելյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2592 պայմանագիրը, - 20/12/2007 թվականին Անահիտ Օնիկի Առաքելյանի և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 7318 պայմանագիրը, - Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ միջև 17/03/2009 թվականին կնքված թիվ 1598 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը՝ թիվ 19 լուսի հողամասի մասով, և նույն հողամասի նկատմամբ «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ սեփականության իրավունքի 18/07/2011 թվականի պետական գրանցումը՝⁹ մատյանի ...¹⁰ համարի ներքո: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել իրավունքների պետական գրանցման միասնական¹¹ մատյանի ...¹² համարի ներքո 18/07/2011 թվականին «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ սեփականության իրավունքով գրանցված հողամասը: Վերականգնել «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ պահանջի իրավունքը Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի նկատմամբ Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ միջև 17/03/2009 թվականին կնքված թիվ 1598 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով թիվ 19 լուսի հողամասի գրավադրմամբ ապահովված պահանջի չափով: ՀՀ Կոտայքի մարզպետարանին պարտավորեցնել Անահիտ Օնիկի Առաքելյանին վերադարձնել անվավեր ճանաչված 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 11.488.500 ՀՀ դրամ գումարը: Անահիտ Օնիկի Առաքելյանին պարտավորեցնել Նիկիտա Ավետիկի Աբրահամյանին վերադարձնել անվավեր ճանաչված 20/12/2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 7316 պայմանագրի գինը կազմող 47.000.000 ՀՀ դրամ գումարը: (...):»:

1.5. 29.02.2024 թվականին վերաքննիչ բողոքներ են ներկայացրել Սամվել Ալբերտի Մայրապետյանը (ներկայացուցիչ՝ Ա. Սիրունյան), Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Ս. Գինոսյան) և Աիդա Մուխայելի Սամսոնյանը (ներկայացուցիչ՝ Լ. Հովհաննիսյան):

1.6. ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.11.2024 թվականի որոշմամբ որոշվել է՝ Սամվել Ալբերտի Մայրապետյանի վերաքննիչ բողոքը մերժել, և Դատարանի 12.01.2024 թվականի վճիռը՝ Սամվել Ալբերտի Մայրապետյանի մասով, թողնել անփոփոխ: Աիդա Մուխայելի Սամսոնյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. Դատարանի 12.01.2024 թվականի վճիռը՝ «Որպես 26.05.2007 թվականի լուս 16 հողամասի աճուրդի անվավերության հետևանք անվավեր ճանաչել՝ /.../¹³ հողամաս հասցեով անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝¹⁴) նկատմամբ 01/09/2017 թվականին Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել¹⁵ հողամաս հասցեով գրանցված անշարժ գույքից (կադաստրային ծածկագիր՝¹⁶) լուս 16 հողամասի մասը՝ համաձայն լուս 16-ի աճուրդի միջոցով օտարման համար հիմք հանդիսացած հատակագծի, իսկ անշարժ գույքի մնացած

⁹ Առկա է անձնական տվյալ:
¹⁰ Առկա է անձնական տվյալ:
¹¹ Առկա է անձնական տվյալ:
¹² Առկա է անձնական տվյալ:
¹³ Առկա է անձնական տվյալ:
¹⁴ Առկա է անձնական տվյալ:
¹⁵ Առկա է անձնական տվյալ:
¹⁶ Առկա է անձնական տվյալ:

մասի նկատմամբ գրանցել Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքը: Մարտուն Սարգսի Մաթևոսյանին պարտավորեցնել Աիդա Մուխայելի Սամսոնյանին վերադարձնել անվավեր ճանաչված 26.09.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 4311 պայմանագրի գինը կազմող 7.150.000 ՀՀ դրամ գումարը» մասով բեկանել, փոփոխել՝ այդ մասում ընդգրկված հայցային պահանջները մերժել և վճռի բեկանված մասում նշված անվավերության հետևանքները չկիրառել:

«Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. Դատարանի 12.01.2024 թվականի վճիռը «Որպես 26.05.2007 թվականի լուտ 18 հողամասի աճուրդի անվավերության հետևանք անվավեր ճանաչել՝ /.../ նույն հողամասի նկատմամբ «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի 18.07.2011 թվականի պետական գրանցումը՝¹⁷ մատյանի...¹⁸ համարի ներքո: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել իրավունքների պետական գրանցման միասնական¹⁹ մատյանի ...²⁰ համարի տակ 18.07.2011 թվականին «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով գրանցված հողամասը: Վերականգնել «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի պահանջի իրավունքը Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի նկատմամբ Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի միջև 17.03.2009 թվականին կնքված թիվ 1597 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով թիվ 18 լուտի հողամասի գրավադրմամբ ապահովված պահանջի չափով», ինչպես նաև «Որպես 26.05.2007 թվականի լուտ 19 հողամասի աճուրդի անվավերության հետևանք անվավեր ճանաչել՝ /.../ նույն հողամասի նկատմամբ «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի 18.07.2011 թվականի պետական գրանցումը՝²¹ մատյանի ...²² համարի ներքո: Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել իրավունքների պետական գրանցման միասնական²³ մատյանի ...²⁴ համարի ներքո 18.07.2011 թվականին «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով գրանցված հողամասը: Վերականգնել «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի պահանջի իրավունքը Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի նկատմամբ Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ-ի միջև 17.03.2009 թվականին կնքված թիվ 1598 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով թիվ 19 լուտի հողամասի գրավադրմամբ ապահովված պահանջի չափով» մասերով բեկանել, փոփոխել՝ այդ մասերում ընդգրկված հայցային պահանջները մերժել և վճռի բեկանված մասերում նշված անվավերության հետևանքները չկիրառել:

Դատարանի 12.01.2024 թվականի վճիռը մնացած մասերով թողնվել է անփոփոխ:

1.7. 02.12.2024 թվականին վճռաբեկ բողոք է ներկայացրել Դատախազությունը:

1.8. 29.01.2025 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

1.9. 14.02.2025 թվականին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աիդա Մուխայելի Սամսոնյանը (ներկայացուցիչ՝ Լ. Հովհաննիսյան), իսկ 21.02.2025 թվականին՝ Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Ս. Գինոսյան):

¹⁷ Առկա է անձնական տվյալ:

¹⁸ Առկա է անձնական տվյալ:

¹⁹ Առկա է անձնական տվյալ:

²⁰ Առկա է անձնական տվյալ:

²¹ Առկա է անձնական տվյալ:

²² Առկա է անձնական տվյալ:

²³ Առկա է անձնական տվյալ:

²⁴ Առկա է անձնական տվյալ:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

2.1. Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ, 249-րդ, 304-րդ հոդվածները և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը բողոքում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

2.2. Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի նորմատիվ կարգավորումները սահմանելիս օգտագործել է ոչ թե «անկախ նրանց կամքից և կամահայտնությունից» արտահայտությունները, այլ բավարարվել է բացառապես «անկախ նրանց կամքից» արտահայտությամբ, որպիսի պայմանի ձևակերպումն ինքնանպատակ չի եղել, քանի որ օրենսդիրը կարևորել է գույքի սեփականատիրոջ՝ իր գույքն օտարելու կամքը՝ ցանկությունը, հաշվի առնելով, որ գույքի օտարման տնօրինչական գործողությունն իրացնելիս գերակա պետք է համարվի կամքը, այլ ոչ թե այն կյանքի կոչելու եղանակը, միջոցը կամ ձևը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պետության կամքն ուղղված է եղել գույքն աճուրդի եղանակով վաճառելուն, այլ ոչ թե ուղղակի վաճառքով օտարելուն:

2.3. Գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ թեև պետությունը կամեցել է օտարել հողամասը, սակայն վերջինիս կամքն ուղղված է եղել այն աճուրդով օտարելուն, մինչդեռ փաստացի տեղի է ունեցել ուղղակի վաճառք: **Աճուրդի փաստացի չկայանալու փաստը հիմնավորում է լուրով գույքի օտարումը պետության կամքի խեղաթյուրմամբ**, այսինքն՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը պարտադիր աճուրդային կարգով օտարման ենթակա լինելու պայմաններում այլ ճանապարհով՝ փաստացի քողարկված ուղղակի վաճառքով կատարված լինելու հանգամանքով, ինչպես նաև ոչ արդարացնող հիմքով՝ 03.10.2019 թվականի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը հիմնավորում են սույն աճուրդի «իրականացման» գործընթացում ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնատար անձանց ոչ օրինաչափ վարքագծի հետևանքով հողամասը պետության տիրապետումից դուրս եկած լինելու փաստը: Հետևաբար, անկախ այն հանգամանքից՝ հաջորդող գործարքներով գնորդները գործել են բարեխիղճ, թե անբարեխիղճ, պետությունն իրավունք ունի հետ պահանջելու իր գույքը:

2.4. Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 17.03.2009 թվականին Ընկերության և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև կնքված անշարժ գույքի հիփոթեքի թիվ 1598 ու թիվ 1597 պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջները ներկայացվել են հիմնական պահանջից որպես ածանցվող պահանջներ, հետևաբար հիմնական պահանջի բավարարման պայմաններում հաջորդող գործարքները ևս պետք է անվավեր ճանաչվեին՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով սահմանված կարգավորումներն առ այն, որ գույքը փաստացի դուրս է եկել պետության տիրապետումից անկախ նրա կամքից:

2.5. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի վերաբերյալ տրված մեկնաբանություններին, նշել է, որ այն կիրառվել է 17.03.2009 թվականին Ընկերության և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև կնքված անշարժ գույքի հիփոթեքի թիվ 1598 ու թիվ 1597 պայմանագրերի հիման վրա, որոնց ուսումնասիրությունից հետևում է, որ նշված ընթացակարգը սահմանվել է պայմանագրերի 4.1-4.5-րդ կետերով: Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված գրավի առարկայի բռնագանձման գործընթացը չի կարող դիտվել որպես առանձին

գործընթաց, քանի որ այն կիրառվել է կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված դրույթների հիման վրա: Ընկերության սեփականության իրավունքի գրանցման համար հիմք են հանդիսացել նշված պայմանագրերն ու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը: Այսինքն՝ անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրն է հանդիսանում այն հիմքը, որի հիման վրա կիրառվել է գրավի առարկայի բռնագանձման գործընթացը, որպիսի պայմաններում պայմանագրի անվավեր ճանաչվելու դեպքում դրանով սահմանված ընթացակարգերի արդյունքում գույքի օտարումը ևս պետք է անվավեր ճանաչվեր, ուստի գրավի առարկայի բռնագանձման օրինականությունն առանձին վիճարկելու որևէ հիմք առկա չէ:

2.6. Վերաքննիչ դատարանը հիմնական պահանջի մասով, այն է՝ թիվ լոտ 16, թիվ լոտ 18, թիվ լոտ 19 հողամասերի աճուրդներն անվավեր ճանաչելու և աճուրդի արդյունքում կնքված գործարքներն անվավեր ճանաչելու պահանջի մասով վճիռը թողել է անփոփոխ, մինչդեռ հետևանքների մասով բեկանել է Դատարանի վճիռը և այդ մասով հայցը մերժել: Իսկ Դատարանն այս մասով կիրառել էր երկկողմանի ռեստիտուցիա, և կողմերը պետք է վերադարձնեին գործարքով ստացվածը, որպիսի պայմաններում պետությունը պետք է աճուրդում հաղթող ճանաչված անձանց վերադարձներ հողամասի աճուրդի գինը, իսկ փոխարենը պետք է ստանար հողամասը՝ իր շուկայական արժեքով: Սակայն Վերաքննիչ դատարանի կողմից բողոքների մասնակի բավարման արդյունքում պետությունը զրկվել է իր օրինական ակնկալիքներից, այն է՝ ձևական աճուրդի հետևանքով պետության տիրապետումից դուրս եկած հողամասը չի վերադարձվում պետությանը, դեռ ավելին՝ անվավերության հետևանքներ չկիրառելու պայմաններում չի վերադարձվում հողամասի շուկայական արժեքը:

2.7. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, սահմանելով գործարքի անվավերության հետևանքներ, առաջին հերթին սահմանել է, որ կողմերը միմյանց վերադարձնում են գործարքով ստացվածը, ինչը ենթադրում է, որ օրենսդրի կամքն առաջնահերթ ուղղված է եղել մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնմանը կամ մինչև անվավեր ճանաչված գործարքի կնքումը եղած դրության վերականգնմանը, այդ է պատճառը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված նորմով կիրառվում է «պետք է վերադարձնեն գործարքով ամբողջ ստացվածը» արտահայտությունը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքով ստացվածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը դրամով հատուցելու վերաբերյալ կարգավորումները ևս պետք է մեկնաբանվեն օրենսդրի արտահայտած կամքի լույսի ներքո, այսինքն՝ գործարքն անվավեր ճանաչելով գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում գույքի արժեքը պետք է հատուցվի հենց գործարքն անվավեր ճանաչելու պահի դրությամբ գործող գույքի արժեքով, քանի որ պետությունը հայցը հարուցելով, ունեցել է լեգիտիմ ակնկալիք վերադարձնել հողամասը բնեղենով, այսինքն՝ վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, որպիսի պայմաններում հողամասը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում առնվազն պետք է հատուցվի գործարքի անվավեր ճանաչելու պահի դրությամբ գործող հողամասի շուկայական արժեքը:

2.8. Վերաքննիչ դատարանը, կիրառելով դատական ակտը բեկանելու և փոփոխելու իր լիազորությունը, հաշվի չի առել այն հանգամանքը, որ աճանցյալ պահանջների մասով Դատարանի բավարարված ակտը բեկանելով, աճուրդի արդյունքում կնքված գործարքի երկկողմանի ռեստիտուցիայի հարցը մնում է չլուծված: Առհասարակ չի լուծել երկկողմանի ռեստիտուցիայի հարցը, դեռ ավելին՝ լոտ 16 հողամասի մասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու մասը ճանաչելով անվավեր և ուժի մեջ թողնելով անվավեր ճանաչված

31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2586 պայմանագրի գինը կազմող 3.435.500 ՀՀ դրամը Մարտուն Սարգսի Մաթևոսյանին վերադարձնելու ՀՀ Կոտայքի մարզպետարանի պարտավորության մասը, իրավունքների պետական գրանցման միասնական²⁵ մատյանի ...²⁶ համարի տակ 18.07.2011 թվականին Ընկերության սեփականության իրավունքով գրանցված հողամասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու մասը ճանաչելով անվավեր՝ ուժի մեջ է թողել Սամվել Հովհաննեսի Գրիգորյանին վերադարձման ենթակա 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 8.093.500 ՀՀ դրամը վերադարձնելու ՀՀ Կոտայքի մարզպետարանի պարտավորության մասը, իրավունքների պետական գրանցման միասնական²⁷ մատյանի ...²⁸ համարի տակ 18.07.2011 թվականին Ընկերությանը սեփականության իրավունքով գրանցված հողամասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու մասը ճանաչելով անվավեր՝ ուժի մեջ է թողել Անահիտ Օնիկի Առաքելյանին վերադարձման ենթակա 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 11.488.500 ՀՀ դրամը վերադարձնելու ՀՀ Կոտայքի մարզպետարանի պարտավորության մասը, ըստ էության կիրառել է միակողմանի ռեստիտուցիա, քանի որ կայացված դատական ակտի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն զրկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված երկկողմանի ռեստիտուցիայի կիրառման արդյունքում հողամասը ստանալու հնարավորությունից, այլև՝ նույն հոդվածով սահմանված հողամասը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում որպես հատուցում դրա արժեքը ստանալու հնարավորությունից:

2.9. Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջները՝ բավարար ապացույցների համակցության պայմաններում հաստատված չհամարելով հողամասը պետության կամ քից անկախ հանգամանքներով դուրս եկած լինելու փաստը:

2.10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 01.11.2024 թվականի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել, կամ մասնակիորեն բեկանել և գործն այդ մասով ուղարկել նոր քննության կամ մասնակիորեն բեկանել՝ մասնակիորեն օրինական ուժ տալով Դատարանի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի պատրասխանների հիմնավորումները.

3.1.1. Աիդա Մուխայեյի Սամսոնյանը վճռաբեկ բողոքի պատրասխանում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

3.1.2. Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի նորմատիվ կարգավորումները սահմանելիս օգտագործել է ոչ թե «անկախ նրանց կամքից և կամահայտնությունից» արտահայտությունները, այլ՝ բավարարվել է բացառապես «անկախ նրանց կամքից» արտահայտությամբ, որպիսի պայմանի ձևակերպումն ինքնանպատակ չի եղել, քանի որ օրենսդիրը կարևորել է գույքի սեփականատիրոջ՝ իր գույքն օտարելու կամքը՝ ցանկությունը, հաշվի առնելով, որ գույքի օտարման տնօրինչական գործողությունն իրացնելիս գերակա պետք է համարվի կամքը, այլ ոչ թե այն կյանքի կոչելու եղանակը, միջոցը կամ ձևը: Ընդ որում՝ օրենսդիրը չնույնացնելու համար հստակ տարբերակել է գործարքի

²⁵ Առկա է անձնական տվյալ:

²⁶ Առկա է անձնական տվյալ:

²⁷ Առկա է անձնական տվյալ:

²⁸ Առկա է անձնական տվյալ:

անվավերության դեպքում կամքի և կամահայտնության խեղաթյուրումը, իսկ որպես հետևանք բարեխիղճ ձեռք բերողի դեպքում՝ միայն կամքի բացակայության նախապայմանը:

3.1.3. Տվյալ դեպքում ՀՀ կառավարության 422-Ն և ՀՀ Կոտայքի մարզպետի թիվ 67 որոշումների ընդունմամբ հաստատվում է պետության կամքը, ցանկությունը, մտադրությունը վեճի առարկա գույքերն օտարելու վերաբերյալ, այսինքն՝ այլ անձանց փոխանցելու իր սեփականության իրավունքը, իսկ կոնկրետ եղանակը, որը վերաբերում է աճուրդի միջոցով գույքն օտարելուն, սեփականատիրոջ կամահայտնությունն է եղել, որն ընդամենը սեփականատիրոջ կամքի իրացման դրսևորման ձևն է: Մինչդեռ կամահայտնության ձևի խախտվելը, այսինքն՝ այն, որ գույքն օտարվել է որոշված ձևի (աճուրդի) որոշակի խախտումներով, չի կարող հիմք հանդիսանալ եզրահանգելու, որ գույքը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից՝ անկախ իր կամքից: Հատկանշական է, որ այս դեպքում գույքի օտարման կամքը հստակ արտահայտվել է պետության գույքը տնօրինելու իրավասությամբ օժտված բարձրագույն մարմնի՝ Կառավարության կողմից, որի կայացրած հիշյալ որոշումները մինչ օրս գործող են, ուժը չեն կորցրել կամ անվավեր չեն ճանաչվել:

3.1.4. Ինչպես աճուրդի կազմակերպման ժամանակ, այնպես էլ աճուրդի անվավերության դեպքում սեփականատիրոջ գույքն իր տիրապետումից դուրս գալու՝ սեփականատիրոջ՝ գույքն օտարելու կամքը, մնում է անփոփոխ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով գույքի օտարման ժամանակ սեփականատիրոջ կամքի բացակայությունը պետք է լինի աներկբա, հստակ և անփոփոխելի և որևէ կերպ չպետք է շփոթեցվի օտարելուն ուղղված կամքի արտահայտման ձևի հետ: Ընդ որում, աճուրդի և դրա արդյունքում կնքված գործարքի անվավերության պարագայում պետք է վերականգնվի սեփականատիրոջ՝ իր կամքով և հայեցողությամբ գույքը տնօրինելու իրավունքը, այնինչ այս դեպքում Կառավարության և Կոտայքի մարզպետի որոշումների գոյության և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների առկայության պայմաններում սեփականատիրոջ՝ գույքն աճուրդով օտարելու ձևավորված կամքն արդեն իսկ փոփոխման ենթակա չէ:

3.1.5. Այսինքն՝ պետությունը, իրականացնելով գույքն օտարելու նպատակի առկայությունը վկայող գործողություններ (հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին որոշման ընդունում, պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքից բխող իրավունքների գրանցում և այլն), չի կարող պնդել նշված գույքն իր տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ պետության կամքից դուրս եկած լինելու հանգամանքը՝ հղում կատարելով միայն գրանցման համար հիմք հանդիսացած գործարքի օրենքի պահանջի խախտմամբ կնքված լինելու՝ աճուրդն օրենսդրական որոշ ընթացակարգային պահանջների խախտմամբ անցկացված լինելու փաստին, իսկ օտարման գործընթացում պաշտոնատար անձի կողմից ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում աճուրդի ընթացակարգային կանոնների խախտման հիմքով աճուրդի անվավերությունը չի կարող վկայել այն մասին, որ վեճի առարկա գույքը դուրս է եկել պետության տիրապետումից՝ անկախ վերջինիս կամքից:

3.1.6. Վերաքննիչ դատարանը որոշել է, որ պետության կամքը չի խեղաթյուրվել և իրավաչափորեն հանգել է այն եզրակացության, որ այս դեպքերում բարեխիղճ ձեռք բերողը պաշտպանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված իրավունքի պաշտպանության ցանկացած եղանակով ներկայացված պահանջներից, այդ թվում՝ ոչ իրավաչափ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջից՝ անկախ գործարքի անվավերության հանգամանքից: Հետևաբար ոչ իրավաչափ կամ օրենքի խախտմամբ կնքված գործարքի անվավերության հետևանքով շղթայական անվավեր

ճանաչվող մյուս՝ երրորդ անձի հետ կնքված պայմանագրերի անվավերության հետևանքներ կիրառվել չեն կարող, ուստիև մինչև իրավունքի խախտման պահը գոյություն ունեցող նախկին վիճակի վերականգնում տեղի ունենալ չի կարող, քանի որ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված գործարքի անվավերության երկկողմանի ռեստիտուցիա կատարելու և գույքը հայցվորին վերադարձնելու օրինական հիմքի վրա հիմնված օբյեկտիվ անհնարիություն՝ Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքի պաշտպանության նորմ-երաշխիք համարվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի ուժով:

3.1.7. Խնդրել է Դատախազության ներկայացրած վճռաբեկ բողոքը մերժել:

3.2.1. Ընկերությունը վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

3.2.2. Հիմք ընդունելով սույն գործով Վերաքննիչ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ անհիմն է համարում Դատախազության վկայակոչած փաստարկներն այն մասին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 275-րդ հոդվածների սխալ կիրառման արդյունքում առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև աճուրդի իրականացման ընթացքում որոշակի խախտումների դեպքում առկա է կամքի և կամահայտնության անհամապատասխանություն:

3.2.3. Թեպետ կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել գործարքների անվավերության, գույքի օտարման կամքի առկայությունը չի կարող ժխտվել այդ կամքի իրագործմանն ուղղված՝ կամահայտնության բովանդակությունը կազմող գործողությունների իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելու հանգամանքով, այսինքն՝ կամահայտնության ընթացքում թույլ տրված խախտումները չեն կարող վկայել գույքն օտարելու կամքի բացակայության մասին: Սեփականատիրոջ կամքի բացակայությունը գույքն օտարելու վերաբերյալ չի կարող հաստատված համարվել աճուրդն օրենքի պահանջների խախտմամբ իրականացված լինելու փաստի ուժով:

3.2.4. Սույն գործի փաստերից հետևում է, որ պետությունը հողամասերն օտարելու վերաբերյալ իր կամքը դրսևորել է թիվ 422-Ն և թիվ 67 որոշումների միջոցով, ինչպես նաև ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից առուվաճառքի պայմանագրերով ձեռք բերված անշարժ գույքերի նկատմամբ պատասխանողների սեփականության իրավունքի պետական գրանցումներով, և եթե նշված որոշումների կատարման ընթացքում որևէ պաշտոնատար անձի կողմից թույլ են տրվել աճուրդի կազմակերպման կարգի խախտումներ, ապա դա չի նշանակում, որ հողամասերն աճուրդով օտարվել են անկախ նախկին սեփականատիրոջ (պետության) կամքից:

3.2.5. Ընկերությունը հողամասերը ձեռք է բերել որպես գրավառու՝ գրավի պայմանագրով սահմանված կարգով արտադատական բռնագանձում տարածելով դրանց վրա՝ հողամասերով ապահովված իր դրամային պահանջները բավարարելու նպատակով: Այսինքն, Ընկերությունը հողամասերի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք ոչ թե հիփոթեքի պայմանագրերի հիմքով, այլ՝ այդ պայմանագրերի ուժով ձեռք բերած գրավի իրավունքի իրացման արդյունքում գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու հիմքով, ինչի արդյունքում հայցվորի իրավունքը դադարել է օրինական այնպիսի ճանապարհով, որը չի հանդիսացել աճուրդի և գործարքի անվավերության անմիջական հետևանք, հետևաբար աճուրդն անվավեր ճանաչելու և դրա անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը չէր կարող համարվել գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու

գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և ռեստիտուցիայի միջոցով նախկին վիճակը վերականգնելու գործընթացի մաս:

3.2.6. Բացի այդ, Դատախազության կողմից գրավի առարկայի բռնագանձման արդյունքում հողամասերի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի ծագման փաստն ընդունվել է թե՛ Դատարանում, թե՛ Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում:

3.2.7. Դատախազությունն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է գործարքի անվավերության պարագայում ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքերի հետևանքները, իսկ սույն գործով ոչ թե առկա է ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինություն, այլ գործարքի առհասարակ անվավերության հետևանք կիրառելու օբյեկտիվ անհնարինություն՝ պայմանավորված գույքը բարեխիղճ ձեռք բերած անձի ընդդեմ նախկին սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության իրացման և այդ իրավունքի գերակայության ուժով, ինչպես նաև հողամասերի բռնագանձման օրինականությունը վիճարկող համապատասխան պահանջի բացակայության հանգամանքով: Այսինքն՝ գործարքի անվավերության հետևանք չկիրառելը չի կարող նույնացվել ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության հետ:

3.2.8. Խնդրել է վճարեկ բողոքն ամբողջությամբ մերժել և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 01.11.2024 թվականի որոշումը:

4. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

4.1. ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ անտառային ֆոնդի հողերից 55.88 հեկտարը հանգստի կազմակերպման նպատակով փոխադրվել է հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների (**հատոր 1-ին, գ.թ. 94**):

4.2. ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշման համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ, 68-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ կառավարության 29.12.2003 թվականի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746 որոշման 2-րդ կետի գ/ ենթակետի պահանջներով, որոշվել է՝

1. Համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 48.57 հա հանգստի կազմակերպման նպատակով ներկայացնել օտարման՝ աճուրդային կարգով:

2. Աճուրդի ներկայացվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի տարածագնահատման գոտիականության գործակիցներին և այդ համայնքներում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմաններին համապատասխան. Աղավաճորի 30 տոկոսի չափով (1 քմ – 243 դրամ), Արտավազի համայնքին հարակից՝ 50 տոկոսի չափով (1 քմ – 111 ՀՀ դրամ), Արզականի համայնքին հարակից «Աղվերան» զանգվածում՝ 50 տոկոսի

չափով (1 քմ–1472 ՀՀ դրամ), Հրազդանի քաղաքային համայնքին հարակից՝ 50 տոկոսի չափով (1 քմ – 612 ՀՀ դրամ):

3. Աճուրդի ներկայացվող հողամասերը բաժանել լոտերի և դրանց օտարման վերաբերյալ սահմանված կարգով հայտարարություն տեղադրել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

4. Աճուրդի կազմակերպման և անցկացման օր նշանակել 26.05.2007 թվականը:

5. Աճուրդի կազմակերպման և իրականացման նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով՝ Կ. Շահգալոյան՝ մարզպետ, հանձնաժողովի նախագահ, Լ. Պետրոսյան՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, Ռ. Հովսեփյան՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար, Մ. Պետրոսյան՝ մարզպետարանի գլխավոր հաշվապահ, հանձնաժողովի անդամ (**հատոր 1-ին, գ.թ. 93**):

4.3. Վաճառող Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանի և գնորդ Անահիտ Օնիկի Առաքելյանի միջև 31.05.2007 թվականին կնքվել է հողամասի առուվաճառքի մասին պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել 1.85 հա, որից հատուկ պահպանվող տարածք լոտ թիվ 19 հողամաս, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 11.508.500 ՀՀ դրամ, իսկ 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 2592 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 23-24**):

4.4. Սեփականության իրավունքի գրանցման թիվ²⁹ վկայականի համաձայն՝ հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 17 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2592 պայմանագրի հիման վրա,³⁰ հողամասի նկատմամբ 21.06.2007 թվականին գրանցվել է Անահիտ Օնիկի Առաքելյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական³¹ մատյանի³² համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 25-27**):

4.5. Անահիտ Օնիկի Առաքելյանի և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև 20.12.2007 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառող կողմը Նիկիտա Աբրահամյանին է վաճառել սեփականության իրավունքով իրեն պատկանող³³ ճանապարհի ծախս լանջում գտնվող հանգստի համար նախատեսված հողամասը՝ 1.85 հա մակերեսով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վաճառվող անշարժ գույքը կողմերի կողմից գնահատվել է 47.000.000 ՀՀ դրամ, որը գնորդ կողմը պարտավորվել է վճարել պայմանագրի վավերացման պահին: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 7318 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 28-29**):

4.6. Սեփականության իրավունքի գրանցման թիվ³⁴ վկայականի համաձայն՝

²⁹ Առկա է անձնական տվյալ:

³⁰ Առկա է անձնական տվյալ:

³¹ Առկա է անձնական տվյալ:

³² Առկա է անձնական տվյալ:

³³ Առկա է անձնական տվյալ:

³⁴ Առկա է անձնական տվյալ:

20.12.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 7318 պայմանագրի հիման վրա,
.....³⁵ հողամասի նկատմամբ 24.12.2007 թվականին գրանցվել է Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական³⁶ մատյանի ---³⁷ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 30-32**):

4.7. Վաճառող Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանի և գնորդ Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի միջև 31.05.2007 թվականին կնքվել է հողամասի առուվաճառքի մասին պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել 1.3 հա, որից հատուկ պահպանվող տարածք լոտ թիվ 18 հողամաս, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 8.093.000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 2593 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 43-44**):

4.8. Սեփականության իրավունքի գրանցման թիվ³⁸ վկայականի համաձայն՝ հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 16 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2593 պայմանագրի հիման վրա,
.....³⁹ հողամասի նկատմամբ 21.06.2007 թվականին գրանցվել է Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական⁴⁰ մատյանի ---⁴¹ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 45-47**):

4.9. Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև 20.12.2007 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառող կողմը Նիկիտա Աբրահամյանին է վաճառել սեփականության իրավունքով իրեն պատկանող⁴² գտնվող հանգստի համար նախատեսված հողամասը՝ 1.3 հա մակերեսով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վաճառվող անշարժ գույքը կողմերի կողմից գնահատվել է 40.000.000 ՀՀ դրամ, որը գնորդ կողմը պարտավորվել է վճարել պայմանագրի վավերացման պահին: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 7316 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 48-49**):

4.10. Սեփականության իրավունքի գրանցման թիվ⁴³ վկայականի համաձայն՝ 20.12.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 7316 պայմանագրի հիման վրա,
.....⁴⁴ հողամասի նկատմամբ 24.12.2007 թվականին գրանցվել է Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական⁴⁵

³⁵ Առկա է անձնական տվյալ:
³⁶ Առկա է անձնական տվյալ:
³⁷ Առկա է անձնական տվյալ:
³⁸ Առկա է անձնական տվյալ:
³⁹ Առկա է անձնական տվյալ:
⁴⁰ Առկա է անձնական տվյալ:
⁴¹ Առկա է անձնական տվյալ:
⁴² Առկա է անձնական տվյալ:
⁴³ Առկա է անձնական տվյալ:
⁴⁴ Առկա է անձնական տվյալ:
⁴⁵ Առկա է անձնական տվյալ:

մատյանի ⁴⁶ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 50-52**):

4.11. Փոխատու «Ուիլիամս Քոնսալթինգ ԻՆԿ» ընկերության և փոխառու Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև 18.12.2007 թվականին կնքվել է թիվ # 1-12/7 փոխառության պայմանագիր, որի համաձայն՝ փոխատուն համաձայնել է Հայաստանի Հանրապետության **.....**⁴⁷ հասցեում գտնվող, մոտ 5 հեկտար ընդհանուր մակերեսով անշարժ գույքի ձեռքբերման որոշակի նպատակով՝ ոչ ուշ քան 10.01.2008 թվականը վարկ տրամադրել փոխառուին 2.700.000 ԱՄՆ դոլար ընդհանուր մայր գումարով (փոխառություն)՝ 2 ամսով: Առաջին մասը՝ 1.800.000 ԱՄՆ դոլարը պետք է տրամադրվի 20.12.2007 թվականը կամ դրանից առաջ, երկրորդ մասը՝ 900.000 ԱՄՆ դոլարը՝ մինչև 25.12.2007 թվականը կամ դրանից առաջ (**հատոր 17-րդ, գ.թ. 36-38**):

4.12. «Ուիլիամս Քոնսալթինգ ԻՆԿ» ընկերության (ցեղենտ) և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերության (ցեսիոներ) միջև 21.07.2008 թվականին կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ցեղենտը ցեսիոներին է զիջել 18.12.2007 թվականին կնքված թիվ # 1-12/7 փոխառության պայմանագրով պահանջի իրավունքը (**հատոր 17-րդ, գ.թ. 41-45**):

4.13. «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերության և Նիկիտա Ավետիկի Աբրահամյանի միջև 17.03.2009 թվականին կնքված թիվ 1598 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ 18.12.2007 թվականին կնքված փոխառության պայմանագրով «Ուիլիամս քոնսալթինգ ԻՆԿ» ընկերությունը Նիկիտա Աբրահամյանին է տրամադրել 2.700.000 ԱՄՆ դոլար գումար փոխառություն մինչև 30.04.2009 թվականը ժամկետով: Փոխառության պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման ապահովման համար գրավատուն, ի թիվս այլնի, գրավատուն գրավ է հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող **.....**

⁴⁸ հողամասը և **.....**⁴⁹ հողամասը (**հատոր 1-ին, գ.թ. 36-41, հատոր 17-րդ, գ.թ. 53-59**):

4.14. 15.05.2009 թվականին Նիկիտա Ավետիկի Աբրահամյանը ծանուցվել է Ընկերության հանդեպ պարտավորությունների չկատարման արդյունքում գրավադրված գույքերի բռնագանձման մասին (**հատոր 17-րդ, գ.թ. 50**):

4.15. Սեփականության իրավունքի գրանցման թիվ **.....**⁵⁰ վկայականի համաձայն՝ **.....**⁵¹ հողամասի նկատմամբ գրանցվել է «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական **.....**⁵² մատյանի **.....**⁵³ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 33-35**):

4.16. Սեփականության իրավունքի գրանցման թիվ **.....**⁵⁴ վկայականի համաձայն՝ **.....**⁵⁵ հողամասի նկատմամբ գրանցվել է «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի

⁴⁶ Առկա է անձնական տվյալ:

⁴⁷ Առկա է անձնական տվյալ:

⁴⁸ Առկա է անձնական տվյալ:

⁴⁹ Առկա է անձնական տվյալ:

⁵⁰ Առկա է անձնական տվյալ:

⁵¹ Առկա է անձնական տվյալ:

⁵² Առկա է անձնական տվյալ:

⁵³ Առկա է անձնական տվյալ:

⁵⁴ Առկա է անձնական տվյալ:

⁵⁵ Առկա է անձնական տվյալ:

աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական⁵⁶ մատյանի ...⁵⁷ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 53-55**):

4.17. Վաճառող Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանի և գնորդ Մարտուն Սարգսի Մաթևոսյանի միջև 31.05.2007 թվականին կնքվել է հողամասի առուվաճառքի մասին պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել 0.55 հա, որից հատուկ պահպանվող տարածք լոտ թիվ 16 հողամաս, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 3.435.500 ՀՀ դրամ, իսկ 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 2586 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 57-58**):

4.18. Սեփականության իրավունքի գրանցման թիվ⁵⁸ վկայականի համաձայն՝ հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 14 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2586 պայմանագրի հիման վրա,⁵⁹ հարող տարածք՝ հանգստի համար նախատեսված նպատակային նշանակությամբ 0.55 հա հողամասի նկատմամբ 14.06.2007 թվականին գրանցվել է Մարտուն Սարգսի Մաթևոսյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական⁶⁰ մատյանի ...⁶¹ համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 59-62**):

4.19. Վաճառող Մարտուն Սարգսի Մաթևոսյանի և գնորդ Աիդա Մուխայելի Սամսոնյանի միջև 26.09.2007 թվականին կնքվել է անշարժ գույքի /հողի/ առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ վաճառողը վաճառել է, իսկ գնորդը ձեռք է բերել⁶² հարող տարածք՝ հանգստի համար նախատեսված նպատակային նշանակությամբ 0.55 հա հողամաս, որի գինը կողմերի համաձայնությամբ կազմել է՝ 7.150.000 ՀՀ դրամ: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից և գրանցվել սեղանամատյանում 4311 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 63**):

4.20. Սեփականության իրավունքի գրանցման թիվ⁶³ վկայականի համաձայն՝ 26.09.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 4311 պայմանագրի հիման վրա,⁶⁴ հարող տարածք՝ հանգստի համար նախատեսված նպատակային նշանակությամբ 0.55 հա հողամաս նկատմամբ 08.10.2007 թվականին գրանցվել է Աիդա Մուխայելի Սամսոնյանի սեփականության իրավունքը՝ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման գրանցման միասնական⁶⁵ մատյանի ...⁶⁶ համարի տակ: Աիդա Մուխայելի Սամսոնյանի 29.08.2017 թվականի դիմումի հիման վրա թիվ⁶⁷ վկայականներով անշարժ գույքերը միավորվել են

⁵⁶ Առկա է անձնական տվյալ:
⁵⁷ Առկա է անձնական տվյալ:
⁵⁸ Առկա է անձնական տվյալ:
⁵⁹ Առկա է անձնական տվյալ:
⁶⁰ Առկա է անձնական տվյալ:
⁶¹ Առկա է անձնական տվյալ:
⁶² Առկա է անձնական տվյալ:
⁶³ Առկա է անձնական տվյալ:
⁶⁴ Առկա է անձնական տվյալ:
⁶⁵ Առկա է անձնական տվյալ:
⁶⁶ Առկա է անձնական տվյալ:
⁶⁷ Առկա է անձնական տվյալ:

և 01.09.2017 թվականին գրանցվել որպես⁶⁸ հողամաս հասցեով անշարժ գույք (հատոր 1-ին, գ.թ. 64-67, հատոր 6-րդ, գ.թ. 87-88):

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

5.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝

1) Օրենքով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչվելու պարագայում սեփականատիրոջ կամքից անկախ նրա տիրապետումից գույքի դուրս գալու պայմանի բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու իրավունքի իրացման հնարավորությանը՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

2) Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու անհնարինությամբ պայմանավորված գործարքի անվավերության հետևանքների կիրառման հարցին:

1) 5.2. Վճռաբեկ դատարանն առաջին հերթին անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոգրյալ առաջին հարցադրմամբ առաջադրված՝ սեփականատիրոջ կամքից անկախ նրա տիրապետումից գույքի դուրս գալու պայմանի բովանդակության բացահայտմանը: Այսպես.

5.3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար

⁶⁸ Առկա է անձնական տվյալ:

հիմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: (...) Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

5.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

5.5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

5.6. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: **«Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է:** Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (տես Նեյի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

5.7. Վերը նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հանդես են գալիս հավասար հիմունքներով և որպես այդ հարաբերությունների ինքնուրույն մասնակից՝ օգտվում են հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքներով ամրագրված երաշխիքներից: Պետությունը (համայնքը)՝ որպես սեփականատեր, բացառիկ իրավունք ունի իր հայեցողությամբ գույքի նկատմամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, որը դրսևորվում է օրենսդրի կողմից չսահմանափակված եղանակով տնօրինելու միջոցով, այն է՝ իր գույքը որպես սեփականություն այլ անձանց օտարելով, այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները նրանց փոխանցելով, գույքը գրավ դնելով կամ այլ եղանակով տնօրինելով: Գույքի ճակատագիրը որոշելուն ուղղված այդ գործողությունների կատարմամբ պետությունը (համայնքը) արտահայտում է իր ներքին ցանկությունը՝ կամքը, որը դրսևորվում է իրավական հետևանքներ առաջացնող գործարքներ կնքելու միջոցով:

5.8. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը, եթե այլ բան չի բխում դրա էությունից, կարող է կնքվել սակարկությունների միջոցով: Պայմանագիրը կնքվում է սակարկություններում հաղթած անձի հետ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որպես սակարկությունների կազմակերպիչ՝ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքում կամ այլ օրենքում նշված դեպքերում գույքը կամ գույքային իրավունքը վաճառելու մասին պայմանագրերը կարող են կնքվել միայն սակարկությունների միջոցով:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ սակարկություններն անց են կացվում աճուրդի կամ մրցույթի ձևով: Աճուրդում հաղթած է համարվում առավել բարձր գին առաջարկած անձը, իսկ մրցույթում՝ այն անձը, որը սակարկությունների կազմակերպիչների կողմից նախապես նշանակված մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Սակարկությունների ձևը որոշում է վաճառվող գույքի սեփականատերը կամ իրացվող գույքային իրավունք տիրապետողը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

5.9. Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ նույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդների կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է Քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենսգրքով և հրապարակային սակարկությունների մասին օրենքով:

5.10. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով

սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սակարկություններն անվավեր ճանաչելը հանգեցնում է սակարկություններում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

5.11. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը, շահագրգիռ անձի պահանջով, դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

5.12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երբ աճուրդով վաճառքի է դրվում պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասը, դրանով պետությունն իրացնում է գույքն օտարելուն ուղղված իր կամքը:

Յուրաքանչյուր դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելուց ու խախտման բնույթը, ծանրությունը և հետևանքները գնահատման առարկա դարձնելուց հետո դատարանը հաստատված է համարում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնների խախտմամբ աճուրդի անցկացված լինելը, ապա այն ճանաչվում է անվավեր և հանգեցնում աճուրդում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

Այսինքն, երբ գույքի սեփականատերն արդեն իսկ արտահայտել է գույքն օտարելու իր կամքը, սակայն գույքի օտարման գործընթացն իրականացվում է պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի՝ օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ, իսկ այդ խախտումների առկայությունը կարող է հանգեցնել կնքված գործարքի անվավերության, ապա այս դեպքում չի կարող խոսք լինել սեփականատիրոջ՝ գույքն օտարելու կամքի խաթարման մասին:

Այլ կերպ ասած, եթե օրենսդիրը նախատեսել է պետության և (կամ) համայնքի կողմից պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի հստակ եղանակ, որի ընթացքը սակայն զուգորդվել է որոշակի խախտումներով, ապա չի կարող համարվել, որ նշված հողամասը տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ սեփականատիրոջ կամքից:

Այսինքն՝ աճուրդի միջոցով պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու դեպքում անհրաժեշտ է միայն սեփականատիրոջ՝ գույքն օտարելուն ուղղված կամքը, որպիսի պայմանի առկայության պարագայում կարող ենք խոսել սեփականատիրոջ՝ գույքն օտարելու նպատակի և ցանկության իրագործման մասին:

5.13. Անդրադառնալով սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու իրավունքի իրացման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

5.14. Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: (...):

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5.15. Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ի տարբերություն քաղաքացիաիրավական շրջանառության մյուս մասնակիցների, որոնք ազատ են անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանն ու օրենքներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

5.16. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկում անդրադառնալով օրինականության սկզբունքին, նշել է, որ այս սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա. (...): Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առնչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ (*տես «Ինտելեքտուալ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ Սահմանադրությամբ ամրագրված է առանցքային նշանակություն ունեցող սահմանադրական այն պահանջը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները պետք է սահմանված լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով (*տես Ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Վարդանի Չարթոնքը» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/11193/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

5.17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր սեփականությունից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

5.18. Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես

սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային իրավական նորմերի ուժով:

5.19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախատեսել է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում: Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով,
2. բխում է հանրային շահից,
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*տես the Former king of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար, առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*տես James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*տես James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*): Պետք է լինի համաչափության ողջամիտ կապ օգտագործվող միջոցների և անձին իր ունեցվածքից զրկող ցանկացած միջոցառմամբ իրագործվող նպատակի միջև (*տես Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 38-րդ կետ*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերն ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց, քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդվող նպատակի և միջամտության համարժեքության հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*տես the Former king of Greece and others v. Greece գործով Եվրոպական*

դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ, ինչպես նաև Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ):

Արձանագրության 1-ին պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված կանոնի կիրառումը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ սեփականության իրավունքից զրկումը «բխում է հանրային շահից» և «ենթարկվում է օրենքով նախատեսված պայմաններին» (տե՛ս, օրինակ, *Brumărescu v. Romania* գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, 78-րդ կետ):

Եվրոպական դատարանը հաստատել է, որ «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է պատշաճ մակարդակի մատչելի և բավարար հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն ու դրանց համապատասխանություն (տե՛ս *Lithgow and Others v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, 102-րդ կետ):

5.20. ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հոչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ ամրագրելով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից զրկելու հնարավորությունը միայն դատական կարգով (տե՛ս *Գևորգ Գևորգյանն ընդդեմ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2434/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2009 թվականի որոշումը*):

5.21. Եվրոպական դատարանը բազմիցս հաստատել է, որ սեփականության նկատմամբ ցանկացած միջամտություն, բացի օրինական լինելուց և օրինական նպատակ ունենալուց, պետք է նաև բավարարի համաչափության պահանջը: Միջամտության համաչափությունը ենթադրում է համայնքի ընդհանուր շահի պահանջների և անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության հրամայականների միջև արդարացի հավասարակշռության գոյություն: **Այս հավասարակշռությունը խախտվում է, եթե շահագրգիռ անձը ստիպված է լինում կրել «հատուկ և չափազանց մեծ բեռ»:** Արդար հավասարակշռության գոյության ստուգումը պահանջում է ընդհանուր վերլուծություն՝ կապված տվյալ գործով առկա տարբեր շահերի հետ: Դատարանների կողմից դիտարկվող հանգամանքները տարբեր գործերում կարող են տարբեր լինել՝ կախված փաստական իրավիճակից և կիրառված միջամտության բնույթից: Համաչափության վերլուծության շրջանակում, Եվրոպական դատարանը, բացի իշխանությունների վարքից, հաճախ դիտարկում է նաև **գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը, մասնավորապես՝ թե որքանով է նա եղել մեղավոր կամ որքան զգուշավորություն է ցուցաբերել** (տե՛ս *Agosiv. The United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 24.10.1986 թվականի վճիռը, 54-րդ կետ): Մասնավորապես, **անշարժ գույք ձեռք բերելիս անձը պետք է պատշաճ զգուշություն ցուցաբերի, եթե կան ակնհայտ նշաններ, որոնք ցույց են տալիս, որ սեփականության փոխանցման շղթայի ավելի վաղ փուլում կարող էին լինել խարդախություններ:** Դատարանը միևնույն ժամանակ ուսումնասիրում է միջամտության հետևանքները տվյալ անձի համար և, եթե տեղի է ունեցել գույքի կորուստ, պարզում է՝ արդյո՞ք փոխհատուցում է տրամադրվել և ի՞նչ պայմաններով (տե՛ս *Gavrilova et autres c. Russie* գործով Եվրոպական դատարանի 16.03.2021 թվականի վճիռը, 74-րդ կետ):

Եվրոպական դատարանը գտել է, որ բարեխղճորեն գործող անձը, որպես կանոն, իրավունք ունի հիմնվելու այն հայտարարությունների վրա, որոնք արվել են պետական կամ հանրային պաշտոնյաների կողմից, և որոնք, ըստ երևույթին, ունեն նման հայտարարություններ անելու լիազորություն, որ պահպանվել են ներքին կանոններն ու ընթացակարգերը, բացառությամբ

այն դեպքերի, երբ դա հստակ հակասում է հանրությանը հասանելի փաստաթղթերին (օրենսդրությանը), կամ եթե անձը այլ կերպ գիտեր կամ պետք է իմանար, որ որոշակի պաշտոնատար անձ չունի իրավասություն՝ ստանձնելու պետության անունից իրավական պարտավորություն:

Անձի պարտականությունը չպետք է լինի ապահովել, որ պետական մարմինները հետևեն իրենց սեփական ներքին կանոններին և ընթացակարգերին, որոնք անհասանելի են հանրությանը և որոնք հիմնականում նախատեսված են պետական մարմնի հաշվետվողականությունն ու արդյունավետությունն ապահովելու համար (*տե՛ս Trgo v. Croatia գործով Եվրոպական դատարանի 11.06.2009 թվականի վճիռը, 67-րդ կետ, Gashi v. Croatia գործով Եվրոպական դատարանի 13.12.2007 թվականի վճիռը, 40-րդ կետ*):

Լավ կառավարման սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խոչընդոտի իշխանություններին ուղղելու պատահական սխալները, եթե նույնիսկ դրանք առաջացել են իրենց իսկ անփութության հետևանքով: Այնուամենայնիվ, **հին «սխալը» ուղղելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափորեն խանգարի այն նոր իրավունքին, որը ձեռք է բերվել անձի կողմից՝ բարեխղճորեն հիմնվելով պետական մարմնի գործողությունների օրինականության վրա:** Այլ կերպ ասած, պետական մարմինները, որոնք չեն կարողանում կիրառել կամ պահպանել իրենց սեփական ընթացակարգերը, չպետք է օգտվեն իրենց սխալներից կամ խուսափեն իրենց պարտավորություններից: Պետական մարմնի կողմից թույլ տրված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի ինքը՝ պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անձանց հաշվին: Սխալմամբ փոխանցված գույքի սեփականության իրավունքը չեղյալ համարելու համատեքստում, լավ կառավարման սկզբունքը կարող է ոչ միայն իշխանություններին պարտադրել անհապաղ գործել իրենց սխալը շտկելու համար, այլև կարող է պահանջել համարժեք փոխհատուցման կամ այլ տեսակի համապատասխան փոխհատուցման վճարում դրա նախկին բարեխիղճ տիրոջը (*տե՛ս Lelas v. Croatia գործով Եվրոպական դատարանի 20.05.2010 թվականի վճիռը, 74-րդ կետ, Maksymenko and Gerasymenko v. Ukraine գործով Եվրոպական դատարանի 16.05.2013 թվականի վճիռը, 64-րդ կետ և Bogdel v. Lithuania գործով Եվրոպական դատարանի 26.11.2013 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Պետական մարմինները, որոնք դիմողներին տրամադրել էին համապատասխան փաստաթղթերն ու թույլտվությունները, չեն հայտնաբերել հողամասերի օտարման գործընթացում թույլ տրված խախտումները, դրանք ավելի ուշ արձանագրվել են դատարանների կողմից: Հետևաբար Եվրոպական դատարանը բավարար հիմնավորված չի համարել Կառավարության այն պնդումը, որ դիմորդներն ավելի մանրամասն ստուգելու դեպքում կպարզեին, որ տեղական ինքնակառավարման մարմինն իրավասու չէր վաճառելու տվյալ հողամասերը, այն դեպքում, երբ այդ հանգամանքը չեն հայտնաբերել իրավասու այլ պետական մարմիններ (*տե՛ս Ibrahimbeyov and others v. Azerbaijan գործով Եվրոպական դատարանի 16.02.2023 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Բելովան ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքի 301-րդ և 302-րդ հոդվածներին [Ուրիշի կողմից անօրինական տիրապետումից գույքի հետ պահանջելը և բարեխիղճ ձեռք բերողից գույքի հետ պահանջելը]՝ ներպետական դատարանների մեկնաբանությամբ: Դատարանը այնուհետև գտնում է, որ միջամտությունը բխում է հանրային շահերից, քանի որ, ինչպես բացատրում են ներպետական իշխանությունները և Կառավարությունը, պետությունը

մտադիր էր վերադարձնել այն գույքը, որը կորցրել էր սխալ կառավարման արդյունքում և օգտագործել այն խոշոր միջազգային սպորտային իրադարձությունների անցկացման համար ու պաշտպանել բնությունը: Դատարանը գտնում է, որ **գույք ձեռք բերողը պետք է հետամուտ լիներ պարզելու գույքի ծագումը՝ հնարավոր բռնագանձման պահանջներից խուսափելու համար, իսկ դա անելու դեպքում կբացահայտեր, որ մեկ տարվա ընթացքում երեք անգամ գույքի սեփականատեր է փոխվում»** (տե՛ս *Belova v. Russia* գործով Եվրոպական դատարանի 15.09.2020 թվականի վճիռը, 41-րդ կետը):

Եթե դատական վարույթում հայցվոր սեփականատերն ապացուցում է, որ ձեռք բերողը պետք է ողջամտորեն կասկածեր գույքը վաճառողի՝ այն տնօրինելու իրավասության վերաբերյալ, ապա ձեռք բերողի բարեխղճությունը մերժվում է (տե՛ս *Seregin and other v. Russia* գործով Եվրոպական դատարանի 16.03.2021 թվականի վճիռը, 64-րդ կետը):

5.22. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ գույքը ձեռք բերողը կարող է օրենսդրության տեսանկյունից դիտվել որպես բարեխիղճ ձեռք բերող, եթե գույքը ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ: Օրենսդիրն ամրագրել է այն ելակետային դրույթը, որ այս պարագայում գույքը հետ չի կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ նախապայմանների առկայության պարագայում, այնուամենայնիվ, հնարավորություն է նախատեսված նման գույքը հետ պահանջելու բարեխիղճ ձեռք բերողից, ինչը նպատակ է հետապնդում հավասարակշռելու նաև գույքի սեփականատիրոջ իրավունքները՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում հնարավոր է, որ գույքը վերջինիս տիրապետությունից դուրս եկած լինի անկախ սեփականատիրոջ կամքից: Այս պարագայում օրենսդիրն առաջնորդվել է այն դրույթով, որ սեփականատերը նպատակ չի ունեցել գույքը տնօրինելու օտարման եղանակով: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը սահմանել է, որ բարեխիղճ ձեռք բերողից սեփականատերն իրավունք ունի տվյալ գույքը պահանջելու հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը ձեռք է բերվել հատուցմամբ,
2. գույքը ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
3. գույքը ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,

4. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վերոգրյալ նախապայմանների միաժամանակյա առկայությունը բավարար է, որպեսզի սեփականատերը վերականգնի իր սեփականության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ գույք ձեռք բերողը հանդիսացել է բարեխիղճ ձեռք բերող: **Հետևաբար նշված նախապայմանները պետք է քննարկման առարկա դարձվեն և պարզվեն գործի քննության ընթացքում** (տե՛ս Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյաններն ընդդեմ Վահագն Սահակյանի, երրորդ անձ Երևանի «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի թիվ ԵՇԴ/0056/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջելու իրավական հարցին, նշել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներին հակասող գործարքն

անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել նրա կամքից անկախ պատճառներով (*տես Լատուրա Ամիրյանն ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի, Վիլեն Գաբրիելյանն ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի և Գոհար Պողոսյանի, Եղիսաբեթ Ալավերդյանն ընդդեմ Լատուրա Ամիրյանի, Վիլեն Գաբրիելյանի, Լիլիթ Սևոյանի և ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ջեյթուն փարաձքային սփորարաժաման թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ/3359/02/21 քաղաքացիական գործով 03.08.2023 թվականի որոշմամբ հարկ է համարել հավելել, որ բարեխիղճ ձեռք բերողի հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի կողմերի վարքագծի իրավաչափությունը: Այս առումով, Եվրոպական դատարանը գտել է, որ իրավասու պետական մարմինները պետք է հնարավորություն ունենան ուղղել անցյալում կատարված սխալները, թեկուզև դրանք կատարված լինեն սեփական անփութության հետևանքով: **Բարեխիղճ ձեռք բերողի առումով պետք է հաշվի առնել, թե ձեռք բերողն անշարժ գույք ձեռքբերելիս որքանով է զգուշավորություն և զգոնություն դրսևորել, երբ առկա են ակնհայտ նշաններ ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ** (*տես Vukušić v. Croatia գործով Եվրոպական դատարանի 31.05.2016 թվականի վճիռը, 64-րդ կետ*):

5.23. Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետության լավ կառավարում ասելով նկատի է առնվում պետական իշխանությունների այն գործունեությունը, որի հիմքում ընկած է օրինականությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու արդարությունը՝ ի կատարումն Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու ու պաշտպանելու հանրային իշխանության պարտականության, որպիսի պարագայում անձանց մոտ առաջանում է համոզմունք՝ վստահելու պետական մարմինների գործունեության արդյունքին: Այլ կերպ ասած՝ լավ կառավարումը պետության և քաղաքացու միջև վստահելի ու պատասխանատու հարաբերությունների հիմքն է:

Պետության կողմից սեփականության իրավունքը պաշտպանելու պարտավորության ու երաշխիքի առկայության հրամայականով պայմանավորված՝ սեփականության իրավունքի սահմանափակումը կարող է տեղի ունենալ միայն այդ իրավունքի սահմանափակում նախատեսող իրավունքի գերակայությանը համապատասխանող օրենքի առկայության պարագայում, երբ սեփականության իրավունքին միջամտություն ու սահմանափակումը համաչափ է և հետապնդում է հանրային շահերից բխող իրավաչափ նպատակ: Համաչափության սկզբունքի պահպանված լինելու տեսանկյունից գնահատվում է պետական մարմինների կողմից լավ կառավարման սկզբունքի պահպանված լինելը, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ բարեխիղճ վարքագիծը՝ իր իրավունքներն իրացնելու ընթացքում զգոնություն և զգուշավորություն դրսևորելու առումով:

Մինևույն ժամանակ սեփականության իրավունքին համաչափ միջամտությունը պահանջում է հանրային շահի և անձի իրավունքների միջև բարենպաստ և արդարացի հավասարակշռություն: Պետությունը պետք է ճիշտ համադրի իր և անձի շահերը, որպեսզի պետական շահը չգերակշռի անձի հաշվին: Այդ հավասարակշռությունը խախտվում է այն դեպքում, երբ տեղի է ունենում անձի իրավունքներին ոչ համաչափ միջամտություն, քանի որ պետությունը, որպես լավ կառավարման պատասխանատու՝ կրելով սեփական սխալների

ոհակը, դրանք փորձում է շտկել՝ անձի վրա անհամաչափ ծանր բեռ դնելով:

Այսինքն, իրավունքին միջամտությունը, որը դրսևորվում է իշխանությունների կողմից իրենց նախկին սխալներն ուղղելու միջոցով, չպետք է խաթարի գույքի նոր սեփականատիրոջ՝ բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը, երբ վերջինս ունեցել է անհրաժեշտ բոլոր հիմքերը՝ հիմնվելու ու վստահելու պետական մարմինների գործողությունների իրավաչափությանն ու օրինականությանը:

Վճռաբեկ դատարանն ամբողջ վերագրյալի համատեքստում, վերահաստատելով նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, անդրադառնալով սեփականատիրոջ կամքից անկախ նրա տիրապետումից գույքի դուրս գալու պայմանի և անձի բարեխիղճության հարցի բացահայտմանը՝ արձանագրում է, որ օրենքով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործերով առկա փաստական հանգամանքների հաշվառմամբ, յուրաքանչյուր դեպքում դատարանները պետք է պարզեն ու գնահատման առարկա դարձնեն պետության գույքն օտարելուն ուղղված կամքի առկայության հարցը, որպիսի հանգամանքի պարզումը թույլ կտա որոշելու գույքը սեփականատիրոջը վերադարձնելու հնարավորությունը: Իսկ այն դեպքում, երբ դատարանը կպարզի ու հաստատված կհամարի, որ առկա է եղել պետության գույքն օտարելու կամքը, ապա այս դեպքում պարզման ենթակա հարց է դառնում նաև անձի բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքը: Ընդ որում, անձի բարեխիղճությունը գնահատելիս երբ հայցվորը հիմնավորում է, որ գույքը ձեռք բերողի մոտ պետք է առկա լիներ կասկած՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ, դատարանները պետք է քննության առարկա դարձնեն բարեխիղճ ձեռք բերողի գործողությունների բնույթը, մասնավորապես՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ ակնհայտ նշանների առկայության պարագայում որքանով են դրանք եղել ողջամտությամբ և պատշաճ զգուշավորությամբ իրականացված, արդյո՞ք անձը գույքը ձեռք բերելիս ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները դրա վերաբերյալ իրեն հասանելի ու բավարար տեղեկատվություն ստանալու համար:

2) 5.24. Հաջորդիվ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու անհնարինությամբ պայմանավորված գործարքի անվավերության հետևանքների կիրառման հարցին: Այսպես.

5.25. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

5.26. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով հանգել է այն եզրակացության, որ. «(...) ցանկացած քաղաքացիաիրավական գործարք կարող է դրա

մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե այն վավեր է, այսինքն՝ համապատասխանում է օրենքից բխող որոշակի պահանջների ու պայմանների: Այն դեպքում, երբ գործարքը չի համապատասխանում այդ պահանջներին, ապա այն համարվում է անվավեր կամ օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում (վիճահարույց գործարք), կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք): (...)

վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, քանի որ այդպիսի գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ օրենքով նախատեսված չեն (*տես նաև Վահագն Կապլանյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԼԴ/0435/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ. «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքվելու պահից: Նշված հոդվածի 2-րդ կետն ամրագրում է անվավեր գործարքի հետևանքները: Ըստ այդմ, անվավեր գործարքի կողմերը պարտավոր են վերադարձնել գործարքով ստացվածը (երկկողմանի կամ միակողմանի ռեստիտուցիա): (...) երբ հնարավոր չէ բնեղենով վերադարձնել գործարքով ձեռք բերվածը, ապա պետք է տրվի դրա դրամական փոխհատուցումը (*տես Սեդրակ Բարսեղյանն ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ. «(...) գործարքի անվավերության ընդհանուր հետևանքը երկկողմանի ռեստիտուցիայի կիրառումն է, որի ուժով գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Ընդ որում, ռեստիտուցիայի շրջանակներում պետք է դիտարկել ոչ միայն գործարքով ստացածը փաստացի վերադարձնելու կողմի պարտականությունը, ինչով վերացվում են անվավեր գործարքի կնքման (կատարման) փաստական հետևանքները, այլ նաև տվյալ գործարքի հիմքով այդ գործարքից բխող իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելը, սեփականության կամ այլ իրավական տիտղոսի փոփոխությունը վերացնելը՝ այդպիսով վերականգնելով մինչև տվյալ անվավեր գործարքի կնքումը եղած դրությունը:

(...) անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինություն և որպես հետևանք՝ դրա արժեքը դրամով հատուցելու պարտականություն, կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ անվավեր գործարքին հաջորդել է մեկ կամ մի քանի այլ գործարք, որոնց արդյունքում անվավեր գործարքով ստացածի նկատմամբ սեփականության տիտղոս է ձեռք բերել այլ՝ անվավեր գործարքի մասնակից չհանդիսացող անձ:

(...) **անվավեր գործարքին հաջորդող բոլոր գործարքները և դրանցից բխող իրավունքների պետական գրանցումներն անվերապահորեն («a priori») անվավեր ճանաչվել չեն կարող:** Նշվածը հավասարապես վերաբերում է նաև դատարանի կողմից կեղծ ճանաչված գործարքներին հաջորդող գործարքներին, որոնք, որպես օտարելու իրավունք չունեցող անձի կողմից կնքված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի իմաստով վիճահարույց են, այսինքն՝ վավեր են (առաջացնում են ակնկալվող իրավական հետևանքները) այնքան ժամանակ, **քանի դեռ համապատասխան անձի պահանջով անվավեր չեն ճանաչվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:**

(...) **գործարքի անվավերության հետևանքներ կիրառելիս դատարանները պետք է հաշվի առնեն, որ երկկողմանի ռեստիտուցիան չի կարող կիրառվել որպես հետևանք այն դեպքերում, երբ դատարանը հաստատված է համարել, որ անվավեր (առաջին) գործարքի կատարման արդյունքում վիճելի գույքը կրկին օտարվել է նոր ձեռք բերողներին հաջորդող (երկրորդ, երրորդ) գործարքներով:** Նման իրավիճակներում, հաշվի առնելով հայցի առարկան և հիմքը, **դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն** կամ անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինությանը պայմանավորված դրա արժեքը դրամով հատուցելու հարցը, կամ **հաջորդող վիճահարույց գործարքների անվավերությունն ու դրանց նկատմամբ անվավերության հետևանքներ կիրառելու հնարավորությունը**, կամ գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու (վինդիկացիայի) վերաբերյալ հայցապահանջը՝ **բոլոր դեպքերում նկատի ունենալով, որ կաշկանդված են դատարան ներկայացված հայցի առարկայով և հիմքերով** (տես Արմեն Դալլաքյանն ընդդեմ Աշոփ Գալստյանի, Մխիթար Մաթևոսյանի թիվ ԼԴ1/1286/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.04.2025 թվականի որոշումը):

5.27. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործարքի անվավեր ճանաչվելը, որպես տրամաբանական հաջորդականություն, իր հետ առաջացնում է նաև գործարքի հետ կապված անվավերության հետևանքներ, որպիսի պարագայում կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է մյուս կողմին վերադարձնել անվավեր ճանաչված գործարքով ամբողջ ստացածը: Այն դեպքում, երբ հայցապահանջում ներառված անվավերության հետևանք գործարքների նկատմամբ անվավերություն չի կիրառվում՝ հիմքում ունենալով, որ գույքի նոր սեփականատերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի իմաստով ճանաչվում է բարեխիղճ ձեռք բերող, ապա չի կարող սահմանվել միակողմանի ռեստիտուցիա, քանի որ դա կհանգեցնի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտման՝ խաթարելով երկկողմանի ռեստիտուցիայի էությունը:

Այլ կերպ ասած՝ անվավեր ճանաչված աճուրդի գործարքի մի կողմը, որը գործարքի անվավերության հետևանքով պետք է հետ ստանար և պարտավորվեր վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, փաստացի դա չի ստանում գույքի նոր սեփականատիրոջ բարեխիղճ ձեռք բերող ճանաչվելու հետևանքով, հետևաբար չի էլ կարող պարտավորվել վերադարձնելու այն, ինչն ստացել է գործարքով:

Այսինքն, աճուրդի անվավեր ճանաչման հետևանքով երկկողմանի ռեստիտուցիայի կիրառման պարագայում գործարքի կողմն օրենքի ուժով պարտավորվում է վերադարձնել գործարքով ստացածը և ունի դրա փոխադարձ վերադարձի ակնկալիք, մինչդեռ միակողմանի ռեստիտուցիայի կիրառման պարագայում՝ վերջինս զրկվում է համարժեք հակադարձ կատարում ստանալու հնարավորությունից՝ ամբողջությամբ միակողմանի կրելով գործարքի անվավերության հետևանքները:

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

5.28. Գործի փաստերից (տես վերը 4.1.-4.20.-րդ կետերը) հետևում է, որ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ, 68-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ կառավարության 29.12.2003 թվականի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746 որոշման 2-րդ կետի գ/ ենթակետի պահանջներով, որոշվել է՝ 1. Համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 48.57 հա հանգստի կազմակերպման նպատակով ներկայացնել օտարման՝ աճուրդային կարգով (...):

Հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 17 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2592 պայմանագրի հիման վրա, ...
.....⁶⁹ հողամասի նկատմամբ 21.06.2007 թվականին գրանցվել է Անահիտ Օնիկի Առաքելյանի սեփականության իրավունքը, ով նշված գույքը 20.12.2007 թվականին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ 47.000.000 ՀՀ դրամով, վաճառել է Նիկիտա Ավետիկի Աբրահամյանին:

Հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 16 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2593 պայմանագրի հիման վրա, ...
.....⁷⁰ հողամասի նկատմամբ 21.06.2007 թվականին գրանցվել է Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի սեփականության իրավունքը, ով նշված գույքը ևս 20.12.2007 թվականին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ 40.000.000 ՀՀ դրամով, վաճառել է Նիկիտա Ավետիկի Աբրահամյանին:

Նիկիտա Ավետիկի Աբրահամյանը 2.700.000 ԱՄՆ դոլար գումարի փոխառության պայմանագրով, որպես պարտավորությունների կատարման ապահովում, «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերությանը գրավ է հանձնել վերը նշված հողամասերը: Բռնագանձման մասին ծանուցման ընթացակարգի իրականացման արդյունքում գույքերի նկատմամբ գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը:

Հողամասն աճուրդով վաճառելու մասին 26.05.2007 թվականի թիվ 14 արձանագրության և 31.05.2007 թվականի վավերացված առուվաճառքի ս/մ 2586 պայմանագրի հիման վրա, ...
.....⁷¹ հարող տարածք՝ հանգստի համար նախատեսված նպատակային նշանակությամբ 0.55 հա հողամասի նկատմամբ 14.06.2007 թվականին գրանցվել է Մարտուն Սարգսի Մաթևոսյանի սեփականության իրավունքը, ով նշված գույքը 26.09.2007 թվականին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով՝ 7.150.000 ՀՀ դրամով, վաճառել է Աիդա Մուխայելի Սամսոնյանին:

5.29. Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցը, պատճառաբանել է, որ «(...) համակցության մեջ հեղազդությունը և գնահատելով այդ ապացույցները, հաստատված է համարում այն հանգամանքը, որ վիճարկվող աճուրդի ընթացքն սահմանված կարգի

⁶⁹ Առկա է անձնական տվյալ:

⁷⁰ Առկա է անձնական տվյալ:

⁷¹ Առկա է անձնական տվյալ:

պահպանմամբ չի իրականացվել, որպիսի փաստը իր դիրքորոշման մեջ ընդունել է նաև Կոտայքի մարզպետարանը, հետևաբար վիճարկվող աճուրդը չի համապատասխանում նաև իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին: Ընդ որում, նշվածը հերքող կամ հակառակը հիմնավորող որևէ ապացույց քաղաքացիական գործի նյութերում առկա չէ: Վերոգրյալը հիմք է տալիս Դատարանին հանգելու հետևության առ այն, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում 2007 թվականի մայիսի 26-ի լուր թիվ 16, 18, 19, 21, 22 և 24 հոդամասերի աճուրդները պետք է անվավեր ճանաչել»:

Դատարանն անդրադառնալով երրորդ անձանց՝ Աիդա Մուխայելի Սամսոնյանի և Ընկերության բարեխիղճ ձեռքբերող լինելու փաստարկներին՝ գտել է, որ «(...) սկզբնական սեփականատերը կարող է պահանջել իր գույքը նույնիսկ բարեխիղճ ձեռքբերողից, եթե այն իր փորձաքննումից դուրս է եկել նաև իր կամքից անկախ պատճառներով, որպիսի հանգամանքն առկա և հաստատված է սույն գործով, Ապա, աճուրդով հողամասերի ձեռքբերման գների և հետագա օտարման գների կրկնապատիկ ու բազմապատիկ տարբերությունները, որոնք գրանցվել են ձեռքբերումից հետո կնքված օտարման գործարքներով, սրվելու են նրանց բարեխիղճ լինելը, քանի որ բավարար շրջահայացություն դրսևորելու դեպքում նրանք կտեսնեին, որ օրինակ. -լուր 16 հոդամասը աճուրդով ձեռք է բերվել 3.435.500 ՀՀ դրամով, իսկ մի քանի ամիս անց Աիդա Սամսոնյանը այն գնել է կրկնապատիկից ավելի գնով՝ 7.150.000 դրամով, իսկ իրենց կողմից ներկայացված գնահատման հաշվետվության համաձայն 2007 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ տվյալ հողամասի շուկայական արժեքը կազմել է 8.650.000, որն ակնհայտորեն ավելի է, աճուրդով ձեռքբերման և հետագա օտարման գները: - լուր 18-ը աճուրդից ձեռք է բերվել 8.093.500 ՀՀ դրամով, իսկ դրանից 6 ամիս անց Նիկիտա Աբրահամյանը նույն գույքը գնել է 40.000.000 ՀՀ դրամով, իսկ գրավադրել է ըստ «Վոլ սթրիթ Ռիելթի» ՍՊԸ տեղեկատվական նամակի (հատոր 7) որպես 126.820.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող գույք, - լուր 19-ը աճուրդից ձեռք է բերվել 11.488.500 ՀՀ դրամով, իսկ դրանից 6 ամիս անց Նիկիտա Աբրահամյանը նույն գույքը գնել է 47.000.000 ՀՀ դրամով, իսկ գրավադրել է ըստ «Վոլ սթրիթ Ռիելթի» ՍՊԸ տեղեկատվական նամակի (հատոր 7) որպես 180.480.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող գույք: Ընդ որում, նշված լուրերի հողամասերը սկզբնական և հետագա ձեռքբերողներից կողմից իր նպատակային նշանակության՝ հանգստի կազմակերպման նպատակով օգտագործվելու մասին որևէ փաստարկ կամ ապացույց չի ներկայացվել դատարան: Վերադառնալով սեփականատիրոջ՝ գույքի օտարման կամքին, ապա պարզ է որևէ շրջահայաց սեփականատեր չի ցանկանա իր գույքը օտարել շուկայականից բազմապատիկ անգամ ցածր գնով, որը ևս կամահայտնության խախտման վկայություն է»:

5.30. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Դատարանի այն եզրահանգմանը, որ հողամասը սեփականատիրոջ տիրապետությունից դուրս է եկել նրա կամքից անկախ, քանի որ վեճի առարկա հողամասի աճուրդը՝ օտարման գործարքը կատարվել է օրենքի խախտմամբ՝ մասնակիորեն բավարարել է Աիդա Մուխայելի Սամսոնյանի ու Ընկերության վերաքննիչ բողոքները, հայցը մերժել է՝ արձանագրելով հետևյալը. «(...) վեճի առարկա հողամասերը օտարելու պետության կամքը սույն դեպքում դրսևորվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարմանն ուղղված ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կարեգորհան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշման ընդունմամբ, ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով

ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշման ընդունմամբ, ինչպես նաև կնքված հողամասերի առուվաճառքի պայմանագրերը նոտարական վավերացման ենթարկելու և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից առուվաճառքի պայմանագրերով ձեռք բերված անշարժ գույքերի նկատմամբ պատասխանողների սեփականության իրավունքի պետական գրանցումներով: Միևնույն ժամանակ, օտարման գործընթացում, պաշտոնատար անձի կողմից ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում աճուրդի ընթացակարգային կանոնների խախտման հիմքով՝ աճուրդի անվավերությունը՝ չի կարող վկայել այն մասին, որ վեճի առարկա գույքը դուրս է եկել պետության փորձաքննման անկախ վերջինիս կամքից: Մասնավորապես՝ եթե Կառավարության որոշումների կատարման նպատակով մարզպետի կամ մարզպետարանի աշխատակցի կողմից թույլ են տրվել աճուրդի կազմակերպման կանոնների խախտումներ, ապա դա չի կարող նշանակել, որ գույքն աճուրդով օտարվել է անկախ սեփականատիրոջ կամքից:

Վերոգրյալ վերլուծություններից ելնելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում չի հիմնավորվել վեճի առարկա հողամասը պետության փորձաքննման գույքի ճանապարհով՝ անկախ պետության կամքից, դուրս եկած լինելու փաստը, հետևաբար Դատարանի եզրահանգումներն այս մասով Վերաքննիչ դատարանը գնահատում է ոչ իրավաչափ:

Դատարանը հայցի բավարարման հիմքում դնելով գույքը պետության փորձաքննման նրա կամքից անկախ դուրս եկած լինելու փաստի առկայությունը, ըստ էության որևէ հստակ եզրահանգում չի կատարել երրորդ անձանց՝ Աիդա Սամսոնյանի և «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերության բարեխիղճ ձեռք բերող լինելու հարցի վերաբերյալ: Մասնավորապես՝ սույն դեպքում բողոքարկվող վճռով Դատարանի կողմից չի վկայակոչվել այնպիսի փաստ, որը հաստատում կամ հերքում է երրորդ անձանց անբարեխիղճ լինելը: Այսինքն՝ Դատարանը գույքը պետության փորձաքննման նրա կամքից անկախ դուրս եկած լինելու հանգամանքը հաստատված համարելու պայմաններում՝ երրորդ անձանց բարեխիղճության գնահատման փաստի մասով բավարարվել է միայն արձանագրելով աճուրդով հողամասերի ձեռքբերման գների և հետագա օտարման գների կրկնապատիկ ու բազմապատիկ փարբերությունները, որոնք գրանցվել են ձեռքբերումից հետո կնքված օտարման գործարքներով և եզրահանգել է, որ այդ հանգամանքը սրվելու է նրանց բարեխիղճ լինելը:

Վերաքննիչ դատարանը հանգել է նաև այն եզրակացության, որ «(...) Նիկիտա Ավետիսյանի Աբրահամյանի հետ գրավի/հիփոթեքի/ պայմանագրերը կնքելիս «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերությունը չգիտեր և չէր կարող իմանալ, որ գույքը՝ գրավադրման միջոցով տնօրինում է դրա իրավունքը չունեցող անձը: Մասնավորապես, հիփոթեքի պայմանագրերը կնքելու պահի դրությամբ հողամասերի գրանցված սեփականատերն է հանդիսացել Նիկիտա Աբրահամյանը, հողամասերի նկատմամբ որևէ սահմանափակում կիրառված չի եղել, իսկ հիփոթեքի պայմանագրերն իրենց հերթին ստացել են նոտարական վավերացում, պայմանագրերից ծագող իրավունքներն էլ՝ պետական գրանցում: Նման պայմաններում «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊ ընկերությունը չգիտեր և չէր կարող իմանալ այն մասին, որ ի սկզբանե հողամասերի աճուրդով օտարումն իրականացվել է օրենքի պահանջների խախտումներով, ինչը հանգեցրել է դրան հաջորդող գործարքների անվավերության: Նմանապես՝ վերոգրյալ հանգամանքների մասին չէր կարող իմանալ նաև Աիդա Սամսոնյանը, ով գույքը ձեռք է բերելու առուվաճառքի պայմանագրով գույքի գրանցված սեփականատեր հանդիսացող անձից, իսկ վերջինիս հետ կնքված առուվաճառքի պայմանագիրն էլ կրկին ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում:

(...) բոլոր այն դեպքերում, երբ հայցվորի կողմից գույքը դուրս է եկել իր կամքով, և դրա արդյունքում հետագայում Նիկիտա Աբրահամյանի կողմից կնքվել է հիփոթեքի պայմանագիր, որով գրավադրվել է գույքը, ապա ընկերությունը, որը նախքան գրավի առարկան իրացնելու արդյունքում դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը հանդիսացել է գրավի իրավունքի բարեխիղճ ձեռք բերող, իրային իրավունքներին բնորոշ առանձնահատկությունների մասով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի ուժով պահպանել է գրավի առարկայի նկատմամբ իր գրավի իրավունքը, ուստի վերջինիս իրավունքը գրավի պայմանագրի անվավերության հետևանքով դադարեցվել չի կարող:

(...) սույն գործի փաստերի համաձայն՝ Աիդա Սամսոնյանն ու Ընկերությունն ապացուցել են, որ բարեխիղճ ձեռք բերողներ են (առաջինը՝ որպես սեփականատեր, երկրորդը՝ նախքան գույքի սեփականատեր դառնալը որպես գրավի իրավատեր՝ այդ իրավունքին բնորոշ իրային իրավունքներին ներհատուկ առանձնահատկությունների մասով) և միևնույն ժամանակ Հայցվորը չի ապացուցել, որ գույքն իր տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ իր կամքից, ապա այս դեպքում բարեխիղճ ձեռք բերող համարվող գույքի նոր սեփականատերը՝ Աիդա Սամսոնյանն ունի, իսկ նախքան գույքի սեփականատեր դառնալը՝ գրավառու Ընկերությունն ունեցել է պաշտպանության իրավունք ընդդեմ գույքի նախկին սեփականատիրոջ՝ Հայցվորի:

(...) ոչ իրավաչափ կամ օրենքի խախտմամբ կնքված գործարքի անվավերության հետևանքով շղթայական անվավեր ճանաչվող մյուս՝ Աիդա Սամսոնյանի և Ընկերության հետ կնքված պայմանագրերի անվավերության հետևանքներ կիրառվել չեն, ուստիև մինչև իրավունքի խախտման պահը գոյություն ունեցող նախկին վիճակի վերականգնում տեղի ունենալ չի կարող, քանի որ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված գործարքի անվավերության երկկողմանի ռեստիտուցիա կատարելու և գույքը Հայցվորին վերադարձնելու օրինական հիմքի վրա հիմնված օբյեկտիվ անհնարիություն՝ Աիդա Սամսոնյանի սեփականության իրավունքի, ինչպես նաև գույքի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցող Ընկերության գրավի իրավունքի պաշտպանության նորմ-երաշխիք համարվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

(...) բարեխիղճ ձեռք բերողների, ինչպես նաև օրինական գործընթացի արդյունքում սեփականության իրավունք ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանությունը կարող է երաշխավորվել վերջիններիս կողմից ձեռք բերված իրավունքների պետական գրանցումները որպես անվավերության հետևանքներ չկիրառելու արդյունքում: Հաշվի առնելով այն իրողությունը, որ գույքերը հետ չվերադարձվելու և Հայցվորի իրավունքները գույքերի նկատմամբ չվերականգնելու պարագայում իմաստագրվում են գործարքների մյուս հետևանքների կիրառումը՝ հաշվի առնելով նաև նախկին վիճակը վերականգնելու համար իրականացված ռեստիտուցիայի առանձնահատկությունն ու կիրառվող հետևանքների փոխադարձ կապը: Այս պարզառաքանություններից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պայմանագրի անվավերության մյուս հետևանքների մասով վճռի օրինական ուժի մեջ թողնելը ստեղծելու է առանց գույքերը Հայցվորին վերադարձնելու վճարված գումարները վերադարձնելու անհարկի ու ոչ իրավաչափ պարտականություն, ուստի դատական ակտը ենթակա է բեկանման բողոքաբերների ներկայացրած պահանջների շրջանակներում՝ նրանց հետ կնքված պայմանագրերի անվավերության բոլոր հետևանքների կիրառման մասով: (...)»:

5.31. Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները

յուրաքանչյուր դեպքում պետք է պարզման և գնահատման առարկա դարձնեն պետության գույքն օտարելուն ուղղված կամքի առկայության հարցը, որպիսի հանգամանքի պարզումը թույլ կտա որոշելու գույքը սեփականատիրոջը վերադարձնելու հնարավորությունը: Երբ դատարանը կպարզի ու հաստատված կհամարի, որ առկա է եղել պետության գույքն օտարելու կամքը, ապա պարզման ենթակա հարց է դառնում նաև անձի բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքը, որի դեպքում հայցվորը պետք է հիմնավորի, որ գույքը ձեռքբերողի մոտ առկա է եղել կասկած՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ, իսկ անձի բարեխիղճության հանգամանքի գնահատումը պետք է իրականացվի վերջինիս գործողությունների բնույթը բացահայտելու միջոցով: Այսինքն՝ պարզման է ենթակա այն հարցը, թե անձը գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ ակնհայտ նշանների առկայության պարագայում անշարժ գույքը ձեռք բերելիս որքանով է ողջամտություն և պատշաճ զգուշավորություն դրսևորել գույքի ձեռքբերմանն ուղղված գործողությունները կատարելիս, արդյո՞ք անձը գույքը ձեռք բերելիս ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները դրա վերաբերյալ իրեն հասանելի և բավարար տեղեկատվություն ստանալու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ գործարքի անվավեր ճանաչվելը, որպես տրամաբանական հաջորդականություն, իր հետ առաջացնում է նաև գործարքի հետ կապված անվավերության հետևանքներ, որպիսի պարագայում կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է մյուս կողմին վերադարձնել անվավեր ճանաչված գործարքով ամբողջ ստացածը: Հետևաբար այն դեպքում, երբ հայցապահանջում ներառված գործարքներն անվավեր ճանաչվելու պայմաններում դրանց նկատմամբ չի կիրառվում անվավերության հետևանքներ՝ հիմքում ունենալով, որ գույքի նոր սեփականատերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի իմաստով ճանաչվում է բարեխիղճ ձեռք բերող, ապա չի կարող սահմանվել միակողմանի ռեստիտուցիա, քանի որ դա կհանգեցնի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտման՝ խաթարելով երկկողմանի ռեստիտուցիայի էությունը:

5.32. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վերաքննիչ դատարանը գալով ճիշտ եզրահանգման՝ իրավացիորեն արձանագրել է, որ Աիդա Մուխայելի Սամոնյանն ու Ընկերությունն ապացուցել են, որ բարեխիղճ ձեռք բերողներ են, որպիսի պարագայում գտել է, որ վերջիններիս կողմից ձեռք բերված իրավունքների պետական գրանցումները՝ որպես անվավերության հետևանքներ, չպետք է կիրառվեն:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ իմաստազրկվում են գործարքների մյուս հետևանքների կիրառումը (տես կետ 5.30.)՝ այնուամենայնիվ, գալով սխալ եզրահանգման, օրինական ուժի մեջ է թողել առաջին գործարքի անվավերության հետևանքը և չի անդրադարձել տվյալ գործարքի անվավերության հետևանքներին այն պարագայում, երբ աճուրդի անվավերության հետևանքով կողմի վրա պարտավորություն է դրվել վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը՝ փաստացի այն չստանալու պարագայում, որի արդյունքում թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը ՀՀ Կոտայքի մարզպետարանին՝ անվավեր ճանաչված 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2586 պայմանագրի գինը կազմող 3.435.500 ՀՀ դրամ գումարը Մարտուն Սարգսի Մաթևոսյանին վերադարձնելուն պարտավորեցնելու, 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 8.093.500 ՀՀ դրամ գումարը Սամվել Հովհաննեսի Գրիգորյանին վերադարձնելուն

պարտավորեցնելու, ինչպես նաև 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 11.488.500 ՀՀ դրամ գումարն Անահիտ Օնիկի Առաքելյանին վերադարձնելուն պարտավորեցնելու մասերով անփոփոխ թողնելով վճիռը՝ առանց գործարքի մյուս կողմին գործարքով ստացածը վերադարձնելուն պարտավորեցնելու, ըստ էության կիրառել է միակողմանի ռեստիտուցիա, որն այս դեպքում անթույլատրելի է, քանի որ կողմերից յուրաքանչյուրը գործարքով ձեռք է բերել՝ մի դեպքում դրամական միջոցներ, մյուս դեպքում՝ անշարժ գույք, հետևաբար պետք է միմյանց վերադարձնեն գործարքով ստացվածը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը չի կիրառել նաև անվավեր ճանաչված գործարքների անվավերության հետևանքները՝ դրանց չկիրառումը կապելով բարեխիղճ ձեռքբերողների հետ կնքված գործարքներն անվավեր չճանաչելու հանգամանքի հետ, մինչդեռ հաջորդող գործարքն անվավեր չճանաչելը որևէ կերպ չի կարող բացառել նախորդող՝ անվավեր ճանաչված գործարքի անվավերության հետևանքների կիրառումը, քանի որ ամեն մի գործարքի անվավերությունը համապատասխան հետևանքներ է առաջացնում բացառապես տվյալ գործարքի կողմ հանդիսացած անձանց համար և միմիայն այդ գործարքով ստացածը վերադարձնելու մասով:

Հիմք ընդունելով սույն որոշմամբ վերը արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի՝ արդարադատության բուն էությունը խաթարող խախտում թույլ տրված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկը հիմնավորված է, քանի որ ոչ միայն չի ապահովվել անվավեր ճանաչված գործարքով կատարվածը հետ ստանալու հայցվորի իրավունքը, այլև, ի հավելումն դրա՝ միայն հայցվորի վրա է դրվել գործարքով ստացածը վերադարձնելու պարտականություն, ինչը խեղաթյուրել է երկկողմանի ռեստիտուցիայի էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի 01.11.2024 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով աճուրդի և դրա հիման վրա կնքված պայմանագրերի անվավերության հետևանքներ կիրառելու հարցը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

6. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

6.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] կանոններին համապատասխան:

6.2. Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մասնակի բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 01.11.2024 թվականի որոշման՝ Կոտայքի մարզպետի և Մարտուն Սարգսի Մաթևոսյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2586 առուվաճառքի պայմանագրի, Կոտայքի մարզպետի և Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2593 առուվաճառքի պայմանագրի, Կոտայքի մարզպետի և Անահիտ Օնիկի Առաքելյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2592 առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանքներ կիրառելու մասով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 12.01.2024 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱԿՈՐ ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԼՅԱՆԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

**(Թիվ ՀԿԴ/0067/02/22 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի
29.01.2026 թվականի որոշման վերաբերյալ)**

Քաղաք Երևան

29.01.2026թ.

1. Չեմ կարող համաձայնել մեծամասնության հետ այն հարցում, որ սույն վեճը ենթակա է քննության առաջին ատյանի դատարանում (այսուհետ՝ Դատարան): Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ խոսելով Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) կողմից թույլ տրված սխալի մասին, որոշել է՝ **վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն և բեկանել Վերաքննիչ դատարանի 01.11.2024 թվականի որոշման՝ Կոտայքի մարզպետի և Մարտուն Սարգսի Մաթևոսյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2586 առուվաճառքի պայմանագրի, Կոտայքի մարզպետի և Սամվել Հովհաննեսի Գրիգորյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2593 առուվաճառքի պայմանագրի, Կոտայքի մարզպետի և Անահիտ Օնիկի Առաքելյանի միջև 31.05.2007 թվականին կնքված թիվ 2592 առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանքներ կիրառելու մասով Դատարանի 12.01.2024 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել Դատարան՝ նոր քննության՝**

2. Վճռաբեկ դատարանը Որոշման 5.32.-րդ կետում նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը գալով ճիշտ եզրահանգման՝ իրավացիորեն արձանագրել է, որ Աիդա Մուխայելի Սամսոնյանն ու Ընկերությունն ապացուցել են, որ բարեխիղճ ձեռքբերողներ են, որպիսի պարագայում գրել է, որ վերջիններիս կողմից ձեռք բերված իրավունքների պետական գրանցումները՝ որպես անվավերության հետևանքներ, չպետք է կիրառվեն:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ իմաստագրկվում են գործարքների մյուս հետևանքների կիրառումը (տես կետ 5.30.)՝ այնուամենայնիվ, գալով սխալ եզրահանգման, օրինական ուժի մեջ է թողել առաջին գործարքի անվավերության հետևանքը և չի անդրադարձել անվավերության հետևանքներին այն պարագայում, երբ աճուրդի անվավերության հետևանքով կողմի վրա պարտավորություն է դրվել վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը՝ փաստացի այն չստանալու պարագայում, որի արդյունքում թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը ՀՀ Կոտայքի մարզպետարանին՝ անվավեր ճանաչված 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2586 պայմանագրի գինը կազմող 3.435.500 ՀՀ դրամ գումարը Մարտուն Սարգսի Մաթևոսյանին վերադարձնելուն պարտավորեցնելու, 31.05.2007 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 8.093.500 ՀՀ դրամ գումարը Սամվել Հովհաննեսի Գրիգորյանին վերադարձնելուն պարտավորեցնելուն, ինչպես նաև 31.05.2007 թվականի առուվաճառքի թիվ 2593 պայմանագրի գինը կազմող 11.488.500 ՀՀ դրամ գումարն Անահիտ Օնիկի Առաքելյանին վերադարձնելուն պարտավորեցնելու մասով անփոփոխ թողնելով վճիռը՝ առանց գործարքի մյուս կողմին գործարքով ստացածը վերադարձնելուն պարտավորեցնելու, ըստ էության կիրառել է միակողմանի ռեստիտուցիա, որն այս դեպքում անթույլատրելի է, քանի որ կողմերից

¹ Տե՛ս Որոշման եզրափակիչ՝ որոշեց մասի 1-ին կետը: Ընդգծումներն ըստ հեղինակի:

յուրաքանչյուրը գործարքով ձեռք է բերել՝ մի դեպքում դրամական միջոցներ, մյուս դեպքում՝ անշարժ գույք, հետևաբար պետք է միմյանց վերադարձնեն գործարքով ստացվածը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը չի կիրառել նաև անվավեր ճանաչված գործարքների անվավերության հետևանքները՝ դրանց չկիրառումը կապելով բերախիղճ ձեռքբերողների հետ կնքված գործարքներն անվավեր չճանաչելու հանգամանքի հետ, մինչդեռ հաջորդող գործարքն անվավեր չճանաչելը որևէ կերպ չի կարող բացառել նախորդող՝ անվավեր ճանաչված գործարքի անվավերության հետևանքների կիրառումը, քանի որ ամեն մի գործարքի անվավերությունը համապատասխան հետևանքներ է առաջացնում բացառապես փյուլ գործարքի կողմ հանդիսացած անձանց համար և միմիայն այդ գործարքով ստացածը վերադարձնելու մասով:

Հիմք ընդունելով սույն որոշմամբ վերը արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի՝ արդարադատության բուն էությունը խաթարող խախտում թույլ տրված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկը հիմնավորված է, քանի որ ոչ միայն չի ապահովվել անվավեր ճանաչված գործարքով կատարվածը հետ ստանալու հայցվորի իրավունքը, այլև, ի հավելումն դրա՝ միայն հայցվորի վրա է դրվել գործարքով ստացածը վերադարձնելու պարտականություն, ինչը խեղաթյուրել է երկկողմանի ռեստիտուցիայի էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի 01.11.2024 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով աճուրդի և դրա հիման վրա կնքված պայմանագրերի անվավերության հետևանքներ կիրառելու հարցը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները»:

3. Իմ անհամաձայնությունը մեծամասնության հետ կայանում է նրանում, որ իմ գնահատմամբ Վերաքննիչ դատարանն առհասարակ չի անդրադարձել առաջին գործարքին և դրա հետևանքին, այլ կերպ ասած՝ Վերաքննիչ դատարանի որոշման տրամաբանությունը կառուցված է՝ աճուրդի և դրա հիման վրա կնքված պայմանագրի անվավերության հետևանք չկիրառելու վրա: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել է. «Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում գործարքների անվավերության մասով վճիռը բեկանելու վերաբերյալ բողոքների պահանջները՝ կրկին ընդգծելով, որ բողոքաբերների իրավունքների պաշտպանությունն ինքնին ապահովվում է գործարքների անվավերության հետևանքներ չկիրառելու արդյունքում: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բարեխիղճ ձեռք բերողների իրավունքների պաշտպանությունը կարող է երաշխավորվել վերջիններիս կողմից ձեռք բերված իրավունքների պետական գրանցումները որպես անվավերության հետևանքներ չկիրառելու արդյունքում: **Հաշվի առնելով այն իրողությունը, որ գույքերը հետ չվերադարձվելու և Հայցվորի իրավունքները գույքերի նկատմամբ չվերականգնելու պարագայում իմաստազրկվում են գործարքների մյուս հետևանքների կիրառումը՝ հաշվի առնելով նաև նախկին վիճակը վերականգնելու համար իրականացված ռեստիտուցիայի առանձնահատկությունն ու կիրառվող հետևանքների փոխադարձ**

կապը: Այս պատճառաբանություններից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պայմանագրի անվավերության մյուս հետևանքների մասով վճռի օրինական ուժի մեջ թողնելը սպեղծելու է առանց գույքերը Հայցվորին վերադարձնելու վճարված գումարները վերադարձնելու անհարկի ու ոչ իրավաչափ պարտականություն, ուստի դատական ակտը ենթակա է բեկանման բողոքաբերների ներկայացրած պահանջների շրջանակներում՝ նրանց հետ կնքված պայմանագրերի անվավերության բոլոր հետևանքների կիրառման մասով»:

4. Վերաքննիչ դատարանն այս ամենն արձանագրելով որոշել է երկրորդ և հաջորդող գործարքների մասով վճիռը բեկանել, փոփոխել՝ այդ մասերում ընդգրկված հայցային պահանջները մերժել և վճռի բեկանված մասերում նշված անվավերության հետևանքները չկիրառել: Իհարկե Վերաքննիչ դատարանը թույլ է տվել սխալ, մասնավորապես ի հակադրումն իր իսկ վերլուծության և եզրահանգումների ուշադրություն չի դարձրել, որ առաջին գործարքի անվավեր ճանաչումն արդեն իսկ նախատեսում էր գումարի վերադարձ, սակայն այդ սխալի հասցեատերը ոչ թե Դատարանն է այլ Վերաքննիչ դատարանը: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ խոսելով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված սխալի մասին որոշել է այդ սխալի ուղղումը վերապահել Դատարանին այլ ոչ թե՝ Վերաքննիչ դատարանին: Իմ գնահատմամբ ճիշտ լուծումը կլիներ այն, որ Վճռաբեկ դատարանը մասնակի բեկանելով Վերաքննիչ դատարանի որոշումն այն ուղարկեր Վերաքննիչ դատարան, որպեսզի Վերաքննիչ դատարանը հնարավորություն ունենար ուղղելու իր սխալը՝ արտահայտելով որոշակի դիրքորոշում, ինչը հնարավորություն կտար Վճռաբեկ դատարանին հետագայում ունենալ լիարժեք վճռաբեկության օբյեկտ այն դեպքում, երբ այդ որոշումը կբողոքարկվեր:

5. Քանի որ Վճռաբեկ դատարանի որոշումը չի պարունակում պատճառաբանություն առ այն, թե ինչն է մասնակի բեկանված գործն ուղարկվում Դատարան, ես չեմ կարող ենթադրություններ անել Վճռաբեկ դատարանի շարժառիթների վերաբերյալ, ուստի վերը նշված հիմնավորումներով, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, ես հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի Որոշման՝ պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի դատավոր՝
Գևորգ Գյոզալյան

² Տե՛ս Վերաքննիչ դատարանի 01.11.2024թ-ի որոշման 76 և 85 էջերը:

LԴ/0035/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2 փետրվարի 2026 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշման դեմ մեղադրյալ Գառնիկ Կասումիկի Բաղդասարյանի պաշտպան Վ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2022 թվականի օգոստոսի 20-ին, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում, նախաձեռնվել է թիվ 19127822 քրեական վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2022 թվականի օգոստոսի 20-ին նախաքննության մարմնի որոշմամբ Ա.Ա.Մ.-ը ճանաչվել է տուժող:

2022 թվականի սեպտեմբերի 23-ին Լոռու մարզի դատախազ Բ.Մուրադյանի որոշմամբ Գառնիկ Կասումիկի Բաղդասարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով, և նրան մեղադրանք է ներկայացվել:

2023 թվականի փետրվարի 24-ին հսկող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և վարույթը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որը դատարանում ստացվել է 2023 թվականի փետրվարի 28-ին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ մերժել է մեղադրյալ Գ.Բաղդասարյանի պաշտպան Վ.Հակոբյանի միջնորդությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուժողի բողոքի բացակայության հիմքով մեղադրյալ Գ.Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու վերաբերյալ:

2.1. Առաջին ատյանի դատարանը, արագացված վարույթի կիրառմամբ, 2023 թվականի

ապրիլի 28-ի դատավճռով Գ.Բաղդասարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում և նրա նկատմամբ պատիժ է նշանակել հանրային աշխատանքներ՝ 100 (հարյուր) ժամ տևողությամբ:

3. Մեղադրյալ Գ.Բաղդասարյանի պաշտպան Վ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 28-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Գ.Բաղդասարյանի պաշտպան Վ.Հակոբյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական օրենքի խախտում: Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը, ինչպես նաև քրեական հետապնդման դադարեցման և քրեական վարույթի կարճման հիմքերի առկայության դեպքում չի կարճել վարույթը և չի դադարեցրել քրեական հետապնդումը՝ համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

5.1. Բողոք բերած անձը նշել է, որ Գ.Բաղդասարյանին մեղսագրվում է մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա արարք, որի դեպքում տուժողի բողոքի առկայությունը իմպերատիվ պահանջ է, և այդ բողոքի բացակայության դեպքում քրեական հետապնդում չի կարող հարուցվել, հարուցված լինելու դեպքում՝ տուժողի և մեղադրյալի հաշտության պարագայում այն ենթակա է դադարեցման, իսկ վարույթը՝ կարճման:

5.2. Բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասով նախատեսված դրույթն ընդունվել է բացառապես մասնավոր մեղադրանքի գործերով տուժած անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքն ապահովելու նպատակով: Ըստ բողոքաբերի՝ քանի դեռ պետությունը չի ստեղծել մասնավոր մեղադրանքի վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարաններ, մասնավոր մեղադրանքի վարույթով տուժած անձանց իրավունքների իրականացման համար նախատեսվել է մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացնելու հանրային կարգ: Բողոքաբերի պնդմամբ՝ նշված հանցանքներով հանրային կարգով քրեական հետապնդում իրականացնելու դեպքում, այնուամենայնիվ, տուժողի բողոքի բացակայությունը քրեական հետապնդումը բացառող հանգամանք է, և դա որևէ առնչություն չունի ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի հետ: Բողոք բերած անձն իր դիրքորոշումը հիմնավորել է նրանով, որ մասնավոր մեղադրանքով քրեական հետապնդման դադարեցումը և քրեական վարույթի կարճումը բոլոր դեպքերում կրում է ռեաբիլիտացիոն բնույթ, իսկ ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի իմաստով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված հիմքը ռեաբիլիտացնող չէ: Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածն ակնհայտորեն վերաբերում է այն հանցատեսակներին, որոնք ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածում: Բողոքաբերը փաստել է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասի կիրառմամբ՝ վարույթն իրականացվել է հանրային կարգով, սակայն ինքնին մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի բողոքի (հայցի) բացակայությունը ենթադրում է քրեական պատասխանատվության հիմքի բացակայություն:

5.3. Բողոքաբերը նաև նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքի վարույթի կիրառման պարագայում տուժողի՝ բողոքից հրաժարվելու, ինչպես նաև տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ քրեական վարույթը՝ կարճման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածով, որը հանրային կարգով քրեական հետապնդումը դադարեցնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի և քրեական վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի դրույթների հետ որևէ առնչություն չունի:

5.4. Ըստ բողոքաբերի՝ այն դեպքում, երբ տուժողի արդար դատաքննության իրավունքի իրականացման նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասի կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով, տուժողի բողոքի բացակայությունը, ինչպես նաև տուժողի ու մեղադրյալի հաշտությունը նշանակում է, որ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական պատասխանատվության հիմքը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասով նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է, որպիսի պայմաններում քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իսկ քրեական վարույթը՝ կարճման՝ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

6. Բողոք բերած անձը նաև փաստել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ, մեղադրյալ Գ.Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և քրեական վարույթը կարճել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Գ.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում է հարուցվել, և մեղադրանք ներկայացվել այն արարքի համար, որ. «(...) [Ն]ա, հանդիսանալով ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ և 2022 թվականի օգոստոսի 20-ի դրությամբ

տեղաբաշխված լինելով նույն հիմնարկի բուժմասի առաջին խցում՝ դատապարտյալ Ա.Մ.-ի հետ, նույն օրը՝ ժամը 02-ի սահմաններում, նկատելով, որ վերջինս, դժգոհ լինելով իր հետ նույն խցում տեղաբաշխված լինելու հանգամանքից, ցանկանում է ինքնավնասում կատարել, դա կանխելու նպատակով ինքնավնասման գործիքը նրա ձեռքից խլելուց հետո ձեռքերով դիտարկողությամբ բազմակի հարվածներ է հասցրել նրա գլխին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ ծախքային, քթի և գլխի ծախ գազաթային հարվածների այտուցի ու կարմրության (փափուկ հյուվածքների սալջարդի) տեսքով, այդ կերպ ֆիզիկական ներգործության է ենթարկել Ա.Մ.-ին (...)¹:

7.1. Նախաքննության ընթացքում տուժող Ա.Մ.-ը ցուցմունք է տվել, որ բողոք ունի և ցանկանում է, որ Գ.Բաղդասարյանը ենթարկվի քրեական պատասխանատվության²:

8. 2023 թվականի ապրիլի 5-ի դատական նիստի ընթացքում դատարանի հարցերին ի պատասխան՝ տոժողը և մեղադրյալը հայտարարել են, որ հաշտվել են, և որ տուժողը բողոք չունի³:

8.1. Առաջին ատյանի դատարանի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին 2023 թվականի ապրիլի 5-ի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթների համաձայն՝ մասնավոր մեղադրանքի վարույթը և դրա վերաբերելի դրույթները հնարավոր է կիրառել նման դատարանների ստեղծումից և դատավորների նշանակումից հետո սկսված քրեական վարույթներով, իսկ մինչ այդ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով, հետևաբար տուժողի բողոքի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ հանրային կարգով քննված գործերով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու համար: (...) Դատարանն արձանագրում է, որ սույն վարույթը հարուցվել է հանրային կարգով, քանի որ դեռևս չի գործում մասնավոր մեղադրանք քննող դատարանը, հետևաբար տուժողի բողոքից հրաժարվելու հիմքով քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել, իսկ գործի վարույթը կարճվել:

(...)

Քրեական գործի նախնական դատախոսների ժամանակ տուժողը հայտնեց, որ բողոք պահանջ չունի, չի ցանկանում, որ մեղադրյալ Գառնիկ Բաղդասարյանը ենթարկվի քրեական պատասխանատվության: Սույն որոշմամբ մեջբերված փաստական փյուլաները դիտարկելով վերը շարադրված իրավադրույթների և կատարված վերլուծության լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ սույն վարույթը հարուցվել է հանրային կարգով, քանի որ դեռևս չի գործում մասնավոր մեղադրանք քննող դատարանը, հետևաբար տուժողի բողոքից հրաժարվելու հիմքով քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել, իսկ գործի վարույթը կարճվել:

Դատարանը նաև արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված չէ որևէ հիմք, որի կիրառմամբ Դատարանը կարող է քրեական հետապնդումը դադարեցնել և գործի վարույթը կարճել (...)⁴:

9. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանից ստացված ձև 8 տեղեկանքի համաձայն՝ Գառնիկ Կասումիկի Բաղդասարյանը, ի թիվս այլնի, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի

¹ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 180:

² Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 21-24, 43-45:

³ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 86-91:

⁴ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 81-85:

մայիսի 20-ի դատավճռով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման՝ 1 տարի 9 ամիս ժամկետով⁵:

9.1. ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետի կողմից տրված գրության համաձայն՝ Գ.Բաղդասարյանի նկատմամբ 2020 թվականի մայիսի 20-ի դատավճռով նշանակված ազատազրկման ձևով պատժի կրման ժամկետը լրացել է 2022 թվականի փետրվարի 23-ին⁶:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշման համաձայն՝ «(...) Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարած անձը՝ տվյալ դեպքում Գառնիկ Բաղդասարյանը, կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման վրա, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ այդ իրավակարգավորումը կիրառելի չէ սույն գործի նկատմամբ, քանի որ դեռևս չեն ստեղծվել մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնող դատարաններ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասի համաձայն՝ մինչ այդ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով: Իսկ հանրային կարգով իրականացվող քրեական հետապնդման գործերով տուժողի բողոքի բացակայությունը հիմք չի կարող հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու համար:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն վարույթով Դատարանը թույլ չի տրվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, գործով ըստ էության կայացրել է ճիշտ դատական ակտ, որը բեկանելու իրավաչափ հիմքեր չկան (...)⁷:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների՝ ստեղծված կամ դատավորների՝ նշանակված չլինելու⁸ պայմաններում, հանրային կարգով իրականացված մասնավոր մեղադրանքի վարույթով տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն վարույթով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն

⁵ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 126-129:

⁶ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 124-125:

⁷ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 79-85:

⁸ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանված՝ մասնավոր մեղադրանքով վարույթը իրավասու դատավորների կողմից կիրառելու պահանջի իրացման նպատակով՝ ՀՀ Կառավարությունը 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1551-Ս որոշմամբ հավանություն է տվել ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների քրեական մասնագիտացման դատավորների թվակազմը ավելացնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2024 թվականի հունվարի 26-ի առաջարկությանը: Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահին առաջարկված դատավորների թեկնածուները համապատասխան դատարանների դատավորի պաշտոնը ստանձնել են 2024 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթի կապակցությամբ քրեական հայցեր ներկայացնելու մեկնարկային ժամկետ է սահմանվել 2024 թվականի դեկտեմբերի 17-ը:

ունենալ նշված հարցի առնչությամբ միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

11. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ստորադաս դատարանների այն հետևությունը, որ մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների՝ ստեղծված կամ դատավորների նշանակված չլինելու պայմաններում, տուժողի բողոքի բացակայությունը (տուժողի հետ հաշտվելը) հանրային կարգով իրականացված մասնավոր մեղադրանքի վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հիմք չի կարող լինել:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, իսկ մյուս բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքի (...) 195-րդ հոդվածի 1-ին մասով (...) նախատեսված հանցանք կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից փուժածի քրեական հայցի հիման վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

(...)

2) առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ քրեական պատասխանատվությունը բացառող որևէ հանգամանք (բացառությամբ անմեղսունակության).

(...)

9) վարույթով քրեական հետապնդումն իրականացվել է հանրային կարգով, մինչդեռ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ քրեական հետապնդումը պետք է իրականացվեր միայն մասնավոր կարգով.

(...)

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Քրեական վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

3) կայացվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, և սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները.

4) առկա է սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հանգամանքը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության

հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը վերտառությամբ 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամահայտնության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընդանիքում բռնության հատկանիշներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մասնավոր մեղադրանքով վարույթը կարող է նախաձեռնվել այն դեպքում, երբ այն անձը, որը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներով իրեն պարճառվել է վնաս, քրեական հայց է ներկայացնում դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Հիմնական դատախազների ընթացքում մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվում է, և քրեական վարույթը կարճվում է, եթե՝

1) տուժողը և մեղադրյալը հաշտվել են

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 25-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթը կիրառվում է այն իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների ստեղծումից կամ դատավորների նշանակումից հետո սկսված քրեական վարույթներով: Մինչ այդ Հայաստանի Հանրապետության 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով»:

13. Վերոշարադրյալ քրեաիրական և քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է հաշտության քրեաիրավական և քրեադատավարական առանձին ինստիտուտներ, որոնք ունեն ինքնուրույն բովանդակություն և կիրառման դատավարական ընթացակարգեր: Հաշտության քրեաիրավական ինստիտուտը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով, որով նախատեսված են քրեական պատասխանատվությունից ազատելու հետևյալ պայմանները՝

ա) անձն առաջին անգամ է հանցանք կատարել,

բ) արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է,

գ) մեղադրյալի ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամահայտնության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն,

դ) կատարված հանցանքում առկա չեն ընտանիքում բռնության հատկանիշներ:

13.1. Քրեական պատասխանատվությունից ազատելու այս հիմքը կիրառելի է հանրային կարգով քրեական հետապնդման ենթակա՝ առաջին անգամ կատարված, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքով: Ընդ որում, քրեական պատասխանատվությունից ազատելու այս ինստիտուտի կիրառման դատավարական հիմքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված քրեական հետապնդումը բացառող հանգամանքն է, այն է՝ անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ենթակա է ազատման:

13.2. Ինչ վերաբերում է մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված հանցանքներին, ապա այդպիսիք կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն նշված հանցանքներից տուժած

անձի քրեական հայցի հիման վրա, բացառությամբ ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքների և այն հանցանքների, որոնք թեև նախատեսված են վերը նշված հոդվածով, սակայն այդ հանցանքներից տուժած անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Մասնավոր մեղադրանքով վարույթը կարող է նախաձեռնվել այն դեպքում, երբ այն անձը, որը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներով իրեն պատճառվել է վնաս, քրեական հայց է ներկայացնում դատարան: Ըստ այդմ էլ՝ տուժողի և մեղադրյալի հաշտության դեպքում օրենսդիրը նախատեսել է քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու պարտադիր պահանջ, որի դատավարական հիմքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, ի թիվս այլնի, տուժողի և մեղադրյալի հաշտությունն է: Օրենսդիրը, մասնավոր մեղադրանքի գործերով վարույթ սկսելը թողնելով հանցագործությունից տուժած անձի հայեցողությանը, վերջինիս հնարավորություն է ընձեռել նաև իր հայեցողությամբ ավարտել այն՝ հաշտվելով հանցանք կատարած անձի հետ⁹:

14. Հաշտության քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտների տարանջատման հիմքում ընկած է այն գաղափարը, որ դրանք համապատասխանաբար «պետություն և անձ» ու «տուժող և անձ» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են: Վերոգրյալի մասին է վկայում նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հասկացությունները սահմանող 6-րդ հոդվածում տարանջատված են «հանրային մեղադրող» և «մասնավոր մեղադրող» եզրույթները: Եվ եթե հանրային մեղադրողը՝ հանրային մեղադրանքի կարգով իրականացվող վարույթում առաջին ատյանի դատարանում պետության անունից մեղադրանքը պաշտպանող դատախազն է (28-րդ կետ), ապա մասնավոր մեղադրողը՝ մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող վարույթում առաջին ատյանի դատարանում իր անունից մեղադրանքը ներկայացնող տուժողն է (29-րդ կետ): Այսինքն, եթե առաջին դեպքում մեղադրանքը ներկայացվում է պետության, ապա երկրորդ դեպքում՝ մասնավոր սուբյեկտի՝ տուժողի կողմից:

14.1. Այսպիսով, հաշտության նյութաիրավական ինստիտուտը՝ հանցագործության հետևանքով խախտված մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման կառուցակարգ է, որով էլ պայմանավորված՝ հանրային մեղադրանքի վարույթով հանցանք կատարած անձի համար նախատեսվում է քրեական պատասխանատվությունից ազատվելու բարդեցված կարգ, քանի որ հանրային շահի բավարարման համար, տուժողի կամահայտնությունից բացի, անհրաժեշտ է նաև օրենսդրի կողմից սահմանված այլ պայմանների առկայություն, որոնք նախատեսված են այն հաշվով, որ դրանց առկայության պարագայում հնարավորինս մեղմ ներգործության միջոցները բավարար են ներազդելու անձի վրա՝ ձեռնպահ մնալու հետագա հանցավոր արարքներ կատարելուց և նրա մոտ ձևավորելու իրավաչափ վարքագիծ՝ այդ կերպ նպաստելով վերջինիս վերասոցիալականացմանը: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով օրենսդիրն առանձնացրել է նվազ հանրային վտանգավորություն ունեցող արարքների շրջանակ, որոնց պարագայում հաշտության քրեադատավարական ինստիտուտը հակադիր մասնավոր շահերի հավասարակշռման կառուցակարգ է, որով պայմանավորված էլ՝ տուժողի կամահայտնությունը որոշիչ նշանակություն ունի հանցանք կատարած անձի

⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Առաքելյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԲԴ/0217/01/14 որոշումը:

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս: Այս դեպքում հանցանքի կատարման հիման վրա առաջացած քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտներ են ոչ թե պետությունը և հանցանք կատարած անձը, այլ մի կողմից՝ հանցագործությունից տուժած անձը, իսկ մյուս կողմից՝ հանցանք կատարած անձը:

15. Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ վերը հիշատակված 483-րդ հոդվածով սահմանված անցումային դրույթի համաձայն՝ օրենսդիրը մասնավոր մեղադրանքով վարույթի առանձնահատկությունները սահմանող՝ 54-րդ գլխի, այդ թվում՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների վերաբերյալ նորմերի կիրառությունը հնարավոր է համարել համապատասխան իրավասություն ունեցող դատարանների ձևավորումից կամ դատավորների նշանակումից հետո՝ նախատեսելով, որ մինչ այդ մասնավոր մեղադրանքի վարույթով քրեական հետապնդումը պետք է իրականացվի հանրային կարգով: Իսկ դա ենթադրում է, որ մինչև համապատասխան իրավասություն ունեցող դատարանների ստեղծումը կամ դատավորների նշանակումը սկսված քրեական վարույթներով մասնավոր մեղադրանքի կարգով քրեական հետապնդման ենթակա արարքների վերաբերյալ վարույթների նկատմամբ տարածվում են հանրային մեղադրանքի վարույթով կիրառելի դատավարական կարգավորումները, այդ թվում՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների և քրեական հետապնդումը դադարեցնելու ու վարույթը կարճելու վերաբերյալ կարգավորումները: Այլ կերպ՝ մինչև համապատասխան իրավասություն ունեցող դատարանների ստեղծումը կամ դատավորների նշանակումը սկսված քրեական վարույթներով մասնավոր մեղադրանքի կարգով քրեական հետապնդման ենթակա արարքների վերաբերյալ վարույթներով կիրառման ենթակա է հաշտության քրեաիրավական ինստիտուտը:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Գ.Բաղդասարյանին մեղադրանք է ներկայացվել մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման համար¹⁰,

- Առաջին ատյանի դատարանը քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու պաշտպանական կողմի միջնորդությունը քննության առնելու մասին 2023 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ արձանագրել է, որ սույն վարույթը հարուցվել է հանրային կարգով, քանի որ դեռևս չի գործում մասնավոր մեղադրանք քննող դատարանը, հետևաբար տուժողի՝ բողոքից հրաժարվելու հիմքով, քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել և գործի վարույթը՝ կարճվել, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված չէ որևէ հիմք, որի կիրառմամբ կարող է քրեական հետապնդումը դադարեցվել և գործի վարույթը կարճվել¹¹, իսկ 2023 թվականի ապրիլի 28-ի դատավճռով Գ.Բաղդասարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում¹²,

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ևս արձանագրել է, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարած անձը՝ տվյալ դեպքում Գ.Բաղդասարյանը, կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման վրա, այնուամենայնիվ այդ իրավակարգավորումը կիրառելի չի համարել, քանի որ դեռևս ստեղծված չեն մասնավոր

¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 2.1-րդ կետը:

մեղադրանքով վարույթ իրականացնող դատարանները: Դատարանն ընդգծել է, որ հանրային կարգով իրականացվող քրեական հետապնդման գործերով տուժողի բողոքի բացակայությունը հիմք չէ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու համար¹³:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ստորադաս դատարանները ճիշտ եզրահանգման են եկել այն մասին, որ Գ.Բաղդասարյանին մեղսագրվող մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա հանցանքի վերաբերյալ սույն վարույթով հանրային քրեական հետապնդման պայմաններում հաշտության դատավարական կառուցակարգը կիրառելի չէր համապատասխան իրավասություն ունեցող դատարանների՝ ստեղծված կամ դատավորների՝ նշանակված չլինելու հիմքով, սակայն դրա հետ մեկտեղ ոչ իրավաչափորեն անտեսել են օրենքով նախատեսված՝ սույն որոշման 13-րդ կետով թվարկված պայմանների առկայության պարագայում հանրային քրեական հետապնդման վարույթով հաշտության նյութաիրավական ինստիտուտի կիրառության հարցը: Նախ՝ իրավաչափ չէ ստորադաս դատարանների այն դիրքորոշումը, որ սույն վարույթով առկա չէ տուժողի բողոքը, քանի որ նախաքննության փուլում ի սկզբանե տուժող Ա.Մ.-ը բողոք ունեցել է¹⁴, իսկ նախնական դատալուծումների փուլում տուժողը և մեղադրյալը հաշտվել են¹⁵: Հետևաբար, սույն վարույթով ստորադաս դատարանները պետք է քննարկեին ոչ թե տուժողի բողոքի բացակայության, այլ մեղադրյալի և տուժողի հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը, ինչն ուղղակիորեն սահմանված է քրեական հետապնդումը բացառող հանգամանքները նախատեսող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև բողոքաբերի այն փաստարկին, որ սույն վարույթով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իսկ քրեական վարույթը՝ կարճման՝ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով¹⁶:

18. Հետևաբար իրավաչափ չէ ստորադաս դատարանների այն հետևությունը, որ մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների՝ ստեղծված կամ դատավորների՝ նշանակված չլինելու պայմաններում, տուժողի բողոքի բացակայությունը (տուժողի հետ հաշտվելը) հանրային կարգով իրականացված մասնավոր մեղադրանքի վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հիմք չի կարող լինել:

19. Մինչույն ժամանակ անդրադառնալով սույն վարույթով հաշտության նյութաիրավական ինստիտուտի հնարավոր կիրառությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա չէ առաջին անգամ հանցանք կատարած լինելու պայմանը, քանի որ Գ.Բաղդասարյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է 2022 թվականի օգոստոսի 22-ին, իսկ այդ պահի դրությամբ նա ունեցել է դատվաժություն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, քանի

¹³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 5.4-րդ կետերը:

որ դրա համար 2020 թվականի մայիսի 20-ի դատավճռով նշանակված ազատագրված ձևով պատժի կրման ժամկետը լրացել է 2022 թվականի փետրվարի 23-ին¹⁷, ուստի այդ արարքը կատարելու համար դատվածությունը սույն վարույթով Գ.Բաղդասարյանին մեղսագրվող արարքի կատարման օրվա՝ 2022 թվականի օգոստոսի 22-ի դրությամբ մարված չի եղել:

20. Այսպիսով, ստորադաս դատարանները թեև ճիշտ եզրահանգման են եկել այն մասին, որ մասնավոր կարգով քրեական հետապնդման ենթակա արարքով հանրային քրեական հետապնդում իրականացնելու պայմաններում հաշտության դատավարական կառուցակարգը կիրառելի չէ, այդուհանդերձ, արձանագրելով, որ մասնավոր մեղադրանքով վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների՝ ստեղծված կամ դատավորների՝ նշանակված չլինելու պայմաններում՝ տուժողի բողոքի բացակայությունը (տուժողի հետ հաշտվելը) հանրային կարգով իրականացված մասնավոր մեղադրանքի վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հիմք չէ, թույլ են տվել նյութական և դատավարական օրենքի խախտում, այն է՝ սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածները: Սակայն միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ստորադաս դատարաններն արդյունքում կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, քանի որ սույն վարույթով առկա չէր ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքն առաջին անգամ կատարելու պայմանը, հետևապես քրեական հետապնդումը ենթակա չէր դադարեցման մեղադրյալի և տուժողի հաշտության հիմքով, ուստի Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 28-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Մեղադրյալ Գառնիկ Կասումիկի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 9-րդ և 9.1-րդ կետերը:

ՎԴ/7405/05/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի փետրվարի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ նաև՝ Ոստիկանություն) և երրորդ անձինք Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.02.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Լուս Պուեբլոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ընդդեմ Ոստիկանության, երրորդ անձ՝ Մարիամ Վահանյան՝ 13.05.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ **••••**¹ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից և 15.06.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ **••••**² տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջների մասին և ըստ հայցի Ընկերության ընդդեմ Ոստիկանության, երրորդ անձ՝ Աննա Գևորգյան՝ **••••**³ տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Ոստիկանությանը 13.05.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ **••••**⁴ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից և 15.06.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ **••••**⁵ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից ձեռնպահ մնալուն (վարչական գործ թիվ ՎԴ/7405/05/24):

¹ Հանդիսանում է անձնական տվյալ:

² Հանդիսանում է անձնական տվյալ:

³ Հանդիսանում է անձնական տվյալ:

⁴ Հանդիսանում է անձնական տվյալ:

⁵ Հանդիսանում է անձնական տվյալ:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել **••••**⁶ տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը (վարչական գործ թիվ ՎԴ/7514/05/24):

ՀՀ վարչական դատարանի 25.07.2024 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/7405/05/24 և թիվ ՎԴ/7514/05/24 վարչական գործերը միացվել են մեկ վարույթում՝ ՎԴ/7405/05/24 համարով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.08.2024 թվականի վճռով Ընկերության հայցը՝ **••••**⁷ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից և 15.06.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ **••••**⁸ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժվել է: Ընկերության հայցը՝ **••••**⁹ տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է. ոչ իրավաչափ է ճանաչվել **••••**¹⁰ տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.02.2025 թվականի որոշմամբ Ոստիկանության, Երրորդ անձինք Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 01.08.2024 թվականի վճիռը՝ բավարարված մասով թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ոստիկանությունը (ներկայացուցիչ՝ Նարինե Ասրիյան), Երրորդ անձինք Աննա Գևորգյանը (ներկայացուցիչ՝ Հայկ Եգանյան) և Մարիամ Վահանյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Պատասխանող Ոստիկանության վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումը և պահանջը.

Ոստիկանության վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Այն դեպքում, երբ ներխուժումը կատարվել է իրավաբանական անձի կողմից, անշարժ գույքն ազատելու համար ողջամիտ ժամկետ տրամադրվում է իրավաբանական անձի լիազոր ներկայացուցչին կամ տնօրենին կամ աշխատակիցներին, ովքեր ֆիզիկական

⁶ Հանդիսանում է անձնական տվյալ:
⁷ Հանդիսանում է անձնական տվյալ:
⁸ Հանդիսանում է անձնական տվյալ:
⁹ Հանդիսանում է անձնական տվյալ:
¹⁰ Հանդիսանում է անձնական տվյալ:

անձինք են: Որոշմամբ չէին էլ կարող նախատեսվել իրավաբանական անձի ներխուժումը վերացնելու վերաբերյալ դրույթներ, քանի որ ներխուժման վերացումը ենթադրում է կոնկրետ գործողությունների կատարում ֆիզիկական անձանց նկատմամբ: Եթե անշարժ գույքի տարածք են ներխուժել իրավաբանական անձի աշխատակիցները, տնօրենը, անշարժ գույքի օրինական տիրապետողը չի կարող գրկված լինել իրավաբանական անձի աշխատակիցների վտարմանն ուղղված գործողություններ կատարելու համար ոստիկանությանը լիազորելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ ոստիկանությունը ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ լիազորված չէ կատարել գործողություններ իրավաբանական անձի նկատմամբ, անթույլատրելի է և թույլ չի տալիս ապահովել քաղաքացիների սեփականության իրավունքի պաշտպանությունը: Իրավաբանական անձի ներխուժումը վերացնելուն ուղղված Ոստիկանության գործողություններն իրավաչափ են և նպատակային:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.02.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ բավարարված մասով հայցը մերժել կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

2.1. Երրորդ անձինք Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումը և պահանջը.

Երրորդ անձինք Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումը:

Սույն գործով վիճարկվող գործողությունը չէր կարող ոչ իրավաչափ ճանաչվել այն հիմքով, որ այդ գործողությունն իրականացվել է իրավաբանական անձի նկատմամբ: Ոստիկանությունը ներխուժումը վերացնելու գործողությունը կատարել է ոչ թե իրավաբանական անձի, այլ նրա աշխատակիցների (ֆիզիկական անձանց) նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 26.02.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ բավարարված մասով հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարիամ Վահանյանի և Ընկերության, ի դեմս տնօրեն՝ Արփինե Հարությունյանի, միջև 11.05.2018 թվականին կնքվել է տարածքի վարձակալության մասին պայմանագիր, որի համաձայն՝ Մարիամ Վահանյանը պարտավորվում է Ընկերությանը վարձակալության պայմանագրով տրամադրել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ••••¹¹ շինությունը՝ ••••¹² մակերեսով (**հատոր 1-ին, գ. թ. 22-23**):

2) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.07.2018 թվականին տրված վկայականի համաձայն՝ ••••¹³ շինության նկատմամբ գրանցվել է Ընկերության վարձակալության իրավունքը (**հատոր 1-ին, գ. թ. 28**):

3) Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի միջև 18.11.2019 թվականին կնքվել է անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ նվիրատուն նվիրում է, իսկ նվիրառուն որպես նվեր ընդունում է ••••¹⁴ շինությունը՝ ••••¹⁵ մակերեսով (**հատոր 1-ին, գ. թ. 25**):

4) ••••¹⁶ տարածքի սեփականատեր Աննա Գևորգյանի լիազորված անձ Մարիամ Վահանյանի կողմից Կենտրոնի ոստիկանության բաժնի պետին ուղղված 13.06.2024 թվականի դիմումով նշվել է. «Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշման համաձայն՝ «Լոս Պուերթոս» ՍՊ ընկերությունը հանդիսանում է ••••¹⁷ տարածքի ապօրինի ներխուժած իրավաբանական անձ, հետևաբար պահանջում եմ, որպեսզի անհապաղ ազատի ••••¹⁸ տարածքը (**հատոր 1-ին, գ. թ. 93**):

5) Հասցե այցելելու վերաբերյալ 13.05.2024 թվականի արձանագրության համաձայն՝ Ոստիկանության ԵԲՎ Կենտրոնական բաժնի ՀՈԲ տեսուչը քաղաքացի Մարիամ Վահանյանի դիմումի հիման վրա այցելել է ••••¹⁹ շինություն՝ ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշման պահանջների համաձայն ներխուժումը վերացնելու նպատակով: Այցելության ժամանակ պարզվել է, որ նշված հասցեում գործում է Ընկերությունը, որի համասեփականատեր ներկայացած Էդմոնդ Կիրակոսյանին տրվել է 7 օր՝ տարածքն ազատելու համար (**հատոր 1-ին, գ. թ. 18-20**):

6) Հասցե այցելելու վերաբերյալ 15.06.2024 թվականի արձանագրության համաձայն՝ Ոստիկանության ԵԲՎ Կենտրոնական բաժնի ՀՈԲ տեսուչը Մարիամ Վահանյանի դիմումի հիման վրա այցելել է ••••²⁰ շինություն՝ ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշման պահանջների համաձայն ներխուժումը վերացնելու նպատակով: Այցելության ժամանակ պարզվել է, որ նշված հասցեում գործում է «Լոս Պուերթոս» ռեստորան, որի տնօրեն ներկայացած Արփինե Հարությունյանին պարզաբանվել են ՀՀ կառավարության որոշման պահանջները և տրվել է 10 օր՝ տարածքն ազատելու համար (**հատոր 1-ին, գ. թ. 21**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի

¹¹ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹² Հանդիսանում է անձնական տվյալ:

¹³ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁴ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁵ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁶ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁷ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁸ Հանդիսանում է անձնական տվյալ:

¹⁹ Հանդիսանում է անձնական տվյալ:

²⁰ Հանդիսանում է անձնական տվյալ:

1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն վճռաբեկ բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումն արդյո՞ք կիրառելի է նաև իրավաբանական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու դեպքում:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասում կիրառված են «ճանաչել» և «պաշտպանել» եզրույթները, ինչը նշանակում է, որ սեփականության իրավունքը ոչ միայն ճանաչվում է պետության կողմից և պաշտպանվում է պետության ոչ իրավաչափ միջամտությունից, այլ նաև ենթադրում է պետության պոզիտիվ պարտավորությունն ընդունելու այնպիսի իրավակարգավորումներ, որոնք անձի սեփականությունը կպաշտպանեն այլոց ոչ իրավաչափ գործողություններից:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

Երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը» (տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2021 թվականի ՍԴՈ-1611 որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), հստակեցնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության (այսուհետ՝ Թիվ 1 արձանագրություն) 1-ին հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պետության պարտականությունների շրջանակը, ևս զարգացրել է պետության պոզիտիվ պարտականությունների գաղափարը: Վերջինս, մասնավորապես, արտահայտվում է նրանում, որ սեփականության իրավունքի իրական և արդյունավետ իրականացումը կախված չէ լոկ պետության՝ չմիջամտելու պարտականությունից, այլ պահանջում է նաև պաշտպանության որոշակի պոզիտիվ միջոցառումներ, մասնավորապես, երբ առկա է անմիջական կապ անձի գույքային իրավունքներն արդյունավետորեն իրացնելու և այն միջոցառումների միջև, որոնք անձը կարող է իրավաչափորեն ակնկալել իշխանություններից (տե՛ս, Եվրոպական դատարանի Öneriildiz v. Turkey գործով 30.11.2004 թվականի վճիռը, գանձադր թիվ 48939/99, կետ 134):

Ըստ Եվրոպական դատարանի՝ եթե միջամտությունը սեփականության իրավունքին տեղի է ունենում մասնավոր անձի կողմից, ապա պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն ներպետական իրավական համակարգում երաշխավորելու, որ սեփականության իրավունքն արդյունավետորեն պաշտպանված է օրենքով և նախատեսված են արդյունավետ պաշտպանության միջոցներ, որոնցով միջամտության զոհը կարող է վերականգնել իր իրավունքները, ներառյալ՝ համապատասխան դեպքերում, պահանջել ցանկացած վնասի վերականգնում (տե՛ս, Եվրոպական դատարանի Blumberga v. Latvia գործով 14.10.2009 թվականի վճիռը, գանձադր թիվ 70930/01, կետ 67):

Այլոց ոչ իրավաչափ գործողություններից անձի սեփականությունը պաշտպանելու պետության պոզիտիվ պարտականության իրացման օրենսդրական դրսևորում են, ի թիվս այլնի, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածը և վերջինիս հիման վրա ընդունված «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Թիվ 797-Ն որոշում):

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, ոստիկանության խնդիր է, ի թիվս այլնի, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին կետով ճանաչվում է յուրաքանչյուրի՝ իր օրինական տիրապետման ներքո գտնվող հողամասը, շենքը, շինությունը և այլ անշարժ գույքի տարածք *այլոց* մուտք գործելուց զերծ պահելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ կետն ամրագրում է հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք մուտք գործելու և գույք տեղադրելու արգելքը: Ըստ այդ նորմի՝ *ոչ ոք* իրավունք չունի առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության մուտք գործելու հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք կամ այդ տարածքում առանց օրինական տիրապետողի թույլտվության տեղադրելու որևէ շարժական գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է «ներխուժում» հասկացության բովանդակությունը: Այն է՝ ներխուժում է.

- առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք մուտք գործելը,

- առանց օրինական տիրապետողի թույլտվության հողամասի, շենքի, շինության և այլ անշարժ գույքի տարածքում որևէ շարժական գույք տեղադրելը,

- օրինական տիրապետողի թույլտվությամբ հողամաս, շենք կամ շինություն կամ այլ անշարժ գույքի տարածք մուտք գործած կամ դրա վրա շարժական գույք տեղադրած *անձի* կողմից հողամասից, շենքից կամ շինությունից կամ այլ անշարժ գույքի տարածքից դուրս գալու կամ տեղադրած շարժական գույքը հեռացնելու վերաբերյալ դրանց օրինական տիրապետողի պահանջը չկատարելը,

- օրենքով սահմանված հիմքերով հողամաս, շենք կամ շինություն կամ այլ անշարժ գույքի տարածք մուտք գործած կամ դրա վրա շարժական գույք տեղադրած *անձի* կողմից այդ հիմքերի դադարումից կամ օրենքով նախատեսված համապատասխան գործողություններ կատարելուց հետո հողամասից, շենքից կամ շինությունից կամ այլ անշարժ գույքի տարածքից դուրս գալու կամ տեղադրած շարժական գույքը հեռացնելու վերաբերյալ դրանց օրինական տիրապետողի պահանջը չկատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են. «7. Հողամասի, շենքի կամ շինության կամ այլ անշարժ գույքի տարածքի օրինական տիրապետողն իրավունք ունի լիազորելու ոստիկանությանը՝ իր անունից կատարելու գործողություններ՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ: Օրինական տիրապետողի կողմից ոստիկանության լիազորման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու, հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ Օրենսգրքի 203-րդ հոդվածում ներխուժում իրականացրած անձի առնչությամբ գործածվում են «*անձ*», «*այլոք*», «*ոչ ոք*», «*ուրիշի*» բառերը, ինչը նշանակում է, որ օրենսդիրը որևէ տարբերակում չի կատարել, թե ներխուժումն ում կողմից է տեղի ունեցել՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձի կողմից, և ըստ այդմ՝ նպատակ է ունեցել երաշխավորել անձի սեփականության պաշտպանությունը ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի ներխուժումից:

Օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 7-րդ կետում լիազորելով ՀՀ կառավարությանը՝ սահմանելու անշարժ գույքի տարածքի օրինական տիրապետողի

կողմից ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ իր անունից գործողություններ կատարելու համար ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները, տարբերակում չի կատարել, թե ներխուժումն ում կողմից է տեղի է ունեցել՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձի կողմից: Այլ կերպ՝ օրենսդիրը նշված նորմով լիազորել է ՀՀ կառավարությանը սահմանել օրինական տիրապետողի կողմից՝ ինչպես ֆիզիկական անձի, այնպես էլ իրավաբանական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ իր անունից գործողություններ կատարելու համար ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները:

Օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 8-րդ կետում լիազորելով ՀՀ կառավարությանը՝ սահմանելու պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու, հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող *ուրիշի* շարժական գույքը հեռացնելու կարգը, ևս տարբերակում չի կատարել, թե տվյալ շարժական գույքն ում է պատկանում՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձին: Այլ կերպ՝ օրենսդիրը նշված նորմով լիազորել է ՀՀ կառավարությանը սահմանել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձին պատկանող շարժական գույքը հեռացնելու կարգը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված նորմերի հիմքով ընդունվել է Թիվ 797-Ն որոշումը: Նշված որոշման 1-ին և 2-րդ կետերով համապատասխանաբար սահմանվել են ֆիզիկական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց հողամասի, շենքի կամ շինության կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող *ուրիշի* շարժական գույքը հեռացնելու նպատակով ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները՝ համաձայն թիվ 1 հավելվածի (այսուհետ՝ Թիվ 1 հավելված), պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող *ուրիշի* շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի և շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Թիվ 1 հավելվածի 6-րդ կետով սպառիչ կերպով սահմանվում են այն դեպքերը, երբ ոստիկանն իրավունք չունի *կողմերի* նկատմամբ կիրառելու որևէ միջոց կամ պահանջ: Այն է՝ ոստիկանն իրավունք չունի *կողմերի* նկատմամբ կիրառելու որևէ միջոց կամ պահանջ, եթե պարզում է, որ՝

1) ներխուժում իրականացրած կամ իրականացնող կամ այդ տարածքում շարժական գույք տեղադրած *անձը* տվյալ անշարժ գույքի օրինական տիրապետող է, կամ՝

2) *անձը* գրավոր կնքված քաղաքացիաիրավական կամ աշխատանքային կամ ամուսնաընտանեկան կամ այլ պայմանագրի կամ լիազորագրի համաձայն իրավունք ունի մշտապես կամ որոշակի ժամանակով գտնվելու տվյալ անշարժ գույքի տարածքում կամ շարժական գույքը տեղադրելու տվյալ անշարժ գույքի տարածքում կամ՝

3) *անձը* բնակելի տարածքն օրինական տիրապետող անձի անչափահաս երեխան է կամ ամուսինը:

Թիվ 1 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե ոստիկանը պարզում է, որ անձը կամ

շարժական գույքը գտնվում է անշարժ գույքի տարածքում՝ առանց օրինական հիմքերի (...), ապա ոստիկանը ներխուժողին բանավոր պահանջում է մուտք չգործել կամ անհապաղ դուրս գալ անշարժ գույքի տարածքից, այդ թվում՝ հեռացնելով անշարժ գույքի տարածքում գտնվող շարժական գույքը՝ դրա համար նրան տալով մինչև մեկամսյա ժամկետ: Ժամկետը որոշելիս ոստիկանության ծառայողը հաշվի է առնում ներխուժողի և դիմումատուի (եթե ընտանիք է ապա նաև ընտանիքի անդամների) տարիքը և առողջական վիճակը, եղանակային և այլ պայմանները:

Թիվ 1 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ եթե ներխուժած անձը հրաժարվում է ոստիկանի բանավոր պահանջը կատարել, ապա ոստիկանն առաջարկում է անշարժ գույքի օրինական տիրապետողին անշարժ գույքի տարածք ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով իրեն ներկայացնել գրավոր լիազորագիր՝ տալով նրան նույն կարգի ու պայմանների ձևում նշված լիազորագրի ձևաթուղթը:

Անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից լիազորագիրն ստանալուց հետո ոստիկանը ևս մեկ անգամ պահանջում է ներխուժումը դադարեցնել՝ նշելով, որ իր օրինական պահանջը չկատարելը կառաջացնի օրենքով նախատեսված պատասխանատվություն: Եթե այս դեպքում ևս ներխուժումը չդադարեցվի, ապա ոստիկանն իրավունք ունի ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով գործադրելու օրենքով նախատեսված ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ: Ֆիզիկական անձի ներխուժումը վերացնելուց հետո, եթե առկա է նաև շարժական գույքով ներխուժում, ապա ոստիկանությունն ապահովում է շարժական գույքի տեղափոխումը օրինական տիրապետողի կողմից՝ այդ ընթացքում իրականացնելով հասարակական կարգի պահպանության գործառույթ (Թիվ 1 հավելվածի 12-13-րդ կետեր):

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանությունը ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկում է տվյալ անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից տրված լիազորագրի հիման վրա. ընդ որում՝ անշարժ գույքի տարածքում տեղադրված շարժական գույքը հեռացնելու նպատակով (երբ ֆիզիկական անձի ներխուժում առկա չէ) ոստիկանը կարող է գործողություններ ձեռնարկել միայն այն դեպքում (Թիվ 1 հավելվածի 14-18-րդ կետեր), երբ գույքի օրինական տիրապետողին անձամբ չի հաջողվել վերացնել կամ կանխել ներխուժումը: Ավելին, Թիվ 1 հավելվածի՝ անշարժ գույքի տարածքում տեղադրված շարժական գույքը հեռացնելու ընթացակարգը սահմանող կարգավորումներում օգտագործված է «*ուրիշի գույք*» հասկացությունը, ինչը նշանակում է, որ խոսքը չի վերաբերում միայն ֆիզիկական անձի գույքին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է իրավական նորմերի մեկնաբանման հետևյալ կանոնները. նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Սույն դեպքում Թիվ 797-Ն որոշումն ընդունվել է անշարժ գույքի տարածքի օրինական տիրապետողի կողմից ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ իր անունից գործողություններ կատարելու համար ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները

սահմանելու նպատակով և ի կատարումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի դրույթների: Ըստ այդմ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված՝ իրավական նորմերի մեկնաբանման կանոններին համապատասխան, մեկնաբանելով Թիվ 797-Ն որոշման կարգավորումները և հաշվի առնելով, որ.

- Թիվ 797-Ն որոշումն ընդունվել է անշարժ գույքի տարածքի օրինական տիրապետողի կողմից՝ *յուրաքանչյուր անձի*, այդ թվում՝ իրավաբանական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու ուղղությամբ իր անունից գործողություններ կատարելու համար ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու նպատակով,

- Թիվ 797-Ն որոշումն ընդունվել է ի կատարումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի դրույթների, որը որևէ տարբերակում չի կատարում, թե ներխուժումն ում կողմից է տեղի ունեցել՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձի կողմից,

- Թիվ 797-Ն որոշման մեջ անշարժ գույքի տարածքում տեղադրված շարժական գույքը հեռացնելու ընթացակարգը սահմանող կարգավորումներում տարբերակում չի կատարվում, թե տվյալ շարժական գույքը ֆիզիկական, թե իրավաբանական անձի է պատկանում,

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Թիվ 797-Ն որոշումը հավասարապես կիրառելի է նաև այն դեպքում, երբ ներխուժումը տեղի է ունեցել իրավաբանական անձի կողմից:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաստեղծը, ի կատարումն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի, ընդունելով Թիվ 797-Ն որոշումը, չունեի իրավաբանական անձանց առնչությամբ որևէ շեշտադրում կատարելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով, որ իրավաբանական անձի ներկայությունը այս կամ այն տարածքում դրսևորվում է ֆիզիկական անձանց ներկայությամբ: Այլ կերպ՝ իրավաբանական անձի ներխուժումը տեղի է ունենում իր աշխատակիցների ֆիզիկական ներկայության միջոցով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն դեպքում, երբ ներխուժումը տեղի է ունենում իրավաբանական անձի կողմից, Թիվ 797-Ն որոշմամբ սահմանված համապատասխան նորմերը *mutatis mutandis* կիրառելի են իրավաբանական անձի տնօրենի, նրան փոխարինողի կամ լիազորված անձի նկատմամբ: Թիվ 797-Ն որոշմամբ նախատեսված այն գործողությունները, որոնք ենթակա են կատարման ներխուժողի նկատմամբ, իրավաբանական անձի ներխուժման դեպքում պետք է կատարվեն իրավաբանական անձի տնօրենի, նրան փոխարինողի կամ լիազորված անձի նկատմամբ: Իսկ վերջինս (վերջիններս) պետք է ապահովի (ապահովեն) իր (իրենց) աշխատակիցների և շարժական գույքի տվյալ տարածքից հեռացումը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշ շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումը կիրառելի է նաև իրավաբանական անձի ներխուժումը կանխելու կամ վերացնելու դեպքում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցերի հիման վրա, որոնցով վերջինս պահանջել է պարտավորեցնել Ոստիկանությանը 13.05.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ ••••²¹ տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից և 15.06.2024 թվականի արձանագրությամբ նշված՝ ••••²² տարածքից Ընկերության վտարման (ներխուժման վերացմանը) ուղղված գործողություններից ձեռնպահ մնալուն, ինչպես նաև ոչ իրավաչափ ճանաչել ••••²³ տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը:

Դատարանը 01.08.2024 թվականի վճռով ոչ իրավաչափ է ճանաչել Երևան քաղաքի Թամանյան փողոցի շենք 6-ի թիվ 18-19 տարածքից Ընկերության ներխուժման վերացմանն ուղղված գործողությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) *Դատարանը եզրակացնում է, որ անշարժ գույքի օրինական տիրապետման իրավունքը կարող է հավաստվել միայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված համապատասխան իրավունքի վկայականով կամ անշարժ գույքի օրինական տիրապետող հանդիսանալը հավաստող այլ փաստաթղթով, ընդ որում, ըստ Կարգի համակարգային վերլուծությունից անշարժ գույքի օրինական տիրապետողի դերում կարող է հանդես գալ ինչպես ֆիզիկական անձն, այնպես էլ իրավաբանական անձը:*

Մինչույն ժամանակ, սակայն, Կարգի համակարգային վերլուծությունից, հետևում է, որ ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները ոստիկանությունը կարող է իրականացնել բացառապես ֆիզիկական անձանց նկատմամբ:

(...) Կարգի իմաստով ներխուժող անձ և շարժական գույքի տիրապետող կամ շահագրգիռ անձ կարող է հանդիսանալ միայն ֆիզիկական անձը:

(...) սույն գործի փաստերի, մասնավորապես 13.05.2024 թվականի թիվ Վ-21 դիմումի, 17.05.2024 թվականի և 15.06.2024 թվականի արձանագրությունների համաձայն՝ Ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ խնդրո առարկա հասցեն ինքնակամ ազատելու համար:

Ընդ որում, թե՛ վերը նշված դիմումը, թե՛ նշված արձանագրությունները կազմելիս հիմք են ընդունվել ՀՀ կառավարության 797-Ն որոշման կարգավորումները, այսինքն ներխուժումը վերացնելու նպատակով գործողություններն ուղղված են Ընկերությանը՝ իրավաբանական անձին:

Մինչդեռ Դատարանը փաստում է, որ ՀՀ ոստիկանությունը ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշմամբ լիազորված չէ կատարել գործողություններ՝ իրավաբանական անձանց նկատմամբ: (...):»:

Վերաքննիչ դատարանը 26.02.2025 թվականի որոշմամբ Ոստիկանության, երրորդ անձինք Մարիամ Վահանյանի և Աննա Գևորգյանի վերաքննիչ բողոքները մերժել և Դատարանի 01.08.2024 թվականի վճիռը՝ բավարարված մասով թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ. «(...) Վերոշարադրյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշմամբ իրավական կարգավորում է ստացել միայն ֆիզիկական անձանց կողմից կատարված ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց հողամասի, շենքի կամ շինության կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի

²¹ Հանդիսանում է անձնական տվյալ:

²² Հանդիսանում է անձնական տվյալ:

²³ Հանդիսանում է անձնական տվյալ:

շարժական գույքը հեռացնելու նպատակով ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերոհիշյալ որոշման համակարգային վերլուծությունից ևս հետևում է, որ այն վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց կողմից կատարված ներխուժման դեպքերին:

(...) ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը ••••²⁴ փարածքի ապօրինի ներխուժումը վերացնելու ուղղությամբ համապատասխան գործողություններ կատարելիս ղեկավարվել է ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումներով, մինչդեռ, (...) վերոհիշյալ որոշումը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց կողմից կատարված ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց հողամասի, շենքի կամ շինության կամ այլ անշարժ գույքի փարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու նպատակով ոստիկանությանը լիազորելու կարգին ու պայմաններին:

(...) Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարում ՀՀ վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ իրավաբանական անձի հետ ունեցած՝ գույքի տիրապետման հետ կապված վեճերը, կարգավորված լինելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, դուրս են ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշման կարգավորման շրջանակներից, ուստի ՀՀ ոստիկանությունն իր հերթին ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով լիազորված չէ ՀՀ կառավարության 10.05.2007 թվականի թիվ 797-Ն որոշումից բխող գործողություններ իրականացնել իրավաբանական անձի նկատմամբ:(...)»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն սկզբնապես ••••²⁵ շինությունը՝ ••••²⁶ մակերեսով, տիրապետել և օգտագործել է Մարիամ Վահանյանի և Ընկերության միջև 11.05.2018 թվականին կնքված տարածքի վարձակալության մասին պայմանագրի հիման վրա:

Այնուհետև, սույն գործով երրորդ անձ Մարիամ Վահանյանի դիմումի հիման վրա Ոստիկանությունը Թիվ 797-Ն որոշման հիման վրա միջոցներ է ձեռնարկել նշված հասցեում Ընկերության ներխուժումը վերացնելու նպատակով՝ տրամադրելով տարածքն ազատելու ժամկետ:

Դատարանը և Վերաքննիչ դատարանը Ոստիկանության կողմից Թիվ 797-Ն որոշման հիման վրա իրականացրած գործողությունները ոչ իրավաչափ են դիտարկել՝ իրավաբանական անձի ներխուժման դեպքի նկատմամբ կիրառելի չհամարելով Թիվ 797-Ն որոշումը:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները կիրառելով սույն դատական գործի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում Դատարանի և Վերաքննիչ դատարանի նշված դիրքորոշումը՝ գտնելով, որ սույն դեպքի նկատմամբ կիրառելի է Թիվ 797-Ն որոշումը, և Ոստիկանության գործողությունների իրավաչափությունը ենթակա էր գնահատման այդ ենթաօրենսդրական ակտի կարգավորումների շրջանակներում:

²⁴ Հանդիսանում է անձնական տվյալ:

²⁵ Հանդիսանում է անձնական տվյալ:

²⁶ Հանդիսանում է անձնական տվյալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների նշված հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.02.2025 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՍնԴ/3668/04/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի մարտի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Արշակ Սեդրակյանի դիմումի՝ Ռազմիկ Նազարյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2025 թվականի որոշման դեմ Ռազմիկ Նազարյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արշակ Սեդրակյանը պահանջել է Ռազմիկ Նազարյանին ճանաչել սնանկ:

Սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.12.2024 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.08.2025 թվականի որոշմամբ Արշակ Սեդրակյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 23.12.2024 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռազմիկ Նազարյանը (ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ԵԱՔԴ/5975/02/15 քաղաքացիական

գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճիռը վերաբերում է ոչ թե իրեն, այլ իր հորը՝ Արտակ Նազարյանին, ով մահացել է, մինչդեռ սնանկության գործով իրավահաջորդություն տեղի չի ունենում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով բացակայում են իրեն սնանկ ճանաչելու օրենքով սահմանված հիմքերը, քանի որ սնանկ ճանաչված ֆիզիկական անձի պարտավորությունները ժառանգաբար չեն փոխանցվում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն գործով պարտատերը՝ Արշակ Սեդրակյանը, հանդիսացել է Արտակ Նազարյանի սնանկության գործով պարտատեր, հետևաբար քաջ գիտակցել է, որ նրա մահվան դեպքում Արտակ Նազարյանի պարտավորությունն իր հանդեպ չի կատարվելու:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.08.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 23.12.2024 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) թիվ ԵԱԲԴ/5975/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճռով Արշակ Սեդրակյանի հայցն ընդդեմ Արտակ Նազարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է՝ վճռվել է. «1. Արշակ Գառնիկի Սեդրակյանի հայցն ընդդեմ Արտակ Ռազմիկի Նազարյանի 20.000.000 ՀՀ դրամ գումարի, 4.000.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ սկսած 02.12.2015 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, փաստաբանի վարձատրության՝ 800.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 400.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին, բավարարել: 1.1. Արտակ Ռազմիկի Նազարյանից հօգուտ Արշակ Գառնիկի Սեդրակյանի բռնագանձել 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար: (...) 1.4. Արտակ Ռազմիկի Նազարյանից հօգուտ Արշակ Գառնիկի Սեդրակյանի բռնագանձել 4.000.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ սկսած 2015 թվականի դեկտեմբերի 02-ից մինչև պարտավորությունների փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ըստ նշված ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներին համապատասխան հաշվարկվող տոկոսների գումարը (...)»:

Դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում (datalex.am) առկա տեղեկությունների համաձայն՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճիռը 07.06.2016 թվականին մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 18-27**).

2) 27.02.2019 թվականին Արտակ Ռազմիկի Նազարյանը մահացել է (**հատոր 1-ին, գ.թ. 28**).

3) ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 10.12.2020 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն՝ Արտակ Ռազմիկի Նազարյանի գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում որդին՝ Ռազմիկ Արտակի Նազարյանը:

Նույն վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը, որի համար տրվել է վերը նշված վկայագիրը, բաղկացած է նաև պարտավորությունների մեկ երրորդ բաժնից, որոնք ժառանգատուին են պատկանում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճռով (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կիրառած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգատուի պարտավորություններով ժառանգի պարտասխանավորության սահմանների, ինչպես նաև ժառանգին սնանկ ճանաչելու իրավական հնարավորության հարցերին:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝ առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը:

Երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը:

Երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները:

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները:

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահանջները, մինչև ժառանգների կողմից

ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշված հոդվածներով նախատեսված կարգավորումները, արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը (*տես Սեդա Սոնյանն ընդդեմ Իդա Էբզիմյանի թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը*):

Մեկայլորոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալն իրենց պահանջները ներկայացնել նախ հետևյալ անձանց՝ ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, ապա միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին (*տես Սերգեյ Թաիրյանն ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի թիվ ԵՔԴ/0279/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդրի կողմից ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով:

Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ: Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ: Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, ժառանգատուի պարտատերերի համար սահմանելով պահանջների ներկայացման վերջնաժամկետ, ըստ

էության, նախադրյալներ է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի կողմից պահանջները չներկայացնելու դեպքում նրանք զրկվում են հետագայում պարտապանի ժառանգների դեմ իրենց պահանջները ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով օրենսդիրը սահմանափակել է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց ժառանգատուի պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, մասնավորապես՝ պարտատերն իրավունք ունի իր պահանջը բացառապես ներկայացնելու ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Օրենսդիրը, ամրագրելով նշված սուբյեկտների շրջանակը և նրանց պահանջ ներկայացնելու ժամանակահատվածը, այդուհանդերձ, չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը: Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերն իր իրավունքը պետք է իրացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց հարուցելու միջոցով: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութափրավական և դատավարական հասկացություն է, որի նյութափրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը: Հետևաբար ժառանգատուի պարտատերը, վերջինիս հետ ունեցած պարտավորությունից բխող պահանջ ներկայացնելով դատարան ընդդեմ ժառանգման իրավունք ունեցող անձի, հայցի նյութափրավական կողմի տեսանկյունից իրացնում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով իրենց վերապահված իրավունքը (*տես Գյուլիերի Սփրեփանյանն ընդդեմ Անահիտ Սմբարյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ/0416/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի պահպանմամբ ժառանգատուի պարտքերով պարտատերերի ներկայացրած պահանջները՝ որպես ժառանգության հետ կապված ծախսեր, ժառանգի կողմից ենթակա են հատուցման բացառապես վերջինիս անցած գույքի արժեքի սահմաններում:

Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգատուի պարտատերերի՝ ժառանգատուի հանդեպ ունեցած, սակայն վերջինիս մահվան փաստի ուժով դեռևս չկատարված պարտավորություններից բխող օրինական ակնկալիքի պաշտպանությունը կարող է իրականացվել բացառապես ժառանգական գույքից հատուցում

ստանալու պահանջ ներկայացնելու միջոցով, ուստիև վերջիններիս կողմից ժառանգատուի պարտավորությունների համար ժառանգության զանգվածում ներառված գույքային կազմի սահմաններում որպես ժառանգության հետ կապված ծախս բավարարում ստանալուց զատ որևէ այլ պահանջ ժառանգին ներկայացվել չի կարող: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ժառանգական գույքը ժառանգի անձնական գույքից տարանջատելու կապակցությամբ օրենսդրի որդեգրած մոտեցումը պայմանավորված է ժառանգատուի մահվանից հետո վերջինիս պարտատերերի և ժառանգությունն ընդունած ժառանգների իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռված պաշտպանության անհրաժեշտությամբ:

2. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): (...):

Սահմանադրական դատարանը, 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշմամբ անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված «անվճարունակություն» հասկացության բովանդակությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «*«Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքը (...) փարբերակում է անվճարունակության երկու ձև՝ հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում) և փաստացի, այն է՝ այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել: Մասնավորապես, նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը: Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, իսկ 3-րդ մասի «բ» կետում՝ այն հանգամանքը, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց **դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն):** Անվճարունակության այս երկու փարատեսակները միմյանցից փարանջատված են, և պարտապանին սնանկ ճանաչելու համար օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու փարատեսակների զուգահեռ միաժամանակյա առկայության պահանջ»,*

- «*(...) օրենքը հիմնվում է անվճարունակության կանխավարկածի վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, և այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Այս փրամաբանությունն է արտահայտված, մասնավորապես, օրենքի 17-րդ հոդվածում, որը կանոնակարգում է պարտատիրոջ դիմումի հիման վրա սնանկ ճանաչելու կարգը: Այդ հոդվածի համաձայն՝ դատարանը մերժում է սնանկ ճանաչելու մասին դիմումն այն դեպքում, երբ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց կամ վերանում են օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով*

սահմանված հիմքերը: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության և պարտաճանաչության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ»:

ՀՀ վճարել դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ սնանկությունը պարտապանի անկարողությունն է՝ կատարելու (վճարելու) սեփական երկարաժամկետ պարտավորությունները, այլ կերպ՝ սնանկությունն անձի անվճարունակությունն է (տե՛ս, Աշոտ Գրիգորյանն ընդդեմ Սամվել և Տիգրան Օհանյանների՝ թիվ ԵԱԲԴ/2709/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 22.06.2021 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության դիմումի հիմքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որ հիմքն է ընկած, կիրառվում է տվյալ հիմքին բնորոշ օրենսդրական կարգավորումը (տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարությունն ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի թիվ ԿԴ2/0078/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճարել դատարանը նաև գտել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու պարտադիր պայմանը նրա փաստացի անվճարունակությունն է, ինչը ենթադրում է հետևյալ իրավաբանական փաստերի միաժամանակյա առկայությունը՝ պարտապանի վճարային պարտավորության առկայությունը, պարտավորության 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանցը՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող չափով, վճռի կայացման պահին կետանցը շարունակվելը և պարտավորության անվիճելիությունը (տե՛ս ըստ Սեդրակ Առուստամյանի դիմումի թիվ ՍնԴ/0736/04/21 սնանկության գործով ՀՀ վճարել դատարանի 23.01.2023 թվականի որոշումը):

ՀՀ վճարել դատարանը նաև փաստել է, որ սնանկության վարույթն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ տարբերվում է հայցային վարույթից: Ըստ էության, սնանկության վարույթում բացակայում է նյութաիրավական վեճը, որը հայցային վարույթի կարևոր բաղադրիչներից մեկն է: Սնանկության գործի վարման արդյունքում սնանկության հատկանիշների առկայության դեպքում հաստատվում է պարտապանի որոշակի կարգավիճակը՝ սնանկ լինելու (անվճարունակության) փաստը, որի հիման վրա իրականացվում են օրենքով սահմանված համապատասխան գործընթացներ (տե՛ս ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ՍնԴ/0276/04/19 սնանկության գործով ՀՀ վճարել դատարանի 27.01.2021 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարել դատարանը հարկ է համարում արձանագրել, որ անձի սնանկությունը ենթադրում է դատարանի կողմից վերջինիս անվճարունակության փաստի ճանաչումը, ուստի անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր դեպքում դատարանը, ի թիվս այլնի, պետք է որոշի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված անվճարունակության հատկանիշների առկայության հարցը՝ ղեկավարվելով պարտապանի «անվճարունակության կանխավարկածով», ինչն էլ հիմք է հանդիսանում պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռ կայացնելու համար: Հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում պարտապանի «անվճարունակության կանխավարկածը»

համարվում է հաղթահարված՝ կանխորոշելով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքի բացակայությունը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, նպատակ ունենալով զարգացնելու «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա արձանագրում է, որ պարտապանի մահվանից հետո ժառանգությունն ընդունած ժառանգը կրում է ոչ թե իրավանախորդի պարտավորություններն իր անձնական գույքի հաշվին կատարելու, այլ միայն իրեն անցած գույքի արժեքի սահմաններում ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պարտականություն, որպիսի հանգամանքի հաշվառմամբ պարտատերերի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված կարգով համապատասխան պահանջը ժառանգին չներկայացնելու կամ ժառանգության զանգվածում ներառված գույքի արժեքի անբավարարության դեպքում վերջիններս զրկվում են որևէ այլ եղանակով իրենց պահանջների բավարարում ստանալու հնարավորությունից:

Շարադրվածի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով Սահմանադրական դատարանի վերը վկայակոչված որոշմամբ սնանկության հարաբերություններում ամրագրված պարտապանի «բարեխղճության և պարտաճանաչության կանխավարկածով», արձանագրում է, որ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու ժառանգի պարտականությունը չի կարող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով համարվել ժառանգատուի պարտատերերի հանդեպ առկա անվիճելի վճարային պարտավորություն: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անձին սնանկ ճանաչելու մասին դիմումի հիմքում դրված է վերջինիս իրավանախորդի ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պարտականությունը չկատարելու փաստը, ապա այս դեպքում բացակայում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով անձին սնանկ ճանաչելու փաստական և իրավական հիմքը: Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սնանկության վարույթը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կայացմամբ, այլ նշված վճռի կայացումից հետո մինչև սնանկության գործի ավարտը՝ պայմանավորված սնանկության վարույթի առանձնահատկություններով, իրականացվում են սնանկության ինստիտուտի նպատակների իրացման համար անհրաժեշտ մի շարք ընթացակարգեր, որոնք սահմանափակում են պարտապանի անձնական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքների լիարժեք իրականացումը: Նման պայմաններում ժառանգատուի պարտավորությունների համար ժառանգությունն ընդունած ժառանգին սնանկ ճանաչելը կհանգեցնի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածով ամրագրված ժառանգական գույքը ժառանգի անձնական գույքից տարանջատելու սկզբունքի իմաստագրվմանը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԱԲԴ/5975/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճռով Արշակ Գառնիկի Սեդրակյանի հայցն ընդդեմ Արտակ Ռազմիկի Նազարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է:

27.02.2019 թվականին Արտակ Ռազմիկի Նազարյանը մահացել է:

ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 10.12.2020 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն՝ Արտակ Ռազմիկի Նազարյանի գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում որդին՝ Ռազմիկ Արտակի

Նազարյանը:

Նույն վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը, որի համար տրվել է վերը նշված վկայագիրը, բաղկացած է նաև պարտավորությունների մեկ երրորդ բաժնից, որոնք ժառանգատուին են պատկանում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճռով:

Հղում կատարելով նաև թիվ ԵԱՔԴ/5975/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճռով հաստատված վճարային պարտավորությանը՝ Արշակ Սեդրակյանը պահանջել է Ռազմիկ Նազարյանին ճանաչել սնանկ:

Դատարանը, 23.12.2024 թվականին կայացրած վճռով պատճառաբանելով, որ՝

- «(...) դիմողի ներկայացուցչի կողմից վկայակոչված Երևանի քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016թ. թիվ ԵԱՔԴ 5975/02/15 քաղաքացիական գործով կայացված վճիռը վերաբերում է Արտակ Ռազմիկի Նազարյանին, որը մահացել է, իսկ Արտակ Ռազմիկի Նազարյանի որդին՝ Ռազմիկ Արտակի Նազարյանն ի թիվս այլնի վարչական դատավարության կարգով վիճարկում է վերսկսված կատարողական վարույթն այն հիմքով, որ այդ կատարողական վարույթում ինքը չի կարող հանդես գալ որպես պարտապան, քանի որ պարտապանը ճանաչվել է սնանկ, իսկ սնանկ ճանաչված պարտապանի մահվան դեպքում չի գործում իրավահաջորդություն»,

- «(...) վերը նշված նյութաիրավական հարցերի վերաբերյալ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում քննվում է ըստ հայցի Ռազմիկ Նազարյանի, Յունոնա Մոսինյանի և Արմեն Նազարյանի ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումը վերադատության կարգով վերացնելու մասին 16.06.2021 թվականի և վարչական բողոքը մերժելու մասին 18.01.2023 թվականի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ/0677/05/23 վարչական գործը, իսկ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում ըստ հայցի Արշակ Գառնիկի Սեդրակյանի ընդդեմ Յունոնա Շվարշիկի Մոսինյանի, Արմեն Արտակի Նազարյանի, Ռազմիկ Արտակի Նազարյանի, Երրորդ անձ՝ Աիդա Արմենի Նազարյանի, Արինա Արմենի Նազարյանի, Զինա Համբարձումի Նազարյանի և Մելինե Արմենի Եսայանի՝ ընդհանուր գույքից բաժնեմասն առանձնացնելու և դրա նկատմամբ բռնագանձում փարածելու պահանջի մասին թիվ ԵԴ/53353/02/21 քաղաքացիական գործը, այսինքն՝ վարչական և քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերով ամբողջությամբ վիճարկվում են դիմողի կողմից սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրված հանգամանքները»,

- «(...) վերը նշված քաղաքացիական և վարչական գործերով պարզման ենթակա նյութաիրավական բնույթի հարցերի պարզաբանումը կարող է հանգեցնել ոչ թե սնանկության հարկանիշների առկայության հարցի լուծմանը, այլ նյութաիրավական վեճի լուծմանը, որն էլ իր հերթին կարող է սահմանափակել անձի՝ այդ վեճի լուծման համար դատարան դիմելու իրավունքը, ուստի պարտապանի կողմից ներկայացված առարկությունների պայմաններում, դատարանն առանց առարկություններն ըստ էության գնահատելու, ապացուցված է համարում, որ սնանկ ճանաչելու պահանջի դեմ՝ պարտավորության վիճելիությունը հավաստող բավարար հիմքերն առկա են»,

գտել է, որ «(...) Արշակ Գառնիկի Սեդրակյանի դիմումը՝ Ռազմիկ Արտակի Նազարյանին սնանկ ճանաչելու մասին ենթակա է մերժման»:

Վերաքննիչ դատարանի 12.08.2025 թվականի որոշմամբ Արշակ Սեդրակյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 23.12.2024 թվականի վճիռը

բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության այն պատճառաբանությամբ, որ «Դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ սույն գործով Դատարան ներկայացված դիմումի հիմքում ընկած է այն փաստը, որ պարտապան Ռազմիկ Նազարյանին թիվ ԵԱԲԴ/5975/02/15 քաղաքացիական գործով պարտասխանող Արտակ Նազարյանի մահից հետո՝ 10.12.2020 թվականին, տրվել է ըստ օրենքի ժառանգության վկայագիր, որի համաձայն՝ Արտակ Ռազմիկի Նազարյանի մահից հետո ժառանգ է հանդիսանում որդին՝ Ռազմիկ Արտակի Նազարյանը, իսկ ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է այդ թվում պարտավորությունների 1/3 բաժնից, որոնք ժառանգատուին են պարկանում ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի վճռով (գործ թիվ ԵԱԲԴ/5975/02/15), իսկ ինչպես վերը նշվեց, ժառանգությունն ընդունելով ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապարասխան իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պարտասխանարվություն կրել ժառանգատուի պարտավորությունների համար»:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես, սույն գործի փաստերի վերլուծությունից բխում է, որ թիվ ԵԱԲԴ/5975/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2016 թվականի վճռի օրինական ուժի մեջ մտնելու փաստի ուժով համապատասխան պարտավորությունը ծագել է Արտակ Ռազմիկի Նազարյանի համար: Ըստ այդմ, ժառանգատուի մահվանից հետո Ռազմիկ Արտակի Նազարյանը՝ որպես ժառանգությունն ընդունած ժառանգ, օրենքի ուժով կրում է բացառապես իրեն անցած գույքի արժեքի սահմաններում ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պարտականություն, որն էլ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում որևէ պարագայում «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով չի կարող համարվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորություն: Հետևաբար տվյալ դեպքում բացակայում է Ռազմիկ Նազարյանին սնանկ ճանաչելու հիմքը, այն է՝ վերջինիս փաստացի անվճարունակությունը, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ռազմիկ Նազարյանին սնանկ ճանաչելու հիմքի բացակայության պայմաններում վերջինիս իրավանախորդի՝ Արտակ Նազարյանի պարտատերերը զրկված չեն իրենց ենթադրյալ խախտված իրավունքները պաշտպանելու նպատակով ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու մասին պահանջը քաղաքացիական դատավարության կարգով այլ հայցի առարկայի շրջանակներում ընդդեմ ժառանգի ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 12.08.2025 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝

սույն որոշման պատճառաբանություններով՝ հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելը և Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ բողոքը բավարարելու՝ Վերաքննիչ դատարանի 12.08.2025 թվականի որոշումը բեկանելու և Դատարանի 23.12.2024 թվականի վճռին ամբողջությամբ օրինական ուժ տալու պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքը պետք է բաշխել հետևյալ համամասնությամբ.

- Դատարանի 23.12.2024 թվականի վճռով դատական ծախսերի բաշխման հարցը լուծված լինելու պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցն այդ մասով պետք է համարել լուծված.

- Վերաքննիչ դատարանում Արշակ Սեդրակյանի կողմից վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումարը վճարված լինելու պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցն այդ մասով պետք է համարել լուծված.

- Արշակ Սեդրակյանից հօգուտ Ռազմիկ Նազարյանի ենթակա է բռնագանձման 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված և Ռազմիկ Նազարյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Սնանկության դատարանի 23.12.2024 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Արշակ Սեդրակյանից հօգուտ Ռազմիկ Նազարյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի գումար:

Այլ դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր
Նաիրա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր
Սերժիկ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Նաիրա ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Անի ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Լուսինե ԱՐԳԱՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր
Լիանա ՀԱԿՈԲՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր
Սերգեյ ՄԵՂՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ դատավորների միության անդամ
Զարուհի ՆԱԽՇՔԱՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ դատավորների միության անդամ
Էդուարդ ԱՄԱԼՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Արմինե ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Հովհաննես ԱՎԱԳՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Աղասի ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Դիանա ՂՈՒԿԵՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Անի ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Նանե ՍԱՀԱԿՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Օքսանա ԴԻԼԲԱՆԴՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 12.000 (տասներկու հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թևապոր խոսքեր

«Դատարանն այն վայրն է, որտեղ հասարակությունը
փորձում է ճշմարտությունը փոխել արդարության»:
Շառլ Լուի Մոնտեսքյո



«Արդար դատարանը պետության խիղճն է»:
Ջորջ Վաշինգտոն



«Որտեղ դատարանն անկասի չէ, այնտեղ օրենքը թղթի
արժեք ունի»:
Ալեքսիս դը Տոկվիլ



«Դատարանը հասարակության վերջին սպասարանն է
անարդարության դեմ»:
Ռոբերտ Ջեքսոն



«Դատավորը խոսում է օրենքի անունից, բայց
սպասախանասովություն է կրում պատմության առջև»:
Օլիվեր Ուենդել Հոլմս կրտսեր



«Դատարանի լռության մեջ հաճախ սվելի շատ
ճշմարտություն կա, քան ամբոխի աղմուկում»:
Ասատուլ Փրանս



«Դատարանի ուժը վճռի մեջ չէ, այլ դրա արդար
լինելում»:
Ռենե Կասսեն

ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ
1997 ԹՎԱԿԱՆԻՑ



81978954656562

copy print